



ШЧОБ  
ШЧИРЗАЊ





91.99

A II  
227

Zwergpinguin, Z.  
Längenmaß:  
14n.



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

# АКОШ АКОПЯН



## СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ

ТОМ ЧЕТВЕРТЫЙ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1958

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Ա.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ ԽԱՍՏԻՏՈՒՏ

891.99

2

# ՀԱԿԱԾ ՀԱԿՈԲՅԱՆ



ԵՐԿԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

1227  
4

ՀԱՏՈՐ ԶՈՐՐՈՐԴ




---

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԵՐԵՎԱՆ 1958

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի  
Խմբագրական-հրատարակչական խորհրդի ոռոշմամբ

Տեքստը պատրաստեցին և ծանոթագրեցին  
Խ. Մ. ԳՅՈՒԿՆԱԶԱՐՅԱՆ և Ս. Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ  
Խմբագիր Ա.Ա. Ա. Ա.Ա.ՏՐՅԱՆ





## ԽՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հակոբ Հակոբյանի Երկերի ժողովածովի ներկա՝ շորորդ հատորն ընդգրկում է գրողի՝ տարբեր բնույթի հոդվածները և համակեննու ու նեռագրերը։ Ըստ այդմ՝ հատորը կազմված է նետելյալ Երեք բաժիններից։

1. Հրապարակախոսական հոդվածներ.
2. Հոդվածներ գրականուրյան ու արվեստի մասին.
3. Նամակներ և նեռագրեր։

Բաժինների ներսում պահպանվում է նյութերի ժամանակագրական կարգը։

Առաջին Երկու բաժինների նյութերը հանված են նախառելույցին և սովետական ժամանակաշրջանի պարբերական մամուլից կամ գրողի արխիվից և, չնչին բացառուրյամբ, առաջին անգամն են իմի բերված և առանձին գրքով ներկայացվում ընթերցողին։ իսկ նամակներն ամբողջովին տպագրվում են առաջին անգամ (բացի մեկ նամակից)։ Ըստ որում անհերածեց է նկատի ունենալ, որ նյութերը վերցված են որոշ ընտրուրյամբ, երբեմն էլ արվում են մասնակի կրնատումներով՝ նկատի ունենալով կրկնուրյունները (նատկապես նամակներում)։ Նամակներում պահպանված են նեղինակի բվագրուրյունները, նրան են պատկանում տեխնատերի մեջ տողատակի ծանորագրուրյունները (բացի բարգմանուրյուններից)։ Սուր՝ <> փակագծերում արված լրացումները, վերնագրերը, բվագրուրյունները կազմողներին են։ Հատորը շծանրաբեռնելու և կրկնուրյուններից խուսափելու նպատակով չեն ծանորագրվում մի շարք պարբերականներ, երեսույթներ, դեպքեր, ու դեմքեր, որոնց մասին հաճգամանորեն խոսվել է նախորդ հատորներում։

Այս հատորով ինստիտուտն ավարտում է հայ պրոլետարական գրականուրյան վետերան Հակոբ Հակոբյանի Երկերի ժողովածովի ներկա հրատարակուրյունը, որը լիակատար ու սպառիշ լինելու

հավակնություն շունի: Ինստիտուտը ապագայում, հավանաբար, կպատրաստի քանաստեղծի գրական ժառանգությանը նվիրված մի առանձին ժողովածու կամ լրացուցիչ հատոր, որի մեջ տեղ կդանեն ժառահատոր ժողովածուից դուրս մնացած նյութերը (քարզմանություններ, նորահայտ նամակներ, երիտասարդական տարիների (1884—1893 թ.թ.) «Հիշատակարան»-ների և տամայր-քրական և արժեքավոր էջերը), ինչպես նաև անվանի գրողի գաղան-հասարակական ու ուսուցիչուն գործոննությանը վերաբեռն կարենր վավերագրերը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ Ր Ա Պ Ա Բ Ա Կ Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն  
Հ Ո Ւ Վ Ա Ծ Ն Ե Բ

1890—1931



## ՆԱՄԱԿ ՀԱՅԻՔԵՆԻԻՑ

Հովհանի 21-ին

Հաջիքենդ անվանված ամառանոցը Գանձակի ամենալավ ամառանոցներից մեկն է: Նա ընկած է մոտավորապես 4000 ոտնաշափ բարձրության վրա (ծովի մակերևույթից) և գտնվում է Գանձակից 19 վերստ հեռավորության վրա, օդը՝ առողջարար, ջուրը՝ սառը և մաքուր, դիրքը՝ գեղեցիկ, շրջապատված է անտառով:

Ամառը այստեղ են գտնվում Գանձակի, նույնիսկ Բաբիկ, Հարուստ դասակարգի ներկայացուցիչները, որոնցից շատերը, վարչությունից գնելով հողի բաժիններ՝ բաժինը 30 սուբլու (30 սաժեն երկարությամբ, 20 սաժեն լայնությամբ) կառուցում են այնպիսի գեղեցիկ շինություններ, որոնք զանձակեցու նախանձը կարող են շարժել: Ամառանոցների կառուցանելը շարունակում են և այժմ, մանավանդ բարիկայիք, որոնց սեփական ամառանոցատերերի թիվը հասնում է մոտ 10-ի:

Ինչպես ասացի, Հաջիքենդը ամբողջ Գանձակի գալարքի մեջ տուածին և հարմարագույն ամառանոցն է հարուստ և պաշտոնական դասակարգի համար, սակայն, չնայած որ ամբողջ Հաջիքենդը համարյա թե արիստոկրատ մարդկանց բնակավայր է, այնուամենայնիվ, կյանքը այստեղ մի տեսակ թմրած և դանդաղ է սահում: Կա միայն մի կլուք, որտեղ զինվորական երաժշտությունը շարաթը շանդամ նվազում է, և ուր ներեքշարթի ու հինգշարթի օրերը պարագանենիսներ են տեղի ունենալու: Շարաթվա մնացած օրերին, բայց շորեքշարթից, երբ խումբը նվազում է ներքին Հաջիքենդում, զինվորական երաժշտությունը զնում է Հաջիքենդից ոչ այնքան հեռու «Կալոնիա» կոչված գերմանացոց գյուղը նվազելու:

Պիտի նկատել, որ այդ պարագանենիսների հոգին համարյա թե համալսարանական (մոտ 15) և գիմնազիական ուսանողներն են:

Ի՞նչ են շինում այդ համալսարանական ուսանողները այստեղ։ Ահա մի հարց, որին պատասխանելը շատ էլ մխիթարական չէ։ Ուսում, խմում, զվարճանալով զբունում են և մի քանի դասերով սահմանափակում իրանց ամառանոցային կյանքը, չմտածելով անգամ այն պարտականության մասին, որ դրած է նրանց, իբրև հայ ուսանողի վրա։ Օրինակ, օրերումս մի հարդելի ուսանողի շնորհով այդ ուսանողական շրջանում բարձրացավ մի համակրելի հարց, այն է՝ սալքելու գորականական երեկոները, ուր, ժողովելով իրանք՝ ուսանողները դիմնազիական աշակերտների ու մի քանի չուսանող երիտասարդների հետ, պիտի խոսեին, գրեին, վիճեին և այլն... Դրա համար որոշեցին շինել մի վրամ, նույն իսկ հարց առաջարկող ուսանողի ապրելու տան մոտ, անտառում, որտեղ տեղի պիտի ունենային գրական երեկոները, բայց թե՛ այդ առաջարկությունը և թե՛ որոշումը միայն սկզբում տաք համակրությամբ ընդունվեց ուսանողների կողմից և ապա մոռացվեց։

Այստեղ ժամանել է մի ինչ-որ ձեռնածու, որը տեղիս կլուրում ահա երկրորդ անգամն է, որ ներկայացումներ է տալիս, և Հաջիքենդի հասարակությունը ուրախությամբ հաճախում է այդ ներկայացումները։ Գոնք այդ ձեռնածուից օրինակ վերցնեին մեր ուսանողները և մի ներկայացում կամ երեկույթ սարքեին համերգական բաժնով, որից գոյացած արդյունքը նույն իսկ իրանց շքավոր ընկեր ուսանողների օգտին դարձնելով, կարող էին մի բարոյական զվարճություն էլ պատճառել Հաջիքենդի և մոտ գյուղերից այստեղ թափվող հասարակությանը։

Այս օրերում «Մշակի» մեջ ձեր պատվիշի թղթակիցը Գանձակի քանի մի գյուղերի՝ այն է Գետաշեն, Գյուղիստան, Թալիշ և այլ տեղերի սովորությունների մասին մի համակրելի հոդված էր նվիրել։ Այդ սրբավայրերը, լեռները, ձորերը Հաջիքենդից շատ էլ հեռու շեն (ոմանք 5, 10, 15 վերստ հեռու), նրանք ամեն օր, ամեն ժամ մեր աշքերի առջևն են, ինչպես, օրինակ, «Մոավ», «Քափազ» և այլ լեռները, Գետաշենի, Գյուղիստանի և Թալիշի ձորերը։ Որքան լավ կլիներ, որ Հաջիքենդում գտնվող մեր ուսանողները իրանց ազատ ժամերը շահմանափակեին միայն անտառում և մոտակա բլուրների վրա զբունելով, այլ խմբովին մի փոքրիկ ուղևորություն անեին, գեպի իրանցից մի, կամ մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող Գետաշեն, Գյուղիստան, Թալիշ և Գետարեկ գյուղությոր, որոնց արձանագրություններով, հնություններով և պատճեններով լի սրբավայրերը մի վեհ, սրբազն զգացմունք ներ-

Հնչելուց հետո, կարող էին բավական օգուտներ տալ նրանց՝ իրեն հայ ուսանողների, որոնց վրա, կրկնում եմ, մեծ բարոյական պարտականություններ կան դրած ապագայում:

Հաջիքենդին շրջապատ գյուղորայք, ինչպես, օրինակ՝ Նոր-Հաջիքենդ կամ Բախչիկ, Սուլուք, Գետաշեն, Ղարաբուզախ, Մուռուղ, Միլսայիլովկա, Ելենենդորք և այլն, ունեցել են այս տարի լավ ցանքսեր ու հունձ (բացի խոտից), չնայած որ ամեն մի գյուղացու բերնից լսում կա գանգատներ «Հողի քության, հողի պակասության» մասին:

Օրերում մի ցավալի դեպք պատահեց այստեղ: Մի գյուղացի (55 տարեկան) Նոր-Հաջիքենդից Յ ձիերով լծած սայլով խոտ էր բերել ծախելու: Ճանապարհին, դեպքի Հաջիքենդ ցածրացող բլուրից նրա ձիերը փախչում են, և խեղճ ուժասպառ ծերունին՝ շկարողանալով զսպել փախչող ձիերին, սրբնթաց սահող սայլը խփում է ճանապարհի մեջտեղում ցցված ծառի բունին, գյուղացին խոտի դեղի բարձրությունից զլորվելով, ընկնում է առաջին անիվներից մեկի և ծառի մեջտեղը. մի բոպեի մեջ նա ալանդում է իր հոգին՝ փշրված սայլի տակ: Ինձ պատմեցին, թե թշվառ զոհը շատ աղքատ է և պարտքեր ունի, ինքը լինելով միակ աշխատող ձեռքը մի բազմաթիվ քնտանիքի, որի ավագ որդուն զինվոր են տարել դեռ 88 թվին. նա պարտքով գնել էր այդ սայլը ու ձիերը, որոնց բանեցնելով պիտի և՛ իր պարտքը վճարեր, և՛ ընտանիքը պահեր: Այդ տիսուր լուրը լսելով՝ Հաջիքենդի հասարակությունը խորը զգացվեց, և հայերից մեկը մի հանգանակություն բաց անելով, թե՛ ուսւներից և թե՛ հայերից՝ ժողովից մոտ 200 ոռուն, որը հանձնվեց խեղճ զոհի այրիին...

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄՆ ԻՌԻՍԱՍՈՆԻՒՄ  
ԴԺԲԱՆՏ ԴԵՊՔԵՐԻՑ

Հատված

Կարդալով «Մուրճ»-ի պրն. խմբագրի հրամերը՝ տեղեկություն-տալ Ռուսաստանում ևս գոյություն ունեցող այն մասնավոր ըն-կերպությունների մասին, որոնք բանվորներին ապահովում են զգ-բախտ դեպքերից, մենք խրախուսված թե՛ այդ խնդրի երեան գա-լուց և թե՛ «Մուրճ»-ի հարգելի խմբագրի հրամերից, կամենում ենք մի ամփոփ բացատրություն տալ «Մուրճ»-ի ընթերցողներին, թե ինչպես է ընդունվում բանվորների ապահովագրությունը Ռուսաս-տանում և ինչ պայմանների մեջ ևն գտնվում այն ապահովագրական ընկերությունները, որոնք հանձն են առնում ապահովացնել բան-վորների կյանքը դժբախտ դեպքերից:

Նախքան խոսելը այդպիսի ընկերությունների բնակորչության և գործունեության մասին, թող ներկի մեզ նկատել այստեղ, որ համեմատաբար թե՛ Ռուսաստանում առհասարակ և թե՛ մանավանդ մեզ մոտ՝ Կովկասում՝ բանվորների ապահովացման գործը դեռ շատ խորթ է մնացած և անուշադրության է մատնված զանազան գործարանատերերի կողմից:

Եվ զարմանալին այն է, որ թեև գործարանատերերի զլիա-վոր շահագործությունը հիմնված է աշխատավոր ձեռքերի վրա, բայց նրանք միշտ աշխատում են խոսսափել այնպիսի անհրաժեշտ պարտավորությունից, որը այսպես թե այնպիս նորա գործարանա-վարական բարեկարգության մեջ առաջին տեղը պիտի բռներ:

Իսկ այդ պարտավորություններից մեկը իր բանվորների ապա-հովացումն է: Շատ պարզ պետք է լինի այն հանգամանքը, որ որ-քան էլ գործարաններում, կամ որևէ արդյունաբեր հիմնարկության մեջ կատարելագործված լինեն աեխնիկական պայմանները, կամ

որքան էլ բանվորը զգուշությամբ վերաբերմի իր գործին աշխատանքի ժամանակ, այնուամենայնիվ, դժբախտ դեպքերը միշտ են՝ թուղթելի և իրոք անխուսափելի են:

Երեակացեք ձեզ մի մեխանիկական գործարան, որը ամփոփում է իր մեջ չուպունե-պղնձյա (чугунно-меднолитеинный) ձուլարաններ, դարբնոց (кузница), կաթսայագործարան (кательное) և այլն:

Բանվորի կյանքը մի այդպիսի գործարանում, ուր նա միշտ ապրում է կրակի, ծուխի, բազմաթիվ ճախարակների և մերկնաների մեջ՝ միշտ կապված է զանազան պատահարների հետ:

Պայմանը է շոգեկաթսան, և մեռնում է կաշեգարը, մի որևէ ծանրության տակ չարգում, փշում է իր մարմնի մի մասը բանվորը, դառնում հաշմանդամ, վնասում է իր ձեռքը վարպետը, չէ՞ որ այդ բոլորը ամենօրյա մի երկույթ է բանվորի համար, որը կրկնվում է մեր աշքերի առաջ:

Եվ ո՞ւմ վրա է ընկնում մեղքը այդ պատահարներից հետո: Անմեղ զոհ դարձած բանվորի<sup>7</sup>, թե՛ այն գործարանատերի, որը, իր զանցառությունից, թե խնայողությունից՝ բարեկարգության մեջ չէ դրել իր գործարանի տեխնիկական պարագաները (պայմանները): Հարցը երբեմնապես մնում է վիճելի:

Եվ կաթսայի պայմանից մահացած կաշեգարի (շոգեկաթսան հսկողի) կինը, կամ չուպունե լավացից խորովված կամ խոշտանգված զոհի ծնողները, դիմում են գործարանատիրոջ՝ բավարություն պահանջելու կյանքի փոխարեն, որ և մեծ մասամբ մնում է առանց հետևանքի, հետևապես գործը ընկնում է դատաստանի:

Եվ ահա սկսվում է դատաստանական պրոցեսը, որը, բացի այն, որ համարյա ամեն անդամ վերջանում է ո՞չ հօգուստ բանվորի, այլև դատաստանական ծախսերի տակ են ընկնում երկու կողմերու էլ, միենույն ժամանակ իդուր ժամանակառ լինում երկուստեք:

Ահա հենց այդպիսի անախորժությունների առաջն առնելու համար է, որ այդպիսի դեպքերում բանվորների հավաքական ապահովագրությունը երկան է դաշիս իբրև մի անհրաժեշտություն՝ թե՛ բանվորի և թե՛ գործարանատիրոջ համար:

Բավական է, որ գործարանատերը մի որոշ պայման ունենակնքած մի որևէ ապահովագրական ընկերության հետ, և նա ապատվում է ամեն մի նյութական պատասխանատվությունից: Իսկ բանվորական դժբախտ դեպքում միակ բավարարություն տվողը ներկայանում է ապահովագրական ընկերությունը:

Մենք կարծում ենք, որ բացի օրենքով սահմանված պարտականությունը, գործավորին բավարարություն տալու դժբախտ դեպքերում, եթե այդ դեպքը պատճեն է գործարանատիրոջ մեղավորության պատճառով, նաև մի բարոյական պարտք պիտի համարվի՝ գործարանատիրոջ կողմից ապահովացնել կյանքը այն բանը՝ դասակարգի, որի շնորհիվ նա (գործարանատերը) կրկնապատկում է փր օգուստները:

Ենթադրենք մի ըստե, որ բանվորը ևս մի կենդանի մեքենա է, մի ավտոմատ, եթե ձեր գործարանի մեքենաները, ճախարակները կամ կաթսաները սարք ու կարգի դնելու համար ամենայն օր յուղում, սրբում եք, որ ժամանակից շփշանան, եթե դուք համախքանդում (քազբիրած), նորից կազմում (սոնիրած) եք, որ լավ բանն, որքան, ուրեմն, պարտավոր եք խնամել կյանքը այն կենդանի մեքենաների (բանվորների), որոնք նույնքան տոկոս օգուստ են բերում ձեզ, որքան և ձեր իսկական մեքենաները՝ ճախարակները և այլն:

Այսպիսով, դուք ապահովելով բանվորի կյանքը և բանվորն էլ իր հերթին տեսնելով ձեր խնամքը, նաև, գուցե մի առանձին եռանդով ու աշխատասիրությամբ վերաբերվի գեղի իր վրա դրվագպարտականությունները, գուցե և կրկնապատկի, լարի իր ուժերը հօգուստ ձեզ:

Ուրեմն բանվորների ապահովագրական ընկերությունները ներկայացնում են, բացի որպես այլ և անախորժությունների, զանազան ավելորդ ծախսերի առաջն առնող մի ֆակտոր, այլև իրեն մի գեղեցիկ մարդասիրական հիմնարկություն, իբրև միակ պատասխանատուն և հաշտեցնողը վեճով բռնված երկու կողմերի:

Ըստսաստանում գոյություն ունեն առայժմ նորկու մասնավոր ակցիոներական ընկերություններ բանվորներին կոլեկտիվ ապահովացնելու համար, դրանցից մեկը բազմաճյուղ և դրամագլխով հարուստ «Ծոսսակա» ընկերությունն է, մյուսը՝ «Պոմոշ» («Օգնություն») ընկերությունը, որ հատկապես պարապում է կոլեկտիվ ապահովագրությամբ, հանձն է առնում ապահովացնել բանվորների կյանքը դրախտ գեղքերից, լինի այդ գործարաններում աշխատանքի ժամանակ, կամ գործարանից դուկոս, միայն թե դեպքը պատճառ ժինի պարապմունքի ժամանակ, ծառայության մեջ:

Ահա այսպիսի ապահովագրումն է, որ անվանվում է հավաքական ապահովագրություն դժբախտ դեպքերից (Коллективное страхование от несчастных случаев): Ոչ միայն հատկապես դոր-

ծարաններում, այլև ամեն մի նոր սկսվող կամ կառուցվելիք շինարարություններում, ուր առանց բանվորի գործը զլուկու դալ չէ կարող, ընկերությունը ընդունում է աշխատող բանվորների ապահովացումը:

Կառուցանվում է մի ահազին շինություն, ուր բանում են բազմաթիվ որմնադիմներ, քար, հող, կիր կրտղ մշակներ, շինվում է մի խճուղի, տրտեղ պետք է ձեղքել սարերը, հարթել բլուրները, վերջապես հանքերում, ուր բանում են բաղմաթիվ հանքափոր բանվորներ, այդ տեսակ դեպքերում ևս ընկերությունը ապահովացնում է բանվորներին ու դժբախտ դեպքերի ժամանակ՝ առանց հետաձգելու վճարում է ապահովագրական գումարը վնասված բանվորին, կամ նրա ընտանիքին:

Սակայն ո՞ր չափով է լինում այդ բավարարությունը, կամ ի՞նչ ձևով է որոշվում բանվորի կյանքի դինը՝ մահվան դեպքում:

Հենց այդ լուսաբանությանն ենք ուզում մոտենալ ահա...

Մանորուրյուն ենդինակի: Այս առաջարանից հետո արդեն գալիս է կոնկրետիզացիան, գործարանատիրոջ և առաջնովագրական ընկերության փոխադարձ համաձայնությամբ կապած պայմանագիրը: Էստ որում գործարանատերը, նախավճար տալուց հետո, ստանում է պոլիսը Պոլիսը պարտավորվում է վճարել ամեն մի բանվորի 500—1000 ռուբլի՝ մահվան դեպքում, 300—500 ռուբլի՝ աշխատանքի անկարողության դեպքում և 200—300 ռուբլի՝ աշխատանքի ժամանակավորանքնունակության դեպքում: Գործարանատերը կարող է իր բանվորներին ապահովացնել ավելի բարձր գումարով (կրատօն): Այդ դեպքում նա վճարում է ավելի շատ պրեմիա ապահովագրական ընկերությանը:

Այս հոդվածի շարունակությունը, որ բռնում է «Մուրճ»-ի №№ 5—6-ում էլի 16 երեսներ, մենք չենք տալիս, որովհետեւ մեր տեսությունը, գրած մոտ 40 տարի որանից առաջ, նախ՝ կորցրել է իր աշխատությունը և երկրորդ՝ իրենից չի ներկացացնում հասարակական նշանակություն ունեցող որևէ արժեքը: Մասնավոր ապահովագրական ընկերությունները փակված են վաղուց, մեր երկրի սովետիզացիայի օրից: Ապահովագրական գործը այժմ անցել է սոցիալիստական մեր հայրենիքի հանրապետությանց ձեռքը և ընդօրինակելու այլևս ոչինչ չունենք մենք զանազան «Փոմոզչ», «Բոսսիա» ընկերություններից: Իմ հոդվածի վերջում հետաքրքիրն այն է, որ 20 երես տեսություն գրելուց հետո, առաջարկում եմ պետությանը ապահովագրական գործը մասնավորներից առնել իր ձեռքը:

## Ա.ՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Մի ակնարկ ապահովագրության պատմությունից  
մինչև մեր օրերը

### 1

Նախքան դիմենք կյանքի և այլ ճյուղերի վերաբերյալ ապահովագրության գործի պատմության, ավելորդ չեր լինի, եթե Հիշեցնեինք ընթերցողներին «Մուրճ»-ի 1894 թ. 5,6 և 7-րդ ԱՆ-ում՝ զետեղած մեր այն հոգվածները, որոնք վերաբերում էին անհատական և հավաքական ապահովագրությանը դժբախտ դեպքերից<sup>1</sup>: Այդ հոգվածներում մենք, ըստ կարելուցն, ցուց տվինք, թե որքան համակրելի է դժբախտ դեպքերից գործարանների բանվորներին, արհեստավորներին, որպես նաև առանձին-առանձին անձերին ապահովագրելու գաղափարը: Բացատրեցինք և այն, որ դժբախտ դեպքերից ապահովագրությամբ պարապող թե՛ ոռու և թե՛ օտարազգի ապահովագրական ընկերությունները միայն վնաս են կրում, և եթե նորա չեն դադարեցնում ապահովագրաւթյան այդ ճյուղը, այդ մասսամբ այն պատճառով է, որ մյուս ճյուղերից ստացած արդյունքներով, այն է կյանքի և կրակի ապահովագրությունների միջոցով, ծածկում են նրանով առաջացած գեֆիցիոնները:

Բայց որքան համակրելի գտանք դժբախտ դեպքերից ապահովագրելու գաղափարը, նույնը չենք կարող ասել մյուս ճյուղերի ապահովագրության մասին, ինչպես նա լինում է սովորաբար:

Հենց այդ մյուս ճյուղերի՝ այն է կյանքի և կրակի ապահովագրության մասին՝ մենք կխոսնենք այս անդամ, ինչպես խոստացել էինք:

Բայց սկսենք նախ ապահովագրության պատմությունից:

Ապահովագրության գաղափարը ծնվել է 13-րդ դարու վեցին-  
րում և 14-րդ դարու սկզբներում, երբ առաջին անգամ սկսեցին  
ապահովագրել ճանապարհորդներին դժբախտ գեպքերից, այսինքն՝  
պատահարներից և հափշտակումներից:


Ապահովագրության իմաստը կայանում էր այն բանի մեջ, որ  
նախնաց օրերում ճամփորդները և հեռաստանի ուխտավորները  
պայմանավորվում էին մի որևէ առևտրական ընկերության կամ  
նույնիսկ մասնավոր անհատների հետ և իրենց ապահովագրում էին  
հետեւյալ կերպով: Նորա, այդ ճանապարհորդները կամ ուխտավոր-  
ները վերոհիշյալ ընկերություններին կամ անհատներին վճարում  
էին մի որոշ գումար, որով իրենց ապահովացրած էին համարում  
ամբողջ ճամփորդության ընթացքում այնպիսի դժբախտ գեպքերից,  
որոնք առաջանում էին մավլուների և սելչուկների հարձակմանքով  
զերի ընկնելուց: Ապահովագրող ընկերությունը կամ մասնավոր  
անհատը, որոնք ապահովագրել էին գերի ընկածին, որոշ փոկանք  
էին հատուցում հափշտակողին և այդպիսի ապահովագրյալ գերին  
կյանքին էր ազատում:

Այս տեսակ ապահովագրությունը, չնայած իր համակրելի  
սկզբունքին, համենայն դեպ ժամանակի ընթացքում փ շարն դոր-  
ձագրվեց, խեղաթյուրվեց... Նա ընդունեց մի տեսակ ազարտ խաղի  
բնավորություն:

Որքան սկզբունքով համակրելի էր ապահովագրական գաղա-  
փարը նոր ծնունդ առնելիս, այնքան նա բարդվեց և վեճերի նյութ  
զարձակ հետազյում:

Մենք այդ մասին բացատրություն կդնենք հոգվածի վերջերում,  
իսկ այժմ ասենք այսքանը, որ չնայած այն հանգամանքին, որ  
սկզբում ապահովագրությունը ծառայում էր իր նշանաբանին, վեր-  
ջին զարերում նա այն աստիճան ընկավ, նույնիսկ ստացավ այն-  
պիսի ազարտ խաղի բնավորություն, որ մինչև անդամ գրազներ էին  
բռնում թե՛ իրենց սեփական կյանքում և թե՛ մի որևէ թագավորի,  
կամ նույնիսկ Հռոմի պատի կյանքով, և եթե սոցանից մեկը կամ  
մյուսը մեռնում կամ ապրում էր՝ պայմանավորյալ ժամանակա-  
միջոցից առաջ կամ հետո՝ խաղարկողները ստանում էին միջան-  
ցից փոխազարձ համաձայնությամբ պայմանավորված գումարը:

Նույնիսկ այդ գրազները այնպիսի մի ծավալ ստացան, որ  
1570 թվականի սկզբներում արդեն արգելման հրաման եղավ նի-  
գերլանցիներին՝ Փիլիպպոս II թագավորից, որով և մասամբ վերջ  
տրվեց ապահովագրության առաջնային արդարագույն ազարտ այլասերող խա-  
ղերին:



Սակայն, ինչպես միշտ, այս անգամ ևս ամեն ինչ վերջնական վախճան չստացավ: Եվ նույնիսկ մինչ օրս էլ այդ և դորա պես ապահովագրական կոմբինացիաներ շարունակվում են եվրոպական միքանի քաղաքներում: Օրինակ՝ շատերը օրիորդներից իրենց ապահովացնում են շամուսնանալուց և կամ ամուսնական կյանքում ապահովագան տալու դեպքերի համար: Ապահովված օրիորդին, եթե մինչև քառասուն տարին չի հաջողվում ամուսնանալ (սրտով ընար սծի հետ), ընկերությունը այդ դեպքում վճարում է նորան պայմանափորձած որոշ գումար, հակառակ դեպքում, եթե օրիորդը ամուսնացավ մինչև այդ պայմանաժամը՝ նորա վճարած տուրքերը լիովին մնում են ընկերության օգտին: Նույն տեսակ պայման կատարում է նաև ապահարզանից ապահովագրվողների հետ (կանանց հետ):

Փիլիպոս Ա-ի հրամանից հետո թեև, ինչպես ասացինք, աղարտ խաղերին վերջնականապես վերջ չտրվեց Նիդերլանդիայում, այնուամենայնիվ ապահովագրության իսկական ձեզ և անարատ գաղափարը մնացել էր անխախտելի մի քանի ընկերությունների մեջ, որոնք հատկապես պարապում էին իսկական ապահովագրական գործնեությամբ և ոչ զրագներով: Նորա, փրենց նշանաբանին հաստատ մնացած ընկերությունները, որոշ գումարով ապահովացնում էին ամբողջ ընտանիքներ դժբախտ դեպքերից (որ նմանվում է մեր ներկա ժամանակին խմբական ապահովագրության), ապահովագրում էին անսառններին հիվանդություններից, կամ կարասիքը հրդեհից, ապահովացնում էին, վերջապես, մարդկային կյանքը բնական մահից և, այդպիսով, վնասի կամ դժբախտության ենթարկվածը անպայման ստանում էր ապահովագրած գումարը:

Սակայն կամաց-կամաց սահմանափակվեց և այդ ապահովագրական ձեզ. կորցնելով նախնական ապահովագրության ձեզ, ընկերությունները իրենց գործունեությունը ամփոփեցին հատկապես կյանքի ապահովագրության մեջ վարձատրություն տալու պայմանով թե՛ մահվան և դժբախտ դեպքերի և թե՛ նույնիսկ հիվանդության դեպքում: Եվ այդպես մինչև օրս էլ մեծ մասամբ եվրոպական շատ քաղաքներում ապահովագրությունը շարունակում են կամ նույն ձեռվ և կամ ակցիոներական սկզբունքով:

Հենց այդ ժամանակներում, այն է՝ 17-րդ դարու կեսում, Ֆրանսիայում երեան եկավ ապահովագրության մի նոր սիստեմ, որի իսկական դեկը հանձն առավ տանել հենց ինքը՝ պետությունը:

Մի ոմն կորենցո Տոնտի, նշանավոր իտալական բժիշկ, որ ապրում էր Փարիզում, առաջարկեց մի նոր կոմքինացիա, որը բխում էր հետեւյալ հիմքերից:

Ապահովագրվել ցանկացողների մի ստվար բազմություն միմյանց հետ պայմանավորվեցին ակցիոներական ընկերություն կազմելու, այսինքն՝ ամեն ոք նոցանից, անդամ կոչվելու համար, պարտավոր էր մի որոշ նշանակած գումար մտցնել ընկերության գրամագլխի, այն է՝ կասսայի մեջ, այդ գումարներից առաջացած տոկոսները միմյանց մեջ բաժանելու պայմանով։ Միևնույն ժամանակ մի որևէ անդամ եթե մեռնում էր, նորա բաժնից հանելիք տոկոսները և ակցիան մնում էր հօգուտ մյուս ակցիոներների։ և այդպես շարունակ մինչև այն ժամանակ, երբ մեծամասնությունը այդ անդամներից մեռնում էր, իսկ այդ բոլորից հետո ամբողջ գումարը վերջ ի վերջո մնում էր հօգուտ պետական գանձարանի։

Բժիշկ Տոնտիի ծրագիրը ամբողջապես ընդունվեց կառավարությունից, որը իր ֆինանսական սուղ միջոցների պատճառով վճռել էր իր վրա վերցնել գործի գլխավոր ինիցիատիվը։ Եվ այդպես՝ 1689—1759 թվականներին այդ տեսակ տոնտիներ հիմնվեցին մոտավորապես 10 հատ, պետության անունից։

Կարձ ժամանակամիջոցում ապահովագրության գաղափարը այնպիսի ծավալ ստացավ, որ մինչև անդամ մի քանի նշանավոր թվաբանների—ինչպես, օրինակ, Ֆերմայի-Դևեդի և ուրիշ շատերի հետ, երեկոյի մտածող Պասկալի ուշագրության արժանացան, որոնք սկսեցին լուրջ զբաղվել ժամանակամիջոցան թերորիայով։ Կարձ ժամանակում մեկը մյուսի ետևից սկսեցին լույս տեսնել ստատիստական տեղեկություններ, որոնք որոշում էին, թե ամեն մի տարում որքան մեռնողներ և որքան ծնվողներ են լինում և ուրեմն ապահովագրական ընկերությունները կարող են արդյոք դիմանալ երկար գործունեության (եթե, իհարկե, բժշկական քննությունների ենթարկվեն ապահովագրվելիք անձները)։ Այդ հավանականության թերորիայի վրա հիմնված թվերը վերջնականապես մշակման և ստուգման տրվեց հայտնի գիտնական Բյուժֆոն-Հալլեին, որի քննությունից հետո նորա նպաստավոր զեկուցումը ընդունվեց կառավարությունից։

Առաջին նվազ ընկերություն կազմելու գաղափարից օգտվեցին անդիմացիք, որոնք կոնդոնում հիմնեցին առաջին ապահովագրա-

կան ընկերությունը, ուր անհատականապես ապահովացնում էին ապագան՝ այրի կանանց թոշակներ տալով:

Ֆրանսիայում, սակայն, Տոնտինն էր առաջադիմում համագումար (կողեկտիվ) կերպով, իսկ Անգլիայում առանձին-առանձին՝ այն է անհատական ապահովագրությունը:

Եվ Հենց 17-րդ դարու սկզբում անմիջապես հիմնվեց Amicable կամ Perpetual Assurance ընկերությունը, որը գոյություն ունի մինչև մեր օրերը:

Միաժամանակ հիմնվեցին նաև Royal Exchange Assurance Corporation ընկերությունները, որոնք նույնպես գոյություն ունեն մինչև օրս: Անգլիայում նույնպես հիմնվեց The Equitable 1830 թ., Ֆրանսիայում Félix (Ֆելիքս): Այդ ժամանակներում ետ չմնաց և նոր աշխարհը: Ամերիկայում արագությամբ տարածվեցին ապահովագրության ընկերությունները, որոնցից այժմ ամենամեծները «Նյու-Յորք» և կարծեմ «Սալամանդրան» են, որոնց բաժանմունքները գոյություն ունին նաև Ռուսաստանում:

Գերմանիայում հիմնվեց Gothaer Banc (Գոթայի բանկ) բավականին ձեռնտու պայմաններով, և Հենց այդ ժամանակներում էր, որ Ռուսաստանում հիմնվեց 1835 թ. «Առաջին ռուսական ապահովագրական ընկերությունը» («Первое Российское Страховое общество»), որը գոյություն ունի մինչև օրերս և հաջողությամբ, թեև դանդաղ, տանում է իր գործը:

Եվ այդպես, ապահովագրական ընկերությունների գործունեությունը ժամանակի ընթացքում մի որոշ ձևի, որոշ ուղղության ենթարկվեց, նա ստացավ իրեն հատուկ ապահովագրության բնափորությունը, որով այժմ շահագործում են նաև Ռուսաստանում, և որոնց կանոնադրությունները հաստատվեցան պետությունից:

Կյանքի և գույքի ապահովագրության գաղափարը, ինչպես և ամեն մի այլ ապահովագրության, օրինակ՝ ցանքերի, այգիների, տրանսպորտների, դժբախտ դեպքերի՝ լավ է, համակրելի է. բայց թե որքա՞ն է ապահովագրական ընկերությունների գործունեության եղանակը համապատասխանում իրենց նպատակն, որքա՞ն բարեխղճությամբ են կատարում նոքա իրենց դերը կոմբինացիաների ժամանակ, ահա հարց, որի պատասխանը շատ էլ միախարական չէ:

Արդյոք արտասահմանյան և Ռուսաստանի ապահովագրական

ընկերությունները փոխադարձ շահավետության ակզբունքով և նործում, թե՝ միայն սպեկուլյացիայի:

Վերջապես արգարացնո՞ւմ են այդ ընկերությունները ապահովագրվել ցանկացող ժողովրդի հույսերն ու սպասելիքները, թե՝ միայն իրենց պայմաններով խրտնեցնում են և վերջը կլինափին ապահովագրվելուց հրաժարվել ստիպում:

Ահա հարցեր, որոնց պետք է պատասխանել, բայց որոնց չեն պատասխանում, թեև արդեն կա, եթե կարելի է այսպես ասել, «ապահովագրական գրականություն» և օրգաններ, ինչպես, օրինակ՝ «Страховое Обозрение»<sup>2</sup>, «Страховыя Ведомости»<sup>3</sup> և այլն:

Մենք մեր կողմից, սակայն, պետք է նկատենք, որ ապահովագրական գաղափարը, ինչպես յուր ծնունդ առաջ օրից մինչեւ օրերում, զանազան սպեկուլյատոր ընկերություններ՝ զանազան պերիոդներում և զանազան վարիացիաներով, նույնպես և դարուս վերջերում այլ և այլ ընկերություններ, սկսեցին դավաճանել իրենց ծրագրին և փոխադարձ շահավետության ակնկալությունը փոխանակեցին սպեկուլյացիայի և հարստահարության. ապացուց՝ այն բազմաթիվ թեր ու դեմ բացատրությունները, որ տալիս է մի մրցող ընկերությունը մյուսի դեմ՝ ապահովագրական մի քանի օրգաններում:

Եվ, այսպիսով, ապահովագրած անհատների 1/100-րդ մասը չի հասնում իր նպատակին, իսկ չի հասնում, որովհետև նախքան ապահովագրվելը խոստանում են նրան շատ բան, որոնցից մեկը տալիս են, մյուսը՝ ոչ:

Եթեակայեցեք ձեզ մի գործակալ (ագենտ) կամ վերատեսում (ինսպեկտոր), որ այս կամ այն ընկերության անունից մոտենում է ձեզ, ժանովանում և առաջարկում է ապահովագրվել: Ոսկե սարեր է խոստանում ձեզ. այսինչ թվականին, այսքան տարիներ անցնելուց հետո, ձեզ խոստանում է ահագին գումար, որ կարող են ստանալ ձեր մահից հետո ձեր ժառանգները կամ կենդանության ժամանակ դուք ինքներդ, եթե ապրեք որոշ ժամանակամիջոց: Ձեր վճարած տուրքերը (պրեմիան), հավատացնում է նա, ստանալիք գումարի կեսին կամ երեք քառորդին հազիվ հավասար կլինի, ցույց է տալիս տարիքներ... (իհարկե՝ ծածկելով երկրորդական ծախքերը). մի խոսքով համոզում է, որ նյութական կողմից՝ ապահովագրվել ցանկացող կլինափին միշտ ձեռնտու է ավելի ապահովագրության, քան քանկերի միջոցով նյութական կոմքինացիաների ձեռնարկելը: Այդ կողմերից իրեն ապահով գդալով, հարպիկ և

Հոեաւոր գործակալը, կամ տեսուշը, սկսում է այժմ ել բարոյականության փիլիսոփա դառնալ, մղում, քամում է իր լեզվի, գեղեցիկ ոճերի քաղցրախոսության և հաճոյախոսության տաղանդի ամրող ծուծը, ասելով, թե գուք ձեր բարոյական-ընտանեկան պարտավորություններից մեկն էլ պիտի համարեք ձեր կյանքի ապահովացնելը, որ ձեր ընտանիքը ձեր մահից հետո որոշ շափով նյութականափես ապահոված լինի. թե ընկերությունը, ուր գործակալ է ինքը, այնքան միլիոնների պահեստի գումար ունի, որ եթե այստեղ ապահովագրվածների 10-րդ մասը նույնիսկ մի օրում մեռնելու լիներ, ընկերությունը կկարողանար բոլորին էլ բավականություն տալ և այլն, և այլն, և այլն...

Այս և սորա պես ոսկի հույսերով հափշտակվում է՝ շուտ հարստանալու տենչով բռնված կլիենտը և անմիջապես ամեն մի հազարական ոռուլու ապահովագրական գումարի համար տասնական ոռուլի բեհ վճարում գործակալին և ստորագրում իր համար բազմաթիվ պարտավորությունների ու հարցերի պատասխանող զեկուցումը, որը ճարպիկ գործակալը գրապանն է դնում և ներքին գոհունակություննից ձեռքբերը շփելով դիմում է ուրիշին, մի նորորդին և այլն՝ ցույց տալով կիրակոսյանի կամ Փիլիպոսյանի վրա, վերջիններիս ստորագրած զեկուցումը օրինակ բերելով, նրանց էլ համոզելու, թե ապահովագրությունը շատ համակրելի (?) միտք է:

Անցնում է մի ամիս կամ քիչ: Եվ եթե բժշկական հմուտ և ժանրամասն քննությունը վկայում է, որ կոնտրագենտը ձեռնոտու և նպաստավոր ապահովագրյալ է, անմիջապես զլսավոր վարչությունից ուղարկվում է վկայագիրը (պոլիսը) և հայտնվում կլիենտին: Նոր է խեղճ կլիենտը (պոլիսի հակը մանր-մանր տառերով առված բազմաթիվ հողվածները կարդալուց հետո) հասկանում, թե որքան ծանր պարտավորությունների է ենթարկել ինքն իրեն, հանձըն առնելով տուրքերը ժամանակին վճարել: Նոր է սթափիվում, հասկանալով, թե քանի՛-քանի՛ տարի շարունակ նա պիտի ստիպված լինի առանց ուշացնելու տուրքերը կանոնավոր վճարել, որ վերջը, գուցե իր մահից հետո միայն, իր տված գումարը ստանան իր ժառանգները: Այդ գույ կլիենտի համար պոլիսի դրական կողմն է, պայմանագրի ձեռնոտու, շահավետ կողմը, հապա նորարացասակա՞ն կողմը.

Եթե, աստված շանե, կլիենտը մի քանի ամիսներ ուշացնի իր պարտավորված վճարումները հատուցանել, նա զրկվում է իր բոլոր մտցրած տուրքերից, եթե նույնիսկ կլիենտը՝ մի քանի տա-

բիներ շարունակ ընկերության կասսային հազարներ լիներ վճառած: Կա մի պայման, որ կարող է թեթևացնել նորա նեղն ընկած դրությունը, այդ այն է, որ կարելի է գրավ դնել պոլիսը և ետ վերցնել վճարած տուրքերի կեսը միայն, այն էլ այն պայմանով, որ գրավ գրած և նորա փոխարեն վերցրած գումարը (ըստ) տոկոսով վճարի մի տարուց հետո: Բայց քանիսի՞ն է հաջողվում գրավի տեղ առած փողը վերապարձնել: Հարյուրից մեկին: Գրավ վերցնելը կլիենտի համար համարյա նույն է, ինչ որ սեփական տան գրավ դնելը, որը շատ դեպքերում մնում է վաշխառու պարտատերին: Եվ պետք է նկատել, որ ընկերությունների հարստանալու գլխավոր աղբյուրներից մեկն էլ պոլիսի գրավ վերցնելն է:

Պատահում է, որ մի քանի անգամ, կամ մի քանի տարի պարագայության վճարները հատուցանելուց հետո, կլիենտն այլևս անկարող է վճարելը շարունակել որևէ ընտանեկան կամ առևտրական ձախորդ պայմանի շնորհիվ և կամենում է ետ վերցնել իր, իրը թե խնայած, «վճարները»: «Մինչև օրս իմ վճարներից ստացած տոկոսները թող մնա ձեզ, ավել միայն գումարը»— ասում է նա: Բայց նորան ժամանակով ցույց են տալիս պոլիսի հետևում մանրմանը տառերով տպված, կլիենտի համար աննպաստ §§-ի շարքը. նա կարգադրով սիրթնում է և զարմանք է հայտնում, որ իրեն ապահովագրող գործակալը, նախքան զեկուցման (օճյալուն) ստորագրել առաջարկելը, այդ և դորա նման պայմանների մասին ոչ մի խոսք, ոչ մի ակնարկություն չէր արել... Նա նոր է հասկանում, իհարկե, թե ինչ կնշանակեր, ապահովագրվելուց առաջ, գործակալի տասնյակ ոռությներ ծախսելը, որ նա անում էր կեր ու խումբ ժամանակ անփորձներին ծուղակի մեջ ձգելու համար: «Տվեր գոնե տվածիս կեսը, վերադարձեք գոնե վճարածներիս կեսի կեսը»— խնդրում է այլևս վճարելու անկարող կլիենտը. բայց նորան նույն ժամանակով ցույց են տալիս անողոք §§-ը և դատարկ ձեռքով ձանապարհ դնում՝ ասելով. «Չէ՞ որ, եթե այդ ժամանակամիջոցում մեռնեիք, ձեր ժառանգները պիտի ապահովագրված գումարը պահանջենիմ», կամ արդարանում են ասելով. «Ընկերության վարչությունը մեղավոր չէ այդ դեպքում, քանի որ դուք, կոմբինացիա ձեռնարկելով մի հիմնարկության հետ, մանրամասն տեղեկություններ չեք ժողովել ձեզ ապահովագրող գործակալից...». իսկ այդ գործակալը, վազուց թողած իր պաշտոնը այդեղ, գործում է մի այլ ապահովագրական ընկերության մեջ նույն պաշտոնով, միևնույն ժամանակ, իհարկե, պախարակելով նախկին ընկերու-

թյան մեջ մութ, խորամանկ և անբարեխիղճ վերաբերմունքը գեպի կլինտը, և գովելով այն ընկերության աղնվությունը և բարեխիղճ վերաբերմունքը, ուր ինքը նոր է մտել:

Եվ այդ ճարպիկ գործակալը միշտ հնար ունի խարելու, գրավելու, շլացնելու, մանավանդ այնտեղ, ուր կա ձրի հյուրասիրություն, քաղաքավարի վերաբերմունք, հաճոյախոսություն, վերին աստիճանի խորամանկ զգուշություն, համոզելու ընդունակություն և ուկե սարեր խոստանալու սովորություն:

Այդպես, ապահովագրվել ցանկացող ժողովրդի մի մասը դառնում է զո՞հ ճարպիկ գործակալի, կամ այդ բանում ավելի հմտացած վերատեսչի, գրանց, այդ գործակալների և վերատեսուզների շնորհիվ է, որ ապահովագրական ընկերությունները պահպանում են իրենց գոյությունը. պարզ է, որ այդ ագենտների ճարպիկությունները ոչ միայն վարչությունները չեն պատճում, այլև գրվատում, խրախուսում են, եթե միայն շահ ունեն. նոքա, այդ ագենտներն են, որոնք իբրև ամբողջ մեխանիզմի, ընկերության կազմի, շատափի անիվներ՝ շարժվում են, տանում են առաջ ընկերության շահերը, իհարկե, շահվելով և իրենք՝ թե՛ կոմիսիաներ, ոռօճիկներ, տասանորդներ, տոկոսիքներ և թե՛ այդպիսի շատ բաներ ստանալով: Եվ նրանք, որոնք ավելի ճարպիկ, ավելի հմտւած են այդ դեպքում, այսինքն՝ կլինտի աշքից նորա համար բոլոր աննպաստ պունկտերը ծածկելում, պոլիսի բացասական երկրությունները այլ կերպ (իբր կլինտի համար ձեռնուու) բացատրելում, այդպիսի ագենտները ընկերությունների համար եկամուտների մեծ աղբյուրներ են:

Իսկ ինչ վերաբերում է բախտավոր մեկին վարձատրելուն, այդ էլ թողեք վարչություններին կամ նրանց ներկայացուցիչներից մեկին:

Նոքա կաշխատեն որոնել մի փոքր անձտություն զեկուցման մեջ, մի որևէ սխալ տեղեկություն կամ պատասխան ծննդական վկայականի մեջ և ահա վեճի և սակարկության բանավոր պատճառներ, պոլիսում նշանակած դումարը լիովին շվճարելու դիտավորությամբ: Ստկարկությունները, վեճը, կասկածը և աննպաստ լիկվիդացիաները կլինտի համար զլխավորապես երևան են գալիս կրակից ապահովագրվելու դեպքում, մանավանդ՝ եթե վնճի բռնը-ված կողմերը ցանկանում են դատի դիմել, այդ դատաստանական պրոցեսը շատ ընկերությունների պոլիսի օրենքով պիտի կատարվի անպատճառ ոչ այն քաղաքում, ուր կատարվել է ապահո-

վագրության ակտը, այլ այնտեղ, որ այդ ընկերությունների վարչություններն են գտնվում:

Այդ և այդպիսի անհարմար, անձեռնտու և անախորժ հետեւ վանքներից ազատվելու համար ի՞նչ է մնում անել կլինտին, նթե ոչ գատարանի դիմել:

Բայց գատարանում դատը տանել շատ անգամ դուք անկարող եք... Զեղ կմեղագրեն, ձեր դատը կկորչի, որովհետև դատարանում ևս ձեղ ցույց կտան նույն ֆիզ-ը, որ գրված են պուլսի հակը. փղուր կարդարանաք՝ թե ապահովագրվելիս ձեղ շեն նախազգուշացրել. կամ նույնիսկ այդ պայմանները կարդալուց հետո էլ դուք չեիք կարող այդպիսի հասկացողություն կազմել, որովհետև նոքա պարզ չեն, երկդիմի են... կարելի է և այսպես հասկանալ և այնպես. բայց իդուր, ապահովագրական ընկերության ներկայացուցիչը վարժ է փաստաբանության և ծաղրելու մեջ, նա կասի, թե այդպիսի հասարակ ֆիզ-ներ հասկանալու համար չպետք է փիլիսոփիա լինել... և կրերի դորա նման անհիմն պատճառաբանություններ:

Այժմ հարց է առաջանում, արժե՞ ապահովացնել կյանքը, երբ այսքան խոշընդուների, կամ, ուսւի ասած՝ կրյուշկների պիտի հանդիպի մարդ (մանավանդ՝ երբ նա անտեղյակ, անգիտակ է այդ բանին). կամ հարկավո՞ր է երբեկցի ապահովագրական ընկերությունների հետ պայմանավորվել, քանի որ մարդ ավելորդ պատրաստի (մի կողմ դրած, ասցինովանին) գումար չունի այդ բանի համար, ավելի լավ չէ՝ արդյոք խնայել այդ փողերը բանկերում, քան թե դորանով զանազան անբարեխիղճ և ճարպիկ ապահովագրական գործակալների գրանները լցնել. Թող այդ մասին մտածեն ապահովագրվել ցանկացողները:

\* \* \*

Ինչպես ընթերցողը տեսնում է, ապահովագրական համակրելի գաղափարը, իր պատմության օրից սկսած մինչև մեր օրերը, մասնավոր ընկերությունների և անհատների շնորհիվ միայն սպեկուլյացիայի է ծառայել և ոչ յուր իսկական նպատակին. ինչպես տեսանք, այդ ընկերությունները ամեն մի պերիոդում զանազան եղանակով ի շարն են գործ դրել պետություններից իրենց շնորհած երավունքները, մինչև որ վերջապես ինքը կառավարությունը չէ միջամտել և ապահովագրության դեկը իր ձեռքը չէ տոել և այդ-

պիսով կանոնավորել մասնավորների շնորհիվ խեղաթյուրած գործ:

Որքան ուրախալի է, որ չուտով, մեզ մոտ, Ռուսաստանում ևս գոյսովյուն ունեցող բոլոր մասնավոր ապահովագրական ընկերությունները կընկնեն կառավարության ձեռքը և այն ժամանակ, ճույն ունենք, որ ապահովագրական համակրելի գործը կկանգնի իր հաստատուն, կանոնավոր և արդար հիմունքների վրա և ոչ այն սպեկովյացիալի, որ տիրում է այժմ Ռուսաստանի մի քանի ապահովագրական ընկերությունների մեջ:

## Ա.ԶԳԱՅԻՆԵ, ԹԵՇ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՅ

(Ներս <իսյան> դպր <ոցի> հոգաբարձուներ  
ընտրող պատգամավորներին)

Այժմ, երբ Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում, որպես և թեմում,  
Ներսիսյան դպրոցի<sup>1</sup> համար ընտրված են հոգաբարձուական պատ-  
գամավորներ, մենք անհրաժեշտ ենք համարում այդ ընտրվածնե-  
րի միստիացի մասին մեր դիտողություններն անել:

Անհրաժեշտ ենք համարում, որովհետեւ այդ թեկնածուները  
կործեր ունեն կատարելու մոտ ապագայում, նոքա են, որ ամբողջ  
թեմից եկած պատգամավորների հետ պիտի Ներսիսյան դպրոցի  
համար ընտրեն 12 այնպիսի հոգաբարձուներ, որոնք կարողանա-  
լին արդարացնել ժողովրդի էական պահանջներն ու հույսերը:

Ո՞ւմ չէ հայտնի այն սրամիտ ասացվածքը, թե՝ «որտեղ մի  
քանի հայ են ժողովվում, այնտեղ էլ նույնքան կուսակցություններ  
են առաջանում»: Ծիշտ այդպիս էր և Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում  
կատարված հոգաբարձուական թեկնածուների ընտրությունները:

Այդական դուք կտեսնեիր և՛ կզերական նորդարականներ,  
և՛ նոր կաշվի տակ փաթաթված նախկին մշակականներ, որոնց  
մի մասը այժմ իրենց կոնստ <իտուցիոն>-դեմոկրատներ են  
հայտարարել, իսկ մյուս մասը՝ նացիոնալիստներ, այդտեղ դուք  
կպատճեք և՛ նացիոնալ-դեմոկրատների, և՛ արմատականների,  
և՛ վերջապես, նույնիսկ, ձախակողմյանների:

Պարզ երևում էր, որ պայքարը կուսակցական է լինելու, ուր  
ամենքն էլ մի կրակով են բռնված, այն է՝ տապալել հակառակոր-  
դին և անցկացնել իրենց թեկնածուներին:

Պայքարը մեզ ակամա հիշեցնում էր 12—15 տարի սրանից  
առաջ մշակական և նորդարական, այլ խոսքով՝ լիբերալ և պահ-  
պանողական կուսակցությունների մղած կոհիմները: Այս, վերը հի-

շամ կուսակցականները, նույն մշակական-նորդարականների գավակներն էին, բայց միայն ուրիշ կեղեկի տակ, այլ կաղապարի մեջ մտած և նոր հովերով տարված:

Եվ այդ կերպարանափոխված պարոնները ներկա եղող ժողովրդի առաջ կամ նույն էին պարզել իրենց դրոշակը, իրենց ծրագիրները հանդես հանել:

Տիրապետող տարրը, սակայն, համարյա բոլոր եկեղեցիներում նացիոնալիստներ էին:

Մի տեղ, օրինակ, ահա թե ի՞նչ է ասում մեկը. «Հարկավոր է ներսիսյան ազգային դպրոցը ազատել հին ուժիմից, միանգամից տապալել մանկավարժական սխոլաստիկ սիստեմը և մտցնել նոր, թարմ մանկավարժական սխոտեմ, ուր գլխավոր տեղը բոնհին ուսական և այլ մասնագիտական գիտության առարկաները»:

Մի այլ տեղ մյուսը, հարձակվելով նախկին հոգաբարձուների գործունեության վրա, հայունում էր, թե մինչև այժմ եղած հոգաբարձությունը անձնազոհության անընդունակ լինելով, անկարող եղավ դպրոցի գույքը փրկել կառավարության հավիշտակումից, և մեղադրում էր նախկին հոգաբարձությանը քաղաքացիական քաշության պակասության մեջ:

Մի ուրիշ տեղ էլ մի երրորդը հենց մի գլուխ պնդում էր, ասելով, թե ներսիսյան դպրոցը, որպես ազգային մի հիմնարկություն, հանձինս իր մանկավարժական մարմնի և ղեկավար հոգաբարձության, անկարող հանդիսացավ մինչև օրս տալ մեր հայությանը ճշմարիտ ազգասերներ, նույնիսկ հայերեն լավ խոսող և հայերեն բնույթ հիմնավորապես իմացող գրականագետներ, ուրոք կարողանային ազգային հոգին լավ ըմբռնող մանկավարժներ հրավիրել, ազգի շահերը խորը թափանցող անհատներ առաջ բերել և ազգային հոգով կըրթել մանուկ սերունդը:

Այս հառողները, ընթերցող, ճիշտ է, անհատներ էին, բայց նոքա իրենցից ներկայացնում էին, որպես տիրապետող հայացքների արտահայտիչներ և մեր համարյա բոլոր նկեղեցիներում տիրապետող կարծիքը գլխավորապես պատում էր այդ վերջին հայցքի շուրջը:

Գտնվեցին, սակայն, ժողովրդական մարդիկ, որոնք թեև շշետեցին բուն ժողովրդի իսկական ցավոտ կողմերը, բայց հասկաց-

\* Հետեւաբար:

րին մեր ճառախոսներին, թե՝ պարոննե՛ր, որքան էլ ցանկալի լինեն ձեր ծրագիրները և անձնազո՞ւթյան մասին պնդելը, այնուա՞ն-նայիվ, չարիքի արմատը պիտի որոննել ո՛չ թե նախկին հոգա-բարձուների դպրոցական գործերը կառավարելու անընդունակու-թյան կամ մանկավարժական սխոլաստիկ սիստեմի մեջ, այլ զըլ-խավորապես այն բանի, որ սրբան էլ ն<երսիսյան> դպրոցի ղե-կավարները ցանկանացին արմատական փոփոխություններ մացնել արդ հիմնարկության մեջ — դարձյալ չէին կարող. իսկ չէին կա-ռող, որովհետև դպրոցը նախ հաստատված, որոշ ծրագիր չունի, երկրորդ՝ դպրոցի կրթական, ծրագրային և այլ իրավունքները կենտրոնացած են զանազան առաջնարդների և բարձր կղերակա-նության խնամակալության տակ:

Այդ կղերականությունն է, որ գլուխ ունենալով կաթողիկո-սին, դպրոցը իրենն է համարել և միշտ իր անողոք տօ-ով<sup>\*</sup> ներ-կայացել է կամայականության մի անողղելի հեղինակ: Եվ եթե ցանկանում եք, որ սրանից հետո մեր բոլոր դպրոցական գործերը ընդհանրապես, և ներսիսյան դպրոցի գործերը մասնավորապես, ուղիղ ճանապարհի վրա լինեն զրված, հարկավոր է կրիվ մղել շա-րիքի բուն արմատի՝ ուեակցիոններ կղերականության դեմ, որ միշտ արգելք է եղել և լինում ամեն մի նոր հոսանք մտցնելուն, ամեն մի առաջնազարդ նախաձեռնության:

Ինչպես տեսնում ենք, ժողովրդական մարդիկը կղերական Բաստիլլի<sup>2</sup> վրա գրոհ տալն էին հրավիրում ընտրողներին և ժո-ղովրդին:

— Ճիշտ է, ճիշտ,— նոր ուշքի գալով կրկնում էին մեր նա-ցիոնալիստները ժողովրդական մարդկանց շնորհիվ գտած դիագ-նողը, բայց շարունակում, թե ներսիսյան և մյուս մեր դպրոցները ազգային դպրոցներ են, և ուրեմն, անհրաժեշտ է խլել հոգերա-կանության ձեռքից նրա զավթած իրավունքները և տալ ազգին, որ ազգը կառավարի իր ուսումնարանական գործերը:

«Ազգ, ազգային, ազգային հոգի»,— այս խոսքերն էին, ահա, որ հոլովվելով, լսվում էին ամեն կողմից, այս էր, որ շեշտվոամ էր շատ հոետորների ազգասիրական ճառերում և եռանդագին ծա-փահարությունների արժանանում:

Պատկերը և տիրող տրամադրությունը բնորոշ էր:

Ներսիսյան դպրոցը ազգային դպրոց է, ուրեմն հարկավոր է, որ նրա դուռը մտնեն առհասարակ ազգայինների զավակները:

\* Արգելում եմ:

Եղբակացությունն էլ, ինչպես տեսնում եք, կատարյալ է:

Այժմ ձեզ ենք դիմում, աղքային պարոններ, և պահանջում պատասխաննել. ազգ, կամ աղքային առելով, դուք ի՞նչ եք հասկանում:

— Նրա ամբողջությունը, — երկի կպատասխանեք դուք:

Բայց այդ ազգ ասած ամբողջության մեջ չէ՝ որ մտնում են նաև նրա անհարազատ զավակները (թեև, ըստ ձեր իդեոլոգիայի, նորա անհարազատ շեն), ինչպես, օրինակ՝ կապիտալիստներ, առետրականներ, մանր վաճառականներ, տերտերներ... այլ խոսքով հարստաձարիչներ, վաշխառուներ և զանազան պարագիտ տարրեր. այդ կեղերից տարրերի զավակներին է՛լ եք ուղում մտցնել ներսիսան պատային դպրոցի շեմքով...

(Եթե, իհարկե, ցանկանան մտնել, դուք չե՛ք կարող արգելել նրանց մուտքը, որովհետեւ նոքա էլ աղքի զավակներ են նույնպես, այնպես չէ...):

— Ո՛չ, պ.ա. աղքայիններ, ասում ենք մենք, կա մի այլ զասակարգ, որի մասին դուք այնքան քիչ խոսեցիք ձեր ճառերում և որի գոյության մասին մի քանի տողից հետո կհիշեցնենք ձեզ, իսկ առայժմ հայտարարում ենք ձեզ, որ ներսիսան դպրոցը սուրանից հետո այլևս ազգային դպրոց կոչվել չի կարող, և չպիտի կոչվի:

Նա պիտի զառնա ներսիսան ժողովրդական դպրոց իր անպայման պարտադիր ձրի ուսումով, ուր զիմավորապես պետք է մուտք գործեն բուն ժողովրդի զավակները: Նա պահվում է ժողովրդի անունով և ուրեմն նրա շեմքով պիտի մտնեն ոչ թե բոլոր աղքայինների զավակները անխտիր, ուր շատ դեպքերում էլ աղքասիրաբար, խնամության և կապերի շնորհիվ են լցվում, այլ իսկական ժողովրդի, այն է՝ նախ և առաջ պրոլետար բանվորության և պրոլետար զյուղացիության զավակները, որոնց հայրերը մի կողմից տնքում են հարստաձարիչների մագիլներում, ապրուատի ծայրը ծայրին հազիվ հասցնում, մյուս կողմից՝ ջղածպական ձիգեր անում՝ մի կերպ փախչել արդյունաբերական կենտրոններ, ուր մի քանի կոպեկներ ձեռք բերելով՝ կարողանան վերադառնալ իրենց օջախը՝ օձիքը թափելու վաշխառումներից:

Ահա այդ տեսակ հայրերի զավակներն են, որ ամենից շուտ պիտի վայելեն նոր, բարեփոխված ներսիսան ժողովրդական դպրոցի պատուղները:

Եվ քանի որ դպրոցը պիտի լինի խիստ դեմքութատիկ, քանի

որ ուսումնարանն է, որ ժողովրդական ազատագրական գործում ահազին դեր ունի կատարելու, մենք միակ ճանապարհը գտնում ենք ձրի, պարտադիր ուսման մեջ, որը պիտի ծառայի դլամավորական սեփականազորկ տարբերի զավակների համար:

Դուք ասում եք, մենք ազգասերներ ենք, բայց ձեր ազգասիրությամբ զոհում և ետ եք մղում իսկական պրոլետարիատի զավակների կրթական գործը:

Մյուս կողմից, ժողովրդի անունից խոսող ազգայիններդ, միշտ պարծենում եք բուն ժողովրդի անունով և պատրվակ բռնում նրա գոյությունը այն ժամանակ, երբ մի մարդատյաց Սովորին իր «Հօ-  
վ<օε> Երեմյա»-ով<sup>3</sup>, հայ ազգը անվանում է վաճառականական, վաշխառուական ազգ. դուք վիրավորվում եք, երբ մի որևէ Գրինգ-մուտ իր օտարակեր «Моск<овские> Ведомости»-ով<sup>4</sup> հայ ազգին «Կովկասի Հրեաներ» անունով է հայհոյում, դուք փրփրում եք, բայց ազգի անունով նախանձախնդիրներդ անկարող հանդիսացաք փաստորեն ջրել նրանց անհեթեթությունները, դուք միայն վրդովկել գիտեիք. և ձեր՝ բուրժուա իդեոլոգներիդ երեսը պարզ անել կարողացավ մի բարի, օտար ոռու մարդ Հազօն ազգանունով, որը ստատիստիկական պերճախոս փաստերով ապացուցեց, որ իրոք հայ ազգի մեծագույն (85) տոկոսը կազմում է գյուղացիությունը և բանվորությունը<sup>5</sup>:

Այնուհետև, դուք միշտ Սակոնովի փեշիցն էիք կախվում, նրա ապացուցած թվերը մեջտեղ բերում, երբ հանդուն օտարականները նորից հարձակման փորձեր էին անում հայ ազգի ամբողջության դեմ:

Ժողովրդի անունից խոսող ազգայիններ, նորից ձեզ հնք հարցնում, ո՞վ է, ուրեմն, ազգը և ի՞նչ եք հասկանում «համայն ազգ», «ազգություն» պոռալով:

Նրանք են արդյոք ազգի զավակ համարվում, որոնք «ազգասիրաբար» հարստահարում են փրենց սեփականազորկ եղբորք, թե՝ այն հոգեկորականությունը, որը պատուհասի պես ընկած ժողովրդի կրծքին՝ պարագիտություն է անում, կամ գուցե նա՝, որ ֆարբիկաներից և վաճառատներից ապրանք գնելով՝ բերում դարսում է իր խանութում և կրկնակի զնով ծախում հենց նույն ապրանքը արտադրող դասակարդի ընկերների, այն չ՝ բանվորության և գյուղացիության վերա: Ազգային և ազգի անդամներ են նրանք, արդյոք, որոնք իրենց նսական բարօրության և հարստահարչական ձգութամների մասին են միայն մտածում:

Ո՛չ և ո՛չ, ազգը տպիտության մեջ խարիսավող գյուղացիությունն է, ազգատության մեջ հետամնաց հայ աշխատավոր մասսան է, որոնց զավակների համար գլխավորապես սկիտի բանալնոր վերածնվելիք ժողովրդական ներսիսյան > դպրոցի դաները:

Դրա համար անհրաժեշտ է, որ թե՛ Ներսիսյան դպրոցի և թե՛ մեր մյուս տարրական դպրոցների խնամակալությունը գրիլի բուն ժողովրդի ներկայացուցիչների իրավասության տակ և ոչ այն բուրժուաֆիդեռոգների, որոնց ամեն մեկը մի-մի սատրապներ են իրենց տեսակի մեջ:

Ազգասերը, և այն էլ ամենալավ ազգասերը ձեղնից, նա՛ է, ով իսկական ճնշված դասակարգերի բնդհանուր շահերն է պաշտպանում, նրա կարիքների ու զրկմանքների մասին միայն միտքը մաշում, այլ ոչ թե անխտիր ազգի ամբողջության մասին ճառում, ուր գայլերը գառների հետ միասին ապրել երրեք չեն կարող:

## ՊՐՈԼԵՏԱՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Խոսեցեք ամեն մի հայի հետ, լինի նա գրականագետ, թե  
ընթերցող, խմբագիր, թե աշխատակից, կարմիր թե կապույտ գույ-  
նի, ազատամիտ, դիպլոմավոր, թե ոչ դիպլոմավոր ինտելիգենտ—  
այդ բոլորը միևնույն է — դուք բոլորից եւ կամեք նույն, տասնյակ  
տարիների ընթացքում կրկնվող գանգատը, թե մենք, հայերս, վե-  
րին աստիճանի տիրացուական ժողովուրդ ենք, որ այդ տիրա-  
ցուականությունը մի կատարյալ ախտ է մեզ համար և որ ամեն  
կերպ աշխատելու է այդ ախտը բուժել մեր միջից: Բայց հենց որ  
մի որևէ առիթ է ներկայանում, նույն այդ գանգատվողները, նույն  
այդ ախտը բուժել ցանկացողները, իրանք են առաջինը լինում տա-  
տանվող տիրացուականությունը անկումից փրկողները: ու նրան  
ավելի հաստատ պատվանդանի վրա դնողները:

Ֆեոդալա-բուրժուական շկոլայով սնված ու մեծացած մեր  
ամբողջ հայ հասարակության մեջ այն աստիճան խոր արմատ է  
զցել տիրացուական ոգին, որ նա, հասկանալով հանդերձ, թե  
կուլտուրական, նամանավանդ ազատամիտ, երկրներում տիրա-  
ցուականությունը այլևս մի շատ արատաբեր բան է համարվում,  
միևնույն ժամանակ անկարող է հանդիսանում իր մեջ արմատա-  
ցած այդ տիրացուական բնագդի գեմ մաքառելու և, հարմար բո-  
պեն եկածին պես, նա իսկույն շտապում է Փարազայի լայն փեշե-  
րի մեջ փաթոթ' ու ու ծոված վեղարը կարդի բերել...

Այս վերջին շաբաթների ընթացքում մեր ամբողջ հասարակու-  
թյունը, ամբողջ ինտելիգենցիան ու մամուլը, հենց այդպիսի աշ-  
խատանքով է զբաղված, որի վրա անկարելի է աշք գոցել ու ոշինչ  
շասել:

Հայկական տիրացուականությունը այս վերջին շաբաթների  
ընթացքում երկու խորունկ վերք էր ստացել հանձին երկու բարձ-

բաստիճան հոգեորականների, տրոնցից մեկը՝ Սուքիաս արքեպիսկոպոսը, բարոյական մահ էր կրել դաշնակցական խուժանի ձեռքով, իսկ մյուսը՝ Սեղրակյան արքեպիսկոպոսը մեռել էր իր բնական մահով: Եվ ահա ամբողջ հասարակությունը, իր ամենալավագույն հորչորչված ինտելիգենցիայի ղեկավարությամբ, կարծես թե մի մոգական փայտի շարժվածքով ոտքի կանգնեց՝ զրանցից մեկի արատավորված պատիվը վերականգնելու, իսկ մյուսին՝ ամենաշքեղ ու փառավոր հուղարկավորություն կատարելու:

Ճիշտ է, մեր «ազատամիտ» մամուլը ու «ազատամիտ» ինտելիգենցիան կղերականության ամենապահպանողական ղեկավար Սուքիասին պաշտպանելը սրատճառաբանում էին նրանով, թե իրանք այս դեպքում Սուքիասի մեջ տեսնում ու պաշտպանում են միայն «անարդված մարդուն», թե իրանք բողոքում են դաշնակցության շափ ու սահմանից գուրս եկած վայրագությունների դեմ, բայց և այնպես զրանք միմիայն առարկություններ են տիրացուական բնազդն ու ոգին քողարկելու համար: Այդ մենք տեսնում ենք պարզապես այն հիման վրա, որ դաշնակցությունը բոլորովին նոր չէ, որ իր վայրագությունների շափն ու սահմանը անց է կացրել: Նրա՝ դավառներում կատարած ենիշերություններն ու բաշիբոզուկությունները գեթ այս վերջին տարվա ընթացքում աշխարհք թընդացրին: Դրանցից միմիայն պարբերական մամուլում լույս տեսածները արդեն մի պատկառելի հատոր կարող են կազմել: Եզ հենց այդ լույս տեսած դեպքերից շատերը այն աստիճան մերժ սոսկալի, մերթ նողկալի, մերթ գազանային ու զաղրելի են, որոնք Սուքիաս եպիսկոպոսի հետ պատահած դեպքից բոլորովին ո՛չ նվազ հասարակական կազմակերպված բողոքի ու դատաստանի հանձնելու արժանի էին: Սակայն մինչ օրս մեր «ազատամիտ» մամուլից և ո՛չ մեկը չմտածեց դրանց մասին մի ընդհանրական բողոք կազմակերպել, և այդ դեպքերից ո՛չ մեկի առիթով մեր «ազատամիտ» փաստաբանները, բժիշկները և այլ կարգի ինտելիգենտները խմբական բողոքներ չհրատարակեցին թերթերում: Տեղ գյուղում կնոջը մերկացնելու ու հրապարակավ ծեծի ենթարկելու դեպքը, որ կարծում ենք շատ ավելի զորավոր պիտի լիներ ցնցելու համար մեր ճարպուտած և զգայնությունը կորցրած ինտելիգենցիային, բոլորովին աննկատելի անցավ նրանց համար, գոնե ոչ ոք զրանցից արձագանք չտվեց մամուլի մեջ երևացած մի քանի հատ ու կտոր պատահական բողոքներին: Բայց հենց որ գաղանության զո՞ւ դարձավ մի ֆարազավոր, և այն էլ արքեպիսկոպոս,

այդ ժամանակ արդեն ճարպը կորցրեց իր ազդեցությունը և չղերը ցնցվեցին...

Այդ ժամանակ մոռացված էր ազատամտությունն էլ, և մարդիկ դուրս եկան պաշտպանելու միմիայն և միմիայն... ֆարազանու վեղարը: Այդուղի արդեն հայ հասարակությունը իր տիրացուական բնագդի ու հոգու տուրքն էր վճարում, և նա փառավորապես վճարեց այդ տուրքը:

Այդ սրբազն տուրքի վճարումը, հանձին պահպանողական-կղերական Սուրբիասի, սկսեց մեր «ազատամիտ» ինտելիգենցիան, ու հասարակությունը եկավ նրան շարունակելու՝ հանձին «ազատամիտ» կղերական Արքստակեսի: Այստեղ արդեն մեր «ազատամիտները» շատ ավելի ազատ ու համարձակ էին զգում իրանց, նրանք այլևս չեին վախենում, թե իրանց տիրացուականությունը կարելի է նկատել, որովհետև հանգուցյալը թեև կղերական էր, բայց «ազատամիտ» կղերական էր, իսկ այդ արդեն բավական է, որպեսզի ազատամիտ տիրացուականները ավելի մեծ համարձակությամբ ծավալ տան իրենց տերտերական բնագդներին:

Ազատամիտ բառը մեր «ինտելիգենցիայի» համար ճիշտ այն գերն է կատարում, ինչ որ Տրոյական պատերազմի ժամանակ հույների շինած փայտե ձին<sup>1</sup>: Ինչպես որ հույները, փայտե ձիու մեջ իրանց զինվորների մի մասը թաքցնելով ու այդ ձևով պաշարված քաղաքի ներսը սպրդելով, կարողացան Տրոյան նվաճել, այնպես էլ մեր «ինտելիգենտները» ազատամիտ շղարշի տակ ամեն մի քառս, ամեն մի պահպանողականություն ու տիրացուականություն թաքցնելով, սլքեցնում են ժողովրդի միամիտ տարրերի մեջ ու սրանց սրտերը, համակրությունն ու... քիները նվաճում:

Սակայն, ինչպես որ վաղուց անցել են փայտե ձիերի միջուկը քաղաքներ նվաճելու ժամանակները, այնպես էլ անցել նու ազատամիտ բառի փայլով մարդկանց շլաշնելու ժամանակները: Այժմ հասարակությունը, ժողովուրդը, նամանավանդ սրա լայն խալիքը, որոնց ամենասրտացավ բարեկամներն են ուզում ձևանալ մեր բոլոր «ազատամիտները», այլևս չեն բավականում այդ շողջողուն յարիկով և ազատամտության կոնկրետ ապացուցներ են պահանջում: Ահա հենց այստեղ է, որ մեր «ազատամիտները» ամենածիծաղելի շփոթության մեջ են ընկնում, բառեր չգտնելով իրանց ազատամտությունը բացատրելու համար: Եվ, հիրավի՞ ի՞նչ էական կապ կարող է լինել ազատամիտ և կղերական բառե-

քի միջև: Եվ մի՞թե աղատամիտ բառի իսկական նշանակությունը հասկացող մարդը կդնա և կղերական կդառնա:

Եթե Հանգուցյալ Սեպրակյանին ներբողել ցանկացողները բավականանացին միմիայն նրան «աղատամիտ կղերական» անվանելով, մենք գուցե նրանց ներբողներին ավելի ներողամիտ գտնը վեխնք: Բայց ո՛չ, նրանք տքնում էին ցուց տալու, որ Հանգուցյալը ոչ միայն աղատամիտ կղերական էր, այլև «աղատամիտ մի մեծ» մարդ էր: Ամենամեծ կոմիզմն էլ ճիշտ հենց այսուեղ էր սկսվում. զգալով, որ այդ փրում բառերը ներկա ժամանակներում ինքնըստինքյան դեռ ոչինչ չեն արտահայտում և կամենալով Արիստակես եպիսկոպոսի աղատամտության կոնկրետ ապացուցներ տալ, նրա երկրագուները մի ամբողջ շարաթվա ընթացքում հազիվ կարողացան երկու բան տանը միայն. 1) Հանգուցյալը տպետներին քահանա չէր ձեռնադրում և 2) Նա կամենում էր ժողովրդի ձեռքը մաշտոցի փոխարեն ավետարան տալ և քրիստոնեական ոգով վերակազմել եկեղեցին:

Ասացեք խնդրեմ, մի՞թե ծիծաղելի չեն այս երկու թեղիսներն էլ, իբրև աղատամտության ապացուցներ: Մի՞թե այդ երկուսն էլ չեն ապացուցում, որ Սեպրակյան արքեպիսկոպոսը լոկ մի կղերական էր, որի ամենամեծ փայտիայած միտքը այն է եղել, որ գիտակից քահանաների ու հոգևորականության միջոցով կարելի լինի շատ ավելի ուժեղացնել կղերական կաստան ու սրա միջոցով՝ եկեղեցու ազդեցությունը ժողովրդի վրա: Այլ խոսքերով, շրավականանալով ներկայումս հայ ժողովրդի միշ եղած տիրացուական ոգով, նա կամենար, որ այդ ողին շատ ավելի զորավոր տեղ բռներ, որպեսզի շատ ավելի հեշտությամբ կարելի լիներ այդ զբժախտ ժողովրդին շահագործության գործիք դարձնել կղերի ու նրա եղբայրակից բուրժուազիայի ձեռքին...

Այդ է աղատամտությունը, այդպիս են հանաշված աշխարհում աղատամիտ ու մեծ մարդիկ:

Աղատամտության այս աղայամիտ ապացուցներից հետո, գալիս էին Հանգուցյալին վերաբերյալ մյուս ներբողները՝ անկաշառ, լավ վարչական մարդ, խնամություն շնանալող, անաշառ, անկողմնապահ լինելը և այլ այս կարգի բարեմասնությունները, որոնք, իհարկե, շատ գնահատելի են, և ցանկալի է, որ զրանցից զուրկ լինեն ոչ միայն իրանց ամբողջ կյանքում քրիստոնեական «բարոյականություն» քարոզող հոգևորականները, այլև ամեն մի փոքրիշատե կրթված մարդ: Սակայն, երբ այդ ամենասովորա-

կան համարվելիք հատկությունները մեր «ինտելիգենտ» և «ազատամիտ» բուրժուազիայի կողմից այդ աստիճան շեշտվում ու հիացմամբ փառաբանվում են մի բարձր կղերականի մեջ, մարդ ակամայից մտածում է, թե ո՞ր աստիճան, ուրեմն, փշացած ու բարոյականությունից զուրկ լինելու է մեր հասարակությունը, մեր բուրժուազիան, որ նրա համար անհասանելի ու փառաբանության արժանի բաներ են համարվում անկաշառությունն ու անաշառությունը, նույնիսկ մի բարձրաստիճան կղերականի մեջ...

## ԲՅՈՒՐՈԿՐԱՏ ԳԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱՆՈՒՄ Է

Դաշնակցությունը, չորրորդ քաղաքամասում ևս պարտություն գրելով, հատուկ իր սեահոգության և ի միախարություն իր դադարած սրտի, անպատճառ կամիցավ մի մութ ստվեր ձգել այդ քաղաքամասում ո<ոցիալ> դ<եմոկրատների> տարած հաղթանակի վրա:

Սոլոլակը բուրժուական, կադետական է, պիտի, ուրեմն, կադետներն անցնեին, բայց, ի զարմանս (?)՝ «սոցիալիստ» դաշնակցության՝ անցել են սոցիալ-դեմոկրատները։ Ահա մոտավորապես այն եղբակացությունը, որին հանդում է «Ժամանակը» իր «Ընտրությունները Թիֆլիսում» հոդվածում։

Այնքա՞ն է կուրացել «սոց<փալիստ>» դաշնակցությունը, որ մոռանում է նույնիսկ այն փաստը, թե ինքը պարտություն է կրել այդ նույն բուրժուական քաղաքամասում միայն 17 ձայնով։ ուրիշ խոսքով, եթե բուրժուա Սոլոլակը ընտրեց սոցիալ-դեմոկրատ պատվիրակներ 360 ձայնով, դաշնակցությունն էլ դրա դեմ հանեց 343 ձայն։ Այդ այդպիս լինելուց հետո, կարծում ենք, որ դաշնակցությունը, եթե ոչ մի քիչ խելք, գոնե զգուշություն պիտի ունենար բուրժուական Սոլոլակի մասին լոելու…

Բայց տեսեք, դաշնակցությունը, անկարող լինելով գսակել իր սրտնեղությունը, այլև մարսել շկարողանալով տեղի ունեցած փաստը, զարմանում (?) է, որ բուրժուա Սոլոլակը իրան դավաճանեց, այն Սոլոլակը, որին նա անցյալ տարվա հայ-թուրքական կոտորածների ժամանակ իր «պաշտպանության» տակ առավելու...

Դուք այնքա՞ն եք կարճամիտ, այնքա՞ն այլասերված, որ իրերի ամեն մի օբյեկտիվ ընթացք բացատրում եք բոլորովին այլանդակ կերպով և կհիվանդանաք, եթե ամեն մի պարզ երևոյթ զուտարանեք հակառակ կողմից, կամ այդ առթիվ մի կեղտուտ ակնարկ չանեք։

Նախ՝ ձեզ՝ լավ հայտնի է, որ կադեւները և մշակականները առանձին և ինքնուրուցն են հանդես եկել ընտրողական պայքարում. դրանք միայն 126 ձայն հանեցին հօգուտ իրանց թեկնածուների:

Երկրորդ՝ այնքա՞ն եք նեղհայացք և փաստերը խեղաթյուրելու ընդունակ, որ բոլորովին մոռացության եք տալիս Սոլոլակի այն աղքատ թաղը, որը սկսվում է Վոզնեսենսկայա, Կոսայա, Օրլովսկայա և Պրոսյոլունայա վոտղոցներով և հանգում է մինչև ս. Դավիթի քարափը, ուր գլխավորապես ապրում է շքավոր և պրոլետարիատ:

Եղե՛լ եք դուք, արդյոք, Օրլովսկայա, Պրոսյոլունայա և նրան կից ծուռ ու մուռ փողոցներում, տեսե՞լ եք գոնե այնտեղ բուն դրած այն խիտ աղքաբնակությունը, որոնց աղքատ տները, իրար սեղմ զրկած, իրար ուս ելած, թոշոնների բույնի պես կպած այս կամ այն քարափի կրծքին, իրանց աղքատության հոգսերով տապակված ապրում են մի կերպ, և դրանք վրիպել են ձեր բուրժուական ուշադրությունից: Ահա այդ աղքատ դասակարգն էր, որ արհամարհելով օրվա աննպաստ հանգամանքները և ձյունյա վատ եղանակը՝ եկավ և սոցիալ-դեմոկրատիային տվեց իր 360 ձայնը:

Սոլոլակի աղքատությունն էր, որ եկավ ցույց տալու, թե ո՞վ է սոցիալ-դեմոկրատիան և ո՞վ՝ դաշնակցությունը. Սոլոլակի աղքատությունն էր, որ եկավ թոթափելու զոռով նրա շլինքին փաթթած ձեր «պաշտպանողական» խնամակալությունը. և այսօր կատարված փաստի դեմ որքան էլ ջանաք զանազան մութ ու բութ զենքերով կռվել, որքան էլ սրտնեղությունից պայթեք՝ ապարդյուն կանցնեն ձեր այդ նենդավոր ջանքերը:

Սոց<իալ> դեմ<ոկրատիան> դամոկլյան սրի պես կախված ձեր գլխի վրա՝ ամենուրեք իր անողոք հարվածն է տալու ձեզ: Այդ լավ իմացեք և, տվեմն, խելքի եկեք, քանի ուշ չէ: Եվ եթե ուղում եք կռվել մաքուր զենքերով, իթե ուղում եք ձեր երկակայական «բյուրեղացման» և մեր ջանքերով տարվելիք դասակարգացին զիֆերենցիացիայի պրոցեսը շուտով իրագործված տեսնել, պիտի միանդամայն ընդմիշտ հրաժարվեք ձեր՝ «պատրիոտներին» հատուկ, անմաքուր զենքերով կռվելուց, ձեր նեղսրտությունից և մանցուրներից...

Այս է մեր անկեղծ խորհուրդը ձեզ, որին քանի շուտ հետևեք, գուցե այնքան ավելի շուտ «բյուրեղանաք...»:

## ԶՈՐՔԵՐԻ ՄԱՆԵՖԵՍՏԱՅԻԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Հաղիկլ թե Թիֆլիսի ժողովրդին երբեկցից վիճակված լինի տեսնել այն, ինչ տեսավ նա կիրակի, մարտի 12-ին:

Մի հոյակապ հերիաթ էր այդ, մի փանտասմագորիա, որը մարդու հոգին լցնում է բերկրանքով:

Այդ օրը, նախընթաց օրերի նման, Թիֆլիսի զինվորությունը դուրս էր եկել փողոց և այս անդամ ավելի պատրաստված, ավելի խանդավառ:

Հաղարավոր զորքերի շարքեր, կարմիր ժապավենների մեջ պարուրված, կարգ ի կարգ, երաժշտության նվազածության տակ առաջանում են դեպի երևանյան հրապարակ՝ հեղափոխական երգերը շուրջերին...

Ահա ձեզ զինվորների մի շարք, որը եղում է «Բանվորական մարսելիեղը», մի այլ շարք՝ «Դուք զո՞՞ զնացիք», «Կարշավանեկա» և այլն, և այլն: Զարմանում ես. ե՞րբ և ո՞րտեղ հեղափոխական այս ուրագանը կարողացավ յուրացնել այս երգերը և այն էլ այնպես համերաշխորեն...

Ահա ձեզ զինվորների մի շարք, հրացանները ուսերին, քայլում են համընթաց. նրանց սլինները, որ փայլվում են գարնանցին շոյող արեի տակ, զարդարված են կարմիր դրոշակիկներով, կարմիր ծաղիկների կատարյալ մի ծով...

Ահա մի այլ շարք զինվորների, որոնք ձեռքերին բռնած ունեն կարմիր պլակատներ՝ այսպիսի լողունգներով.

— Да здравствует Учредительное Собрание!

— Да здравствует Народная Армия!

— В борьбе обратешь ты право свое!

— Да здравствует Новый Мир! և այլն, և այլն, և այլն:

Քաղաքացին դումացի դահլիճից, ուր այդ օրը նիստ ունեին Թիֆլիսում զոլովով բոլոր սոցիալ-դեմոկրատները, զուրս են գալիս պատվիրակներ և տղջունում այս ծովացած ըմբուտներին...

Օղը թնդում է 5—6 երաժշտական խմբերի միաժամանակ հնչող «Մարսելիեզրից», ուսաներից...

Ավտոմոբիլների (ինքնաշարժերի) վրա հաստատված կարմիր տրիբունաներից հնչում են օֆիցերների, գինվորների կրակոտ, ողերկված ճառերը, որպես պոռթկող լավա... Զինվորներից մեկը է վերջո կոշում է.

— Կեցցի՛ ռումկավարական հասարակապետությունը», և երաժիշտների «Մարսելիեզր», որությունում ուսաների տակ, միտինդը ուղղում է դեպի Դվորցովայա փողոցը:

Ես, խոստվանած, չեմ ճանաշում այնպիսի մի պոետի, կամ նկարչի, որը հղանար այնպիսի մի պատկեր, որպիսին ես տեսա այդ հսկայական պրոցեսիան շարժվելու ժամանակ...

Դա մի սիմվոլ էր, ավելի շուտ մի քանի սիմվոլներ, որոնց առաջ նսեմանում են աշխարհիս բոլոր գեղեցկությունները...

Ահա այդ սիմվոլներից մի քանիսը.

Ավտոմոբիլի տափարակի (պլատֆորմի) վրա սարքել են մի հսկա թնդանոթ անիվների վրա, իր բոլոր սարք ու կարգով. թնդանոթի շուրջը ժողովել են նրա սպասավորները, խոզանակները ձեռքերին պատրաստ, թնդանոթաձիգ օֆիցերի գլխավորությամբ, որի ձեռքին շողջողում է մերկացրած սուրբ: Պլատֆորմը այնքան մեծ է և լայն, որ նրա հետի մասում տեղավորվել են այսօրվա մեր հեղափոխության չորս հսկաները. մի ուսանող, մի ծովային սպա, մի լայնամորուս զինվոր՝ մի ձեռքում հրացան, մյուսում կարմիր դրոշակ և, որ ամենասքանչելին էր՝ հաղթանամ, հաստ և կուռ բազուկները մինչև արմունկները վեր քաշած կաշվե գողնոցով և ահագին կռանը ուսին մեր քանվորը...

Հեղափոխական այս չորս սյուները, իրար ձեռք ամուր սեղմած, խաչած կենդանի պատկերի պես իրար են նայում և անվերջ ովաննաների առարկա դառնում հեղափոխականորեն տրամադրված ամբոխի կողմից:

Սրանց հետեւմ է երկրորդ ավտոմոբիլը, որի պլատֆորմին ամրացած կոճղի վրա հանգչում է մեծ զնդանը. շրջապատել են զնդանին հինգ թիկնավետ մուրճհարներ և հենց իրենց կողքին բորբոքված քուրայից շիկացած երկաթն են հանում, ձեռքում ու ձեռում...

Երեանյան հրապարակը հրճվում է այս գարնան կարապետների համերաշխ երգի ծլվոցից...

Բայց ահա սրանց հետևից քարշ է դալիս մի երրորդ պլատ-ֆորմա, տրի երեան գալը առաջացնում է հոմերական ծիծաղ...

Պլատֆորմայի վրա զետեղվել են ինը վտիտ բանվորներ, գումատ, մրուտ երեսով, թշվառ, եղելի, վախից ճնշված...

Սրանց գլխարկները նման են մինչև վզները քաշած դույլին (վեղորների), իսկ շորերը հիշեցնում են հանճարեղ Գորկիի բոսյակներին... Շրջապատել են ինչ որ մազութից սևացած տակառի շուրջը, որի կողերից կախված են շղթաներ, ու ինչ-որ ծանր աշխատանք են կատարում... Պլատֆորմի ճակատին կանգնել է մի վտիտ մանկահասակ աշակերտ-բանվոր, երերվող ձեռքին բռնած հնամաշ տախտակից շինված մի խաչ, և խաչի վրա սպիտակ ներկով նշանակած «Բին ռեժիմ»: Ի՞նչ հակապատկեր... Ինչպիսի՝ հեգնանք բախտի...

Մի տեղ առաջանում է խանդավառ հեղափոխությունը ցնծալի հիմնի ալիքների տակ, մյուս տեղ՝ շղթաներ կռող հին ռեժիմը—իր ուղին գրիսած դիմում է դեպի գերեզման...

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՏՈՆԸ

Շաբաթ օրը, Մարտի 25-ին, Թիֆլիսում գտնված քոլոր կուսակցությունների ղեկավար մարմինները մորֆլիզացիայի էին ենթարկել իրենց թի՛ քաղաքական և թի՛ դինվորական ուժերը, ուղղել էին նրանց քաղաքից դուրս, Վակե արվարձանի հրապարակը, տոնելու մեջ հեղափոխության օրերին զոհված ընկերների հիշատակը...

Ընթերցող ընկերնե՛ր, ևս երկարորդին կանգ չեմ առնի այն գրանդիոզ տեսարանի առաջ, որին այդ օրը վկա եղան Թիֆլիսի երկար փողոցները:

Փողոցնե՛ր..., ի՞նչ փողոցներ... ձգված մի հսկա դետ ասա, կոհակ առ կոհակ, ալիք առ ալիք շարժվող, որի ոչ սկիզբն էր երեւում և ոչ էլ վերջը...

Մոտ 200.000 հոգուց բաղկացած մի թափոր էր այդ, ուր ամեն մի կուսակցություն, հասարակական խմբակցություն, պրոֆեսիոնալ ընկերություն, ուսանողություն, աշակերտություն, իր ուղիցուց դրոշակի տակ խմբված, ձգուում էին դեպի Վակեի դաշտը, որպես սվիրական ուխտատեղի:

Նայում ես այդ սրանչելի, ոգեսրված, բայց կարգապահ խմբերին և հիանում... Տղամարդկանց շարեշար ընթացող ծով գլուխների մեջ երևում են և կանանց ուժեղ խմբեր: Երկու սեռն էլ ներկայացված է այստեղ լիովին:

Ահա ձեզ կին կոնդուկտորների խումբը իրենց տարագով, տղամարդկանց զլիսարկներով, կանացի հնչյուն ձայնով «Մարսելիեզը» երգելիս:

Ահա կանանց մի այլ խումբ շարեշար կարգով ձուլվել են տղամարդկանց շարքերի մեջ: Շատերը նրանցից Թիֆլիսի տրագիցիոն թասակրավիներն են ներկայացնում, որոնք երեխաները գրկած կամ

ձեռքերից բոնած՝ տուն ու աելով ձգտում են դեպի վակե ուխտաւողին:

Ահա և թիֆլիսում եղած ծխախոտի գործարանների բանվորուցիները, որոնք, գուցե առաջին անգամ իրենց կյանքում, թունավոր մթնոլորտից դեպի ազատ դաշտ, ազատ օդն են ձգտում:

Բայց ահա մի այլ մեծ խումբ՝ կանանց... ներողություն, թարմ, հոռն կուրսիստկաների մի գեղեցիկ շարք... հագնված անպաճույժ, մաքուր, գեղեցիկ, միատեսակ և դինված ժողովարարության տուփերով՝ երգում են հնչուն՝ «Ես յերտերու ու ու այլ հեղափոխական երգեր...

Ապագա սերունդների այդ լավագույն ներկայացուցիչների խումբը ավելի ևս գեղեցկանում է այն սիմվոլի շնորհիվ, որին բախտ ունեցա ևս տեսնելու հարյուր հազարավոր այդ բազմության մեջ: Նա մի բարձրահասակ, վայելչակազմ գեղեցկութիւն էր, մի կուրսիստկա, որը ահազին կարմիր զրոշը ուսն առած՝ քայլում էր խմբի առջևից հպարտորեն, վեհ գեղեցկությամբ... Որքա՞ն սիրով զրկել էր նա այդ զրոշը, որպիսի՝ ոգեսրություն կար նրա ցայտուն, խորը, կապույտ աշքերում և վերին աստիճանի համակրելի գեմքի վրա: Թարձը ներդաշնակության մի հրաշալիք: Ռուսաստանի մեծ հեղափոխության կատարելաւատիան էր այս ուսանողութին՝ իր ընկերների առջևից տղամարդկային վճառական քայլերով՝ քայլելիս...

Իինեն ես վրձինով՝ նկարիչ, Ռուսաստանի մեծ հեղափոխության ոգին նկարելիս, առաջին նվագ իմ վրձինը կը նվիրեի այդ փարթամ գեղեցկությունիպը անմահացնելուն: Ոգեսրված գեղեցիկ գեմք, վայելչակազմ, լի փարթամ կրծքով, առողջ քայլվածքով և, որ գլխավորն է՝ դեմքի վրա գիտակցության ուժեղ և խորը գրավչություն:

Ճիշտ և նման ինքը՝ առողջ, ջահել, գեղեցիկ հեղափոխական Ռուսաստանը իր հուսատու ապագա սերունդների սիմվոլով:

Երբ մենք խմբված մեր զրոշի տակ հասանք Վակեի դաշտը, մեր առաջ պատկերացավ ամբիոնների, հառախոսների և զրոշակների այնպիսի մի գեղեցկություն, որի փառահեղությունից անկարելի էր չճշալ սրտի ուրախությունից:

Ամեն մի կուսակցություն առանձնացած օաղիսների նման, շրջապատած իր զրոշը, իր էությունն էր ընորոշում, իր կրակոտ խոսքերով շանթահարում շարդկած ուժիմը և հեղափոխության զոհերի առաջ գլխարկ հանելով, ծունկ խոնարհում նրա շիրիմի—Մարսյան դաշտի առաջ:

Հիացմունքից որոտում էր դաշտը. ծափե՞ր, ցնծուն կոչե՞ր, եր-

գե՞ր, ճառե՞ր, նույնիսկ օդում սլայթող ֆշանգներ... Կարծես մարդիկ եկել էին ոչ թե մեռած հերոսների հիշատակը տոնելու, այլ հրձվելու նրանց հաղթական գործից:

Ավելի քան հիանալի էր այն, երբ միտինգներից հետո հարյուր հազարավոր ժողովուրդը, նոր կյանքի այս նոր մարդիկ, նույն կարգականությամբ, սպիտակ դրոշակի մողական շարժումների թելադրությամբ, մի ակնխարթում կամ կանգ էին առնում, կամ շարժվում առաջ:

Անկասկած, այդ իդեական կարգապահության մղիչը ժողովը դի գիտակցությունն էր դեպի նշանակալից օրը մի կողմից և նախկին ոստիկանության բացակայությունը՝ մյուս կողմից: Զկար այն ատելի «օсадա» խոսքը, որ միշտ էլ պատճառ է եղել շատերի ուշագնացման, շատերի իսկ մահվան:

Դեղեցիկ էր և այն վերաբերմունքը, որը ցույց էին տալիս քաղաքացիները թափորի վերադարձի ժամանակ:

Մրանք պարտք էին համարել պատուհաններից սառը ջուր առաջարկել տոթից վառված թափորին մասնակցող ժողովրդին...

Մարդ հրձվում էր նոր քաղաքացու այս պարտաճանաչության և պատրաստակամության համար:

— Եվրոպացուն վայել գիտակցություն:

Մի՞թե իրոք մի սքանչելի համերաշխության տոն չէր այդ օրը, երբ ամեն ոք հարյուր հազարավորներից զգում էր, որ եկել է մեծ հեղափոխության ուհավիրանների առաջ ծունկ խոնարհելու, նրա գործած հերոսության հետեւյու և նրա մեծ ավանդը իր սրտում անմահ պահելու...

Իրոք, երբ տեսնում ես, որ նույնիսկ զուտնան այսօր «Մարսելիեղ» է նվագում, զորքը, բանվորությունը, ուսանողությունը՝ իր ովնորեցուցիչ հեղափոխական երգերը, խոհարարը՝ իր վրացական համերաշխի «Մարսելիեղը» երգում՝ վճռում ես, որ այս, այլևս չկա, չկա՛ վերադարձ դեպի հին, մեռած ոեժիմը, որ մենք այդ օրը եկանք քնզմիշտ թաղելու հին ոեժիմի մնացորդներին և անմահացնելու մեր հերոսներին, նրանց կենդանի հիշատակը և ավանդը ընդմիշտ գրելով մեր կարմիր դրոշակի վրա, թե՝

— Պրոլետարին'ր, բոլոր երկրների, միացե՛ք:

## Ի՞ՆՉՆ ԵՆ ՏՈՆՈՒՄ

Այսօր կովկասյան մենշևիկները, էսեռները և զանազան աղքային «Հեղափոխական» կուսակցությունները իրենց բուտաֆորացին պլակատներով և գրոշակներով դուրս կգան փողոց մեր հեղափոխության տարեդարձը կատարելու։ Ի՞նչն են տոնում կովկասյան այս հեղափոխական ապիկարները։

Ռուսաստանի մեծ հեղափոխության տարեդարձը, որը կատարվեց Ռուսաստանի մայրաքաղաքների բանվորության արյան գնով և որի մեջ ոչ մի մասնակցություն չունեցան կովկասյան մենշևիկները և աղքային կուսակցությունները։

Կովկասյան դեմոկրատիայի անունից խոսող այդ կուսակցությունները միշտ հեղափոխությունը պատրաստի են ստացել մայրաքաղաքների բանվորության ձեռքից, այն բանվորության, որի կառավարությունը, հանձինս խորհուրդների և ժողովրդական կոմիսարների, նրանք ճանաչել չեն ուզում։

Կովկասյան մենշևիկները փետրվարի 27-ի հեղափոխության ակտը հիշատակեցին մի շաբաթ անց, մարտի 5-ին, մինչև խոկ դեմոկրատական հասարակապիետության լոգոնդը բաց թողին, կասկածածելով և վախճանալով, թե մի գուցե նիկոլայ արյունոտին կփռխարինի մի այլ Ռումանով։ Հեղափոխական տեմպից և խիզախությունից զուրկ այդ կուսակցությունները մի ամբողջ տարի հիմարացրին կովկասյան ժողովրդներին և վերջը նրանց համեցեք արին հակահեղափոխական Սեյմը։

Մի տարի անցավ մեր հեղափոխությունից, և ի՞նչ տվավ մեղ կովկասյան մենշևիկների ստեղծած կոռալիցիոն կառավարությունը, արդյոք հա՞ց, խաղաղությո՞ւն, աղատությո՞ւն, գուցե հեղափոխական ստեղծագործական աշխատանք, կամ հեղափոխական կա՞րգ՝ Ո՞չ, մենք ուրիշ բան ստացանք.

— Հայի տեղ կատարյալ սով, խաղաղության տեղ նոր պատերազմ, նոր մորիլիզացիա, աղատության փոխարեն՝ Գանձակի, Շամխորի, Ջեղամի և Ալեքսանդրյան այգու կոտորածները, բոլշեվիկյան կուսակցության թերթերի, տպարանների, խմբագրատների փակումն ու ավերումը, բոլշևիկ ընկերների բանտարկություններն ու աքսորը, հեղափոխական ստեղծագործական աշխատանքի տեղ՝ անարխիա, հեղափոխական կարգի տեղ՝ սարսափ և տեռոր:

Ի՞նչն են, ուրեմն, այսօր տոնում սնանկացած կովկասյան մենշևիկները և ազգային կուսակցությունները. ամեն ինչ, բայց ո՛չ հեղափոխությունը:

## ԸՆԿԵՐ ԻԼԻԿՈ ՍԽԵԲԹԼԱԶԵՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մի համեստ, լուակյաց երիտասարդ էր ընկեր Սխեբթլաձեն, այնքա՞ն համեստ, որ մեր ընկերներից շատերը նրա անունը չգիտեին, և, սակայն, ընկեր իլիկոն ամեն տեղ էր, ամեն ժողովում, ամեն միտինգում, լուրջ գեմքով, լարված ուշազրությամբ և երիտասարդական վառ կրակով նա հետեւում էր բոլշևիկյան ամեն մի առաջխաղացության և իր համեստ ուժերը նվիրում հեղափոխության և մեր կուսակցության զարգացմանը:

— Իլիկո՛, այս նյութը հարկավոր է տապարան հասցնել, այսինչ օրը հարկավոր է ույզոնի օրապահությունը հանձն առնել, այնինչ օրը՝ գրականություն տարածել...

Եվ իլիկոն գաղափարական պարտաճանաշությամբ իրեն հանձնարածը կատարում էր անվերապահ եռանդով: Մի օղակ էր նա մեր 4-րդ ույզոնի կազմակերպության համար, մեր կուսակցության համոզված, եռանդուն, հասարակ զինվոր (քածօօ), որ շատ լավ գիտեր, ինչ ասել է կուսակցություն և անձնվիրաբեր կատարում էր իր պարտականությունները:

Հիշում եմ, փետրվարի 5-ին Ալեքսանդրյան այգում կոշկակար ընկերների կազմած միտինգ էր. իլիկոն մոտա կանդուած՝ լարված ուշազրությամբ լսում էր առաջին ճառախասուին: Հանկարծ Բարյատինսկայա փողոցի կողմից լսվեց պրովոկատոր մեկի ատրճանակի պայթյուն, և այն բռպեին, երբ վախսեցած մասսայի մի մասը ուզում էր փախչել, իլիկոն վրդովված, հուզված աշքերով շատերի հետ առաջ վաղեց՝ պրովոկատորին զինաթափ անելու, բայց շարագրծը արդեն անհայտացել էր:

Փետրվարի 5-ի միտինգը անցավ անլուտանգ և հաջող, սակայն փետրվարի 10-ին Ալեքսանդրյան այգում շատերի հետ զոհ գնաց նաև մեր երիտասարդ ընկերը: Մեր իլիկոն վիրավորվում է ժանդատած պայթուցիկ գնդակներից ու արյան վարակումից մեռնում...

Թող նրա շահել արյան բողոքը շմոռանան կենդանի մնացած ընկերները:

## ԽԱՂԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԷՍՏՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Երեկվա ռադիոն մեղ ավետեց մի շատ ուրախալի լուր՝ էստոնիայի և Խորհրդային Ռուսաստանի հաշտության մասին։ Այս օրից էստոն և ոռու զորքերը դադարում են իրար արյուն թափելուց հյուսիս-արևմտյան սահմանում և հավանական է, որ մի քանի օրից հետո երկու հարևան կառավարությունները՝ ընդմիշտ ցած գներով զենքերը, կակսեն դիմել ստեղծագործական աշխատանքների։ Անշուշտ սրանց կհետեւն մյուս հարևանները՝ Ֆինլանդիան, Լատվիան, Լիտվան և 14 պետություններից մնացած շատ թե քիչ այն ուժեղները, որոնք պիտի հարձակվեին Խորհրդային Ռուսաստանի վրա և Անտանտայի ուցեստով փրկեին «տանջված մարդկությանը», այսինքն՝ բուրժուազիային։

Պիտի հաշտվեն, ասում ենք, որովհետև պարզորեն տեսնում են կոլլակ-դենիկինյան զորքերի անվերադարձ անկումը և արդեն համոզված են, որ Ռուսաստանի անպարտ առյուծին իմպերիալիստական միլիտարիզմի այլևս չեն կարող տապալել։

Մի քանի ամսից ընդմիշտ կփակվի Դենիկինի ավանտյուրայի հաշվվը, որից հետո մեծ հերոսը— ոռուսական կարմիր ժողովուրդը պիտի հանգստանա, ունճանա և ապրի այն կյանքով, որպիսին հենց ինքն է ստեղծել և որին նա արժանի է միանդամայն։

Եվ սրանից հետո թող «ժողովուրդների դարձը քաշող» իմպերիալիզմը մի բոպե էլ մտածի այն մասին, թե ինչպես անի, որ այսուհետև հարձակողականից դիմի պաշտպանողականի, գոնե այդպիսով կարողանա ժամանակավորապես փրկել իր կաշին համաշխարհային սոցիալական հեղափոխության այն հրդեհից, որի ալիքները հազարավոր կարմիր լեզուների պես հենց այժմուց լիզում են յուր ոսկյա պալատների պատերը։

## Ա Ա Ա Խ Լ

Հետաքրքիր կուրյողների ևնք հանդիպում համարյա միշտ և ամեն անգամ, երբ աշքի ևնք անցնում թիֆլիսի թերթերը. այսօր նրանք հայտնում են մի միտք, վաղը՝ հերքում, հակասում: Այդ կողմից ամենից հարուստը իրեն «սոցիալիստական ինտերնացիոնալի հայկական հատվածն» համարող «Աշխատավորն» է:

Իր ՀՅ Յ-ի մամուլի բաժնում հարձակվելով «էրթոբայի» մի հոդվածի վրա, ուր սպած է, «Վրաստանի հանրապետությունը անպատճառ պետք է փակե իր սահմանները այն ժողովրդի համար (խոսքը հյուսիսից սպասվող փախստականներին է վերաբերում), որն այնպես կատաղաբար կուլում էր մեր անկախության և գեմոկրատական կարգերի դիմ», «էրթոբայի» այդ վարմունքը անվանում է «վրեժիսնորություն» և ավելացնում. «Եվկելին սպասել «էրթոբայից» անկարելի է և որպեսզի շարախինդ ուրախության և վրեժիսնորության զգացմունքը գեթ մի փոքր քողարկված լինի, էրթոբայստները՝ փորձում են մասնավորել իրենց չկամությունը աղքի թշնամիների նկատմամբ», ու քիչ հետո եղանակացնում.

«Եթե Վրաստանում գաղթականություն չընդունելու պատճառ բռնվեր պարենավորման ճգնաժամը, մենք կհասկանայինք, բայց երեան բերել քաղաքական այնպիսի սնապարծ շարակամություն գեպի քաղաքացիական կովի արհավիրքներից փախչող բուլամորք խեղճերը (ընդգծումը մերն է), առնվազն տգեղ է, եթե շասենք ավելին»:

Եերելով վերոհիշյալ ցիտատները, մենք միանգամայն հեռու ենք էրթոբայստներին պաշտպանելու մտքից, մանավանդ քաջ գիտենք, որ նրանց սպառնական խոօքերը գենիկինյան մարդկանց վերաբերյալ երբեք չի համապատասխանել գործին: Բայց ենթադրուենք մի րոպե, որ էրթոբայստները շարախինդ են ու վրիժառու...

Իսկ դո՛ւք, դո՛ւք «Աշխատավորի» ամբամորք հումանիստներ,

ձեր այդ հարձակումով ո՞ւմն եք ուզում ի վերջո պաշտպանած լինել. բոլամորք խեղճերի՞ն... իսկ ովքե՞ր են այդ «թուլամորթ խեղճերը», որ պիտի փախչեն նվաճող և առաջխաղաց բոլշևիզմից... իհարկե ո՞չ բանվորությունը և ոչ աշխատավոր գյուղացիությունը, այլ... զանաղան սպեկուլյանտներ, որոնք ճանձերի պես միշտ էլ հավաքվում են այնտեղ, ուր ծծելու մեղք կա. անկասկած ձեր հիշած «թուլամորթ խեղճերի» շարքերում դասելու եք և փախչելու մեջ լավ մարզված բուրժուազիային, դասավիք օֆիցերությանը և առհասարակ բոլոր այն հակահեղափոխական էլեմենտներին, որոնք կարմիր Բանակից վախճնում են լեղապատառ լինելու <չափ>... Ահա թե ո՞ւմ համար է այսքան սրտացավանք հայտնում «սոցիալիստական ինտերնացիոնալի հայկական հատվածը?!!»:

## ԱՆՏԵՂԻ ՎԱԽ

«Պահակի» նախորդ Համարում խոսվել է այն վայնասունի մասին, որ բարձրացրել են Կարմիր Բանակի Կովկաս մանելու վտանգից ահաբեկված բուքիուական մամուկի ներկայացուցիչները՝ «Աշխատավորը», «Սլովոն» և «Վողրոժդենիեն»:

Այսօր պարտք ենք Համարում մի քանի խոսք էլ նվիրել «Բորբայի» այն մտավախությունը, որին ձայնակցելով նաև «Էրթորան», Խորհրդային իշխանության դիտավորությունները գունավորում են մռայլ գծերով և նրա բարի նպատակները անվանում «ավանտյուրային»:

«Բորբայի» ասելով, Խորհրդային իշխանության քաղաքականությունը իմաստական քաղաքականություն է, որովհետեւ Կարմիր Բանակը եթե մտնի մեր երկիրը, անշուշտ, Կովկասը կդարձնի ոչ միայն հենակետ իր ապագա դործունեության համար, այլև՝ զորանոց արեելյան ազգերը զինելու, տոի հանելու Անտանտայի գեմ:

Մի այսպիսի քաղաքականություն, «Բորբայի» կարծիքով, «իմպերիալիստական» և «բանտային» ոեծիմ լինելոց բացի, նաև՝ «ավանտյուրային քաղաքականություն է»:

Զդիտենք ինչո՞ւ այդպիսի մռայլ ենթադրությունների է հանդել «Բորբան», կասենք միայն, որ Խորհրդային իշխանության քաղաքականությունը նվաճումների քաղաքականություն չէ բնավին և ուրեմն շատ հեռու է ավանտյուրիստական լինելոց. որպես սոցիալիստական մի մեծ հանրապետություն՝ նրա միսիան պատմական է և սրբազն:

Ինչպես ինքը՝ «Բորբան» էլ խոստովանում է, Խորհրդային իշխանության նպատակն է Տաճկաստանի, Պարսկաստանի և Հընդկաստանի ճնշված, Հարստահարված մասսաներին ոտի հանել Անտանտայի գեմ:

Մի՞թե, ուրեմն, ավանտյուրա է Համարվում այն, երբ Հավարավոր կյանքերի զոհաբերությամբ, առանց նվաճողական նպատակ-

ների, կամ հնում են ճնշված ժողովուրդներն ազատել իմպերիալիզմի դարավոր ճնշումներից և շահագործումից ու ժողովուրդների բախտը թողնել տնօրինելու իրենց՝ ժողովուրդներին:

Եթե Խորհրդային իշխանության նպատակը այդ է, ապա ողջունել միայն կարելի է այդպիսի մի քաղաքականություն: Բայց «Բորբան» միայն սրանով չէ՝ բավականանում. իր ասածներին կշփուալու համար նա Խորհրդային իշխանության գործունեությունը կապում է այնպիսի «սարսափների» հետ, որը սովոր են տարածելու միայն բուրժուական թերթերը:

Առ այդ մենք ստիպված ենք ասել հետեւյալը, որ Խորհրդային իշխանությունը ոչ թե սարսափների իշխանություն է, — այդ և նման լուրերը արդեն հեքիաթների աշխարհն են անցած, — այլ ընդհակառակը՝ իր ներքին էությամբ և բնույթով Խորհրդային իշխանությունը պաշտպանն ու հարազատն է այն բոլոր ճնշված ժողովուրդների, որոնք ծարավ ունեն կուլտուրական ինքնուրուցն նորեկ կյանքի վերածնման: Նա ձգտում է, որ ոչ միայն բովանդակ Ռուսաստանի աշխատավոր դասակարգը լինի իր սեփական բախտի տնօրենը, այլև ձգտում է այդ հանապարհին հանել բոլոր ճնշված արևելյան և արևմտյան ազգերը:

Եթե այս ձգտումը «Բորբայի» լեզվով ավանտյուրա է համարվում, մեր հասկացողությամբ սա պատմական մի մեծ միսիա է՝ սոցիալիստական հեղափոխության ավանդարդի — Ռուսաստանի հզոր բանվորության կողմից:

Կարծում ենք, որ Կովկասյան հանրապետությունները պիտի ուրախ լինեն միայն, եթե՝ դենիկինյան ռեժիմի հետքն անգամ փոշի զարձնելուց հետո, ճանապարհ բացվի գեղի Կովկաս, որովհետեմ եր, սպեկուլյացիայի տակ շնչախեղդ լինող երկիրը՝ կստանա Ռուսաստանի — այդ համաշխարհային շտեմարանի էժան հացը, Ռւկրաինայի շաքարը և Մոսկվայի մանուֆակտուրան, էլ չենք խոսում Սիբիրի յուղի և այլ բարիքների մասին:

Այս բոլորը ինքը՝ «Բորբան» էլ գիտե, որ երազներ չեն, այլ շատ շուտ իրագործվելու մի անհրաժեշտություն՝ ոչ միայն Ռուսաստանի միացյալ մասերի, այլև Կովկասի տառապյալ ժողովրդի համար, հենց որ կոշնչանա դենիկինյան հակածեղափոխական ավանդյուրան և դրա հետ կապված քաղաքացիական պատերազմը:

Դեռ հեղեղը շտեսած՝ սարսափի հավար է բարձրացնում «Բորբան»... բայց իզո՞ւր: Հեղեղից չափուի վախենալ:

Հեղեղը կարող է միայն փտած ու վարակող աղբը գլորել տանել հատակը ծովի, որից գոհ կարող են լինել միայն շնչախեղդ ժողովրդական մասսաները:

## ԶԵՐ ՃԻԳԵՐԸ ԻՋՈՒՐ ԵՆ

Ունիվերսալ ընդունակությունների, հեռատես քաղաքականության և նուրբ հոտառության տեր մարդիկ են «Աշխատավորի» գրասենյակում նստած «տղերքը». ի՞նչ տեսակ բարդ քաղաքական հարցեր ասես՝ լուծում են մի վայրկյանում՝ վհուկացին գուշակությամբ և հավանականության թեորիայով: Չես հասկանում՝ ինչո՞վ են զեկավարվում իրենց ենթադրությունների մեջ, ինչո՞վ հիմնավորում իրենց եղբակացությունները. որևէ տրամարանական կապ հետևողականորեն պաշտպանել, որևէ մի առողջ, որոշ տեսակետ, կամ ցույց տալ իսկական ժամանակակից հեղափոխականի հոգեբանություն, փորձառություն, — որքան էլ որոնեք՝ չեք գտնի նրանց ասածների մեջ. հենց այնպես ենթադրում են ու պրծավ. իսկ դու, ընթերցող, բանվոր ես, թե գյուղացի՝ պիտի հավատաս:

Դրա համար էլ այդ ձեր հրապարակախոսությունը կամ միտում է, կամ, ամենալավ դեպքում, ստանում պրովոկացիոն բնույթ:

Առիթ տվեց մեզ այս տխուր եղբակացություններին հանգելու «Աշխատավորի» № 10-ում զետեղված մի հոդված, ուր «տղերքը» դեմագոգներին հատուկ նենդամտությամբ դարձյալ բոլշեկոմի ստքերին մագլցած, ուզում են վարկաբեկել նրա ամեն մի առաջխաղ քայլը, ամեն մի հետևողականորեն նվաճող բարոյական ու քաղաքական կուլտի հաղթությունները, ու այդպիսով, գոնք ժամանակավորապես նորից պղտորել ընթերցող հայ բանվորության և գյուղացիության հազիվ-հազ պարզված միտքը:

Կար ժամանակ, երբ «Աշխատավորի» նախահայրերից մեկը՝ «Հորիգոն» անունով, կապիկի պես տւնիսոն էր երգում զանազան բուրցեների, ոենեղատ չերնովների և նման սոցիալ-դավաճանների հետ՝ լենինին անվանելով ծախված գերմանական իմպերիալիզմին: Մի ամբողջ տարի վարկաբեկում էին հանճարեղ քաղաքագետին. անցավ կես տարի և լենինը իր քաղաքականության հրաշալի ար-

դյումքն ու հաղթանակը տեսավ, որից օգտվում է այժմ <լայնա>-ծավալ Ռուսաստանի բազմամիլիոն բանվորությունն ու գյուղացիությունը. իսկ նրա սկերես թշնամիները ոմանք խորտակվեցին, ոմանք անամոթաբար քաշվեցին հակահեղափոխականների կողմը և ոմանք էլ ամոթահար եղած՝ կամաց-կամաց ձուլվեցին բոլշևիզմի մեջ: Զիրատվեցին ու խելքի շեկան միայն փորահաստ «դաշնակցությունը» յուր «ինտերնացիոնալի հայկական հատվածով» ու մեկ էլ զանազան տիպի ու գույնի առցիալ-դավաճանները:

Նրանք հիմա էլ մի ուրիշ վատ երգ են երգում, նենդավոր իրենց մատները պրտպտացնում բոլշևիզմի երկրորդ մեծ նվաճումների հանդեպ, որ անվանվում է «արևելյան ազգերի ազատագրումն իրենց ճնշողների ու հարստահարող տերերի դեմ»:

«Աշխատավորի» № 10-ում «Արևելքը և Խորհրդային Ռուսաստանը» խորագրով հոդվածի մեջ «ինտերնացիոնալի հատված» կոչվեցյալ «իմաստունները», որպես վատ տեսակի ալրոֆեսիոնալ դեմագոգներ, ահա թե ինչ են գրում.

«Բոլշևիկները հսկայական ջանքեր են գործ գնում արևելքի մահմեդականությունը իրենց տերերի դեմ\* ոտքի հանելու համար»: «Այդ քաղաքականության ամենաուժեղ արտահայտությունը կարելի է տեսնել Բոլորքեստանում, Բովսարայում, Աֆղանաստանում, որ բոլշևիկ էմիգրանտները ձեռք-ձեռքի տված մահմեդ խոչանների, մուֆրանների, սոֆրանների, և ովեմների<sup>1</sup> հետ՝ զբաղված մնանական ազգաբնակության կրօնական ֆանատիզմը զարթեցնելով, նրանց «Եվրոպայի քրիստոնյաների» գեմ գրգռելով»:

Լա՛վ դիտեցեք, ընթերցո՞ղ, ու տեսեք որքա՞ն նենդամտություն, որքան պրովլիատորական հանցանք կա այս մի քանի տողերի մեջ... իվ հետո՝ «բոլշևիկները, համիլյամիստները ու պանթոփիստները<sup>2</sup> այսօր իրերի բերումով մեկ ընդհանուր ուժեղ թշնամի ունենք՝ դա Անգլիան է և Եվրոպական իմակերխալիզմը առնասարակ...»:

Փա՛ռք ալլահին, որ «Աշխատավորը» այս մեկը լավ դիտե... բայց նա «Աշխատավորը» չի լինի, եթե այս գեպքում ևս մի բոպե առաջ իր ասածը ինքն էլ չհերքի, իրեն շնակասի: Այդպես են արդեն բոլոր բուրժուական հոգեբանության ու գույնի տեր թերթերը՝ զուրկ հետևողականությունից ու առողջ քաղաքական եղբակացություններից: Որովհետեւ այս բոլորի մեջ նրանք տեսնում են իրենց սեփա-

\* Ընդգծումները մերն են լինելու:

կան մահը ու գերեզմանը: Այսպես է և շովեն «Աշխատավորը», երբ խելքին զոր տվող «իմաստունի» պես եղրակացնում է ու բացականչում:

«Բրեստ—Լիտովսկ,— ահա բոլշևիկյան տաճկա-ադրբեջանյան զինակցության մոտավոր նպատակը. ֆեդերատիվ Թուրքիայից — մինչև Դաղստան — ահա սպանթուրքիստների գողարիկ երազներ»:

Այժմ հարց ենք տալիս «Աշխատավորի» և նման հոսանքի սոցիալ-դավաճան հատվածներին. եթե բոլշևիկները հսկայական ջանքեր են գործ գնում Արևելքի մահմեղականությունը իրենց տերերի դեմ հանելու համար, դուք ի՞նչ կորուստ ունեք այս դեպքում: Մի՞թե, մանավանդ ձեր «ինտերնացիոնալի» հատվածի» համար ցանկալի չեք, որ Ցնշվածները տերերի դեմ գնան և բոլշևիկների այս ձգտումը մի՞թե նվիրական չեք, և՛ սրբազան, և՛ ողջունելի...

Բայց ձեր ցավը այլ է. դուք շովինիստներին հատուկ նենդամը-տությամբ հարցին մոտենում եք պրովոկատորների կանխամտածությամբ, մուժթաների, սովթաների և ուկեմների ուրվականով վախեցնում հայ ընթերցողին՝ «կրոնական ֆանատիզմ», «եվրոպական քրիստոնեություն» գրգռող խոսքերը հանդես հանելով:

Շատ եք աշխատել, պլ. պլ. ազգայնականներ-դաշնակցականներ, անցյալում նույնպես անվանարկել Լենինին, նրա քաղաքականությունը և Խորհուրդների իշխանությունը: Շատ եք ամեն անկյունում ծաղրել ուսւ բանվորին ու դյուլացուն. «Ուսւ արբեցող մուժիկը ինչի՞ է ընդունակ (բացի կոնծելուց), որ յուր սեփական իշխանությունը կառավարելու մեջ ընդունակ լինի», — տանը եք դուք բանիցս... և սակայն այսօր իսկ նույն «Աշխատավորի» № 10-ում ձեր ականատեսի խոսքերով այդ «սրբազան սկոտինան» միայն հիացմունք կարող է ներշնչել ձեր, Ծուսաստանից վերադարձած, վըստահելի հայ գործիչն՝ այնտեղ սահմանած իդեալական կարգ ու կանոնվ... ուր անցած հին Ծուսաստանի հետքն անդամ չեք երեւում այսօր...

Նույնը և «ազգերի ազատագրման» վերաբերմամբ. այսօր դուք այդ համարում եք «տղայամտություն» անիրազործելի մի զառանցանք, «մահմեղականությունը տերերի դեմ ոտքի հանելը» մի երազ, — ասում եք դուք, բայց իմացեք, պարանե՛ր, որ Սովետային իշխանությունը և Լենինի կառավարությունը այլևս այն մանուկը չեք, որ վեցամյա հասակում վիճի մոր արդանդից. նա այժմ երկուեկես տարեկան առողջ քայլերով զարգացած այն հեքիաթային մա-

նուկ հսկան է, որն սպասում է իր մյուս եղբայրների աշխարհ դալու ծնունդին, որոնք նույնպիսի առողջ քայլերով պիտի հոխորտան ու տապալեն իրենց ննջող աերերին:

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարները ո'չ ձեր խելքի և ո'չ էլ ձեր բուրժուական փիլիսոփաններից ազգված իմաստունների հասկացողության ընկերներն են. այլ դրանց հակապատկերը լինելով՝ նրանք շատ լավ գիտեն իրենց անելիքը, գիտեն՝ ինչի են ձգտում, և որ այս ամենը իրագործվելու է խսկապես ճնշված և հալածված ազգերի բանվորության ու զյուղացիության շահերի համար:

— Զեր ճիգերը իզուր են...

## ՀԵՐԹԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆՆ Է

Ռուսաստանի կարմիր պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության գերազույն շանքերի շնորհիվ, Կարմիր Բանակի հուժկու հարվածների տակ շախչախվում է ռուսական ռեակցիայի ծընունդ՝ համաշխարհային իմպերիալիզմից սնված կամավորական բանակը:

Ուժերի լարվածության ամենաբարձր մոմենտին նա (Սովորական Ռուսաստանը) ձգտում է մի անգամ էլ փորձել իր նախկին ընկերների, իր շարքերում կովող մարտիկների անկեղծությունը, Անդրկովկասի աշխատավորության հեղափոխական կորովը:

Եվ ռեակցիայի վերջին կայանի Կովկասի նախագուան, Ռուսովի շեմքից Կովկասյան լեռնաշղթայի վրայով կոչ է անում Անդրկովկասյան պետությունների կառավարություններին և աշխատավորությանը՝ միացնել իրենց հարվածները նրա հարվածներին՝ վերջնականապես շախչախելու համար երկուսի համար էլ մահցու թշնամի ցարական սև գեներալներին:

Եվ ի՞նչ են պատասխանում այդ վսեմ կոչին Անդրկովկասի «Ճկուն» քաղաքագետները: Մեր առջևն է Աղրբեջանի կառավարության պատասխանը<sup>1</sup>:

Այն ժամանակ, երբ համաշխարհային հիդրան, եվրոպական կապիտալիզմը ռուսական ռեակցիայի գործը համարում է ամրող աշխարհի ռեակցիայի գործ և ոչ մի աշակցություն չի խնայում սև ռեակցիան Ռուսաստանում վերականգնելու համար, այն ժամանակ, երբ նա շախչախված Յուդենիչի, Կոլչակի և Դենիկինի տեղը աշխատում է նորակազմ պետություններից նոր սև բանակներ կանգնեցնել, այդ ժամանակ Անդրկովկասի կառավարությունները, Աղրբեջանը, ռուսական հեղափոխական պրոլետարիատի պայքարը համարում են զուտ նրա ներքին գործը:

Աղրբեջանի բեգական ու աղալարական կառավարությունը, որ

սրտատրովի սպասում էր ոռւսական պրոլետարիատի ջախջախմանը, որի համար ավելի ձեռնտու էր, որ ոռւսական աշխատավորությունն ու գյուղացիությունը աստիճանաբար արյունաքամ լինի, որովհետև դրանով արյունաքամ էր լինում, ուժասպառ էր լինում, թուլանում էր իր աշխատավորությունը, որովհետև նրանց ուժերը ընդհանուր են, այդ շեյթանը հիմա դեմոկրատական քղամիդ է հագել. մի՞թե ոռւս պրոլետարիատը դեմ է, որ «դեմոկրատական Ազրբեջանը» իր ներքին գործերը ինքը, իր աղալար և բեդ ներկայացուցիչները տնօրինեն:

Այդ պատասխանը անսպասելի չէր, պետք է այդպես էլ լիներ: Ազրբեջանի կառավարությունը շատ լավ գիտե, որ իր և ոռւսական պրոլետարիատի շահերը տարրեր են, որովհետև իր պրոլետարիատի և Ռուսաստանի կարմիր աշխատավորության շահերը նույնն են: Նա լավ գիտե, որ Դենիկինի անկումը և Կարմիր Բանակի հաղթանակը՝ իր անկումը, իր՝ պրոլետարիատի հաղթանակն է:

Ազրբեջանի կառավարությունը տվեց իր պատասխանը ոռւսական պրոլետարիատի դիմումին. այժմ հերթը Ազրբեջանի պրոլետարիատին ու աշխատավոր գյուղացիությանն է:

## ԲԹԱՄՏՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵՇ ՔԾՆԱՆՔ

Ամեն անգամ, երբ ձեռքս եմ առնում «Աշխատավոր» թերթը, նախապես զգում եմ, որ կուրյողների պիտի հանդիպեմ: Եվ տրքա՞ն մեծ է լինում իմ հաճույքը, երբ արդարանում է նախազգացումս: Ուղիղն ասած, «Աշխատավոր» մի անսպառ աղբյուր է կուրյողների և, եթե կուզե՞ք՝ բթամտության, տրովհետև այս թերթը, չունենալով ո՛չ զեկ, ո՛չ էլ տւղղություն, արտահայտում է բոլոր այն փափկամարմին ինտելիգենտների ուղեղն ու հոգին, որոնք երևութները բացատրում են պահիսողիքական ֆակտորներով և ոչ էկոնոմիական, իսկ հետևանքները՝ պարզաբանում «մարդասիրական պատճառաբանություններով» և ոչ դասակարգային կովով ու գիտակցությամբ:

Այսպես են բոլոր մետաֆիզիկները և ուսուպիստները:

Լսեցեք, թե այս անգամ էլ «բանվորա-գյուղացիական» թերթը ինչով է բացատրում Խորհրդային Ռուսաստանի բլոկադացի վերացումը. «Դաշնակիցների այս քայլը հարկավ իր մարդասիրական պատճառաբանությունն ունի, նրանց նպատակն է միայն բարելավել Ռուսաստանի ներքին կացությունը...»:

«Մարդասիրակա՞ն...», «բարելավե՞լ...»: Այդ ո՞ր օրից դաշնակից իմպերիալիզմը, այդ համաշխարհային բորենին, մարդասեր ու բարելավող դարձավ... Երեկ նա Դենիկինին-Կոլչակին թունավոր գաղերով լիցուն ոռոմբեր էր մատակարարում՝ շնչախեղդ անելու պատմության մեջ անօրինակ հերոս, միլիոնավոր ոռուս կոմունարներին, իսկ այսօր՝ հանկարծ, առանց պատճառի, նա դարձավ «մարդասեր, բարելավող» այդ՝ իրեն ատելի մարդկանց համար...

Հաշիվ տվե՞լ է իրեն, արդյոք, «Աշխատավոր» մի այնպիսի անբարեխիղճ եղրակացություն ընթերցողի շլինքին փաթաթելու, թե՞ հենց, հատուկ բոլոր սոցիալ-դավաճաններին ու վաճառված

մամուլին, քծնում է ելքոպական իմպերիալիզմի առաջ, որ իր հայրենիքին էլ մի փշրանք, մի պատառ շարտեն:

Զգում է արդյոք, «սոցիալստական ինտերնացիոնալի հատվածը» ամոթանք այն մոլորացումների հանդեպ, որով ուզում է հիմարացնել իր ընթերցողներին... գոնի բարոյական քաջություն ունենար մի անդամ իր կյանքում ճշմարտությունը խոստովանելու, մի ճշմարտություն, որ այսօր ծնվեց ու մարմնացավ Կարմիր Կոմունարի հերոսական արյունով ու հաղթանակով:

Այսօրվա երեխայի համար անդամ պարզ է, որ Ռուսաստանի բլոկադայի վերացումը հետևանք է դաշնակից իմպերիալիզմի մանկվիկիների Դենիկին-Կոլչակի պարտության. իսկ «Աշխատավորի» պես սոցիալ-տիրացուները, զայրուցից ճայթելով, կատարված փաստը բացատրում են «մարդասիրական» զգացմունքներով...

Ի վերջո, եթե մեր այս խոսքերից շամաշեն «Աշխատավորի» դրասենյակում նստած մակլերները, գոնի թող ամաշեն նույն իրենց թերթի № 17-ում՝ զետեղված հեռագրի վկայությունից — «Բոլշևիզմի դեմ» վերնագրով, որ սկսվում է այսպես.

«Նաուեն, 20 հունվարի, Լոնդոնի «Դեյլի Փրոնիկլ» թերթը գըրում է, եթե մենք անկարող ենք անզգլիական ու ֆրանսիական զորքերի միջոցով խորտակելու բոլշեվիզմը, ի՞նչ իրավունք ունենք այդ պահանջելու ծայրագավառային պետություններից, որոնք կարիք ունին խաղաղության. մեր միակ քաղաքականությունը նրանց նըկատմամբ պիտի լինի այդ խաղաղության ապահովությունը...»:

Հասկացա՞վ, վերջապես, «Աշխատավորը», թե ինչի հետևանք է հորհրդային Ռուսաստանի բլոկադայի վերացումը, թե՞ նա սրանից հետո էլ պիտի համառի մեզ տալու անծայր բթամտության օրինակներ...

## ՇԵՅԹԱՆԸ ՄԵՖԻՍՏՈՅԵԼԻ ԶԳԵՍՏՈՒՄ

Շուտով կլրանա երկու տարին այն օրից, երբ մեր երկիրը իրեն հրատարակեց անկախութեալի և իր զլխին էլ խնամակալ կարգեց ելրոպական իմպերիալիստներին: Թվում էր, թե երկիրը՝ հանձինս անկախ հայտարարված Վրաստան-Ադրբեջան-Հայաստանի, պիտի ապրեր մի անօրինակ խաղաղ կյանք և զբաղվեր արդեն ստեղծագործական աշխատանքով, մանավանդ, որ իր զլխին էլ ուներ տեր ու տիրական՝ Անտանտան:

Բայց այսօր Անդրկովկասն իր գոյության օրից սկսած մինչև այժմ չի տեսել մի այնպիսի դժոխային կյանք, այնքան արյուն, որքան նա տեսավ այս մի տարի ութ ամսվա ընթացքում: Բոյուք-Վեդին, Զանգեզուրը, Լոռին, Գողթանի Ագուլիսը և այլն և այլն—սրանք բոլորը արյուն և դիակների կառափնատեղիներ են, ուր վեր են հանվել հաղարավոր և տասնյակ հաղարավոր զոհեր—թափելով անմեղ գյուղացու և բանվորի արյունը—փոխարեն որ տարիների ընթացքում տառապած այդ դասակարգերի կյանքը մարդավայել դարձնեին:

Ո՞վ է մեղավորը, ինչո՞ւմն է դադտնիքը, ո՞վ է այդ Շեյթանը, որ այնքան արյունի պատճառ է դառնում և մնում ծածկված, անպատիժ:

Այդ Շեյթանը Մեֆիստոֆելի զգեստում պարուրված Անտանտան է, հենց նույն երեք հանրապետությունների այն խնամակարը, որը մատները պրատացնում, իրարով է ձգում երեք ազգերը ու խնդում մեֆիստոֆելյան-Հոմերական ծիծաղով:

Փարիզի գործադիր մարմինն է այն Շեյթանը, որ՝ նախազգալով Կովկասում ևս սոցիալիստական հեղափոխության բռնկվելու մոտավորությունը, երկրի հյուրերին՝ հանձինս խատիսով-տևողբեկովների, իրարով է ձգում, կովեցնում, որպեսզի այդպիսով նրանց կովող՝ բանվոր-գյուղացիական մասսաները հանգիստ ու ժամանակ

շունենան մտածելու ու պատրաստվելու այն հրդեհի բռնկման ակտին, որի տաքացած կայծերը բորբոքվում են մեծամասնական կոմունիստների ձեռքով և որից այնպես միշտ սարսափել են եվրոպական աշխարհակալներն իրենց մանկավիկներով:

Պատմությունը երբեմնակի կրկնվում է շատ միօրինակ ձևով և միանման: Ո՞վ չէ հիշում Նիկոլայ Ռոմանովի օրոք զանազան նաև կաշիձեների միջոցով Բարվում և այլուր սարքված պրովոկացիաները, որը պայթեց Հայ-թուրքական կոտորածներ անունով և որի արձագանքը տարածվեց Կովկասի բոլոր մյուս քաղաքներում: Սուցիալիստական մամուլը այն ժամանակ շատ ճշտորեն էր բնորոշել այդ կոտորածների նպատակը և գտել շան գլխի որտեղ թաղված լինելը: Դա Ստոլիախինի դժոխային քաղաքականության արդյունքն էր. պետք էր Կովկասում հայը թուրքի հետ կռվեցներ, որ մասսաները զբաղվելով իրար կոտորելով, ժամանակ չունենային 1905 — 6 թվականների բռնկված հեղափոխությունը խորացնելու և լայնացնելու երկրի ծայրամասերում<sup>1</sup>:

Եվ Ստոլիախինը հասավ իր նպատակին: Նույնը և այսօր. ժողովուրդները իրար կոտորելով, անկարող են սոցիալիստական հեղափոխությունը խորացնել և զարգացնել — մտածում է Շեյթանը Մեֆիստոֆելի զգեստում — և իր դժոխային ծրագիրը տեսնելով մասմբ իրազործված, խնդում է, ծիծառում...

Ծիծառում, խնդում է, մանավանդ, երբ տեսնում է իր ծուղակի մեջ ընկած զանազան ուսուրբեկով-խատիսովների, որոնց պետական շահերը պահանջում են նույն քաղաքականության հետևելը, որպիսին ծրագրել է Հակահեղափոխական միացյալ խորհուրդը:

Զգո՞ւշ ծտւղակից, բանվորնե՞ր և գյուղացինե՞ր, Շեյթանն է գալիս Մեֆիստոֆելի զգեստում, այն դաժան, նենգ, խորամանկ Մեֆիստոֆելը, որի անունն է իմպերիալիզմ:

## ԸՆԿ. ԱՆԻՍԻՄՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Երկար չէ նրա պատմությունը...

Մի համեստ, լռակյաց, բայց համոզված ու երկաթի կամքով զինված կոմունար էր ընկ. Անիսիմովը, որը լարված եռանդուն մասնակցություն ունեցավ առաջին մեծամասնական կոմունիստական գնդի կազմակերպման մեջ Պյատիգորսկում:

Գնդի ուսուցիչն էր ընկ. Անիսիմովը և շուտով էլ դարձավ հոգին այդ փառավոր գնդի, որն իր բախտը և ղեկավարությունը վըստահեցավ հանճնել միմիայն ընկ. Անիսիմովին, որպես հրամանատարի:

Կազակների եսենտուկին զրավելու օրը ընկ. Անիսիմովը ձախ թերց արագորեն շրջապատեց ալանը, գրոհով վանեց, դուրս շպըրտեց թշնամուն, բայց և դարձավ առաջին զոհը:

Պյատիգորսկի բացառապես մեծամասնական ընկերներից կազմված կոմունիստական գունդը երբեք չի մոռանալ իր հերոս ընկերոջը: Պյատիգորսկի առաջին կոմունիստական գնդի առաջին կոմունար զոհի առաջ խոնարհում ենք մեր զլուխը:

## ԸՆԿԵՐ ԱՂԱՍԻ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

«Պահակի» փակվելուց հետո, մենք տեղ չունեցանք արտաշայտվելու մեր վաղամեռ ընկերոջ՝ Աղասի Շահինյանի մասին, որը հահատակվեց անցյալ տարվա փետրվարի 17-ին, Վլադիկավկա-դում, Դենիկինի պալատների ձեռքով:

Ընկեր Աղ. Շահինյանը Պետրոգրադի ալիխոսոներոլոգիական ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանող էր, որը մեծ հույսեր էր ներշնչում իր պատրաստակամությամբ պատագա լայն գործունեության համար:

1905—6 թվականներին պատանյակ Աղասին հետաքրքրվում է «*ոցիալ*» դ.*եմոկրատական* կուսակցության գործունեությամբ և հատագայում իր ուժերը ներածին շափ նվիրում մեր կուսակցական գործին՝ շրջիկ ագիտատոր-պրոպագանդիստի և այլ պաշտոններ ստանձնելով:

Ընկեր Շահինյանը ծնվել է 1889 թ. հունիսի 26-ին Ալեքսանդրապոլում: 1906 թվին ավարտում է Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցը և նույն տարվա աշնանը՝ ուղևորվելով Շվեյցարիա, մըտնում է համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Այստեղից 1908 թվականին, նյութական նեղության պատճառով, վերադառնում է ծերացած ծնողների մոտ, իսկ 1909 թ.՝ ուղևորվում Պետրոգրադ և մանում պահուսոներոլոգիական ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը:

1914 թվականի դինակուը ընկեր Աղասուն հանում է վերջին կուրսից և նետում համառուսական քաղաքների միության բակտերիոլոգիական կայան, ուր և աշխատում է և գործում՝ մեր կուսակցության գաղափարները տարածելով, մինչ վրա է հասնում 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը:

Ահա այստեղ է, որ ընկեր Աղասին գտնում է իր ուժերի լայն գործադրությունը:

1917 թվականի ամառը նա գնում է Բաքու, աշխատում է կուսակցության շարքերում և ապա ընկեր Շահումյանի հետ, Բաքվի Սովետական իշխանության օրոք, ստանձնում պատասխանատու հեղափոխական տրիբունալի նախագահի պաշտոնը, որպես իրավաբարան:

1918 թվականի հունիս ամսին, ծանր հիվանդության պատճառով ընկեր Աղասին, արձակուրդ վերցնելով, ուղևորվում է հանքային ջրեր և այլևս անկարող լինելով վերագառնալ՝ մնում է Վլադիկավկազում և այստեղ հեղափոխական տրիբունալի նախագահի պաշտոն ստանձնում: Անցյալ տարվա վետրվարի սկզբներում, երբ Կարմիր Բանակը հեռանում է Վլադիկավկազից, ընկեր Շահինյանը թաքնվում է առժամանակ, նպատակ և ձգտում ունենալով ուղևորվել գեպի Խորհրդային Ռուսաստան, այնտեղ գործելու, բայց մատնըվում է Հարևաններից և գնդակահարվում Դենիկինի գահիների ձեռքով, որպես կոմունիստ: Ականատեսի ասելով՝ երեք օր ընկեր Աղասու դիակը ընկած է լինում փողոցի տրոտուարին, մինչ որ տեղական հայ քահանաներից մեկը գիշերը վերցնում է՝ թաքուն հոգին հանձնում թանկադին Աղասի Շահինյանի դիակը:

Այսպես, այսքան վաղ մեր շարքերը կորցրին լավագույն ընկերներից այն մեկին, որը այնքան բեղմնավոր գործունեություն էր խոստանում մեզ մոտիկ լավագույն ապագայում:

Հանգիստ նրա ծաղկափթիթ, գործունեության ծարակ ոսկորներին:

## Ա Ա Ա Ո Ւ Լ

Նոր ձեռքս ընկավ «Записки революционера» տետրակի առաջին համարը:

Համակրելի իր վերնագրով, բայց տհաճ իր բովանդակությամբ այս 16 երեսանոց բրոշյուրը իրենից ներկայացնում է մի անշարժ ճահիճ; որի աշխատակիցների քարացած մտքի վրա վերջին տարիների մեծ հեղափոխության նվաճումները կարծես ոչ մի ազդեցություն չեն թողած: Զգում ես այն, թե սրա խմբագրությունը տասը և ավելի տարիներ լեթարգիական քնով է եղել մրափած ու այժմ, այսօրվա արթնացածը, անկարող լինելով այլևս մոմենտի վեհությունն ու մեծությունը ըմբռնելու, սկսել է զառանցանքների մեջ ռնկնել:

Անշարժ ճահիճի և նեխած դիակի հոստ է փշում, մանավանդ, օրթոդոքսի այն հոգվածից, ուր հեղինակը մեծամասնական կոմունիստների նվաճումներն անընդունակ լինելով ըմբռնելու, նրանց անվանում է պրոֆաններ, տհասներ (недоросль) և այլն:

Պիտի գիտենալ, սակայն, որ այս Օրթոդոքսը այն ունեգատներից է, որոնք մի ժամանակ, Կաուցկու նման, ճառում էին սոցիալիստական հեղափոխության մասին, բայց այսօր, երբ տեսան, որ համաշխարհային պատերազմից հետո մասսաները սկսում են իրադեկ այդ էտապն ևս անցնելը՝ սարսափահար հետ-հետ են փախում և իրենց՝ մտալվախներին հատուկ ունեգատությունը սքողում օլիմպիական բարձրությունից արձակած պառավական խրատներով և այլնս ոչ որի շետաքրքրող, զառամյալներին հատուկ հնամաշ ֆրազներով (իրրե թե ժողովուրդը պատրաստ չէ սոցիալիստական հեղափոխության էտապները իրագործելու և այլն):

Սակայն, աշխարհիս ամենահետամնացներն անգամ գիտեն այսօր, որ այլևս հետ զնալու ո՛չ մի ճանապարհ չկա:

ՈՐԻ Է ՅՈՒՇԵՎԻԿԱՆԵՐԻ ԵՎ ՊԱՆԻՍԼԱՄԻՍՆԵՐԻ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ոչ ոք այնքան ազիտացիա չէ մղում հօգուտ բոլշևիզմի, որքան այդ անում են դեղին մամուլի ներկայացուցիչները:

Մանավանդ հանգստությունը կորցրած լուսնոտին նմանվող աԱշխատավորը», որի ամենօրյա նյութը բոլշևիկների և թուրք իմպերիալիստների մեջ կապված հեքիաթային պայմանագիրն է:

Ի՞նչարկե, «Աշխատավորի» պարոններն անպատճառ կուտենացին բոլշևիզմը ամուսնացնել, կենակցության պայմանագրով կապել պանիսլամիզմի հետ ու այդպիսով վրդովմունք և դայրույթ առաջացնել ժողովրդական մասսաների լայն խավերի մեջ, բայց բարերախտաբար ֆանտաստիկ պայմանագրի հորինելը միայն ծիծաղելի դրության մեջ է դնելու նրա հեղինակներին:

Իրոք, ի՞նչ պայմանագրի մասին է խոսքը. «Վ է նրա հեղինակը. հարց տանք վերջապես երեակայական խաղերով տարված գըրշակներին:

Ինչո՞ւ եթե գոյություն ունի մի այդպիսի շարաբաստիկ պայմանագիր, գոնե մի կտոր, մի հոդված այնտեղից մեջ չէ բերվում մինչ օրս, որպեսզի ընթերցող հասարակությունն ևս ծանոթանանրա բովանդակության ու մենք էլ այսօրվանից ստախոս, զրաբարտիչ շրատարակեինք նրա հորինողներին: Ասենք, թե դեղին մամուլի բոլոր ներկայացուցիչների միակ հատկանիշն ու ուժը կայանում է բացարձակ ստելու, խարդախելու և փաստերը սանձարձակորեն աղավաղելու մեջ:

Ասենք, թե բոլոր սոցիալ-խարդախիչներին հատուկ են պրովոկացիոն պրիումները, երբ մի որևէ երեսույթ, որ խորը հիմք ունի, շեն կարողանում մարսել ու այդ թվում է վտանգավոր իրենց համար. օրինակ թուրք ժողովրդական մասսաների ոտքի ելնելը աշխարհական նվազերիալիզմի դեմ, բայց՝ փնչո՞վ են մեղավոր այս դեպքում ժողովրդական լայն մասսաները, որոնք ար-

գեն հիասթափված դեղին մամուլի մեքենայություններից և շնայած երես են դարձրել նրանից, այնուամենայնիվ այդ մամուլը նըրանց զահլան է տանում զանազան չալմաների, սուլթանների և պանխսլամիզմի հեքիաթներով, ամեն մի պատասխանատու հարցու քաղաքական երևույթ գնահատելով իր սեփական չափով. դրան ապացուց է այս երկու ամսուց ավելի շարունակվող պրովոկացիան բոլշևիզմի դեմ՝ տեղի չունեցած պայմանագրի առթիվ:

Կովկասյան սոցիալ-դավաճանները, որպես մանր իմպերիալիստներ, ընդունակ են, օրինակ, մեծ հաճույքով թաքուն ու աշկաբա զանազան պայմաններ հաստատել զանազան սև գեներալների ու իմպերիալիստների հետ և նրանց թվում է, թե նույն տեսակ զավաճանական քայլերի ընդունակ է և Սովետական Ռուսաստանը: Սոցիալ-սպեկուլյանտների հայրենիքի զավակներն իրենց նպատակ են զրած ելքոպական իմպերիալիզմը գերազանցել ասիական ֆանատիզմին և նրանց թվում է, թե ասիական ֆանատիզմն է այն փրկության խարիսխը, որին կառշել է ուզում Խորհրդային իշխանությունը:

Սակայն ինչի՞ մեջն է բանը, ինչո՞ւ «Աշխատավորը» և նման թերթերը հուսահատական մի այսօրինակ հավար են բարձրացրել գոյություն չունեցող պայմանագրի առթիվ:

Զեա երևույթ առանց պատճառի. բանն այն է, ընթերցո՞ղ, որ ուսական բոլշևիզմը, որպես կարմիր ինտերնացիոնալի հիմնադիր, վաղուց ի վեր իրեն նպատակ է դրած պաշտպանել բոլոր ճնշված և ստրկացրած ազգերը, համակրությամբ վերաբերվել դեպի ժողովրդական մասսաների այն շարժումները, որոնք ուղղված են աշխարհակալ իմպերիալիզմի դեմ, իրենց դարավոր լուծը թոթափելու համար, և այսօր, երբ կոմունիստական Ռուսաստանը իր աշակցությունն ու համակրանքն է ցուցադրում այդ ժողովրդիներին, որոնց թվում և հնդիկ և տաճիկ ժողովրդական մասսաներին, «Աշխատավորի» շովինիստները, պրովոկացիոն լուրերի սիրահարները և նորաթուվս իմպերիալիստները՝ աղմուկ են հանում, թե՝ տեսեք, տեսեք Սովետական Ռուսաստանը պայման է կապել պանթուրիստների հետ, աշխատաձել ֆետամնաց պանխսլամիզմին և չալմայակապ կոմունիստներին աշակցելով արևելյան ֆանատիզմի դարպացման, ընդդեմ կովկասյան դեմոկրատիզմի և այլն:

Ճիշտ է մի բան միայն, որ, այսո՛, երբեք Սովետական իշխանությունը չի խորշի ճանաչել մի էնվերի, կամ մի նուրի փաշալի, եթե վերջիններս դրուիս անցնեն մի հեղափոխական ստրկացած ժո-

զովրդի շարժման, ինչպես Դաղստանը և այլն. Հի խորշի օգտագործել նրանց ծառայությունը ճիշտ այնպես, ինչպես այսօր նա չի խորշում օգտագործել սև ռեակցիայի օրերից մնացած գեներալների ծառայությունները հօգուտ Կարմիր Ռուսաստանի ու Կարմիր Բանակի և սակայն այս չէ նշանակում, թե Խորհրդային Ռուսաստանը պայմանագիր, կամ որևէ համաձայնություն ունի կապած հին ռեժիմի գեներալների հետ, որոնց անունները դուցե պանծալի տեղ բռնին ապագա սոցիալիստական Ռուսաստանի պատմության մեջ:

Ահա, ընթերցող, այս է այն հավարի բուն պատճառը, որ ահա երկու ամսից ավելի է Կովկասի գեղին մամուլի ներկայացուցիչները ունիսոն են երգում:

## ՄԻԱԿ ԵԼՔԸ

Դեղին ինտերնացիոնալի ներկայացուցիչներն իրենց մամուլով հանդերձ շատ են աշխատում ապացուցել, թե՝ Անդրկովկասը մի երանելի դրախտ և այժմ՝ ազատ քաղաքացիական կովից և սովոր մինչդեռ Խորհրդային Ռուսաստանը, քաղաքացիական կովի շնորհիվ, դարձել է ավերակ և գժոխք...

Այս երգը գլխավորապես և համարյա միշտ երգում են մազից կախված երկու հարկան հանրապետությունները՝ հանձինս Հայաստանի և Աղրբեջանի, ուր այդ թիզուկես տարածության վրա վերջին այս երկու տարվա ընթացքում այնքան կոտորածներ ու ավերում տեղի ունեցան, որքան չեր կարող տեղի ունենալ նույնիսկ որևէ քաղաքացիական կովի դեպքում:

«Ռուսաստանում քաղաքացիական կոփվն ընդգեմ հակածեղափոխական ու ուժերի—պախարակելի է, իսկ զեղին ինտերնացիոնալի և շովին աղղայնականների տերիտորիայի համար կոփվ վարելը ու անխնա կոտորվելը—օրհնված հենց ալլահից...»:

Այսպես են մտածում ահա Աղրբեջանի և Հայաստանի ժողովուրդների բախտը տնօրինող քաղաքական կույրերը և տկար ուղեղ ները:

Խորհրդային Ռուսաստանը մի էտապ անցած, արդեն վերջ է տալիս իր շլինքին փաթաթած քաղաքացիական կովի ցիկլին, այսօր թե վաղը Դենիկինի վերջին մնացորդները Սև ծովն են նետվելու ընդմիշտ, և Խորհրդային Ռուսաստանն անցնելու է խաղաղ ստիդագործական աշխատանքների:

Մտածո՞ւմ են, արդյոք, մուսաֆաթն ու դաշնակցությունը այն մասին, թե այն, ինչ որ տեղի ունեցավ Խորհրդային Ռուսաստանում, նույնը անխուսափելիորեն դամոկլյան սրի պես պիտի ցցվի և իրենց գլխին. մտածո՞ւմ են, արդյոք, այն մասին, թե՝ այն քաղաքականությունը, որ վարում են իրենք, աշուշտ պիտի պայմի սո-

ցիալիստական Հեղափոխությամբ, թե՞ կարծում են պալիատիվներով պիտի կարողանան բժշկել այն ժահրությամբ, որ կոչվում է սպեկոլյացիա, սովոր, զին ռեժիմի քաղաքականություն:

Մենք գիտենք, որ ոչ մի պալիատիվ, ոչ մի օպեկա և լրուպական խմաների ամառական բժշկելու հոգմից, չի փրկելու Անդրկովկասի բանվորա-գյուղացիությանը մոտակա քաղաքական կովից:

Նա անխուսափելիորեն պիտի անցնի նույն էտապը, ինչ Խորհրդացին Ռուսաստանը:

Կա՞, ուրեմն, ելք, կա՞ ճանապարհ այս գառնության բաժակը անցնելու, որ պիտի ընպի մեր նորկիրը ևս:

— Կա՞,— կպատասխանենք մենք. Եթե երկիրը ցանկանում է խուսափել այդ անխուսափելի դառնության բաժակից և ճարցը վճռել անարյուն քաղաքականությամբ, նա, ճանձինս իր պրոլետարիատի, պարտավոր է միջամտել երկրի ղեկավարների առաջ, որ հենց այսօրից ընդունեն Սովետական օրիննտացիա:

Սովետական իշխանությունը, կամուրջ ձգելով Անդրկովկասի և Հյուսացին Կովկասի միջև, մասնակից կանի մեզ այն բարիքներին, որ սպասվում է այս գարնան վերջին՝ դենիկինյան փշրանքները Մեծ ծովը նետելուց հետո:

Ճակառակ ղեաքում ո՞չ մի «իմաստուն» քաղաքականություն և ո՞չ մի, արդեն իր բանվորությունից նեղն ընկած, իմակերիալիզմի միջամտություն, չեն կարող կասեցնել այն, ինչ անխուսափելիորեն պիտի տեղի ունենա և Անդրկովկասում:

## ՅՊԵԿՈԱՅԱՅԻՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

### 1

Հինգերորդ տարին է, ինչ թանկությունը մշուշի պես փաթառել է մեզ իր թերում և իր ծանր շնչով ուզում է խեղդամահ տնել մեկ, բոլոր թե՛ ֆիզիկական և թե՛ ժամանակով տապրով ողբուհաւարներիս: Հինգերորդ տարին է, ինչ թանկությունը ժանգի պես շրջապատել է մեր մարմինը և ուսիշի նման հյուծում, քայլայում է մեր առողջությունը, կիսում մեր եռանդը և անընդունակ դարձնում մի որեէ ստեղծագործական աշխատանքի, և այն էլ մի այնպիսի ժամանակի, երբ այնքան գրեծ կա կատարենու:

Նայում եմ շուրջգր այս մեջանական մթնալորտի բախտը տնօրինող տղրուկի վարձառականներին, անողոք սպեկուլյանտներին՝ շարշիներին, ֆարբիկանաներին, բարձր ու մտնը շինովնիկներին. նույնիսկ հատարակ միլիցիոններիներին — նրանք բոլորն էլ առողջինքնագուհ, կուշտ զնդո՞ւմ են ու զնդո՞ւմ...

— Ինչո՞ւ...

— Արովիճեան նրանց է, որ պատերազմը հարստացրեց, նրանց է, որ խառնակ ժամանակը կշացցրեց:

Նայում ես խեկական կովող պլրուետարիատին, վլոնդված նախեկին աշխատավորներին, արձակված պաշտոնակալներին, որոնք ոչ իշխող կուսակցությունների անդամներ են, և ոչ էլ սպեկուլյանտներ.

— Նիշար, զունատ, մաշված, քաղցից շղայնացած...

— Ինչո՞ւ...

— Արովիճեան խեկական հեղափոխական պրոլետարիատը թե՛ պրոֆեսիոնալ միություններում և թե՛ ամենուրեք հալածվում, պաշտոնազուկ է զինում և ի վերջո կամ սպեկուլյացիայի զոհ դառնում, կամ ուղարկվում այնտեղ, ուր «Մակարը հորթեր է արածացնում»...

Սակայն հարց տանք. ինչո՞ւ թանկությունը չէ իշնում և քանի գնում՝ ավելի ահսելի շափեր է ընդունում: Փա՞ռք ալլաջին, մեր երկրում պատերազմ չկա և նա անդորր է, ինչպես Զեխուլի մոխրագույն (սերբ) քաղաքը<sup>1</sup>: Նորերս էլ բլոկադան Դենիկինի կողմից վերացրած է՝ ըստ Կուբանի ներկայացուցիչների հայտարարության. ուրեմն կան ներքուժման և արտահանության միջոցներ: Այնուհետև շուկան լի է ու հարուստ ամեն տեսակ մթերքներով ու ապրանքներով: Մյուս կողմից էլ իտալացիներն ու Կանադան են խոստանում կշտացնել Անդրկովկասը: Ինչո՞ւ, ուրեմն, այդ դժբախտ երկրի իրավագուրկ պրոլետարիատը պիտի միշտ մնա կիսաքաղց գունատ, մաշված, հյուծված, ավելի վատ դրության մեջ, քան այդ էր հին ոեմիմի օրով:

Որովհետև Անդրկովկասը ամրողովին տարված է սպեկուլատիվ սպորտով:

Ո՞վ է սպեկուլատոր, ո՞րն է նրա հոգեբանությունը:

Մի անողորմ, հղիացած գաղան է նա, որը շատ լավ գիտի. որ իր մաշվան օրերն արդեն հաշված են, նա մտածում է, որ այդպիսի սանձարձակ օրեր գուցե չկիճակվի այլևս տեսնելու. ուրեմն՝ հնձիր, քանի կա փող, ապահովիր քեզ յոթը պորտով ի հաշիվ գնողի և վաճառողի, քանի արգելող չկա, պատժող չկա: Եվ սպեկուլանտը ուուշում է ու կապում թղթադրամի խորձեր, վերածում նրանց թանկապին քարերի: Նա է, որ զեկավարում է այս դժբախտ երկրի տնտեսական քաղաքականությունը:

Սպեկուլատոնն է, որ արհեստականորեն ուուցնելով մթերքների ու ապրանքների գները, ամուր ամրացնելով իր գիրքերը, ուզում է հասկացնել տալ գիտակից ու անդիտակից մասսաներին, թե աե՛ս. քո կատարած հեղափոխությունը, քո բողոքն ու կոխվը քեզ միշտ սովոր ու հյուծված պիտի պահեն, շնորհիվ նորին բարձրության. իշիր, ուրեմն, քո դիրքից, խոնարհվիր իմ շայկայի տուազ, որքան տամա բավականացիր և զու չես գալարվի սովոր հյուծող ճանկեռում:

Սպեկուլատոր, թե՛ քարբիկանատի, թե՛ խոշոր ու մանր առետրականի դերում վարում է աշխարհավիր փր քաղաքականությունը և մեր երկրի անզոր տերերը խաչակնքում, օրհնում են նրանց այս ասպարեզում, որովհետև սպեկուլատաների ոհմակը խելոք է. լոռզ խողով է և ոչ ըմբոստ հեղափոխական...

Իր հերթին սպեկուլատոն իր քաղաքական մոտիվներն ունի: Նա հին բռնակալ է, մտածում է այսպես. որքան ձնշված, զըրկ-

ված, սոված է մի բանվորություն, նա այնքան շուտ կխելռանա և ժամանակ չի ունենա մտածելու խնդիր ապստամբության մասին:

Այզպես, ոմանք՝ ընտրյալները — ինքնագոյն, կուշտ ապրում են և ուռճանուած, ոմանք էլ, հանձինս մտավոր և ֆիզիկական պրո-լետարիատի՝ հյուծվում, մաշվում, ցամաքում են, և չկա այն հզոր ապարատը, որ ճգմեր սպեկուլյանտների ավազակային ոհմակը և հիմնովին ջնջեր այդ ցեցերի բույնը, ճիշտ այնպես, ինչպես այդ տեղի ունի այժմ Խորհրդային Ռուսաստանում:

Հետեւալ անդամ մենք կիսունք այն մասին, թե ինչպես պիտի ապատվել այդ այլանդակ ուստիճից:

## 2

«Նոր ուղի»-ի նախընթաց համարում մենք տվինք մի ընդհա-նուր տեսություն սպեկուլյացիայի և սպեկուլյանտների թագավորության մասին, այժմ էլ թող թույլ տրվի մեզ ցույց տալ, թե որո՞նք են այն միջոցները, որոնցով կարելի պիտի լինի վերջ տալ սպեկուլյանտների այս մորեխային արշավանքներին:

Ասել, թե զանազան պալիատիվ միջոցներով, տուգանքներով ու բանտ նետելու սպառնալիքներով՝ կարելի է փրկել գրությունը ու վերջ տալ չարիքին — ծիծաղելի միամտություն կլինի:

Որքան ուղես տուգանել, կամ բանտարկել սպեկուլյանտին. դրա դեմ նա ունի իր հզոր միջոցը — կաշառքը, որի առաջ միիցիո-ւների ոչ միայն ձեռքը, այլև սիրտն է թուլանում, մյուս կողմից էլ սպեկուլյանտը մի զգվելի ճանճ է, խոկեցիր մի պատուհանից, կսովա, ներս կխուժի մյուսով. Հարկ է, ուրեմն, դիմել արմատա-կան, կտրուկ միջոցների:

Եթե այսօրվանից իսկ Անդրկովկասյան հանրապետություն-ները չդիմեն ուղիկեալ միջոցների, միենույն է՝ այդ միջոցներին դիմելու է ինքը՝ պրոլետարիատը և աղքատ գյուղացիությունը: Եթե մեր երկրի տերերը չփոխեն իրենց գինանսային քաղաքականու-թյունը, երկիրը կառավարելու սիստեմը, որ նման է Գին օրերի կա-ռավարչական ոեժիմին, եթե այդ բանում պրոլետարիատը օրինակ չառնի Խորհրդային Ռուսաստանից, այն է՝ ամեն ինչ նացիոնալի-զացիայի ենրարկել և պետականացնել, միենույն է, մեր երկիրը չի աղատվելու համաշխարհային պատերազմի ստեղծած այս նոր տիպի վաշխառուներից:

Խորհրդացին Բուսաստանում, ինչպես ամենքն էլ գիտեն, շկան  
ո՞չ մասնավոր սեփականատերեր, հանձինս գործարանատեր-ֆար-  
բիկանաների և ո՞չ հողատերեր, հանձինս պոմեշշիկ-կալվածատե-  
րերի. այնտեղ ամեն ինչ հասարակականացրած և պետականաց-  
րած է, ամեն ինչ պատկանում է բանվորագուղացիական նորհըր-  
դացին իշխանության, և' բանկերը, և' մեծ, բազմահարկ շենքերը,  
և' գործարան-ֆաբրիկաները, և' պարենավորման մեծ ու փոքր  
խանությները, և' կոռպերատիվները (ուր շարունակ կարում են  
Советская лавка, Советский магазин. Советский кооператив  
N 1, 2, 10, 20, 100 և այլն):

Երբ մի նրկում չկա մասնավոր սեփականություն, կրիվ կա-  
պիտակի ու աշխատանքի մեջ, արտագրության շահագործումն ան-  
հատի կողմից, այլ զրա փոխարեն կա պարտադիր աշխատանք և  
զրա դեմ հատուցումն պետական պահեստներից իր կարիքի և պա-  
հանջների լիակատար բավարարության պայմանով, այնտեղ, ինչ  
խոսք, որ սպեկուլյանտն ու սպեկուլյացիան հող շեն ունենա իրենց  
ստայնը սարքելու:

Երբ մի երկրում գյուղացին, ֆաբրիկանություն՝ մանուֆակտուրա,  
կոչիկ կամ երկրագործական գործիք ստանալու համար հանրապե-  
տությանը վճարում է հացով, հոմ նյութով, և այդպիսով ապրանք-  
ների փոխանակություն կատարում հանրապետության հետ բնա-  
կանով (натуրօն), մի այդպիսի երկրում ցեցերը անկարող են  
ստեղծել և՛ թանկություն, և՛ սպեկուլյացիա:

Մեղ մտտ այդպես չէ, սակայն, այլ՝ զրա հակառակը: Անդըր-  
կովկասյան սպեկուլյանտը կամ ֆաբրիկանություն գյուղացուն այն  
դուռն է հասցրել, որ վերջինս էլ իր հերթին, կարծիս, զիգր հանելու  
համար՝ դարձել է մի նոր տիպի սպեկուլյանտ, որն իր գումարը  
սպառողներին պայմանավորում և արդարացնում է օսլայած օճի-  
րով սպեկուլյանտի կեղեքմաժբ: Հասարակ գործակատարն ու սո-  
վորական շինուազիկը, գրասենյակի կանոորշիկը, բանկի ծառա-  
յուղը — կին ու տղամարդ, աշակերտ ու ծեր՝ սրանք ամենքն էլ  
այս դժբախտ երկրում ընկել են մի դիվային պարի մեջ և իրենց  
կոշմարային աղահությամբ ծծում են աշխատավոր և մտավոր  
սպուլետարիֆատի արյունը. սպորտը բացարձակապես կատարյալ է,  
իսկ երկրի կառավարիչները անդոր են այս նոր ցեցերի — զյու-  
ղացուց ակսած վերջացրած դիմնաղիայի աշակերտով — ախոր-  
ժակը զսպելու:

— Ինչո՞ւ.

— Որովհետև մեզ մոտ ամեն ինչ թարս է գրված և այն էլ ավաղի վրա, առանց խորունկ հիմքի, առանց ծրագրի և վճռականության:

— Որովհետև մեր երկիրը ամբողջովին դարձել է ելքոպահան իմպերիալիզմի օդալիտկան, նա է, որ վերջինիս հագնում է, ուստիցնում, զարդարում և վերջինս էլ անկարող է ստրկուհու ակնածությամբ շնայել իր տիրոջ վրա ու նրա հրամանները չկատարել:

— Որովհետև մեզանում կառավարությունը կամ վախենում է գյուղացիներից ու նրա անզուսպ ախորժակի սանձարձակությունը զրվատում, կամ, որ ավելի ճիշտն է, մտածում է, եթե ավաղի վրա հիմնած կառուցվածքից հանես մի աղյուս, պիտի փլվի ամբողջ շենքը, ամբողջ կառուցվածքը. վախն ու սարսափն է, որ այս գժրախստ երկրի վարիչներին դարձրել է անզոր, որպես «աշք տնիմ» — չեմ տեսնում, ականջ ունիմ — չեմ լսում» առաջվածքի անշեղ իմաստի պահպանողների:

Սակայն ի՞նչ կա այսահեղ վախենալու, այն, ինչ վլվելու և անխուսափելիորեն, թող փլվի, ո՞ւմ ինչ, չե՞ որ քանի շուրջ, այնքան լավ...

Բայց... հենց բանն էլ այն է, որ ընդունել մի այդպիսի որոշում իրենց տնտեսական քաղաքականության վերաբերյալ, այդ նշանակում է զնդունել Խորհրդային Ռուսաստանի՝ երկիրը կառավարելու սիստեմը: Մի բան, որն արգելում է օդալիստկայի տերը:

Սակայն մենք գիտենք, որ վաղ, թե ուշ, տեղական հանրապետությունները ստիպված պիտի լինեն՝ նացիոնալիզացիայի և նատուրալիզացիայի ենթարկել բոլոր այն հիմնարկությունները, որոնք ծառայում են որպես աղբյուրներ սպեկուլյացիայի և շահագործման: Ե՛վ բանկերը, սպեկուլյացիային զարդ տվող այդ մթին որշերը, և՛ գործարան ու ֆաբրիկաները, և՛ խանութները, և՛ շուկան, ծինչև շենթարկվին պետականացման ու նացիոնալիզացիայի, շիվերանա սպեկուլյացիայի վարժանալիքան այս երկրից:

Բոլոր սեփականատերերի հարստանալու այն աղբյուրները, որ կոչվում է կապիտալի շահագործում, բոլոր գործարանատերերին տրված արտոնությունները, բոլոր արտոնության միջոցները մինչև չանցնեն բանվորա-գյուղացիության դիկտատորայի ձեռքը, բոլոր բուրժուաները մինչև շընկնեն այն օրը, որ օրին ընկան նրանք Խորհրդային Ռուսաստանում, սպեկուլյացիան Անդրկովկասում ու թե նվազելու, այլ, քանի գնա, զարգանալու է: Եվ մի օր էլ մենք մեզ

տեսնելու ենք անձով, գույքով ծախված ու գրավ ընկած ճիշտ այնպես, ինչպես այդ տեղի ուներ հներում ճորտատիրության օրերով:

Ու հարց.

Կդիմանա՞ արդյոք այսուհետեւ «լիբավոր առյուծը», Հանձինա Անդրկովկասյան պրոլետարիատի և աղքատ զյուղացիության, այս խայտառակության սյունին գամվելու պրոցեսին, դրա մասին մտածելու թողնում ենք նրանց, ում հարկն է և որոնց համար դեռ ուշ շէ խելքի գալը:

## ՈՂՋՈՒՅՑՆ ԱԶԱՏԱԳԻՎԱԾՆԵՐԻՆ...

Ողջո՞ւյն, ողջո՞ւյն քեզ հայ հեղափոխական բանվորություն, ողջո՞ւյն և քեզ, նորեկ կյանքիդ լուսածաղին, հայ գյուղացիություն, որ այսօր կարողացար թոթափել քեզանից այն ժանր շըղթաները, որով կաշկանդել էր քեզ դաշնակցություն կոչված կուսակցությունը իր կառավարությամբ հանդերձ:

Երեք տասնյակ տարիներ շարունակ քո բախտն ու քաղաքական կյանքի դաստիարակությունը հանձնել էիր մի այնպիսի անկոչ դայակի, որը հենց ինքը դեռ քաղաքական մանուկ լինելով, հանդրդնել էր հանձն առնել քեզ սնելու, մեծացնելու և կրթելու դրոգ:

Երեք տասնյակ տարիներ քանի՞ -քանի՞ անգամ, շնորհիվ այդ անշնորհք դայակի, քեզ կրակը նետեցին, այրեցին հոգիդ, խորովեցին սիրտդ և այլանդակեցին սիրուն գեմքդ, քանի՞ -քանի՞ անգամ դաշնակցության դայակները վայր գլորեցին քեզ, փշրեցին ուկորներդ, հաշմանդամ դարձրին քեզ, իմ սիրո՞ւն Մանուկ Հայստանի աշխատավորություն:

Երեք տասնյակ տարիներ դահիճների սառնասրտությամբ և ազդամոլներին հատուկ հանցագործությամբ գրգոեցին քո մութինստինկտները, հարկան ազգերի գեմ հանեցին քեզ, չարդեր կազմակերպեցին և այդպիսով բթացրին ու մթացրին քո դասակարգակին գիտակցությունն ու շահերը, փոխանակ որ հարկան ազգերի ընշագուրիների հետ հաշտության պրոպագանդ մղելու ընդդեմ ձեր դասակարգային թշնամիների՝ իմպերֆալիստական բուժուազիայի և բռնակալ կառավարությունների:

Երեք տասնյակ տարիներ շարունակ քո այդ անարժան զեկավարները, նախաձեռնությունից զուրկ, երբեմն անամոթ մուլացիկների պես՝ «Ողորմություն արեք պարուն անտուն-անտեր աղքատին»<sup>1</sup> աղերսանքով, ծեծել են անսիրտ բուրժուաների դռները, սողոսկացել նրանց ոտքերի տակ՝ քանի մի կոպեկներ կորզելու, որ իրենց

ստեղծած աղետները ամոքեն, երբեմն էլ որպես լիտիացած գաղաններ՝ այլասերված բաղդասարովների ձեռքով հրացանազարկ են արել այն հարյուրավոր հայ կոմոնիստներին, որոնք սոցիալիզմի վառ ջահը ձեռքերին բռնած՝ կամեցել են դուրս հանել քեզ այն «Խորվիրապից», որի մեջ խեղդվում էիր դու և որի անունն էր դաշնակցականների սեժիմ<sup>2</sup>:

... Բնականաբար, այս ամենից հետո պիտի առաջանար հեղափոխական համաշխարհային հրդեհը, նրանք այդ մեծ հրդեհի ժամանակ, որպես անբան թամաշաշիներ, հեռու կանգնած իրենց ձեռքերն էին տաքացնում, չնայած, որ քանից հեղափոխական Ռուսաստանը հասկացնել էր ավել այդ ապիկարներին, թե ձեռք տաքացնելու ժամանակը չէ, այլ բանվորապյուղացիության միահամուռ ջանքերով հրդեհը հանգցնելու... և սակայն նրանք անցան հրդեհածիդ. Անտանտի կողմը:

Եվ այսօր այս ամենը հասկանալով, դուք զինք բռնած ձեր տանից դուրս շղթափեցիք այդ անկոչ դաշտակներին, այդ ապիկար գարժապահեցներին, որի համար նորից սղջունում էմ ձեզ:

Ողջո՞ւն քեզ, ընկեր բանվոր, և քեզ, եղբայր գյուղացի, որ վեր ջապես ճանաշեցիք ձեր իսկական թշնամուն և իսկական բարեկամին՝ հանձննս Ռուսաստանի Սովետական իշխանության և նրա պատվանդան III ինտերնացիոնալի, կոմոնիստական կուսակցության:

Հանձնիր նրան բախտգ և ապագադ, իմ տառապյալ հայ գյուղացիություն և բանվորություն, տարիների ընթացքում առողջ քաղաքականության բովից անցած կոմոնիստաները քեզ կհասցնեն երջանկության՝ իմի ծովելով քեզ Ռուսաստանի աղատապրված աշխատավոր պրոլետարների մեծ ընտանիքի մեջ, իմ փոքր եղբայր, քեզ ընդմիշտ կազմաեն քո արկածախնդիր և ոճրագործ դայակների էքսալերֆիմնաներից. կցուցնեն փրկարար նոր ուղին, կրուժեն դարավոր վերքերդ, որ երեք տասնյակ տարի շարունակ խորացրին քո սուս սոցիալիստ նախկին «ուսուցիչները»:

Երեկդ աղետալից էր և սարսափելի, այսօրդ պայծառ և հավատով լի, էղուցդ արդեն ընդմիշտ ապահովված վանդալներից՝ քո խորհրդային անկախ Հայաստանի հարազատ զրկում:

## «ԱՇԽԱՏԱՎՈՐԸ» ԱՇԽԱՏՈՒՄ Է...

Թունավոր օձի զլուխը երբ շախչախում էս, նա դեռ պիտի դաշտավորի մինչև արեփ մայր մտնելը — այսպիս է մտածում Հասարակ ժողովութզը: Ճիշտ այսպիս է առա և գաշնակցության Թիֆլիսի օֆիցիոս «Աշխատավորը»: Նա իր կուսակցության կրած ծանր հարվածների տակ դեռ երկար պիտի դաշտավորի, մինչև որ այգեպահը — պատմության այդ անողոք ձեռքը՝ կվերցնի նրան և կնետի ազրանոց:

«Աշխատավորը» փոխանակ, որ կատարված պատմական փաստի առաջ զլուխ խոնարհեցներ և Հայաստանը կոմունիստներին անցնելու ակտոր Համարեր իր կուսակցության ապիկարության և Հայ Հեղափոխական ժողովով ցամանականք, փոխանակ, որ ողջար բազմից ապացուցված իր կուսակցության տարիների ընթացքում կատարած շարազործությունների Համար, — այսօր սկսել է մի շատ տգեղ ու վատթար դեր կատարել. մի դեր, որ Հատուկ է Թիայն Հակահեղափոխական ախմեղ ցալիկովներին:

Ո՞վ է սակայն Ախմեղ Ցալիկովը: Նա ժողովրդի ցաման տակ եր Հայրենիքից վանդակած մի լեռնական է, որ ապաստան է գտել Կրաստանում և աշխատավորականների պես իր «Յօլիկայի րօրեւ» թերթը դեղին ինտերնացիոնալի մի Հատվածը Համարելով, նիզակներ է ճոճում վարկարեկելու թե՛ նորհրդային Ռուսաստանը և թե՛ նորակազմ նորհրդային անկախ Դադստանը, Զեշնիան ու Ինդուշեթիան:

Ցալիկովները երկար ժամանակ երազում էին լեռնականների «անկախ Հայրենիք»՝ նրա կուսակներով, կեղեքիչներով և բեգերով Հանգերծ և ուժախանում, երբ զենիկինները կամ վրանդելներն էին սպառնում նորհրդային Սոցիալիստական Ռուսաստանին ու Հյուսիսային Կովկասին: Սակայն նրանց սպասելիքները օդում ցնդեցին:

Ցալիկովի «պսակները» այժմ հանդիսաւ չեն տալիս «Աշխատավորի» գրասենյակում նստած տղերանց:

Նրանք, Հայաստանը կորցնելուց հետո, սկսել են մի արշավանք, որի մի ծայրը հասնում է Խորհրդային Ռուսաստան, մյուս ծայրը՝ Խորհրդային Սպրեհան ու Հայաստան, իսկ այնտեղից էլ՝ դեպի Անդորրա:

«Աշխատավորը» մեկ տեսնում ես՝ կամ չարանենդությամբ հեղնում է Բաքվում տեղի ունեցած Արևելյան ժողովուրդների համագումարը<sup>1</sup>, կամ առաջիկայում Մոսկվայում կայանալիք մուսուլման կանանց համագումարը, կամ Քեմալի բարեկամական հեռագրերը կենդնին, Ստալինին և այլոց<sup>2</sup>. մի խոսքով մուսուլման խոսքը լսելիս, նա, ինքն էլ չնկատելով այդ, այնպես է խրանում ու կատաղում, ինչպես սպանական փրփրած ցուզը կարմիր լաթը տեսնելիս:

Քաղաքական տհասներին հատուկ և ընդմիշտ անուղղելի համառությամբ «Աշխատավորը» մինչեւ օրս էլ չեւ կարողանում ըմբռունել այն սրբագան միսիան, որ ունի կատարելու սոցիալիստական Ռուսաստանը՝ սորկացված և կեղեքված աշխատավոր ժողովուրդների վերաբերմամբ, և տասնյակ հազարավոր կոմունիստների և բանվորական ավանդարդ գնդերի արյուն թափելը նա համարում է իմպերիալիստական ձգտումներ...

Սակայն այս բոլորը շշմած օձի գալարումներ և հիստերիկներին հատուկ ճշանքներ են միայն:

Հեղափոխության պատմության ձեռքը անողոք է, նա աղքանոց է նետելու ընդմիշտ և հակահեղափոխական ցալիկովներին, և չախչախված օձին՝ հանձինս ախմեղանման աշխատավորականների:

## ԱՄԵՆ ԻՆՉ ՆՈՐԻՑ

Խորհրդային Հայաստանի Ռեկոմի այժմ տարված է երկրի ներքին և արտաքին վարչական-ադմինիստրատիվ կազմակերպման հոգուով:

Դաշնակների կառավարությունը թե՛ իր շտապ ստորագրած պայմանագրով Անդորայի ներկայացուցի հետ<sup>1</sup> և թե՛ տնտեսական կյանքի փլուղումով ու անարխիայով այնպիսի մի ծանր ժառանգություն է թողել Հայաստանի Ռեկոմին, որ վերջինիս կողմից ահագին ջանքեր են հարկավոր՝ ամեն ինչ նորից սկսել՝ ըստ սովորական կոնստիտուցիայի:

Այդ ուղղությամբ մեր միջակ եղբայր Խորհրդային Ազգային արդեն նշանավոր քաղեր է արել, և պիտի ասած՝ հասել է բավականին խոշոր գրական հետեւանքների ու ստեղծագործական արդյունքների:

Զենք կասկածում, որ մորիլիզացիայի ենթարկված հայ կոմունիստ մեր ընկերները կշտապեն Խորհրդային Հայաստան և կմալաստեն Ռեկոմին վարչական-ադմինիստրատիվ կազմակերպման ապարատը շուտով դնել իր համապատասխան ռելսերի վրա:

Հերթական հարցը, այնուհետեւ, թե՛ Ռեկոմի և թե՛ մեր ընկերների համար լինելու է երկրի պարենավորման կանոնավորման հարցը և սրա հետ զուգընթացաբար մտավոր սնունդի, կուլտուրական-կրթական գործը:

Խորհրդային Հայաստանը, փառք ալլահին, այսօր ուազմաճակատ չունի, որի վրա գործադրեր երկրի բոլոր ուժերը, ինչպես այդ տեղի ոռներ Խորհրդային Ռուսաստանուած, Հայաստանի Առվետական իշխանությունը այդ կողմից ավելի քան բախտավոր է ավագ եղբորից:

Ուրեմն նրա բոլոր ուժերը նվիրված են լինելու ստեղծագործական վերաշխնության և կուտուր-կրթական գործին:

Սոցիալիստական Ծուսաստանը, որքան էլ, հակառակ իր կամքի, պատերազմական դործողությունների ևնթակա լիներ, այնուամենայնիվ իր ժամանակին շատ լավ էր ըմբռնել, որ դարերով, ցարիզմի օրոք ագիտության ու խավարի մեջ խարիսխող ուսումութիկին և բանվորին հարկավոր է առաջին հերթին կրթել ու փառակցության բերել. և նա Ծուսաստանի ամենախոռվ վայրերն անդամ հեղեղեց գրականության և կրթական գործոնների այնպիսի մի քանակով, որի նմանը պատմությունը գեռ չի տեսել:

Նա միլիոններով ու տասնյակ միլիոններով հրատարակեց դրքեր, բրոցյուրներ, պրակատներ, թերթեր ու ժուռալներ, սոցիալիստական մի ահուելի պրականություն, որը ագիտալուեզզների և սուրբանդակների միջոցով ցրվում էր Ծուսաստանի ամենախոռվ վայրերի խրճիթներումն անգամ: Ետ չեր մնում այդ ուղղությամբ դորձելուց և Մոսկվայի մեր հայ կոմունիստ ընկերների մի խմբակ՝ հանձինս նրա Հայկական Կոմիսարիատի, որը հրատարակած և այժմ պատրաստի տնի մի քանի տասնյակ թարգմանչական գործեր<sup>2</sup>, որոնք այսօր իրենց տարածմանն են սպասում Խորհրդային Հայաստանում:

Բայց բավականանալ Մոսկվայի մեր ընկերների հրատարակությամբ, այդ գեռ շատ քիչ է. գուսավորության կոմիսարի առաջին հոգաբարի պիտի լինի, կրթական և կուտուրական գործի հետ կուրզներացար, մտածել՝ կազմակերպելու և հրատարակչական գործը:

Ո՞ւմ չէ հայտնի, որ երկար ժամանակ հայ գյուղացու և բանվորի միտքն ու հոգին, մանավանդ դաշնակների կառավարության օրոք, սակայն է ահարոնյաններով ու նմաններով: Հայ աշխատավոր դյուզացիությունը թունավորվել է շավեն ազգայնամոլների քերթվածներով. որքան շանք է հարկավոր, ուրեմն, որ նրանց մտքից ու սքսոցից հանես շավինիստների թողած ազգեցությունը:

Այդ ժառանգության հետքերը կորցնելու միջոցը կլիներ այն, որ Խորհրդային Հայաստանի բոլոր պյուղերն ու բաղաքները հեղեղվեն նոր, առողջ, սոցիալիստական գրականությամբ:

Գրա համար անհրաժեշտ է կազմակերպել հրատարակչական մի կենտրոն, որ նմանվեր Ծուսաստանի խոշոր Գосударственное Издательство-ին<sup>3</sup>, որ զեկավարվում է Մաքսիմ Գորկու և այլոց գլխավորությամբ:

Այդ կողմից թիֆլիսը, որ տեխնիկական ավելի շատ հարմա-  
րություններ ունի (թղթի, տպարանի և գրաշարների կողմից), կար-  
ծում ենք, կարող է մեծ ժառայություններ մատուցանել Խորհրդա-  
յին Հայաստանին:

Հրատարակչական մի շուտափույթ կենտրոն, նման Կառավա-  
րական Հրատարակչական Ընկերության, — ահա թե ինչի վրա ենք  
հրավիրում ժողովրդական լուսավորության կոմիսարի ուշադրու-  
թյունը:

## ՀԱՂԹԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

Իմ կյանքում ես դեռ չեմ տեսել այնպիսի գեղեցկություն, որպիսին բախտ ունեցա տեսնելու այս քանի օրերս թիֆլիսում:

Այդ գեղեցկությունը Կարմիր Բանակի հաղթական երթն էր իր հեղափոխական երդերով:

Նայում ես այդ՝ մինչ օրս պատմության մեջ շտեսնված հերոսներին: Նրանք բոլորն էլ ջահել պատմեցակներ, բայց լրջմիտ, խոհուն, աղնիվ գեմքերով, վերին աստիճանի խելացիություն արտահայտող աշքերով:

Դիտակցությունն է դրոշմված նրանց աղնիվ ճակատին, առաջինության վեհությունը՝ նրանց զեմքի բոլոր գծերում:

Մտածում ես՝ ե՞րբ և ինչպե՞ս կարողացավ տեղ դտնել այդ նախակին շոմազայի պարենէկի մեջ այսքան վեհություն:

Ո՞վ ներշնչեց նրա հոգուն այսքան մեծություն և խորություն:

Ինձ թվում էր, որ իմ առջևից անցնում են ապագա երջանիկ մարդկության նախատիպերը՝ ճաճանչավորված մի վեհ գեղեցկությամբ:

Իմ այդ հիացմունքի մեջ, զգում եմ, մեկը հետեւիցս բռնել է թևս, ետ եմ նայում, իմ մի ծանոթ գերասանն է.

— Այո՛, ասում է նա, — մենք չենք հավատում, երբ դու նկարագրում, իդեալականացնում էիր Կարմիր զորքին իր գեղեցկության և գիտակցության մեջ՝ մի տարի սրանից առաջ. այսօր եմ միայն տեսնում, որ քո ասածները բոլորը ճիշտ էին:

— Красные красавцы! — ревущим гомоном засыпало: и ми ханенкин аռած ինտելիգենտ կին կողքիս կանգնած:

Եվ նա, որի ոտքերին ես նայում՝ իր ցեխաթաթախ կոշիկներով և երեսին՝ դեմքի լարված կրակներով, որը կարծես հենց նոր է դուրս եկել կովից, իր այդ տեսքում ներկայացնում է մի շտեսնված գեղեցկություն:

Այո՛, գեղեցիկ է նա, որովհետեւ գեղեցիկ է նրա առաքելու-  
թյունը, նրա գիտակցության խորությունը՝ թե պիտի հաղթե, և որի  
համար մահը՝ կյանք է:

Նա, այդ կարմիր տիտանը, հերոս է, որովհետեւ գիտե, թե ին-  
չո՞ւ համար է մեռնում:

Մեռնում է՝ հաղթելու համար:

Եվ նա հաղթում է աշխարհիս այն բոլոր գիշատիչներին ու  
տղրուկներին, որոնք խանդարում են այս նոր աշխարհի մարդուն՝  
Սոցիալիզմի փրկարար ուղին հարթելու:

Եվ նա հաղթում է, որովհետեւ գիտակցում է իր առաքելության  
վեհությունը համաշխարհային պատմության մեջ:

Նրա ձգտումն է՝ թեկուզ մահվան գնով երշանկացնել նախ բո-  
լոր մինչև օրս ճնշված պրոլետարներին և ապա՝ ամբողջ մարդ-  
կությունը:

Ամ՝ սրանից առաջել մի այլ երջանկություն:

## ԿԱՐՄԻՐ ԴԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ

Վաղը Ալեքսանդրյան այգում Հողին կհանձնեն եղբայրական դերեզմանում 44 դադաղներ. ո՞վքեր են նրանք, այդ քառասունեշչորս եղբայրները:

— Կոչորի բարձունքներում ընկած, անմահացած կարմիր Հերոսներն են նրանք, թվով 29 հոգի (սրոնցից շորսը հայեր) մերոնցից, իսկ մյուս տասնհինգը՝ վրաց կառավարության զորքերի դիակներ:

Եվ թաղման մասնաժողովի անդամները որոշել են երկու հակառակ բանակների մեռածներին քաղել միասին, մի դերեզմանում:

Որպիսի՝ գեղեցիկ հղացումն: Ի՞նչ են կամեցել սրանով ասել մեզ թաղման մասնաժողովի անդամները.

— Այն, որ մենք և զուք հավասար եղբայրներ ենք, միենույն դասակարգի զավակներ:

— Այն, որ մեր թշնամիները բուրժուաներն են միայն և ոչ թե աշխատանքի զավակները:

Նրանց հանել են կովի զաշտ՝ կովելու իրենց նմանների հետ, սպանելու իրենց նմաններին, և եթե նրանք իմանացին, որ այսօր իրենց պիտի պատկեցնեն փրար կողքի, եղբայրական մի գերեզմանում գուցե և զենքը ցած զնեին և համբուրդեին միմյանց հետ:

Քառասունեշորս այդ երկու հակառակ բանակների եղբայրական դադաղները ներկված են կարմիր զույնով:

Նույնքա՞ն գեղեցիկ հղացումն:

Թաղման մասնաժողովի անդամները խարություն չեն դնում երկու եղբայրների դադաղների մեջ, չեն ներկում ընկած 15 հոգու դադաղները սեռով, այլ օծութ են կարմիրով և այդպիսով ասում:

— Դուք ևս մեր հարազատ եղբայրներն եք, և եթե այսօր մենք իրար վրա սուր ենք քաշում, զրա մեջ մեղավորը դարձյալ դուք չեք, այլ բոնությամբ ձեզ կովի զաշտ հանողները:

Որպիսի՞ ներողամիտ, անջիշտաշար հոգի:

Եվ եթե զուք իմանայիք, որ ձեր դադաղները նույնպես պիտի ներկվեն կարմիր և ոչ թե ուե զույնով, զուցե զենքը ցած դնեիք և համբուրգիկը մեղ հետ:

Այո՛, նրանց, այդ 44 անմեղ զոհերին, վազը թաղում են միասին, որպեսզի պատմության առաջ ամաշեցնեն վրաց մենշերկների այն անմիտ և ոճրագործ վառավարությանը, որը պատճառ դարձավ այնքան անմեղ արյուն թափելուն:

Այսպես վեճ, այսպես զեղեցիկ, այսպես խելացի վարվել կառող է Սոցիալիստական Հայրենիքի դավակը միայն:

## ԽԵԿՈ ՄՊԱԼԱՋԵՆ (ՔՅՈՒ-ՕՂԱԿ)

(Մահագրի փոխարեն)

Ով աշխատել է Հյուսիսացին Կովկասում, նա անպատճառ կհիշի պատկառելի, հայտնի Բուտիրինին, ձախ թեր մենշևկի-ինտերնացիոնալիստ այն բազմամյա գործչին, որը Հյուսիսացին Կովկասում՝ դեռ Խորհրդացին փշանանություն չհաստատված՝ հարեց բոլշևիզմին և մտավ Կոմունիստական կուսակցության մեջ:

Որքա՞ն արդյունավելետ, որքա՞ն բեղմնավոր եղավ նրա գործունեությունը լեռնականների ազատագրման գործում, մինչև որ զլուխը դրեց ինգուշեթիայի բարձունքներում և այնտեղ էլ թաղվեց՝ լեռնային նեղ կածանի կողքին ընկած մի բարձր թումբի վրա:

Անցորդ ինգուշը այնքա՞ն երախտապարտ է ընկեր Բուտիրինին, ինգուշեթիայի ազատության այդ անվեհեր հերոսներից մեկին, որ ամեն անդամ նրա գերեզմանաթմբի մոտից անցնելիս՝ իշնում է ձիուց, մի ծաղիկ, կամ մի համբույր նետում նրա քարոտ դամբարանին և ապա՝ շարունակում իր ուղին:

Ճիշտ այդպիսիներից մեկն էր և իր գործունեությամբ Բուտիրինին շատ նման՝ մեր թանկագին ընկեր իլիկո Մղելաձեն:

Նա ևս ձախ թեր մենշևկի-ինտերնացիոնալիստ, նա ևս վաղուց թողած իր ֆրակցիան՝ մտել էր մեր շարքերը, նա ևս Հյուսիսացին Կովկասում հայտնի իր անձնագործ գործունեությամբ՝ այսօր զլուխ գրած Վրաստանի Խորհրդացին իշխանության վերածնության համար, մենք, նրա դեռ Պյատիգորսկ — Վլադիկավկազից ծանոթ ընկերներս այսօր տանում ենք թագելու մեր սիրելի՝ կոիվ և ինիցիատիվ, եռանդ և կյանք, մեր «Հոգով դեռ արի, դվառվ ալենոր»՝ Մղելաձե-Քյորօղլուն:

Մահացուցակ չեմ գրում այսօր. կան ընկերներ, որոնք մահացուցակի կարոտություն չունեն. նրանք հոգնում, ուժասպառ են

լինում ու ընկնում դիրքերի վրա — բայց երբեք չեն մեռնում ու մեր հեղափոխության պատմության երեսները լցնում են մի նոր անունով կոչ:

Մահացուցակ չեմ գրում. ինձ միայն անհրաժեշտ էր շեշտել մի հետաքրքրական երեսով. այն, թե՝ որքա՞ն գեղեցկությունները եկան լցրին մեր շարքերը այս վերջին տարիներում:

Որքա՞ն լարված, արդյունավետ, ստեղծագործող աշխատանքներ են կատարում այժմ՝ այդ նախկին ինտերնացիոնալիստները, կարծիս այդպիսով կամենում լրացնել այն պակասը, որ կարող էին ծածկել ժամանակին, եթե է՛լ ավելի վաղ մտնեին մեր շարքերը:

Բազմաթիվ են նրանք, որոնք մոտիկ անցյալում ինտերնացիոնալիստներ էին, բայց շուտ հասկացան և համոզվեցին, որ բանվորա-գյուղացիական դասակարգին արագորեն սոցիալիզմին հասցնողը՝ կոմունիզմը միայն պիտի լինի և զինվորագրվելով մեր կուսակցության մեջ, աշխատում են բուտիրին-մղելաձեների պես անընդհատ եռանդով և անսպառ ուժով:

Մղելաձեին ճանաշողը գիտե, որ նա մի գունեղ օրինակ էր հերոսական քայլերի և հեղափոխական ակտիվ գործերի: Թող ուրեմն գիրեղաձանահողը թեթև լինի նրա դամբարանին:

## ԴԱՐՁՅԱԼ ՍՈՎԻ ՄԱՍԻՆ

«Այս կլինի և՛ վերջին և՛ վճռական ժադա»<sup>1</sup>

Ո՞չ մի տարի և ո՞չ մի անգամ Մերձվոլգյան Ռուսաստանը այնպիսի սասանող հարված չէր ստացած, ինչպես ստացավ նա այս ամառ՝ հանկարծակի եկած սովոր արհավիրքից:

Եթե վոլժակը տեղ-տեղ ծառի կեղեներով կամ հողով է մարում իր քաղցը, ապա ուրեմն պարզ է, թե որքան սոսկալի ու մահասարսուռ է նրա այժմյան դրությունը:

Սա արգեն մի փորձաքար է, որ նեավում է լենինի հայրենակիցների գլխին, միանդամ ևս զարմացնելու աշխարհին, թե մշտական կոիվներում բովլած ուսւ մարդուն չեն կարող հաղթահարել ո՞չ արհավիրքը, ո՞չ սրածությունն ու սովը, և ո՞չ մահը:

Առասպելական իլյա Մուրոմեցն<sup>2</sup> է ու վե՛րք:

Իրոք, ի՞նչ անուն տանք Խորհրդային սուսաստանցուն վերջին չորս տարումս կրած իր անլուր տառապանքների համար, հերոսի՝, տիտանի՝, անհաղթի՝:

Այս խոսքերը լիովին չեն բնորոշում մեր այսօրվա ուսւ ժողովրդին: Կովի սիմվոլ է նրա անունը. նրա, որ վերջին չորսուկես տարվա ընթացքում պատվով հաղթել է իր թշնամիներին — ժանտ հակահեղափոխությանը, երկրի ընդհանուր կատաստրոֆի հասած փլուզումին, դաժան ցրտին, գալարող սովին, — հաղթել է կովելով, կովելով և միայն կովելով:

Կովելը Խորհրդային Ռուսաստանի ջահել զավակի համար գարձել է մի այնպիսի անհրաժեշտություն, այնպիսի մի անխուսափելիություն — և այն էլ կովելը հարվածային կարգով, — որ այսօրվա սոսկալի սովոր Սովետական սուսաստանցի համար դարձել է հեշտ հաղթահարելու մի դորձ, մանավանդ երբ մենք կարդում ենք ամեն օր, թե ինչպես ուսւսաստանցի մեր մյուս եղբայրները հաղարավոր ու միլիոնավոր փութերով ցորեն, ալյուր, սերմացու

Հացաւհասիկ են ուղարկում սովոր վայրերը՝ ի սարսափ նուզանսների և նմանների, որոնք երեսանց օգնության լամենտացիաներով են զրադապած, բայց սրտի մեջ ուրախանում են Խորհրդացին իշխանությանը հասած աղետով։

Կովելը արտաքին թշնամիների դեմ՝ Սովետական իշխանության զավակին ուսուցել է կովել և՛ ներքին թշնամիների դեմ. և որքան ուժեղ է եղել արտաքին թշնամիների հարվածը, նույնքան ավելի ուժեղ՝ պաշտպանվողի հակառակը։

Համառոտ, բայց զառն պատմության ու հեղափոխության շրջանի մի զառ է այս, որ ստացավ և լավ սովորելուց հետո՝ դարձավ անհապլեկի մեր Խորհրդացին հերոս Իլյա Մուրոմեցը։

Անշուշտ, այս փորձության բաժակը ևս կրմպի ու կանցնի աշխարհիս ամենամեծ հեղափոխության ամենամեծ զավակը — Խորհրդացին Իլյա Մուրոմեցը, — և թող այնուհետև զան ու կրծունի իրենց ատամները՝ այս անգամ և լնդմիշտ զինաթափ եղած նույնանսները ու նրանց նեցուկ բուրժուազիան. որովհետև մեծ հավանականություն կա Էնթագրելու, որ այս լինելու է հերոս ժողովրդի «վերջին և վճռական մարտը», որը բերել-հասցնելու է նրան ու կանգնեցնելու այն երջանիկ ուղու վրա, որին արժանանում էն միայն պատմական բոլոր հերոսները։

## ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒԹԵԳԱՅՈՒՄԸ

Ամսիս 15-ից ամբողջ Խորհրդացին Վրաստանում սկսվում են կոմկուսի շարքերը անհարազատ տարրերից մաքրել-դտելու աշխատանքները:

Այդ մասին ահա քանի երորդ շաբաթն է, որ մեր մամուլը զանազան դատողություններ ու գիտողություններ է անում և դեռ չի հասել որոշ սահմանած մի նորմայի:

Սակայն հարցը պետք է դնել մի այլ մակարդակի վրա և շմուռանալ այն մորալ նշանակությունը, որ պիտի զգալ տալ զտման ու մաքրումի ենթարկվողներին՝ բյուրեղացման պրոցեսը կատարելու ժամանակ:

Անկասկած, չպիտի դահիճ լինել դեպի մարդը, դեպի նախկին ընկերը, այլ վիրարույժ, թարախակալ վերքերը մաքրող վիրարույժ միայն, որովհետև արևո ինչ է, արեի վրա անփամ բծեր կան, ո՛վր մնաց սխալական մարդու, բայց երբ այդ «սխալները» նա գիտակցաբար և վարպետորեն գործադրում է հօգուստ անձնական շահադիտական նպատակների, — ահա այդպիսիներին է, որ մեր շարքերից պիտի դուրս վանել անխնա:

Անկասկած, ամեն մեկը մեղնից մի զանցառություն կամ մի քանի շեղումներ թույլ տված կլինի իր գործունեության ընթացքում, այդ բնական է և, անկասկած, անցողակի մի սխալ, բայց երբ այդ զանցառությունները նկատվում են, որպես սխտեմատիկ շարունակվող բնույթ դարձած մի արատ, որով նսեմանալու են մեր փառավոր կուսակցության տրագիցիաները, անվանարկման ենթարկվելու լայն մասսաների կողմից — ահա այդպիսիներն են, որոնց մեր կուսակցությունը հանդուրժել չի կարող:

Անկասկած, շատերը կարծում են, թե հենց իրենք են, որ մորից հեղափոխական ու կոմունիստներ են ծնված և, ուրեմն, անձեռնմբխելի են ու ապահով վոնդումից. բայց երբ քերում են այդպիսի-

ների կաշին, կամ փորփորում կեղել, տակից դուրս է պրծնում կամ նախկին տիրացուն, կամ կատաղի ազգայնամոլը, կամ, վերջապես, թիֆլիսի քաղքենին ու սովորական օբիվատելը՝ իր առօրյա տափակ հոգսերով, կարմիր գինու-խորտվածի կարոտից ալրված,— ահա այդպիսիներին է, որ պիտի երկաթե ավելով Քուազ նետել:

Վերջապես մեր կուսակցությունը իր շարքերից պիտի գեն շպրտի այնպիսիներին, որոնք ճարպիկ «գեղեցներ» և «գաշնիկներ» են, ձախորդության գեղքում քոչվորների ու «գեղերտափրների» արջեստին շատ լավ վարժված, որոնք խնամի ու խաթրապահ խոսքերի իմաստը մեծ հմտությամբ են ի կատար ածում և կուսակցությունը դարձնում ապահովագրական ընկերություն, որոնք նույնիսկ չեն ամաշում ստորագրել կուսակցական անկետաներ զանազան սպեկուլյանտների և մենշերիկների, և այնպիսիներին, որոնք մի տարի առաջ կոմունիստ անունն անգամ լսելուց կատաղում էին:

Դեռ չենք խոսում այն տեսակ տիպերի մասին, որոնք որպես արքեցողներ, բանդիտիզմի և խորամանկ հեղափոխականի դիմակի տակ իրենց կոմունիստներ են ձևացնում. այդպիսիների համար կոմկուսի կենտրոնական կոմիսիան իր հրահանգներն ունի...

Կոմկուսը պիտի լինի կովող ու կռող, ստեղծագործող, «մամուս-գեյրաթի» ու «թասիբի» հետևող, դեպի սոցիալիզմը ձգտող պրոլետարիատի կուսակցություն ու մեկ էլ այն մտավոր պրոլետարների, որոնք դեռ մանկությունից իրենց եռանդն ու ուժերը, փրենց առողջությունն ու անձնական բարիքները նվիրել են պրոլետարիատի երջանկությանը, նրա թասիբին, նրա մուրազին հասնելուն:

## ԱՆՄԱՀԱՅԱԾ ՔՍԱՆԵՎԼԵՑՐ

Քսանելեց անմահ կոմունիստների շարքը ահա անցնում է մեր առջևից, և մենք տխուր պարտականությամբ այսօր, նրանց մահվան Յ-րդ տարեգարձին, Հիշողություններ ենք զրի առնում միայն:

Ո՞վքեր են նրանք այդ քսանելեց անմահները:

Շաղկահասակ Երիտասարդներ, նուանդով և ուժով լի, որոնք չկամեցան դավաճանել կոմունիստական իդեալին, չուղեցան զիշել Սովորական ազատ իշխանությունը անզիւսկան բոնակալ իմպերիալիզմին ու գնդակահարվելով՝ ընկան Ախշակուլիմայի տաք ավագուտների մեջ:

Ահա ինքը՝ Ստեփան Շահումյանը — կապուտաչյա, վայելչակազմ, լրջմիտ, խոհուն գեմքով, նրան մենք ամենքս անվանում ենք մեր Կովկասյան կազմակերպության ուղեղը:

Ահա ինքը՝ Ալյոշա Ջափարիձեն, ամբողջ հասակով շարժուն, կյանքի և անդուլ աշխատանքի այդ աշխուց տիպարը, միշտ վառվրուն, միշտ զգայուն և հոգատար ամենքի նկատմամբ, նրան Բաքվա պրոլետարիատի սիրտն էինք համարում մենք ամենքս:

Ահա վախտ կազմվածքով, բայց Ցրարխային լավայի նոանդով Վանյա Ֆիոլետովը — նա՝ Բաքվա բանվորության 15-ամյա կազմակերպողը, նրա մեջքի սյունը, նրա բազուկը:

Ահա Սուրեն Հովսեփյանը — զիտնականի լրջմտությամբ ու խռականությամբ օժտված այդ Հեղահամբուլը մարքսիստը: Նա Բաքվա բանվոր դասակարգի ուղեցույց կարմիր աստղն էր Համարվում:

Ահա և Ամիրանը<sup>1</sup>, այդ անխոնա մարակող մեր Շշեղբինը, նացիոնալիստների մահաբերը, արգար զայրուցիթի տաղանդավոր արտահայտիչը. նրան ամենայն իրավամբ Բաքվա պրոլետարիատի խիղճն էինք համարում:

Ահա ջեինը, կորդանովը, Մալիգինը և այլն և նմանները — միշտ համեստ, միշտ զործունյա, միշտ իրենց զիրքերի վրա անընդատ կովող, զիրքերը թշնամուց փրկող — հեղափոխուրյան պահակներ: Նրանց անունները մեր կոմունիստական կարմիր տախտակների վրա տասնյակ անգամ զրված կլինիկն ոսկե տառերով, եթե կենդանի լինեին այսօր:

Եվ այդպես մի շաբթ, անմահների շաբթ, որոնք գնդակահարժան վերջին բոպեին հաստատուն ձայնով դահիճների երեսով տվին.

«Մենք մեռնում ենք որպես կոմունիստներ, կոմունիստի մահով, բայց գուք՝ թշլառականներ, չմոռանաք, որ վաղը ձեզ սպառում է խայտառակ մահը...»:

Քսաննելց կոմունարների անձնազոհ գործունեության և կորովի վճռողականության օրինակը լուսավոր ջահի պես մեր ուղեցույցը պիտի լինի, մեր նշանաբանը, մեր հենարանը, եթե իրոք մենք կամենում ենք այն բյուրեղացած, զտված կոմունարների շաբթն ընկնել:

Ճիշտ է, սեպտեմբերի 20-ին, լույս առավոտ, խավարի որդիք նրանց գնդակահարեցին, որով կամեցան վերջ տալ «Նոր առավոտ» ավելացող 26 հերոսների լուսաշող արեկին, բայց այդ թշնամուն Հաջողվեց: Նրանք կորցրին մարմինը — փոշին միայն, մինչ նրանց գործերն ու նշանակությունը քանի գնացին, այնքան ուռնացան, մեծացան ու սրբազնացան ժողովրդական մասսաների աշքում. նրանց անունները դարձան երդման ու խոստումի, խթանող գործի և կովի առարկա:

Պարզ էր, որ մահերը ծննդյան գաղափարներ:

Վերջապես, ճիշտ է, նրանք մեռան — բայց նրանց գործը այսօր պսակվեց հաղթանակով, ու թեև պրոլետարիատի դասակարգային թշնամին Սովետական իշխանության շենքը ժամանակավորապես ավերեց, այնուամենայնիվ հիմքը սասանել շկարողացավ, որովհետև այդ հիմքի քարերը ամրացված էին՝ Ս. Շահումյանի, Զափարիձեի և մյուս 24 կոմունարների արյան շաղախով:

Այսօր նա, այդ շենքը, իր հիմքով վերանորոգ Բաքվում նորից կանգուն է, նորից հաստատուն:

Պրոլետարիատի դիկտատորան շտապեցրեց «խայտառակի մահը». գնդակահարումից առաջ այդպես էին գուշակել մեր հեղափոխական մարդարեները, մեր անմահ քսաննելցը:

26 ԿԱՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Ամսուլս 20-ին, երեկոյան ժամը 6-ին, ժողովրդական տան սրահում նշանակված էր Ս. Շահումյանի, Ալ. Զափարիձեի և մյուս 24 կոմունիստների՝ <մահվան> 3-ամյա տարեղարձի հիշատակին նվիրված քաղաքացիական հոգեհանգիստ:

Հոգեհանգիստը բացվեց՝ «Դուք զո՞հ գնացիք կավի մեջ վճռական» սպերգով, որին հետեւց ընկ. Ֆ. Մախարաձեի ճառը:

Ընկերն ընդգծեց Ս. Շահումյանի, Ա. Զափարիձեի և մյուս ընկերների կատարած մեծ գերը:

6 ամսվա ընթացքում, Բաքվա Սովետական իշխանության օրերին, երբ Անտանտը լարած իր բոլոր ուժերը՝ սև-հարյուրակայինների ու մենչեմիկ-էսեռների հետ միասին կամհնում էին խեղղել հեռու Կովկասի մի անկյունում կենդանի գործի վրա Խորհրդացին իշխանությունը Ս. Շահումյանի զլիսավորությամբ, պարզվեց, որ դա մի սուր կերպարանք ստացած, վճռական կոփվ էր, որ 1918 թվականին վերջացագաղ Բաքվի Խորհրդացին իշխանության անկումով, նրա հարուստ նավթային հանքերի գրավումով:

— Անտանտը ձիշտ է, հասավ իր նպատակին, — վերջացրեց ընկ. Մախարաձեն, — բայց ժամանակավորապես միայն: Շահումյանի, Զափարիձեի և մյուս նահատակների ավանդը սրբությամբ կատարեցին՝ նրանց մահարյունով ամրացած ու զորացած հետհնորդները: Շահումյան-Զափարիձեն կարող են հանգիստ ննջեն իրենց հավիտենական օթևանում...

Եվ հենց ուզում էր վերջացնել ընկեր Մախարաձեն, երբ կարումիր դրոշակի առաջնորդությամբ՝ «Դուք զո՞հ գնացիք» երգելով դահլիճ մտավ և ուղիղ երաժշտության առաջ կանգնեց Սովորովների խորհուրդը. դահլիճը լցվեց բանվորներով, ուր և թնդաց ձինտերնացիոնալի» նվազը:

Ընկեր Մախարաձեի ճառին հետեւց ընկեր Օրախելաշվելու  
նույնքան զգացված՝ վրացերեն լեզվով արտասանած ճառը, որը  
խիտ գույներով զրվատեց 26 անմահների խիստ արդյունավետ  
6-ամսյա գործունեությունը Խորհրդային Ռուսաստանի օգտին:

Եատ ուժեղ տպավորություն թողեց իր հստակ, պարզ ու հա-  
կիրա բովանդակությամբ ընկ. Շ. Էլիավայի ճառը:

Եատ զգացված ճառեց ընկ. Դուրինսկին՝ «Правда Грузии»-ի  
խմբագրական կոլեգիայի մի անդամը:

Քաղաքացիական հոգեհանգիստը վերջացավ երեկոյան ժամը  
9-ին՝ «Ինտերնացիոնալի» նվագակցությամբ:

## ԿՈՎԿԱՍՅՑԱՆ Ս.ՌԱՆՁԻՆ ԶՈՐԾ.ԲԱՆԱԿՈ

Ո՞վ շի լսել Խորհրդային Ռուսաստանի փառավոր բանակների և առավելապես նրա փառք ու պսակ XI բանակի քաջագործությունների մասին:

Գուցե աշխարհիս պատմությունների մեջ դեռ շի եղել մի այնպիսի պանծալի անուն, որպիսին Խորհրդային իշխանության քաջադարձ XI բանակն է:

Նա է, որ գժվար րոպեներին առհասարակ վրա է հասնում և զարդում թշնամուն զանազան ֆրոնտներում, ու դարձյալ նա է, որ 1918 թ. հեղեղի նման վրա տալով Հյուսիսից՝ ճեղքեց Պրոխաղդնիի ֆրոնտը և Խորհրդային Հյուս<իսակին> Կովկասի ազգաբնակությանը, որ ամբողջովին շղթայված էր Շկուրովի զորքերով, աղատեց սրախողող լինելուց:

Ու կրկին նա էր, որ աղատեց Ազրբեջանը մուսավաթիստներից, Վրաստանը՝ մենշեկներից, Հայաստանը՝ դաշնակներից ու դարձրեց Խորհրդային:

Ահա այս փառավոր և պանծալի բանակի զավակն է այսօր Առանձին Կովկասյան Զորաբանակը, որի Յ-րդ տարեդարձն այսօր կատարում է Թիֆլիսը:

Ամենազիտակից և ամենախիզախ զավակը XI բանակի, որը աշքի է ընկնում Խորհրդային մյուս բանակներից նրանով, որ նրա սյունը կազմում է գլխավորապես գիտակից բանվորությունը, — XI բանակը այն մշտադաշտը դափնյա պսակն է, որը զարդարում է Սոցիալիստական Մայր Ռուսաստանի ճակատը: Ահա այս հսկա պսակի կարմիր ժապավենները ուսկե տառերով փայլող Կովկասյան Առանձին Զորաբանակն է, որի նպատակն է պաշտպանել Կովկասյան երեք Խորհրդային Հանրապետությունների սահմանները արտաքին թշնամիներից:

Նա կուռ ու կազմ պատրաստ է իր ավագ եղբոր նման ջախ-  
ջախել նրան, ով կհանդպնի մոտենալ իր սահմաններին, իր արյու-  
նով ներկած վայրերին. նա պատրաստ է անցնել անդամ իր սահ-  
մաններից թշնամու երկիրը, եթե այդպես կստիպի թշնամին: Կա-  
տարենք, ուրեմն, այսօր այդ պանծալի, փառավոր անցյալով բա-  
նակի, Ավագ Ջավակի՝ եռամյա տարեդարձը:

## ԱՌՎԿԱԾԱՅՆ ԱՌՄՆՁԻՆ ԶՈՐԱԲԱՆԱԿԻ ՏՈՆԸ

Թիֆլիսը զորահանդեսներ շատ է տեսել, բայց մի այնպիսին, ինչպես Կովկասյան Առանձին Զորաբանակի զորահանդեսը՝ կարծեմ, երբեք:

Այն մի գեմոնստրացիա էր, մի ցուց, որ Կովկասյան Առանձին Զորաբանակի Թիֆլիսում գտնվող զորամասերը ցուցադրեցին երեկ իրենց Յ-ամյա տոնախմբության առթիվ և Վ. Ի. Լենինի անունը Կովկասի մայրաքաղաքում մեծարեցին՝ նրա արձանի բացումով:

Ես ուզմագետ չեմ, բայց ուազմական գեղեցկությունների սիրահար. շատ եմ տեսել ֆրանսիական, բելգիական և շվեյցարական զինվոր-օֆիցերների խշխշան զարդ ու գեղեցկություններ, բայց մի այնպիսի պարզ և աղնիվ գեղեցկություն, որպիսին երեկվանն էր երբեք:

Ահա ձեզ կարմիր շրջանավարտների զորասյունը իրենց սրածայր մահուցի սաղավարտով. գեղեցկության և հերոսության կնիք է դրել նա՝ այդ պլիսի զարդը ամեն մի կարմիր զինվորի գեմքին:

Նրանց զգեստները բոլորովին պարզ, մաքուր, մեխակագույն դուրեկան մահուցից, նրանց հասակները՝ պարթե, նրանց քայլվածքը՝ երկաթի տեմպով... Հազարը քայլում է մի մարդու պիս. ի՞նչ քայլել. սուրում է կարծես գետի ալիք, լրջմիտ, ինքն իր արժանիքի խորագիտակը, ինքն իր պարտականությունների մեջ կենտրոնացած մի գեղեցկություն:

Մի այսպիսի համերաշխ երկաթե տեմպով երթը մտածել է տալիս ապագա սոցիալիստական կարգերի, հավասարության օրերի գեղեցկության մասին:

Այս գեռ կարմիր կուրսանտների պարթեահասակ — իլյա Մուրոմեցների շարքերն են: Սրանց հետեւամ է այնքան պարզ ու գեղեցիկ հազնված պուկեմյոտչիկների բրիգադան, ապա թնդանոթա-

ձիգների, թուլս վերնաշապկով կարմիր հաղակների հեծելագունդը իրենց երկաթաձող, օդում ցցված տեղերով և այլն և այլն:

Նայում ես այս ծովի կոճակների ծփումով առաջացող գեղեցիկ զանգվածին և բացականչում.

— Երկրագնդիս մեջ ո՛չ մի զորք քեզ, իրոք, հաղթել չի' կարող:

Հրե՛ն կոմսոմոլիստների, շնկիստների կոմունիստական 5 ռայոնների զորայուները:

Նրանք բոլորն էլ զարդարված են զինվորական համազգեստով և նույնական կարգապահ, վայելչակազմ, հաղթ քայլվածքով կուրսանտների նման քայլում են վարժ ու առուցք. դժվար է զանազանել, թե ո՞րն է կուրսանտը, ո՞րը՝ կոմունիստը:

Նայում ես և սրածայր զինարկի զարդերի տակ նշմարում հին և նոր ծանոթ ընկեր կոմունիստներին: Նրանց բոլորի հետ էլ աշխատել ու կովկել ենք մեր գործի համար:

Հրեն բարձրագիթ մեր Ստյոպան, այն հին բոլշեվիկը, մի ժամանակ անհետացած, իսկ այսօր չհկայի իրավաբաններից մեկը, հրացանը ուսին կոմունարների շարքում քայլում է խրոխտ ու հպարտ քայլով՝ զինվորական համազգեստի մեջ:

Հրեն անձանաշելի դարձած մեր խալավոր գրաշար Վանոն: Հրեն Մայիլը, հրեն ծիծաղկոտ Մովսեսը — «Կարմիր Աստղ»-ի գրաշարները, որոնք ամենքն էլ սարի պես շարժվում են կենինի արձանի բացման...

Նայում ես ու հիանում, որ կարճ ժամանակամիջոցում մեր ստյոպականուները այսքան հուսատու, այսքան խրոխտալի, այսքան գեղեցիկ շարքերի մեջն են այսօր: Ու կրկին բացականչում ես.

— Այո՛, սրանք անպայման կհաղթեն աշխարհումս եղած բոլոր դասակարգային թշնամիներին, որովհետև այս հրացանների տակ, այս երկաթե տեմպով քայլվածքի մեջ, գերազանց գիտակցորեն հասկանում են, որ իրենք իրենց բանվորա-զյուղացիական խորհրդային իշխանությանն են ծառայում միայն:

Եվ երբ տեսնում ես այս կուռ բանակը, որին հետեւում է վրաստանի զորքերի նույնքան գեղեցիկ զորայունը, իր բոլոր տեսակի զենքերի կալոններով, մի անգամ ևս համոզվում ես, որ XI բանակի հարազատ զավակը — Կովկասյան Առանձին Զորաբանակը — ո՛չ ցավից, ո՛չ մահից, վախեցող այս հսկան — անպարտելի է, և երկրագնդիս ո՛չ մի զորք նրան հաղթել չի կարող:

## ԽՈՍՔԻՑ ԴԵՊԻ ԳՈՐԾ

Շատ տեղին ու շատ ժամանակին է հրատարակված մեր կառավարության կարգադրությունը գալառական Հեղկոմներին այն մասին՝ թե վերջիններս չեն կանգնած իրենց վայել բարձրության վրա և որ նրանց գործունեությունը Խորհրդային իշխանության կարգերում չեն համապատասխանում սոցիալիստական պետության շահերին ու պահանջներին:

Նամակաձև հրահանդում ուղղակի շեշտված է այն, թե ինչպես Վրաստանի մի քանի Հեղկոմներում տեղի ունեն վերին աստիճանի անցանկալի ու վնասակար իրեւովովներ: «Տեղական մի քանի Հեղկոմների և նրանց մի քանի անդամների գործունեությունը ավելի վտանգավոր և ավելի վնասակար է, քան Խորհրդային իշխանության բացահայտ թշնամինների արարքները»: Շեշտված է և այն, թե փնչպես Հեղկոմների շատ պատրաստանառու աշխատավորներ փոխանակ իրենց գործունեությունը համաձայնեցնելու կենտրոնից արված հրահանգներին ու կառավարական գեկրեաններին, զեկավարվում են անձնական կամացականությամբ, ընդհանուրի շահերը ծառայեցնում են իրենց հսական բարիքներին, ինամիությունը և խաթրապահությունը ամենաալարնդակ ձևերի է հասնում:

Այդպիսով, ո՞չ միայն արդար զայրությ ու բողոք են հարուցանում տեղական բանվորության ու կուսակցական կազմակերպությունների մեջ, այլև ժողովրդական մասսաների մեջ Հիասթափումն առաջացնում՝ ու այդպիսով վերջիններիս նետում մեր կուսակցական թշնամինների զիրկը, որից կարող են քայրայվել Վրաստանի Խորհրդային իշխանության հիմքերը:

Մրագրում կտրական միջոցների և պատիժների մասին է խոսվում այն թերացումների և զանցառումների դեմ, որոնք կնկատեն այս կամ այն հեղկոմյան կարգադրիշների կողմից:

Միանգամաշյն ժամանակին և տեղին արված որոշումներ: Իրոք, ի՞նչ են ներկայացնում իրենցից գալառական Հեղկոմները և սրանց հետ կապված մյուս Խորհրդային Հիմնարկությունները — Նրանցում շատ կան նախկին մենշևիկներ և այլ կուսակցությունների կողմանակիցներ, որոնք կարծում են, թե Խորհրդային իշխանությունը իրենց սեփական պապոնց տունն է, ուրեմն ինչպես կտա իրենց քեֆը, այնպես էլ կկարգադրեն ժողովրդի բախտը — այնու ու ոչխարն էլ զատելով միմյանցից խնամքով...

Որ ոչ միայն գալառական Հեղկոմներում, այլև ամենուրեք կան այնպիսի խլուրդներ, որոնք պրովոկատորական իրենց գործելակերպով և կաղմակերպված սաբուտաժով անդով ու շատ զգուշ փորփրում են մեր Խորհրդ՝ <ային> իշխանության հիմքերը — զրանում կասկած չկա և այդ երկույթը նկատված ու շեշտված է ո՛չ առաջին անգամ, բայց որ նույն վնասակար և կորստյան ուղին բռնած գործունեությունը վարում են մեր այսպես անվանած գալառական, թե քաղաքի «ընկեր կոմունիստները» — ահա այդ է վշտարին, որ մտածելու նյութ է տալիս մեզ:

Եվ կենտրոնական կառավարությունը խոստանում է այդպիսիների դեմ այս անգամ վերջապես գործադրել ամենախիստ միջոցներ, եթե վերոհիշյալ տիպի «Հերոսներից» մեկն ու մեկը կրարեցածի սրանից հետո ևս հեղափոխական իշխանությանը վնասել, ո՛ւ վարկարեկել:

Լավ է ուշ, քան երրեք, մեր կառավարության համբերատարությունը առասպելականի հասավ: Շատերը կկարծեն, որ, եթե այս կամ այն գործունյա, բայց անբարեխիդճ պատասխանատու աշխատավորը պատժի, գործը կտուժի: Բնդհակառակը՝ եկել է ժամը և այժմ էլ անհրաժեշտ է խոսքից գործի անցնել:

— Անուղղիներին, — ասված է, — գերեզմանը միայն պիտի ուղղի:

## ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 5-ՐԴ ՏՈՒԲԵՒՌՁՅԱԾ

Մեր արժանավոր, լազամեռ հեղափոխական ընկերներին շպի-  
տի մոռանալ:

Մղձավանչի, հակահեղափոխության տարիներին մենք անկա-  
րող էինք բացարձակապես հիշել նրանց անունը՝ կամ մամուլ չու-  
նենալու, կամ այն հալածանքների պատճառով, որ կրում էինք  
մենք և սեակցիայի և դեղին մենշեփեկների օրով:

Այժմ, երբ մենք բոլորովին պատ ենք թե՝ մեկի և թե՝ մյուսի  
բանությունից, զգում ենք, որ այլևս ժանդարմերիան և «օսորի օտ-  
րյադները» անցել են պատմության դիրքը և այսօր մեզ հետ է մի-  
այն մեր Խորհրդային իշխանությունը, անհրաժեշտություն է զգաց-  
վում պատիվ տալ այն հայտնի և առաջապահ մարքարտ հեղափո-  
խականներին, որոնք իր ժամանակին քիչ չեն նպաստել այսօրվա-  
նորհրդային իշխանության հիմքերի հաստատման, և որոնք իրենց  
կյանքը գրել են զոհի սեղանին միայն նրա համար, որ վերջնական  
հաղթանակի պսակները թողնեն փրենց հետարգներին:

Այդպիսիներից մեկն էր, աջա, Սուրեն Սպանդարյանը, որ իր  
շահել, եռուն հասակը հանուն պրոլետարիատի դիկտատուրայի  
թաղեց ցրտաշռուշ Սիբիրի ձյուների տակ, որպես արտորական և  
որի մահվան հնդամյակը զրանում է այսօր, սեպտեմբերի 12/25-ին:

Մեր նպատակն, անշուշտ, այն չէ, թե՝ մեռավ ընկերը, հիշե-  
ցինք, պատիվ տվինք նրան և վերջ, այլ այն, որ ցուց տանք ոչ  
միայն մասսաներին, այլև նորընծա կոմունիստներին, թե ինչպի-  
սի՝ օրինակելի պողպոլմիկներ ունեցանք մենք, որոնք մեզ թողել  
են վառ եռանդի, անվերջ զրկանքների և գեղեցիկ անձնագության  
մի շարք գասեր,— որոնք, որպես մոտիկ անցյալում կոմունային  
զինվորագրվածներ, գիշեր-ցերեկ աշխատել են, հանապարհ հարթել՝  
այսօրվա օրը պատրաստելու համար,— որոնք թիթեռի նման հրդե-

Հի լույսեր որոնեցին և մղձավանջ ռեակցիայի մահն արտգացնելու ձանապարհին ընկան առաջապահ շարքերում:

Այդպիսի խիզախ անձնավորություններից մեկն էր Սուրեն Սպանդարյանը, որն իր գործունեության պսակին ավելացրեց և այն անթառամ ծաղիկը՝ իր արտահանած պատմական ձառը դատարանում<sup>1</sup>, որն ընդհատեցին նրա դատարանային դահիճները և ձնշելով կոկորդը՝ կատարվացի դուռը փակեցին նրա երեսին:

Խորի՞ն հարդանք այդպիսիների, հեռու Սիրիոսմ անհետացած, բայց մեղ համար միշտ կենդանի ապրող շիումներին:

## ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՊԱՆԵՐԸ ԴԵՐ ՊԱՀԱՆՁՈՒՄ Է. ԵՆ...

Լեհաստանի իմպերիալիստ պաները, ինչպիս երևում է, զեռ շեն հրաժարվել «սահմանից-սահման», «ծովից-ծով» մեծ Լեհաստանի երազական ծրագրից և դարանակալ թշնամու նման սպասում են՝ հենց որ իր հարեւաններից մեկն ու մեկը բռնվի «գլխացավով», իսկույն վրա տան ու բռնագրավեն նրա սահմանները:

Սիլեզիայից հետո մեր պաների ախորժակը հիմա էլ գրգռվել է՝ Բելոսուսիան և Ռվիրախնան զավթելու համար:

Օգովելով այն հանդամանքից, որ Խորհրդային Ռուսաստանը այժմ զրադիւծ է Մերձվոլգրան շրջանի առվլալներին ամոքիլու հոգսով, նրանք պահանջում են Խիզայի պայմանագրի համաձայն խոստացած ուկինների վճարումը, հակառակ դեպքում, խոսելով ուղարկմատիվ լեզվով, սպասում են մեզ պատերազմով, մահվան դերանդին օդում ճոճելով:

Սակայն նրանք մոռանում են, որ պատերազմական գերանդուն Խորհրդային Ռուսաստանը կհակագրի իր լայնատարած երկրի անթիվ, անքանակ զյուղացիական մանգաղները, իր բանվորի մուրճը, ու ինչ իմանաս, երկար ժամանակ հանդստացած ու փորձված հընձող մանգաղից, այլև գանգեր փշրող բյուրավոր մուրճերից, ողջ կմնա՞ն նրանք, թե՞ ոչ...

Ամենքն էլ զիտեն, որ այս դարանակալի հոխորատանքին նպաստում է հիմնավորց արնազգեստ Մեֆիստոփել ֆրանտիական կառավարությունը և զանազան Սավինկով-Բալախովիչ-Գետլյուրա բախտախնդիրների տարացնելով, նետում է Խորհրդային Ռուսաստանի սահմանները՝ բորբոքելու այն կայծը, որ սպասնում է Հրդեհի փոխվել:

«Ռուսաստանը, լինի նա խորհրդային, բորժուական, թե ցարական, պիտի թուանա ու տերիտորիալ սեղմվի», — այսպես են

զնուել անհանգստությունից դիվահար կեհաստանի իմպերիալիստ ակտիվիստները:

Սակայն Ռուսաստանը ոչ թե մտածում է «սեղմվել ու թուշանալ» կեհաստանի անուշ խաթեր համար, այլ նա տրամադրություն և արդարացի ցանկություն ունի, որ թեկուղ ամբողջ երկրագունդը դառնա Խորհրդացին:

Այդ նրա առաքելությունն է արդեն, պատմության սահմանաձը: Ռուվինտեև նա շատ լավ գիտե, որ այսօրվա Խորհրդացին Ռուսաստանը նախկին ցարերի և սպիտակ արջերի Ռուսաստանը չէ, այլ քաղաքականապես և մտավորապես կատարյալ կրթված մի հզոր պետություն, որի համար պատերազմները նպատակ չեն, այլ միջոց՝ զսպելու իրան զորով կովկա քաշող, անհանգստացնող և իր նորմալ քաղաքական զարգացմանը խանգարող ռազմակեր մանցակներին:

Պայմանավորված պաները դեռ հոփարտում է՝ և ու սպառնում մեղ պատերազմով, երբ, համաձայն նույն Ռիդայի պայմանագրի, փոխանակ զանազան սովինկով-բալախովիշ-պետլուրաներին իրանց սահմաններից դուրս քշելու՝ այսօր այդ օճերին տաքացնում են փրանց ծոցում:

Այս էլ մի տեսակ կոմպենսացիա է, գալի արդարացում գառան հանդեպ, մեֆիստոֆեկների լարած դավը:

Մենք դեռ մեծ հույս ունենք, որ գոնե այս անդամ կեհաստանի խելամիտ ժողովրդական մասսաները կխուսափեն ավանտյուրացից, հակառակ ակտիվիստների կատաղի ցանկության, որ նույն պատերազմաներ ակտիվիստների փուրն ու եռանդը կնստեցնի լեհական պրոլետարիատը — երկրի այդ իսկական տերն ու տիրականը — և թույլ չի տա կովկա գաշտ հանել իր զավակներին ու եղբայրներին, որքան էլ վերջիններս բռնագրավ լինեն ֆրանսիական կապիտալի և նրանց ժամանակավոր մուրհակների շնորհիվ:

Չլինի՛, թե կեհաստանի պաների գլխին է կատարվում այն առածը, թե «Օծի գլուխը եթե ցավի, կզա կդնի տաքացած խճուղու վրա»... Եվ այն ժամանակ, իհարկե, անցնող կառապանի սալը, կամ սլացող ձիու սմբակը, անշուշտ, կարող է չախչախել ցավով բռնված օծի գլուխը:

## ՍՐԾԱՑԱՎ. ՓԱՐԻՍԵՅԻՆԵՐԸ

«Կարմիր Աստվի» № 172-ում մենք զետեղեցինք պ. պ. Ժոր-դանիա-Չխեհձեի կոչը՝ ուղղված արևմտա-և վրոպական ժողովությունների հասարակական կարծիքին, և այսօր անհրաժեշտություն ենք համարում այդ առթիվ մեր դիտողություններն անել:

Ում չի հայտնի այն, թե ինչպես մենշեիկները բարգավաճ կովկասը ավերակ դարձրին և այդ ավերակն էլ «զրախտ» անունով կնքեցին, այլև այն՝ թե ինչպես իմպերիալիստական պատերազմը ֆրոնտներում պայմանական մի հակա ռազմապաշար մնաց որպես ժառանգությունների մի հակա ռազմապաշար մնաց որպես ժառանգություն, որը պատրաստված էր պատերազմը շարունակելու համար, այլ խոսքով՝ հաց ու շաքար, հագուստ ու ռազմական մի այնպիսի շտեսնված ժառանգություն, որ դրսից օգնություն շտանալու դեպքում, Վրաստանը երեք տարով ալաջովված պիտի համարվիր:

Սակայն փնչպե՞ս վարվեցին մենշեիկները այդ առելի հարցությունների հետ:

Հանրածանոթ է այդ Վրաստանի ազգաբնակության:

Մոռացել են այդ միայն ժորդանիան ու Չխեհձեն, որոնք Պոլիս կամ արտասահման նստած, դարանապող գայլի նման ա և Պիլտուգսկի, սպասում են մի աղետի, որ օգտվելով նրանից, իրենց կոչերը ցրեն եվրոպայում՝ «վասն փրկության Վրաստանի»:

Մոռացել են ժորդանիա-Չխեհձեն, թե ինչպես այդ ամբարված հարստությունները վերջին հաշվով մտան մեկ փրենց՝ մենշեիկ դեկավարների ու մեկ էլ եվրոպական դորքերի և հրամանատարների կողորդը, որոնք իրենց «այցելությամբ» ամեն մի ամիս կանոնավոր կիրապով փրար փոխարինում էին, Վրաստանի մայրաքաղաքը դարձնելով կամուրջ՝ Սև ու Կասպից ծովերի միջև:

Մոռացել են իրենց շնորհնիկների՝ առասպելական շափերի հասած կաշառակերությունները, որ ամեն որ և ամեն ժամ հենց

իրենք՝ մենչեւկները՝ վեճերի ու խայտառակ ինցիդենտների նյութ էին զարձիլ իրենց զավեշտական ուշեպիտելիայում:

Մոռացել են, թե ինչպես փայտի և այլ կենսական մթերքների բացակայության պատճառով ձմեռվան ցրտերից ժողովուրդն եր սառչում, կոտորվում:

Իսկ Հա՞ցը...

Իզուր չեր վրացի զվարձախոս խմբագրի մեկը իր թերթում նկատել՝ «Ժորդանիան այնքան զարի ու կորեկ է ուստիցը մեղ, որ շուտով ամենքս չէ կակսենք խրխնջալ ձիու որիս, կամ ծլվալ թոշունների նման»:

Իսկ բանվորների դրություննը...

Մի՞թե նրանց նյութական վիճակն ավելի լավ էր այսօրվան գրությունից:

Հիշո՞ւմ են Ժորդանիա-Չիսեհծեն այն, թե ինչպես Հենց իրենք՝ մենշևկի բանվորները, երկաթուղային և այլ արհեստակացական միության սրբութարական մասսաները, բողոքի միտինգներ, գործադուլներ էին սարքում կառավարության դեմ, և գրահետևանքը լինում էր այն, որ անխափիր բոլոր կոմունիստ-մեծամասնականները բանտ էին նետվում, իսկ վորքամասնական լակեյները խելոքանում ժորդանիայի «Անց!» խոսքից:

Եվ այդ բոլորը կատարվեց դեռ կյանքի անհամեմատ լավ պայմանների ժամանակ, երբ անսպառ պաշարի տեր էին Ժորդանիա-Չիսեհծեն:

Եվ այսպիսի խայտառակ, վարչական ընդունակություններից տնանկ մարդիկն են, ահա, այսօր կոչ ուղղում արևմտա-եվլուպական ժողովրդին՝ փրկել Վրաստանը «անկոչ վայրագներից», Ռուսաստանից եկած կարմիրներից:

Եվ այս հավարը բարձրացնում են այն մարդիկ, որոնք շատ լավ գիտեն Խորհրդային Վրաստանի՝ եվրոպացիների կողմից բլոկադայի ենթարկված լինելը, մինչդեռ իրենց օրոք, չնայած նրանք ազատ էին այդ դրությունից, այնուամենանիվ՝ բարձված նավերի պաշարելենն ու շորեղենը գարձյալ իրենց՝ մենշևկիների որկորն էր մտնում և ոչ թե բանվորության:

Այս ձեփ կառավարության մասին են, ահա, մտածում մեր նախկին պրեմիերները և օգնություն հայցում եվրոպայից, սակայն՝ թաթերդ ցա՛ծ:

Պիտի կորչեն երեք տարի շարունակ բանվորա-գյուղացիության անունով իրենց կաշին պարարտացրած, նրանց շահերին

դավաճանող, երկիրն Անտանտի ստրոմին ու Հարձը դարձնող  
ավանտյուրիստները:

Վրաստանի գյուղացիությունն այսօր՝ լավ-վատ, գոհ է իր  
գրաւթյունից, անհամեմատ ավելի բարվոք՝ քանց ժորդանիաների  
ալան-քալանի օրոք:

Վրաստանի բանվորությունն, իրոք, նեղվում է երբեմն... բայց  
նա շատ լավ է հասկանում, որ նրանց այսօրվա նեղ վիճակը պատ-  
րաստողները դարձյալ ժորդանիան-չխենիձեներն են՝ իրենց բարե-  
կամ ելքուպական փմպերիալիստներով հանդերձ:

Մեր բանվորությունը հասել է մի այնպիսի զիտակցության,  
որ զիտե արդեն, թե ներկա իր վիճակի բարվոքելը շարաթների  
հարց է միայն: Ընթերցողը տեսավ, թե ինչն էր Վրաստանին այս  
օրին հասցնողը, և ոչ թե այն, ինչի վրա այնպիս եռանդորրն հեն-  
վում են ժողովրդի սրտացավ փարիսեցիները — ժորդանիա-  
ջանիձեն, որոնք զուցե այրվում են սրտի փափագ-կարտոից՝ նո-  
րից իրենց տեսնել նախկին զիրքերում, և որոնք, համոզված ենք,  
մինչև գերեզմանի դուռն հասնելը չեն մոռանալու «Ավա՞ղ փա-  
ռաց անցավորին»:

Թաթներդ ցա՛ծ:

## ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԱԺԵԾ ՏՈՒՆԸ ԱՐԹՈՂԵԿԱՐԻԱՏԻ և ԳՅՈՒՂԱՑԻՈՒ- ԹՅԱՆ ՀԱՄԱՐ՝ դա Հոկտեմբերյան տոնն է:

Մի տոն, որ հիմք զրեց ոռւսական Կոմունային և այսօր թեա-  
կոլում է վկցերորդ տարին:

Փարիզի Կոմունան Փարիզին տիրեց մարտ ամսից սկսած  
մինչև մայիսի սկզբները, ընդամենը յոթանասուն երկու օր, ու  
անկարող լինելով այլևս դիմադրել երրորդ հանրապետության գոր-  
քերին (վերսալցիներին), մի շարք հրդեհներից հետո մոխրակույտ  
դարձած Փարիզը հանձնեց կառավարության:

Ի՞նչն էր պատճառը, որ սլրողեաարական Կոմունան անկարող  
եղավ Փարիզը իր ձեռքին պահելու ու նրան կառավարելու:

Այս, որ 1871 թվականի կոմունարները կառավարության  
զեկն իրենց ձեռքն առնելուն պես իսկույն ևեթ շազգայնացրին բան-  
կերը, գործարանները ու ֆաբրիկաները, շամայնացրին, շզավթե-  
ցին պոմեշշիկների հողերը, տնատերերի կայք ու տները, այլև բո-  
լոր մասնավոր սեփականությունները: Ֆրանսիական բուրժուա-  
զիան ուժեղացավ և 72 օրից հետո գրոհ տալով՝ հետ խլեց Փարի-  
զը կոմունիստներից՝ վերջիններին մի մասը աքսոր ու տաժանա-  
կիր աշխատանքների ենթարկելով:

Մինչդեռ Հոկտեմբերյան Մեծ Հեղինակնե-  
րը, օգոստի վելով Փարիզի կոմունարների սխալից, առաջին փոկ օրից  
կապիտալիստական բուրժուազիային ահ ու սարսափի ենթարկե-  
լուց հետո՝ համայնացրին հողերը, ազգայնացրին բանկերը, ֆաբ-  
րիկա-գործարանները, մեծ շենքերն ու տները և այդպիսով ապա-  
հովեցին փրկնց դիրքերը թշնամու հարձակումներից, միաժամանակ  
հաղթող հանդիսանալով բաղաքացիական և տնտեսական կռիվնե-  
րի հակատներում:

Ահա թէ ինչն էր պատճառը, որ մուսաստանի կոմունան իր խորհրդացին իշխանությամբ թեակոխում է վեցերորդ տարին և այսօրից է՛լ ավելի խորանում իր հիմքերի վրա, է՛լ ավելի ամրանում իր գիրքերի վրա:

\* \* \*

Ի՞նչ ավեց Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունը Մեծ Թուսաստանին և ապա մեզ, կովկասցիներիս, կրթ<ական> և կուտուրական ասպարեզում:

Ես կխոսեմ այստեղ միայն գրականության մասին:

Նախ այն, որ կադետական, էշեռական, մենշևիլյան կուլիցիայի խորտակումից հետո խորտակվեց և մանր-բուրժուական գրականությունը իր բարենի և ոհակցուն գրագետ-փերուզներով, լրագրողներով, ժուռնալիստներով, որոնց փոխարինեցին պրոլետարական գրողներ, ժուռնալիստներ, լրագրողներ:

Ինչպես որ Հոկտեմբերը երկաթե ավելով սրբեց, քշեց ու թափեց նեա գետի ծոցը ու այնտեղից էլ արտասահման բոլոր հակահեղափոխական բուրժուազիան փր արբանյակներով, այնպես էլ ասպարեզից չքաղաքան բոլոր հակահեղափոխական մերեժելովսկիներ, միլյուկովներ ու առվորինները:

Գրական ասպարեզը մաքրվեց ու տեղի ավեց նորեկ սերնդի թարմ ու ջահել սերնդի ներկայացուցիչ գրականագետներին, որոնք հալածված էին բուրժուազիայի օրով, որոնք աքսորներում ու տաժանակիր աշխատանքներում էին ապրում իրենց նեղ օրերը, որք քարանում էր միտքը, ցամաքում ուղեղը, չորանում եռանդն ու ողեվորության աղբյուրը:

Հոկտեմբերը իր հմայիչ ու կախարդիչ գավազանի միշտարժումով նետ կանչեց բոլոր վտարանդի ու կենդանի աշխարհից կտըրված, առողջ հոգով գրականագետներին, և այս հինգ տարվա ընթացքում Մեծ Հեղափոխության հայրենիքը այնպիսի մի շահենված քանակով ու որակով դրականություն հեղեղեց շուկան, որ աշխարհի սկզբից ոչ մի պետություն այդքան չէ արել:

Եվ այդ դեռ ա՛յն ժամանակ, երբ թղթի սովոր էր ամրող Թուսաստանում:

Ո՛չ մի գարում և ո՛չ մի կառավարություն պրոլետարիատի և զուղացու ընթերցանության և կրթության մասին այնքան չի մտածել, այնքան չի հոգացել, որքան Սովետական իշխանությունը:

Այդպիսով, Հոկտեմբերը ոչ միայն անդրանիկ տոնն է Խուսափանի պրոլետարիատի և գյուղացիության ազատագրության, այլև նրա գրականության հաղթանակի տոնը՝ ընդդեմ բարժուական թունավոր, բթացնող գրականության:

\* \* \*

Մասնավորելով մեր խոսքը հայ գրականության և հրապարակախոսության առթիվ, մենք պիտի շեշտենք, որ բանվորա-գյուղացիական կովկասյան Ֆեդերացիան, կապված վիճելով ԲСՖԸՊ-ի հետ, նույն վիճակն է ապրում, ինչ որ վերջինս:

Մի, կամ երկու տարվա մեր երկիրը եռո՞րդային գառնալու բնիքում անհետացան ազգայնական մամուլը, քաղքենիական բուրժուական գրականությունը. մի գրականություն ու մամուլ, որը ծառայում էր միայն և միայն բուրժուազիայի և զանազան գույնի ազգայինների շահերին, խունկ ծխում նրանց, շողոքորթում, վաճառվում ծախու կնոջ պես՝ իր ողորմելի գոյցությունը պահպանելու համար:

Եվ Հոկտեմբերը մի այդպիսի մամուլ ու գրականություն ցախալելով աղքանոց նետեց, որպեսզի շթունավորվի մեր մատադ սերնդի ընթերցանու ողին քաղքենիական միջակության քթացնող թույնով:

Հոկտեմբերը ընդհանրապես փրկեց ողջ բանվորությանը և մասնավորապես հայ բանվորա-գյուղացիությանը մոլորեցնող և գիտակցությունը միավնող այն գրականություննից ու մամուլից, որի շնորհիվ տասնյակ տարիներ այնքան անողոք տուժեց հայ մասսան, հայ բանվորը, հայ գյուղացին. նրան վիտարինեց այն գրականությամբ, որը կազմակերպում է պրոլետարիատի մտքերն ու գգացմունքները:

Փա՛ռք նրան — Մեծն ազատաբար Հոկտեմբերին:

## ՄԵՐ ԱՆՑԱՇ ՈՒՂԻՆ

(Նվեր անկուսակցական բանվոր բարեկամներին)

Ես շգիտեմ, կա՞ աշխարհումս մի ավելի գեղեցկություն, մի ավելի երջանկություն, քան հեղափոխականի պոդազոլ գործունեությունը:

Ես կառկածում եմ, որ արեի տակ լինի մի ավելի քաղցր կյանք, մի ավելի անուշ աշխատանք, քան կուսակցական կյանքն ու աշխատանքը և սրանց հետ կապված հեղափոխական գործունեությունն ու կոհիվը հօգուտ պրոլետարիատի դիկտատուրայի:

Մանավանդ, որ հեղափոխության զինվորը պարզորեն տեսնում էր, որ իր ամեն մի քայլը, ամեն նեղություն, զրկանք ու վտանգների հետ կապված գործունեություն անպառազ չի անցնելու:

Հեղափոխական գործունեության իսկական զինվորը, արհամարհելով ամեն ինչ, միայն մտածել է մի քանի մասին՝ աշխատել, աշխատել և անընդհատ աշխատել, որքան ուժ ու եռանդ կա իր մէջ, կովել՝ քանի դեռ կենդանի է ինքը:

Եվ եթե նրան հաջողվել է մի քանի արդյունավետ գործ կատարել (օրինակ, բջիջներ, գործադուներ կազմակերպել, թուոցիկներ գրել, տպել, տարածել, որ պողպոլ գործունեության օրերուակապված էին անշափ դժվարությունների ու վտանգների հետ), նա միշտ մտածել է, որ ինքը դեռ ոչինչ չի արել ու անհրաժեշտ է դեռ էլի ու էլի գործել, հաջողացնել կուսակցական կազմակերպությունների ավելի բարդ հանձնարարություններ... և այդպես ագահորեն էլի ու անվերջ, մինչև որ ձերբակալվի ու բանտում ժամանակավորապես հանգստանա իր խլրտող, անհանդիստ ու միշտ աշխատանքի ծարավ եռանզը:

Իսկ քանտից ազատվելուց հետո, էլի՛ կոփիվ, էլի՛ գործ...

Այդպես էինք ահա մենք, մի խումբ մեծամասնականներս տնցալում, 1904 թվից կուսակցական պողպոլ աշխատանքների եռուգեսի ժամանակ:

Հնտանիքի տերը մոռանում էր և՛ ընտանիք, և՛ երեխայք, և՛ ուտել-քնել, և՛ զվարճանք. ի՞նչ ընտանիք, ի՞նչ ուտել-քնել դրանց համար նա ժամանակ չուներ. որպես մի լարված մեքենա, ինքն իրեն այրող, մաշող, ինքն իրեն գիտակցաբար նետող այս կամ այն վտանգի, կրակի մեջ, բայց միշտ երջանիկ, միշտ հապատ ու գոհ, որ մի քար է ավելացնում այն հսկա կառուցվածքի վրա, որ անվանվում էր պլոտետրիատի դիկտատորա՝ ապագա հասարակակարգ, սոցիալիզմի հաղթանակ:

Այդպես է եղել բոլոր պոդպոլնիկների կյանքը, որոնք ոչ մի նյութական շահ չեին սպասում ոչ ոքից, եթե միայն իրենց սեփական վերջին կոպեկները չեին նվիրաբերում գործը հաջողացնելու համար:

Սովոր, զրկանք, ձերբակալություններ, կամ բանտ, աքսորանք, ի՞նչ բան էր պոդպոլնիկ հեղափոխական մարքսիստի համար:

— Ժպիտ, հեղնանք, արհամարհանք, նրան մի ինչ-որ ներքին հոգեկան բավականություն մղում էր, մի գերբնական գիտակցություն ու համոզմունք, մի անսպառ եռանդ հրահրում, հրամայում էր միշտ դեպի առաջ, միշտ դեպի կոփի նետվել ընդդեմ ցարական բոնակալ օրենքների, ընդդեմ շահագործող գործատերների և այս վերջիններիս գիրավունքների» տապալման:

Եվ շկար աշխարհում մի երջանկություն, քան այն, երբ ամեն վերջանում էր մեր հաղթանակների էտապներով:

Անհաջողություններն էլ մեզ, պոդպոլնիկներիս, երբեք չեն վհատեցրել. մենք լավ գիտեինք, որ ցարիզմի օրերին, ու վերջերս էլ մենշևիկների օրերին, շարունակ հետապնդվելով օխրաննիկներից՝ հեշտ չեր շարունակ, անարդել հաղթանակը հաղթանակից գետո վայելելը. բայց և գիտեինք, որ այն ագիտացիոն-պրոպագանդիստական սերմերը, որ ցանում էինք պրոլետար մասսաների մեջ՝ մի ներքին գաղտնի տարերային զորությամբ ապառաժների միջից բանում, կանաչում, մեծանում էին ու պտուղներ արտադրում:

Այդ գիտակցությունն էր, ահա, մեր զորավիզը, մեզ ոգեսրող, առաջ մղող ստիմուլը, մեզ արհամարհել տվողը և՛ քաղց, և՛ զըրկանք, և՛ վտանգ, և՛ մահ:

Գեղեցիկ էր գործը, սքանչելի նրա արդյունքը և հմայիշ նրա հեռանկարները, ու նույնքան գեղեցիկ մեր կյանքը, մեր ասլրում-

ները, որտեղ միշտ եղել են ուժեղ, խելամիտ, զգոն ու անուշ գիտակցությամբ լի:

Թող թույլ տրվի ինձ, նվաստիս, ասել, որ իմ գործունեությունը տասնյակ տարիների ընթացքում եղել է երեք և ավելի ֆրոնտի վրա՝ գրականական, պոդապոլ-կուսակցական և պաշտոնավարական, որպես ընտանիքավորի, թե որքան եռանդ ու ծիգ էր հարկավոր գլուխ հանելու այդ անհանդիստ, զրկանքներով լի անընդհատ կոփներից, այդ թողնում եմ ընթերցողին, կասեմ միայն այսքանը, որ աշխարհիս մեջ երեք այնպիսի երջանկություն չեմ զգացել, որքան այդ երեք ֆրոնտներում անընդհատ աշխատելուց, և այսօր, մեր կուսակցության 25-ամյակի օրը, իմ կրտսեր ընկերներին և անկուսակցական բարեկամներին կցանկանալի, որ մեր այս ստեղծագործական օրերում, երբ արդեն անցել ենք մեր ծանր ուղին, մեր սկսած ու որոշ հունի մեջ գրած գործը շարունակվեր այն եռանդով ու կրակված զիտակցությամբ, որպիսի անձնվիրությամբ տանում էինք մենք՝ մի բուռն հեռավոր ու մոտիկ անցյալի պոդպոլնիկներս:

## ՄԱՅԻՍԻ ՏՈՒՄԱՆ ՏՈՒՄԱՆ

(Հուշեր)

Մայիսի մեկը...

Ահա այն պաշտելի օրը, որին մենք ամեն օր սպասում էինք անհամբեր, սրտատրոփ, սպասում ողևորված, սիրառատ, ինչպես նորափեան իր հարանցուին:

Նա, տարվա մեջ այն ցանկալի օրը, որի միջոցով հաշիվ ունենք տեսնելու պրոլետարիատի դասակարգացին թշնամիների ժամ:

Այլպես ասած՝ մայիսի մեկն այն կախարդ հսկայի կապարձն էր, որի սուր սլաքների հարվածին պիտի հանդիպեին ու հաշիվ տային և շոռմի պապը, և՛ Թիտերի ցարը, և՛ համաշխարհային բուրժուազիան՝ իր բռնակալ պետություններով:

Մայիսի մեկն անցյալում մեր կողմից հասկացվել է որպես մեր դասակարգացին զիտակցության հասունության, մեր շարքերի կազմակերպության և մաքտնչող պրոլետարիատի զորահավաքի օր:

Մեզանից ամեն մեկը դիտեր, որ այդ օրը բանթողի օր է, պրոլետարիատի հարազատ տոնը՝ ընդում բուրժուական տոների, և հասկանալով օրվա խորհրդավոր նշանակությունը՝ խտացնում էր իր շարքերը, լարում իր բոլոր ուժերը, ավելի ազդու, ավելի հաղթական դարձնելու նրան մեր թշնամիների աշխում:

Մի դեմոնստրացիա էր այն, մի մարտակոչ, ցույց տալու բանվոր դասակարգը խեղդող դահիճներին, որ որքա՛ն էլ բռնադատեին մեր իրավունքները, մեր ֆիզիկական և մտավոր ուժերը, որքան էլ ճգնեին խլել մեղանից մեր արդար վաստակը ու ստրկացնել մեղ՝ այնուամենայնիվ մենք վհատվելու շենք, ընդհակառակը՝ ավելի ու ավելի նոր ուժեր խմբելով մեր շուրջը՝ պիտի հոխորտանքով գրո՞ւ տանք բռնապետական կարգերի ու բանվորի ար-

յուն-քրտինքով հափրացող կտպիտալիստների թաստիլը խորտակելու, ութ ժամյա օր, միջազգային խաղաղություն և այլ նման լոգունգների իրականացումով:

Նախքան մայիսմեկյան տոնի ավելի կատարյալ ու գիտակցաբար տոնակատարության անցնելը, մինչ իննհարյուրական թվականները, թող ներվի ինձ, եթե ես մեջ բերեմ հեռավոր անցյալից մայիսմեկյան մի քանի հուշեր:

\* \* \*

Մայիսմեկյան տոնի մասին ես դադարիար ունեի դեռ 1890 թվականին, երբ մի խումբ Բաքվի սեալական դպրոցի միջին դասարանի բնդ ու մորուքավոր աշակերտների հետ, վաղ առավոտյան, պաշար վերցնելով հետներս, Զեմբերքենդի կտրուկ վերելքով գալիս անցնում էինք Վոլցիե-Վորոտա կոչված լեռնաքարափի կանաչապատ տափարակը, տրի բարձրությունից ներքեւում օձապըտույտ աղեղներով երեսում էր անդրկտվկասյան երկաթուղու գիծը:

Խոսում էինք մենք մենք այնտեղ ազատության, Ալեքսանդր Յ-րդի և նրա մինիստրների բռնակալության մասին, շատ աղոտ կերպով ակնարկում հարատահարվող բանվորության և նման հարցերի մասին:

Ապա մեր պաշարը մաքրազարդելուց հետո, պարզ օդում, կարմիր արևի տակ արուրմա խաղում, երգում, պարում և երեկոյան, մութն ընկնելուն պես, կայտառ, առույգ երգերով, նույն ապառաժներով վայրի այցյամների նման ցատկուելով, քաղաք դառնում, վարձում կառքեր Պարապետի շուրջը և ծովափնյա փողոցով գեմոնստրատիվ արշավում:

Այսպես էինք տոնում մենք մայիսմեկյան օրը, ուղիղ 33 տարի սրանից առաջ, շատ աղոտ, պրիմիտիվ հասկացողություն ունենալով նրա մասին:

\* \* \*

Մի տարուց հետո, երբ ինձ քաղաքից տեղափոխեցին Սևքաղաք, «Կուկան» (Հրաբուխ) կոչված երկաթա-ձուկարանային-մեխանիկական գործարան, ուր տաբելշիկի պաշտոն էի վարում և ուր մոտիկ շփում ունեի Ռուսաստանից նկած հարյուրավոր բան-

վորների հետ, երբեմն խոսք ու զրուցի ժամանակ ակնարկում էի աշքաբացներին մայիսմելյան տոնի մասին:

— Գիտենք, լսել ենք, — պատասխանում էին նրանցից ոմանք ժպտալով, տմանք տհաճաբար:

Նվ իրաք, մի օր՝ «Վուլկան» գործարանում, որ գտնվում էր Բալախանի տանող կերկաթուղու գծի մոտ, մայիսի մեկին տեղի ունեցավ մի շփոթ ու խլրուում:

Բանվորների լավագույն, բայց չնշին մասը, դուրս եկավ բաժանմունքներից, հետն առած հաց ու երշիկ, ուղղվեց դեպի մոտակա դաշտերը, հեռու կանաչած արտերի մոտ և ամբողջ օրը գարմոցկա նվազելով ու երգելով՝ տոնեց մայիսի մեկը, առանց ըմբռուելու նրա լայն իմաստը:

Մինչդեռ բանվորների մյուս, մեծագույն մասը, այդ օրը հրավիրել էր ոռու քահանային և մեխանիկական բաժնի երկար արհետանոցում, որի անկյուններից մեկում ցցված էր ողջ հասակով այսպիս կոչված «Նիկոլա Չուղուլութեցի» պատկերը, մաղթանք էր կատարել տալիս և անցնում աշխատանքի, կարծես այդպիսով նույնպես դեմոնստրացիա անելիս լիներ իրենց բմբոստ, «բոմտովշիկ» ընկերների դեմ...

\* \* \*

1892 թվի մայիսի մեկին լսում ենք, որ Բալախանիում նավթային կրեսոս Արակելովի մեխանիկական և կատյունի արհետանոցներում բունտ է ծագել:

Բանվորներն այլևս անկարող լինելով տանել գործարանի գուեհիկ կառավարիչ ինժեներ Ակոպովի անարգանքները՝ պահանջել էին հեռացնել կառավարչին: Սրան հետեւ էր ըմբռոստ բանվորներին գործարանից արտաքսելը: Բանվորները նույն գիշերը կոտրտում են մի քանի ստանոկ, կտրատում փոկերը, փշացնում մեքենաների գլխավոր մասերը, իրենք անհետանում: Այսպես տարերային կերպով ցուցադրում են իրենց բողոքն ու արդար ցասումը բոնակալ գործարանատիրոջ ու նրա սպասավոր ինժեների դեմ:

Այնուհետև, 1893 թվականի դեկտեմբերի վերջում, տեղափոխվելով Թիֆլիս՝ Բաքվի մասին, նրա հեռավոր անցյալից, ասելիք չտնեմ:

1894 թվականի ձմեռը աշխատում եմ Կարապետով-Թերիժանովի ինժեներին երկաթի-թուզի ձուլարանի մեխանիկական կաթսայա-գործարանում, ուր միաժամանակ Թիֆլիս — Կարս ներկաթուղու բոլոր կամուրջների երկաթյա մասերն էին պատրաստվում:

Մայիսմեկյան տոնի մասին այստեղ շարժում չեր նկատվում, բացի անզոր 22ուկներից, 22ուկներ լսվում էին Յարալովի և ծխախոտի գործարաններում, սակայն հետագա տարիներում առաջին անգամ մայիսմեկյան ցուցը ու տոն կատարել վիճակված էր Թիֆլիսի դեպոյի բանվորներին, որի վրա կրկնությունների մեջ ընկնելու համար կանգ չեմ առնի:

Անշուշտ, այդ պերփողի տասնամյա ցուցերի մասին, մինչ 1905 թվականը, այսօր ժամանակադրական կարգով ուրիշները գուցե մեր լրագրում նրեան գան իրենց հուշերով. ցուցեր, որոնց վկաներն են Մախաթի, Մամա-Դավիթի, Սոլոլակի սարերը:

1905 թվականի <Հոկտեմբերյան> մանիթեստից հետո արդեն մայիսմեկյան տոնը մտնում է իր իսկական, պատշաճավոր հունի մեջ. փողոցներում երեսում են կարմիր գրաշներ և երթեր: Նա արտահայտվում է այն գումավորությամբ և ոելեք արտահայտությամբ, որի մասին ես պահանջ էի դրել հոգվածի սկզբում:

Մայիսի մեկը դառնում է պրոլետարիատի բացարձակ կովի և սպառնանքի օր՝ կապիտալի սարուկների կողմից իրենց ախոյաններին. քանի գնում նա աճում, հասունանում, սպառնալից է դառնում մեր դասակարգացն թշնամիների համար. նա դառնում է այն ուժեղ ազդակներից մեկը, բանվորական ուժեղ կազմակերպությունների այն խնամող դայակը, որ պահել, մեծացրել, սնել է, հասակ տվել բանվոր դասակարգին ու հասցրել նրան այսօրվահաղթական օրերին: Մակայն, մինչ այդ, վրա են հասնում ոեակցիայի մղձավանջի օրերը, որի ձնշող ապարատը կապարի նման նստել էր մեր բոլորիս կրծքին ու ժամանում էր մեր մեջ մնացած հուսնդն ու արյունը:

ժայրաքաղաք էին դարձել իրենց համալսարանական կրթությունը շարտանակելու, կամ դյուլերը՝ ուսուցություն անելու, իսկ բանվորական կազմակերպությունները քայրայվել էին, նրանց ղեկավարները նույնպես ձերբակալվել, աքսորվել...

Մնացել էինք մի խոմք մեծամասնականներ, որտեղ, չնայելով տարին մի քանի անգամ կատարված խուզարկություններին և ձերբակալություններին, այնուամենայնիվ, ճին, փորձված պողպող աշխատանքը սկրելով, ամեն տարի մեծ անհամբերությամբ ու եռանդով մայիսեկի մասին էինք մտածում ու շաբաթներ առաջ նրա թուցիկները պատրաստելու մասին հոգում։ Ու ի՞նչ գաժան պայմաններում... ո՛չ տպարանն էր համաձայնում տպել, ո՛չ զրաշարը՝ շարել, ամեն մեկիս գլխին երկու շպիկ էր հսկում, սակայն և շնայտծ դրան՝ ամեն տարի մայիսի մեկին մենք մեր թուցիկն էինք թողնում և այդպիսով ավելի կատաղեցնում ռեակցիայի «աշարաց» ցերերներին։

Ուրախ էինք անսահման, որ մեր կազմակերպությունների հիմքերը նորից ամրանում են և երջանիկ, որ մայիսմելյան ցուցերի և ճառերի համար հովանի են դարձել նորից Սոլոլակի և Մամա-Դավիթի սարերը, այդ՝ մեզ իրենց վեշերի տակ ու մնջքերի ետև պատսպարող հավատարիմ վկաները։

Այդպես էինք առնում մենք հալածված մայիսի 1-ը ու այդպես վառ պահում նրա կայծերը, մինչև փետրվարյան հեղափոխությունը։

\* \* \*

Մայիսի մեկն այսօր մեղ համար դարձել է պատմական օր։ Նրան այսօրվանից տոնում ենք այլ ձեռվուն նա մեզ համար այլիս ո՛չ կովի օր է, ո՛չ էլ հարձակման։ Նա այսօր մեզ համար հաղթանակի և ուրախության, հանգստի և ցնծության օր է, որովհետև երկրազնդիս մեկ վեցերորդ մասում, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, մեր դասակարգային թշնամին արդեն հաղթած է, դատապարտված, զինաթափ դարձված ու զրկված կովի միջոցներից։

Եվրոպայում և Ամերիկայում միայն, որտեղից երեմն ցարական ծանրը ռեժիմի օրերին նրա պրոլետարիատի մայիսմելյան ցուցերի մասին էինք հեռագրով փմանում և ուրախանում, այսօր գալարվում է կապիտալի ջիրաններում ջիշտ այնպես, ինչպես

մենք 1905—6 թվականներին, ու հեռու չէ օրը, երբ միջազգային  
պրոլետարիատը դեն կշպարտի իր բռնակալների կապանքները,  
կովի և ցուցերի ձևերը ու մեզ նման, մեզ հետ միասին կտոնի իր  
հաղթանակի և ուրախության, իր ցնծության և հանգստի տոնը: Եվ  
այս կլինի մեր անմահ ուսուցիչ Կ. Մարքսի «Պրոլետարնե՛ր բո-  
լոր երկրների, միացե՛ք» լողունգի վերջնական իրազործումն ու  
հաղթանակը:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Բուրժուական կարգերում դրել որևէ հիմք ու սկիզբ առնող գործարանի, հանքի կամ ջրանցքի մասին՝ իրենից չեր ներկայացնում մի առանձին ինտերես, հետաքրքրություն, որովհետև այդ մի շատ սովորական երևույթ էր բուրժուազիայի համար:

Այլ է բանվորա-գյուղացիության իրավակարգում, մանավանդ, երբ մեր թշնամիներից ժառանգեցինք փլուզումն ու ավերածություն բռլոր համարյա արդյունաբերության ճյուղերում:

Խոսել որևէ նոր կառուցվող, կամ արդեն գործի ընկած գործարանի մասին՝ ահա այդ է հետաքրքրականը, որովհետև այստեղից է, որ սկսվում է մեր օրերի ստեղծագործության հմայքը, այստեղից է, որ հերոսական ջանքերի շնորհիվ շունչ ու կյանք է տրվում այն փլուզումին, որի համար այնքան եռանդ ու ժամանակ է մաշտում այսօրվա սովհետական բանվորությունը՝ մեր օրերի այդ Պրոմեթեյն ու ստեղծագործող տիտանը:

\* \* \*

Անցյալ տարի աշնան ինձ վիճակվեց այցելել Զաթախը: Սուավույան ժամը 10-ին, ընկերոջս՝ Բենո Կալանտաձեի ուժեղ ավտոմոբիլը արդեն կանգնած էր բնակարանիս առաջ, և մենք պիտի թեթև նյութեր հասցնեինք Զաթախի, ուր արդեն սկսվել էր նրա գործարանների վերաշինությունը:

Անցնելով մենշեկների երկու (Խրամի և Սողանլուխի) պայմանագրած կամուրջների մոտով, հասանք Սանդար կայարանին, անցանք Լիբկնեխտի անվան գերմանական գյուղից, զ. Աղայանի ծննդավայր Բոլնիս Խաչենուլ ու մի քանի ժամից հետո Զաթախի գործարանում էինք:

Մի գործարան, որ 1874 թվին հիմնել էին Ելրոպայի կապիտալիստները, որոշ ժամանակ շահագործել 7 վերստ հեռավորու-

թյան վրա գտնվող երկաթահանքը, ապա ինչ-ինչ պատճառներով  
թողել, հեռացել:

Ծատերն են այնուհետև հետագայում աշխատել խողի ձգելու  
հանքն ու գործարանը, բայց Զաթախը միշտ էլ եղել է անհամբույր,  
և նրանք անձարացած՝ հրաժարվել են այդ մտքից, Զաթախը թող-  
նելով իր բախտին:

Հիսուն տարի է անցել այդ օրից և անտառի մեջ, լեռներով  
շրջապատված ձորում անտեր մնացած գործարանն իր շենքերով՝  
հետզհետե ավերվել, ամայացել է. մոտակա գյուղացիք՝ թուրք,  
հայ, գերմանացի, քանդել-տարել են նրա շենքերի փայտյա բոլոր  
մասերը, տանիքների կղմինդրները, երկաթյա թեթև մասերը և  
թողել միայն տների ու գործարանի կմախքը:

Այդ կմախքն է, ահա, որին կյանք ու շունչ տալու նախաձեռ-  
նությունն հանձն առավ Վրաստանի Խորհրդացին Հանրապետու-  
թյունը՝ Վեսենիսա\*-ի ղեկավարների՝ ընկերներ Թորոշեհձեի,  
Ավագյանի, Կալանտաձեի և Կիկնաձեի առաջարկությամբ. Նրանք  
հասկացան, որ Զաթախի շուգումը իրենից սև ուկի է ներկայաց-  
նում և ձեռնամուխ եղան նրա պերականդնմանը:

\* \* \*

Մտնում ես գործարանի ձորակը և ահա առաջին նվագ ական-  
չիք է զարնվում փայտե սղոցարանի աղմուկը. այդ նոր կառուցված  
էլեկտրամոտորն է, որը ցերեկով գերաններ և սղոցում ու տախ-  
տակներ պատրաստում գործարանի շենքերի համար, իսկ զիշեր-  
ները լույսով ողողում ամրող Զաթախի ձորը՝ նրա սիմետրիկ կար-  
գով գեղեցիկ վերանորոգված բանվորական կացարանները, ինժե-  
ներների բնակարանները, գրասենյակը, ընթերցարանը, քիմիական  
լաբորատորիան, հիվանդանոցը, գարաժը, ախոռատունը և այլն.

\* \* \*

Ես ու ընկեր Բենոն հանգստանում ենք հյութերի համար հատ-  
կացրած սենյակներից մեկում և վաղ առավոտից ուղղվում դեպի  
անտառի միջով հոսող գետը, ուր նոր ջրանցքի ամրարտակը

\* Վեսենիսա — ВСНХ (Высший Совет Народного Хозяйства — физико-хим-  
икальный Национальный Комитет по науке и технике):

(շլյուզն) է պատրաստվում. այստեղ են արդեն գործարանի գլխավոր ճարտարապետ Կուրդիանին, շոսսեներ ու կամուրջներ կազմակերպող ինժեներ Զիկալինը, փնտեներ Յաշվիլին ու քիմիկոս Կիսելիը, որոնք բանվորների հուանդուն աշխատությամբ գետի հոսանքից մի բաժին դեպի նորաշեն ջրանցքն են ուղղում, և ուղղում են այնպես, որ շխանգարվի գետի բնական հոսանքը:

Դումկերի աշագին երկարությամբ սիֆոն-խողովակը, որ 709 միլիմետր, կամ 27 դույմ լայնություն ունի և մոտ 10 սաժեն երկարություն, կորացած մեջքով, հիդրայի նման հենվել է գետնափոր հատակին, իսկ գումարը ցցել դեպի նորակառուց ջրանցքը, որ ուղղակի փրենից ներկայացնում է մի գեղեցիկ կերտվածք:

Մի սաժեն լայնությամբ, մոտ երկու արշին խորությամբ ու վեց հարյուր սաժենից ավել երկարությամբ այս ջրանցքի հատակն ու պատերը քարած ու սվաղած են ցեմենտով. սա՛, այս ջրանցքն է, որ ջրի հոսանքի թափով շարժողության պիտի ենթարկի Զաթախի թուշի գործարանի շարժիչ մեքենաները, մազութի փոխարեն, ճիշտ այնպես, ինչպես այդ տեղի ունի Բորժոմի հսկա էլեկտրակայանում։ Քայլում ենք ջրանցքի նոր շորացած քարեցեմենտի հատակով, կարծես քաղաքի մայթի վրայով, և հասնում անտառապատ ձորի ճակատին, որի բարձունքից բավական հեռավորության վրա գործարանն է նորոգվում։

\* \* \*

Հետաքրքիր աշխատանքների վայրումն ենք կանգնած՝ մի գեղեցիկ տափարակի վրա, ուր թափված նյութերից երեսում է, որ այստեղ պիտի կառուցվեն ջրամբարներ, նախ՝ տուրբինի և ապա՝ ավելորդ ջրի պաշարը բաց թողնելու դաշտեր ու բանջարանցներ ուղղվելու համար։

Նայում եմ աջ՝ լեռան կողով քամարի պես դուռեորված կ նեղ երկաթուղու գիծը 7 վերստ երկարությամբ, մինչև երկաթահանքը. այստեղից է, որ վագոններով հանքաքար պիտի հասցնեն գործարան՝ շուրջուն հալելու համար։

Հեշտ չե ասել՝ անանցանելի անտառապատ լեռան կողով անցկացնել ուղիսեր մտտ 8 վերստ. դա ճիշտում է այն հերթափային կարվիկներին, որոնք լեռների վրա մեծ-մեծ շինարարական գործեր են կատարում։

Թող կարլիկ խոսքը վիրավորական շթվա ընկերներիս. ես  
միայն կամեցա ասել, որ մերոնք, սովետական նվազ, աղքատիկ  
դրամական ֆոնդից չէ, որ գնել են 15 վերստ երկարություն ոահե-  
ցող այդ աելսերը, այլ նրանք ձեռք են բերված շնորհիվ աշխատան-  
քի հերոսների մեղվազան ջանքերի. այն է՝ Բորչալուում գտնվող  
նախկին Կուչենբախի ապակյա, պարկետի և այլ տրուշչորաններում  
գտնվող դադարած գործարաններից հավաքած այն ծուռ ու մաշ-  
ված նյութերն են այս, որոնք անանցանելի անտառներով տեղ  
հասնելուց հետո՝ մերոնց ձեռքերի տակ տողվել, պիտանի են  
դարձել:

Խոկ գծի շպալնե՞րը...

Հին, 1905 թվից... նույնպես այստեղից-այնտեղից հավա-  
քած... այսպես է կառուցվել ահա 7 և կես վերստ հեռավորություն  
ունեցող երկաթդիծը, մեր ոչկօկոլեյկա-ն:

\* \* \*

Կանգնած, բարձունքից նայում եմ ցած. ֆունիկուլյորի գծի  
նման թեք, մոտ 50 սաժեն երկարությամբ ձգվել է մի աժդանա  
խողովակ, ժողով անունով. նրա լայնությունը 25 դույմ է. Ճիշտ  
մի թունել. այնքան է լայն, որ երկու հոգի իրար գրկած հեշտու-  
թյամբ կարող են սղալ և մի բոպեռմ հասնել ձորի բերանին.  
ուր շարժիչ մեքենաների՝ հիդրավլիկ կայանն է:

Այս ժողովրովն է, ահա, որ հանքատեղերից լադոննետներով  
տեղ հասցրած հանքի բեկորները հասնելու են գործարանների վա-  
ռաներին՝ հալվելու համար:

Իշնում ենք ցած, զեպի ձորը. վառաններից քիչ հեռու կանդ-  
նած է բոլորովին նորաշեն փայտյա հսկա, մեծ շենքը, որը պարու-  
նակելու է իր մեջ երեսուն հազար փութ փայտի ածում՝ հալոցքի  
համար:

\* \* \*

Ահա և վառանները (доменные печи), այդ զույգ հսկայաշեն  
մինարեթները, որ իրենց կառուցվածքով հիշեցնում են Կրեմլի աշ-  
տարակները:

Գործարանների շունչն ու մարմինը, որոնք եռանդում նորոգ-  
վում են. Զաթախի երկու գեղեցկուհի մեջանները, որոնք անընդ-  
հատ լավա պիտի ժայթքեն հրաբխի նման:

Սրանց մոտիկից նայելուց՝ զգում ես զարդանդ. մտնում եմ նրանց երախի մեջ, կավով (օգնելու համար) սվաղած նրանց պատերը սարսափ են ազգում... լայն, ուղղաձիգ, կարծես կլայեկած մի վիթխարի... Ո՞վ է, որ պիտի դիմանա նրա հրաշեկ պատերի տապին, նրա թեժացած դողոքուն կրակին, նրա մարմաքուն շուգունե հեղուկին՝ հալոցքի ժամանակ...

— Իհարկե դարձյալ շուգուն հալող վարպետ բանվորները. աշխատանքի այդ հերոսները և համենայն դեպս ոչ նրա քիմիկոս ինժեներ կիսիլեները...

\* \* \*

Վառաններից ոչ այնքան հեռու հիդրավլիկ կայանն է, որ դեռ նոր է շինվում և որի դեռ օդաշունչ խողովակներն են դարսվում, իսկ սրա կողքին արգեն կիսավեր մեխանիկական արհետանոցն է՝ իր դարբնոցով և անկատար, քարուքանդ եղած թուզի ձուլարան բաժանմունքով:

Այստեղ ժանդոտած, հնամաշ վագրանկան, որը 50 տարի առաջ իր գործն է կատարել, որի նման ցցել է իր կմախքը և խըղճալի տպավորություն է թողնում դոմեն վառանների հանդեպ:

Այս վագրանկան է, որ դոմեն վառանների արգանդից ելած հում թուզի ձուլերը (СЛИТКИ) հետագայում առնում է իր մեջ, նորից հալում, մեքենայի գանազան մասեր ձուլելու համար:

Ահա և մեխանիկական բաժինը. տրանսմիսիաները այստեղ գեռ մագլցված են օճորքից, կեղտոտ, ժանդոտած, հողերն ու ատամնավոր անիվները տեղ-տեղ շարդված, իսկ ճախարակներից շատերը զրկված իրենց նորք մասերից (արմատուրա):

Խունացած ու հնամաշ են նրանք, այնքան ծերացած ու հնացած, որքան ինքը՝ Զաթախուը. 50 և ավելի տարվա կյանք ունեցող այս ստանինաները պիտի քանդել, տեղահան անել, հեռացնել արհետանոցից այս կմախքացած ինվալիդներին՝ նորերով փոխարինելու համար:

Այստեղ է ահա, որ Զաթախում հայտնի բարձրահասակ և հաղթանակամ դեսյանիկ Հուսեյինը, իր շուրջը խմբած բանվորներով, եռուղեռի մեջ է:

Հին ստանինաների ծանր կմախքները արհետանոցից դուրս հանելու դործը նրան է հանձնված. խրոխտ հրամանատարի նման

նա և՝ ղեկավարում է, և՝ նշան է տալիս՝ այն, ցվայն\* բացական-  
չություններով և ուրախ ժպտում, որ բանվորների միահամուռ  
ուժերի լարումից զիգանտ զառամները տեղահան են լինում ու  
հնագանդվում նրա հրամաննին, մեկը մյուսի հետեւից դուրս սողում  
արհեստանոցի դռներից դեպի լայն դաշտը:

Նա, բոլշևիկ Հուսեյինը, ուրախ է, որ նույնպես մասնակցում  
է նոր կյանքի հիմքը դնելուն, Խորհրդային Վրաստանի նոր գոր-  
ծարանին:

— Մոլոդեց' յ Հուսեյին, — ժպտալով խրախուսում եմ նրան, —  
անունդ դազեթ ընկալի...

— Երբ տպվի, մի օրինակ դազեթ էլ ինձ ուղարկեք, — պա-  
տասխանում է նա նույն ոգեորդած տոնով:

\* \* \*

Մեխանիկական գործարանի հարեան բաժանմունքը դարբ-  
նոցն է. այստեղ տաք-տաք աշխատում է ջահել դարբին Գրիգոր  
Պապիկյանը. նա պատրաստում է երկար ու հաստ դամեր (скобы)  
շպաների և կամուրջների համար:

Իմ այցելությունը Զաթախին վերջացավ քիմիական լաբորա-  
տորիայով, ուր արդեն կան բավականաշափ թթվուտներ Մուկվա-  
յից ստացած, անալիտիկ-կշիռներ՝ հանքամետաղի տեսակարար  
կշիռը (удельный вес) որոշելու համար, կան զանազան քիմիա-  
կան անոթներ, գործիքներ ու պարագաներ՝ Գերմանիայից ստացած:

\* \* \*

Լրացած շեր լինի իմ այս թուուցիկ տեսությունը, եթե շավե-  
լացնեմ, որ Զաթախի թուջի գործարանը ունի իր անտառը՝ ածովս  
պատրաստելու համար, դաշտերը, այդիներն ու բանջարանոցները՝  
սեփական տնտեսության համար. կան այստեղ քարաշեն աղբյուր-  
ներ խողովակներով, փուռ և աղն:

Ահա այն հսկայական աշխատանքների հետևանքը, որ մտու-  
երկու տարվա ծանր նեղություններից Ցետո պսակվեց Հաղթանա-  
կով՝ շնորհիվ աշխատանքի ֆրոնտում գործող հերոսների:

Եվ այսօր, երբ տեղի ունի Զաթախի գործարանի հանդիսավոր

\* Գերմ.՝ մեկ-երկու:

բացումը, ուր հյուրերի ներկայությամբ, անշուշտ, տեղի կռանենանակ դոմեն վառանների ոռուգերից վիժող չուզունի հրային լավան, այդ սև ոսկին, մենք ի սրտե բացականշում ենք՝ կեցցե՛ն մեր աշխատանքի հերոսներն ու Զաթախի վերականգնման նախաձեռնողները:

\* \* \*

Նորից մեր ավտոմոբիլը դողդողալով փնչում է, մենք վերադառնում ենք Թիֆլիս, օրը կիրակի է, մենք շրջապատված ենք մեղքարի ճանապարհ մաղթող տասնյակ բանվորներով, ինժեներներով:

— Счастливые,— гуслим ենք մի կանացի ձայն.

Հետ եմ նայում, սովետական տան խոհարարուհի Իրինան է:

— Ենչո՞վ բախտավոր,— հարցնում եմ հետաքրքրված:

— Ար գնում եք քաղաք:

— Իսկ ձեզ մոտ մի՞թե վատ է, բնություն, անտառ, սառը ջուր...

— У нас е милярия...

Խեղձ Իրինա, մտածում եմ, հիվանդացել է միլարիայով:

Եթե իրոք Զաթախում գոյություն ունի «միլարիան» (մալարիա) հոգս ունենանք, որ մեր ստեղծագործ առյուծները կարծ ժամանակում կկռվեն նրա դեմ և միջոցներ որոնելով՝ կհաղթահարեն այն պայմանները, որոնք հող են պատրաստում ջերմ ու տեհնոք գարգացնելուն:

## ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱԿ

«Խնշպիսի՝ ներս ընկերներ մեռան,  
Մեռա՞ն, չկույս՞ն...»<sup>1</sup>

Լոռովա 20-ամյա ազգաբային շարժման և ապստամբության առնը կատարելուց հետո Հայաստանում, այսօր էլ Պուշկին ապրուամբության հնդամյակն ենք տոնում Վրաստանում:

Ինքս բացակա եմ եղել Կովկասից այդ պատմական մեծ ակտի ժամանակ, բայց կուզեի մի թռուցիկ ակնարկով իրազեկ անել ընթերցողին այն ապստամբության մասին, որի տխուր հետեանք-ները մեզ՝ Հյուսիսային Կովկաս գաղթողներիս վրա, թողեց ծանր, կոչմարային տպավորություն, բայց և ողևորեց մեզ, որ մենշևիկ-ների Բաստիլ կոչված «Հայրենիքը» այնքան էլ անառիկ, այնքան էլ անխոցելի չէր:

1918 թվականի մայիսի 24-ի դիշերն էր այդ, երբ մեծամասնական Շրջանային Կոմիտեն բնակարանումս տեղի ունեցած վերջին նիստում որբացեց, որ անհրաժեշտ է գաղթել Սովետական Հյուսիսային Կովկաս, որտեղ հետեւ մայիսի 26-ին ժորդանիայի՝ Վրաստանը անկախ հայտարարելու օրից, շատ բնական է, որ մեծամասնականներիս դեմ պիտի սկսվի նոր, խիստ ու անխնա շափերի հասնող հալածանք:

Այդ ենթադրությունը հարգելի դարձավ առավելապես նրանով, որ որոշված էր հունիսի սկզբներին Պուշկինում, Օսեթիայում և այն, զյուղացիական ապստամբության ծայր տալ, որի հողը պատրաստ լինելով՝ այնքան եռանդուն պատրաստվում էր և Շրջանային Կոմիտեն:

Ըստրվեց մի ժամանակավոր բյուրո, և Շրջանային Կոմիտեի անդամները սկսեցին առանձին-առանձին հեռանալ Թիֆլիսից:

Ինձ, որպես Շրջանային Կոմիտեի գանձապահի, այլև կոնս-  
պլիրատիվ բնակարանի տիրոջ, անհրաժեշտ էր նույնպես ընտանի-  
քով տեղափոխվել Թիֆլիսից Հյուսիսային Կովկաս:

Ընտանիքս թողնելով մյուս ընտանիքների հետ՝ էքսը ֆուրդոն-  
ներով տեղափոխվելու, ընկ. Յ. Մախարաձեն ու ևս մայիսի 25-ի  
գիշերը երկաթուղով հասանք Գորի, այնտեղից հազար ու մի նե-  
ղություններով Հարավային Օսեթիայի — ռազմա-օսեթյան ճանա-  
պարհով Վլադիկավկազ հասնելու դիտավորությամբ:

Սակայն, գեռ Զաված չհասած, հիվանդացա, երկու օր պառկեցի  
Զավայում, որից հետո անկարելի դարձավ ինձ, ռազմա-օսեթյան  
ճանապարհի նեղ կիրճերով ու կածաններով, ձիու վլա՞ անցնել այդ  
վտանգավոր ճանապարհով:

Ստիպված էի կառքով դառնալ մինչ Գորի, այնտեղից երկա-  
թուղով տուն, ուր արդեն ընտանիքս շտապ գնացել էր ռազմավի-  
րականով:

Այդ գիշեր գիշերելով ընկեր Միխա Ցխակայայի բնակարա-  
նում, էքսը նա հոգատարությամբ հիվանդիս ուղևորեց Վլադիկավ-  
կազ, իրեն հատկացրած ավտոմոբիլի մի տեղը զիշելով ինձ: Հա-  
սսա Վլադիկավկազ, գտա ընտանիքիս ու ընկերներիս: Մեր ընկեր-  
ներից Մախարաձեն և այլք արդեն տեղավորվել էին հյուրանոց-  
ներում:

Մի շաբաթից հիվանդությունս մասսամբ ամոքած տեսնելով,  
վճռեցինք ընտանիքով անցնել Պյատիգորսկ քաջկության, որից հե-  
տո անմիջապես փակվեց ճանապարհների հաղորդակցությունը  
Վրաստանի հետ:

Ահա այստեղ էր, որ հունիսի վերջին մեզ, տարագիրներիս,  
Գուշեթի ապստամբության լուրը հասավ: Նախ ուրախալի և այն-  
քան ոգևորություն ազդող, որ քիչ էր մնում վերադառնայինք Թիֆ-  
լիս, իսկ հետագայում, մերոնց ահագին զոհեր տալուց ու պարտ-  
վելուց հետո, մեզ բոլորիս արդեն սուգ տիրեց: Հետո միայն, երբ  
սթափվեցինք կոշմարի հասնող մենշեկիկների խժդություններից,  
սառնասրտորեն հաշվեկշիռը ասում էր, որ հեղափոխությունը սի-  
րում է զոհեր տալ և այդ զոհերի ոսկորների վրա է, որ կառուց-  
վում են ապագա սոցիալական շենքի հիմքերը:

Ես չեմ նկարի այդ մենշեկիկյան կառափնատան մանրամաս-  
նությունները, ճանավանդ, որ, կրկնում եմ, ակտիվ մասնակցու-  
թյուն ապստամբության օրերին շեմ ունեցել. այդ կանեն այսօր

մեր ընկերները, որ ակտիվ մասնակցել են Հեղափոխական պատմական այդ մեծ ակտին։ Ես միայն կասեմ, որ այդ սոսկալի գընդակահարումները այն ծանր կոշմարային բնույրն ունեին մենշեիկների կողմից, որպես 26 կոմունարների գլխատումները տմարդի էսեռների ու անգլիական դահիճների ձեռքով։

Այդ էր մեր՝ տարագիրներիս կոկիծը, որը տիրեց մեզ Հյուսիսային Կովկասում, բայց որի եղեռնական փաստը կրկնակի խտացրեց մեր շարքերը այսօրվա Սովետական Վրաստանի հաղթանակի համար։

## ԱՊԱԳԱՅԻ ԾԱՌԻԿՆԵՐԻ

Կամոյի հուշ-երեկութին, պրոֆմիությունների այգում, ինձ վերին աստիճանի հուզեց մի տեսարան, այդ շարք-շարք այգի մտնող բանվորական խմբերից հետո Կոչորից եկած Կամոյի անվան <մանկատան> երկսեռ մանուկներն էին, որոնք ժամը ձիշտ յոթին կուռշարքերով, կարմիր դրոշակի առաջնորդությամբ և զեկալար վարժուհիների ուղեկցությամբ մտան այգի ու կանգ առան:

Կանգ առան նրանք ուղիղ այգու մեջտեղ, լուս, խոհուն և տխուր, կարծես կամենալով փմաց տալ, որ այս երեկոյան պահուն հեռավոր Կոչորից եկել են հարգանք ու պատիվ տալու իրենց սիրելի շեֆ Կամոյին, Կամոյին, որի մասին գուցե և քիչ բան չեն պատմած նրանց վարժուհիները:

Նայում եմ հրճվանքով այդ գեղեցիկ շարքերին: Նրանք բոլորն էլ միահասակ, պարզ, մաքուր, ճերմակ ամառային շորերում, գլխարաց, առույդ ու կարմրաթշիկ, պատկառելի լուսությամբ մոտ 50 մանուկներ են: Սպասում են կարգադրության: Ու կարգադրությունը չի հապաղում. վարժուհիները նույն կարմիր դրոշի ուղեկցությամբ երեխաններին տանում են դեպի այգու մեծ վերանդան ու նստեցնում նրանց առաջին կարգերում:

Ովքե՞ր են այդ 8—10 տարեկան մանուկները. այդ նրանք են, որոնք մի ժամանակ «փողոցի տղաներ» էին, իսկ այժմ Կամոյի զավակները...

Մեզ մոտ, Խորհրդային ամբողջ Ֆեդերացիայում, այժմս «փողոցի տղաներ» չկան, որ շարախնդությամբ քարեր նետեն իրենց նման քաղցած՝ փողոցի շներին, կամ գողությունների ու մարդասպանությունների համար ապագայում «տաժանակիր սև աշխատանքների» ուղարկվեն...

Նրանք այսօր ապրում են նախկին բուրժուլիների հանգստատեղերում ու բնակարաններում, Կոչորի և հարյուրավոր նման վայ-

բերում, շրջապատված իրենց «մայր վարժուհիների» քնքուշ խնամքով, կանաչների ու վարդերի մեջ:

Կանաչների մեջ ու վարդերի մեջ  
Ես տեսա այստեղ մի ավան սիրուն,  
Քաղաքից հեռու շարեցար անվերջ  
Միահարկ տներ շուրջը ողջ գարուն:  
Տները այստեղ բյուրեղից են ողջ,  
Հուզլերի հեղեղ, արևն ընտանի,  
Այստեղ ծլում է մի սերունդ առողջ  
Գեղ մանուկների:  
Ինչպես միաձեւ ու պարզ են հագնված  
Այս զավակները նորեկ-Աշխարհի,  
Եվ ինչպես սիրով և ինչպես աղատ,  
Աղջիկ ու տղա իրար հարազատ,  
Կարծես ամենքը մի մորից ծնված,  
Մի օր մեծացած ու մի տեղ սնված  
Խաղում են կայտառ, ծլվլում սրտանց,  
Նախանձ, շարություն օտար է նրանց.  
Երգում են որպես գարնան թոշուններ.  
Ոչ ոք նրանցից հոգս ու ցավ շոմե...\*:

Այո՛, «ոչ ոք նրանցից հոգս ու ցավ շոմե». բայց դիտե՞ք ինչն է նրանց այսօրվա «հոգս ու ցավը»...

Այն, որ գալով Կոչորից, կանգնել են կանաչներով ու արյունագույն դրոշներով զարդարված էսարադայի վրա, մանկական թոթով, պարզ երեք լեզուներով, հազարավոր մեծ ու մանուկ ունկընդիրների առաջ դիմում են Կամոյի կանաչաղարդ պատկերին ու զգայուն, հուզված սրտով ասում.

«Դյա՛ղյա Կամո, դու չկարծես, թե հեռավոր Կոչորից մենք եկել ենք այստեղ միայն քո մահվան տարեղարձին ներկա լինելու... Ո՛չ, մենք եկել ենք այսօր այստեղ, այս բազմության առաջ ողջուն ու պատիվ տալու աննման անունիդ, այլև մի մեծ խոստում անելու՝ թե անվերջ շարունակելու ենք քո տողիով ընթանալու, հեղափոխական մեծ դործերը մեզ համար ուղեցուց և օրինակ դարձնելով»:

\* «Հալասարություն» պոեմից, V գլ., 1917 թ.:

Մյուսը թե՝ «Յանկազի՞ն ուսուցիչ Կամո՛, Յանդիստ ննջիր, մենք քեզ կուրախացնենք գերեզմանումդ անդամ, դառնալով հեղափոխական գործունեությանդ շարունակողները...»:

Կարո՞ղ է դյաղյա Կամոն Յանդիստ ննջել... Այո՛, կարող է... նրա ծաղկազարդ շիրիմիցն է, որ կանաչն, ծաղկել են այս մանուկները:

Նրանք, երեկվա որբ մնացած «կողուցի տղաները», իսկ այսօրվա «կարմիր քաղաքացիները»:

Նրանք՝ ապադայի ծաղիկները:

## ՀՈՒՆԳԱՐԻ Զ-Ը ԵՎ. ՆԲՍ. ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1904 թվին տեղի ունեցավ սուս-յապոնական պատերազմը: Այդ պատերազմը վերջացավ նրանով, որ ցարական դորքը հետեւալ տարին շարաշար հաղթվեց:

Ռուսաստանի բանվորները, որոնք առաջուց էլ դժգոհ էին փրենց վիճակից, պատերազմի ընթացքում սկսեցին ավելի մեծ եռանդով պատրաստվել իրենց նեղ դրությունից ազատվելու համար:

Նրանք հասկացան, որ հասել է ժամը ավելի միացած ուժերով հուպ տալ պատերազմից թուլացած կառավարությանը, ավելի մեծ թափով ցնցել ցարական գահը, որպեսզի շուտով ձեռք բերեն ցանկալի ազատությունները:

Սկզբում տեղի էին ունենում խաղաղ ժողովներ, գրում էին խնդրագրեր (պետիցիաներ), երեան հանում մասնակի գործադուլներ, որ այդպիսով ստիպեն ցարական կառավարությանը բարիութելու փրենց տնտեսական և քաղաքական վատթար դրությունը: Բայց բռնակալ կառավարությունը այս ամենի վրա նայում էր արհամարհանքով ու պաշտպանում էր միայն գործարանատերերին, որ սրանք ավելի շահագործեն բանվորներին, ավելի հարստանան, որպեսզի է՛լ ավելի շատ հարկ տան կառավարությանը:

Մյուս կողմից էլ պետական գործարաններն էին կեղեքում բանվորներին, որ պատերազմի ընթացքում կրած վնասները բանվորների շանից հանեն:

Անպաշտպան բանվորության դրությունը հետզհետե վատթարանում էր ավելի ու ավելի:

1905 թվի հունվարի սկզբին սկստական Պուտիլովյան դինագործարանի բաղմահազար բանվորները գործադուլ հայտարարեցին, նրանց հետ միացան Լենինգրադի (այն ժամանակվա Պետեր-

բուրգի) բոլոր գործարանների բանվորները, որոնց թիվը հասնում էր երկու հարյուր հազարի:

Նրանք պահանջում էին, որ իրենց 8 ժամից ավելի շբանեցնեն, իրենց աշխատավարձը ավելացնեն\*, իրենց տան Սահմանադիր ժողովը\*\*, խոսքի, մամուլի, ժողովների կատարյալ ազատություն և այլն:

Սակայն ցարի կառավարությունը այս պահանջները համարելով հեղափոխության և ըմբոստացման նշան, համառորեն արհամարհում էր բանվորության արդարացի պահանջները:

Բանվորների դրությունը հետզետե դառնում էր անտանելի, նրանց բողոքը մեծանում, ահուելի էր դառնում, վտանգավոր շափեր էր ընդունում ցարական ժանդարմների և ոստիկանության աշխատա:

Եվ ահա որտեղից-որտեղ այս գործի մեջ է խառնվում մի ոմն Գալոն քահանա, մի պրովոկատոր, որը գաղտնի կազ ուներ մի կողմից՝ ցարի ոստիկանության, մյուս կողմից՝ բանվորական անդիտակից մասսաների հետ։ Սա համոզում է բանվորներին, թե բողոքներով ու գործադուներով նրանց դրությունը չի լավանա և կառավարական շինովնիկներն էլ նրանց պահանջները չեն կատարելու, ավելի լավ կլինի խնդրագրով դիմել «Հայր-ցարին», նաէ, որ ընդառաջ կերթա նրանց ցանկություններին, որպես «գորովագութ հայր»։

Միամիտ բանվորները հավատում են տերտերի խոսքերին, կազմում են խնդրագիր, վողոց հանում խաչ ու խաչլառներ, Գալոնին առաջները զցում և ցարի պատկերը ձեռքներն առած՝ երգերով, հանդիսավոր կերպով դիմում են Զմեռային պալատ, ուր ապրում էր Նիկոլայ վերջին ցարը։

Եվ ահա այստեղ է, որ պալատին չհասած, նարվայի դռների առաջ, նրանց դիմավորում է ցարի կազմ ու պատրաստ զորքի և առանց նախազգուշացնելու՝ մի համազարկով դետին զլորում առաջին շարքերում ընթացող տասնյակ բանվորների։

Մի բոպեում սպիտակ ձյունը ներկվում է կարմիր արյունով, բայց զարմացած միամիտ ամբոխը, որ կազմված էր հարյուր հազարավորներից (նրանց հետ կային իին, երեխայք, ծեր ու մանուկ-)

\* Գրանից առաջ աշխատում էին օրական 12—16 ժամ և ստանում 15—18 ռ. ամսական։

\*\* Ժողովրդից ընտրված ներկայացուցիչների ժողով, ուր պիտի մշակվեին նոր օրենքներ։

ներ) կարծես չէին հավատում կատարվածին, դեռ շարժվում էին շնայած՝ Գապոնը անհետացել էր արդեն\*:

Տեղի է ունենում երկրորդ, երրորդ համազարկը ու միանգամից գետին փոռում հազարավոր մարդկանց։ Այնուշետև գործում են ձիւլոր ոստիկանների սրերը ու մի մասին ճիշլելով ձիւնց ոտքերի տակ, մնացածներին փախցնում են քաղաքի զանազան կողմերը։

Այստեղ միայն հասկանում են բանվորները, որ իրենք գործ ունեցան ոչ թե «գորովագութ հոր» հետ, այլ արյունոտ մի գազանի հետ։

Նրանք նոր միայն հասկացան, թե ինչպես «բատյուշկա ցարը» փոխարեն ցամաք հացի, փոխարեն հալալ քրահնքի գին տալու՝ իրենց կերակրեց թշնագող գնդակներով ու մերկացրած սրերի հարվածներով։

Ու վրեժի զգացմունքը այդ օրից պատեց նրանց պարզամիտ, ազնիվ հոգին։

Այդ օրից թե՛ հունվարի 9-ը և թե՛ Պետերբուրգում կարմիր արյունով ներկված ձյունը դարձավ սիմվոլ, այսինքն խորհրդանշան Ռուսաստանի կարմիր հեղափոխության։

Այդ օրից էր, որ հունվարի 9-ը դարձավ պատմական օր, նա դարձավ նախամայրը բոլոր հետելալ երեք հեղափոխության դրա համար է, որ մենք հունվարի 9-ը տոնում ենք ամեն տարի։

\* \* \*

Հունվարի 9-ը հիշատակելի և նշանավոր է նրանով, որ նա առաջացրեց մի մեծ բեկումն բանվորական մասսաների զիտակցության մեջ ու բացեց նրանց աշքերը։

Նա էր, որ բացեց մի խոր անդունդ ժողովրդի և ցարական կառավարության մեջ։

Այդ անդունդն էր, որ Ռուսաստանի բանվորական մասսաներին միանգամից համոզեց, թե խնդրագրերով ու աղերսանքներով չէ՛, որ պրոլետարիատը պիտի բարեփոխի իր ոնտեսական ու օպղաբական անտանելի կյանքը, այլ հեղափոխության ճանապարհով ու անհաջող կռվով ցարիզմի դեմ։

\* Գապոն քահանան փախազ արտասահման, ապա հոկտեմբերյան մանիքիստից հետո վերադարձավ Ռուսաստան, 1906 թվի մայիսին նրան գտան կախված Պետերբուրգի արվարձաններից մեկում։

Ու այդ օրից նա իր բանվորական կարմիր դրոշակի վրա գրեց անհաջող կողմից մինչ ցարական գահի տապալումն, մինչ ինքնակալ և բռնակալ կառավարության ոչնչացումն:

Այս գիտակցությունը ավելի աճեց ու խորացավ նրանով, որ Հենց Հունվարի 9-ի օրը անմիջապես վրա հասավ «Սոցիալ-դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը» և իր ձեռքն առավ տարերային կերպով ցուցեր ու գործադուներ անող բանվորական ժամաներին:

Այս գործի մեջ բոլշևիկները մեծ դեր կատարեցին: Նրանք էին պլիսավորապես, որ շտապով կազմակերպեցին անդեկ բանվորությանը գաղտնի ժողովներում, ցուց տվին նրանց հեղափոխական իսկական և ուղիղ ճանապարհը, այն է՝ սովորեցրին նրանց դասակարգային կրվի, դասակարգային գիտակցության ու կազմակերպության:

Այդ օրվանից հետզետե խորացավ պրոլետարիատի գիտակցությունը. նա սկսեց ճանաշել, թե ո՞վ է իրոք իր դասակարգային թշնամին:

Հունվարի 9-ի գալակներն են այնուհետև հետագա անընդհատ գործադուները բովանդակ Ռուսաստանում: Ապա 1905 թվի Հոկտեմբերի մեծ գործադուը, որի շնորհիվ մի քանի օր կանգ առավ ամբողջ Ռուսաստանը. չեին աշխատում հացթուկներն ու ջրմուղներն անգամ, մինչև իսկ էլեկտրակայանները, ամբողջ քաղաքները այնպես էին ընկղմվել մթան մեջ, որ գիշերների խավարը ժողովրդին զարգանդսարսափ էր ազդում:

Այս հոկտեմբերյան մեջ շտեսնված համառուսական գործադուլի հետեանքը եղավ այն, որ սարսափահար ցարը իր կառավարության հետ հայտարարեց առաջին, Հոկտեմբերի 17-ի մանիթեստը, որով երկրին խոստացավ տալ սահմանադրություն, պետական դումա\* և այլ ազատություններ:

Եվ Հոկտեմբերյան մանիթեստից ելած աղատությունները, կամ Ռուսաստանի առաջին հեղափոխության նվաճումները, սկիզբ և ծնունդ առան, աֆեցին ու ծաղկեցին հունվարի 9-ի հաղարավոր դոհերի արյունից:

\* Ռուսաստանում ժողովրդական ներկայացուցիչների ժողովը: Առաջին դուման Պետերբուրգում 1906 թվին աշխատեց 72 օր և ապա՝ արձակվեց, որովհետեւ ցարի աշքին նա երեաց հեղափոխական դումա:

Երկրորդ դուման աշխատեց 3 ամիս, 1907 թվին, և նույնական արձակվեց նույն պատճառով:

Հունվարի 9-ի հարազատ դավակներն են, այնուհետև, 1905 թվի դեկտեմբերյան բարիկադային կոփլը Մոսկվայում\* ցարական ոստիկանների ու ժանդարմների դեմ, ապա Սիբիրում՝ Լենայի, Իվանով-Վոլգնեսնսկու կոտորածները\*\*, Լենոյում\*\*\* տեղի ունեցած բարիկադային կոփլը 1914 թվի հունիսին և նման հեղափոխական շատ գործողություններ, որոնք ավելի ևս սեղմ կազմակերպեցին քովանդակ Ռուսաստանի պրոլետարիատին, ձուլեցին մի կուռ կուսակցության մեջ ու բերին նրան հասցրին 1917 թվականի փետրվարյան հեղափոխության, որը գեն շպրտեց Նիկոլայ վերջին ցարին, այն ցարին, որը «Արյունոտ Նիկոլայ» անունը ստացավ հենց զլիսավորապես հունվարի 9-ի կոտորածի հրամանը տալու պատճեռություն:

Ահա թե ինչի մեջն է կայանում հունվարի 9-ի նշանակությունը, ահա թե ինչու ենք մենք ամեն տարի տոնում հունվարի 9-ը, որպես նախամոր՝ բոլոր հետագայում՝ ծնունդ առած հեղափոխությունների, որոնցից ամենամեծինը՝ Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունը՝ ընդմիշտ խորտակելով ցարերի կրկին դառ նստելու վտանգը, մեր երկիրը բերեց հասցրեց Խորհրդային Միացյալ Սոցիալիստական Հանրապետությունների, ապահովելով ընդմիշտ պրոլետարիատի դիկտատորական:

\* Ազգամարտությունը շարունակվեց 3 օր — դեկտեմբերի 17—20-ը, ապա ճնշվեց Պետերուրդից օգնության եկած Սեմյոնովսկի գնդի ուժերով:

\*\* Լենայի, Իվանով-Վոլգնեսնսկու կոտորածները տեղի ունեցան նույն պատճեռով, ինչ պատճառով անդի ունեցավ հունվարի 9-ի կոտորածը:

\*\*\* Լենոյը Պետերուրդի արվարձաններից մեկն է, բանվորական թաղ:

## ԱՆՄԱՀՆԵՐԻՑ ԱՆՄԱՀԸ

Երեկ Հեռագիրը դուժեց Ռուսաստանի և Համաշխարհային հեղափոխական պրոլետարիատի ղեկավար և մեր թանկադին ուսուցիչը Վլադիմիր Իլյիչի մահը:

Երբ բաեցի ես այդ բոլց, առաջին նվագ ինձ թվաց, թէ մի տուն գլուխս... և մի ծանր տնքոց թուավ կրծքիցս:

Ինձ թվաց, թէ մի կայծակ ճայթեց շուրջս ու 22մած նրա շանթից՝ ինքս ինձ Հարցրի. կենդանի՝ եմ ես արդյոք: Ուշքի եկա... Հասկացա, որ կայծակը զարկել է ինձանից շատ մտտիկ գոնվող տնտափի դարավոր կաղնուն ու տապալել նրան, սակայն ողջ անտառը գեռ կենդանի է, գեռ դալար ու անփորձ:

Այդպիս աղդեց ինձ վրա կենինի մահը, որի ապաքինվելու ամենաջերմ հավատացողներից մեկն էլ ես էի:

Սակայն եթե կենինը հեռացավ մեզանից, մի՞թե և մեռավ նա:

Ասեք՝ կարո՞ղ է միթե մեռնել արեք հավիտենական. մի՞թե կարող է ցամաքել օվկիանոսը, մի՞թե աստղերը կարող են հանդիւ, մի՞թե Հիմալայը կարող է փլչել:

— Երբեք:

Չի կարող, ուրեմն, մեռնել և կենինը, որովհետեւ նրա ամեն մի գործը մի-մի վառ արե, նրա ամեն մի պատգամը՝ մի-մի շցամաքող օվկիան, նրա թողած ավանդները՝ մի-մի պայծառ աստղ, նրա տված դասերն ու փորձառությունը՝ մի-մի անսասան Հիմալայ:

Քսան տարի շարունակ, երկրորդ համագումարից հետո, երբ «բոլշևիկ» ու «մենշևիկ» հոսանքները<sup>1</sup> զտվեցին, «պարզվեցին» մեզ համար ու զատվեցին իրարից, երբ կոմունիստ ու օպորտունիստ, հետևողական հեղափոխական մարքսիստ ու մանր-բուրժուական էկոնոմիստ խոսքերի իմաստը մեզ համար դարձան պարզ ու հասկանալի, այդ 20 տարվա ընթացքում մենք, կենինի աշակերտներս, ականած շարքային գործիչներից մինչև ամենապատաս-

խանատու ընկերները, այնքան սնվեցինք ու բռվվեցինք, այնքան ձուլվեցինք ու կրթվեցինք կենդինի տակտիկական ուսմունքով, փորձառությամբ ու տրադիցիաներով, որ շափաղանցություն չի կենի, եթե ասենք, ամեն մի ոք մեղանից մի-մի փոքրիկ կենդին դարձանք մեր վարած պայքարի ու հաղթանակների մեջ:

Ինչպես փոքրիկ գրվագներ՝ փառահեղ, հսկա ու հանճարեղ կոթողի շուրջը, նրան նման, նրա պատճենը:

Ամեն մի մեծագույն, համաշխարհային հմայք ստացած հեղափոխականի մահը, ինչպես Կարլ Մարքսի, ինդեկսի, ինչպես Կառլ Լիբկնեխտի, Ռողա Լյուքսեմբուրգի, ինչպես Սվերդլովի, Ռուբիցկու, Վլոդարսկու, ինչպես Շահումյանի, Կամոյի, Զափարիձեի, ինչպես Ռուբրիժ Թը, Լենայի կոտորածը և այլն և այլն, մեզ համար եղել են մի-մի խթան ավելի սեղմ կազմակերպվելու կոմունիստական հսկա կուռ օղակի մեջ, ավելի ձուլելու և ամրացնելու մեր միլիոնավոր շարքերը: Եվ քանի մոտեցել է մեզ վտանգը, այնքան պողպատյա է դարձել մեր բունցքը, մեր կամքը, մեր լարվածությունը, մեր տոկունությունն ու աննկուն լինելու վճռականությունը՝ ավելի հաստատուն պահելու այն դիրքերը, որ մենք նվաճեցինք Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով:

Որքա՞ն, ուրեմն, ավելի խորացնելու է մեր գիտակցությունը, ավելի անհաշտելի դարձնելու մեզ այն հանճարեղ պարագլիսի մահը, որը եղավ Հոկտեմբերյան հեղափոխության հղացողն ու մարմնացողը, նրա առաջին խոյացման սիգնալ, ազդանշան տվողը:

Կա՞ արդյոք մի ավելի հուժկու ձայն, մի ավելի հանճարեղ հրամանատարի կոչ, քան Վլադիմիր Իլյիչի թողած պատգամները, նրա 20 տարի և ավելի շարունակ մեզ թողած ավանդներն ու տրադիցիաները:

— Միշտ առաջ, միշտ կոի՞վ աշխարհիս կեղեքողների և աշխարհակալների դեմ, պրոլետարիատի վարած կովի մեջ նոր ու նորագույն նվաճումներ, բայց հարկավոր ժամկեն դադար, կամ նույնիսկ նահանջ, երբ այդ պահանջում են մեր անընդհատ հեղափոխության շահերը, Կոմունիստական կուսակցության հարատեղյունն ու վերջնական հաղթանակը:

Քսան և ավելի տարիներ այդ, աշխարհիս բոլոր հեղափոխությունների ամենահանճարեղ հեղափոխականը, օրական 20 և ավելի ժամ անընդհատ աշխատելով, իր պողպատյա ջղերը, իր կրակի մեջ անդամ շհալչող պլատինային առողջությունը մաշեց,

որ գոյություն ու մարմնացումն տա մի այնպիսի կուռ, միաձուլք, մոնուիտ կուսակցության, որպիսին Կոմունիստական աշխարհասահան կուսակցությունն է: 20 և ավելի տարիներ նա անընդհատ խոսեց, գրեց, կովեց, բախվեց, վիրավորվեց ու կայծակի դարձի տակ ընկավ և տապալվեց դարավոր կազնին փր դիրքերի վրա:

Ընկավ, բայց թողեց մեզ 20 մեծահատոք այնպիսի գրքեր, որոնք իրենցից ներկայացնում են մեր Կոմունիստական կուսակցության կյանքի «անատոմիան», «բիոլոգիան», սոցիոլոգիան, մեր պայքարն ու կոփը, մեր հաղթանակն ու պարծանքը, այլև նոր հրդագյին հանրապետությունների շինարարական ու ստեղծագործական այլժան ու օմեգան<sup>2</sup>:

Անշուշտ մեծ էր, ու անսահման մեծ, մեզ համար համաշխարհային հեղափոխական պրոլետարիատի զեկավարի հմայքը նրա կենդանության ժամանակ, բայց չէ՝ որ այդ հմայքը այսօր վերածված է ուսմունքի, փորձառության, կումի մելոդի, հաղթանակների հաղթանքի:

Անմահների անմահն էր Վլադիմիր Իլյիշ Լենինը, և թող այդ վինի մեր այսօրվա միսիթարանքը:

Չէ՝ որ արեք հավիտյան է ու չի խավարում, օվկիանը չի ցամաքում, աստղերը չեն մարում ու Հիմալայն էլ չի խորտակվում ահա քանի հազար դարեր անցած:

Այդպես է և Լենինի անունը, այդպես էլ կմնա նա հավիտյան, քանի դեռ չի խավարել արել, չեն ցամաքել օվկիաններն ու չի խորտակվել աշխարհիս ամենաբարձր սարը՝ Հիմալայը:

## ՄԵՐ ԼԵԳԱՆ. ՄԱՄՈՒՆԾ

«Մամուլը յոթերորդ պետությունն է...», այսպիս է հավատացրել բուրժուական մամուլն իր ընթերցողներին տասնյակ տարիների ընթացքում:

Սակայն նա եղել է այն «պետությունը», որի ֆարբիկներում շարունակ մանվել ու հյուավել են ստությունը, խարդախությունը, աշքակապությունը, ավելի ճիշտն ասած՝ այն «պետությունը», որի տաճարների ամբիոնից շարունակ փառարանվել ու պաշտպանվել է կապիտալի շահագործուրյունը, խնկարկվել բյուռնկրատիայի բռնակալուրյունը, խրախուսվել նողատերերի ու ազնվականների պան-քալանը:

Կարծ ասած, բուրժուական մամուլը բուրժուազիայի շահերի պաշտպան հանդիսանալով, նրա ամեն մի քայլը պրոլետարական դասակարգի դեմ՝ համարել է «առաքինություն», «նախախմնամության արդար կարգագրություն» և այլն:

Այդպիս չի եղել պրոլետարիատի համար մամուլը, ո՞չ «յոթերորդ պետություն», ո՞չ էլ այն ֆարբիկան, որ հյուսվել են հրշածս «առաքինությունները»:

Մամուլը բանվոր դասակարգի համար եղել է այն ցիտագիլը, այն բնիրդ-ամբողը, ուսկից նա իր ռումբերն է նեակ՝ փշրելու, խորտակելու բուրժուազիայի «յոթերորդ պետությունը» մի կողմից, մերկացնելու բուրժուազիայի ամբողջ ստերն ու հակասությունները, երեան հանելու նրա շահատակությունների բոլոր ստորտեսակները, նրա՝ մասսաներին ստրկության, մոլորության մեջ պահելու շանքերը, մյուս կողմից: Մամուլը պրոլետարիատի համար եղել է մի ուժեղ զենք կովելու բուրժուազիայի բոլոր այդ տեսակ «առաքինությունների» դեմ, ու դրա համար է, որ այդ ուժեղ և անփոխարինելի զենքի՝ մամուլի օրը տոնում կնք մենք ամեն տարի:

Հայ իրականության մեջ առաջին անգամ մի այդպիսի գերկատարեց առաջին հայ Սոց. Դեմ. Բանվ. Կուսակց. լեզալ\* մամուլը՝ հանձին «Կայծ» օրաթերթի, որի շուրջը հավաքված էին բոլոր այսօրվա դրական-հրապարակախոսական կարևոր ուժերը:

«Կայծն» էր, որ առաջին անգամ լեզալ խոսքով պատռեց դաշնակաների «խորհրդավոր» դիմակը և ցուց տվեց լայն մասսաներին, որ գաշնակցությունը եղել է սոսկ մի փայտե խաղալիք, մի քաղաքական խրավիլակ, և ոչ այն հմայքը, որ տարիների ընթացքում համարվել է մոլորված հայ բանվորության աշբում. սա մի հայտնություն էր, մի սոսկալի հարված, որ հասցրեց «Կայծը» դաշնականությանը, և կեղծ սոցիալիստների դիմակը միանգամից ընկալվեց.

Այնուհետև «Կայծն» էր, որ զուգընթացաբար Յ ամիս (մինչեւ նրան հանդցնելը կառավարության կողմից՝ 1906 թ.) շարունակ հայում, ձուլում էր հայ բանվորության ուղեղում նրա դաստիարակյան կովի, շահերի, կազմակերպության գաղափարները, նրա կովի, և հեղափոխության նոր էտապների ձգտումը:

«Կայծի» շրջանը կատարյալ պատերազմական ֆրոնտի շրջան էր՝ մի կողմից՝ իր հակառակորդ կուսակցությունների զոյլությունը ոչնչացնելու, մյուս կողմից՝ նվաճած դիրքերը ամրացնելով՝ հետագա նվաճումների համար: «Կայծի» դերը լեզալ մասսաների աշբը միանգամից բացելու և ուղիղ կովի ուղիներ ցուցադրելու մեջ նշանակալից էր ու պատմական:

«Կայծին» փոխարինեց «Նոր խոսքը»:

Լեզալ լրագոտությունից, այնուհետև, երեան են գալիս Բաքվա «Օթեր» թերթը և «Նոր խոսք» ամսագիրը, որոնք ձգտում են ոհակցիայի օրով հանդած կրակները վատել ու այդպիսով լրագության գաղափած հեղափոխական կյանքի հոսանքը շարունակել, կինդանացնել:

Սակայն ոեակցիան արթուն է. մեկի օրերն են խավարեցնում, մյուսի բերանը փակում և այդպիսով լայն մասսաներին զրկում կովի ու արթուն խոսքի ողերիշ խթաններից:

Սոց. Դեմ. Բանվ. Կուսակցության, մանավանդ նրա ձախ թիվ՝ բոլշևիկների համար բոլոր լեզալ հնարավորությունների դռները մեխաված են, տպարանների դռները փակված, մնում է անլեգալ միջոցը, (որ սակավաթիվ գիտակլիցների մեջ է միայն ընդունելու-

\* Այս հոդվածում մենք համառատակի շոշափելու ենք Ռ. Ս. Թ. Բ. կուսակցության հայ լեզալ թերթերի կատարած դերը միայն:

թյուն գտնում), կամ լեզալ գեղարվեստական գրականությունը, ալմանախների ձևով. և աջա, այստեղ մեր կուսակցությունը հայ փրականության մեջ երևան է գալիս իր ալմանախներով, թեև լղարիկ, բայց բովանդակալից «Կարմիր մեխակներ»-ով (1914 թ.), զուտ պրոլետարական ովով և բովանդակությամբ, առաջին անգամ բանվոր գրադետների մասնակցությամբ (Դեկուշկա Մելքիք, Անուշավան Վարդանյան և այլն) և այսպիսով կարծես հակաղովելով բուրժուական ու մանր-բուրժուական մամուլին, ասում՝ որքան էլ թանձր լինի ոհակցիան ու ժխորալի նրա ճահիճը, այնուամենայնիվ, մեր արևի ճառագայթները ամենուրեք պիտի ճեղքին ձեր խավարը, ցուց տան ուղիղ ճանապարհը:

«Կարմիր մեխակների» երևան գալը, այսպիսով, մի կոփով էր մանր-բուրժուական գրականության անկման և մի ցուց նրա դեմ:

Իմպերիալիստական պատերազմի հետևանքով թառամում են ու չորանում «Կարմիր մեխակները», «Բանվորի աշբուժով» հանդերձ:

Այնուհետև մեծ գեր է կատարում «Պայքար» թերթը (1915 թ.) մեր լճացած ու կաշկանդված իրականության մեջ ընդդեմ ոհակցիոն ազգային մամուլի:

Սա մի զարթոնքի կոչ էր, մի երկաթի մուրճ բանվորական մասսաներին երկար քնից արթնացնելու և մի կատաղի կոփով աղղայնական կուսակցությունների դեմ: «Պայքարը» ամենաերկարատև մեր թերթը դարձավ՝ թե՛ նախահեղափոխության և թե՛ փետրվարյան հեղափոխության շրջանում. մեծ էր նրա գերը հայ բանվորության մեծամասնական ֆրակցիային ճարելու, բանվորական մասսաներին զիտակցության բերելու և կազմակերպման գործում:

Ոչ մի անլեզալ թերթի այդ միսիան մեր մեջ կատարելու չէր հաջողվել, որքան այդ հաջողվեց «Պայքար»-ին:

Մենցեկիների դաժանության օրերին երևան են գալիս հանդուսն «Պահակը» և խիզախ «Նոր ուղի» թերթերը. Յ ամիս անընդհատ նրանք խրախուսում, հռւսադրում են մեր բանվորությանը, թե՛ պատրաստ կացեր, մոտ է օրը, երբ կովկասյան մենշևիդն ու գաշնակիզմը տապալվելու են, «մեր փողոցի» հարսանիքի ձայնը լսելուն արթուն մնացեր... ու փակվում են և այդ նախավերջին հայ լեզալ բոլշևիկյան թերթերը:

Վերջին լեզալ թերթը մինչ կովկասի և Վրաստանի սովետիկացիան «Կարմիր աստղն» էր, որը մի քանի օր հրատարակվելուց հետո փակվեց, բայց Վրաստանի սովետիկացիայի հետ՝ առաջին

օրից դարձավ բանվորա-պյուղացիության հանրապետության առաջին հայ օրգանը:

Ավելի լավ պայմաններում ծնվեցին «Կարմիր աստղ» և «Մարտակոչ» թերթերը, որոնց մատուցած ծառայություններն ու հաղթանակը բուժմուական մամուլի դեմ մեր պատ օրերում հայտնի են ամենքին...

Մենք կամեցանք թուցիլ կերպով հիշատակել հայ լեզար մամուլի կովի էտապները՝ միայն մեր կուսակցության մեծամասնական ֆրակցիայի դրական գործունեության ընթացքում, միաժամանակ շիշատակելով հայ մենշերի և Հայ Սոց. Դեմոկր. կազմակերպության օրգանների մասին մինչ Կովկասը խորհրդացյնի անցնելը:

Մեր նպատակն էր միայն ցույց տալ, թե որպիսի՞ պայմաններում, որքա՞ն կոիվ ու պայքար է մղվել ոչ միայն Մեծ Ռուսաստանում, այլև մեզ մոտի, մի փոքր ազգության գրական-հրապարակաժողովան ասպարեզում, որի պատմական նշանակությունը բավարկան լայն մասսաների զարգացման և ինքնագիտակցության հասցնելու գործում ահագին է եղել:

Մինչև որ մեր մամուլի զարգացումը հասցրել ենք այսօրվարդավաճ զրության ու հզորության, շատ կոիվ, շատ շանք է թափվել մեր բանվոր մասսաներին գիտակցությունը բարձրացնելուն, նրանց հեղափոխականացնելու, նրանց հաղթության հասցնելու համար:

Ու զրա համար էլ մենք սահմանել ենք այսօր մեր մամուլի տոնը, մի տոն, որ մեր հաղթանակների մեջ առաջին հաղթանակներից մեկն է:

## ՄԵԾ ԽՈՌՎԱՐԿՈՒԽՆ

Գրել Կամոյի մասին՝ կնշանակե յոթ օր յոթ դիշեր նստել պատմելու նրա սխրագործություններից և վերջը գալ այն համոզ- մունքի, որ դեռ հարյուրերորդ մասը չէ ասված հեղափոխության այդ վետերան հերոս մարտիկի մասին:

Կամոն բառիս լայն իմաստով հեղափոխության ղեկավար էր, ինչպես լենինը, ոչ էլ Կոմունիստական կուսակցության իդեոլոգ, սակայն նա ա'յն ինքնամոռացման հասած խիզախ. Հերոսն էր, ա'յն մեծ խոռվարկուն (ՄՅԱԵԿԻԿ), որը թե՛ «խաղաղ» ժամանակ- ներին, թե՛ պատերազմում միշտ առաջինն էր նետվում թշնամու դեմ և գրոհով միշտ առաջինը գարնվում ու բախվում թշնամու հետ և համարյա միշտ էլ հաղթում:

Նա Կոմունիստական, բոլշևիկյան կուսակցության այն հե- տախույզն էր (ռազվեգչիկը), որը ուսումնասիրելով թշնամու դիրքե- րը, հենց նրա քթի տակ պայմենում էր նրա դիրքերը, նրա կա- մուրջները, նրա պայմուցիկ նյութերի պահեստը, հենց թշնամու քթի տակ փայտցնում էր ու թոցնում նրա զրամարկը հեղափո- խական նպատակների համար և այդ այնքան վարպետորեն, այն- քա՞ն վիրտուոզին հատուկ հաշվառությամբ ու խիզախությամբ, որ հզոր թշնամին անգամ 22մում, ապշում, սարսափում էր այդ շառական հետապնդության առարկա դարձնում՝ ինչպես միշտ վերցնել այդ «հանգուկն բանդիտին»:

Դրա համար է, որ Կամոն կովկասյան մեր հեղափոխության ընթացքում, նրա սկզբնավորության հենց առաջին օրից, վաստա- կել է լեգենդար հերոսի անունը:

Մեր այս առաջարանից հետո, ներկա հոդվածում մենք մտադիր ենք տալ Կամոյի հեղափոխական գործունեության սկզբնական շրջանից մի քանի գծեր միշտ, որոնք մեր մամուլում դեռ չեն հիշված:

— Մի օր, զրոբների նախօրյակին, — պատմում էր Կամոյի համարադարացի ընկեր Տիգրանը, — ևս պատրաստվում էի հազորդվելու նույնը առաջարկեցի և 14 տարեկան Կամոյին. բայց նաոչ միայն ծաղրեց առաջարկու, այլև խորհուրդ տվեց ինձ Հրաժարվել այդ հիմարուրյունից:

Երբ ևս մերժեցի նրա առաջարկը, նա չերից հանեց մի բուռշամիշ և համեցեք արեց փնձ: Մտանալով, որ նախքան հաղորդվելը ոչինչ չի կարելի ուտել՝ շամիչը բերանս առա և սկսեցի ծամել:

Նոր նկատեցի միայն, որ Կամոն քա՞՞քա՞՞ք ծիծառում է վրաս, ասելով.

— Հիմա նաղորդվելով մօշլա էլավ:

Այսպես ուրեմն, դեռ 14 տարեկանից Կամոն չէր հավատում ո՛չ քահանայի, ո՛չ եկեղեցուն և ո՛չ էլ հաղորդության:

Կամոյի մանկության մտերիմ ընկեր Տիգրանը շարունակում է.

— 1902 թվին Սոսո Զուղաշվիլի-Ստալինը (Կոբան), որը նույնական գորեցի է, արդին ճանաչելով և կրթելով Կամոյին, Գորուց հրավիրում է Կամոյին Թիֆլիս և պատվիրում նրան՝ տպարան սարքելու համար տառեր գտնել:

— Ես, որ դեռ 1900 թվից Մարտիրոսյանի տպարանում գրաշար էի, Կամոյի կարգադրությամբ օրական հինգական ֆունտ տառ հանելով տպարանից՝ շրիփտի քանակը հասցրի մոտ մի-երկու փութի, որը բավական էր պրոկամացիա շարելու համար:

Կամոն ս. Աստվածածին եկեղեցու մոտ գտնվող թաթուխի տան վերին հարկում վարձում է սենյակ, սարքում մի ձեռքի տպարան, որ բաղկացած էր մի կոպիթովայլ սեղմիշ-պրեսսից ու վալիկից և շարունակ տպում պրոկամացիաներ, որ գրում էր Սոսո Զուղաշվիլին, Թիֆլիսի կոմիտեի անունից:

Կամոն տպում է թուցիկները, ինքն էլ տարածում:

Տարածում է այն մրգի թարախների մեջ, կինոտոյի շորերում, մի թերեց կշեռը կախած, իսկ գլխին մրգի թարախը, որի երեսին միրզն է փուլած, փսկ մրգերի տակ հարյուրավոր թուցիկներ թաքցրած՝ հեղափոխական բովանդակությամբ:

Մի քանի ամսից հետո տնատեր Թաթուխը կասկածում է և Կամոն՝ փնքն էլ զգալով փնչոր կասկածելի հոտ, տպարանը տեղափոխում է, ի՞նչ եք կտրծում, ո՞ւր...

Իր մի բանվոր ընկերի նկուղը, որը գտնվում էր 5-րդ տատիկանատան բակում:

Կարո՞ղ եք երեակայել խիզախ հերոսի հանդինությունը. նա

ո՞չ միայն տպարանն է տեղափոխում երկու փութ տառերով, իր պրեսով ու թղթով, այլև բերում է քանդված մի «ամերիկանկա» տպագրող մեքենա և սատիկանապես Գլեբովի քթի տակ սարքում նոր տպարան ու նորից գործի անցնում:

Այստեղ ևս Կամոն շարունակ տպագրում է Սոսոյի գրած թուշիկները և ինքն էլ տարածում:

Մի գործ, որ 1902—3 թվականներին ահազին նշանակություն ուներ սոցիալ-դեմոկրատական բոլշևիկների կազմ պատրաստելու, կազմակերպելու և կրթելու համար:

Կամոյին այստեղ ևս նախազգացումը քշում է տպարանի հաջար տեղ որոնելու մի երրորդ անգամ:

Նա գրիմ է հագնում, կույր աղքատ ձևանում և մի նույնըան «աղքատ» ընկերությամբ գոնե-դուտ ընկնում գալունի, հարմար անհյուն որոնելու: Արտիստիքաբար կատարելով իր գերը, վերջը կանգ է առնում 3—4 հարմար բակերի բնակչարաններից մեկի վրա. եքսը զեմլեմերի շոր հագած աջողվում է հետազոտած բակերից մեկում մի սենյակ վարձել, ուր և տեղափոխում է սատիկանա բակից տպարանը:

Անշափի հետաքրքիր է Կամոյի տեղափոխության հնարապիտությունը:

Վարձում է իրեն մոտիկ դրոգապանից մի դրոգ, տակը տեղավորում մեքենայի մասերը, վերից դարսում լիմոնադի շնորհ աղկը-ղիկներ և ուղղակի քշում վարձած սենյակը: Ահա այստեղ է, որ Կամոն աշխատում է մինչև Հավլաբարի հայտնի մեծ տպարանի կառուցումը, որը վարպետորեն պատրաստվեց Միխա Բոլորաշվիլու շնորհիվ<sup>2</sup>:

1904 թվից մինչև այսօր էլ Բեհրության փողոցի № 15-ի մոտից անցնելով, մենք՝ հին ընկերներս հիշում ենք այն տուպիկը, ուր աշխատում էր Կամոն վերջին անգամ տպարանական գործերով:

Այսքանը Կամոյի տպարանական գործունեության մասին:

Զարմանալի հակումն ուներ Կամոն դեպի գրիմը, մետամորֆոզայի ենթարկվելը:

Տարական բռնապետության օրոք վտանգավոր ձեռնարկությունների համար ժամանակը այդ էր պահանջում. հեռատեսություն, հնարապիտություն... և Կամոյին, կովկասյան այդ Բլանկին, մի առանձին հաճույք է պատճառում իր սխրագործությունների համար — աեռոր է այդ, թէ էս, հետախույզ է ֆրոնտերում, թէ թշնամու դիրքեր պայմանակամ Ռուսաստանից փող

փոխադրող Կովկաս — միշտ կերպարանափոխված կատարել գործը, որպես պրոֆեսիոնալ հեղափոխական, տրամադրությանը նվիրված անզուգական հերիթային անձնավորություն:

Անկասկած, հետագայում մենակը չէր Կամոն, ավելի բարդ գործողությունների համար նրան ընկերակցել են ուրիշները, բայց այս ամենի դեկավարն ու հրամանատարը Կամոն էր:

1905 թվականից մենք արդեն Կամոյին տեսնում ենք ոռոմբեր պատրաստելը ուսումնասիրելիս ու պատրաստելիս, որոնցից մեկի կապսուլը պայմենավոր վնասվում է նրա աջ աչքը:

Այդ ոռոմբերն էին, ահա, որ օֆիցերի հագուստում ծպտյան Կամոյին թոցնել ավելի 250 հազար ռուբլին երեանյան հրապարակից և որը այնքան ահապին դեր կատարեց մեր հեղափոխության զարգացման գործին թանձր ռեակցիայի օրոք:

Կամոյի սխրագործությունների գլուխ գործոցն էր այս, որի համար նա կախաղանի սպառնալիքի տակ սիմուլյանտ ձևացավ, տարիներով տանչվեց ու տանչեց իր դահիճներին և վերը այդ խելոք-«սիմուլյանտը» փախավ՝ թռչելով հիվանդանոցի երկրորդ հարկից առյուծային թոհիչքով:

Կամոյի այդ տարիների տանջանքները հայտնի են ողջ աշխարհին, եվրոպացի հեղափոխական էմիգրանտներից սկսած մինչև Ռուսաստանի ու Սիբիրի ամենախուլ անկյուններում ապրող հեղափոխականներին: Այս և հետագայում նման սխրագործություններն էին, ահա, որ վադրաթոիչ Կամոյին — մեր օրերի այդ մեծ խոռվարկուին — արժանացրին լեզենդար հերոսի անմահ անվան:

## ՄԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻԲՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Այժմ, երբ մեր կուրորտաների սեղոնց սեպտ<հմբերի> 25-ից փակված է համարվում, մենք կուզենալինք մեր գիտողություններն ու խորհրդածություններն անել հատկապես Բորժոմի մասին, որն իր զիրավանց բուժաբար ջրերով հանդիսանում է առաջնակարգ կուրորտաներից մեկը Արասթուման-Բակուրիանիի ուղղությամբ:

Ո՞ւմ չի հայտնի, որ այդ գրուպաները՝ Արասթուման, Լիկա-նի-Բորժոմ, Յագվերի-Ֆեմի, Բակուրիանի — Յիլսիս-Ջարի ան-գամ՝ համարվում են լավագույն կուրորտները ամբողջ Կովկասում թե՛ իրենց շրաբուժական և թե՛ կլիմայական պայմաններով:

Խոսել Արասթումանի, հրաշագործ այդ կովկասյան Գավոսի, որպես և Լիկանիի, կամ Յագվերի — Բակուրիանի երկաթզծի ուղղությամբ շարված կուրորտների նշանակության մասին, մեր նյութից դուրս է:

Այս անգամ մենք առանձնապես ուղղամ ենք կանգ առնել Բորժոմի այն մեծ առավելությունների վրա, խոսել նրա հանքաջրերի այն հատկությունների մասին, որ իր ժամանակին Բորժոմի նախկին տերերը շատ լավ էին հասկացել ու շատ մեծ եռանդով ձեռնարկել թե՛ նրա բուժող ջրերի և թե՛ անքանակ հարուստ անտառների շահագործման՝ ըստ եվրոպականի, իհարկե:

Բորժոմի հանքային ջրերն իրենց գաղի և այլ՝ մյուս վաննաներով հանդերձ, անժխտելի բուժաբար մեծ նշանակություն ունեն այն բոլոր հիվանդների համար, որոնք տառապում են ստամոքսի (աղիքների վերքեր, կատար և այլն), սրտի (լայնացում), զղային (ներաստենիա, իշյաղ), երիկամների և այլ հիվանդություններով:

Մոռկվա — Լենինգրադից սկսած մինչ Բաքու գալիս են այստեղ մեր ամենապատասխանատու, հիմ պողպոլնիկ ընկեր-կոմիսար-

Աերը և այստեղ էլ ապաքինվում սրտի լայնացոմից (ծծմբաթըթ-վածնի վաննաներում), աղիքների ուռուցքից ու վերքերից (եկա-տերինյան հանքաջրով), ներաստենիայից և սակավարյունությու-նից (եղդենյան վաննաներում) և այլն:

Այսպիսով, ուրեմն, Բորժոմի Հանքային ջրերը Կիսլովոդսկ-Եսենտուկիի նարզանների տեղն են բանում Կովկասում...

Ի՞նչ անի այն ընկերը, պատասխանատու այն աշխատավորը, զին պողպոլնիկը, որը երկար տարիների հեղափոխական աշխա-տանքներից կամ բանտ-աքսորներում տառապելուց հետո միանգա-մից վաստակել է և՛ աղիքների հիվանդություն, և՛ տուբերկուլյոզ, և՛ ջղային հիվանդությունների բոլոր տեսակները: Այսպիսիների թիվը շատ, անշափ շատ է:

Մեր հին պողպոլնիկների՝ հեղափոխությունից ստացած ժա-ռանգություններն են դրանք:

Կարո՞ղ են նրանք, միանգամայն երեք ծանր հիվանդություն-ներ ժառանգած այդ ընկերները, ամոքում գտնել այսօրվա Բոր-ժոմաւմ:

Եվ այս', և ո՞չ: Բացատրենք:

Այսօրվա Բորժոմը, Հանքային ջրերի այդ վայրը, իր ամ-բողջ երկարությամբ հսկա օձի պես ընկած է մի նեղ կիրճի, ավելի շուտ մի երկար փոսի մեջ, ուր հիվանդը իրեն խեղդված է զգում երկուստեք դիք բարձրացած լեռնանտառներում, իսկ որ զլխավորն է՝ խեղդված այն սուր խոնավուրյաննից, որը կազմում է Բորժոմի կիրճի անբաժան թույնը:

Երեկոները, մանավանդ, հիվանդը ժամը 7—8-ից հետո պի-տի պարկից տուն փախչի ու փակվի այնտեղ, որովհետև հենց այդ ժամերին խոնավությունը թափանցում է նրա ոսկորների մեջ, առողջ մարդու մարմնի մեջ անգամ բութ ցավեր առաջացնում:

Այսպիսով, այսօրվա Բորժոմը կիսով չափ արդեն կորցնում է փր բուժարար նշանակությունը:

Բորժոմի խոնավությունն ուտիճ է թե՛ ցերեկը և թե՛ գիշերը, մանավանդ, երբ տեղի են ունենում պարբերաբար անձրևներ, մի երկույթ, որ Բորժոմի կիրճի անբաժան տարերքն է կազմում:

Այսպիսով, տուրերկուլյոզով, ունատիզմով, ջղային և այլ նման հիվանդություններով տառապողի համար, որ միաժամանակ ստամոքսի կամ աղիքների սուր հիվանդություններ ևս ունի՝ այ-սօրվա Բորժոմը անպետք է:

Այդ տեսակի հիվանդներն ակամա ստիպված են հրաժարվել թորժումի ջրերի տված բարիքներից, որովհետև խոնավությունն այսպիսիների համար շտափ գուռն է բացում մյուս հիվանդություններ (օրինակ՝ միաժամանակ տուբերկուլյոզ, հոգացավ) ունեցողների համար:

Ել չեմ խոսում մալարիա ունեցողների մասին (Յորժոմի վառառմ Քոի ողջ ափերը մալարիայի բույն են, ամառը մանավանդ տեղ-տեղ նա բահճուտ է):

Անկասկած, Յորժոմի խոնավությունը տեղ-տեղ նվազ է և անգամ բացակայում է այնտեղ, ուր ամառանոցները շինված են բարձունքներում:

Բայց Յորժոմի հանքային ջրերով բուժվողների քանակը մեծ է և պահանջը անշափ շատ: Հո ամենքն էլ չե՞ն կարող Յորժոմի բարձունքներում կամ կեկանի բարձրավանդակում ապրել, ուր խոնավությունն անպայման բացակայում է:

Կրկնում եմ, ի՞նչ անի այն հեղափոխական հիվանդը, որը միաժամանակ ե' կրծքի, ե' ստամոքսի հիվանդությամբ է տառապում, և որի ստամոքսը բուժելու միակ տեղը Յորժոմն է ու նրա հանքային ջրերը:

Այսօրվա Յորժոմը անպետք է այսպիսի հիվանդների համար, իսկ նրանց թիվը շատ, հազարամուրներ: Վաղվա Յորժոմն, անշուշտ, աջապին նշանակություն կունենա այդպիսիների համար:

Վաղվան Յորժոմի հարցն է, ահա, որի վրա ուղղում եմ դարձնել Վրաստանի նարկոմդդրավի ուշադրությունը, կամ բոլոր նրանց, ում վերաբերում է այդ:

Կարեւոր մի խնդիր է մեր առաջարկը, որը բացի շատ գործնական լինելուց նաև ներական է:

Մեր առաջարկը Յորժոմը իր խոնավ մովֆ կիրճից լուս աշխարհ հանելուն է վերաբերում, խոնավությունից տառապող նրա հիվանդներին փրկելու համար: Կհարցնեք, այդ ինչպե՞ս:

Իհարկե, այն շենքերը, որ ծառայում են կիրճում, պիտի մնան և ծառայեն ցերեկվա աշխատանքներ կատարող հիմնարկությունների և առողջ բորժումաբնակիչների համար:

Յորժոմում բուժվողների շենքերը, սանատորիաները, հանգստյան տները և այն պիտի գուրս հանել կիրճից, այլ խոսքով՝ հարկավոր է փայտաշեն նոր ամառանոցներ ու հանրակացարաններ կառուցել Յորժոմի կիրճից գուրս երկու մեր առաջարկելիք տեղերում, ուր ոչ միայն խոնավությունը բացակայում է անպայման,

այլև որոնք շրջապատված են գեղեցիկ ու խիտ սոճիների ու եղենիների անտառներով, ուր կլիման անգամ այլ է, օդը առողջարար և արևոտ, հորիզոնը լայն ու թուլիչ:

Առաջարկածս տեղերից մեկը դեպի Լիկանի տանող խնօսը երկարությամբ սոնիների գեղեցիկ ու խիտ անտառի բացատներն են, մյուսը՝ թորժումի լեռնահարավայրը, պլատոն, ուր թորժումի ջրամբարները զտված ջուր են մատակարարում և՛ քաղաքին, և՛ էլեկտրակայանին:

Մենք դիտենք, որ թորժումը՝ հարուստ իր անտառներով՝ մինչև Քակուրիանի հողակված է վաղոց ի վեր: Այդ անտառների նախկին տերերը, այսպես կոչված մեծ փշտանները, թողել են մեզ կատարելագործված հոյակապ սղոցարաններ՝ թորժումում, Սումբաթովոյում և Արասթումանին մոտ: Այս սղոցարաններն են, որ ժամանակին պատրաստել են մեծ քանակությամբ փայտեղեն ու տախտակներ արտասահման արտահանելու համար, որից քիչ մի փոններ չեն դիցում հիշած նախկին տերերը:

Սղոցարաններն աշխատում են այժմ. անտառները շահագործում է առողջապահության նարկումատը. գժվար չէ, ուրեմն, մյուս տարվա գարունից սկսել փայտե շենքերի կառուցումը գոնե էիկանի տանող ճանապարհի ափում, ուր կարող են հենց մյուս տարվանից ապրել և թժկվել թորժումում այն հիվանդները, որոնք միաժամանակ և՛ կրծքի, և՛ ստամոքսի հիվանդություն ունեն: Այսպիսով, հրաշալի սոճի անտառները, Արասթումանից ոչ պակաս դեղեցիկ, քիովին համապատասխանում են մեր դրած պահանջներին:

Նույնը և պլատոնի վերաբերյալ: Նա գտնվում է թորժումի հանքային աղբյուրներից 100 մետր բարձրության վրա: Այստեղ ևս լիռան հարթավայրը անպայման զերծ է խոնավությունից:

Օդը թեթև, տեղին ու տեղը առողջություն, նույնպես զարդարված սոճիների անտառով, պիտումնիկի ու ջրամբարների շարքում: Թորժումի փոսից հիվանդները խմբով բարձրանում են այս զիգզագ, նստարաններով հարմարեցրած, հարթ ճանապարհով և ամրող սրով օդ շնչում, հանգստանում: Այստեղ է, որ պիտի նույնսրիսի միհարկանի փայտե տներ շինել ստամոքսի և ջղային հիվանդների համար:

Պլատոն պիտի կապել հանքային աղբյուրների հետ ֆունիկուլյորով, որը, թող զարմանալի լթվա, շատ հեշտությամբ կհաջողի այստեղ կառուցանել:

Պարկի և պլատոյի հեռավորությունը, ասացինք, մոտ 100 մետր է. մի տարածություն թիֆլիսի փունիկուլյորի չափ, ուր, սակայն, տեղ-տեղ կարիք կա վիադուկայի, մնացածը սովորական ռելսերով:

Ռելսերի հարցն արգեն ասկա՞ռովված է: Նրանց պիտի գործադրել փունիկուլյորի համար:

Այս տարգանից մտադրություն կա Բորժոմի զիսավոր երկաթուղու կայանը կապել, միացնել Բորժոմ-ապարկի հետ լայն գծի ռելսերով (ширококолейկա), հետևապես կուկուշկան ու նրա մոտ երկու վերստ հեռավորությամբ ձգվող նեղ երկաթգիծը (узкоколейկա) վերանուած է:

Ահա այդ նեղ երկաթղծի ռելսերն են, որ կարող են և պիտի ծառայեն փունիկուլյորի դժի համար, որը կմիացնի ներքին Բորժոմ-կիրճը վերին պլատո-Բորժոմի հետ: Ֆունիկուլյորի համար թե՛ լույսը և թե՛ շարժիչը ուժը վերցվելու է Բորժոմի հիգրո-էլեկտրակայանից, որը գտնվելու է շատ մոտ նշանակվելիք փունիկուլյորից՝ ջրընկեցի (водопад) մոտ: Ի միջի այլոց՝ կա պրոեկտ հենց այդտեղից էլ էլեկտրիֆիկացիա անցկացնել դեպի 5—6 մոտակա դյուուերը:

Ինչպես տեսնուամ եք, վայտաշեն նոր ամառանոցների և փունիկուլյորի կառուցումը հեշտանում է հենց նրանով, որ թե՛ վայտեղենի պաշարը և թե՛ ռելսերն ու էլեկտրական ուժն արդեն պատրաստի կան: Հարկավոր են միայն աշխատող ձեռքեր, փունիկուլյորի երկու վագոնն, մնաւազյա կանատ, մի շարժիչ մեքենա իր թափանիվով ու պարագաներով հանդերձ:

Ապա, երբ մեր այս առաջարկները լուրջ ուշադրության կառնեն նրանք, ում հարկն է, այն ժամանակ մենք պատված կլինինք Բորժոմի այն խոնավությունից, որը ժանդի պիս ուսում ու ցավեցնուած է մարդու ջղերն ու ոսկորները, որը կապարի պիս ձնշում է իր ծանրության տակ հիվանդներին:

Այդպիսով, այսօրվա փատած, խոնավ Բորժոմը, երկու կողմից էլ լեռնանտառներով սեղմված Բորժոմ կիրճը վեր հանելով լեռան գագաթը մի կողմից, էլեկտրի լայնաշորիվոն, սոճիներով շրջապատված հարթավայրը, մյուս կողմից՝ վաղվան Բորժոմը կդնեն իր պատվավոր տեղը:

Նա կհամարվի աշխարհի առաջնակարգ կուրորտներից մեկը: Այսու որում վերացած կլինի խոնավությունից առաջացած վնաս

սակարությունը հիվանդների համար, մի վնասակարություն, որի մասին շատ քիչ էին մտածում նրա նախակին պիշտիչ տերերը։ Այս մի հիվանդություն բուժելու հոգու չի զարգացնի հիվանդի մյուս ցավերը։

Վաղվա Բորժոմը կստանա ելրուպական առաջնակարգ կուրորտի հոչակ ո՛չ միայն և, Ս. Հ. Մ.-ում, այլև բարեշեն ելրուպայում։

Ու այս կլինի մեր շինարարական, մեր սահղծագործական էպոսի ուժեղ հաղթանակներից ու նվաճումներից մեկը։

## 〈ՊԱՏՍԽԱՆԱԿ ԽՈՍՔ〉

Ես արել եմ՝ ինչքան ուժերս ներել ես, ինչքան հայրավոր է եղել ծանր ռեակցիայի օրերին, երբ ամեն քայլափոխում հալածանքի վամ հնթարկվել. և այժմ էլ կանեմ՝ կպրեմ, քանի դեռ շոաշ տնեմ:

Իմ կյանքիս կեսը անցել է գործարաններում, բանվորության մեջ. այնտեղ է կովկել իմ կամքը, այնտեղ եմ գտել ես իմ ուղին, իմ ստեղծագործությունների աղբյուրը: Բանվորություն, գործարան — ահա այն աղամանդը, որ շատ-շատ զրոյների աշքից վափակել էր, թաքնվել: Գործարանում ես ծանոթացա բանվորության հովզերին, իդեալներին, հավատացի նրա պայքարին ու հաղթանակին, ընկա, ձուլվեցի նրա ծով հոսանքի մեջ: Այստեղ, այս տարերային հոսանքի մեջ, բանվորության մեջ, գործարանում՝ գտա մս այդ աղամանդը: Հարկավոր էր այն սրբել, հղիել, որ նա փայլի, շողշողա: Այդ համեստ պարտականությունը հանձն առա ես իմ երեսնամյա գրական գործունեության ընթացքում:

Իհարկե, ես հեղնանքի և հալածանքի հնթարկվեցի հայ աղպային շովինհստական մամուլի կողմից: Բայց այդ բոլորը չեին կարող աղղել, խանգարել ինձ, քանի որ ես ձուլվել էի բանվոր մասսային, հավատում էի նրա մեծ հաղթանակին:

Զե՞զ՝ շահել, երիտասարդ պրոլետգրողներ, ձե՞զ եմ տւղղում իմ խոսքս. եղե՛ք հաստատ, աննկուն՝ ինչպես կամքն է բանվորի, ու հաղթական՝ ինչպես գործն ու պայքարն է նրա:

## ՄԵՐ ԳԵՎՈՐԳԻ

Մարդու միտքն է կաշկանդվում ու ձեռքը դողդողում, երբ  
մտածում է մի քանի տող նվազել ողբերգական մահով մեզնից  
Հեռացած Գ. Աթարբեկյանին:

Դեռ երեկ կենդանի, կենսուրախ, առուցք, մարմնացած եռան-  
դով լեցուն այս հրաշալի մարդը, այսօր Յունկերսի գոհը դարձած՝  
նիթի մի րոպե շունչ տոներ ու խոսեր, անշուշտ պիտի անիծեր  
մերենալին ու բացականչեր.

— Մի՛ թե ևս արժանի էի մի այսպիսի անջեթեթ և ոչ առավել  
մի Հերոսական մահվան...

Եթե անմահ Կամոն լեզենդար մի հեղափոխական էր, ապա  
ոչ պակաս լեզենդար մի կոմունիստ էր մեր թանկագին ընկեր  
Գևորգը:

«Աթարբեկով» անունը սարսափի մի սիմվոլ էր այն հակա-  
հեղափոխական տարրերի համար, որոնք սազմական կոմունիզմի  
օրերին, անգամ հատո, ձգտում էին փորփորել ու խորտակել Խոր-  
Շըրդային իշխանությունների հիմքերը:

Նա կատաղի թշնամի էր բոլոր այն մութ ուժերին, որոնք  
հանգնում-փորձում էին հարցուր-հազարավոր բանվորների ու գյու-  
ղացիների արյունով ձեռք բերած դիկտատուրան, նրանց հալալ ու  
արդար իրավունքները փ շիք դարձնել, և անխնա էր, երբ հանցա-  
վորին բռնում էր տեղն ու տեղը:

Կոմ. կուսակցությունը, Խորհրդացին իշխանությունը նա սի-  
րում էր իր աշքի լուսից է՛լ առավել, իր ծնողից է՛լ ավելի:

Համոզված էր, որ հեղափոխության կատաղի թշնամիների  
ոշնչացումով միայն շունչ կառնի, կրարգավաճի իր սրաշտելի Խոր-  
Շըրդային իշխանությունը և դրա համար պատրաստ էր ամեն մի  
դոհարերության, և համուն այդ իշխանության՝ կոմպրոմիսներ  
գոյություն շունեին նրա համար:

Քանիցս ատելի թշնամիները Հյուսիսային Կովկասում և այդ-  
բուր ատրանակներ էին պարագել նրա վրա, քանի՛ անդամ վիրա-  
վորել, բայց այդ մոմենտներին նա, գնդակը մարմնի միջից ան-  
ցած վիրավորը, առյուծի թոփչքով խոյացել է չարագործի վրա,  
իլել նրանից զենքը ու նույն զենքով ոչնչացրել հանցավորին:

Հականեղափոխական տարբերը, բուրժուազիան ու քաղաքնի  
ինսելիդենցիան նրան «դաժան» անունն էին տվել, իսկ հեղափո-  
խական մասսան ներուի անունը, ուժեղ մարդու, ուժեղ կամքի  
մարդու անունը:

Ահա թե ինչի մեջն էր Գևորգ Աթարբեկյանի հմայքն ու մե-  
ծությունը:

Սակայն այս «դաժան» մարդու մեջ ապրում էր ազնիվներից  
ազնիվ, քնքուշ մի հոգի, երեխայի սրտի պես բյուրեղյա մի  
սիրոտ, փմաստունի մտքի պես պարզ ու հստակ մի խելք, լուրջ,  
պատախանատու վերաբերմունք մեր ամեն մի քայլի համար,  
հանդիսա ու արգար՝ իր հեղափոխական խղճի առաջ:

Կամք եմ ասում, պլատինից էլ ամուր ու թանկ, ոսկուց էլ  
անաղարտ ու մաքուր, կրակոտ ու բոցավառ...

Նա՝ մեր հեղափոխականների խիղճը, մեր կոմունիստներիս  
մեջ ամենախիդախուզ և ձշմարտության ջատագով, խոսքը երեսին  
ասող, արդար զարուցիչով կեղծն ու պատիրը խափանող:

Մի խոսքով, մի գեղեցիկ բացառություն: Անփոխարինելի մի՛  
մեծություն մեր հեղափոխության պատմության մեջ:

Կարիք կա՝ արդյոք Գևորգ Աթարբեկյանի բազմապիսի ծա-  
ռայությունները հիշատակել. նրանք անթիվ են ու խոշոր, պա-  
տախանատու, ծանրակշիռ, արդյունավետ:

Զմոռանանք մի բան, որ եթե կարիք է եղել ամենադժվարին  
ու քայլայված մի գործ կամ հիմնարկություն կարդի բերել, ումե-  
նից առաջ Գ. Աթարբեկովին են ուզարկել կարգավորելու այն:

Փաստ է մի բան միայն, որ նրան անսահման և անխորի սի-  
րում էին բոլոր նրան հետ աշխատող թե՛ պատախանատու ընկեր-  
ները և թե՛ բոլոր շարքային աշխատակիցները:

Այն սոսքը, որ պատել է Աթարբեկովի մահվան շուրջը, մի  
օրվա, մի շաբաթվա առող չէ, նրան մշտակես պիտի հիշե, նրա  
գործերով հիանա ու սրտից մի կոկիծ ժայթքեցնի ամեն անդամ  
նրա անունը հիշողը, նրան ճանաշողը:

Անփոխարինելի կորուստ է Կոմունիստական կուսակցության

Համար այս Հաղվագյուտ մարդու մահը, նրա հմայքը՝ անջնջելի՝  
մեր կուսակցության պատճության մեջ:

Թո՛ղ Աթարբեկյանի անունն ու հոչակը, նրա մինչ անձնազու-  
հության հասնող ամեն մի քայլն ու գործունեությունը, նրա ինքնա-  
մուացության հասնող անդադրում եռանդն ու կորովը օրինակ  
դառնա մեղ բոլորիս համար:

Գնասս բարո՞վ, թանկագի՞ն ընկեր Գևորգ շան. ուժեղ ու վճռա-  
կան կամքդ, մշտավառ ժպիտդ և անկաշառ, ազնիվ, բյուրեղյա-  
հոգիդ երթի՛ք, երթե՛ք չեն մոռանա մտերիմ և սիրելի ընկերներդ:

## ԱՐՈՒՍՅԱԿԻ ՀԻՇԱՏՈՎԻՆ

Կամոյի աշ թե, քույր և ընկեր Արուսյակն էլ մեռավ... մեռավ չահել հասակում, տուբերկուլյոզից: Ընկեր Արուսյակը հին պողպալ կնոջ տիպարն էր: Վերին աստիճանի գգայուն, կանացի քընթընթյուն, բայց և որքան վճռողականություն և հաստատակամություն էր հարկավոր, որ նա զլուկ հաներ այն ծանր ու բարդ, վտանգավոր դրություններից, որով կապված էր եղբոր, լիգենդար Կամոյի բախտը, նրա մահու և կյանքի խնդիրը:

Եվ պետք է ասել, որ ընկեր Արուսյակը, շատ լավ հասկանալով Կամոյի միսիան, և որպես հեղափոխական՝ շատ խոր գնահատելով Կամոյի գործունեության բացառիկ կարևորությունը, կապել էր իր բախտը եղբոր բախտի հետ և ամենուրեք, ուր եղբացըն էր, ինքն էլ նրա կողքին էր, ուր եղբոր սպառնացող վտանգը՝ նա էլ այնտեղ, ուր ոխուը՝ նա նրան թեակից:

Զարմանալի՝ դյուրագգացություն: Անսահման ուրախանում էր եղբոր՝ Կամոյի հետ կապված ամեն մի հաջող սխրագործությունից և սաստիկ տիրում սիրեցյալ եղբոր անաջողությունից և սրա հետ կապված այն տանշանքներից, որ վիճակված էր ամենիս սիրեցյալ Կամոյին:

Կարճ ասած՝ նա եղբոր չիղն էր, նրա արյունը, նրա ամենասիրելի, մտերիմ ընկերը, նրա աշ բազուկը և նրան շատ փորձություններից փրկող պահապանը, եթե ներելի է այսպես անվանել՝ հրեշտակը:

Ընկեր Արուսյակը, իրոք, հին պողպալ բուշեկչկայի տիպարն էր: Եվ այսօր, մենք կորցնելով նրան, տուբերկուլյոզից տառապոց այդ հին գվարդիայի անձնվեր ընկերներից մեկին, մեր ծերացած գլուխները խոնարհեցնում ենք նրա ջահել դիակի առաջ և ասում.

«Սիրելի՝ Ալուսյակ, իզուր և անարդյունք չանցավ քո կյանքը։ Հիշելով մեր անմահ Կամոյին, անկարելի է չփշել և քեզ, որպես նրա թիկնապահի, տրպես նրա սխրագործության մասնակցի և ընկերոջ։ Դու մեր հեղափոխությանը ավելի ավելի, քան կարող էիր, և այդ երբեք՝ք չի մոռացվի մեր հեղափոխության պատմության էջերը գրելիս»։

## ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ ԲՈՔՎՈՒՄ

Էրմանի-Քյանդը դասել էր կարմիր ուխտատեղի Բաքվի պրո-  
ցեսարիատի համար: Դեռ մի քանի օր առաջ քաղաքը զարդարված  
էր էլեկտրականությամբ և ալ զրոշակներով, որոնք ավելի կեն-  
դանություն էին տալիս քաղաքին: Մայիսի 1-ի առավոտյան վաղ  
քաղաքի փողոցները լցված էին բանվորական, դինվորական, նա-  
վաստիական, պիտոներական և աշակերտ-աշակերտութիների կաղ-  
մակերպություններով: Ալ դրոշակներին և լողունդներին հաշիվ  
չեար: Էրմանի-Քյանդ տանող արամվայի գծով այդ օրը աշխա-  
տում էին 4 վագոնի փոխարեն 19, բայց այնուամենայնիվ ժողո-  
վրդի հոծ բազմությունը հերթի էր կանգնել, որպեսզի մեկնի կար-  
միր ուխտատեղին: Այս Բաքվի աերոգրոմը: Այս հրապարակը  
դասել էր մարդկացին մի ծով, որը իր ծոցում տեղ էր տալիս զե-  
տի նման հոսող հազարավոր բանվորներին իրենց խիտ շարքերով:

Երբ տիսնում ես այդ հազարավոր ետ ու առաջ շարժվող  
զբովսներն ու մտածում, որ դա Բաքվի պրոլետարիատի մի մտան  
է (արդյունաբերական շրջանները տոնում էին առանձին), քեզ հա-  
մար պարզ է լինում, թե Բաքուն փնչպիսի մի հսկայական արդյու-  
նաբերական քաղաք է Անդրկովկասով իր տասնյակ հազարավոր  
պրոլետարիատով: Ցուցից ետ չեր մնացել և ազգաբնակությունը,  
նա ևս բանվորների հետ իր մթերքներով դնում էր այնտեղ, ուր  
տեղի էր ոմնենալու հանդեսը:

## ՕԳՈՍՏՈՍԻ 29-ը

(Թամարա Մելիք-Շահնազարյանի հիշատակին)

Այսօր լրանում է 20 տարին այն օրից, երբ առաջին անգամ Թիֆլիսի կենտրոն նախկին դումայի դահլիճում տեղի ունեցավ տռացին մասսայական չարդը՝ ցարական սատրապների կողմից թիւազրված:

Սա կովկասյան մայրաքաղաքի հռոմեաբի 9-ն էր, որը իր համեմատական չափով ու բովանդակությամբ նույն նշանակությունն ունեցավ Կովկասի բանվորական մասսաների համար, ինչ նշանակություն Ծուսաստանի բանվորական մասսաների համար ունեցավ ուստական ցարի մայրաքաղաքում տեղի ունեցած հռոմեաբի 9-ը:

Երկուան էլ շատ նման են իրար, երկուան էլ՝ հեղափոխության առաջին աղղանշան, մասսաների դիտակցությունը խորացնելու սիդնալ:

Օգոստոսի 29-ը (նոր տոմարով սեպտեմբերի 11-ը) Կովկասի մայրաքաղաքում տեղի ունեցավ մեկ ցարի ու մեկ էլ մենշեկիկների տիրակալության օրոք (Ալեքսանդրյան այգում): Սակայն առաջին հրացանազարկման դեպքը ավելի մղձավանշային, ավելի սարսափելի էր, քանց երկրորդը (Ալեքսանդրյան այգու սպանդանոցը):

Օգոստոսի 29-ին նախկին քաղաքային գումարայի դահլիճն ու բակը, նրանց հարակից փողոցներն ու երևանյան հրապարակը կատարյալ սպանդանոցի էին նման:

Ալբան հավիտենապես սպանկեցին 50-ից ավելի բանվոր և պատանող ընկերներ ու մի քանի հարցուր վիրավորներ:

Կոտորվածների ու վիրավորվածների թիվը կքառապատկվեր, եթե դումայի դահլիճում փակ միտինդին ներկա փողողները շշտապեին թաքնվել քաղաքային դումայի նկուղներում, Գանովսկայա

և Վելլամինովսկայա փողոցների խանութներում ու գինու պաղպակներում:

Փողոցով փախչողներին, անգամ պատերի տակից սովոսկելով ձողոպրոդներին, տեղն ու տեղն էին թողնում այս կամ այն անկյունում դիրքեր բռնած կողակները:

Գնդակը անխտիր և անմիջապես հասնում էր ամենքին:

Արյան այս բաղանփքը ցարական դաշիճները սարքեցին նրա համար, որ օգոստ <օսի> 29-ին երեկոյան դումայի դաշիճում ժողովել էին բոլոր սոց <իալ>-դեմ <ոկրատական> կուսակցության երկու թիվ զնկերները, ուր տեղի պիտի ոմանար փակ միտինգ ու խորհրդակցություն այն մասին, թի՝ ինչպես կասեցէլ-կառավարության պրովոկացիացով սարքաված հայ-թուրքական կոտորածը:

Դումայի դաշիճը մերոնք վերցրել էին հեղափոխական կարգով, առանց կառավարության թուլտվության և քաղաքագլուխ վերմիշեի համաձայնության:

Վերջինս, կադետների այդ լիդերը, վախ ու սարսափից գուսլ երկու ափի մեջ սեղմած աղերսում էր մեզ թուլտվություն վերցնել և ապա օրինավորել միտինգը. սակայն մերոնք, զանց առնելով վախկոտ կադետի աղերսանքը, շարունակում էին իրենց գործը, համոզված լինելով, որ «օրինավոր» ժողովելու թուլտվությունը չեն ստանալու:

Ու դաշիճում երևան եկան կողակների հրացանների կոթերը, ապա սլիններն ու սրեր...

...Ու ճարճատեցին նրանց հրացանները:

Սվինների և անդեն հերոսների մի զարգուրելի ձեռնամարտ էր, որ շարունակվում էր տասնյակ րոպեներ:

Այդ զարկերից բաժին ընկավ և ինձ...

Ցնցված մղձավանշային այդ արյունահեղ տեսարանից և չնայած զղային ցնցումներից առաջացած հալցուցինացիային, ես, փոխարեն տուն փախչելու, վազեցի ընկ. Խանույանի բնակարանը, որը այդ ժամանակ մեծամասնական կովկասյան Միացյալ Կոմիտեի կոնսուլտատիվ սենյակն էր:

Այստեղ էր, որ տեսա մեր անմոռաց և ամենից հարգված Դեռուշկա Մելիքին, այդ հայ առաջին մեծամասնական բանվոր (ներկարար) «Ստեփան Խալտուրինին» արյունաթաթախ, որը ճակատից վերք ստանալով փախել եկել էր կոմիտե. նրա վերքերը մեծ խնամ-

բով կաթաթում էին Սերգոյի կինը՝ ընկեր Նինան և մեր ամենքիտ սիրելի Անիշկա մայրիկը:

Ամեն բովե գալիս էին ընկերներ և մեկը մյուսից սարսափելի լուրեր բերում մեզ, կոմիտեի մարդկանցու Կալեյդոսկոպի պետառաջներից անցնում էին սպանված շարքային բանվորների տանջված դեմքերը:

Ամենաեղեռնալին այդ նահատակների մեջ, սակայն, մեր մեծամասնական ընկերոց՝ Թամարա Մելիք-Շահնազարյանի դեմքն էր:

Ոչ ոք չէր հիշատակում նրան, թեև քշերը չեն մեր հին գլարդիականներից, որ ճանաշում էին նրան: Եվ սակայն այս անունը կապված է այն տրագեդիայի հետ, որ տեղի ունեցավ օգոստոսի 29-ին (սեպտեմբերի > 11) մինչադի մղձավանչում երևանյան Հրապարակի:

Մի վերին աստիճանի համեստ, իր գոյությունը չցուցադրող, բայց նույնքան վերին աստիճանի լարված եռանդով ուսանողուհի էր ընկեր Թամարա Մելիք-Շահնազարովան: Նա այն սակավաթիվ մեզ գործակից կանանցից էր, որոնք ամեն երեկո գալիս էին Կովկասյան > Միացյալ Կոմիտե (Կավկասյան Հայոց Համայնքի Սոյոզնայ Կոմիտե) և սպասում կադոյին (Դումբածե), թե երբ պիտի սա վերադառնա գաղտնի տպարանից՝ կուն տակ թաքցրած նորատիպ պրոկամացիայի կապոցներով, որպեսզի այդ «բազեն» վերցնի իր պրոկամացիաների բաժինն ու վազը, կամ հենց նույն գիշերը, պոդվալներում և այլուր սպասող բանվորների մեջ տարածի...

Վերին աստիճանի գաղտնապահ էր մեր Թամարան: Մինչ օրս էլ հիշում եմ այդ կարճահասակ, կարմրաթշիկ, իր արտաքինով շատ և շատ նման կամոյի քույր Զավահիրին, ուսանողուհուն: Հիշում եմ նրա գաղտուկ, ականջում խոսելու սովորույթ դարձած շշուկը՝ հատուկ բոլոր հին գլարդիային պատկանող կոնսպիրատորներին. այդ շշուկը մեր ամենքիս բնույթն էր ու սովորույթը:

Ամեն գաղտնի ժողովում, ամեն տեղ նրա ներկայությունը կտեսնեիք, և ահա այդ՝ ամբողջ հոգով ու մարմնով հեղափոխականը, այդ համոզված մեծամասնական մարդսիստը ընկավ հակոակ մոր ու ազգականների կամքի, ամեն օր կովելով նրանց հալածանքների դեմ՝ ետ կենալ վտանգավոր հեղափոխական գործունեությունից:

Եվ ահա այդ աննման, համեստ և անսահման եռանդուն, գործին նվիրված ավագ բոլշևիչաներից մեկը՝ Թամարա Մելիք-Շահնազարովան օգոստոսի 89-ի երեկոյին փոված երևանյան Հրա-

սպարակի սալաքարերին՝ իր 22 տարեկան ջահել հասակում գնդակահար, ցնցել էր բոլորին իր եղեանական մահով:

Ջահել էինք այն ժամանակ, զոհեր դեռ քիչ տեսած, ու դրա համար էլ նրա մահը մեզ, մոտիկներիս, շատ ավելի խոր կսկիծ էր պատճառում, կրակի պես այրում մեր սիրտը:

Այս կսկիծը կրկնապատկվում էր նրանով, որ ընկ. Թամարայի դիակը երկու օր ընկած էր Դումայի քարե մայթի վրա, և մենք, նրա մերձավոր ընկերներս, անկարող էինք փախցնել դիակը. իսկ անկարող էինք, որովհետև երեք օր շարունակ կողակների պահակը հսկում էր Երևանյան հրապարակը (ուրեմն և դիակները), որպեսզի ազգականները չգան տիրաման դիակին: Մյուս կողմից՝ տրափեդիայի սարսափը ազդել էր ամբողջ ազգարնակության վրա և ուշ ոք սիրտ չըր անում մոտենալ տիրանալու իր զոհին:

Շատ ու շատ կան Թամարայի նման անհայտ հերոսներ՝ նահատակված 1905—6 թ.թ. հեղափոխությանը օրերին, բայց որքան գիտենք, Թամարա Շահնազարյանը առաջին հայ բոլշևիկ էինն էր, որը նահատակվեց հանուն մեր կովի, հանուն մեր ապագա հաղթանակի, կամավ և ինքնազո՞ կերպով զինվորագրով բոլշևիկական կուսակցությանը:

Հեղափոխության, իսկական բոլշևիկ հեղափոխականների պատմություն դեռ մենք չունենք, բայց երբ ստեղծվի, կարծում եմ, որ Թամարա Մելիք-Շահնազարյանի անունը, որպես առաջին հայ բոլշևիկ նահատակ կնոջ, իր տեղը պիտի բռնի:

\* \* \*

Ինչպես հունվարի 9-ը խթան հանդիսացավ Ռուսաստանի բանվորական մասսաների գիտակցության խորության, այսպես էլ ավելի հատու ու վճռականորեն օգոստոսի 29-ի կոտորածը Կովկասի բանվորական մասսաների աշքը բացեց, ճանաշել տվեց նրանց, թե՛ ով է իր բարեկամն ու թշնամին ու հենց այդ օրից էլ բանվորական մասսաներն ավելի միահամուռ ջանքով սկսեցին լուրջ մտածել ցարի զահը սասանելու և տապալելու մասին:

ԵՍԿ ՈՐ ՏԳԵՂ ԵՐԵՎԱՆԻՑԹ...

С больной головы на здоровую.

(ժող. առաջ)

Դեսրդ Դարաշյանը, որը իր բոլոր մեմուարներում գլխավորապես ինքնահանձնարարությամբ է զբաղված, վերջերս հրատարակած իր մի բրոցյուրում՝ «Հայ անդրանիկ Հեղափոխական խրմակը Անդրկովկասում» վերնագրով, տողերիս դրողի վերաբերմամբ ուրացողի մի տգեղ դեր է ստանձնել, որը ես կուզեի վերագրել նրա դառամի հիշողության գավաճանության, եթե չկասկածեի նրա թշնամական շարամտության վրա:

Այդ բրոցյուրի 29-րդ երեսում նաև անօրինակ անպատճախանակությամբ ու սանձարձակ անվերապահությամբ հայտարարում է, թե՝

1) 1883 թվի աշունքից իրեն աշողվել է կազմակերպել Դանձակում մի անլեզակ խումբ՝ կազմված համալսարանական ուսանողներից և գիմնազիայի 7—8 դասարանցիներից:

2) Թե ես այդ խմբի ժողովներին ոչ միայն շեմ մասնակցել որպես անդամ, այլև ոեֆերատ շեմ գրել ու ոչ էլ կարդացել այնտեղ, ergo իմ կենսագրականի մեջ այդ մասին հիշատակածը մտացածին է, «բանաստեղծական ֆանտազիայի արդյունք»:

3) Թե վերոհիշյալ ուսումնական տարիներին (1883/4) ես, 14—15 տարեկան շափազանց անզարգացած մի գիմնազիստ լինելով, դժվար թե հանձնարարված լիներ ինձ մի այնպիսի թեմայով ոեֆերատ գրելու, ինչպիսին է «Հողացին հարցը Տաճկահայտատանում»:

Ու վերջն էլ, բարոյախոսի գիմակ ծածկելով, Դարաշյանը հավակնում է հանել մի այսպիսի կրքոտ եղբակացություն:

«Վերջին ժամանակներս նկատելի է մի վերին աստիճանի տգեղ երեսուց. մարդիկ առանց քաշվելու գրում են անցյալի մասին այնպիսի շինծու, անհեթեթ, հրեշային բաներ, որոնք միան-

գամայն ապահովուցիչ տպավորություն են գործում անցյալին լավ ժանոթ լնդերցողի վրա»:

Իր այս ամբարտավանին հատուկ հանդուգն եզրակացությունը ամբողջովին վերագրածնելով իրեն՝ «անցյալին լավ ծանոթ» Դարաշյանին, ևս սրանով գալիս եմ հայտարարելու ի լուր ամենքի, որ Գևորգ Դարաշյանի բրոցյուրում իմ մասին գրածը սկզբից մինչեւ վերջին տողը բացարձակապես ստորյուն է ու զառամած ուղեղի հետևանք:

Իմ այս բացարձակ մեղադրանքը Դարաշյանին՝ ապահովված է փաստերով, փաստաթղթերով ու վկաներով... այժմ ևս դիմում եմ իսկությանը:

1) Աշակերտական խմբակը Գանձակում իր գոյությունը սկսել է ոչ թե 1883 թվի աշունքից, այլ 1885/6 ուսումնական տարուց, ինչպես այդ մասին ճշտորեն հիշատակված է իմ «Կհնսագրականի» մեջ:

2) Աշակերտական խմբի այդ ժողովներին ոչ միայն մասնակցել եմ, այլև 20-ական կոսդ. անդամավճար եմ ավել:

3) Աշակերտական խմբակի այդ ժողովներին ևս սկսել եմ հաճախել 1885 թվի նոյեմբերի 30-ից, շաբաթ երեկոյան, ուր առաջին անգամ հանդիպել եմ խմբակի մշտական հետևյալ անդամներին:

ա) 8-երրորդից Տեր-Միքայելյան եղբայրներին (Լևոն և Միքայել), որոնցից Լևոնն այժմ Անդրեվովիկասյան երկաթուղիների վարչության անդամ է Թիֆլիսում, Միքայելը՝ բժիշկ Բաբյում:

բ) Մամիկոնյան երեխ եղբայրներին (Ալեքսանդր և Տիգրան), որոնցից Ալեքսանդրը պրովիզոր է, Տիգրանի՝ ուր և ինչ լինելը չգիտեմ:

գ) Մուրադյան Միհնասին (8-րդցի), այժմ բժիշկ Թիֆլիսում:

դ) Տեր-Սահակով Աղաջանին (7-րդցի), վաղուց մեռած:

ե) Մելիքով Սերյոժային (Պուլունց) իրավաբան, և

զ) Գևորգ Դարաշյանին, Հին մենշեկի:

4) Աշակերտական խմբի ժողովները կանոնավոր հաճախել եմ ամեն շաբաթ երեկոներին, 1885 թվի նոյեմբերի 30-ից սկսած մինչև 1886 թվականի մարտի 6-ը, այսինքն՝ մինչև գիշմաղիայից հեռանալու օրն ու Թիֆլիսի ապահովում ծառայության գալս:

5) Ռեֆերատ ևս գրել ու կարդացել եմ այդ խմբակի ժողովում 1886 թվի հունվարի 18-ին շաբաթ երեկոյան, օգտվելով Բաֆֆիի գործերից («Կայծեր» և այլն), որովհետև նալբանդյանի «Երկ-

բագործությունը», որից խմբի անդամները պատվիրեցին ինձ օգտավել՝ Գանձակում շդանվեց:

6) Թե՛ ժողովները հաճախելիս, թե՛ ոեֆերատ գրելիս ես եղել եմ ոչ թե 14—15 տարեկան, այլ 19—20 տարեկան, որովհետև ես ծնվել եմ 1866 թվին և Կովկասում առաջին դինորակոչության հնաբարկվել 1887 թվի նոյեմբերին:

Սակայն Գ. Ղարաջանը իր բրոցյուրում դիտմամբ պակասեցնում է տարիքս նրա համար, որպեսզի «Հափազանց անզարդացած աշակերտին» անկարող համարի ժողովի պատվիրած ոեֆերատը գրելու:

7) Եղբայրը կեռն և Միքայել Տեր-Միքայելյանները գիմնազիայի 8-րդ դասարանը ավարտել են ոչ թե 1883/84 ուսումնական տարվա ամառը, այլ 1886 թվի ամառը: (Այս մեկն էլ թող իրենք եղը. Տեր-Միքայելյանները վկայեն): Հենց այս մեկ փաստը բավական է, որ ամբողջովին ոչնչանա Ղարաջանի կեղծ ու շինծու հյուսվածքը տեղի ունեցած ժողովների տարեթվի մասին, մանավանդ որ հենց ինքը՝ Ղարաջանն էլ իր բրոցյուրում (եթես 32) խոստովանում է, թե Հավաքությները տեղի ունեին 8-րդ դասարանի գիմնազիստներ Տեր-Միքայելյանների բնակարանում, որտեղ ապրելիս է եղել ինքը:

8) Մի ուրիշ ավելի զորեղ փաստ, որ գալու է հաստատելու «աշակերտական անկեդալ խմբակի ժողովներին» իմ մասնակցած լինելն ու ոեֆերատ գրելը, այդ հետևյալ մանրամասնություններն են, որ հանում եմ իմ՝ 40—42 տարի սրանից առաջ օրեցօր գրած բազմահատոր օրագրերից (1884 թվի սեպտեմբերից մինչև 1893 թվի վերջը):

Հիմա ես խոսեմ մեր «անկեդալ ժողովներում» կարդացած գրվածքների մասին:

ա) 1885 թվի դեկտեմբերի 5-ին առաջին անգամ կարդացվել է խմբի անդամ Ալեքսանդր Մամիկոնյանի մի պատմվածքը «Աղքատի ձայնը չելավում» վերնագրով ու վերլուծվել:

բ) Նույն թվի դեկտեմբերի 21-ին, շաբաթ երեկոյան, կարդացվել է Գևորգ Ղարաջանի (ականջը կանչի) «Ի՞նչ է լեզուն, մասնաւորապես հայ լեզուն մեղ համար» թեմայով ու վերլուծվել:

գ) 1886 թվի փետրվարի 8-ին, շաբաթ երեկոյան, կարդացվել է 8-րդցի կեռն Տեր-Միքայելյանի ոեֆերատը՝ «Դաստիարակությունը ընտանիքում» վերնագրով ու վերլուծվել:

Ահա այս բոլորը, ինչ կարդացվել է այդ ժողովներում, եթե

ՀՅԱՀՎԵՆՔ <18>85 թվի դեկտ. 7-ին, շաբաթ երեկոյան, «Հյուսիսափայլից» կարգացած ու վիճարանության նյութ դարձրած «Կնոք անառակության մասին» և այլն:

9) Բացի այս մանրամասնություններից, ես պնդում եմ, որ Գ. Ղարաջանը նույնիսկ շփոթում է իր Գանձակ գալու տարին. Գանձակ նա եկել է ուսուցչական պաշտոնով ոչ թե 1883 թվին, այլ 1884—85 ուսումնական տարվա սկզբին, երբ փակլեց Գանձակի հայ միակ դպրոցը (1885 թվի փետրվարի 23-ին):

Այսպիս ուրեմն՝ Գանձակում նրա կազմակերպած ուսանողական-աշակերտական խառն ժողովների մասին 1883 թվի աշնան սկզբին ոչ մի խոսք չի կարող լինել, ոչ էլ այն մասին, թե «այդ ժողովներին մասնակցել են Համալսարանական ուսանողներ, ինչպես բանանցեցի Արամ Եպիսկոպոսյանը և ուրիշները» (խոսքը «Քաշալի» մասին է, որը իսկի շի էլ մասնակցել. իսկ հետաքրքիր է, այն ուրիշները ուվեհ՞ր են, կամ գոյություն ունեի՞ն նրանք արդյոք):

10) Մեր «անլեզարդ ժողովները» կրել են սովորական ինքնակրնության և ինքնազարդացման բնույթ, և զդիտեմ, ո՞ր ցավից բռնված Ղարաջանը վիճում է այս փաստն ու մեր համեստ աշակերտական ժողովները դարձնում «առաջին անդրանիկ անլեզարդ հեղափոխական խմբի» ֆիլիալը, իրեն էլ կարգավորում նրա «Հիմնադիրն ու կազմակերպողը»:

Աշակերտական նման ժողովներ ութսունական թվականներին թե՛ Բաքվում, թե՛ Թիֆլիսում և թե՛ Շուշում՝ որքա՞ն կուզեք... ի՞նչն է ստիպել մեր սնապարծության հիվանդությամբ տառապող Արկոմեդին պարծենալ Գանձակի պիս մի հետամնաց քաղաքի կարճատև աշակերտական ժողովներով, որի անդամներից շատերը (Տեր-Միքայելյան և Մամիկոնյան եղբայրները, նույնիսկ Մինաս Մուրադյանը) գլխով տասնապատիկ բարձր էին, խելոք ու զարգացած՝ քանց Ներսիսյան դպրոցի նորավարտ մի հայ վարժապետ, որը «ազգի գոյությունը պայմանավորում էր լեզվով» և որը իրեն երևակացել է «աշակերտական ուսանողական (?! անլեզարդ խմբի հիմնադիրն և կազմակերպիչը»:

Վերջացնելով ասելիքս, ես մտածում եմ, եթե 20—22 տողում իմ մասին դրածով Գ. Ղարաջանը թույլ է տվել այսքան խարդախումներ ու ստեր, ապա երևակայում եմ, թե որքան կեղծ ու շինծու բաններ կունենա հերյուրած ու իրեն վերագրած մեր ճարպիկ կոմբինատորը իր այս բրոցյուրում, մանավանդ, որ այդ «հայ անդրանիկ հեղափոխական Անդրկովկասում խմբակի» Հիմնադիրներից ոչ մեկն էլ կենդանի չէ այսօր, որ կարտղանար ստուգել մեր Քաջ Նազարի «ստույգ ու օբյեկտիվ հիշողությունների» իսկությունը...

ԲԱՅ ՆԱՄԱԿ «ԽՈՇՇՐՋԵՑԻ ԴԱՐՍՅԱՂ» ԹԵՐԹԻ  
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Թույլ տվեք մեր թերթի միջոցով Հայոնել իմ խորին շնորհակալությունը պետական-վարչական այն դեկավարներին, կուսակցական պատասխանատու ընկերներին, այլև ներկա եղող այն աշխատավորներին, որոնք ի մի գումարված Ստեփանակերտի Պետական թատրոնում, պատիվ արին ինձ՝ Առաջաձորի գյուղերիտ գպրոցը կոչել իմ անվամբ:

Դպրոցներ իմ անունով կոչելն առաջին անգամը չէ, սակայն ինձ համար գերազանցապես պնտհատելի է այն, որ նման պատիվ ստանում եմ Հեռնային Ղարաբաղում, Հորս ծննդավայրում, Հայրենիքում, բանվոր հորս, որի արյունը կրում եմ Հպարտությամբ. իմ երակներում:

## **<ԵԼՈՒՅԹ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԲԱՆՑԱԿՈՒՄ>**

— Մենք, ընկերնե՞ր, ուրախանում ենք այսօր, ուրախանում ենք, որովհետև ուրախ մարդիկ ենք՝ մեկ, բոլշևիկ ենք՝ երկու, և շինարար ու ստեղծագործող ենք՝ երեք:

Մենք, բոլշևիկյան Հին սերունդի անդամներս, կատարել ենք մեր գործը և հասցրել մեր ձեզ. մեր երեսը պարզ է. ուրիշն գուք էլ այնպես պետք է աշխատեք, որ ձեր երեսն էլ պարզ լինի հետադար սերունդների առաջ:

ՍՈՑՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՎՈՒՏՏՈՒՐԱԿԱՆ  
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱԶԱՆ Է

Միջազգային հեղափոխական ու պրոլետարական գրողների պլենումը, գումարվելով Ուկրաինայի կարմիր մայրաքաղաք Խարկովում, առիթ ծառայեց ինձ՝ է՛լ ավելի մոտիկից ծանոթանալու Ուկրաինայում ծավալվող սոցիալիստական շինարարության և կուլտուրայի զարգացման հետ:

Ուկրաինայի հերոսական պրոլետարիատը, աշխատավոր գյուղացիության հետ միասին, առասպելական էնտուզիազմով առաջ է տանում իր սոցիալիստական հաղթական շինարարությունը բոլոր ֆրոնտներում:

Սոցիալիստական շինարարության զուգընթաց Ուկրաինայում կերտվում է ըստ ձեր ազգային, ըստ բովանդակության պրոլետարական նոր կուլտուրա: Գրականությունը, թատրոնը, երաժշտությունն ու գեղարվեստի մյուս ճյուղերն արտահայտում են պրոլետարական, աշխատավոր մասսաների պայքարը հանուն սոցիալիզմի վերջնական հաղթանակի:

Միջազգային հեղափոխական ու պրոլետարական գրողների պլենումի գումարման փաստը Խարկովում հանդիսանում է կարևոր լծակներից մեկը՝ է՛լ ավելի ուժեղացնելու ինտերնացիոնալիստական կապը կապիտալիստական երկրներում պրոլետարիատի դիկտատուրայի համար պայքարող հեղափոխական պրոլետարական գրողների և Խորհրդային Միության պրոլետ-գրական ջոկատների միջև:

— Կեցցե՞ Խորհրդային Ուկրաինան, — Խորհրդային Միության հացի աղբյուրն ու կաշեգարկան:

— Կեցցե՞ համաշխարհային Հոկտեմբերի գրականությունը:

1905 թիվը

(Թուրքիկ ակնարկ)

1905 թվի Հեղափոխությունը բանվորական մասսաների գիշեցության կոփման և նրանց հեղափոխական տրամադրությունների կազմակերպման դարբնոցն էր:

Այս դարբնոցում հեղափոխական կրակը ավելի ու ավելի բորբոքվեց, երբ ցարական արսուլուափամը չարաշար պատժվեց ուսույալունական պատերազմի (1904—1905 թվ.) ընթացքում և նրա հինգ թվի հունվարի 9-ին տեղի ունեցած արյունոտ վակիսանալիան բացեց բանվորական լայն մասսաների աշքերը:

Հունվարի իննի հետեւանքը պատճառ դարձավ արդյունաբերական ուայոնների արագաթափ կազմակերպման, որոնք ձուլվեցին կուսակցությունների և պրոֆմիությունների մեջ:

1905 թվի ընթացքում կազմակերպված մասսայական հզոր շարժումն արտահայտվեց գլխավորապես ամենօրյա կրկնվող բազմաթիվ միտինգներով ու ամիսներով շարունակվող խլրտուն գործադրուներով ամբողջ Ռուսաստանում: Այս թվի ընթացքում տեղի ունեցած ալստամբությունները Օդեսայում, Լոնդոն, «Պոտյումիկն» գրահանավում, բարիկադային կոիվները Փետերբուրգ—Մոսկվայում և այլուր, պատմական խոշոր իրադարձություններ են:

Մի հսկայական ստորերկրյա հրաբուխի ժայթքման և ահազանգի սիդնալներ էին սրանք, որոնք պիտի ոտքի կանգնեցնեին ողջ երկիրը՝ տապալելու տիրող ոեժիմը՝ ատելի ցարիզմը: Ու դրա համար էլ ալեկոծվում էր ողջ երկիրը:

Հենց այդ հինգ թվին էր, գարնանը, երբ մեր կուսակցության երրորդ համագումարում ընդունվեցին «զինված ալստամբություն», ոպրոլետարիատի և զյուղացիության դիկտատորա» լոգունզները:

Գործադրությունը ծավալվում էր բուռն թափով և հասավ իր պա-

գաթնակետին սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, երբ ընդհանուր գործադուլին սկսեցին մասնակցել երկրի բոլոր երկաթուղիների և փոստ-հեռագրական արհմիությունները։ Եղան օրեր, երբ կանգ առավ ամբողջ Ռուսաստանի զարկերակն անգամ՝ դադարեցին բոլոր էլեկտրական լուսերի կայանները, և աշխարհիս մի-վեցերորդ ժամը իրենից ներկայացնում էր մթան մեջ ընկղմված մի խավար, հսկայական, մոայլ գերեզմանոց։

Եվ միայն այս հզոր շարժումների և հրամայողական պահանջների ձնշման տակ էր, որ ցարական դաժան արսույթությամբ կակացեց ու դիմեց ժողովրդական մասսաների հեղափոխական կամքին և հրատարակեց իր Հոկտեմբերի 17-ի շարաբաստիկ «մանիթեստը»։

Սակայն այս հրովարտակին, որով ցարը «տալիս» էր ազատություն անձի, ժողովների, մամուլի և այլն, — ոչ ոք մեր կուսակցությունից շհավատաց։

Զհավատացի և ես ու Հենց մանիթեստի հրապարակման օրը գրեցի իմ՝

«Հե՞յ, ձե՛ղ մատաղ, բանվոր տղերք,  
Մե՛կ էլ, մե՛կ էլ մի զարկ տվեք...»

բանաստեղծությունը ու նախալովկայի հրապարակում տեղի ունեցած միտինգին կարգացի։

Հինգ թվի Հոկտեմբերը, իհարկե, բոլշևիկյան 1917 թվի Հոկտեմբերը շղարձավ։ Նա դարձավ հինգ թվի հունվարի 9-ի արյունոտ կիրակիների Հոկտեմբերը։ Երբ ցարական կառավարությունը տեսավ հոկտեմբերի մանիթեստից բխած արտոնություններից լայն օգուզելը, որն անխուսափելիորեն պատրաստում է ցարիզմի տապալումը, նա դիմեց սիրած ուսակցիոն միջոցներին՝ ձնշել, խեղուել, մեղունել ազատությունները։ Իր սեհարյուրակային (չերնոսոստեննի) խմբերի մասնակցությամբ կազմակերպեց պոգրոմներ, պատժի էքսպեդիցիաների միջոցով ավերեց քաղաքներ, գյուղեր, շատ խորածանկորեն հցուած պրովոկացիաներ, որոնք վերջանում էին ազգամիջան։ Հայ-թուրքական կոտորածներով, պրովոկացիաներ, որոնց համազարկերի տակ ջնջվում էին բազմաթիվ հեղափոխական մարտիկներ՝ հինգ թվի էնտուզիաստներ։

Այս պոգրոմների, կոտորածների նպատակն էր ահարեկումն ստեղծել ժողովրդական մասսաների մեջ, կասեցնել հեղափոխության թափը և նրան նորից փոխարինել միապետության կայունությունը։

Սակայն Պետերբուրգի պրոլետարիատը քնած չէր: Նա կազմեց բանվորական <պատգամավորների> խորհուրդը՝ երբ հակածեղափոխության վիշտավը նորից վեր հանեց գլուխը և շնորհիվ ցարական ոստիկանության ու ժանդարմերիայի՝ սկսեց մասսայական ձերբակալությունները:

Տեղի ունեցավ «վերջին և վճռական», դեկտեմբերի 7—20-ի բարիկադացին կոիվ:

Այդ օրվանից հինգ թվի հեղափոխության անիվը սկսեց հետագործել, իսկ ուսակցիան՝ հետղետե ուժեղանալ:

Ճիշտ է, 1905 թվի հեղափոխությունը իր տված հարյուր-հազարավոր դրհերի հետևանքով պարտվեց, սակայն նա դարձավ առաջին ազատագրական էտավը 20-րդ դարի մեծագույն Հոկտեմբերյան հեղափոխության, նրա պատմության նախօրյակը, Առևսաստանի՝ դարավոր շղթաների մեջ կաշկանդված ժողովրդի ազատագրության առաջին ծիծնանակը:

1905 թիվը հեղափոխական մարքսիստների նախապատրաստական դպրոցն էր, պրոլետարիատի կոփման առաջին դարբնոցը և հին կոմոմիստների ամենալավ ուսուցիչը:

ՄԻՒՋՉՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՆ  
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒԽՄ

Այժմ, երբ լրացավ անդրանիկ հայ լեզալ սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան «Կայձ» թերթի հասնելինքամյակը, ավելորդ չէր լինի նրա պատմությունը կապի մամուկի տարեգարձի հետ, տալ նախ նրա սկզբնավորության համառոտ տեսությունը և ապա սրա հետևորդ բոլշևիկյան լեզալ մամուկի (հայերեն լեզվով) հետագա գործունեությունը ժամանակագրական կարգով:

«Կայձ» անդրանիկ լեզալ ս<ոցիալ>-դեմոկրատական> թերթի առաջին համարը լուս տեսավ 1906 թվի ապրիլի վերջին<sup>1</sup>, կուսակցության շորրորդ միացյալ համագումարի նախօրյակին:

«Կայձ»-ի անվանական խմբագիրն՝ այն ժամանակ դեռևս մինչեւ Սրամայիս երդնկյանն էր. խմբագրական կոլեգիայի անդամները բոլշևիկներից՝ «Կայձ»-ի խմբագիր Ստեփան Շահովյանը, հետագայում նաև Սուլեյն Սպանդարյանը, Սարգիս Կասյանն ու Խումարյանն էին, մնանշելիկներից՝ Զարացյան և Սեդրակ Բանվորյանը, մնացածներս մշտական պաշտոններ ունենալով զանազան հիմնարկներում և անկարող լինելով ամբողջ օրը նվիրվել թերթին. Հաշվվում էինք որպես թերթի մոտիկ աշխատակիցներ: Օրինակ. Ս. Խանոյան, <Ռ.> Դաշտոյան, Մուշեղ Տիրացյան, Գր. Վարդանյան և այլք համարվում էին թերթի մոտիկ աշխատակիցներ: Աշուան Խումարյանը թերթի ֆինանսական ու տպագրական գործիքարիչն էր, տողերին գրողը՝ «Կայձ»-ի բանաստեղծ ու «Կայձ»-ի գրադարանի ղեկավարը, այլ խոսքով «Կայձ»-ին կից այն բանվորական գրադարանի, որը հազարներով արտապատմ էր «Կայձ»-ի նյութեր ու բրոշյուրներով հրատարակածը տարածում բանվորական հայ մասսաների մեջ:

Գրադարանի հրատարակած առաջին բրոշյուրը դա Ստ. Շահովյանի «Ազգացին հարցը և սոցիալ-դեմոկրատիան» էր, ապա

Քրուկեցի «Թող կորչեն սոցիալ-դեմոկրատները»։ Կառուցկու (1905 թվականի հեղափոխությանը)՝ մարքսիստ Կառուցկու) «Հայրենապետությունը» և «Հեղոփոխությունը Ռուսաստանում» և մի շարք ուրիշ բրոշյուրները<sup>2</sup>:

Այդ ժոտ երկու տասնյակ առանձին բրոշյուրներով հրատառակությունները, լուսու տեսնելով «Կայծ»-ին կից «Բանվորական գրադարան» անվան տակ՝ տասնյակ հազարներով արտադրվել են «Կայծ»-ից ու տարածվել հայ կիսապատճենակից, անգամ կիսագրադիտ բանվորական մասսաների մեջ ու այդպիսով հետաքրքրություն առաջ բերել, ընթերցասիրության ծարավ վառել այն բանվորական մասսաների մեջ, որոնք կղզիացած խեղդվում եին դաշնակների նացիոնալիստական մինուրատում և որոնց անհրաժեշտ էր աղատագրել ազգային կուսակցությունների թունավորող վարակիչ ազգեցությունից:

Թե՛ «Կայծ»-ի հրատարակման և թե՛ սրան կից գրադարանի ինիցիատիվան, չպիտի մոռանամ ավելացնել, որ պատկանել է Ստեփան Շահումյանին, նրա հիմնական ֆոնդը կազմել է մոտ մի հազար ոռութի, որով և հրատարակվել են այս երկու օրգանները:

Այսքանը «Կայծ»-ին կից անգրանիկ հայ լեդալ բանվորական գրադարանի մասին, որը հետագայում ունեցավ իր շարունակությունը:

Ի՞նչ գեր կատարեց, սակայն, ինքը՝ «Կայծ»-ը, առաջին լեդալ այդ հայ սոցիալ-դեմոկրատական թերթը, որի շուրջը ժողովված էին ժամանակի հայ ամենալավ հեղափոխական մարքսիստները՝ հանձինս Շահումյանի, Սպանդարյանի և մյուսների՝ «Կայծ»-ը հայերեն զեղվով հրատարակվող բոլշևիզմի ղեկավար օրգանն էր ամբողջ Կովկասում։ Նրա ձայնը հասնում էր Կովկասից դուրս անգամ։

Ժամանակակից հեղափոխական հրատապ հարցերից բացի, «Կայծ»-ն ուժեղ ու անողոք պայքար էր մղում դաշնակցական օրդանների դեմ, որոնք ժամանակ, խաժակ-թոփչյան-ջամալյանների օրերով, բավականին ուժեղ էին, մանավանդ հայ-թուրքական կոտորածների ընթացքում, որ կազմակերպում էր մոտեցող ուհակցիան։

Դաշնակցականները «հմայք» էին ձեռք բերել ժողովրդական մասսաների հետամնաց խավերում ոչ միայն իրենց կովի միջոց դարձրած տեռորներով, այլև մհծատիրաժ մամուլով ու ղեկավար

Հրապարակախոսներով: Եվ ահա այդ բոլոժուական գողիարի գեմը՝ որը մինչ «Կայծ»-ի լույս աշխարհ ընկնելը բառիս բուն իմաստով ահարեկել էր ոչ միայն առանձին անհատների, այլև ամբողջ կաղմակերպությունների, ենուամ է մանկահասակ պրոլետարական Դավիթը, հանձին «Կայծ» հայ անդրանիկ բոլցեփելյան թերթի և մի այնպիսի շեշտակի պարստազարկ հասցնում դաշնակների կենտրոնական թերթին, որ սա առաջին սուր հարվածն զգալով՝ տագնապի և շփոթի դրության է մատնվում, և իր անզորությունը ցուցագրելով, բացի լայնաշուրթ հայհոյանքից, ոչինչ պատասխանել չի կարողանում:

Ինչպես ասացի, դաշնակների թանին թթու ասողները մինչ ոյզ ենթարկվում էին տեսորի: Բայց «Կայծ»-ի այդ խիզախ ելույթը միանդամայն պատռեց դաշնակների, այդ կեղծ սոցիալիստների. Հայ բոլոժուազիայի մառկերիստական կուտակցության դիմակը, մերկացնելով նրանց ազգայնական թունավոր էնտիթյունը, միանդամայն ապացուցելով, թե դաշնակցությունն է, որ մթագնեցնում է պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը, անշատում նրան մյուս ազգերի պրոլետարական կազմակերպություններից. կովեցնում իրար հետ ու այսպիսով թուացնում միահամուռ ուժերով կովելու մեր կամքն ընդհանուր թշնամուր — ցարի և բոլոժուազիայի գեմ: Հիմա այս բոլորը մեր օրերում որոշ շափով հնացած հանկացողություններ են, մինչեռ 1906 թվին սրանք մարտական լողունգներ էին և կովելու զենքեր՝ հակառակ դասակարգն գեմ, կամ դասեր, որով պիտի կրթվեր նոր գիտակցության եկող հայ բոլշևիկացող բանվորը:

Այսպիսի մի երկարաժեկ մերկացումներից հետո, որ շարունակվեց մինչև «Կայծ»-ի փակվելը, դաշնակների «Հմայքը» հայ բանվորական մասսաների աշխում — ժողովրդի ասած — քոռ գոռջի արժեք անդամ շունեցավ:

Մենք էլ հենց դրան էինք ձգտում: «Կայծ»-ի արածը մի սարսափելի հարված էր դաշնակցության համար և մի հայտնարերություն՝ կեղծ սոցիալիստներին տապակելու համար ժողովրդական լայն մասսաների աշխում: «Հեղափոխական», «Հայ ազգն ազատագրող սուրբ դաշնակցությունը» ընդմիշտ կորցրեց իր ազգային «խորհրդավորությունը» և այնուհետև գիտակցության եկող հայ բանվորության համար դարձավ կեղծ դրամ:

Այսպիս, մի կողմից առաջին հայ լեզար սոց. դեմ. «Կայծ» թերթի մերկացնող ու դաշնակներին անողոք հալածող ուղղությու-

նը, ամյուս կողմից «Կայծ»-ին կից բանվորական գրադարանի տասնյակ հազարներով տարածվող բրոցյուրները հայ բանվարության մեջ՝ ուշքի բերին նրան, անջատեցին դաշնակցական խարեբաններից և սպիտակիկներից, որոնց դեմ այնքան ուժեղ էր «Կայծ»-ի պայքարը, և մոտեցրին հեղափոխական մարքսիզմին:

Այս և նման աշխատանքներ հեշտ գործ չէր այն ծանր, ազգայնական թույնով վարակված օրերին: Եթե նկատի տնինանք 1906 թվի ընդհանուր գրությունը, ապա կպարզվի «Կայծ»-ի կատարած պատմական մեծ դերը, բանվորական <ան> մասսայի հայկ-  
<ական> հատվածի դիտակցության հասցնելու սկզբնական շրջանում և մենք առաջնության փաստն, անշուշտ, մամուլի պատմության մեջ պիտի հատկացնենք առաջին հայ լեզու ամենօրյա թերթ «Կայծ»-ին, որի գոյությունը, ճիշտ է, կարճ էր՝ ընդամենը 4—5 ամիս, բայց բուռն էր, կատաղի, անողոք և շատ արգասավոր:

Ուժեղացող ուեակցիան փակեց ամենօրյա «Կայծ»-ը, որին հետևեց նրա անմիջական զավակ «Նոր խոսք»-ը. սակայն սա էլ երկար կյանք չունեցավ, և մի երկու ամսական հետո Թիֆլիսում լույս տեսավ «Հոսանք» ամենօրյա թերթը: Սրա անվանական խմբագիրը Պետրոս Մնացականյանն էր (Պիեր), զեկավար խմբագիրը՝ Արշակ Զոհրաբյանը և մոտակա աշխատակիցները՝ Ռուբեն Քաթանյան, Միմինո-Դեմոկրատյան և այլք: «Հոսանք»-ի պատմական նշանակությունը կայացավ նրա մեջ, որ նա շատ ազողակի պայքար մղեց դաշնակցական հոսանքի դեմ և տապալեց դաշնակներին՝ երկրորդ պետական դումայի պատվիրակ ուղարկեց Ա. Զոհրաբյանին: Այնուհետև «Կայծ»-ի և «Նոր խոսք»-ի աշխատակիցները Բաքու գնալով այնտեղ շարունակեցին «Կայծ»-ի գործը, սակայն նրանց հրատարակած «Օրեր», «Սոցիալ-Դեմոկրատ» և այլ հայ օրգանները երկար կյանք չունեցան:

1909 — 11 թվականներին հայ սոց-ինդոկրատական լեզու մամուլը գատապարտվում է լուսթյան, շնորհիվ գաղանացած ուեակցիայի, և 1911 թվի վերջերին միայն տեսնում ենք հայ բոլցիկյան «Նոր խոսք» ամսագրի երեսն գալը Բաքվում: Թիեզ նրան հիմնադիրները՝ Ստ. Շահումյան, Կարինյան և այլ ընկերներ էին, սակայն շնորհիվ ծանր ուեակցիայի՝ նա «Կայծ»-ի տրագիցիոն բոլցիկյան թափը չուներ: «Նոր խոսք»-ը գրական-գեղարվեստական, քննադատական և քաղաքական մի ամսագրի էր և այդպիսին էլ մնաց ու հինգ-վեց միացյալ համարներ թողնելուց հետո, նույնպես չքացավ ասպարեզից:

Հայ բոլշևիկյան մամուլը լուս երկար ժամանակ մինչև «Պայտար» թերթի լուսու տեսնելը, որը «Կայծ»-ի պես ունեցավ իր պայծառ շրջանը: Սակայն մինչև «Պայքար»-ի լուսու տեսնելը 1914 թվի փետրվարին անսպասելիորեն լուս ընկան «Կարմիր մեխակներ» վերնագրով բրոշյուրները, որոնց թիվը հասավ տասին: «Կարմիր մեխակներ»-ի հրատարակիչները հայ գրաշար բանվորներն էին միւզիջից, իսկ Հիմնադիր-խմբագիրը՝ տողերիս գրովը: Պիտի 2 եւտեմ, որ «Կարմիր մեխակներ»-ը հայ գրականության մեջ առաջին կոլեկտիվ պրոլետարական գրական-գեղարվեստական ժողովածու—ալմանախ էր, ուր մամնակցում էին միայն այն ժամանակվա մեր պրոլետարողները (Հ. Շակոբյան, Դեղուշկա-Մելիք (արձակագիր), Անուշավան Վարդանյան, Արագի, Կամարի, Մարո, Առաքան, Սե-Դա՝ Խանոյան և այլք):

Սա 1914 թվի մամուլի համար մի նորություն և ցանկալի երեւլույթ էր և իդուր չէր, որ մեր կուսակցության կենտրոնական օրգան «Պրավդա»-ն Պիտերից, Ս. Շահումյանը Բաքվից շտապիցին ողջունել «Կարմիր մեխակներ»-ի երեսն գալն այն սոսկալի ծանր ոհակցիայի օրերին<sup>3</sup>:

1915 թվի վերջերին Թիֆլիսում լուսու տեսավ «Պայքար»-ը՝ սախ շաբաթական մեկ անգամ, ապա՝ երեք և վերջն էլ՝ ամենօրյա: Նրա շուրջը խմբված էին մեր հին ծանոթները—բոլշևիկ գրականագետների կազմերը: «Պայքար»-ի խմբագիրները — Ս. Խանոյան, Ա. Մոռավյան, Ա. Երզնկյան և Հ. Աղատյան, մեծ հաջողությամբ մաքառում էին դաշնակիդմի դեմ: Նրա գլխավոր աշխատակիցներից՝ Ամիրան և Ստեփան Շահումյան, ոչնչացնող իրենց հոգվածներով միանգամայն վարկարեկել էին սուտ սոցիալիստների կուսակցությունը: Քիչ սլաքներ շթռան նաև դեպի սպեցիֆիկների բանակը, ազգայնական գրողների հայցեին:

«Պայքար»-ի շրջանը ոչ թե հայ բանվորությանը գիտակցության բերող շրջան էր, այլ արդեն գիտակցության եկած բանվորների հասունության ու հեղափոխության մասին: Իդուր չէին անցել, ուրեմն, բոլշևիկյան մամուլի նախապատրաստական ջանքերը: Նրանք բանվորական մասսաները բերել հասցրել էին իսկական բոլշևիկյան գիտակցության շեմքին, իհարկե այդ բանին քիչ չէր օգնել և իմպերիալիստական պատերազմը, բայց բոլշևիկյան լրագրության և գեղեցիկ գրականության անդրանիկ առաքյալները ահագին դեր կատարեցին հայ ժողովրդական և բանվորական մասսաների դասակարգային գիտակ-

ցության արթնացման, խորացման և ըմբռնման մեջ, նրանց Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության պատրաստի դիմավորելու և սպասարկելու մեջ:

Հայերեն լեզվով բոլշևիկյան մամուլը՝ գերծ լինելով ամեն տեսակի ազգայնական բացիլներից, կրթել ու դաստիարակել է պրոլետարիատի հայկական հատվածին բոլշևիկյան անաղարտ տրադիցիաներով, և մենք բոլշևիկյան մամուլի այսօրվա տարեդարձին իրավունք չենք համարում լուսության տալ պատմական այս կառեւոր փաստը, որպես հեղափոխության նախապատրաստական փառավոր մի շրջանի տեսություն:

ՀՈԴՎԱԾՆԵՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ  
ՄԱՍԻՆ

1889—1936



<ԲԱՔՎԻՑ>

Հսում ենք, որ Նոր-Նախիջևանից հրավիրում են պ. Կարա-Մուր-զային՝ հանձնելու նրան տեղական մի քանի երաժշտական գործեր, և, ինչպես ասում են, պ. Կարա-Մուրզան մտադիր է համաձայնություն հայտնելու։ Շատ ցավալի է, որ Բաքվի հայ հասարակությունը պիտի զրկվի պ. Կարա-Մուրզայից, որը ահա հինգ տասնի է գործուած է Բաքվում երաժշտական ասպարեզի վրա և մեծ արդյունքներ է ցույց տվել։

Ա. Ի. Ա. Ն Ե Գ Բ Ի

(Քննադատական-կենսագրական տեսություն)

«Աշխատել ես դու», — հարցնում է Աղա Նեղրին իրենով հափշտակված երիտասարդին իր հրաշալի բանաստեղծություններից մեկի մեջ և, երբ իմանում է, որ սիրահար երիտասարդը զուրկ է աշխատելու ընդունակությունից, իսկուն վռնդում է իր մոտից՝ համարելով նրան անարժան իր չերմ սիրո և փոխադարձ զգացմունքների: Այդ ոտանավորի մեջ երեան է գալիս իտալունի բանաստեղծություն ամբողջ աշխարհայացքը և ստեղծագործության հիմնական ողին: Նրա սերը երբեք չէ հակված դեպի այն հարուստ բուրժուազասակարդը, որի մեծամասնությունը միայն չոր-ցամաք եսական բարօրության մասին է մտածում. նրա սիրաը ամբողջովին պատկանում է աշխատավոր դասակարդին, և այդ սերը շատ հեռու է կոպիտ, ստոր բնազդումների և թեթեամիտ, անձնական կրքոտության արտահայտիչը լինելուց:

Ամեն ժամանակ և ամեն լուսավորված երկրներում երեան են եկել հայտնի բանաստեղծութիներ, բայց չէ եղել մինչ այսօր գեռ մի այնպիսի օրինակ, որ մի որևէ ջահել կին գրող հենց իր առաջին երգը հնչելուց՝ ճանաչվի հասարակության և մամուլի կողմից, որպես նշանավոր բանաստեղծութի իր հայրենիքի. և, սակայն, այդ բախտը միշտակվում է Աղա Նեղրուն՝ մի ջահել իտալունու, որը ծագումով հասարակ գյուղական դասակարդի զավակ լինելով, կարիքի և վշտերի ազգեցությամբ հարթում է իր համար փառքի ուղին:

Աղա Նեղրին ծնվել է Խոդիսում, 1870 թ. փետրվարի 8-ին: Լինելով գործարանային բանվորի դուստր և դեռ մանուկ հասակում զրկվելով միակ աշխատող շքավոր հորից, նա մեծացավ և սկզբնական կրթությունն ստացավ մոր զեկավարությամբ, որը ստիպված էր նույնպես աշխատել մի բրդի գործարանում, որով

կարողանար և՝ ապրուսալ հայթայթել, և՝ կրթություն տալ իր միակ զավակին։ Խեղճ Աղան ամբողջ օրով սոված, մենակ նստած աղքատ խրճիթում, սպասում էր երեկոյան մոր վերադարձին, որը պետք է ուտելու բան բերեր իրեն համար։ Տասնչորս տարեկանից նա մտնում է կողիում իգական դպրոց, ուր պատրաստվում էին ժաղսվրդական և քաղաքային տւումնարանների համար վարժուհիներ։ 18 տարեկան նա արդեն ստանում է գյուղական վարժուհու պաշտոն Մոտտա-Վիսկոնտի կողման, որը շրջապատված էր ճահճներով և ճահճալի ագարակներով։ Նախանձելի չէր և այստեղ նրա կյանքը՝ վարժուհու պաշտոնում։ Գտնվելով ամենասուզ նյութական դրության մեջ, նա ստիպված էր ստացած 20 լիրա\* ամսականով և՝ ինքը ապրել, և՝ մորը ուղարկել ապրուստ, որն արդեն հիվանդ, ուժասպառ ընկած տանը՝ անկարող էր այլևս աշխատել։

Նվիրվելով վարժուհու վսեմ և ազնիվ կոշման, պայծառ և ժաքուր հավատով բռնկված ապագա գաղափարական գործունեության տեսչով, Աղա Նեգրին իր վարժուհության պաշտոնավարության ընթացքում ևս ենթարկվեց անլուր հալածանքների, զրկանքների, բարոյական և հոգեկան շատ հուզմունքների։ Այնպիսի մի նեխած մթնոլորտում, որպես Մոտտա-Վիսկոնտին էր, վարժուհիների բախտը առհասարակ կապված էր գյուղի մեծերի քմահաճությունից ու դատաստանից։ Վատթար բնակարան, աննախանձելի առճիկ՝ ուշ վճարումներով, մշտական քսու բամբասանք, լրտեսություններ, գոեհիկ վերաբերմունք, անտեղի վիրավորանք, հալածանք, մշտական քրկյուղ՝ պաշտոնով երկրի մի ծայրից մյուս ծայրը փոխվելու, երբեմն սովածություն — ահա իտալիայի վարժուհիների կյանքի ընդհանուր պատկերը, մի պատկեր, որը մեզ, հայերիս, նույնպես լավ ծանոթ է ուսուցչական ասպարեզում գտնողների վերաբերմամբ։

Քսաներեք տարեկան հասակում, այն է՝ 1893 թ. Աղա Նեգրին լույս է ընծայում իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Fatalita» («Ֆատալա» — «Ճակատագիր») վերնագրով, որը թե՛ նյութի նորության և թե՛ պատկերների թարմության կողմից միանդամայն ո՛չ միայն իտալացի գրադեների, այլև ամբողջ աշխարհի ուշադրությունն է գրավում։ Կարճ ժամանակամիջոցում այդ հեղինակին թարգմանում են զանազան լեզուներով և, ահա՛, խուզ-

\* Մի լիրան հավասար է մոտ 50 կոտեկիւ

Հեռավոր Մոտտա-Վիսկոնտիում ապրող աղքատ, մոռացված վարժուհին դառնում է ոչ միայն գրագետների, այլև հայտնի կրիտիկոսների ուշագրության արժանի բանաստեղծուհի, որի ոչ միայն տաղանդով, այլև անձնավորությամբ նրանցից շատերը հետաքրքր քրվելով, շտապում են այցելելու նրան: Մոտտա-Վիսկոնտի այցելողը, այնտեղ անպատճառ գտնում էր բանաստեղծուհուն մի աղքատ խրճիթում, ջարդված պատուհաններով, ուր ապակիներին փոխարինում էր թուղթը. մի փայտե հասարակ սեղան, մի քանի ծղոտի կոտրտած աթոռներ և մի փայտե դարակ, որը ծառայում էր գրքերի պահարանի տեղ — ահա ամբողջ կարասիթը, որը ուներ բանաստեղծուհին: Այցելողին անմիջապես զիմավորում էր սաստիկ թխահեր, թուխ գեմքով, խելացի և մտորող աշքերով բանաստեղծուհին, որի նայվածքում աշքի է ընկնում տարօրինակ հրաշալի արտահայտությունը, որը հատուկ է բոլոր խորը մտածող, խորը զգացող և, ուրեմն, ուժեղ տանջվող բնավորություններին: «Ֆատալիտան» լույս տեսնելուց, սակայն, բախտը սկսում է ժապավագական առաջարկությունը, որը հատուկ է բոլոր խորը մտածող, զգացող և, ուրեմն, ուժեղ տանջվող բնավորություններին: «Ֆատալիտան» լույս տեսնելուց, սակայն, բախտը սկսում է ժապավագական առաջարկությունը, որը հատուկ է բոլոր խորը մտածող, զգացող և, ուրեմն, ուժեղ տանջվող բնավորություններին:

1896 թ. Աղա Նեգրին լույս է ընծայում իր բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն «Տօքրեօ» («Տեմպետ»—«Փոթորիկներ») վերնագրով: Փոթորիկը առհասարակ շատ հարազատ տարր է հանդիսանում երիտասարդ բանաստեղծուհու հոգեկան արտահայտություններին. իր առաջին ժողովածուի, «Ֆատալիտա»-ի մեջ, աշքի է ընկնում Աղա Նեգրու վիխավորապես մի նշանավոր գիծը, այն է՝ հավատը դեպի հաղթանակող, փրկարար և լուսավոր ապագան, հաղթանակը՝ արդարության: Երկրորդ ժողովածուի, «Տեմպետ»-ի մեջ, հավատարիմ մնալով իր սկզբնական իդեալին, նա երևան է գալիս մարտնչողի և պաշտպանի դերում՝ հասարակ ժողովրդի հոգեկան և նյութական շահերի, նա ներկայանում է մեզ որպես մարմնացած բողոք՝ անպաշտպան և ձնշըլված աշխատող դասակարգի:

Այնուհետև Աղա Նեգրու տաղանդը հետզհետե աճում, զար-

գանում է, նրա փառքը տարածվում է ավելի և ավելի հեռում, և Ադա Նեղրու անունը, որպես ժողովրդական վշտերի, հուզվերի, ձգտումների և հոգսերի երգչուհու անուն, մտնում է հոչակավոր գրական կորիֆեյների շարքը:

Սակայն, ամենքի համար անսպասելի Ադա Նեղրին ամուսնում է, և ավա՞գ... ոչ թե իր երգերում փառարանած «ջլուս բազուկներով և թավ կրծքով հասարակ բանվորի», այլ մի հարուստ գործարանատեր ինժեների հետ, որից հետո առժամանակ սկսում է վայելել խաղաղ և փարթամ կյանքի հրապուցները, այս ամուսնությունը շատերը բացարում են նրանով, թե իբր Ադա Նեղրին կամեցավ՝ հարուստի կին դառնալով օդնել իր աշքի առաջ վիստացող աղքատ, թշվառ, օրվա կարիքը զժվարությամբ հայթհայթող դասակարգին:

Այս է, ահա ընդհանուր գծերով վերցրած, Ադա Նեղրու կյանքը, մի կյանք՝ լի պարբերաբար շարունակվող ընթացիկ վլատերով և դառնություններով, որի տեսությունը պիտի գա լրացնելու նրա երգերում հնչվող դաշտավարների հիմնական ողին:

Կարդալով Ադա Նեղրու բանաստեղծությունները, մենք տեսնում ենք, որ նրանք շնչում են անկեղծությամբ և առհասարակ կենդանի պատկերների ճշգրիտ նկարագրությամբ: Նյութը՝ ճնշված, տառապյալ, աշխատող դասակարգն է, նրանց վիճակը, նրանց հոգսերը, նրանց թշվառ և աղքատ կյանքի նկարագրությունը: Այդ պատկերավոր նկարագրությունների մեջ չկա ոչ մի կեղծ, արհեստական շեշտ կամ փրում ու չափազանցրած զգացմունք. նրանց մեջ, ինչպես կարկաչանու վտակ, ամեն ինչ հնչում է բնականութեն, ինքնարերաբար, ուր արտացոլվում է չահել բանաստեղծութու ջերմ, լուրջ, բովանդակալից հոգին, մի հոգի, որը չափանց շատ է տանջվել, չափազանց շատ է տոկացել, քամելով կյանքի մեջ պատահած բոլոր զրկանքների, բոլոր տառապանքների թույնը և, սակայն, որի հետևանքը եղել է այն, որ նա տաղանդուվոր կերպով կարողացել է բանաստեղծորեն վերարտադրել այն ամենը, որունք բխում են անողոք կյանքի անմիջական իրականությունից: Մի զիծ, որ գնահատելի է, այդ այն է, որ նրա շեշտը, նրա հոգեկան ծալքերի կազմը և երգերի ողին մնացին անփոփոխ և անդավաճան՝ նույնիսկ այն ժամանակ, երբ նա նյութապես բոլորովին ապահովված բախտավոր էր համարում իրեն ընտանեկան հարկի տակ:

Ադա Նեղրու տաղանդը բոլորովին առնական թափ տև կորով

ունի նույնիսկ այնպիսի հարցերում, երբ այդ վերաբերում է սրտի, հոգեբանության. նրա մուսան գլխավորապես զբաղված է թույլերի, նեղալների և հալածվածների կյանքի բարօրության խնդրով. նրա սրտին մոտիկը նրա լուստ մուտ-ը ամբոխն է և աշխատավոր դասակարգի ցավերը, խոհերը, ձգտումները և այդ ձգտումների իրագործման գաղափարը, որպես հարազատ զավակ տառապյաջ ժողովրդի, ապրած նրանց մեջ, համակված իր նմանների վշտերով, նա շատ լավ է ճանաշում այդ ժողովրդի հոգսերի և կարիքների հոգեբանությունը, դրանից առաջացած թշվառության պատճառները, և, որպես այդպիսին, նրա բանաստեղծությունները կարդալիս՝ մենք մի բոպի մոռանում ենք, որ հայտնի բանաստեղծությին միայն իտալիայի տառապյած ամբոխի վշտերն ու հոգսերն են երգում, մոռանում ենք անգամ, որ դրանց հեղինակը մի օտարությէ է. և մոռանում ենք, գլխավորապես, գիտե՞ք ինչու. — որովհետեւ այդ զգացմունքների արտահայտությունը համամարդկային է:

Իրականությունից վեցրած նրա պատկերավոր պոեզիան լեզվի կողմից ևս հնչում է շատ թույլիչ և մի առանձին զրավիչ, փաղաքշող ներդաշնակությամբ, մանավանդ, երբ խոսում է աղքատության, կարիքի և աշխատանքի գաղափարի մասին: Սիրո զգացմունքների արտահայտության մեջ ևս նա շափազանց կրքոտ, անգուսպ և բուռն, անդիմադրելի է:

Աղա նեղրին մինչև 22 տարեկան հասակը ապրել է ծայրահեղական մեջ, բայց երբեք չէ հուսահատվել, երբեք չէ խոնարհվել իր վիճակի առաջ. նրա հավատը՝ թե՛ դեպի իր անձը և թե՛ դեպի մոտ ապագայի արդարության հաղթանակը առհասարակ, նրան ստիպում էր, որպես ինքն է ասում իր բանաստեղծություններից մեկի մեջ. «Հպարտությամբ և արհամարհանքով տանել արտաքին կյանքի պատճառած բոլոր զրկանքները, որոնք առաջանում էին անձուկ կենցաղից». նա լավ գիտեր, որ համարյա միշտ այդպես է լինում բոլոր իսկական տաղանդների վիճակը, նա համոզված էր, որ իր կյանքը լինելու է մի անվերջ շարք՝ վշտի, դառնության և տառապանքների, սակայն երբեք չի՛ զիշի, չի՛ խոնարհվի ո՞չ մի խաբուսիկ հանգամանքի առաջ: Տանջանքի բացակայությունը, Աղա նեղրու հասկացողությամբ, նշան է մեռելության, բուրժուական ինքնաբավականության:

Մի տեղ նա ասում է. «Իմ հնչուն երգը սավառնում է թշվառ, գալկացած ամբոխի վրայով որպես վիրավոր արծիվ, որը ձգտում է դեպի լեռների սառցարանները», սակայն այդ արծիվը արնա-

քամ շի լինում, շի մեռնում, այլ, ընդհակառակը, նրա կոչը հնչում  
է ավելի հաղթական շեշտով, ներշնչելով թարմություն, արիսթյուն  
և եռանդ այն անձանց մեջ, որոնք արդեն վհատված, կորցրել են  
այդ հատկությունները։ Մի այլ տեղ նա փառարանում է «թա-  
վամաղ երկաբի կուրծքը բանվորի և զլուտ բազուկները աշխատա-  
վորի», որոնց շնորհիվ ստեղծվում է ժամանակակից կուտուրան։  
Նա ողջունում է աշխարհիս բոլոր անկյուններում ապրող, պրոե-  
տար-աշխատավոր դասակարգը, այդ հսկա ընտանիքը, որին մի  
օր, վերջապես, պիտի ջերմացնե այն հավիտենական արեգակը,  
որին անվանում է «աստվածային անմահ», պարզ հայացք։ Մի  
ուրիշ տեղ էլ, իդեալականացնելով աշխատանքի գաղափարը,  
ասում է. «Աշխատեցե՛ք և մի՛ վհատիք, մի՛ ընկճվիք երբեք ձեր  
վիճակի ծանրությունից. այդ վիճակի ստեղծողը, լավ թե վատ,  
ինքներդ եք լինելու. պահպանեցե՛ք սրտի մաքրությունը և բազուկ-  
ների ամրությունը, եղե՛ք անհողողդ և վճռական ձեր ձգտուննե-  
րի մեջ. ներշնչվեցե՛ք հաստատ կամքի զորությունով, հավատա-  
ցե՛ք և սիրեցե՛ք, որովհետև սերն է հովանավորելու ձեր ուժերը,  
մանավանդ, դառնության ժամին»։

Այս եռանդուն և թարմություն ներշնչող խոսքերը, ինչպես այդ  
նկատում են մի քանի կրիտիկուններ, բոլորովին հեռու են դասա-  
կարգային փոխադարձ ատելության զգացմունքներ գրգռելուց.  
Ընդհակառակը, նրա միշտ եռանդուն, խայթող ու թարմացնող տա-  
ղանդի առաջ՝ մի գերբնական հմայքով, խոնարհվել է նույնիսկ  
բթամիտ, պարարտացած և ինքնարավական բուրժուան, որը հե-  
տաքրքրությամբ կարդալով Աղա Նեղուն, աղքվել է նրա հեղինա-  
կավոր խոսքերի ճշմարտությունից։

Իր անդրանիկ երգը, որը դժվար է հնմթարկվում հայկական  
տաղաշափության, սկսվում է այսպես. «Օ՛, կուշտ, մեղկ աշխարհ,  
աշխարհ բթամիտ բուրժուանների, ապրած ու սնված կեղտ ու տիղւ-  
մի մեջ, լիքը ճարպալի մեծատուններով և շահել, լարիշ կոկոտ-  
կաներով՝ այդ սակավարյուն թշվառ կանանցով, որոնք զնում են  
աստծո տաճար լոկ նրա համար, որ այստեղ տեսնեն ժամադիր  
եղած սիրեկաններին. դո՛ւ, ստոր ու մեղկ, խաբերա աշխարհ, ճրդ-  
նում ես խլել ինձնից լուսատու վես իդեալը. ա՛յ վախկոտ ստրուկ,  
ուղում ես զարդել ազատ թերս՝ ձգտող ու տովոր ազատ եթերին,  
տե՛ս, դու օձի պես փշշում ես, սողում իմ ոտների տակ, իսկ ես  
թոշում եմ, սավաննում օդում ազատ ոգու պես. դու անմտորին  
օրդ ես մաշտամ բամբասանքների ու ստելու մեջ, իսկ ես ապրում

եմ և կյանքը երդում, փառաբանելով կյանքի իմաստը. ոու զբաղված ես քու, անամոթ զրպարտությունով, մարդկանց խարելով, իսկ ես քեզ ատում, արհամարհում եմ ու փախչում քեզնից խորին զզվանքով: Երկնակամարից ահա ժպտում է ինձ պտեզիայի ոսկե արել իրա հմայիշ գույն-գույն ցնցուղով, մինչ ոու սողում ես ցեխ ու տիղմի մեջ դլուխդ կախած. աշքերս հառած փայլուն աստղերին ես ընթանում եմ առաջ և առաջ, անզեն, միայնակ ու մաքառում եմ ճակատագրիս դեմ, և քանի որ զու էլ կատաղորեն հալածում ես ինձ, այնքան ուժով է կրծքից ժայթքում մարզարեական սիրո պատգամը: Ընթացի՛ր, ուրեմն, կուշտ, թերահավատ, մեղսալի աշխարհ՝ մութ, կասկածիլի, մոյոր ուղիովդ, այդպես կդիմես դեպ խավար ու մահ... Դիդի՛ր ոսկիներ, մեղկ հաճույքներդ շոյելու համար. իմ սուր, անողոք, շեշտակի երդի ծանր հարվածով կապտակահարեմ ես քո երեսդ:

Այս փրգը, լինելով անդրանիկը, սրանով էլ որոշվեց Ադա Նեգրու ողին, ժանրը և աշխարհայացքը, այս երգն էր, որ դարձավ Հիմք նրա ապագա գրական դործունեսության:

Ադա Նեգրու ծնվելու տեղը ի՞սկ, որ Իտալիան պիտի լիներ, մի երկիր, որ հանձին նրա գտավ իր ժամանակակից իսկական ցավերի, հոգսերի արտահայտչին, իր տառապանքների հարազատ երգչունուն: Մի հանգամանք, որ բարձրացնում է Ադա Նեգրոն թե՛ իր հայրենակիցների և թե՛ օտարների աշքում մինչև աշխարհուակ կոչվելը, այդ այն է, որ ճա՛ այն, ինչ ասելու ուներ, ասաց ծամանակին և այն էլ շատ տաղանդավոր կերպով. ամբոխի, աշխատող դասակարդի վերքերը հասունացել, ցավերի, վշտերի բաժակը լցվել էր, բայց արտահայտող, բժշկող շուներ և հանձին Ադա Նեգրու էլ գտնվեցավ այդ ամենի արտահայտիչը:

Չնայած, որ ծնվելու օրից Ադա նեգրին, բացի աղքատությունից, հալածանքներից և գառն զրկանքներից, ո՛չ մի միտիթարություն չեր տեսել, այնուամենայնիվ, նա իր երգերում միշտ մնաց լավատես (optimiste) և անուղելի իդեալիստ. սկզբում, ճիշտ է, նրա երգը հնչում է թախծալի, տխոր, մահվան բայլերդի պես, սակայն հետզհետե նա փոխվում է կենսուրախություն և արիություն ներշնչող բնության հետ ներդաշնակված սրանչելի ակորդների:

Նրա կարծիքով հեռու չէ այն ապագան, երբ աշխարհը իրենից կներկայացնի ընդհանուր համամարդկային խաղաղություն և անպայման արդարություն: Չեն լինի եղբայրասպան պատերազմներ, որոնք բանական մարդուն հասցնում են անբան, անասնական

գրությունից է՛լ ավելի ստոր մի դրության. կվերանան աշխարհու երեսից անդիմությունը և անտարբերությունը անպաշտպան և ճնշը-ված աշխատող դասակարգի վերաբերմամբ:

Ահա այդ կլինի վաղուց մեզ խոստացած և այսքան երկար սպասված մարդկային ընդհանուր բախտավորության իդեալը<sup>\*</sup>:

\* Այս քննադատական-կենսագրական ակնարկը կազմելիս օգտվել ենք.

<sup>1</sup> «Русская мысль» ամսագրի մի քննադատությունից:

<sup>2</sup> А. Н. Е-вч-ի Հրատարակած «Եօրբա և լոբօվ»—գրքույկից Ադանեգրու մասին:

<sup>3</sup> В. Шулятиков, Стихотв. Ада Негри գրքույկից:

Այս վերջին երկու հրատարակություններից էլ հնաց մենք օգտվել ենք, մեր թարգմանությունները համեմատելով բնագրի հետ՝ մի խտալացի պարունի աշակ-ցությամբ:

## ԻՄ Պ.Ս.Ս.ՍԽԱՆԸ

(Նամակ խմբագրության)

«Նոր-Դար»-ի 201 համարում պ. Հարություն Թումանյանցը, գրախոսելով իմ թարգմանությամբ լույս տեսած Աղա Նեգրու բանաստեղծությունների ա. պրակը, ճգնում է շլինքիս փաթթաթել այն, թե իբր, գրքիս ծանոթության մեջ վկայած լինեմ, որ այդ թարգմանությունները կատարել եմ Շուլյատիկով, «Стихотв. Ада Негри» գրքովից: Զգիտեմ ինչո՞ւ պարոնը միայն Շուլյատիկովին է հիշատակում և նրա վրա էլ հենվելով՝ յուր նկատողությունները անում ամբողջ գրքովի մասին, քանի որ այդ նույն ծանոթության մեջ ես պարզորեն հայտնել եմ, որ իմ թարգմանությունները, թվով 25 ոտանակոր, կատարված են ոչ թե մի, այլ երկու հրատարակությունից, այն է՝<sup>1)</sup> «Борьба и любовь» գրքովիցից Ա. Ի. Ե.-վ.-ի թարգմանությամբ, որից վերցրել եմ 22 ոտանակոր և 2) Վ. Շուլյատիկովից, որից վերցրել եմ միայն 3 ոտանակոր՝ ա) «Ճակատագիր» («Fatalita»), բ) «Ողջույն քեզ կարիք» («Buon di miseria») և գ) «Թառամած համբույր» («Bacio mortuo»):

Բայց պ. Հարություն Թումանյանցը, իմ թարգմանությունները ցանկանալով անպատճառ «քննադատել», երևի ուրիշ աղբյուր չէ ունեցել ձեռքի տակ, գուցե նույնիսկ պարոնը չգիտե էլ, որ բացի Շուլյատիկովից Աղա Նեգրուն թարգմանել և առանձին գրքով էլ հրատարակել են այնպիսի ուսու հեղինակներ, ինչպես, օրինակ տ. տ. Վաղսոն, Կավոս-Դեխտերովան, պ. պ. Շկովկը, Թանը և վերջապես «Борьба и любовь» գրքի հեղինակը, որը յուր անունը թաքցրել է Ա. Ի. Ե.-վ. համեստ ստորագրության տակ:

Այսպես թե այնպես, միանգամ ևս հայտնում եմ պարոնին, որ այն երկու ոտանակորներից և ո՞չ մեկը, որոնց նա իբրև «քըննադատական նմուշ» գետեղել է «Նոր-Դար»-ում, չէ՞ վերցրած Շուլյատիկովից:

Այս փոքրիկ նախաբանից Գետո անցնեմ իրողության: Պ. Թու-  
մանյանցի գոռով վզիս կապած Շուշյատիկովը «Փողոցի տղան»  
բանաստեղծությունը իտալերենից թարգմանել է այսպես.

Если я вижу по улице грязной,  
Блузой рванной прикрыт,  
Весь перепачкан, походкой развязной  
Мальчик — красавец спешит.

Ա. Խ. Ե-վ-ը, որից և օգտվել եմ ես, թարգմանել է այսպես.

Я вижу, как снует по улице он людной,  
Почти полунасой и целый день не евший,  
Мальчишка уличный смеясь над долей трудной  
Грязь знающий, не раз и своровать сумевший.

Ես թարգմանել եմ, իտալական բնագրի հետ համեմատելով, այս-  
պես.

Տեսնում եմ հաճախ ինչպես մարդաշատ լայն փողոցներով  
թրեւ գալիս փողոցի տղան ամբողջ օրերով.  
Սոված, կիսամերկ, արհամարհելով իր սև վիճակը,  
Զէ՛ խորշում կեղտից, ո՛չ գողությունից մանուկ հասակը.  
Ինչպես տեսնում եք, վերը մատնացուց արած երկու ուսու  
թարգմանությունները տարբերվում են միմյանցից թե՛ տաղաշա-  
փության, թե՛ կառուցվածքի և թե՛, մասսամբ, հուզնիսկ մտքի կող-  
մից: Թող ուրեմն պ. Թումանյանցն էլ տեսնի, որ յուր բերած օրի-  
նակի վերաբերմամբ արած բոլոր տեսությունները միանգամից  
ոշնչանում են, որովհետև յուր համեմատությունը «Փողոցի տղայի»  
վերաբերմամբ չէ հանել այն աղբյուրից, որից թարգմանել եմ:

Մյուս օրինակի, այն է՝ «Բանվորուհու» (սկարոնի հասկացո-  
ղությամբ իբր բանաստեղծուհին է) մասին խոսելն էլ ավելորդ  
եմ համարում, քանի որ մի անձ, որ չէ ըմբռնել ոտանավորի միտքն  
ու տղին, ինչպես կարող է այդ կտորի մասին կարծիք հայտնել.  
Կարեորն այն է, որ իմ թարգմանած 25 տտանավորից պարոնը  
միայն երկու բանաստեղծություն է օրինակ բերում, այն էլ ո՛չ  
Շուշյատիկովից վերցրած. իսկ այն՝ իմ վերը հիշած Յ ոտանավոր-  
ները, որոնք վերցրել եմ Շուշյատիկովից, նրանց մասին խոհեմա-  
քար լուսաւ է:

Վերաբերվել դեպի մի աշխատանք այդպիսի թեթևամտությամբ՝  
թույլ կտա այնպիսի մի քննադատ, որը ոչ մի առնշություն չունի

քննադատության հետ և որը, գաղափար չունենալով գեղեցիկ գրականության մասին, ղեկավարվել է սև միտումներով:

Այնուհետև պ. Թումանյանցը գտնում է, որ եթե ես ավելորդ աշխատանք եմ հանձն առել իմ թարգմանությունները իտալական բնագրի հետ նորից ստուգելու մի իտալացու աշակցությամբ, այդ կնշանակի «ուրիշի ձեռքով կրակից շագանակներ հանել»: Սխալ հասկացողություն:

Չբավականանալ Ա. Ի. Ե-Յ-ի թարգմանությունով, որը համարվում է ոռուաց մեջ ամենահարազատը և ամենամոտիկը բնագրին (թեև ոչ ամենահաջողը տեխնիկայի կողմից) և դիմել իսկական աղբյուրին՝ նորից ստուգելու, թեկուղ հենց մի իտալացի պարոնի աշակցությամբ, այդ ոչ թե ուրիշի ձեռքով կրակից շագանակներ հանել է նշանակում, այլ ցուցը է տալիս, որ թարգմանիչը լրջությամբ է վերաբերվել յուր գործին և ոչ այնպիս վայրիվերո, որպես յուր «կրիտիկոսը»:

Գալով այն նկատողության, որ պարոնը մի կամ երկու անհաջող կաղմած հանգերից զատ ոչ մի արժանիք շգտավ իմ թարգմանությունների մեջ, այդ բանում չենք մեղադրում պ. Հարություն Թումանյանցին, դրա համար հարկավոր է ունենալ և մի քիչ էլ բանաստեղծական հոտառություն, որից անպայման զուրկ է պարոն Հարություն Թումանյանցը: Հավատացած եմ, որ պարոնի սրտավ կլիներ, եթե բնագրի հարազատությունը, տենդենցիան, մտքերի և հոգու ճիշտ ըմբռնողականությունը փոխարինեինք հարուստ հանգերի, բայց ես միշտ հրաժարվել եմ և այսուհետև էլ հրաժարվում եմ այդպիսի զոհաբերությունից, «նախանձելի և շիկարնի» (պարոնի խոսքն է) հանգարանությունը թողնելով հանգերի վարպետ պարոն Հարություն Թումանյանցին, եթե միայն նա երբեկցից կմտածի Աղա Նեգրուն թարգմանելու: Արանով էլ միակում եմ իմ ասելիքը:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎՃԱԼՅԱՆ ԹԱՏՐՈՆ

Մի քանի բանվոր-երիտասարդների մեջ գեղեցիկ միտք է հղացել՝ կազմել սիրողների մի խումբ և Ավճալյան թատրոնում տալ հանրամատչելի ներկայացումներ:

Այդպիսի ներկայացումներից ահա առաջինն էր, որ ներկայացվեց կիրակի, ամսիս 17-ին Խաղում էին Ա. Աբելյանի «Մարդող ճրագներ»-ը և «Մկիմի հարսանիքը»:

Մենք կանգ շենք առնի պիեսների բովանդակության վրա. կասենք միայն այսրանը, որ գործի ձեռնարկութները հենց առաջին անգամից հաջող ընտրություն էին կատարել՝ հասարակ ժողովրդին տալով այնպիսի պիեսներ, որոնք մոտ են նրա սրտին և նույնիսկ բխում են նրա կյանքի անմիջական իրականությունից:

Հույս տևանանք, որ գործի ձեռնարկութները այսուհետև ևս նույն սկզբունքով՝ կղեկավարվեն՝ սույնանման ոգով՝ գրված պիեսներ տալով՝ ժողովրդին:

Գալով գերակատարներին, կասենք այն, որ սիրողները իրանց ամբողջ եռանգը լարել էին բավականություն պատճառելու ժողովրդին, որ այդ օրը եկել լցրել էր թատրոնի սրահը:

Այնպիսի սիրողներ, ինչպես օրիորդ Ռոկանյան և պ. Ահարոնյան, նույնիսկ կարող են խաղալ մեծ բեմերի վրա՝ առանց փշացնելու իրանց գերերը:

Հիշվածներից օրիորդ Ռոկանյան՝ Մարթայի և Անթառամի դերում շատ զգացված և բնական խաղաց. իսկ պ. Ահարոնյան՝ սափրիչ Մինասի և Մկիմի դերերում բավականին զվարճացրեց ներկա եղող հասարակությանը: Վատ չէին ծերունի Հակոբի դերում՝ պ. Ստեփանյան և Անդրեյի դերում՝ պ. Խաչիկյան. ափսոս միայն,

որ Հենց առաջին քայլից անբնական տոն էին վերցրել խոսակցության։ Օր. Սիրուշ և պլ. Բաբայան թույլ էին. վերջինս իր դերը լավ չգիտեր. պլ. Կարապետյան բոլորովին իր դերում չէր. լովելասները այնքան անկեղծ չէին լինում իրանց սիրո արտահայտության մեջ, ինչպես պարոնն էր։ Այսպես թե այնպես, ցանկանում ենք սիրողներին աջողություն, մանավանդ, որ երեք տարի ընդհատումից հետո տեսնում ենք Ավճակյան թատրոնում վերսկսված ժողովրդական ներկայացումները։

## ԱՎՃԱԼՅԱՆ ՐԵՖԻ ՍԻՐՈՂՆԿՐԸ ԹՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Ավճալյան բեմի սիրողները տոկունությամբ շարունակում են հրենց ներկայացումները:

Կիրակի, ամսիս 9-ին էլ, նրանք խաղացին Շիրվանզադեի շՊատվի համար» դրաման՝ մասնակցությամբ պ. Վանշիրի:

Պ. Վանշիրը բեմ երևալուց՝ իսկուցն ցուց տվեց, որ ինքը փորձված և շնորհալի գերասան է. և իրոք, Անդրեաս էլիզբերյանի պատասխանատու դերը սկզբից մինչև վերջ նա տարավ առանց մի որևէ անհարթության: Ուժեղ և բավականին դրամատիկ էր նա այն տեսարանում, երբ գիշերվա ուշ ժամին իր դստեր սենյակից թթարյանի թողած դոկումենտներն էր հափշտակում:

Օր. Ուկանյան, որ միշտ բարեխիղճ է և միշտ լավ գիտե իր գերերը, այս անգամ ինքն իրան գերազանցեց: Այս օրիորդը, որ գեռ շատ ջահել սիրող է, քանի գնում առաջադիմում է և լավ հույսեր է տալիս:

Մարգարիտի դժվար դերը նա տարավ շնորհալի գերասանունու հմտությամբ. վերջին, հոր հափշտակած դոկումենտները ետ պահանջելու տեսարանում, նա այնքան սրտաշարժ խաղաց, որ հուզեց հանդիսականներին: Ափսոս միայն, որ օրիորդի ձայնը շունի այն ուժն ու կորովվիությունը, որ անհրաժեշտորեն պահանջվում է խիստ դրամատիկ ատեղերում: Այդպիսի տեղերում նրա ձայնը ավելի շուտ քնքուշ է, զգայուն, քան ուժեղ, հուզվող, մարվող, բեկրեկուն է, քան աղղող, ներշնչող, հաղթանակող:

Մյուս սիրողներից աշքի էին ընկնում տիկ. Հասմիկը, որը խաղութ էր էլիզբերյանի կնոջ դերը. իր գերը լավ ըմբռնելով, նա կարողացավ հաջող ներկայացնել որպես քնքուշ, բարի մայր և տանջված կին-ամուսին: Օրիորդ Աստղիկը Ռողալիայի դերում խաղում էր առանց հուզվելու և համարձակ, չնայած որ առաջին ասդամն էր բեմ դուրս դալիս:

Պ. Մակարյան՝ Սուրենի դերում կենդանություն էր տալիս բեմին իր տեմպերամենտով, ափսոս միայն, որ իր դերը լավ չէր սովորել:

Պ. Ահարոնյան՝ Սաղաթելի դերում սպասած տպավորությունը շթողեց ու շարդարացրեց մեր հույսերը, նա հենց սկզբից կարծես տրամադրված չէր խաղալու: Գրիմը շատ վատ էր:

Պ. Բարայանը Օթարյանի դերում... ի՞նչ ասենք այս երիտասարդի մասին. պարոնը, թեև սովորել է դրամատիկական կորսերում, այնուամենայնիվ, մնացել է բոլորովին անմշակ. նա շատ է աշխատում լավ խաղալ, բայց նրա խաղը միշտ դուրս է գալիս անբնական, բռնազրութիկ. զոռով հուզվում է, շափազանց շատ է բարձր ու քաշ անում հոնքերը, աջ ու ձախ տատանում ուսերը, շարունակ ձեռքերի մեջ ճմլում գլխարկը և այսպիս սենտիմենտալությունների մեջ ընկնելով, հին շկոլայի դերասանություն է անում, որից հարկավոր է անպատճառ հրաժարվել:

Պ. Շիրինյանը Բագրատի դերը լավ գիտեր, խոսում էր շտապշտապ, բայց պահպանեց անսամբլը:

Մնացած սիրողների մասին բավական է ասել, որ պ. Ճանիկյանը լավ էր հաշվապահի դերում, պ. Վ. Բեծանյան՝ ծիծաղաշարժ սպասավորի և օրիորդ Սիրուշ՝ կարծես թմրած աղախնութերում:

<ՏԻՄԿՈՎԱԿՈՒ «ՊԱՇՏՊԱՆ» ԴՐԱՄԱՅԻ  
ԲԵՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

Զորեգարթի, ամսիս 16-ին, թիֆլիսի ժողովարանի դահլիճում հայ բեմի սիրողները, մասնակցությամբ տիկ. Մայսուրյանի, խաղացին Տիմկովսկու «Պաշտպան» դրաման՝ 5 գործողությամբ:

Մենք առանձնապես կանգ չենք առնի պիեսի բովանդակության վրա. կասենք այսքանը միայն, որ այս դրամայի հերոսները՝ երկու ջահել ամուսիններ, իրանց բարդ հոգեբանական կողմերով անհուն, բայց հանդիսաւ սիրո, լարված հուզումների և մի շարք տիսուր թյուրիմացությունների վարագուցր էին բացում հանդիսականների առաջ:

Դրաման կատարվում է մի կտակի և ժառանգության հաստատման առանցքի շուրջը և վերջանում կնոջ թունավորմամբ, շնորհիվ այն հանդամանքի, որ երկու ամուսինները թյուրիմացությամբ իրար կասկածում են սիրելու մեջ, իրար չեն կարողանում հասկանալ. իսկ չեն հասկանում, որովհետև մեկը նրանցից, կինը՝ ամուսնոց պահանջում է սեր և միայն անձնվեր սեր, իսկ մյուսը, ամուսինը՝ իր պատվի վերականգնումն ու աղնվություն:

Տիկին Մայսուրյան, որ կատարում էր «Պաշտպանի» կնոջ գերը, սիրո բուռն հուզումների, կանացի խանգոտության արտահայտության մեջ երևան եկավ որպես մի խոկական արտիստուհի: Սկզբից մինչև վերջ նա տանչվեց բեմի վրա և այնքան անկեղծող րեն, որ նույնիսկ երբեմն գունատվում, երբեմն կարմրում էր, և մենք տեսնում էինք, թե ինչպես նրա արտասահմած ամեն մի խոսքը իր արտահայտությամբ սահում, արտացոլում էր նրա դեմքի վրա: Առանձնապես շեշտում ենք նրա սքանչելի խաղը որբերի կտակի ոչնչացման և թունավորման տեսարաններում:

Պր. Վանշիր, որ կատարում էր «Պաշտպանի» դժվար դերը, որպես թատերասեր, այս բարդ հոգեկան հուզումների պրոցես

տարավ՝ առանց հոգնելու և արտիստիքաբար. նրան թեև տեղ-տեղ պակասում էր սիրո արտահայտությունների համար տաք տեմպերամենտ, այնուամենայնիվ, դժբախտության և խորը տանջանքների, արտահայտությանց մեջ անկեղծ էր և սիմպատիկ:

Մյուս դերասաններից աշքի էր ընկնում պ. Բերոյան, որը հրավիրված էր սիրողներից մեկին փոխարինելու. նրա ձկուն ինտոնացիան, փափուկ ձայնը և մաքուր առողանությունը ցուց են տալիս, որ պարոնը լավ դերասան է, խաղում էր Ելենայի նախկին սիրահարի դերը և անսամբլին աջակցեց իր խաղով:

Տիկին Զամուկյան, որ խաղում էր ոռու բարի պառավ ծծմոր գերը, լավ էր ըմբռոնել այդ դերը և նույնպես պահպանեց անսամբլը:

Տիկին Հասմիկ՝ Աննա Դավրիլովնայի դերում, օրիորդ Ռոկանյան՝ Նատաշայի և պ. Մակարյան՝ Ալեքսանդրի դերում այնքան ցածր տոն էին վերցրել խոռակցության, որ սպասած տպավորությունը շստացվեց և նրանց խաղը սառն անցավ:

Ինչ վերաբերում է օր. Շաղինյանին՝ Սերաֆիմայի դերում, նա շափազանց շատ էր «քրքրվում» բեմի վրա և նույնպես ցածր խոսում. օրիորդը կարող է լավ խաղալ, եթե ուշադրություն դարձնի իր այդ պակասության վրա:

Մյուս սիրողները թույլ էին: Սիրողների անհաջողությունը մասսամբ պիտի վերագրել գուցե այն հանգամանքին, որ այս ներկայացումը շտապով աջողեցրած մի գործ էր, որովհետև աֆիշաներում խաղացողների անունների տեղ մենք հանդիպում էինք բոլորովին ուրիշ անունների:

Ներկայացումից հետո տեղի տանեցան պարեր, որոնք տևեցին մինչև ժամը 2-ը գիշերվան:

<ՇԽԱԼԵՐԻ «ԱՎԱՋԱԿԱՆԵՐ»-Ի ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ>

Հինգշաբթի, սեպտեմբերի 24-ին, Զուբալովի ժողովրդական-  
տան սրահում Հայ. Դրամ. Ընկ. խոսմբը, դերասան Արմենյանի-  
մասնակցությամբ խաղաց Շիլլերի «Ավազակներ» դրաման:

Գլխավոր դերերը բաժանված էին այսպիս. Ֆրանց Մոռի՝ Ար-  
մենյան, Կարլ՝ Սևումյան և ծերունի կոմս Մոռի՝ Ալավերդյան:

Այս անգամ հանդիսականների ուշադրությունը բևեռված էր  
Արմենյանի, որպես Թիֆլիսում առաջին անգամ Ֆրանց Մոռի դերը  
խաղացողի վրա, և խոստովանած, նա մեծ պատվով և ազողու-  
թյամբ դուրս եկավ այդ ժանր և պատասխանատու գործից. Ճիշտ է՝  
առաջին գործողության մեջ նա մասսամբ կեղծ տոն էր վեցրեկ,  
բայց՝ հետեւյալ գործողություններից սկսած, նա այնպիսի հոգեկան  
հուզումներ արտահայտեց, որ մենք չեինք կարող սպասել, թե այն  
փոքրիկ մարմնից կարող էր պոռթկալ այնպիսի ուժեղ և փոթոր-  
կալից արտահայտություններ: Նա՝ մարմնացած շարությունը, նա-  
խանձր, կյանքից դառնացածը՝ ամբողջովին ապրում էր բեմի վրա,  
իսկ վերջին՝ խղճի խայթոցի և խելագարման հասած տեսարանում՝  
ուղղակի հուզեց հասարակության:

Արմենյանը Ֆրանցին չէ ներկայացնում, որպես ֆիզիկապես մի  
այլանդակի՝ տգեղ, մեծ քթով, սապատով և այլն, որի արտաքին  
տգեղությունը պիտի գար ներդաշնակելու նրա հոգու ներքին տգե-  
ղության. նա Ժխտում է այն հասկացողությունը, թե մարդու ար-  
տաքինը նրա հոգու արտահայտիչն է. նրա հասկացողությամբ՝  
կյանքի բացասական երևույթներն են, որ մարդուն դարձնում են  
շար, անգութ, ոխերիմ և հոգով այլանդակ: Հենց այդ հասկացողու-  
թյամբ էլ ղեկավարվելով, նա Մոռին չէր տվել տգեղի գրիմ, և՝ պի-  
տի ասենք, նրա միմիկան այնքան մտածված և ճկուն էր, որ կար-  
ծում էիր, թե արտիստը զուտ զղերից է կազմված:

Այստեղ մի ավելորդ անդամ ևս ցուցց տվեց Արմենյան, որ ինքը խորին կերպով է կարողացել ուսումնասիրել ֆրանցի գերբ, որպես ուրույն շկոլա անցած մեկը:

Կարել Մոռրի գերում Սկուլյան հենց բեմում երեալուն պես մեզ վրա թողեց համակրելի և խորիս Մոռրի տպավորություն. Նրա թավ, ուժեղ ձայնը կարծես շոյում էր լսելիքդ. բայց հետեւալ գործողություններից արդեն զերասանը հոգնածության նշաններ էր ցուցց տալիս. Նրա ձայնը նույնիսկ տեղ-տեղ դավաճանում էր իրան: Այնուամենայնիվ նա կարողացավ մինչև վերջ տանել իր գերբ, որպես Կարել Մոռր:

Ալավերդյանը ծերունի կոմսի գերում շատ հաճելի հայր էր: Հոր կենտրոնացած, քարացած գեմքի սառնությունը, ծերությունից գողդոցուն շրթունքներն ու ձեռքերը ներկայացրեց շատ ճշգրիտ և բնական, թեև տեղ-տեղ նկատվում էր նույնպես հոգնածություն և ձայնի թուլություն:

Տիկին Հասմիկ շատ համակրելի Հերման էր, աշխուզժ, կայտառ, սիրուն ժպիտով:

Մյուս խաղացողներից օր. Սոլովյան՝ Ամալիայի գերում, Դավիթիսանյան՝ Շվացցերի և Տեր-Առաքելյան՝ Շոլիդելրդի գերում, իրենց խաղով նպաստում էին խաղի աջող ընթացքին, թեև ակներեն էր, որ օր. Սոլովյանի ուժերից վեր է այդպիսի ուժեղ դրամատիկ դերեր հանձն առնելը:

**<ՅԱԽԵԿԵՎԻՉԻ «ԹԱԳԱՎՈՐ» ՊԻԵՍԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ>**

Եթե գպրոցը կրթական մի վայր է մատաղ սերնդի համար, ապա թատրոնը ոչ պակաս կրթական վայր է մեծերի համար, որպես նրանց միտքն ու հոգին ազնվացնող, ալարուբող մի գործոն, և եթե շատ անգամ հասարակության կուշտ մասը (խոսքս թատերասերների մասին չէ, իհարկէ) գալիս է թատրոն միայն հաճուզքի և ժարսողությունը կանոնավորելու համար, ապա՝ այդ հասարակության սոված մասը, վերջին կոռհեկը տալով, գալիս է մտավոր և բարոյական մուսնդ սուանալու համար: Մեր գերասանները կասեն, որ իրենք էլ հենց այդ բանին են ձգտում, եթե ոչ ընդհանրապես, դոնե մասնավորապես. սակայն կնկատենք, որ նրանք համարյա աշքաթող են արած այդ աշխատավոր մասի պահանջները հենց այն տեսակիտից, որ հաճախ չեն ներկայացնում այնպիսի պիհեներ, որոնք մոտիկ լինեին աշխատավոր մասսայի կյանքին ու մտքին: Բարոյախոսական, վերացական քարոզներով չէ', որ այդ արհամարհաւծ տարրը պիտի ազնվացնի իր սիրտն ու հոգին, այլ նրա իրականությունից բխած վիշտն ու զրկանքը, հարստահարվելն ու ձնշվելն է, որոնցով պիտի սնվի նրա միտքը, ըմբռնի իր շարն ու բարին. Հարկավոր է տալ նրան այնպիսի պիհեներ, ուրեմն (Դորկիից, Զիրիկովից, Հառուպամանից), որպիսին Յուշկեվչի «Թագավոր» պիհեն է, որը կիրակի երեկոյան ներկայացվեց Զուգալովի ժողովրդական տան սրահում առաջին անգամ: Լրագրի սլունակները թույլ չեն տալիս մեզ մանրամասն հաշիվ տալու այս պիհենի բովանդակության և 20-ից ավելի խաղացող գերակատարների մասին. կասենք կարճ և ամփոփ, որ նրա իդեան աշխատանքի և կապիտալի կոխին է:

Հարուստ հրեա՝ շոգիաղացի տեր Գրոսմանը չէ զիջում 200-ից ավելի բանվորների առաջադրած 8-ժամյա բանվորական աշխատվելի բանվորների առաջադրած 8-ժամյա բանվորական աշխա-

տանքի պահանջին, որից հետո բանվորները դործագուլ են հայտարարում այս փողի թագավորին. վերջինս կատաղում, փրփրում է, մանավանդ երբ իմանում է, որ դործագուլի գլխավոր զեկավարը իր ուսանող որդի Սաշան է, և՝ փակելով շոգեաղացը, պատրաստվում է արտասահման գնալու: Բանվորների մի մասը վրիժառու լինելու համար՝ հրդեհում է շոգեաղացը, իսկ մյուս՝ այսպես անվանված շարելքրբեմերների մի մասը դաշխ Գրոսմանի ուսներն է ընկնում՝ թողովթյուն հայցելու: Թեև պիեսի մեջ կա միտինգի տեսարան, ուր բանվորներ Յոսկան և Միրոնը «Հավելյալ արժեքի» մասին են խոսում, այնուամենայնիվ, Հեղինակը կամեցել է կապիտալի և աշխատանքի կովի հարցը լուծել հրդեհով, տարերացին ձևով, որ անբնական երեւյթ պիտի համարել իրականության մեջ:

Պիեսի մեջ գլխավոր գերը հատկացված է Գրոսմանին, որը խաղում էր Մեռմյանը, և պիտի խոստովանած՝ պարոնը մինչև վերջ հարթ և հմտորեն տարավ այս ծանր և դժվար գերը: Նրան թեև տեղտեղ պակասում էին հրեական խոսակցության շեշտերը (ակցենտ), այնուամենայնիվ՝ այս պակասությունը չէր նսեմացնում պարոնի աշող խաղի ամբողջությունը:

Մեռմյանին աջակցում էր տիկին Զարել՝ Գրոսմանի կնոջ՝ եղելի գերում: Նա իր հրեական ակցենտով նպաստում էր խաղի աշող ընթացքին: Միրզյան՝ գերձակ Գիրշի գերում, իր տեղումն էր: Նրա խոսակցության շեշտերը, ավելի քան մի ուրիշի, պիտի հրեական լինեին, որպես տրադիցիոն մովսիսականի: Նույնը կասենք և Մելիքյանի մասին, որը բավարար կերպով տարավ կողշակար Շմուլի գերը: Ալահվերդյան՝ Գրոսմանի կառավարչի, տիկին Հասմիկ՝ Ժենիայի գերում իսկապես չփշացը այս դժվար պիեսայում իրենց գերերը: Առանձնապես կանգ ենք առնում օր. Զմշկրանի՝ Գրոսմանի քենու և Արքարատյանի՝ Պետեայի վրա, որոնք այդ երեկո ցույց տվին աշքի ընկնող շնորհք:

Թատրոնը լեփ-լեցուն էր հասարակությամբ, ուսկից մի այնքան էլ հետ դարձան տոմսակ շգանվելու պատճառով: Զենք կարող շհայտնել մեր գոհումակությունը ուեմիսյորի հմտության և գեկորացիաների նորության համար, ինչպես, օրինակ՝ շոգեաղացի հսկուենքը իր ծխնելույզներով և այլն:

<Մ. ԳՈՐԿՈՒ «ՀԱՍԱԿՈՒՄ» ՊԻԵՍԻ  
ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

Ժողովրդական տան թատրոնում ժողովրդի սրտին մոտիկ մի պիես ևս տրվեց այս ամսի 17-ին: Խաղում էին Մաքսիմ Գորկիի «Հայակում» պիեսը:

Իր այս գործով Գորկին չէ շոշափում սոցիալական պրոբլեմներ, ինչպես օրինակ «Արեհի զավակներ» («Дети солница»), «Թշշնամիներ» («Враги») և այլ պիեսներում: Նա, թելագրված հումանիտար գովացմունքներից, պահանջում է միայն, որ մարդը հարգվի մարդկանցից, որպես մարդ, թեկուզ նա լինի տիղմի մեջ ընկվածված բռոյակը: Ավելի առաջ գնալով, նա ասում է, որ եթե ընկածը հավատում է, որ գեղեցիկ կերպով առված սուտը թեթևացնում, ամռում է մարդուն իր անկաման ժամանակ, թողեք որ նա ապրի այդ գեղեցիկ ստից առաջացած իլյուզիայով:

Հստ Մաքսիմ Գորկիի, ինքը՝ մարդը չէ պատճառը, որ ընկնում է կյանքի տիղմի մեջ, այլ միշավայրի սոցիալական պայմանները: Հետևապես, որքան էլ ձախորդ հանգամանքները մարդուն դարձնեն արբեցող, գող, անբարոյական և այլն, դարձյալ նրա մեջ մնում է և կմնա «հախիկին մարդկանց» լավագույն գովացմունքներից մի մասնիկ, և եթե այդ այդպես է՝ պետք է, ուրեմն հարգել մարդուն անկաման օրում անգամ:

Դուք սենեկ եք, իշարկե, այս պիեսի մեջ «հախիկին մարդկանց» հանձինս Սատինի, բարոնի, տերասանի, նաստիայի և այլն: Նրանք, թեև այժմ կյանքի հատակի տիղմումն են ընկվածված, բայց դարձյալ ամեն մեկը նրանցից հուզվելու, ոգեորվելու և վերածնվելու ձգտումներ է ցույց տալիս, երբ երեսում է նրանց մեջ սուրբ մարդը՝ ձամփորդ կուկան: Կուկան է, որ գալիս, հուզում, խառնում է հատակի տիղմը, հիշեցնում նրա բնակիշներին իրենց նախկին կյանքի անցած-գնացածը, ողևորում, ապրեցնում նրանց՝ «գեղեցիկ ստի»:

իլլուզիայով և հատակից վեր քաշում, բարձրացնում. Հեռացավ Լուկան, և դուք տեսնում եք, որ տիղմը նորից կուտակվեց հատակում, և «նախկին մարդիկ» դարձյալ ընկղմվեցին հատակի տիղմի մեջ: Այսպես՝ եթե կյանքի արատները մարդուն հասցնեն բոսյակային վիճակի անդամ, պիտի հարգել նրա մեջ մարդուն. ահա այս է պահանջում Գորկին Սատինի բնրանով:

Կարողացա՞ն դերակատարները «նախկին մարդկանց» բերանով արտահայտել այս պահանջը. կասենք, որ այս՝ նրանք բոլորն էլ, որպես ուրույն տիպեր, պահպանեցին անսամբլը և արժանացան ծափահարությունների հասարակության կողմից, որը եկել էցրել էր թարոսի սրահը:

Տվեք այս ոգով շատ պիեսներ, և հասարակությունը միշտ կդակլցնի թատրոնը: Այս կողմից գովելի է ոհմիսյոր Սկումյանի բնտրությունը: Հուսանք, որ նա ապագայում ևս կղեկավարվի նույն ուղղությամբ:

<«ԹԱԳԱՎՈՐ» ՊԻԵՍԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

Երկուշաբթի, Հունվարի 18-ին, Արտիստական թատրոնում խաղացվեց Յուշիկից «Թագավոր» պիեսը, դերասան Հարովթյունանի բենեֆիսին:

«Թագավորը» ժամանակակից այնպիսի պիեսներից է, որ նրան խաղալու համար հարկավոր է ոեժիսյորական հմտություն և լուրջ վերաբերմունք:

«Մշակ»-ում այդ պիեսի ամփոփ բովանդակության մասին մի անգամ արդեն մենք մեր դիտողություններն ենք տվել ընթերցողին, երբ նա խաղացվեց Զուբալովի ժողովրդական թատրոնում Սկուլյանի ոեժիսյորությամբ, բայց հաշիվ չէինք տվել դերակատարների մասին<sup>1</sup>:

Այս անգամ Գրոսմանի դերը վերցրել էր ինքը բենեֆիցիանտը՝ Հարովթյունյան: Նա պետք է ներկայացներ մեզ Գրոսմանին ավելի խրոխտ, անհողողդ կապիտալիստի մի տիպ, որը պահանջվում էր տեսնել բեմի վրա փողի թագավորից. Նրա գրիմը մեզ հիշեցնում էր կանցելիարական շինովնիկին. գալով խաղին՝ թեև նա իր դերը լավ էր սովորել, այնուամենայնիվ, նրա խաղը գուրս եկավ ոչ գունավոր և որոշ պաթետիկ տեղերում՝ ոչ արտահայտիչ. իսկ ընդհանրապես տիպը գործեց տպավորություն և բենեֆիցիանտը ստացավ բուռն ծափահարություններ և մի քանի նվեր:

Տիկին Զարեկ՝ Գրոսմանի կնոջ գերում աննման էր. նրա և իսպան, և գրիմը, և՝ առողջանությունը մեր տեսած էղեններից լավագույնն էր:

Տիկին Մայսուրյան՝ Գրոսմանի քենու գերում սպասած տպավորություն շթողեց. նախ այդ նրա դերը չէր, և երկրորդ՝ շփհանք ինչո՞ւ հարգելի տիկինը հանել էր պիեսայից մի ամենալավ կտորը, ուր Գրոսմանի կնոջ երեսին շպրտելով նրա տված մի ոուբլի ողոր-

մությունը՝ ասում է. «Թողք քո ամբողջ հարստությունից այս ոսկը-լին մնա միայն»:

Շախաթունին ուսանող Սաշայի դերի մեջ՝ առաջին տեսարա-նում, ուր իր միայն երկու, բայց ազգու «Ժենյա», Հակո՞բ» արտա-սանած խոսքերով լրացնում է տեսարանի ամբողջությունը, թույլ էր. վերջին տեսարաններում սակայն նա շատ համակրելի և ցան-կալի Սաշա էր:

Ալիխանյանին բանվոր Միրոնի դերում պակասում էր ոգևո-րությունը. իսկ բանվոր Եռոկայի դերը կատարյալ զավեշտականի փոխվեց շնորհիվ Փիրումյանի, որը կարծում էր թե՝ «Հավելվալ ար-ժեքի» մասին խոսող լուրջ Եռոկաները ընդունակ են անվերջ ցատ-կումների:

Ոսկանյան՝ Պետեայի, Ալահվերդյան՝ կառավարիչ Հերմանի, Միրզյան՝ դերձակ Գիրշի, Զիլինգարյան՝ դաստիարակ Զեցի, տպա տ.տ. Մելիքյան՝ Ժենյայի, Հասմիկ՝ բանվորուհու և Գովազ-յան՝ Ռոզայի դերերում պահպանեցին անսամբլը շնորհքով:

Իսկ Մամիկոնյան՝ Գրոսմանի փեսայի դերում բավականին քնական և աշխատյած էր: Այս տեսարանը առհասարակ իր բազմա-զան ամպլուայի մեջ աշքի է ընկնում դերերի ըմբռնողակա-նությամբ:

Դեկորացիաները բավականին դժգույն էին. Գրոսմանի՝ այդ փողի թագավորի սեղանատունը շատ աղքատ էր իր կահկարա-սիքով:

Թատրոնը համարյա լիքն էր. միշտ այսպիսի պիեսներ միայն կարող են թատրոն քարշել մեր անտարբեր հասարակության:

## <О ПРЕДСТАВЛЕНИИ ПЬЕСЫ «ГУВЕРНЕР»>

Проездом через Караклис я очутился на интересном представлении, в котором артист Арменян должен был выступить в роли мусье Жорси в пьесе Фонвизина «Гувернер»<sup>1</sup>.

Я с нетерпением ожидал, насколько оправдает надежды Арменян в такой ответственной роли на русском языке, и сверх всякого ожидания он оказался превосходным гувернером.

Я видел в этой роли знаменитого артиста Петина и без преувеличения могу сказать, что Арменян нисколько не уступает последнему в тонком понимании и в талантливой передаче роли. Его живая, богатая мимикой и типично-эластичная игра в I и II действиях привела публику в восхищение. Артист удостоился бурных аплодисментов собравшейся русской и армянской интеллигенции, заполнившей помещение театра.

С неменьшим успехом играла г-жа Арменян роль Перепетуи Егоровны, хотя эта роль и не принадлежит к ее амплуа, тем не менее при каждом появлении на сцене она вызывала веселый хохот своей бойкой игрой.

Из остальных артистов следует выделить г. Алиханяна 2-го в роли сына генеральши Вольдемара.

Среди любителей выделялись *m-selle* Карсамова (генеральша) и Тер-Мартиросян (Маша). Последнюю ожидает хорошее будущее, если только она посвятит себя сцене.

Остальные любители в лице Гониеба (отца Маши), Зурабова (дядя), Самуила (кучер) и Агаси дружно поддерживали ансамбль.

Желательно, чтобы Арменян, доставивший присутствовавшей публике столько эстетического наслаждения, выступил в той же роли на тифлисской сцене, тем более, что артист приглашен режиссером армянского театра на предстоящий сезон.

### <«ԳՈՒԿԵՐՆՅՈՐ» ՊԵԽՍԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

Ղարաքիլիսայով անցնելիս՝ ևս ներկա եղա մի հետաքրքիր ներկայացման, որտեղ գերասան Արմենյանը հանդես եկավ մուսյոն Դորսիի գերում՝ Ֆոնվիզինի «Գուվերնյոր» պիեսում:

Ես անհամբերությամբ էի սպասում, թե Արմենյանը որքանո՞վ կարգարացնի հույսերը այդպիսի մի պատասխանառու գերում՝ ուստերեն լեզվով և ավելի քան կարելի էր սպասել՝ նա իրեն դրսեվարեց իբրև հոյակապ Գուվերնյոր:

Ես տեսել եմ այդ գերում նշանավոր գերասան Պետինին և առանց շափազանցության կարող եմ ասել, որ Արմենյանը բոլորով վին չի պիշում վերջինիս գերի նուրբ գրմանման ու տաղանդավոր վերարտադրման մեջ: Նրա կենդանի, միմիկայով հարուստ և տիպիկ-էլաստիկ խաղը I և II դործողություններում հանդիսականներին հիացմունք պատճառեց: Արտիստը արժանացավ լիփ լեցուն դահլիճում հավաքված ուսու և հայ ինտելիգենցիայի բուռն ծափաշարություններին:

Ոչ պակաս հաջողությամբ տիկին Արմենյանը խաղաց Պերեպուտյա իվանովնայի գերը: Թեև այս գերը չի համապատասխանում նրա ամպլուային, այնուամենայնիվ բեմի վրա ամեն անգամ երևալիս, նա փր աշխույժ խաղով առաջ էր բերում ուրախ քրքիչ:

Մյուս արտիստներից անհրաժեշտ է ընդգծել պ. Ալիխանյան Հ-րդի խաղը գեներալուհի Վալեմիրի որդու գերում:

Սիրողներից աշքի ընկան m-selle Կարսամովան (գեներալուհի) և Տիր-Մարտիրոսյանը (Մաշա): Վերջինիս սպասվում է լավ ապագա, եթե միայն նա իրեն նվիրի բեմին:

Մյուս սիրողները՝ հանձինս Գոնիերի (Մաշայի հայրը), Զու-

բաբովի (քեռի), Սամուելի (կառապան) և Աղասու — միահամուռ  
պահպանում էին անսամբլը:

Յանկալի է, որ Արմենյանը, որն այնքան էսթետիկական հա-  
ճույք պատճառեց հանդիսականներին, նույն դերում հանդես գա-  
նակ Թիֆլիսի բեմում, մանավանդ, որ արտիստը հաջորդ սեզոնին  
հրավիրված է իրրե հայկական թատրոնի ոեժիսյոր:

## <ՆԱՄԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ>

«Մշակի» № 20-ում *Տեր-Դանիելյան* պարոն հայտնում է, թե՝ «Աշխատանքի երգեր» ժողովածուիս մեջ զետեղված «Ամենից առաջ» ոտանավորը ինքնուրուցն չէ, այլ՝ թարգմանական:

Մինչև այստեղ պարոնը ճիշտ է ասում, բայց երբ նա ուզում է հայտացնել ընթերցողին, թե՝ դրանով կամեցել եմ յուրացնել ուրիշի ոգևորության արգասիքը, այստեղ հոդվածագիրը անպայման սիսալվում է:

Գալիս եմ հայտնելու, որ այդ ոտանավորը տպված է «Տարազ» շաբաթաթերթի 1905 թ. № 3-ի հենց առաջին երսում, ուր պարզութեն և խոշոր տառերով ցուց է տրված թարգմանության աղբյուրը:

Եթե «Աշխատանքի երգերի» մեջ, որը լույս տեսավ 1906 թ. սկզբում, չէր հիշատակված աղբյուրը, այդ, ինքը էլ ցավում եմ, պատահել էր անփութությունից, որպես սոսկ վրիստակ:

Մի տարի առաջ թարգմանության անունով «Տարազ»-ում տպագրվածը՝ արսուրդ է մտածել անգամ, թե հետագա տարում կարող էի իմն համարել յուրացնողը աղբյուրը կթաքցներ հենց առաջին տպագրությունից:

Պետք է հայտնեմ ապա և այն, որ ես կարիք չեմ զգացել երբեք իմ գրական գործունեության ընթացքում՝ մի պոեմ և հարյուրից ավելի ինքնուրուցն երգեր տալուց հետո՝ մի փոքրիկ «Ամենից առաջ» ոտանավորով անուն վաստակել:

Դրան ապացուց կարող է ծառայել մյուս կողմից և այն, որ այդ կտորը չի զետեղված նորերս լույս տեսած «Բանաստեղծություններ»<sup>1</sup> նոր ժողովածուիս մեջ, ուր չէ՝ որ կարող էր մտնել, որպես ինքնուրուցն, երբ, ըստ պարոնի վկայության, «ամենաաջողած» աշխատանքներից մեկն է նա:

Ինչ վերաբերում է Բ. Իշխանյանին<sup>2</sup>, իբր երես պարզ անող համեմումներին, ես այդ, որպես ավելորդ բալաստ, վերադարձնում եմ «Իսկ ովքե՞ր են դատավորներ» հոդվածի հեղինակին և սրանով վերջացնում խոսքս:

## ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Մեզ ուղարկված է հետևյալ նկատողությունը:

«Հորիզոնի» № 77-ում Շիրվանղադեն իրավացի կերպով բողոքում է այն երեսուցի գեմ, որ այդ թերթում, ոմն Վ. Մհնակ՝ «Գեղարվեստի» մասին զետեղած գրախոսականի մեջ Արամ Զարզի մի տպեղ ուսանավորը «շատ սիրուն» բանաստեղծություն է համարել:

«Ես բողոքում եմ խորին զգվանքով այդ տեսակ կեղտոտ «բանաստեղծության» գեմ,— ասում էր Շիրվանղադեն.— ցալում եմ միկնույն ժամանակ, որ «Հորիզոնը» թույլ է տվել իր էջերում «սիրուն բանաստեղծություն» անվանելու այն, ինչ որ գոեզիկ ձաշակի և կեղտոտ զգացմունքների արդյունք է: Իզուր է, սակայն, ցալ հայտնում Շիրվանղադեն «Հորիզոն»-ին: Այդ թերթի համփաները այնքան են սիրահարված իրենց թայֆային պատկանող «բանաստեղծների» վրա, որ ոչ միայն կուրանում են նկատել նման «գոհարների» այլանդակությունը, այլև զանազան մենակների միջոցով ռեկլամներ շռայլում իրենց օջախի մարդկանց հասցեին՝ սրանց «բանաստեղծական հմայքը» ժողովրդականացնելու միամիտների աշքում: Եվ ո՞չ միայն այդ, «Հորիզոնի» գրասենյակում նստածները, ինչպես երեսում է, երդված են ոչ մի չանք չխնայել՝ հակառակ հոսանքի և գրական ուղղության պատկանող բանաստեղծներին հալածել, միշտ մի անբարեկիդ կարծիք հայտնելով նրանց մասին (Ա. Շատուրյան, Հ. Հակոբյան և այլն), այն էլ ընդհանուր խոսքերով, առանց հիմնավորելու ասածը:

Իհարկե «Էսթետ» մենակները միշտ էլ մենակ կմնան իրենց այլանդակ գնահատումների մեջ, իսկ Շիրվանղադեն, որքան էլ ցավ հայտնի «Հորիզոն»-ին, իր «գեղարվեստագետ» կոլեգաները խրատվողը շեն:

Չէ՞ որ խնդիրը վերաբերում է դիրքերի մեջ ամուր մնալուն և

«օջախի մարդկանց» համար ոեկլամներով անուն ստեղծելուն, ինչ  
գնով էլ այդ լինի:

Մեզ մնում է միայն առել. շարեցե՛ք, շարեցե՛ք թղթե պարիսպ-  
ներ ժողովրդի գրական գիտակցությունը և ճաշակը մթագնելու հա-  
մար, սնեցե՛ք նրան արտաքին ձեւերի տակ շպարված այնպիսի  
«գեղարվեստական» կտորներով, ինչպիս, օրինակ՝ «Նանի, նանի իմ  
պոպով»<sup>1</sup> (Ար. Տիգրանյան), «Աշխարհն հավիտյան մահվան բե-  
րանում և մահը նրան ծամում է, ծամում»<sup>2</sup> (Ավ. Իսահակյան),  
կամ Դ. Դեմիրճյանի «Մեռելի ու թաղումի երգերով»<sup>3</sup> հալածեցեք  
լուսաբացի և աշխատանքի խրոխտ երգերը անբարեխղճությամբ. մի  
օր, երկի, Ֆեմիդան<sup>4</sup> կգա ձեւ դատաստանին, և ձեղ այլևս չի փրկի  
ո՛չ «անապատ» և ո՛չ էջմիածին փախչելը:

## ՍՈՒՐԳՈՒԿՅԱՅՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԹԻՖԼԻՑՈՒՄ

(Նամակ Թիֆլիսից)

«Փետո» էին խաղում...

Ժողովրդական տան հայկական սեկցիան, անմոռանալի Սունդուկյանի թարմ հիշատակը հարգելու համար, սրանից խելացի ընտրություն չէր կաբող տնել: «Փետոն» ժողովրդի համար, ժողովրդական թատրոնում խաղացվում է առաջին անգամ իր անմասնեղինակի բացակայությամբ:

Ամեն անգամ, երբ թիֆլիսում դրվում էր «Փետոն», նրա տաղանդավոր հեղինակը, որը, ի գեպ, և հայ ունալ ունպերտուարի պիուներն ու հիմնադիրն էր, միշտ համարցա ներկա էր լինում իր այդ հարազատ զավակի ներկայացման, իսկ այս անգամ նա չկար...

Եվ իր փոխարեն, այն օթյակում, ուր միշտ ինքն էր նստում, այս անգամ զրված էր նրա մեծադիր պատկերը ծաղկանկար շրջանակում, որի միջից նայում էր մեզ՝ հանդիսականներիս իր բարի, չեզ գեմքով, լուսավոր ժպիաթ երեսին:

Ես հիշում եմ այն որոտքնոստ ծափահարությունները, որով ժողովուրդը միշտ պատվում էր իր սիրեցյալ հեղինակին, և որի պահանջմամբ նա բեմ էր բարձրանում, զգացված շնորհակալություն հայտնում է ձեռքի մի համեստ շարժումով կարծես ասում՝ ի՞ւս զաօծ...

Աներկատ եմ, եթե Սունդուկյան իր տաղանդի զարգացմամբ իր գրական գործունեությունը սկսեր մեր օրերով, անշուշտ նա կտար ոչ թե հին օրերի պրոլետար ձկնորս Փետոցին՝ «զբնված» Զիմովովից, այլ նորագույն կապիտալիզմի ձեւերի տակ ձնշված, շահագործված բանվորի զրաման. ինչո՞ւ. Որովհետեւ նախ՝ կհս զար

\* Լատ.— Ես արի այն ամենը, ինչ կարող էի:

առաջ մեր նահապետական կյանքում գոյություն չունեին ժամանակակից շահագործման ձևերը, և երկրորդ՝ չէ՝ որ Սունդուկյանի մեջ հենց իր Պետոցից էլ նկատվում է, որ կային դեմոկրատիկ սովորականը:

Բայց անցնենք ներկայացմանը. չմոռանամ, սակայն, հիշատակել, որ նախքան ներկայացումը՝ հայտնվեց, որ քաղաքային վարչությունը՝ ի պատիվ իր տաղանդավոր համաքաղաքացու, իր զեկավարության տակ գտնվող դպրոցներից մեկի անունը կնքել է Սունդուկյան անունով, ապա առաջարկվեց լուս, անշշուկ — ինչպես և լուս, անազմուկ հողին էին հանձնել նրա մարմինը — ոտի կանգնելով, հարգել նրա հիշատակը:

Այսուհետեւ պ. Շիրվանցադեմ խոսեց ուսալ գրամատուրդիայի նշանակության մասին, միաժամանակ ընկնելով իրեն հատուկ հակասությունների մեջ «թեև, բայց»-երի դիսոնանոներ ստեղծելով:

Վերջը խոսեց հայկական անկցիայի նախագահ՝ Գ. Երիցյան, հայտնելով, որ այդ գիշերվա ներկայացումից գոյացած արդյունքը հատկացվում է Պետոցի արձանի ու հայ թատրոնի կառուցման ֆոնդին, իսկ վաղվանից թատրոնի ֆոյեում, մյուս նշանավոր թատրոնական պործիչների շարքում, կկախվի և Սունդուկյանի մեծագիր պատկերը:

Ներկայացումը, որ սկսվեց ժամը մոտ 10-ին, վերջացավ գիշերվա 12-ին: Ահա այստեղ էր, որ մենք նորից ասիթ ունեցանք տեսնելու մեր երկու անմման դերասաններին՝ Տեր-Դավթյանին՝ Գիրոյի և տիկին Վարդուհուն՝ Շուշանի դերում:

Լրագրի սյունակները թույլ չեն տալիս ինձ ծանոթացնել ընթերցողին թե՛ արտասանված ճառերի մանրամասն բովանդակության և թե՛ այս երկու տապանգավոր արտիստների խաղի հետ. կասեմ այս միայն, որ անմա՞ս «Պետոն» (որը զեր շատ երկար պիտի ապրի հայ սեպերտուարում, ինչպես «Горе от ума»-ն<sup>2</sup> ուստ ուղարկուարում) արդյոք ժամանակի ավերող ձևորժիվ կարող է ունենալ և հեռավոր ապագայում պիեսի ողուն համապատասխան ժարգոնով, ձևերով, միմիկայով այնպիսի շուշաններ, ինչպես տիկին Վարդուհին և այնպիսի գիրուներ, ինչպես Տեր-Դավթյան, չէ՝ որ կյանքի հետ փոխվում են և այն կյանքի ավանդները, աղք, հոգեբանական այն առանձնահատկությունները, որ զբել է Պետոցի մեջ Սունդուկյանը, և որոնք հետզհետեւ նսեմանալու, իսկականից հեռանալու են շնորհիվ ժամանակակից կյանքի ձևերի փոփոխության...

ինչ վերաբերում է Պեղոյի դերակատար պլ. Արաքսյանին, ասելու ունենք, որ նա իր թուզը խաղով մեղ շգոհացրեց. նրան ավելի սաղ կդար Կակուլու դերը: Սխալ էր գործել թատրոնի վարչությունը այդպիսի պատասխանատու դերը շնանձնելով Գ. Միքաղյանին, որը այդ երեկո լոկ հանդիսատեսի դեր էր կատարում:

Այդ երեկո մենք զոհունակությամբ տեսանք «Պեղո»-ի մեջ երկու շնորհալի ուժեր, դերասանուհի տիկին Հասմիկին, որը չերմությամբ և կոկետությամբ կատարեց Զիմզիմովի կնոջ՝ Եփեմիայի դերը և ասլա Տեր-Գրիգորյանին, որը, թեև սիրող, բայց տիպիկ ներկայացրեց Զիմզիմովին:

Թատրոնն ամբողջովին լի էր ժողովրդով և ինտելիգենտ հասարակությամբ, որի մի մասն էլ, տեղ շգտնելու պատճառով, տիրած տուն վերադարձավ:

Արժե, որ հայկական սեկցիան կրկնի «Պեղո»-ն և այս անգամ Միքաղյանի մասնակցությամբ, դուրսը մնացած ժողովրդի համար:

## ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐ

Դրամա 3 դորժ., Անուշավան Վարդանյանի.

(Նամակ Թիֆլիսից)

Ողջունում ենք Հայ լեզվով գրած առաջին ինքնուրուց պրոլետարական աշխարհից: Ծնորհակալություն Արմենյան ամուսիններին, որոնք փոշիի տակից Հանելով այս պիեսը, ներկայացրին Արտիստական թատրոնում մայիսի 21-ին, առաջին անգամ:

Նոր է, որ մենք սկսեցինք ունենալ պրոլետարական աշխարհի հրապարակախոս իդեոլոգներ, պրետներ, քննադատներ, բայց չունեինք պրոլետարական աշխարհի զրամատուրգը և այն էլ, ահա, այսօր երկան եկալ հանձին նախկին բանվոր Անուշավան Վարդանյանի:

Ահա մի ուրախալի երեսույթ, մի պատմակա<sup>1</sup>, մոմենտ՝ առաջին անգամ հայկական բեմի վրա տեսնել զուտ բանվրապական աշխարհը՝ իր ուրույն հոգեբանությամբ, իր աղաղակող հոգեբով, ցավերով ու կարիքներով, տրը, սակայն, դեռ մի անձանոթ աշխարհ է, մի terra incognita<sup>\*</sup> մանր-բուրժուական ձգտումներով և քաղցենուն հատուկ մորալով երկան եկող Հայ զրամատուրգի համար:

Թե որքա՞ն խոր ու լայն է Հաջողվել մեր սկսնակ դրամատուրգին վերլուծել բանվորի բարդ հոգեբանությունը, այդ չե խնդիրը, այլ այն, որ այսոք Հայ բեմի վրա մենք առաջին անգամն ենք տեսնում մոտիկ անցյալի կենդանի իրականության էսքիզները՝ իրենց մոայլ ու պայծառ գույներով, Հարազատ և Համապատասխան ուղելից երեսույթներով:

\* Լատ.— Անհայտ երկիր:

ԱՀա ձեղ սուլիչի արթնացնող ճիշը վաղ առավոտյան, բանվորներին գործարան հրավիրելիս:

Հենց առաջին գործողությունից կիսամութի մեջ ձեր առաջբացվում են ծխախոտի գործարանի դռները, իրենց՝ մրցյունի պես իրար խոնվող բանվորներով, որոնք դաշիս շարեշար նստառում են երկար սեղանների շուրջը և եռուն արագությամբ սկսում աշխատանքը՝ թութուն կշռում, ծխախոտներ փաթաթում, ծայրերը կտրում, միաժամանակ խոսում, վիճում, պարզելու իրենց վիճակը և դիրքը գեպի ֆարբիկանա աղան:

Սա մի կինդանի տեսարան է, որ հայկական բեմը առաջին անգամն է տեսնում իր ծննդյան օրից:

Բայց պահաս բնորոշ էին և հետագա տեսարանները իրենց կինդանի գործողություններով:

ԱՀա ձեղ բանվորական աշխարհում համարյա միշտ անխռուսափելի նրկու տարբեր հոսանքների՝ շարելկորեխների և զիտակիցների ընդհարումը, որոնցից առաջինը, որպես ստրուկ, ոչ միայն դոհ է իր շահագործվող վիճակից, այլև այն կարծիքին է, թե՝ եթե խողեինը չինին՝ ինքը վաղն եեթ սովամահ կլինի. իսկ մյուսը՝ ավելի զիտակից հոսանքը, որը ոչ միայն ինքն է համոզված, այլև շարունակ ճնշում է համոզել իր անդիտակից ընկերներին, որ եթե չիներ բանվորի աշխատանքը, խողեինը վաղուց սովամահ կլիներ:

ԱՀա ձեղ ողբադուկ հայտարարելու մոմենտին բանվոր մասսայի էրստագի հասած տարերային ոգեորությամբ հատու վճռականությունը, շաշխատել՝ մինչև որ գործարանից արձակված աշքաբաց ընկերներին աղան նորից ըլնողունի, հակառակ դեպքում ներկայացնել նոր պահանջներ տասնյակ պունկտերից բազկացած:

ԱՀա ձեղ աշքաբացներին ուստիկանության հանձնելը գործարանատիրոջ և նրան հավատարիմ կառավարչի կողմից, այսոնք իրենց արարքի փոխարեն վճարում են իրենց մահվան գնով (Հ-րդ գործողություն):

Վերջապես ահա ձեղ շտրելկորեխների և գործադուկ հայտարարած զիտակից մասսայի մեջ տեղի ունեցած վերջին ընդհարումը միկոտան Գիգոլու նկուղում (Յ-րդ գործ.), ուր, կարծես կոլեյդոսկոպում, մեկը մյուսի հետեից երեսն են դաշիս գործադուկ անողների կրտսեկական զբությունը՝ տան վերջին խալիչան ու կաթսան զրավի բերելը միկոտանչուն, որ գործադուկը չվիճի ժամանակից առաջ, իսկ սրան հակադիր նույն նկուղում շտրելկորեխների

զինի՝ ու խորովածով քեզ անելը այս ժամանակ, երբ տանը կին ու երեխայք սոված՝ հոր շաբաթվա աշխատանքին են սպասում:

Բանվորական մռայլ կյանքի այս սիլուետները տալով, մեր սկսնակ դրամատուրգը կարծես կամեցել է հասկացնելու, ցուց տալու լայն մասսաներին այն ճշմարտությունը, որ՝ եթե ընդհանրապես բանվորի և մասնավորապես հայ բանվորի դատը առաջ չի գնում, կամ նրա տնտեսական վիճակը չի բարեփոխվում և շատ անգամ էլ զոհեր է տալիս (բժշկի սպանությունը՝ Արմենյան), այդ տեղի է ունենում շնորհիվ հենց իրենց՝ բանվորների մեծամասնության տղիտուրյան, որոնք անդիտակցաբար միշտ խանդաբել են բանվորի կազմակերպչական գործը՝ հօգուս կապիտալիստ գործարանատիրոջ:

Շատ խրատական և կրթական է այս պիեսը հայ կիսագիտակից բանվորության համար իր կոնկրետ պատկերների ներկայացմամբ, և մեր սկսնակ ընկերը, անկասկած, ավելի շուտ հասած կլիներ իր նպատակին, եթե փոփոխեր Զ-րդ գործողության մեջ միքանի դիսոնանս առաջացնող տեսարաններ, օրինակ՝ գործարանատիրոջ սպանումը (Միրազյան), սրա ջանքը աղջկան նշանելու ատելի մարդուն (տիկին Արմենյան), որոնք բանվորական դրամալին տալիս են բռնազբոսիկ, անհարազատ գույն, իսկ ամբողջության տեսակետից պիեսի կապը պահպանելու համար, Զ-րդ գործողության այս տեսարանները ներկայացնում են որպես թույլողակ:

Մաքսիմ Գորկու «Հա ճհ»-ն, «նախկին մարդկանց» հարզատ միշտավայրով և դրամայի հետևողական զարգացման բնական հանգույցներով թող օրինակ ծառայի իր ապագա գործերի մեջ մեր սկսնակ ընկերուջը, որը հենց իր այս անգրանիկ դրամայից՝ լի առողջ հումորով և կենդանի գործողություններով, տաղանդի նշույլներ է ցուց տալիս:

Կրկին ողջումում ենք առաջին, ինքնուրուցին պրոլետարական դրաման:

Մենք խորհուրդ կտավինք այս պիեսը հայ բեմի մշտական ու ստեղծուարի մեջ մտցնել, իբրև իր տեսակի մի եղակի գործ:

Ժ Ա. Մ Ա. Ն Ա. Կ Է...

Լրացավ «Պայքար»-ի հրատարակման տարին։ Նա թևակոնում է իր գոյության երկրորդ տարեշրջանը։ Եվ այդ առթիվ կուղեինք խոսել մեր ընթերցողների հետ։

Ով ուշի ուշով հետեւել է «Պայքար»-ին, ով շարունակ հետաքրքրվել է «Պայքար»-ի աշխատակիցներով, անշուշտ նկատած կլինի և իմացած, որ թերթի գլխավոր աշխատակիցները, իր խմբագրական կազմով հանդերձ, ինտելիգենտ տւժերն են։

Սակայն մի հարց է ծագում. ո՞ւր են մեր բանվոր ուժերը, որոնք զգալիորեն բացակայում են՝ թերթի շուրջը խմբվելու և իրենց մշտական հոգսերն ու իրականացնելունից առաջացած ծանրությունները արտահայտելու «Պայքար»-ի մեջ... «Պայքար»-ի, որ հենց իրենց՝ բանվորների թերթն է, նրանց դասակարգային շահերի թարգմանը, դասակարգային գիտակցության խթանը...

Բանվորական մամուլը պիտի ստեղծում է բանվոր կողններ, և եթե մինչև այսօր բանվորական շրջանները, կամ բանվոր անհատները չեն կարողանում արտահայտել իրենց ցավերն ու պահանջները՝ բխած հենց իրենց անմիջական իրականությունից, դրա պատճառը պետք է համարել դեռ 1907 թվականից բանվորական օրդանի բացակայությունը մեր մեջ։

Այժմ և արդեն «Պայքարը» գոյություն ունի, որը վառ հավատուվ մանում է երկրորդ տարեշրջան։ Եթե մի ամբողջ տարի բանվորությունը (շատ չնշին բացառությամբ) գուստ էր իր կոլեկտիվ ձգտումների և պահանջների արտահայտությամբ, գոնեք հիմա մուտենա իր թերթին, և մի քանի տարի առաջ մայրաբաղարում հրատարակվող «Правда» պրոլետարական թերթի բանվոր աշխատակիցների նման, զարդարի «Պայքար»-ի սյունակները անմիջական իրականությունից վերցրած իր հոդվածներով, նամակներով, նույնիսկ բեկետրիստիկական և բանաստեղծական գործերով։

1906—1907 թվականներին բանվորական շարժման հետ ու մի առնչություն չունեցող ինտելիգենցիայի, այսպէս կոչված «Ճաշնիկ»-ների, հեռանալուց հետո, Ռուսաստանում մնացել էր փոքրաթիվ ինտելիգենտների մի խումբ, որ իր բախտը պրոլետարիատի հետ կապած՝ հիմնեց նախ «Звезда» շարաթեթերթը և հետագայում՝ «Правда» բանվորական թերթը իրենց մի շարք հետնորդներով։ Հանդերձ։ Այդ թերթերն էին, ահա, որոնց աշխատակցում էին բազմաթիվ բանվորներ։ Նրանք թերթերի սյունակները զարդարում էին գործարանային և հանքային կյանքից վերցրած թղթակցություններով։ Շատ շուտով այդ թերթերում երեսն եկան նույնիսկ տաղանդավոր բանվոր բանաստեղծներ, առակախոսներ, հրապարակախոսներ, բելետրիստներ և այլն։ Այդպիսով «Правда»-ն ստեղծեց, մշակեց ու առաջ բաշեց բանվոր գրողներ։

Գուցե առարկող լինի մեզ, թե՝ մեր արդի կյանքը չի տալիս այդ տիպի բանվորներ, հայ բանվորի իրականությունը խավար մասսայի իրականություն է... Փույթ չէ, կասենք մենք, եթե բանվորական մամուլը առաջ բերեց տաղանդավոր գրողներ Ռուսաստանում (Դեմյան Բեծնոյի և այլն), ստեղծեց բազմաթիվ հրապարակախոսներ, աշխատակիցներ, եթե, օրինակ, Ֆինլանդիայում։ Սկանդինավյան երկրներում, Գերմանիայում և այլուր՝ բանվորական թերթերի խմբագիրներն ու աշխատակիցները հաճախ բանվորներ են, ինչո՞ւ, ուրեմն, «Պայքարը», որն ունի ընթերցող բանվորների մի սովոր բազմություն, չպիտի կարողանա առաջ բաշել սկզբում սովորական բանվոր աշխատակիցներ, ապա մշակել նույնիսկ հրապարակախոսներ, բանաստեղծներ, գրողներ և խմբագիրներ։

Ճիշտ է, Կովկասում դեռ չի զարգացած ինդուստրիան այն ինտենսիվ թափով, ինչ Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում, Ֆինլանդիայում, Սկանդինավյայում և եվրոպական այլ երկրներում։ Ճիշտ է, մեր երկրի սոցիալ-բաղարական պայմանները բանվորին խանգարում են որոշ ձևով մասնակցել ու արտահայտվել այս կամ այն ասպարեզում, բայց սխալ կլինի պընդել ու հաստատել, թե մեր բանվորությունը անկարող և անընդունակ է իր նորմալ պահանջների, իր ֆիզիկական և հոգեկան կարիքների մասին արտահայտվելու շնորհքից՝ իր թերթում իսկ...

Կարող է պատահել, որ հայ բանվորը սկզբում սխալվի այս կամ այն տեսակետը ուղիղ լուսաբանելուց, սայթաքի, գուցե և անհարթ ու դժվարությամբ արտահայտի իր մտքերը, ձգտումնե-

որ, իր միջավայրի իրականությունը... էլի փուլթ չէ... Հետագայում  
նա կվարժվի, կվարժվի և կդառնա իսկական հարազատ արտա-  
հայտիշը իր սեփական աշխարհի, որով և կփրկի այն թաքնված  
տաղանդը, որը կարող է տւնենալ ամեն մի բանվոր, բայց և որը  
թաղվելու է գործարանային ծուխ ու մուրի ժխորում, եթե նա  
չսրախուսվի ժամանակին:

Այս հանգամանքն է, ահա, որ ի նկատի առնելով՝ մենք ասում  
ենք. ժամանակին է, որ բանվորները սկսեն մասնակցել իրենց թեր-  
թին: Ժամանակին կարող են նրանցից մշակվել ոչ միայն շնոր-  
հալի աշխատակիցներ, այլև տաղանդավոր հրապարակախոսներ,  
գրողներ և այլն, ճիշտ այնպես, ինչպես այդ տեղի ունեցավ ոռու  
և մեր հարեան վրացի բանվորական իրականության մեջ:

Հավատացած լինելով այդպիսի հուսատու և թաքնված տա-  
ղանդների երեան գալուն և մեր իրականության մեջ, մենք կոչ  
ենք անում ու հորդորում բանվորության՝ ջերմ մասնակցություն  
ցույց տալ «Պայքար»-ին նրա գոյության գոնե երկրորդ տարեշըր-  
ջանում:

Հողը՝ թերթը կա ասպարեզում, սպասենք, ուրեմն, նրա աշ-  
խատող մշակներին բանվորական միջավայրից:

## ՄԵՐ ՀՈԽՅԱԾ ՄԵՋ ՎՐԱ.

Հայ բուրժուական մամուլում լուս են տեսնում մի շարք հոդվածներ, նվիրված Հայ գրականության ապահովման հարցին. երևան են գալիս կարծիքներ, ցանկություններ, տեսակետներ. խոսում են ԱՀարոնյան, Շիրվանղաղե, Հ. Թումանյան, բժիշկ Արծրունի, Աթանեսյան և այլն. Տեսականապես հարցի ամենացայտում արտահայտողը եղան Ա. Ահարոնյան և բժիշկ Արծրունի՝ երկուսն էլ Հայ գրողներ. նրանցից առաջինը, Ահարոնյանը, գտնում է, որ Հայ գրողի բախտը պիտի համապատասխանի իր ժողովրդի վիճակին, այլ խոսքով՝ քանի որ Հայ ժողովուրդը զեգերում է ծով տառապանքների մեջ, Հայ գրողը պիտի մոռանա իր կարգիքները և նույնպես տառապի իր ժողովրդի հետ... Մյուսը, Վ. Արծրունին, գտնում է, որ Ահարոնյանի այդ քեռիան հիմնովին սխալ է, քննդհակառակը, գրականությունը կուշտ փորի գործ է, մի լաւ՝ մարսողության ժամանակ, և քանի որ երկրի կուշտ աւարցն է (փամա՝ բուրժուապիան), որ հասկանում է իր դիրք, օգտվում, հրձվում, հաճույք զդում նրանից, հետեաբար այս տարրի պարտքն է՝ պաշտպանել, գնահատել, զարգացնել գրականությունը... Երկու հիմնովին տարրեր, իրար բացասող կարծիքներ... Մեկը՝ խոտորող ոռմանտիկի, որից միշտ անբաժան են եղել լալկանությունը, անառողջ սենտիմենտալիզմը և պեսիմիստի լամենտացիաները, մյուալ՝ բուրժուական ինտելիգենտ-օպտիմիստի տեսակետը՝ լավ ախորժակով և զոոլոգիական մեթոդով լուսաբանած...

Այս երկուսից որի՞ն պիտի հարի ընթերցող պրոլետարիատը՝ իհարկե, ո՞չ մեկին, և ո՞չ մյուսին, որավհետեւ, ինչպես ամեն մի հարցում, նույնպես և այս դեպքում գիտակից պրոլետարիատը ունի իր ուրույն, իր որոշ, բուրժուական կամ մանր-բուրժուական տեսակետներին հակառակ, պրոլետարական տեսակետը:

Հեռով կտաներ մեզ, եթե մի առ մի թվինք տրամադրուին

իրար հակառակ այդ տարբեկությունները՝ թե՛ մորակի, թե՛ իդեռ-լոգիայի, և թե՛ դասակարգային գիտակցության, շահերի ու կովկ նկատառումներով. ասենք միայն, որ այն, ինչ բոլորուազիայի տևակետով բարոյական է, թույլատրելի և շահավետ, պրոլետա-րիատի համար այդ նույնը ամորալ է, հակառակ և ուրեմն ան-թույլատրելի...

Եղակետ ընտրելով այդ գրությունը, մենք ասում ենք, որ գի-տակից պրոլետարիատը մանավանդ իր հոգեկան խառնվածքով երբեք լալկանություն կամ սենտիմենտալիզմ չէ սիրել և նման հարցերը Աշարոնյանի պես զուսաբանելուց միշտ խորշել, խուսա-փել է. միաժամանակ նա Ժխտել է անհատական բնույթ՝ կրող ամեն մի հիմնարկություն, ինիցիատիվա, որպիսին այսօր առաջարկում է բժիշկ Արծրունին գրականության ապահովության և նրա զար-գացման վերաբերյալ:

Գրականությունը, մամուլը և գիրը պրոլետարիատի համար եղել են ո՛չ մեկնասաների, ո՛չ էլ. «կուշտ փորի գործ», ո՛չ լայկա-նության, կեղծ սենտիմենտալիզմի, ո՛չ էլ կամովին ինքնազրկման, փնքնաշշարժան մի վորձ, ուր մեկի բախտը զոտով ուղղական կատել մյուսի վիճակի հետ. ընդհակառակը, ամեն մի գործունեու-թյուն պրոլետարիատը հիմնել է իր կոլեկտիվ ուժի, կոլեկտիվ կամ-քի և իր հավաքական աշխատանքի վրա:

Եզր երբ ամեն մի արգելառիթ երևույթ համարվել է թշնամա-կան գործողություն՝ նրա շահերի, նրա գիտակցության դեմ, նա անվճատորեն կովկ, պայքարել, հակագործել է այդ ամենի դեմ, մինչեւ որ սեփական ուժերով, սեփական աշխատանքով հասել է իր ցանկության և կամքի իրագործմանը:

Սեփական միջոցներով ու բանվորական կոպեկներով էր, որ պրոլետարիատը տնեցավ մի շարք օրգաններ, գրական երկեր՝ եվրոպական երկրներում և մեզ մտ՝ Ռուսաստանի քաղաքներում:

Պրոլետարական կոպեկներն են, որ այսօր պահպանում են միակ գեմոլիրատական «Փայքար» թերթի գոյությունը, և գեմոլիրա-տական կոպեկներն են, որ արհամարհելով բոլոր գործական նպաստի կոպեկները, նյութապես պիտի պահպանեն թե իր՝ պրոլետարիա-տի գործունեության բոլոր ֆունկցիաները և թե՛ նրա գրականու-թյունը:

Հիշյալ երկու գրողները խորթ, օտար, անհարազատ են մեզ համար, նրանք շարաշար սխալվում են իրենց առաջարկներով, որովհետեւ, կրկնում ենք, մեկը սենտիմենտալության է գիմում,

անկեղծ չէ սրտում և միայն իր կողերով բթացնում է մասսաների ինքնագործունեության թափը, մյուսը՝ զրգոված ախորժակով՝ հայ բուլուազիային է օդնության կանչում, թե արի ու մեր գործը տես... մոռանալով միանգամայն, կամ գուցե և շասկանալով, որ բուրժուազիան երբեք կոպեկ չի գոհի այնտեղ, ուր իր դասակարգային շահերը չի նկատում:

Օտարի աշխատանքը շահագործող այդ տարրը միշտ էլ փըշ-րանքներ է շպրտել մասսաները զեկավարող մանր-բուրժուական ինտելիգենցիայի կոչերին, ոչ «վասն իր պատմի», ինչպես միամը-տորեն կարծում է բժիշկ Արծրունին, այլ որ այդպիսով բթացնի և հեշտությամբ լցնի հակառակությունների միջև եղած այն վիճը, որ գոյություն ունի իր և աշխատող դասակարգերի միջև...

Բայց դրականությունը «փորի գործ» համարող մեր՝ փիպիուոգները, կամուրջ են ձգում հաշտեցնելու այդ հակասությունները՝ հանուն հայ դրականության դարձացման, հայ դրականության ապահովման...

Սա վատ տեսակի մի կոմպրոմիս է, մի խաղ, որ առաջարկում են մարդիկ, շասկանալով միաժամանակ, որ այդպիսով վտանգվում է ժողովրդի կուտուրական զարգացման մի գործոնը՝ իսկական դրականության և նրա ապահովման գործոնը:

Այս լավ պիտի հասկանա պրոկետարիատը և ֆրկու հայ գրողների՝ Ահարոնյան-Արծրունու կոշերին ու ճիշերին հակադրի իր կուեկտիվ միջոցները: Իր ֆոնդը կազմակերպի՝ կանգուն պահելու իր մամուզը, իր գիրը, իր դրականությունը:

## ԸՆԿԵՐ ՀՈՎԱԿԻՒՄ ՍՈԼՈՎՅՈՒՆԻ ՀԻՇԱՏՈԿԻՒՄ

Այսօր լրանում է մի տարին այն օրից, երբ հայ կոմունիստ-ների շարքերը կորցրին իրենց գործակիցներից մեկին՝ հանձին բնկեր Հովակիմ Սոլովյանի:

Ընկեր Սոլովյանը — նախկին հնչակյան — բոլորովին նման չէր այն մյուս հնչակյաններին, որոնք փրենց ազգայնականությունը ծածկում էին «սոցիալ-դեմոկրատ» անվան տակ:

Կովկաս եկավ նա Աստրախանից, 1905 թվին, մուսաստանի հեղափոխության առաջին օրերին, և, թեև աշխատակցում էր «Հընչակյան» կուսակցության, «Պայքար»<sup>1</sup>, «Ապագա»<sup>2</sup>, «Գաղափար»<sup>3</sup>, Աստրախանի «Լրաբեր»<sup>4</sup> և այլ օրգաններում, այնուամենայնիվ, իր հոգվածներում աշքի էր ընկնում, որպես Ռ. Ս. Դ. Բանվորական կուսակցության ծրագրի կողմնակից:

Հետզհետե զավելով և ինքն իրեն համար պարզելով իր դիրքը, ընկեր Սոլովյանը վերջնականապես փր կապերը կտրեց այդ կուսակցության հետ ու հարեց Ռ. Ս. Դ. Բանվորական կուսակցության. և, թեև չէր մասնակցում նրա անլեզակ կազմակերպությանը այնուամենայնիվ, օգտվելով առիթից, ամեն մի ժողովում (Հայ Դրողների, Տիգրան Նազարյանի սալոնում), որպես օպոզիցիա, պաշտպանում և արծարծում էր սոցիալ-դեմոկրատական գաղափարներն ու տեսակետները:

1917 թվի նրկրորդ, Մէծ հեղափոխության առաջին օրից իսկ նա արգեն անդամագրվել ու հարել էր Ռ. Ս. Դ. Բանվորական կուսակցության մեծամասնական ֆրակցիային, ուր շուտով ընտրվեց ֆրակցիայի նոր հիմնած «Կավկазский рабочий» ամենօրյա թերթի խմբագրական լայն կոլեգիայի անդամ. հետագայում, երբ լայն կոլեգիան կրթատվեց, ընկեր Սոլովյանը նշանակվեց հրատարակիչ մասնաժողովի անդամ «Ազգայից անդամ Հրատարակելիք բրոցյուրների:

Երկար ժամանակ նա կատարում էր այդ երկու հրատարակությունների սրբազրությունները, երբեմնապես ինքն էր գրում «Կավակաչի բազմաթիվ աշխատանքների մասնակցություն ցուցադրում կուտակության կողեկտիվ աշխատանքների մեջ»:

Միաժամանակ նա աշխատակցում էր զուգընթացարար հրատարակող կուտակության օրդան «Պայքար» թիրթում Տապար ստորագրությամբ:

Որպես երկրորդ ռայոնի մեծամասնական կողեկտիվի անդամ, կազմակերպում էր միտինդներ Զավակվալնայա կոչված քաղաքամասում և այլ բանտորական կվարտալներում, որպես հոգտոր խոսում էր այդ միտինդներում և առհաստրակ իր եռանդուն նախաձեռնությամբ հետ չէր մնում երիտասարդ տւերից:

Մի ամբողջ տարի անընդհատ աշխատելուց հետո, ընկեր Առլովյանը ստիպված եղավ նույնակես գաղթել Թիֆլիսից Վլադիկավելավ, ինչպես հեռացան կոմունիստական կազմակերպության բոլոր պատասխանատու մարմինները՝ Վրաստանը անկախ հրատարակելու նախօրյակին:

Վլադիկավելավում ընկեր Սոլովյանին վիճակվեց աշքի ընկնող մի գործունեություն։ այն է՝ պատանի պրոպագանդիստների և ափիտատորների երկսեռ կուրսերի հիմնարկությունը, որի գլուխ անցավ ու զեկավարը դարձավ ինքը՝ հանգուցյալը։

Վլադիկավելավի էվակուացիայի ժամանակ ընկեր Սոլովյանը հազար ու մի տանջանքներով հասավ Բաքու և այստեղ բժամոր տիֆի զոհը դառնալով, մեռավ հիվանդանոցում՝ անհայտության մեջ, հեռու մերձավորներից և գործակից ընկերներից։

Ընկեր Սոլովյանը ծնվել է 1864 թվին Աստրախանում, ավարտել է տեղական Ազգարարյան դպրոցը, այնուհետև ձանապարհորդել ու ապրել Խտալիայի Հոռոմ, Միլան և այլ քաղաքներում, իսկ վեճետիկում ուսումնասիրել է հայոց լեզուն Վենետիկի Մխիթարյան միաբանության Ս. Գաղարի կղզում։

Յո ձիգ տարիներից ավելի նա վարել է ուսուցչի շարքաշ պաշտոն Աստրախանի և հայ այլ դպրոցներում, որից վերջին 12 տարին Թիֆլիսի արհեստավորաց դպրոցում, որպես դասատու հայոց և ուսուց լեզուների. զրել է միաժամանակ մանկական փոքրիկ պատմվածքներ («Աղբյուր» մանկական ամսագրում՝ «Կյանքի պահանջը», «Բաննվորի գիրքը», «Վարագույրի ետևում», «Ծուղրուղու», «Փոքրիկ մշակը», «Ես տիկին ունեմ», «Պատուհասի առաջ» և այլն)։

Աշխատակցել է Հայ և ուստ շատ պարբերական թերթերում։  
Ինչպես՝ «Մշակ», «Արօր», «Գեղարվեստ», «Տարադ» և վերջերում  
էլ «Պրաճ» մեծամասնական թերթում։

Ընկեր Սոլովյանն ունի և միտպական տպագրված գործեր՝  
«Մեռած ծովում», «Կոտրված սիրո», «Հարազատ գծեր», «Կորա-  
մատի առաջ», «Ղոնախլուղումնաց», «Խոռվարկուներ», «Ո՞վ է նա»  
և այլն, որոնցից գրական մնացուն արժեք ունին «Խոռվարկուները»,  
«Ո՞վ է նա» և ուրիշ, հեղափոխությունից վերցրած, շատ հաջող,  
անտիպ մնացած պատկերներ։

Հետագայում նա գրել է հարատարակել՝ «Սավառնող ոպի» և  
«Դիրքերի վրա» մեծ պատմվածքները և մտածում էր ավարտել այս  
վերջինիս երրորդ մասը, բայց մահը կանխեց նրա մտադրությունը։

Այսուղ շենք կարող չհիշատակել նրա քննադատական մի  
աշխատանքի մասին՝ 240 երեսից բաղկացած, որ տպագրվեց  
1912 թվին «Քննադատական տեսություններ» վերնագրով, «Ժա-  
մանակակից Հայ քննադեպության փիլիսոփայությունը», և որը շփոթ-  
ու աղմուկ հանեց ազգայնականների գրական շրջաններում շնոր-  
հիվ քննադատական նոր մեթոդի և ուղղության։

Տեղը չէ խոսել բոյկոտի ենթարկված այդ գրքի մասին, բայց  
որ ընկեր Սոլովյանը գուրս ելնելով իր շրջապատից՝ որոնում էր  
գրական նոր ուղիներ և գնում ժամանակի առաջընթաց ու պահանջ-  
կուա նոր հովերի հետ՝ այդ անհերքելի է։

Նա նախանձախնդիրներից մեկն էր մեր կովող ու կոփող  
գրական նոր հոսանքի, որի համար էլ վերջերս, որ շատ բնա-  
կան է, մնացել էր արհամարհված շովեն ժամուկի ու գրական տի-  
րացուների կողմից։

Հանգիստ նրա վաստակաբեկ ու բազմատանջ ոսկորներին։

## ՄԵՐ ԳԱՐԻԲՆՈՅՑԸ

Հայ գրականության պատմության մեջ այսօր առաջին անգամ մընք է, որ հանդես ենք գալիս պրոլետարական գեղարվեստական-քննադատական ամսագրով: Ճիշտ է, գեռ անցյալներում, 1914 թվականին, ամսագրիս շուրջը խմբված գրողներս նույնպես երեան եկանք «Կարմիր մեխակներ», «Բանվորի ալբոմ» պրոլետարական ժողովածուների սերիայով, բայց այն անցողակի, անկազմակերպ, պատահական մի երեսովթ էր, մի փորձ, որոնց կյանքին վերջ տվեց համաշխարհային պատերազմը:

Այսօր մենք հրապարակ ենք գալիս կուռ ու կազմակերպված, զուտ պրոլետարական գրողների օրգան «Դարբնոցով», որի շուրջը ժողոված են թե՛ Հին և թե՛ նոր պրոլետարական գեղարվեստական գրողներ, որոնք խոսք ունին ասելու մեր մասսաներին:

Ի՞նչ է մեր նպատակը:

«Դարբնոցի» միջոցով դարբնել հայ պրոլետարիատի ամբողջական կյանքը, արտացոլել նրա կոլեկտիվի ապրումները, նրա հոգեբանական իմպուլսները:

Այն, ինչ հայ զիտակից պրոլետարիատը մինչև օրս չի գտել օտար, բուրժուական և մանր քաղքենիական գրական արտադրությունների մեջ, այսօրից նա տեսնելու է պրոլետարական գրականության մեջ, հանաշելու է ինքն իրեն՝ իր տիտանական կովկա ու պոոթկումների մեջ, իր կարուտակեղ հաղթանակի և հախուռն ձբգումների մեջ՝ գեղարվեստական արտահայտությամբ:

Իրոք, ի՞նչ է գեղարվեստը: Նա գիտություն է և առողջ փիլիսոփայություն: Եթե զիտորյունը կամ դասակարգային իդեոլոգիան ապացուցում է, գեղարվեստը՝ մատնացուցում է. տարրերությունը այս գեղարվեստ բովանդակության մեջ չէ, այլ ձևակերպումների. գեղարվեստն ընդհանրապես կազմակերպում է ժերպումների.

Կյանքը՝ կենդանի, պատկերավոր նկարագրությունների միջոցով, գիտությունը՝ իր մտահայեցողության, լոգիկայի միջոցով։ Հետևապես գիտությունը և գեղարվեստը իրար շեն հակասում, շեն անջատվում իրարիդ, այս իրար լրացնում, իրար ամփոփում են։

Գիտությունը ապացուցում է, գեղարվեստը մատնացուցում է և մըրկուսն էլ մեզ համոզում են, երկուսն էլ ուղեգծում մեր միտքը, մեր կամքը, մեր հոգին:

Հայ բանվորը շատ է կարդացել դիտական սոցիալիստական գրականությունից, նրա շնորհիվ կռել իր դասակարգային դիտակ- ցությունը, դարբնել իր դասակարգային կուլի ու կազմակերպու- թյան օղակները, բայց նա շատ քիչ է կարդացել իր կյանքի, կովի- ճաղթանքի և ապրումների նկարագրությունը:

Հայ կիսագիտակից բանվորությունը, կարդալով բրոցը ուղարկեցի առաջին համար կանոնական գործականությունից, գուցե և շատ քիչ է հասկացնել կարդացածը. բայց երբ գեղարվեստականութեն կերտված տվել ենք նրան նույն սովոր գրված նրա կյանքի և ձգտումների, հոգեբանության և ապրումների նկարագիրը՝ նա այդ ըմբռնել է զյուրությամբ, որովհետեւ գեղարվեստական արտահայտով թյունը գեմոկրատիկ է, ուղղորդմբռնելի, պարզ ու հասկանալի:

Ահա թե ինչի մեջ է գեղարվեստական պրականության արժանիքը:

Գեղարվեստը հենց ինքը՝ կյանքն է, և որովհետեւ պղողի-  
տարիատը՝ գյուղացիությամբ հանդերձ, կազմում է երկրագնդիս  
ազգաբնակության երեք-քառորդ մասը, նետեապես նրա գեղար-  
վեստն իր լուսաբանության ամենալայն գեղարվեստն է:

Էլ չենք խոսում նեղ-բորժուական գեղարվեստի մասին, բաղ-քենի էսթետների, նրանց ցանկությունների և խոդությունների մա-սերնի էսթետների, նրանց գյուղացիան գուտ պլութարիատի և ժամա-սին, մեր խոսքը վերաբերում է զուտ պլութարիատի և ժամա-սին, նաև կակից գյուղացիության գեղարվեստին, որը պիտի ըմբռնել, նաև կակից գյուղացիության գեղարվեստին, ինչ- հասկանալ և իմանալ, թե ինչպես մոտենալ նրա նյութին, ինչ-պես լուսաբանել այն:

Պրոլետարական գրողը, որպես զավակը իր զասազարդը, և  
Պրոլետարական գրողը, որպես զավակը իր զասազարդը, և  
կարող չզգալ այդ զասակարգի իգնորացիան, նրա հոգեբանություն-  
նը. առանց զրան նա կնմանի մարդուն, որ չի կարող ապրել  
առանց օդի:

Ավելին կասենք. մեր գրականությունը ոչ միայն պիտի ցուցացնի պրոլետարական կողեկտիվի փորձառությունը, նրա կողեկտիվիստական գիտակցությունն ու հոգեբանությունը, այլև նա

սղիտի կազմակերպի իներտ մասսաների միտքը, զտի, վսիմացնի նրանց հոգին, կրթի, աղնվացնի նրանց զգացմունքները, ոնունդ մատակարարի նրանց ուղեղին, կյանքի կանչի վճառված հոգիներին, պատրաստի նրանց հերոսական քայլերի:

Ու, անկասկած, որքան զարգանա ու խորանա պրոլետարական մասսայի միտքն ու հոգին, այնքան ավելի ուժգնությամբ առաջ կմղի նա իր դասակարգացին կոփվը, այնքան ավելի շուտ կհասնի նա իր վերջնական հաղթանակին՝ սոցիալիզմին:

Այս է մեր ամենիս նպատակը, և «Դարբնոցը», որպես զեղարվեստական արտահայտություն, այսօրից ծառայելու է այդ նպատակին:

Ժ Ա. Մ Ա. Ն Ա. Կ Ե...  
.

(Կոչ հայ բանվորության)

Անհատապաշտին դարմանք կպատճառի, անկասկած, եթե ասենք, որ գրելու շնորհքն ու ընդունակությունը մորից չեն ծընվում, այլ համար աշխատանիի, ըերեցանության և կյանքում կուտակված փորձառությունների արդյունք են:

Եթե անհատը անհանդիստ ու պրատող հոգու մեկն է, որունող ու հեռանկարներով ապրող, ապա՝ նրա ինտենսիվ խառնքաձքը նրան կհրահրի սիրել կյանքը և այն միջավայրը, որին կառուտում, որի մեջ ապրում և ուր որոնում է իր տգեսորության փուլուները, իր ապրումների ստիմուլը:

Այս ապրումների պրոցեսումն է, առաջ, որ կհատունանա անհատի շնորհքը, կդարգանա նրա ձիրքը և, եթե կուզեք, նրա կագագակրպվող տաղանդը:

Գեր մեղանից շատ առաջ Շիլլերն ասել է. «Եթե ներկայացնեն երեսուն պիես և ամեն պիեսին ներկա լինենք մենք, եթե ամեն մի ներկայացումից հետո մեզ հարց տանք. ի՞նչ է կամեցիլ ասել պոկը, ի՞նչ է եղել նրա գաղափարը, նպատակը, ո՞ր տիպերն է ըլք, հաջողվել նրան նկարագրելու նրբորեն և ո՞րը՝ անհաջող, — եթե ամեն մի ներկայացումից հետո այդպիսի մի հաշիվ տանք մեզ՝ մի գուցե երեսուն և մեկ-երրորդ պիեսան ստեղծի ամեն մեկը մեզնից»:

Հանճարեղ Շիլլերը այս ասել է Հրապարակորեն և այն է՝ ամենաբարդ գրական ճյուղերից օմեկի՝ դրամայի վերաբերյալ և ոչ բանաստեղծության և արձակի՝ որոնք համեմատաբար հեշտությամբ են գրվում. Ու անկասկած Շիլլերը, այս ասելով, ի նկատի է ունեցել նրանց, որոնք շատ թե քիչ օժոված են անհատական ունակություններով:

Մենք ճանաշում ենք գիտակից, շնորհալի հայ բանվորների, որ եթե մեկն ու մեկը նրանցից նստի ու մի պատմվածք գրի իր կյանքից՝ այդ կլինի հետաքրքիր զրական արտադրություն։

Բայց որովհետեւ, ինչպես հաճախ արդարանում են, բանվորությունը առհասարակ չունի ժամանակ, ոչ էլ հարատես դրելու միջոց՝ իր շնորհքը զարգացնելու, — ուստի նրա շարքերում զտնվող շնորհալիներն անդամ մնում են մոռացված ու ընդմիշտ էլ անհետանում շատ նման տաղանդավորների հետ։

Ասում են հայ բանվորը ժամանակ չունի զրականությամբ զբաղվելու, նա՝ Հոգնած վերադառնալով աշխատանքից, մտածում է իր օրակարենի և հանգստանալու մասին, որ էքսը թարմացած գործի զնա։

Իրավացի՛ է արդյոք այս առարկությունը։ Մասամբ՝ ո՛չ, կամ սենք մենք։

Մենք ճանաշում ենք ուստի ու վրացի բանվոր ընկերների, որոնք սև ռեակցիայի օրերին ավելի էին ճնշված, ավելի շատ զուրկ օրապարենից և, այնուամենայնիվ, գործարանների այդ անսպառեռանդուն հոգիները մեծ պատրաստակամությամբ էին մտտենում իրենց միջոցներով ստեղծած «Յազդ», «Պարագաներ», «Պարագաների նաբարիչ» («Առաջին քայլ») և նման օրդաններին և, այդպիսով, ճոխացնում պրոլետարական դեղարվեստի սկզբնական էտապի երթը։ Նույնը նրանք կատարում են այսօր ավելի մեծ հոգածով, ավելի մեծ ոգեստությամբ։

Ամիսների ընթացքում «Կարմիր աստղի» մեջ մենք շարունակ կոշ ենք արել հայ պրոլետարիատին՝ հանուն դասակարգացին զրականության ցուցակագրովի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի մեջ, բացարձակ ու անկեղծորեն հայտնել ենք, որ՝ թող շամաշի, շրաշվի հայ բանվորը, եթե ինքը գեռ պատրաստ չէ մշակված գրչով կրկան գալու։

Հայտնել ենք, որ Ասոցիացիան իրենից ներկայացնում է մի սուրբիա, մի դպրոց, ուր կոլեկտիվ քննադատության բովով են անցնելու թե՛ վարժ և թե՛ անվարժ դրիչները, ցուցումներ, խորհուրդներ տալու պատրաստակամությամբ և, այնուամենայնիվ բացի մի բանվորից (բնկ. Թ. Սահակյան), մեր կոշին արձագանք տվող շգանեցավ։

Նէֆ-ի այս նեղ օրերին, երբ դժվար հղացումներով մարմնացումն է առել մեր վաղուց փայտիայած միտքը՝ հիմնել պրոլետարական դրողների օրդան «Պարբնոցը», հանցանք է շմասնակցել

նրա գոնե գրական բաժիններին, ուր այդպիսով ասպարեզը թողնվում է միայն ինտելիգենտ պրոլետարական գրողներին ու կոմունիստներին։ Հայ բանվորը հենց էն զլխից դայակներով է մեծացել և այսօր, իր իշխանության օրով իսկ, դայակներով է տւզում ապրել՝ հանձին ինտելիգենցիայի։

Այդ մի վրդովկեցուցիչ երկույթ է, որ մեզ՝ հայ պրոլետարական ինտելիգենտ գրողներիս մի պահ հուսահատեցնում է, երբ տեսնում ենք, որ բացի մի բանվոր Անուշավան Վարդանյանից, մինչեւ օրս դոնե մի քանի պրոլետարական ինդուստրիալ բանվոր-գրողները չեն տվել մեզ գործարանային աշխարհը, մինչդեռ ոռու և վրացի ընկերները այդ կողմից բավական առաջ են անցել մեզանից։

Մենք կոչ ենք անում հայ բանվորությանը՝ սթափ-լել, վերջապես իրենց հիվանդու նինջից, հասկանալ, որ պատմական մեծ միսիա ունի կատարելու Խորհրդային իրավակարգում՝ այսօր և որ հանցանք է գործում նա, ով շնորհք ունի, գուցի և կոչում՝ գրականագետ լինելու, բայց իրեն գատապարտում է անդործություն և այդպիսով զրկում է հայ բանվորությանը ճանաչելու իր կոլեկտիվի ապրումները, ճաշակելու նույն կոլեկտիվի նոր կյանքի քաղցրությունը՝ նրա լավագույն զգացմունքների բաժակից։

Հայ բանվորությունը մասնակցեց Խորհրդային իշխանության քաղաքացիական և տնտեսական կովկա ճակատներում, նաև անձիշական մասնակցություն պիտի ունենա և կուլտուրական ճակատում. այդ թելապրում է նրա պատմական առաքելությունը, և «Դարբնոցը» բացած ունի իր գոները՝ գրկարաց ընդունելու այն շնորհքով օժտված բանվոր ջահել գրողներին, որոնք կկամքնան, որոնք պարտավոր են իրենց գրականության և ստեղծագործության առաքյալները լինելու Բացվել է հայ բանվորության արշալույսը, եղեք նրա արևները՝ ժամանակն է...

## ՀԱՅԱՍՏԱՆ ԽՈՍՔ

Ընկերնե՞ր, այսօր առաջին անգամ մեր կյանքում հայ պրոցեսարական գրողներս, ժողովվելով այստեղ միասին, հիմք հնում Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Հայկական անդրանիկ սեկցիային Վրաստանում, որ ունի իր նպատակները, իր առաքելությունը: Թույլ տվեք ինձ, ուրեմն, որպես ձեր ավագ ընկերոջ, ողջունել ձեզ—պրոլետարական գրողներիդ—որպես առաջին հայկական սեկցիայի հիմնադիրների և ցանկալ ձեզ բեղմնավոր գործունեություն ու անսպառ եռանդ ապագայում:

Անցյալներում, ընկերնե՞ր, մենք նույնպես ժողովվում էինք, բայց շունեինք մշտական օթևան, ուր՝ պրոլետարական գրողներս համախմբվելով, կարողանայինք մեր գրական արտադրությունները անցկացնել կուեկտիվ քննադատության բովով. այսօր այդ դրակությունը արվում է մեզ. մենք արդեն ունենք մեր Արվեստի Տունը: Թույլ տվեք, ուրեմն, ողջունել ձեզ ընկերներ, ձեր նոր օթևանով, ուր պիտի կոփիվի մեր ապագա գեղարվեստը:

Թեև թվով քիչ, բայց ուսուվ արի՝ մենք ունենք մեր թիկունքին վրաց և ուսւ սեկցիաների ընկերական աշակցությունը, նրանց հետ ձուլված գործելու ենք անբաժան: Թույլ տվեք, ուրեմն, ձեզ հետ միասին ողջունել և այն մեր երկու թևերին, որոնց ներկայացնուցիչները այսօր մեզ հետ են այս հարկի տակ:

Վրաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիան կազմում է Համառուսական Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի մի ճյուղը. մենք այս օրից ղեկավարվելու ենք նրա Կանոնադրությամբ: Ռուսաստանը այն հնոցն է, որից մենք ստացել ստանալու ենք մեր ստեղծադրժարական կայծերը: Ռուս բանվորները այն առաջապահ գունդն է, որ իր տիտանական դասակարգային կովում առաջ է մղել իր կրտսեր եղբորը՝ հայ բանվորին: Ռուս պրոլետարական գրողները եղել են և են իրենց միջավայրի ար-

տահայտիչները, մենք՝ նրանց գրչի կրտսեր ընկերները։ Թուղթ  
տվեք, ուրեմն, ընկերներ, ձեզ հետ միասին ողջունել Համառու-  
սական Պրոլետարական Գրողների Ասոցիացիան, որի մի քանի  
անդամները այս ժամին մեզ հետ են։

Միաժամանակ առաջարկում եմ Վրաստանի Պրոլետարական  
Գրողների, նրա հետ և Հայկական սեկցիայի պատվավոր անդամ-  
ների շարքում (Մաքսիմ Գորկու, Ա. Լունաշարսկու և այլոց հետ  
միասին), ընտրել նաև ուս պրոլետարական բանաստեղծ, քան-  
քարավոր Ա. Գաստեմին։

ԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐ

Պրոլետարական կյանքի արտահայտիչը, կամ ճիշտն ասած, պրոլետարական գրողը, պիտի մարտնչող բոկիլի գրիշն ունինա և ոչ քաղքենի թուլամորթի, որը միայն «քնքուշ զգացմունքներ» արտահայտելու մեջ է գտնում կյանքի իմաստն ու իմաստության քարը:

Այսօր, մեր այս անցողական շրջանում, երբ պրոլետարիատն իր կյանքի էպոսն է ապրում, նրա այդ կյանքը սոսկ մի կոփի է, կոփիվ՝ մեր նկարին և արտաքին հակածեղափոխական թշնամիների դեմ, կոփիվ՝ մութ ուժերի՝ կապիտալիզմի դեմ, կոփիվ՝ վլուգումի, էկոնոմիմիական քայլայումի դեմ, կոփիվ՝ կեղծ սոցիալիստի կամ ինտենսիվ կյանքի մոտիցն միայն հանգիստ անցնող ինտելիգենտ գրողի դեմ, թուլամորթ, շատախոս և գործի անընդունակ մորթապաշտ էլեմենտների դեմ:

Եվ այս կոփիվն է, որ գերազանցապես պիտի արտահայտվի այսօրվա դրսկանության մեջ, որովհետեւ, պնդում ենք, այս օրը պրոլետարիատի կովկի օրն է, նրա հաղթանակի և ստեղծագործության օրը, կապիտալիզմը ավելի հաջող տառալեկու և կործանելու պատեհ օրը, սոցիալիստական կարգերին մեզ արագությամբ մատեցնելու օրը:

Պրոլետարական գրականությունը նոր չէ, որ հնչեցնում է իր ահազանգը, իր մարտափողը. նա լայն թափով ծնունդ առավ 1902 թվին ու մարմնացումն ստացավ 1905 թվականին — առաջին հեղափոխության օրերին Ռուսաստանում. նրա զողանքները տարածվեցին 1910 թվից սկսած, երբ նույն Ռուսաստանում սկսեցին լույս աեսնել «Звезды», «Правда» և այլ օրաթերթեր ու ամսագրեր. նրա սիզնալներն իրենց կարմիր-կանաչ գույներով սկսան երկնքը թոշել ու այնտեղից լույս ողողելով՝ տարածվել ամբողջ Ռուսաստանում՝ 1917 թվից սկսած մինչև մեր օրերը. այլ խոսքով՝

գուտ պրոլետարական գրականությունը Խուսաստանում ծնունդ  
առավ քսան տարի սրանից առաջ և զարգանալով հասավ այսօրվա  
բարգավաճման:

Մինչեռ մեղ մոտ, կովկասյան իրականության մեջ՝ ընդհան-  
րապես և հայ իրականության մեջ՝ մասնավորապես, այդ թվա-  
կաններին պրոլետարական գրողների կատարյալ սով էր. և ոչ  
միայն այդ. շնայած որ թաքուն, մասամբ էլ թիֆլիսը, համար-  
վում էին շատ թե քիչ ինդուստրիալ վայրեր, այնուամենայնիվ,  
այնտեղ ապրող բելետրիստներն ու պոետներն այդ քաղաքների  
աշխատավոր կյանքի մոտիցն էին անցնում միայն և այն՝ արհա-  
մարհանքով:

Նույնը նկատվում է և այսօր:

Այսօր, մեր այս կյանքի եռուն շրջանում, պրոլետարիատի  
դիկտատորայի օրով, շունենք գրողների մի հոսանք, որը արտա-  
հայտեր նրա <պայքարի> այս շրջանը՝ պրոլետարիատի էպո-  
պեան...

Չունենք, նախ՝ որովհետեւ մեր ազգայնական գրական հո-  
սանքն ու նրա մամուլը ձիմվի նման կրծել, կերել է այն նորա-  
փեթիթ ծառերի արմատները, որոնք իրենց երևան գալու, գուցե,  
օգտակար լինեին պրոլետարիատի գործին, և ապա երկրորդ՝ որով-  
հետեւ այս մրակորես հոսանքը իր սպեցիֆիկ ազգայնականությամբ  
հայ իրականությունից գենը ուրիշ աշխարհ չի կամեցել տեսնել...  
Գործարանային աշխարհ, պրոլետարիատի կյանք, անշուշտ, տեսել  
է նա ու այսօր էլ տեսնում է, բայց մեր քաղքենին նրանց զրի առ-  
նելու համար, կամա թե ակամա, փակել է իր աշքերը ու վազել  
դպրոցի, գաղթականի, տաճկահայի առօրյա գյուղական մանրունք  
կյանքի նկարագրությանց հետեւց...

Եվ այսօր, երբ մեր խմբագրատունն են մտնում հարցուրավոր  
ձեռագրեր հին, մնացորդ պերեժիտականերից դեռ շազմադրված  
գրողների կողմից, և խմբագրությունն մերժում է զետեղել այն,  
մեր քաղքենի գրողը ոչ թե մտածում է այն մասին, որ աշխատի  
իր ուղին կամ իր տեղը գտնել, այլև զարմանում ու բարկանում է,  
որ շտպվեց մեր օրգանում:

Նա մոռանում է, որ «Դարբնոցի» նպատակը մեշանական,  
անորոշ իդեալներով երկեր տպելը չէ, այլ գասակարգային, զուտ  
պրոլետարական գեղարվեստական և գլխավորապես մարտնչող  
«գով գրվածքներ պոպուլարիզացիայի ենթարկելը»:

— Որովհետեւ, այս՝, մենք դեռ աւպրում ենք պրոլետարիատի կյանքի և կույի էպոսը, նրա գյուցազներգության շրջանը:

— Որովհետեւ, այս՝, մեր գլուխը փափուկ բարձերի ու անուշաբույր վարդերի վրա հանդշելու մոտիկ լինելը դեռ չենք գցում. մենք դեռ շատ փշեր տևենք անցնելու...

— Որովհետեւ, այս՝, ինչպես մեր թանկագին ընկեր Լենինն է ասում. «Եպե մного борьбы впереди...»:

Պրոլետարիատը, այս՝, դեռ հանգստանալու ժամանակ չունի, ոչ էլ ժամանակ՝ ժամանցներսվ շոյելու իր դասակարգային գգացմունքը, սիրարիտային քնքովվլումները, որովհետեւ իր մողեռանդ դասակարգային կովով ստեղծագործության մոմենտն է ապրում նա, իր հաղթական էպոսը. ու նա չի հանգստանա, մինչև չհասնի իր ձգտումների վերջնական հաղթանակին, իր ուղեգծած նպատակին:

Որովհետեւ մեր՝ կոմունիստներիս հասկացողությամբ, պրոլետարիատ խոսքն իր մեջ ամփոփում է ոչ թե քաղքենի, հակահեղափոխական մենշևիկին, կամ անկուսակցական վախկոտին, չէ թե կենսապաշտ, կիսագրագետ ու կյանքից կորոված, օրապահիկով տարված բանվորին, այլ՝ կովող, մարտնչող, պայքարող պրոլետարին, նրա ավանդաբերությունը, առաջապահ գնդի անվեհեր պրոլետարին ու կոմունարին:

Ահա մի այսպիսի բանվորական կյանքի և կովի հայելին է մեր «Դարրնոցը», իսկ նրա աշխատակից գրողները՝ մարտնչող պրոլետարիատի տրամադրությունների և ապրումների իսկական արտահայտիչներն են:

«Դարրնոցը» մարտիկ գրողների և մարտնչող պրոլետարիատի օրգանն է, նրա մարտկոցը՝ ուսկից տվյալներու են մեր ոռոմբերը:

«Դարրնոցի» մեջ թուլամորթ, քաղքենի սենտիմենտալիզմը, օբյեկտիվատիկի նացիոնալ-դեմոկրատիզմը և կենսապաշտ կեղծ առցիալիստներն իրենց մորթապաշտությամբ տեղ չպիտի գտնեն:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

**Հովհաննես Թումանյանը** մեր մանկական գրականության առաջին մոհիկանն է, եթե հաշվի շառնենք Ղաղարոս Աղայանին, որ հիմնադիրն էր այդ գրականության:

Այն, ինչ երգել ու տվել է հայ մանուկներին Պ. Աղայանը նախնական պրիմիտիվ ձևերով ու զգացմունքներով, Հ. Թումանյանը այդ արտահայտել է ավելի նոր և իր ժամանակի ոգուն համապատասխան լեզվով, և, այդպիսով, ավելի խորացրել մեր մանուկ սերնդի միտքն ու հոգին:

Անշուշտ, երկու մեր հոյակապ մանկական գրողները տվել են նախապետական գեղջուկ կյանքի շրջաններից այն, ինչ թելադրել է անցած-գնացած ժամանակի հայ գյուղացիական մթնոլորտը, սակայն Թումանյանի արժանիքն այն է, որ երգել է այդ գեղջուկի կյանքի, մեզ ավելի մոտիկ էտապները, և այն ավելի հարուստ ձևով ու արտահայտությամբ, քան Պ. Աղայանը:

Այն ժամանակ, եղր Պ. Աղայանը երգում էր.

*Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ,  
Մանի՛ր սպիտակ մալաչներ,  
Մանի՛ր թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցավեր:*

*Տիգրանիկս գուլպա չունի,  
Հանդ է գնում ոտաբաց,  
Գարրիելիկս չուխա չունի,  
Միշտ անում է սուդ ու լաց:*

**Հովհաննես Թումանյանը**, որպես այս երգի շարումակություն, ըրացում, երգել է այսպես.

*Արի՛ գութան, վարի՛ գութան,  
Օրն եկել է ճաշ դառել,*

Առը շուր տուր, խոփիդ զուրբան,  
Օրհնյալ է աստված, հորովել:  
Պարտատերը գանգատ գնաց,  
Քյոլսվեն կգա կծեծի,  
Տերտերն օրհնեց անվարձ մնաց,  
Կբարկանա, կանիծի:

Այնուհետև Հ. Թումանյանը, ավելի առաջ դնալով իր «Հին օրհնություն» բանաստեղծությամբ, որ մի գլուխ գործոց է մեր մանկական գրականության մեջ, երկու խոսքով այնպիսի իմաստուն ավանդ է թողել մեր մանուկ սերնդին, տրավիսին, ինչպես զիտենք, ոչ ոք դեռ չէ թողած մեր մանուկ գրականության համար, և որը թեև «Հին օրհնություն», բայց միշտ նոր կմնա և դեռ երկար կհնչի սերնդից-սերունդ:

Երկու խոսքով շեշտած հետեւալ շտրիխը, թե՝

«Ապրե՛ք, երեխեք,  
Բայց մե՛ղ աքս շապրեք...»

ցույց է տալիս, կարծես գարավոր այն ծանր, երկարատև զրկանք-ներով ու վշտով լի զեղչուկ կյանքը, որպիսի վիճակում ամեր պապերն ու զյուղի «տերերը» երբեք չեն ցանկանա տեսնել գալոց ժամանակակից սերնդին:

Սակայն Թումանյանի արժանիքը սրա մեջ չէ միայն, նա ստեղծել է հարուստ, ինքնահատուկ, ժողովրդական մի այնպիսի մշակված լեզու — պարզ իր մատշելիությամբ, կարուկ ու վճիռ՝ իր արտահայտությամբ, որպիսի վիրատուզության դեռ չի հասել ժամանակակից մանկական և ոչ մի գրող:

Հովհաննես Թումանյանի մեջ տիրող գիծը՝ մանկական և այլ երգերում, զլսավորապես բարոյախոսուրյունն է, մորալը, որով նա կամեցել է զտել, մարել, աղնվացնել մանուկի հոգին. ասում ենք բարոյախոսությունը և ոչ գաղափարախոսությունը:

Նրա լեգենդներից «Ծունն ու կատուն» ցույց է տալիս անբարեխից, զողերին հատուկ անազնիվ մարդկանց հոգեբանությունը, նրա «Պողոս-Պետրոսը»՝ շար, խորթ մոր անդխությունը զեալի խորթ, որը մանուկները, նրա «Անրախտ վաճառականները», նաւմուսից ու պատվից թաքնվող մարդն է՝ հանձինս չվշիկի ու ճայի, վաշիտու փշի դիմաց նրա «Անիծած հարսը»՝ ամոթի սիմվոլն է հոպոպի դերում:

Մենք դեռ չենք խոսում նրա «Մի կաթիլ մեղրի» մասին, որը պատճառ է դառնում մի շարք մարդկանց դժբախտության, որպես և «Գիքորի» մասին, որը թեև մի շատ տխուր, բայց և շատ գեղեցիկ պատմվածք է գյուղական մանուկի կյանքից:

Թողնում ենք նաև թումանյանի գլուխ գործոց «Անուշ» և «Սասունցի Դավիթ» սղումները, որովհետև նրանք մանկական հասակին և կյանքին չեն վերաբերում:

Հովհաննես թումանյանը մեծ տաղանդ էր. նա երգեց իր ժամանակը, իր էպոխան (առանց մոտենալու այսօրվա գյուղացիական կյանքի ավելի մոտիկ էտապներին) և այդպիսով լրացրեց այն բացը, որ անջրաժեշտ էր մեր գրականության զարգացման համար:

Ամեն մի խոշոր գրող իր պատմական դերը ունի կատարելու ժեր գրականության մեջ, և Հ. Թումանյանը պատվով կատարեց իր դերը նաև մանկական գրականության կառուցման գործում, որի համար դեռ երկար պիտի շնորհակալ լինի նրան մեր մանուկ սերմուղը:

## ՀՈԲԵԼՅԱՐԻ ԽՈՍՔԸ

Ընկերնե՛ր...

Սրտիս անհում խորքից շնորհակալությո՞ւն և ողջո՞ւն ձեզ՝ ձեր այսօրվա կազմակերպած տոնի համար կուտուրական ֆրոնտում:

Շնորհակալությո՞ւն և ողջո՞ւն նրանց, որոնք այսօր դրվատեցին իմ գրական գործունեության 30-ամյակը, այլև նրանց, որոնք փրենց ներկայությամբ պատվեցին մեր պատվի օրը:

Ես ասում եմ մեր, որովհետև այսօրը պատկանում է ոչ միայն ինձ, այլև այն դասակարգին՝ պրոլետարիատին, որը դարձավ իմ ոգևորության աղբյուրը:

Պրոլետարիատն էր, որ իր կանքով, իր դասակարգացին հերոսամարտով և հաղթությամբ դարձրեց ինձ իր լավագույն զգացմունքների, խոհերի և նապատակների արտահայտիչը: Միտքս ավելի պատկերավոր արտահայտելու համար, ես ինձ կնմանեցնեմ այն միջիոնավոր կաթիլներից բաղկացած ալիքի մի կաթիլին, որը վեր թռչելով իր ամբողջությունից՝ արևի ճառագայթների տակ փայլում, ոսկեզօծվում է, սակայն չէ՝ որ գոհարափայլ այդ բախտավոր կաթիլը նորից ձուլվում, միանում է իր ամբողջության հետ և իր խոյանքը շարունակում՝ փշրելու այն պատնեշները, որոնք արգելք են հանդիսանում նրա հաղթական ճանապարհին:

Ես համոզված եմ, որ այդ միջիոնավոր կաթիլներից բաղկացած ալիքը վաղը դառնալու է մեր իններորդ ալիքը, որի հաղթական խոյանքը սպասում ենք Արևմուտքից՝ հվորական պրոլետարիատից:

Պատրաստ լինենք, ուրեմն, այդ օրին և մե՛նք, ընկերնե՛ր:

Ինձ մնում է, այնուհետև, շնորհակալ լինել իմ ծննդավարից, Աղրբեջանի Գյանջա քաղաքից, որտ իմ մանուկ ու պատնյակ օրերում շատ զրկանք, շատ տանջանքներ եմ կրել: Այդ տան-

Հալից իմ անցյալն էր, որ պատճառ դարձավ արտահայտելու և ձեր  
տանջանքն ու կոփիվը:

Այնուհետեւ Բաքուն իր պրոլետարիատով ու գործարաններով,  
ուր ես ևս իմ կյանքի պայմաններով ձեզ նման շահագործվում էի  
գործատերերից... Բայց ես շղարձա այն սալը, որին ծեծում է  
գործատերը, այլ այն մուրճը, որը ծեծում է իրեն՝ սալին՝ իր տի-  
րողին ու այդ զարկերի տակ կռում, ամրացնում իր կամքը:

Այսպես, Բաքվից ու նրա գործարաններից, որոնք ապագա-  
ցում այնքան նյութ մատակարարեցին իմ գրչին, ես բերի Թիֆլիս  
հոսմ նյութը, կերտեցի նրանից դրվագներ ձեզ համար, ձեզ նվի-  
րաբերելու համար: Ծնորհակալություն ինձ 30 տարի իր օթևանում  
պատսպարող Վրաստանին:

Շատ քիչ ասելիք ունիմ վերաբերյալ Հայաստանի: Ես նրա  
համար գործ շատ քիչ եմ կատարել, եթե շաշվենք այն, որ իմ  
գրածները եղել են միայն հայերեն:

Այժմ, երբ Խորհրդային Հայաստանում շինարարական և  
ստեղծագործական աշխատանքներ են թեսավորված, և հույս ու-  
նեմ, որ այսուհետեւ մնացած օրերն ու ուժերը կնվիրեմ նրան:

Լարե՞նք եռանդը, ընկերնե՞ր, գլխավորապես այս ստեղ-  
ծագործական աշխատանքների համար, կոլեկտիվի համար և ոչ  
առանձին անհատական մեր կյանքը հարմարեցնելու, պահպա-  
նելու համար, որովհետեւ կոլեկտիվն է միայն, որ իր լարված  
եռանդով ու թափով բերելու է մեզ շատ շուտով այն իններորդ  
ալիքը, որի անունն է համաշխարհային սոցիալիստական հեղա-  
փոխություն:

Կեցցե՞ նա:

## ԱՆՌԻՇԱՎԱՆ ՎԱՐՄԻԱՆՅԱՆ

Մեղ հասած տեղեկությունների համաձայն՝ Հռկտեմբերյան Հեղափոխության <տարեգարձի> երկրորդ օրը, երևանում, պետք է տոնվի Անուշավան Վարդանյանի բանվորական 30-ամյա ու զրական գործունեության 25-ամյա հորելլանը:

Ո՞վ է Անուշավան Վարդանյանը և ո՞րն է եղել նրա զրական գործունեության ասպարեզը:

Թողնելով մշտաներին նրա բանվորական 30-ամյա գործունեության նկարագրը, մենք կուգեինք ընթերցողին համառոտակի ծանոթացնել նրա զրական գործունեության 25-ամյակի հիմ:

Անուշավան Վարդանյանն այն ինքնուս բանվորներիցն է, որը երկար ժամանակ Աղելիսանովի ու այլ կաշեգործաբաններում անխնա շահագործվելով՝ միաժամանակ 25 տարի շարունակ լուի ու համեստ, առանց աղմուկ հանելու գրել է, և, պիտի ավելացնենք, շատ շնորհարի կերպով, պիեսներ բանվորական աշխարհից:

Անուշավան Վարդանյանը, Համարձակորմն սրբի ասէնք, առաջին հայ բանվոր զրամատուրդն է, որն իրեն նյութ է ընտրել ո՛չ թե բուրժուական անհատական կյանքի կենցաղն ու ձգտումները, կամ մանր-բուրժուական քաղքենիների կյանքի անց ու զարձը, նրանց չարն ու բարին, այլ իրքն սոսկ բանվոր՝ իրեն, բանվորի կյանքն ու լավագույն տենչերը, նրա զասակարգային կովի և հաղթանակների ձգտումները:

Կարո՞ղ եք երևակայիլ մի բանվոր դրամատուրգի զբություն քանինդ տարի սրանից առաջ, երբ զրական ասպարեզն ու թատրոններ գտնվում էին բաղքենի մանր-բուրժուական մամուլի ու նրա հովանավորողների ձեռքին, երբ բանվոր դրամատուրգի պիեսները արհամարհանքով վերադարձնում էին Հեղինակին հայ թատրոնի ոեպերտուար կազմողները:

Տրապիկական դրության մեջ գալարվող Անուշավանը միայն

զրում ու զրում, երեսն վէտառում էր իր փոքրիկ գործերը, շատ անդամ էլ բանվորական թաղերում բեմ հանում և միշտ էլ մնում համեստ, միշտ էլ մնում սպասելիս, թե մամուզը ե՞րբ քննադատական, կամ ոեզնց Կայ կորի այս կամ այն բանվորական թաղերում բեմ հանած իր պիեսների մասին:

Այս «պատվիճն» սակայն, Անուշավանը երբեք էլ չարժանացավ, որովհետև նրա նյութերը շահագործողներին հարվածելու, ազգայիններին ծաղրելու, բանվորի դասակարգային կովի ու նվաճումների մասին էին:

Եվ մի օր էլ, մոտ 15 տարի սրանից առաջ, 1905 թվականից հեղափոխությունից հետո, մեր բանվոր Անուշավանը խիզախից Արտիստական թատրոնի բեմը հանել իր «Տգիտության զոհեր», կամ «Պործադուլ» պիհուր<sup>1</sup> ու, ավելացնենք, սեփական ծախսերով (այլ խոսքով՝ պարտքեր արագ ու էս գլխից վճարեց դերասաններին, որ պիհուր խազան):

Որպիսի՞ սիսկ, որպիսի՞ Հանգնություն 15 տարի սրանից  
առաջ՝ Հակածեղափոխության շրջանում:

Մեր ազգայինները շտապել էին թատրոն դալ, հարկավ, միայն ժաղացին բանվոր դրամատուրգին: Եվ, օ՛, սարսափ: Արտիստա- ժաղերեւու բանվոր դրամատուրգին: Եվ, օ՛, սարսափ: Հասա- կան թատրոնը, որը լիի լցուն էր բանվոր և ինտելիգենտ հասա- րակությամբ, այնպիսի՝ օվացիա սարքեց Հեղինակին, որ ազգայ- նականների ամրող մամուլն անդամ ամաչեց այդ մասին ՀՀիշա- տակել իրենց թերթերում:

Առաջին անգամն էր, որ Հայ բեմը իր սկզբնավորության օրից ահեսավ Հայ բանվորին ծխախոտի ֆաբրիկայում կոիվ մղելիս ֆաբրիկանտի ու նրա կառավարիչների գեմ, առաջին անգամ Հայ բեմի վրա նա տեսավ Հայ բանվոր շարելիքրեխերին, առաջին անգամ գողոծառու ու տեսոր՝ շահագործողների գեմ և ազն և ազն:

Հաջողությունն անսպասելի էր թե՛ իրեն հեղինակի և թե սրա պարագան ուղղության թշնամիների համար. և Անուշավան Վարդանյանը հասավ իր նպատակին:

Այդ օրից նրան այլիս գոնե արտաքուստ չէին արհամարհուած մեր դասակարգային թշնամիները, թեև տեղն ընկած ժամանակ «խռովաբառ» լուսմ էին և վախճանում անդամ նրա անունը տալուց:

վան եկած այս կամ այն նեռֆիտների մասին անգամ և միշտ էլ նրանց անվանում հայ զրականության նորագույն ուղիներ հարթողներ, նոր հորիզոններ հայտնագործողներ, Անուշավանի և նույն գրական հոսանքի ներկայացուցիչների մասին պապանձվում էին մի խոսք անգամ հիշատակել:

Եվ ահա այդ տեսությունների առթիվ, որ 10—15 տարի սրանից առաջ տպվում էին ոռու և հայ թերթերում, մեր բանակի քննադատները շեշտակի հարվածներով հարց էին տալիս, ապա ինչո՞ւ այդ թերթերում (մանավանդ ոռու հասարակության ծանոթացնելու համար) շի հիշատակվում անդրանիկ հայ պրոլետարական բանաստեղծի (Հ. Հակոբյանի), անդրանիկ հայ բանվորական դրամատուրգի (Անուշավան Վարդանյանի), անդրանիկ հայ բանվորական բելետրիստի (Մադաթ Պետրոսյանի) և այլոց մասին:

Որքան պարզ էր քննադատի տված հարցը աղդայնականներին, այնքան էլ պարզ էր նրանց նպատակը: Հակառակ հոսանքի գրականագետների մասին համառ լուսմ էին նրանք, կարծելով թե այդպիսով կսպանեն գրողին ու նրանց գործերն էլ կթաղեն պատմության մոխիրի մեջ:

Սակայն Հոկտեմբերյան հեղափոխությունը ոչ թե մոխիրի տակ թաղեց հիշածս գրողներին, այլ, ընդհակառակը, վեր հանեց նրանց որպես վառվող հրդեհի բոցեր, որպես ալիքների վրայից ափ իշնող նալեր:

Մեր գրականության մեջ դրամատուրգիայի բնագավառում այդպիսի հաղթության արժանացողներից մեկն էլ Անուշավան Վարդանյանն է:

Այն Վարդանյանը, որ խլուրդային աշխատանք էր կատարում լեզար. ճանապարհով և իր պիեսներով թիֆլիսի բանվորությանը զգուշացնում հեռու մնալ մանր-բուրժուական, դաշնակ և այլ կուսակցությանց մեջ խմորվելու վտանգից: Այն Վարդանյանը, որ սեփական ծախքով բեմ էր հանում իր «Դործադուլ», «Անարիստ» հումորով լի պիեսները:

Տոնենք մի այդպիսի համեստ գործչի 25-ամյակն ըստ արժանվույն և սպասենք նրա աշխատանքների՝ «Տգիտության զոհեր, կամ գործադուլ», «Նախօրյակին», «Ուրվականներ, կամ Սունդուկենց Գարոյի տունը», «Անարիստ» և մյուս ձեռագիրների լույս տեսնելուն, որ հոբելյանի առթիվ ձեռնարկել է հրատարակել Հայաստանի Պետհրատը:

Եվ այն ժամանակ միայն լայն մասսաները կիմանան, թե որպիսի գրական գանձեր է թողել մեզ մեր անդրանիկ հայ բանվորական դրամատուրգը:

## «ՀՐՋԵՎԱՆԵՐԸ» ՄԵՐ ԲԵՄԻ ՎՐԱ.

Առաջիկա շորեցաբթի պետական հայ ակադեմիկ դրաման Թուաթավելիի թատրոնում առաջին անգամ բեմադրում է Ա. Լունաչարսկու «Հրձիգներ» նոր պիեսը, թարգմանությամբ՝ պրոլետ-բանաստեղծ Հակոբ Հակոբյանի:

Այս պիեսը, որ Լունաչարսկու մոտ մի տասնյակ պիեսներից ամենաուժեղն ու գեղեցիկն է համարվում թե՛ բովանդակության, թե՛ հարուստ բեմադրության և թե՛ նոր գեկորների ու լույսերի էֆեկտների կողմից, մեծ բավականություն պիտի պատճառի մեր թատրոնասեր հասարակության:

Ի՞նչ է ներկայացնում իրենից Լունաչարսկու այս նոր գործը:

Բովանդակության կողմից՝ հեղափոխական, գլխավորապես մասսայական մի պիես է նա, որի նյութը հեղինակը վերցրել է մեր այսօրվա կյանքից:

Այլ խոսքով, սա երրորդ ինտերնացիոնալի պայքարն է Երկրորդ ինտերնացիոնալի մենշևիկների դեմ, որոնք պայմանավորված ելքոպական կոալիցիոն կառավարության՝ Անտանտի հետ, կամենում են ամբողջ եվրոպայում ոչնչացնել կոմունիստական շարժումը և այդպիսով իրենց կողմը քաշել բանվորական մասսաները. բայց չնայած այդ նպատակին հասնելու համար գործադրած նրանց ստոր դավագրություններին ու զրաբարտություններին, ոչ միայն չեն աջողում, այլև շարաշար պարտվում են շնորհիվ հեղափոխությունը բորբոքող «Հրձիգ» կոմունիստների:

Լրագրական կարճ հոդվածով մանրամասնորեն ծանոթացնել ընթերցողին պիեսի լրիվ բովանդակության հետ՝ անհնարին է:

Նրան պիտի տեսնել, նրանով ապրել, որ գնահատումը լինի ըստ արժանվույն:

Պիեսի գրավիչ կողմն այն է, սակայն, որ հանդիսականն անձամբ տեսնելու է իր հին և նոր ծանոթներին՝ մեր հեղափոխու-

թյան թե՛ դրական և թե՛ բացասական տիպի հերոսներին, որոնց հեղինակը փոխադրել է Անտանաի երկիրը՝ Եվլուպա:

Տեսնելու է նա բոլշեկիզմից դեպի մենչեւմը անցած հեղափոխական գործի դավաձան այն ունեղատներին, որոնք հանդես են գալիս խուզարկուների, պրովոկատորների դերում՝ հօգուտ եվրոպական բուրժուազիայի և նրա կառավարության շահերի:

Մյուս կողմից, նա տեսնելու է մեզ ծանոթ այն կոմունիստ գործիչներին, որոնք, իրենց անձը նվիրած պրոլետարիատի ազատագրման գործին, աշողում են աշխատավոր դասակարգը ոտքի հանել, «Հրկիզել» երկիրն ու ազատել նրան եվրոպական կապիտալի ճիրաններից:

Եվ այս ամենը կոլեյդոսկոպի պես անցնող պատկերներով, գործողություններով, հոյակապ մի պայքար է, որը հետեւողականորեն զարգանալով՝ պիեսի հանգույցը բերում, հասցնում են հաղթական վախճանի:

Որո՞նք են այն ազգակները, որ պիեսը դարձնում են հետաքրքրիր, կամ ինչի՞ մեջ է կայանում նրա նորությունն ու հմայքը:

— Եվրոպական ծովափնյա մայրաքաղաքը, պրոլետարիատի մասսայական շարժումը, նավահանգստից դեպի քաղաքի կենտրոնը գիշերվա ժամին ջահերով նրա ճկուն պայքարը, ճարապիկ հնարագիտությունը, փակ միտինդները, եվրոպական դիալոգատների գաղտնի ժողովը, ուր մասսայական ջարդերի ծրագիրն է ծրագրվում և այն, և այն, որոնք նույնպես հիշեցնում են Ռուսաստանի բանվորական հզոր շարժումները և Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը:

Եվ ապա նոր գեկորները, լույսերի էֆեկտները, բոցավառվող գործարանների գիշերվա շունդն ու ժխորը, բազմաթիվ լրագրավաճառ երեխանների զվարթ ճիշն ու ազաղակը ծառացող հեղափոխության մասին, ամեն կողմից ահազանգեր, լուսավորված շարժական ունկաներ ու պլակատներ, որոնց միջոցով կոմունիստները երեան են հանում հակառակորդի դավագրություններն ու ծրագիրները և այդպիսով ավելի կատարյալ դարձնում հուզված մասսաների թափն ու հաղթանակը:

Ու այդ ամենը, զիխավորապես, լույսերի էֆեկտների միջոցով, որով այնքան հարուստ են եվրոպական մայրաքաղաքները:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն, բեմագրության այս բարդ ու գժվարին գործը լիովին հաշողվել է ուժիսյոր Քափանակյանին, մանավանդ, որ նոր գեկորների ու լույսերի էֆեկտների

վրա քիչ գումար չի ծախսված։ Վստահ կարող ենք ասել, որ «Հըր-  
ձիգները» մեր դերասանների համար հեղափոխության թափն ար-  
տահայտող մի քննություն լինելով՝ կարող է խստապահանջ թա-  
տերասերին անդամ բավարարել և այնուհետև մշտական, պատ-  
վավոր տեղ դրավել մեր ռեպերտուարում, առավելապես մեծ հա-  
ճույք պատճառել թիֆլիսի բանվորությանը, որը միշտ պահանջ է  
դնում հեղափոխական կենսալից գեղարվեստական պիեսների. և  
որը առիթ կունենա ամսիս 19-ին տեսնել այն՝ այնպիսի մեծ ու  
տեխնիկապես հարուստ քեմի վրա, որպիսին է Ռուսթավելիի ան-  
վան թատրոնը։

## ԻՒԽՈԼՈՎԻԱԿԱՆ ՑՐՈՆՏ

(Թեզեր)

1) Պրոլետարական կուլտուրան — Հեղափոխության էպոխայի կուլտուրա է, դասակարգային կուլտուրա:

2) Պրոլետարիատին հակառակ, թշնամի կամ օտար գրականության պաշտպանությունը կարող է հասցնել կամքի թուլության և տատանման բանվորական մասսաների և առաջին հերթին կուսակցական և բանվորական երիտասարդության (МОЛОДНЯԿ):

3) Այսօր մենք դասակարգային վճռական կոխվների և պայքարի նախադրան առաջ կանգնած լինելով, անհրաժեշտ է գործադրել մաքսիմալ դասակարգային էներգիա և սրություն իդեոլոգիական ֆրոնտում:

4) Եվ քանի որ մեր գեղարվեստական գրականությունը պրոլետարիատի կյանքի և կովի արտացոլումն է, պատկերավոր արտահայտությունը, իդեոլոգիական ֆրոնտում նրա թուլացումը անմիջականորեն, թե կողմնակի կերպով—ուսակցիա է:

5) Պոլիտիկան գեղարվեստի մեջ անհրաժեշտ է այսօր:

6) Ասել, թե չկա պրոլետարական գրականություն — աբսուրդ է, ով հասկանում է կյանքը պրոլետարականապես (ոո որութար-էկի), նա կարող է ստեղծել ով կանգնած է պրոլետարական տեսակետի վրա, ով պաշտպանում է նրա շահերն ու կռվում նրա համար և, ով համակված է նրա հոգերանությամբ — այդպիսի արվեստագետը հեղափոխական-պրոլետարական գրող է:

7) ...Պրոլետարական է այնպիսի գրականությունը, որը կազմակերպում է պսիխիկան և դիտակցությունը՝ թե՛ բանվոր դասակարգի և թե՛ աշխատավորական խավերի և տանում է նրանց վերջնական նպատակին հասցնելու, այն է՝ կոմունիստական հասարակություն:

8) Մեր կուսակցությունը ունի իր գիծը գեղարվեստական գրա-  
կանության մեջ — մասսաների գեղարվեստական դաստիարակու-  
թյունն ու կրթությունը պիտի կոմունիստական լինի և ոչ քաղե-  
նիական, միստիկական. այդ է պահանջում մեր կուսակցությունը  
մեզանից ու մեղ թվում է, որ այդ գիծը մենք տանում ենք ուղիղ:

9) Նեղանցություն պահպանություն կարող են մատուցել մեղ այս գիծը ճիշտ տանելու մեջ. նույնը և  
զառամյալ էսթետները, նույնը և Հնապաշտությամբ տարված թե-  
քումների ասպետները, որոնք կամենում են էսթետական կամուր-  
ձգել Հնի և նորի մեջ, պրոլետարականի և բուրժուականի մեջ:

10) Ահա թե ինչ չ որոշել Մոսկվայի պրոլետ-գրողների կոն-  
ֆերենցիան. բոլոր ժամանակ մենք պարտավոր ենք կոփվ մղել բո-  
լոր տեսակի բուրժուական գրականության դեմ:

11) Հնից շենք հրաժարվում անպայման, բայց նրան շենք  
պաշտում, շենք աստվածացնում... Հների մեջ կան հակածեղափո-  
խական շատ և շատ գործեր, որոնք մթագնում են մեր մասսաների  
գիտակցությունը, դրա դեմ է, որ մենք մաքառում ենք... Անբարե-  
խիղճ գեմագողիա է ասել, թե ‘անպայման հերքում ենք Հինը կամ  
լեֆիստներ ենք մենք, մենք մարքսիստ-կոմունիստ շեինք անվանի  
մեզ, եթե այդպես լիներ. Մենք գիտենք, թե երբ և ինչպես օգտվել  
Հնից:

## Ի՞նչ Ան՛ՈՒՆ ՏԱՆՔ...

(Նամակ խմբագրության)

Թուլլ տվեք «Մարտակող»-ում հայտնել իմ արդար զայրույթն ու բողոքը այն վարմունքի դեմ, որ թուլլ տվեց իրեն ոեժիսյոր Քափանակյանը երեքշաբթի երեկոյան իմ թարգմանությամբ բեմադրած «Հրձիգների» վերաբերմամբ:

Ներկա սեղոնում այս պիեսը մեր բեմի վրա խաղացվում է ահա երրորդ անգամ:

Առաջին երկու դեպքում յոթ պատկերով — լիովին, իսկ վերջին անգամ կրճատված՝ վեց պատկերով:

Ոեժիսյոր Քափանակյանը ինչ-ինչ դիտավորությամբ և դատողությամբ այս անգամ պիեսից հանում է ամենահետաքրքիր, ամենաէական պատկերը, և գիտե՞ք որը... Հեղափոխության պատկերը, որը զլսավորապես ներկայացնում է «Հրձիգների» ուղն ու ծուծը, հմայքն ու գեղեցկությունը:

«Հեղափոխության» 6-րդ պատկերը, թեև առաջին երկու դեպքում բեմադրվեց բավականաշափ անճոռնի ու կրճատված, այնուամենայնիվ նրա բովանդակությունը ունեցավ իր էֆեկտն ու ազգեցությունը հանդիսականների վրա:

Մոսկվայում այս պատկերը դրվում է ոչ միայն լիովին, այլև ճոխացրած, այնպես՝ կարծես Հոկտեմբերյան հեղափոխությունն է իր բոլոր ոգեստին մոմենտներով ծառանում ու պատկերանում առջև:

Մոտիկ օրերին թողնելով «Հրձիգները Մոսկվայում և մեղ մոտ» պատրաստի Հոգվածու<sup>1</sup>, պիտի ենթադրեմ, որ ոեժիսյոր Քափանակյանը կամ հեռավոր գաղափար շունի մեր հեղափոխության և նրա ընթացքում տեղի ունեցած հերոսամարտի մասին, կամ խուսափում է նրան ներկայացնելուց...»

Հակառակ դեպքում նա ավելի շուտ կկրծատեր չորրորդ պատկերի վերջին մասը, որ այնքան ձգձգված է, կամ 7-րդ և այլ պատկերներից տեղեր ի հաշիվ 6-րդ պատկերի, ինչպես այդ տեղի ունեցավ Մոսկվայում:

Որպես «Հրձիգների» թարգմանիչ, այլև հեղինակի կողմից ավտորիզացիայի միակ լիազորը՝ նև բողոքում եմ մի այսպիսի տգեղ վարմունքի դեմ և պահանջում, որ ապագայում, եթե նորից կրեմադրվի պիեսը, թող ոեժիսյոր Քափանակյանը նեղություն քաշի կամ մտցնել վեցերորդ պատկերը լիովին, թեկուզ առաջին երկու անգամ բեմադրած այն կոպիտ թնդոցներով (որոնցով կարծես Սոլոլակի սարերն էր պայթեցնում), կամ կրծատի պիեսի ավելորդ մասերը իմ ցուցումով, և կամ բոլորովին շբեմադրի այն, մինչ որ այս ամենաուժեղ պատկերը ըստ պիեսի կիրագործի հեղափոխության արժեքը իմացող ու գնահատող մի այլ ոեժիսյոր:

Հակոբ Հակոբյան

Բ. Տ. Օգտվում եմ առիթից ու հայտնում բոլոր նրանց, որոնք և որտեղ բեմադրում են «Հրձիգները», ի նկատի ունենան հետևյալ վավերաթուղթը, որ տվել է ինձ պիեսի հեղինակը անցյալ տարվա 27 հոկտեմբերի ընդ № 3561, Մոսկվայից: Ահա նրա պատճենը<sup>2</sup>:

#### РСФСР НАРКОМ ПО ПРОСВЕЩЕНИЮ

##### Удостоверение

Настоящим удостоверяю, что мною дано монопольное полномочие народному поэту Армянской Республики тов. Акопу Акопяну на перевод пьесы моей «Поджигатели». Все остальные переводы прошу считать не авторизированным.

Нарком по просвещению:

А. Луначарский

(Чийք)

## ԽՈՍՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԻՆՉ

Հրատարակված տեսնելով իմ բանաստեղծությունների ժողովածուն, թեև ոչ բոլորովին լիակատար, սրանով գալիս եմ ասելու՝ Feci quod rotui...\*

Ճիշտ է, հայ դրականությանն ընդհանրապես, և պրոլետարական դրականությանը մասնավորապես, և շտվի մեծահատոր ու շատ ինքնուրույն գործեր, բայց հայ աշխատավոր մասսաների, նրա առաջավոր պրոլետարիատի ապրումների և ոգևորության գուռ բացողը — առաջին անգամ բանաստեղծության միջոցով — եղավ նվաստիս գրիշը. մի հանգամանք, որի մասին քանիցս շեշտել ու պնդել են իմ բազմաթիվ քննադատները:

Որքա՞ն հարուստ և ավելի բեղմնավոր պիտի լիներ, սակայն, այդ գրիշը, եթե դրա համար ստեղծված լինեին նպաստավոր հանգամանքներ, այլ խոսքով՝ եթե ես կարողանայի հատկապես ծառայել դրականությանը միայն:

Դժբախտաբար այդպիսի պայմաններ գոյություն չեն ունեցել ինձ համար: Ես ապրել եմ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ շատ գժվարին էր ինձ նման մի անօդ, մի աղքատ արհեստավորի որդու համար՝ դոնել մի համեստ, մշտական, թեկուզ նվազ նյութական աղբյուր, որն ապահովեր կյանքիս ընթացքում թե՛ իմ բազմանդամ ընտանիքի մինիմում ապրուատը և թե՛ երեք զավակներիս խնամքն ու կրթությունը:

Չնայած նրան, որ ինձ, բոլորովին ընշաղուրկիս և հաճախ գործադուրկիս, կարիքի և զրկանքների ամենամեծ բաժինն է ընկել՝ համեմատած մեր համարյա բոլոր ժամանակակից զրողների հետ, որ կաշկանդված ու անաղատ եմ զգացել ինձ մինչ մեր երկրի

\* Լատ.—Ես արեցի այն ամենը, ինչ կարող էի:

սովետիզացիան, և կյանքիս համարյա ամբողջ ընթացքում ամենօրյա աշխատանքի գնալու ստիպողականությունից դժգին, եռանդիս և առողջությանս մաքսիմումը վատնել եմ, կապիտալին ծախելով, այնուամենայնիվ մեր պրոլետարիատին ես կարողացա թողնել մի ժառանգություն՝ երեք թանկագին ղավակներիս. ա) ներկա ինքնուրուց բանաստեղծություններից ժողովածուն՝ առաջին հատորով, բ) Արա Ներքիի, Գաստեի և ոռու ժամանակակից շատ պոետների թարգմանությունները՝ երկրորդ հատորով, և գ) արձակ գրվածքներս (պատմքածքներ, մեմուարներ և մեր կուսակցական օրգաններում լույս տեսած այնպիսի հոգվածներ, որոնք գրական-հասարակական նշանակություն ունեն)՝ երրորդ հատորով, որը պատրաստ տպագրության է սպասում։

### Ես ավելին կասեմ.

Մինչև կյանքիս 55 տարին հասնելը, շեղավ մնելը, որ իմ ազատ կամքի և տրամադրության տակ գներ այն ոսկի ժամանակը, որ հասարակ լեզվով կոչվում է առավոտ, որի ընթացքում զլիսավորապես իմ գրիշը գիտեր թևավորվել, խոսել, ինչպես որոշ ժամար լարած խոսկան մի բուդինիկ. իսկ այդ առավոտ կոչվածը մուսայիս ոսկերի սոսափման պահերն էին...

Առավո՞տ... որքա՞ն սիրելի, որքա՞ն կարոտալի ես եղել դու ինձ համար, բայց և որքա՞ն արգելվալ, որքա՞ն տանջալի, ժլա՞տ...

Զգում էի, թե ինչպես մի խորհրդավոր կրակով սրտիս քուրացում տաքանում, շիկանում էին ինչ-որ խայթող ապրումներ, ուառում էին արյունս, պութիկալու պատրաստում մտահղացումներս։

Պոռթկման և հուզումի մի այնպիսի սքանչելի մոմենտ, իմ քմահաճ գրիշ-մուսան սովորաբար առավոտներն էր ընտրում՝ աշխատանքներից հոգնած ու խոնչացած ուղեղիս գիշերը հանգստություն տալուց հետո։ Եվ ահա... ձեռքս էի առնում մուրճ-գրիշը, որ կոփիմ, ձևակերպեմ մորքերս, մի ձև տամ նրանց, և ահա... ասում եմ, ժամացույցը զարկում էր 6-ը, 7-ը՝ գործարան գնալու համար, 8-ը, 9-ը՝ առևտրական տների կամ բանկային ակամա աշխատանքներ կատարելու համար, կարծես ասելով՝

— Գործի՛ ելիր, շո՛ւտ,

Ուշանա՞ փողոց կնետվես անշուշտ...<sup>2</sup>

Քանի՛-քանի՛ անգամ այսպես, նման ոսկի առավոտներ, այնպես շքեղ հղացումներով, բորբոքված, շիկացած զգացմունքներով կարոտ են մնացել մուրճի և վարպետի ձևալորման, թողնվել են կի-

սավարտ, անուշագիր... Քանի՞սը հետզհետե սառել, մարել ակամա, մոխիր դարձել, կորել, անհետացել... Քանի՞ գեղեցիկ մտահըղացումներ խեղդվել գործարանների սովորիչների և բանկի ու կոնտորների համրիչների ժխորի մեջ...

Ե՛ս շեմ մեղավոր, իմ պրոլետար ընկերներ, որ այսքան քիչ գործ արտադրեցի ձեզ համար. Ե՛ս շեմ մեղավոր, որ այսքան քիչ ոնունդ թողեցի ձեր սոված մտքին իմ երեսուն և ավելի տարվա դրական գործունեության ընթացքում:

Մեղավոր էին այն ցավն ու կրակը, որով այրվում ու առշորվում էի ձեզ հետ միասին...

Մեղավոր էր այն անիծյալ կացությունը, որի համար ծախսում էի իմ թարմ, երիտասարդ ջղերի հյութերը կապիտալին, մինչ ուժասպառ լինելը, մինչ օրերիս շուտ ծերանալը:

Մեղավոր էին, վերջապես, այն արգելքներն ու շղթաները (լինեին նրանք ցենզուրական, քաղաքական, թե ազգայնական-նացիոնալիստական հալածանքներ), որոնցով կաշկանդված էի ևս մինչև մեր երկրի խորհրդայնացումը:

Սակայն մի հանգամանք, որ միշտ անշափ ուրախացրել է ինձ՝ այդ այն է, որ ևս կատարեցի այն, ինչ կարողացա, որ իմ քոօք թուա-ի եղել է մի կարկաչուն, թեև ոչ այնքան առատահոս աղբյուր, որը հագեցրել է մեր պրոլետարիատի ծարավը՝ նրա պապակի ժամին։ Այլև այն՝ որ հենց գրիշ բռնելու առաջին օրից խուսափել եմ բարձրագուշ, խճողված, դժվարամարս, ճոռոմ ոճի գործածումից և նոր գիտակցության եկող հայ բանվորության հետ խոսել եմ պարզ, հասկանալի ու մատշելի լեզվով։

Այս պահանջը գրել է մեր անմահ ուսուցիչ Լենինը, և, կարծում եմ, իմ նպատակին հասել եմ լիովին։

Գալով իմ գրական վաստակի սկզբնավորության օրին՝ այստեղ ևս առաջին անգամ պիտի հայտնեմ, որ նա թեև սկսել է դեռ աշակերտական նստարանից, սակայն մշակված, գրական արժեք ներկայացնող գործեր սկսել եմ տալ 1889 թվականից, երբ առաջին անգամ ինձ սկսեցին կարդալ Բաբիլ «Հույս» ուսանողական ամսաթերթում (մի լուրջ ամսագիր, ուր զետեղված էին նախնական շրջանի ստեղծագործություններս) — «Ուստ բարեկամության», «Նըվեր ԱՆ-ին», «Աղոթք», «Աշեր» և այլ բանաստեղծությունները, որոնք հետագայում, 1893 թվի հոկտեմբերին 10 հեց տպագրեց

«Մուրճ»-ի խմբագրությունը, ու այստեղից էլ փաստորեն սկսվեց իմ գրական գործունեությունը:

Հիշածս երկերը, շատ ուրիշների հետ միասին, ապագա բանասերը կարող է գտնել իմ «Հիշատակարաններ»-ում, որոնց սկսել եմ գրել 1884 թվականից մինչև 1894-ը, ուղիղ տասը տարի և որոնք պահպում են իմ արխիվում (բացի 1894 թվի հատորից, որ նույն թվին խլեց պահնորդական բաժինը՝ օխրանկան ու բանտարկելով ինձ, այլևս չվերադրեց):

Ավելորդ չեմ համարում հայտնել, որ ներկա հատորի մեջ ես հարմար համարեցի զետեղել միայն 85 մշակված բանաստեղծական երկ, որոնցից մոտավորապես երկու տասնյակ լույս չեն տեսել և ոչ մի տեղ. և ընդհակառակը, ներկա հատորի մեջ չեն մտել մամուլում լույս տեսած՝ 50-ից ավելի ոտանավորներ, որոնք, ըստ իս, իրենց թե՛ բովանդակությամբ և թե՛ հնացած գաղափարով՝ որպես գիտնանս, կիսանգարեին ներկա ժողովածուի ընդհանուր ներդաշնակությունը:

Դարձյալ ապագա բանասերին, կամ ավելի ճիշտ՝ հրատարակական օրգաններին եմ թողնում այս հանգամանքից օգտվելու հնարավորությունը, եթե նրանք երբեմն կրաբեհածեն մտածել մի ավելի ընդարձակ, ակադեմիկ ժողովածու հրատարակելու մասին, առանց բաժինների վերածելու իհարկե, ժամանակագրական կարգով: Այս 50-ից ավելի կտորները, «Երկաթե տեմպով» վերնագիր կրող մի կիսավարտ պոեմի հետ, արտագրած ունեմ առանձին տետրակում և դարձյալ պահում եմ արխիվում: Հավանական է, որ նրանք լույս կտեսնեն մահիցս հետո<sup>3</sup>:

Այնուհետև՝ կուտանվեն մարդիկ, որոնք կփոշտան այն նորաձևությունից, որը մտցրել եմ ներկա հատորի մեջ, զետեղելով ինձ տրված պատիվների ու կոչումների վավերագրերը. շատ զառամյալ ուղեղներ կասեն՝ դա սնապարծություն է...

Իգո՞ւր:

Շտապում եմ հանգստացնել մեր մեջ երևան եկած մի քանի գրական քուրմերի, որ ես անձամբ ինձանից ոչինչ նոր բան չեմ հորինած:

Այս ձեզ վաղուց ընդունված է Ռուսաստանի Պետհրատի կողմից, այս ձեռվ, և ավելի ճոխ, հրատարակված են հայտնի պրոլետանաստեղծ և առակախոս Դեմյան Բեղնու հեղինակությունները (1909—1922 մի մեծ հատորի մեջ), որ լույս է տեսել կարմիր Մոսկվայում, 1923 թվին:

Այսպես, ուրեմն, ես միայն ընդօրինակել եմ Դեմյան Բեդու ժողովածուի ձևը:

Այս ձևը թող առաջխաղացման խրախույս հանդիսանա մեր այն երիտասարդ լավ ապագա խոստացող պրոլետ-դրոզների համար, որոնք պրոլետ-դրականությունը զարգացնելու ու խորացնելու շատ տվյալներ ունեն: Ես առաջին անշուրք, անպաճույք պրոլետարական «սաղը», ինպրոլիդացիան հնարեցի միայն, թող նրանք ստեղծագործեն պրոլետարական «սիմֆոնիաներ»:

Անշուշտ, կտնվեն բարձր պրետենդիաներով էսթետ-ինտելիգենտ ընթերցողներ, տարրեր մտահայացքով, որոնց արիստոկրատական ճաշակին ու պահանջին գոհացում չի տա իմ անպաճույք քնարի նյութը. ի՞նչ փուլթ... Գրելիս՝ ես միշտ և գլխավորապես նկատի եմ ունեցել առողջ բանվորա-գյուղացիական և նորածիլ աշակերտական-ուսանողական մասսաներին, և ոչ շմահավան ինտելիգենտին:

Եղել են ու կան այնպիսի անուզգելիներ, եթե կուզեք՝ իրենց մարքսիստ համարող խիկարներ, որոնք քանիցս անարգարացի ասել են ու կրկնել, թե՝ մեր անցած պրոլետարական շարժման էտապները, անցած կովկի ու ապրումների շրջանը ու զործարանացին կյանքը ես տվել եմ իմ ստեղծագործությունների մեջ ընդհանուր գծերով, շարիխներով, որպես էսքիզներ. կամ «թույլ եմ տվել սայթաքումներ ու հակասական մոմենտներ»:

Նաև՝ այդ կրկին փուլթ չէ, երկրորդ՝ ճիշտ չէ, և երրորդ՝ այնքան էլ ճեշտ չէ... Սակայն է միայն ճեշտ...

20—25 տարի սրանից առաջ, երբ հեղափոխական-մարքսիստական ըմբռնողությունը բացակայում էր մեր իրականությունից, երբ մարքսիստական միտքը, հեղափոխականի ապրումները չեին ձեակերպվում, կամ շատ գժվար էին ենթարկվում բանաստեղծական արտահայտության, կամ, վերջապես, երբ մի պրոլետարական երկ արտադրելու համար անհրաժեշտ էր օգնության կանչել ոչ թե երեկով և այսօրվա պատրաստի, ձեակերպված կյանքի փորձառություններն ու փաստերը, այլ զրոյի ներքին կրակը, ներքին մղումը, հեղափոխականի ինտուիցիան, այդպիսի մի գրականության պատմության զարգացման անդիտակներին, անարխիստ-ինդիվիդուալիստներին այդպես մտածելը և՛ թույլատրելի է, և՛ ներելի:

Գուցե գտնվեն և այնպիսիները, որոնք առարկեն ինձ, թե ինչո՞ւ «Կարմիր Գալերեաից» բաժնում բացակայում է հանգուցյալ ԱԼ. Մյասնիկյանի անունը, որն այնպես ողբերգական մահով զոհ

կնաց անողոք տարերքին... Դարձյալ Յոդ չէ... Չէ՝ որ այդ տեղի ունեցավ տարբեր տեսակետների, որոշ «գատողությանց ու գիտակցությանց» հիման վրա, լինեն նրանք քաղաքական, թե գրական... ձիշտ է, բացակայում է Ա. Մյասնիկյանը, բայց նա չի վրապել իմ տեսողությունից: Արդարությունը պահանջում է ասելու, որ Ա. Մյասնիկյանը խոշոր պետական գործիչ էր, հոյակապ կազմակերպիչ, անկրկնելի, պատմական մի եռանդ՝ խորհրդային իրավակարդի համար. բայց համեմայն դեպք ինձ մեղադրելն այդ բանում անհիմն կլինի, որովհետև իր ժամանակին՝ (1922 թ. նրա վարչապետության օրոք) իմ հարկը տվել եմ այդ «լավ հայրենասերին» նրան նվիրած հետեւյալ քառյակով.

ՀԵ՞ թիավար, փրփուր ծովի,  
Շուրջդ մրրիկ, թուխալ ու ամպի...  
Երշանիկ ես... քեզ վիճակվեց  
Նավը հանել դեպի ափի...

Հույս ունենամ, ուրեմն, որ եթե Խորհրդային Հայաստանի ամենալավ «Հայ մարդը» շմտավ «Կարմիր Գալերեաից» բաժինը, այդ կվերադրեն իմ անկեղծության, դյուզ սրտով խոսառվանքիս և ինձ շեն մեղադրիլ «Համառությանս» ու առանձին համոզմունքիս համար դեպի ընկ. Ալլոշան:

Մի խոշոր թյուրիմացության մասին երկու խոսք:

Օգտվում եմ հանգամանքից և առաջին անգամ, թեև ուշ, տպագրության միջոցով հայտնում Բաքվա ինձ համակրող պրոլետարներին, որ եթե ինձ շաշողվեց հոբելյանիս օրերին այցելել նրանց՝ դրա մեջ մեղավորը ես չեմ, այլ հանգամանքները:

Բաքու գնալու հրավերը ես ստացել էի գրավոր, Աղբբեշանի կենտկոմից լիազորված ընկ. Ծիրվանսկու միջոցով՝ դեռ Թիֆլիսում տոնակատարությունները չվերջացած... Բայց որովհետև Խորհրդային Հայաստանի հանրապետությունը Աղբբեշանից խլեց տոնակատարության առաջնությունը (երեք անգամ, սակայն, հետաձգելով այն), բայց որովհետև եւ <որհրդային> Հայաստանում այդ տոնակատարությունը ձգձգվեց մի քանի քաղաքներում, մանավանդ Լենինականում... ու երբ պատրաստվում էի այցելել Բաքու... հանկարծ մեռնում է մեր մեծ ուսուցիչը, Վ. Ի. Լենինը, որից հետո, թերս վիշրված տեսնելով, հետաձգեցի այն:

Կուգեի մի քանի խոսք էլ ասել իմ մի քանի «բարեմիտ» քննա-

դատների և մի վերջին «շիտակ» ու «ազնիվ քննադատ» կոչեցյալի, մասին:

Կարիք կա՝ արդյոք երկար կանգ առնել նրանց վրա: Սրանց և նմանների մասին սույն գրքի առաջաբանում ակնարկներ կան... Ես այն կը պացնեմ միայն:

Սրանցից ավագագույնը, Լեռն, որ իր «Գրականության պատմության» մեջ Հովհաննես Թումանյանի պես տաղանդավոր բանաստեղծին անվանեց «կոլիսի ու պարի», այլև «կարինետային» երգիչ, «պատիվ» շաբեց նույն «Գրականության պատմության» մեջ իմ երկերի մասին մի խոսք հիշելու անգում, թեկուղ համեմված լիներ այն վատ գույներով ու աննպաստ կարծիքներով...

Մյուսը՝ նրա հոգեղավակ և տիրահոչակ Բախչի Իշխանյանը, մոտ 20 տարի սրանից առաջ, զեկավարվեց՝ մի կողմից խնամիական դեպի ուրիշը, մյուս կողմից դեպի ինձ թշնամական տենդենցներով:

Սրան հետեւց երրորդը, Պողոս Մակինցյանը, որը սիստեմատիկ կերպով իր խմբագրած ոռու ժողովածուներում (1) «Պօէզիա Արմենիա» Վ. Բրյուսովի զիսխավորությամբ և (2) «Сборник Армянской Литературы» Մաքսիմ Գորկու զեկավարությամբ) միշտ «ինչ-ինչ» պատճառներով (ի՞սկ որ՝ ինչ-ինչ) զլանում էր զետեղել ինձ թարգմանաբար, վերջերս սկսեց մի այնպիսի արշավանք իմ դեմ, որ սազ կը պար ինդիվիդուալիստ էսթետիին միայն:

Եվ վերջապես շորրորդը՝ Սերո Մանուցյանը իր «Գրական սիրուետներ»-ով անցավ այս բոլոր վերը հիշածներից:

Նա գիտությամբ, թե անդիտությամբ, ոչ միայն աղավաղեց իմ մտքերը, այլև խարզախնեց երկերիս տարեթվերը՝ «Հավասարություն» պոեմս համարելով հետ-հոկտեմբերյան, իսկ «Ամբոխն իմ աշխարհը»՝ 1906 թվի գրվածք... իր «քննադատական» մարդանքներն արդարացնելու համար: Եվ ոչ միայն այդ, այլև երկու անգամ նա վստահացավ տպել Բաքվում հրատարակվող «Վիշկա» և «Հայարտուն» օրգանների առաջին համարներում այն իմ մասնավոր իրեն գրած նամակը, որի տպագրելու թույլտվությունը հեռագրով հարցին՝ արգելել էի նույնպես հեռագրով<sup>4</sup>:

Բարին նրանց հետ...

Վերջացնելով իմ խոսքը, ցանկություն եմ հայտնում, որ ներողամիտ գտնվի իմ ընթերցողը, որ վրաղեցրի նրան այս երկար վերջարանով, կամ որ ասելու էլի շատ հայտնություններ՝ մնացին անհայտության մեջ...

## ՓԱ.ՓԱ.ԶՅԱՆ-ՕԹԵԼՈՒ

Առաջին անգամն եմ տեսնում Փափազյանին «Օթելոյի» մեջ:  
Ես բախտ եմ ունեցել «Օթելոյի» մեջ տեսնելու մեծ արտիստ  
Ադամյանին, Թիֆլիսում, 1886 թվականին և, պիտի խոստովանեմ,  
որ Փափազյան-Օթելոն շատ տեղերում հետ չէր մնում իր խաղով  
Ադամյան-Օթելոյից:

Մի հանգամանք, սակայն, որ առաջնությունն, ի վերջո, մնում է  
Ադամյան-Օթելոյին, այդ ձայնի և շկոլայի տարրերությունն է երկու  
արտիստների մեջ:

Ադամյան-Օթելոյի ձայնը չափազանց խրոխտ էր, մոնշող առ-  
յուծի նման՝ ցասման րոպեին, իսկ կասկածի և խանդի ժամանակ՝  
ինչպես հեռավոր որոտի երկարատես մի դղրդյուն. մինչդեռ Փափազ-  
յան-Օթելոն իր ձայնով ճարճատող հրդեհի է նման, որ ինքն իրեն  
այրվում է ու հետզհետե մարում, նվազում:

Արտիստն ապրում է բեմի վրա ճիշտ այնպես, ինչպես ապրում  
էր Ադամյան-Օթելոն ու ապրեցնում հանդիսականներին:

Շկոլայի տեսակետից Ադամյան-Օթելոն իր վրա կրում էր կլա-  
սիկ խաղի կնիքը, մինչդեռ Փափազյանի Օթելոն ամբողջովին ուհա-  
լիզմ էր դրսեռում, որ թվում է վիճելի պիտի դարձնի երկուսից որի  
ճիշտ լինելը:

Սակայն երկուսի խաղն էլ համահավասար համակում են հան-  
դիստկանին, անգամ սարսուռ ազգում մարդու վրա, մանավանդ եր-  
րորդ և չորրորդ տեսարաններում, երբ մավրի խանդոտությունն ար-  
տահայտում է կրեշենտո\*:

Այստեղ արդեն Փափազյան-Օթելոն մոտենում է ու նմանվում  
Ադամյան-Օթելոյին:

\* Լատ.—Չայնի ելեկչների բարձրացում, ուժեղացում:

Նրկու շատ իրար նման հրաշունչ տեմպերամենտ, որոնք արտա-  
հայտվում են համահավասար ուժով:

Վաղուց է, որ բեմից էլեկտրական հոսանքի նման մի այնպիսի  
անուշ սարսուռ չէր տնցել մարմնովս, և այդպիսի մի ուժեղ ցնցում  
կարողացավ ազդել Փափառան-Օթելոն:

Ճիշտ այնպես, ինչպես Աղամյան-Օթելոն քառասուն տարի  
սրանից առաջ կարողանում էր ոչ միայն ցնցել, այլև հեկեկալ տալ  
ամբողջ դահլիճը նախկին Արծրունու թատրոնում:

## ՀԵՐՄ ՈՂՋՈՒՅՆ «ԽՈՇՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ» Ա.ՄՍԱԳ.ԲԻՆ

իմ անդրանիկ լավագույն երկը, որ զետեղված է 1888 թվի Բաքվա ուսանողական «Հույս» թերթում՝ գրել եմ Բաքվում, իմ պատանեկան լավագույն զգացմունքները ծլել են Բաքվում, իմ երիտասարդական լավագույն խոհերն ու իդեալները սկիզբ են առել դարձյալ Բաքվում։ Այժմ ուրախ եմ անշափ, որ 45 տարի անցնելուց հետո, ինձ վիճակվում է մասնակցել Բաքվում Հրատարակող անդրանիկ ամսագրին, քայլել նրա ջահել աշխատակիցների հետ միասին և նրանց հետ միասին մասնակցել սոցիալիզմի կառուցմանը՝ գրական արվեստի ֆրոնտում։

Սրտանց ողջունում եմ «Խորհրդային գրող»-ի առաջին համարի մուտքը Բաքվում։

## <ՈՂՋՈՒՅՆ «ԿԱՐՄԻՐ ՇԻԼԵՐ»-Ի ՏԱՄԱՍՄՅԱԿԻՆ>

Սրտաբուխ ջերմ ողջո՞ւյն «Կարմիր Շիլեր»-ի խմբագրությանը և նրա մշտական ու երկարամյա աշխատակիցներին՝ ամսագրի 10-ամյակի առթիվ:

«Կարմիր Շիլեր»-ը 10 տարի շարունակ սնել, դպստիարակել է մեր մատաղ սկզբունքը, — պատրաստել նրան սոցիալիստական հոյակապ շենքի կառուցման մասնակցելուն ու հասել է դրական արդյունքների:

«Կարմիր Շիլեր»-ի շուրջը հավաքված մանկական գրողները եռանդ ու ջանք չեն խնայել լավագույն, առողջ սնունդ մատակարարելու դիտակցությամբ աճող դպրոցական ծաղկափթիթ աշակերտությանը:

Սա եղել է մի խոշոր ժառայություն նրանց կողմից — մի-մի աղյուս շարել նոր հասարակարգի շենքի կառուցման:

Ու ևս մեծ հույս ունեմ, որ այս փուլն անցնելուց հետո, «Կարմիր Շիլեր»-ի թե՛ խմբագրությունը, թե՛ աշխատակիցները և թե՛ մատաղ ընթերցողներն ամսագրի մյուս 10-ամյակին կաշխատեն, ըստ իրենց ուժի, ավելի ևս հեշտացնել ու իրականացնել սոցիալիզմի կառուցման շրդ փուլի լողունքը, այն է՝ ստեղծել անդասակարգ հասարակություն:

## ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Մինչև այժմ Ստեփան Շահումյանի մասին գրած բազմաթիվ հոդվածներն ու մեմուարները վերաբերում էին նրա քաղաքական գործունեությանը, կամ նրա հերոսական մահով վախճան ունեցած կյանքի նկարագրությանը:

Այդ ուղղությամբ, համարյա ամեն տարեղարձին, նյութիր ու հուշեր տվել եմ և ես, որոնք ամեն սեպտեմբերի 20-ին տպվել են «Կարմիր աստղ»-ում, «Մարտակոշ»-ում և այլն<sup>1</sup>:

Սակայն Ստ. Շահումյանը միայն քաղաքական խոշոր գործիչ էր, ու ոչ Ֆլ մեր կուսակցության անդիկովկասյան պարագուխն ու ղեկավարը միայն, այլև տաղանդավոր քննադատ էր գեղարվեստական գրականության և նույնքան տաղանդավոր փողովոգ քննադատ սոցիալիստական գրականության բնագավառում:

Նրա նուրբ և թափանցիկ տեսողությունից չէր վրիպում երբեք գրական-գեղարվեստական արժեք ունեցող, կամ քաղաքական բովանդակություն ունեցող ոչ մի գիրք, երեսոյթ, զրվածք, բանասիրություն, նա միշտ էլ առաջինն էր, որ թե՛ մամուլում, թե՛ առանձին գրքով արտահայտում էր իր, որպես հեղափոխական մարքսիստի, վերաբերմունքն ու կարծիքը այս կամ այն բանասիրական, գեղարվեստական արժեք ունեցող երկի, տրակտատի վերաբերյալ մինի նա Ս<ոցիալ-դեմոկր>ական, թե՛ օտար բանակից:

Զարմանալի նրբազգացություն խորաթափանց ըմբռնումների, շրջանակ ու կտրուկ որակում ու բնորոշում ամեն մի մոլորված, սիալ մտքի արտահայտության, կերտող վարպետի կարողության շափանալիտիկ միտք և ուղեղ, որով երեսութիւն տալիս է ամենաճշգրիտ բնորոշումը:

Այդ բնորոշումը կտրուկ էր, անմաշ ու անջնջելի՝ քարի վրա ակոսած-կերտածի պայծառությամբ ու խորությամբ:

Զկամենալով անգամ համեմատության տակ գնել այդ նույնը՝

խորաթափանց և տաղանդավոր քննադատին մեր այսօրվա տնտեսուն գրախոսներից շատ շատերի հետ, պիտի ասեմ, որ գժրախտաբար Ստ. Շահումյանը ոչ ազատ ժամանակ և ոչ հարմարություն ուներ պարապելու այդ շատ օգտակար գրական ճյուղի ստեղծագործությամբ:

Իսկ որ քննադատության բնագավառում նա իրոք ստեղծագործող էր, հմայող իր սուրբ բնորոշումով, որ նրա որոշումն ու որակումն անվիճելի էր ու ամենից ճանաչված, կայուն, մնայուն, դրոշմով և ընդհանրացած, դրա մասին ոչ ոք չէր կասկածում ժամանակին և մինչ օրս էլ կասկածից դուրս է մնացել:

Մեղանից ո՞վ չի հիշում տիրահոչակ Բախչի Իշխանյանի օյինները:

Այդ խայտառակ մարդուն խորը թափանցելով ու ճանաչելով, նա իր մի հոգվածում անվանել էր Քնեական տիպ<sup>2</sup>:

Այդ անունը մնաց «զամդի» պես կպած ու մինչ օրս էլ պոկ չի գալիս այն մարդուց, որը Բեոլինի մեծ գրադարանի մի հազվագյուտ, միակ էկզեմպլյար գրքից երեսներ էր պոկել, թաքցրել իր գրասեղանի արկղում, որպեսզի այդ երեսները արտադրեր իր մի տրակտատին նյութ մատակարարելու համար\*:

Եվ այդ ա'յն մարդու հասցեին, որը մի ամբողջ ինտելիգենտական կազմակերպության («Հայ Սոցիալ-Դեմոկր. Բանվ. կազմակերպության») զիսավոր իդեոլոգն էր ու ղեկավարը. Ստեփանն էր, որ առաջին անգամ Հայ Ս. Գ. Բ. կազմակերպությունը, իր սուրբ դիտողությամբ և անալիտիկ ըմբռնողականությամբ՝ կնքեց սպեցիֆիկ, իսկ նրանց իդեոլոգիան՝ սպեցիֆիզմ անուններով: Սպեցիֆիկները իրենց նացիոնալիստական խմբումով ու թեքումով մինչ օրս էլ մնացել են դիմակավորված: Եվ ով մեղանից ազգայնական թեքումն է ցուցադրում այս կամ այն հարցում՝ նրան մինչ օրս էլ իսպանական ցույին կատաղեցնող կարմիր լամփի պես սպեցիֆիկ կամ սպեցիֆիզմ խոսքը կատաղեցնում է ոչ պակաս:

Տեղը չէ բացատրել, թե ինչու և ինչ առիթով Ստեփանը այդ հայկական բունդիստներին անվանեց սպեցիֆիկներ, բայց այդ որոշումը հայ ազգայնական Սոց-Դեմ. կազմակերպության աննման ու սպական մի փուտ էր, մի ելացուածք, որն իր քաղաքացիական նշանակությունը մինչ օրս էլ չի կորցրել:

\* Այդ գողության համար, ինչպես մեր հին ընկերներն էլ գիտեն, Բախչի Իշխանյանին Բեոլինի դատարանը դատապարտեց Յ ամսվա բանտարկության, որը համահավասար էր այն ժամանակվա ցարիզմի Յ տարվա բանտարգելությանը

Լավ նշան գնող, որսկանի պես անվրես էր մեր Ստեփանը իր հասուն, հյութալի, անսայթաք բնորոշումով մյուս կուսակցության պատկանող իդեոլոգների գեմ:

Միքայել Վարանդյանին (դաշնակցականների լիգեր ու իդեուլոդ), նրա գրած մի տրակտատի\* համար, Ստեփանը անվանել էր ՏիեզերԱԿԱՆ ԹՌԻԹԱԿՅ, մի սրամիտ անուն, որ երկար տարիներ ու մինչ օրս էլ, առանց ծիծաղից թուլանալու, չենք կարողանում Հիշել:

Միք. Վարանդյանին Ստեփանը անվանել էր «ախեղերական թութակ» նրա համար, որ հեղինակը սոցիալական կյանքի վերաբերյալ ամեն մի երեւլիթ, կամ ամեն մի հարցի ու պրոբլեմի լուծում բնիցնում էր ախեղերից և ոչ դասակարգային տարրերությունների էությունից, կամ էկոնոմիկական ֆակտորներից առաջացած պատճառներից:

Մի այլպիսի սրամիտ, քննադատական բնորոշում պարզում էր մի ամբողջ կուսակցության (դաշնակցության) էությունը, նրա ինչ և որքան ծիծաղելի լինելը:

«Տիեզերական թութակ» հոդվածը լույս տեսավ «Նոր խոսք» ամսագրի № 1-ում, որ սկսեց հրատարակվել Բաքվում, 1911 թվին:

Ավսո՞ս, որ այդ տարվա վերջում Ստեփանը բանտարկվեց ու տաղանդավոր քննադատական հոդվածի շարունակությունը այնպես էլ մնաց անավարտ ու լույս շտեսավ:

Այսպիսով, մենք այն ժամանակվա (22 տարի սրանից առաջ՝ բոլշևիկ սոցիալ-դեմոկրատներս գրկված մնացինք մի այնպիսի սրամիտ, տաղանդավոր և մեծ հասարակական նշանակություն ունեցող) «Տիեզերական թութակը» հոդվածի շարունակությունը կարդալուց, որի նմանը շատ քիչ էինք հանդիպում մեր քննադատական-մարքսիստական գրականության բնագավառում, եթե Հաշվեինք բախչի իշխանյանների հոգին հանող ոչ պակաս տաղանդավոր քննադատ մարքսիստ Ամիրյանին՝ մեկը նահատակված՝ 26 կոմունարներից:

Ստեփան Շահումյանը, կրկնում ենք, անվանի քննադատի անունը ու հոչակը կարող էր ունենալ մեր գրականության պատմության մեջ, եթե նա մեր օրերի սենյակային գրախոսների ու քննադատների ազատությունը, ժամանակն ու միջոցներն ունենար:

Դժբախտաբար նա ամեն մի ժամ, ամեն մի բոպե տարված

\* «Հոսանքներ» վերնագրով:

էր մեր՝ մեծամասնականներիս ֆրակցիական հոգսերով, կուլով ու կազմակերպությամբ, առավելապես նրա վերջնական հաղթանակների պատրաստությամբ:

Ո՞վ չի շուրջ «Сборник Армянской Литературы»-ն, Մաքսիմ Գորկու խմբադրությամբ և Պ. Սակինցյանի, Վ. Տերյանի ու Լ. Քալանթարի մոտիկ աշխատակցությամբ ու ցուցումներով հրատարակությունը:

1916 թվին հրատարակվող «Փայքար» սՀոցիալ-դժկան թերթի № 33-ում Ստեփանը ունի մի շատ շահեկան քննադատական հոդված\*:

Այդ հոդվածում առաջին անգամն էր, որ Ստեփանը սպեցիֆիկ Հայ Ս. Դ. կազմակերպությունը անվանում էր այնքան բնորոշ հատու և ճշգրիտ հայկական բունդ անունով<sup>4</sup>:

Այդ հոդվածով է, որ սրատես ու սրամիտ Ստ. Շահումյանը թափանցում է սպեցիֆիկների դիտավորությունների ու նպատակների մեջ, որով նրանք ուզում են ցուց տալ ոռւս ընթերցողին, թե Հայ իրականության մեջ սՀոցիալ-դժկան > դ<հմոկրատական> իրիալ-ների քարոզն ու ընդհանրացնողը առաջին նվագ իրենք՝ սպեցիֆիկներն են եղել՝ թե՛ սոցիալիստական և թե՛ գեղարվեստական պրոլետարական գրականության տարածման ասպարեզում, և, համենայն դեպք, ոչ սոց. դեմ. բոլշևիկյան ֆրակցիայում գործող Հայ վետերանները (Բոդրան Գնումի, Դեղուշկա Մելիք, Ստեփան Շահումյան, Սուրեն Սպանդարյան, Սուրեն Հովսեփյան և այլք):

Այդ առթիվ մարդարեացած Ստեփանը նույն «Փայքարի» № 33-ում գրում է. «Ճետարքիր է, որ այն միջոցին, երբ համառուսական մարքսիստների շարքերից (խոսքը Հայ բոլշևիկներիս մասին է. Հ. Հ.) բազմաթիվ ինտելիգենտներ ու բանվորներ տարիների ընթացքում լցրել են բանտերը և այժմ էլ տասնյակներով, տաժանակիր աշխատանքների զատապարտված և հավիտյան Սիրիոր ուղարկված տնքում են, այդ միջոցին ո՛չ ժանդարմները և ո՛չ դատախազությունը չեն կարողացել խոշորագիտակի մեջ նույնիսկ նկատել. Հայ Սոց. Դեմոկր. կազմակերպության» գոյությունը, որպեսզի գոնե մի հատիկ ձերբակալություն տեղի ունենար այդ «կազմակերպության պատկանելու համար». «Փայքիթ Անանունը անհրա-

\* Գիտակցարար, թե անգիտակցարար Ստ. Շահումյանի ճառերը, հոդվածները. և քննադատականները խմբագրող բնկերները լուսա տեսական ժողովածուի մեջ չեն գետելի այդ պատմական ուժեղ դակումենտը, որ վերաբերում է նախկին սպեցիֆիկներին:

ժեշտ է համարում տեղեկացնել աշխարհին այդ կարևոր պատմական «կուսակցության» մասին, այն չէ փոխելով նրա նախկին ավելի համեստ «կազմակերպություն» անունը...»:

Ու եղրակացնում է Ստեփանը, «սպեցիֆիկներին» բնորոշելով այսպես.

«Այդ նշանակում է, որ մարդիկ այրվում են ռելլամի և ինքնագովորչյան ախտով և շտապում են մտնել պատմության մեջ» (Ընդգծումը մերն է. Հ. Հ.):

Որպիսի՞ մարդարեական գուշակում, որպիսի՞ սուր դիտողություն մի տաղանդավոր իդեոլոգ քննադատի կողմից... Ել մի՞թի նույնը շի նկատվում և այսօր, այսօրվա նախկին սպեցիֆիկների կողմից: Այդ նույն պատմական նշանակություն ունեցող հոգվածում մեր Ստեփանը շարունակում է զարուցթով. «Որքա՞ն անախորժ ու ցավալի է տեսնել այդ փոքրիկությունը (խոսքը Հայ Ս. Դ. սպեցիֆիկների կազմակերպության մասին է. Հ. Հ.) կապված այնքան մեծ ու ազնիվ հոգու տեր Մաքսիմ Գորկու անվան հետ...» ու վերջացնում այսպես.

«Ի դեպ, կապ շունի՞ արդյոք այդ փոքրիկության հետ Հակ. Հակոբյանի բացակայությունը ժողովածուի մեջ\*, որի մասին մենք խոսեցինք վերև...»:

Ընկեր Շահովանը «վերև» հոգվածի սկզբում, իր վրդովանքն էր հայտնել, թե ինչու «Сборник Арм. Литературы» ժողովածուում նրա մոտիկ աշխատակիցներ՝ Պ. Մակինցյան, Վ. Տերյան և Լ. Քալանթար, չեն մտցրել մի ամբողջ, բանվորական դասակարգի սիրված պոետի (Հ. Հակոբյանի) ստեղծագործությունները:

Իդուր էր, իհարկե, վրդովվում մեր անմահ Ստեփանը այն ժամանակ:

Նվաստիս չէին զետեղել, որովհետև ես սպեցիֆիկ չէի, այլ համառուսական մարքսիստների շարքերին պատկանող ս<ո-ցիալ-> դ<եմոկրատ> բոլշևիկ-բանաստեղծ և կուսակցական գործիչ, Ու դրա համար էլ մեր սիրելի ընկերը իր հոգվածին վերջակետ դրեց այս աննման, ճշգրիտ խոսքերուն.

«Սակայն այստեղ չէ ոչ ոքի մեղադրելու իրավունք չունենք. Եթե ասպարեզում լինեին համապատասխան ուժեր՝ երկի Մ. Գորկին հարկադրված չէր լինի օգնականներ փնտրելու ազգայնական

\* Խոսքը «Сборник...»-ի մասին է:

տեսակետից դեռ շաղատագրված կիսամարքսիստների\*, սուս մարքսիստների\*\* և նեռմարքսիստների\*\*\* (ընդունելը մերըն են):

Հավա խոսքեր չէին այս Ստեփանի բերանում, այլ կշռված, ստուգված ու կշռադատված ֆորմուլաներ, որովհետև հենց նույն հոդվածից երևում է, որ սուս-մարքսիստ կողման Պ. Մակինցյանը «Сборник Арм. Литературы» մեծահատոր ժողովածում մեջ զետեղած իր «Օчерк армянской литературы» հոդվածում՝ հայ էլեմենտների հառաջադիմությունը, առաջխաղացությունն ու հասունությունը, համեմատած հարկան թուրքերի հետ, բացարձում է «հայ ցեղացին» (առաջին) հանճարով, որի մասին զառանցում էին դաշնակցական «հորիզոնականները». Մակինցյանի այս «հանճարեղ» եղրակացությունը Ստեփանն անվանեց մանկական քեռիքա ու նրան անջնջելի «սուս-մարքսիստ» անունով կնքեց, որ կարծում եմ սազ է գալիս նրան մինչև օրս:

\* \* \*

Ինչու՞ այսքան երկար կանգ առանք Ստեփան Շահումյանի «Պայքար»-ում (1916 թ. № 33) գետեղված հոդվածի վրա, որպեսզի ուելք ու փաստերով ցույց տանք Ստեփանի լայնատաղանդ ու մարգարեական խորաթափանցությամբ օժտված լինելը մարքսիստական գրականության մեջ՝ քննադատության բնագավառում:

Ինձ թվում է, որ մի այսպիսի տաղանդով ուժեղ, դամդրող, որի հետքն ու կնքած-զրոշմածը անջնջելի է մնում, մեր քննադատական գրականության մեջ գեռ նմանը շունենք:

Գեղարվեստական գրականության գնահատման մեջ ևս Ստեփանը ցուցադրում էր նույն սուր դիտողությունը, նույն ճշգրիտ քննորոշումը ու արժանի գնահատումը:

Դժբախտաբար հայերեն լեզվով քիչ, կամ բոլորովին հոդվածներ շունի Ստեփանը այդ ուղղությամբ: Բարվի «Գուգովկ»-ում<sup>5</sup>, որի խմբագիրը Ստեփանն էր, բավականին նյութեր ունի մեր քննադատ Ստեփանը, և այդ շատ հասկանալի էր. 1907-ի ոեակցիայից հետո թափառական Ստեփանը կլանվել էր գեղարվեստական գրականության ճյուղին վերաբերող ամեն մի նոր գրքով: Նոր լույս տեսնող

\* Ակնարկում է Վահան Տերյանին:

\*\* Ակնարկում է Պողոս Մակինցյանին:

\*\*\* Ակնարկում է Լևոն Քալանթարին:

ալմանախներ, գրական-գեղարվեստական ժողովածուներ ու գրքեր՝ ամենից առաջ նա էր կարդում: Երբեմն ինքը գնում, երբեմն էլ ուղարկում էին նրան որպես «Գյուծ»-ի խմբագրի՝ գրախոսելու համար: Ո՞չ մի հեղինակ, ո՞չ մի գրական գեղարվեստական նորություն նրա աշխարհ չէր վրիպում, ուշի-ուշով հետևում էր զուգընթաց սոցիալիստական գրականության և գեղարվեստական գրականության բոլոր հրատարակություններին, հայերեն և ռուսերեն լեզվով, և դրա համար նա ծանոթ էր գրական բոլոր ստեղծագործություններին ու հոսանքներին:

Ստեփանի նրբազգաց, քնքուշ, ևս անգամ ավելին կասեմ, բանաստեղծական թափանցող-դիտող հոգին շատ էր սիրում բանաստեղծություններ:

Հայ հեղինակներից նա սիրում էր Հովհաննես Թումանյանին և հոդվածս գրողին:

1911 թվի վերջերին, «Նոր խոսք»-ը հրատարակելու նախօրյակին, մի նամակով խնդրում էր աշխատակցեմ ամսագրին, ու վերջացնում է նամակը այսպիս: «Ծուշան-մուշանների հետ գործ չունենք, մեր պոետը դու ես ու դու ես լինելու»: «Բախչու օյիններն էլ խո գիտես, մաղարիչը քեզ վրա է...»: Այս նամակը մինչ օրս էլ պահում եմ մոտասե: «Բախչու օյինները» վերաբերում են Բելլինի գրադարանի հազվագյուտ գրքից երեսներ պոկելուն ու նրան բանաստերկելուն: «Մաղարիչն» էլ Ստեփանը ինձ վրա է ձգում, որովհետև Բախչի հշխանյանը ինձ չէր սիրում և իր մի գրքով՝ Շ. Կորլինյանին երկինք հանելու ու պրոետարական գրող անվանելու համար, ինձ կամեցավ այդ գրքով միանգամայն ոչնչացնել:

Լուս տեսավ 1909—10 թվին իմ «Նոր առավոտ» պոեմը և առաջին անգամ Ստեփանն էր, որ նրա արժանի գնահատումն արեց:

Բանն այն է, որ առանձին գրքույկով հրատարակված պոեմիս (հրատարակությամբ «Գեղարվեստի», խմբագրով Գագարին (Լուսյանի) մի օրինակը, առանց մակագրության անգամ, ուղարկել էի Ստեփանին ու մի նամակով էլ խնդրել իր կարծիքը, ուղարկել էի Ստեփանին ու դատողությունները հայտնելու «Նոր առավոտ» անդրանիկ պոեմիս մասին: Նրա կարծիքը մեզ համար առասարակ հեղինակավոր էր:

Ահա այստեղ էր, որ Ստեփանը ցուցադրեց իր քննադատական տաղանդը, իր նուրբ, զգայուն հոգին և իր լուրջ, առողջ մտածելակերպն ու վերաբերմունքը դեպի պոեմս:

«Նոր առավոտի» լուծարմանալի՝ փափկանկատություն, «Նոր առավոտի» լու-

սանցքներում ու բացատներում նա մեծ ուշադրությամբ ու խնամքով ամենամանրակրկիա կերպով իր դիտողությունները, իր կարծիքներն ու իր գնահատումներն էր նշանակել քիմիական մատիտով: Նրա թափանցող և լուրջ տեսողությունից չէր վրիպել անդամ կետադրությունը, տառասխալներն անդամ նշված էին փոստով վերադարձրած գրքույզիս լուսանցքներում (որ պահում եմ մինչօրս). ես հիացմունքով կարդում եմ այսպիսի մի ցուցում, առաջին գլխում 5-րդ երեսի վրա.

...Եվ ի՞նչ է կյանքը... մի երդ դյութական,  
Որ կրկնվում է հիասքանչ, թուլիչ  
ելևէջներով, եղանակներով,  
Որը հնչում է այնպես գրավիչ  
Ու մարում ցավի արձագանքներով:  
...Կյանքը մի նկար, որը հյուսվում է  
Հաղար գույներով, հաղար ցոլքերով,  
Կյանքը հսկա ծով, որ փոթորկում է,  
Նավեր խորտակում ու վերջը մնում  
Մենակ ու տիառը իրա խոհերով...

Այս աբգացի մասին Ստեփանը աջից գրքույզի լուսանցքում մակագրել է.

«Գեղեցիկ է, մանավանդ իմաստով. ավելի լավ կլիներ, որ կյանքը վերջումն էլ ցավի արձագանքներով շմարեր, այլ որ կյանքը միայն երդ, նկար, հսկա ծով ու փոթորիկ լիներ»:

Այստեղ խոսում է լավատես քննադատ-բուշեկիզը:  
Պոեմիս 2-րդ գլխում, 6-րդ երեսում.

Այս, այն աշերում մի ամբողջ աշխարհ,  
Այն թախծոտ շուրթին մի ցալոտ ժպիտ...

Կողքից ընդգծել է շաղ մատիտով ու բացականչել՝ «Լա՛վ է...»: 3-րդ գլխում 7-րդ երեսում.

...Աշքերդ կարծես տերենով ծածկված  
Մի աղբյուր լինի, որ ուզի բացած  
Տերեկի տակից գնում է, հոսում,  
Նայում երեսիս, սրտիս հետ խոսում...

Գրքույզի ամբողջ ու հետեւյալ երեսը ընդգծել է ու գրել. «Համեմատությունը բանաստեղծական է. ես չեմ պատահել այդպիսի մի համեմատության» (կապույտ աշքերի վերաբերյալ):

Սակայն «մայում» խոսքը մատիտով ջնջել է ու վերափց գորել «թափում» խոսք:

Ստեփանը կարծել է, թե աղբյուրը կարող է միայն թափվել խողովակից. նա ի նկատի չի առել աղբյուրի այն պատկերացումը, որը խաղաղ բխում է քարափի տակից և խաղաղ ու պարզ լճակված հոսում. ու եթե կողքին էլ մի ծառ կա, որ տերևաթափ է տվել, աղբյուրի մեջ թափված տերևների արանքից ջուրը կարող է կապույտ աշքերի պատկերացում տալ:

3-ըդ դլիսի 9-ըդ երեսում.

Օ՞, այդ աշքերր այնքան գրավիչ.

Կարծես պուրակում մարդարիտ ծաղիկ,

Հեռուն մտորող, բայց կյանքի կարոտ,

Ինձ խոստանում են մի նոր առավոտ...

Հնդկական ու գրել է այսպիս.

«Սա էլ գեղեցիկ է, բայց միաժամանակ աշքերը աղբյուր և մարդարիտ-ծաղիկ չեն կարող հիշեցնել»...

Նույն 3-րդ պլանում.

Երջանիկ զգար ու շուտ մահանար,

Ոչ մի ավաստանք չէր առաջանար...

Անոսքել է, հարցական դրել ու հարցնում է.

«Ի՞նչ է նշանակում... ո՞ւմ մեջ չէր առաջանար ախտոսանքը: Որիքմի համար ասել ես առաջանար—Հոսհոսական խառնուրդ ոճի մեջ. Կոպոյինանն էլ թույլ է տալիս այդ...»:

4-րդ զլիսի լուսանցքը ամբողջովովին ընդգծել է հորիզոնաձևության, եթե՝ «Գեղեցիկ» է:

«Հոգու ուժերի թափը խտանում է ծով սրտի խորքում? — կարծես ու ուշադիր առաջ կատար այս պատճենը»:

Այսուհետեւ շարունակ բազմաթիվ կարծիքների, դիտողների և ճիշգի կարողում ես հետեւյալները.

6-րդ դլիսից երես 14-րդ մակագրել է.

«Այստեղից սկսվում է պարզ ու գեղեցիկ» և VI, VII, VIII ու IX դրույներից հիացած, որ սկսվում է «գնանք գործարան»-ով,

լուսանցքները ողողել է՝ «լավ է, գեղեցիկ է, շատ լավ է, ընդհան-  
րապես գեղեցիկ է» բացականչություններով:

### 8-րդ գլուխում.

...«Ա՞յս, շատ եմ տեսել նրան, իմ քույրիկ»... «Քույրիկ»  
խոսքը ջնջել է ու երկու հարցական պազարցրել ջնջածի կողքին:  
ինչպես երեսում է «քույրիկ» խոսքը դուր չի եկել Ստեփանին:

Այնուհետև տեղ-տեղ նշանաբեկով ոճի անհարմարությունն,  
նշանակել է «Հե совсем складно», կամ «Լավ չէ ձևակերպված նրանց  
գալու նպատակը» և «Нуждается в переделке».

...«Նորա պայքարում ողջ մարդկությանը հանգիստ բերելու»  
բառերի դիմաց արգարացի կերպով նկատել է՝ «Սիսա՞լ է»: Մի տեղ  
նկատում է. «Հե խватает слога», այլ տեղ հարցնում է. «Ի՞նչ է  
նշանակում «մեկ է գաղափար» և այլն:

Ամբողջ գրքույկում 20 երես պոեմի մեջ երեան եկող նորա  
խոսքը ջնջել շինել է՝ նրա:

«Նոր առավոտ»-ի առաջին հրատարակությունը վերջանում է  
այսպիս:

Բայց ո՞ւր է նա այժմ, ինչո՞վ է ապրում.

Ունի՞ փոթորիկ,

Այս այս մեկը ինձ համար մնաց,

Մի ցավոտ գաղտնիք...

մակագրել է. «Հե складно, լավ չէ վերջանում»:

Ստեփանի սուր դիտողություններից ես մեջ բերի տասներորդա-  
կան մասը միայն, ցույց տալու ընթերցողին, թե որքան լուրջ, որքան  
քնքուշ և որքան փափկանկատ վերաբերմունք ցույց տվեց մեր սիրե-  
լի քննադատը գեպի մի պոեմ, որ մոտ 25 տարի սրանից առաջ գե-  
ղարվեստական գրականության մեջ լավագույններից մեկն էր հա-  
մարվում, և մի քննադատի կարծիքով «Նոր առավոտ» պոեմը մեր  
գրական-գեղարվեստական հորիզոնում իրոք բերում էր մի նոր  
առավոտ<sup>9</sup>:

Այս ցիտատները մեջ բերելուս նպատակն էլ այն էր, որ ընթեր-  
ցողը ինքը տեսնի Ստեփանի քննադատական կարողության շափը:

Բայց մենակ սրանով չէր, որ բավականացավ Ստեփանը:

Ուղարկելով նրան այս անդամ արգեն «Սիրելի Ստեփանին՝ Հա-  
կոբից» մակագրած մի նոր օրինակը պոեմիս, փոխադարձաբար  
նրանից ստանում եմ նվեր Յ գրքույկ՝ մակագրած «Սիրելի Հակոբին՝  
Ստեփանից 3/XII — 1910 թ., Բալախանի»<sup>10</sup>:

Այդ գրքույկները Վերհարնի ստեղծագործություններն են\*, որ ես առաջին անգամ էի տեսնում ու առաջին անգամ նրան կարդում:

Գրքիրի հետ ուղարկել էր ինձ և մի նամակ, որից հանում եմ հետեւյալ կտորը.

«Զգացված ստացա պոեմդ, այս անգամ մակագրած:

Այս պոեմով դու շատ լավ ես մարմնացրել քո հիմնական միտքը և անկասկած տվել բանաստեղծական պատկերավորումը:

Քո մեջ ընդհանրապես կա Վերհարնի զիդը, իսկ այս պոեմով ավելի ևս մոտենում ես Վերհարնին:

Քո «Հեղափոխությունը» և «Նոր առավոտ»-ը 7-րդ գլխից սկսած, վերջացրած «Գնանք գործարան»-ով X գլխում, պուտ վերհարնական է»<sup>11</sup>:

Հետաքրքիրն այն չէ, թե Վերհարնի զիդն ոմեմ, այլ այն, որ Ստեփանի որակումն հետագայում կրկնեցին շատ քննադատներ՝ Անատոլի Խոնարդակի, Սուրբաթյան, Հովակիմ Սոլովյան, Առշակ Մալխասյան և այլք և այդ ցուցք է տալիս Ստեփանի սովոր դիտողությունը և որմեկ գրողին բնորոշելու խոշոր ընդունակությունը:

Այդպես էր և համճարեղ քննադատ Բելինսկին:

«Վերհարնի զիդ» բնորոշումը տվել էր ինձ Ստեփանը նախքան «Քաղաքը», «Սեյֆերը», «Կարմիր ալիք» և «Հավասարություն» պոեմներ գրելը:

1911 թ. աշնանը, արտասահմանից վերադառնալուց հետո, գրել էի «Քաղաքը» բանաստեղծություն ու պահում էի մոտու «Կարմիր մեխակներ» հղացածու ժողովածուի մեջ զետեղելու համար:

Մի օր երեկոյան Ստեփանը այցելել էր ինձ (ամեն անգամ Բաքվից Թիֆլիս գալիս պարտք էր համարում «մեր պոետին» այցելել):

Թեյի ժամանակ, թե՝ «Ստեփան, մի ոտանավոր եմ գրել կարդամ, լսիր»:

Ու սկսեցի ոգեորված կարդալ «Քաղաքը»... էն է, նոր էի վերջացրել ու պատշաստվում էի լսել Ստեփանի կարծիքը, մեկ էլ տեսնեմ, մոմենտի արագությամբ հանկարծ շանթեց, հափշտակեց ոտանավորը ու հանդիսա կերպով ծալեց դրեց ծոցի գրանը:

— Ի՞նչ ես անում, Ստեփան, — հարցրի զարմացած:

\* «Издыхающие равнины», «Города чудовища», перев. Н. Ч., и «Еле-на спартакская».

— Սա ինձ պետք է ծրագրածս ժուռնալի (Կրկի «Նոր խոսք») համար, — պատասխանեց նա Ժպիտով:

— Բայց չէ՞ որ ես էլ մտադիր եմ բանվորական ժողովածուներ՝ «Կարմիր մեխակներ»-ս հրատարակել...

Ու հիշում եմ, թե ինչպես իմ խեղճ Ստեփանը քնքուշ ու մեղմորեն ձեռքը տարավ պիշակի ծոցի գրավանը ու առանց մի խոսք ասելու, նույնպիսի քնքությամբ վերադարեց ինձ և սիրությունովածի ձայնով ասաց. «Դու քաղաքը ընդհանուր գծերով շեմ տալիս, այլ կոնկրետացնում ես հեղափոխության իններորդ ալիքով»:

1914 թվականի սկզբին լույս տեսավ «Կարմիր մեխակներ», գրական-գեղարվեստական ժողովածուն, ուր գլխավորապես բանվոր գրողներն էին աշխատակցում (Անուշավան Վարդանյան, բանվոր Մելիք (Դեղուշկան) և այլք):

Ստեփանն էր առաջինը, որ նամակով ողջունեց ու ընդունեց առաջին հայ պրոլետարական գրական-գեղարվեստական օրգանը: Նա էր նույնպես, որ Կարմիրյանի «Քաղաքի երգիշները» (Վ. Տերյան և Հակոբ Հակոբյան) «Նոր խոսքում» զետեղած քննադատականի<sup>12</sup> մասին գրեց հետեւյալը.

«Իղուր ես նեղացել Արտաշեսի քննադատությունից, դա լավ հողմած է»:

Դարձյալ նա էր, որ «Սեյֆերը» ոտանավորից հիմացած՝ առաջինը եղավ, որ ողջունեց ինձ՝ այս և նման ժանրի ստեղծագործություններիս համար:

Նրա սրամիտ որակումները, «սպեցիֆիկների», «Տիեզերական թութակի», «քրեական տիպի», «սուտ-մարքսիստի» (լյե-մարկսիտ) և «ռասաներով սոցիալական երևույթներ ու պրոբլեմներ լուծողի», այլև 31 տարի սրանից առաջ Զ. Աղայանի հորելյանի օրիվա առթիվ նետած ոռումբի պայթունի պես նոր խոսքը, անմոռանալի են:

Վերջապես Դավիթ Անանունի ու Մակինցյանի և ԿՕ Հասցեին նետած որոշումները, որոնք կազմում են Ստեփան Շահումյանի քննադատական շեղյովը (տե՛ս «Պայքար» № 33, 1916), տալիս են մեզ բացարձակ իրավունք ասելու, որ իրոք, հանձին Ստեփանի մենք ոչ միայն կորցրինք լենինի հայ աշակերտին, այլև հայկական Բելինսկուն գրական-գեղարվեստական քննադատության բնագավառում:

Նա՛ էր, որ ամեն ինչ տեսնող, արծիվներին հատուկ թափան-

ցող ու սուր տեսողությամբ, ամեն ինչ ունտգենյան ճառագայթի  
պես պարզում, որակում ու դնահատում էր:

Եվ գարծյալ նա՛ էր, որ իր վսեմ ու պարզ մտքով համոզում  
ու բացում էր մասսաների աշքերը ճանաշելու՝ ո՞րն է իսկականը  
և ո՞րը՝ կեղծը, ո՞րն է իսկական բրլիանտը, և ո՞րը կեղծ ապակին,  
ո՞վ է ժողովրդի, բանվորական մասսաների անկեղծ և անձնազո՞  
բարեկամը և ո՞վ է ժողովրդի դալդայում ու նրա ստվերի հովանավո-  
րության տակ իր եղկելի անհատական-անձնական կաշին փափկաց-  
նելու ձգողողը:

## <МЕЧТА СТАЛА ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬЮ>

Ответ на анкету Иностранной комиссии оргкомитета  
Союза Советских писателей

Товарищу Бела Иллеш

Дорогой товарищ!

Прежде чем ответить на первый Ваш вопрос — что дает мне, как художнику, обстановка социалистической стройки, — я позволю себе некоторое отступление для освещения того периода, когда началось мое творчество.

Пролетарской поэзии я посвятил свои силы с 1894 года, то есть начал писать сорок лет тому назад, когда у нас было еще смутное представление о поэзии рабочего удара. Мое стихотворение «Намус и хейрат» («Честь и труд») было напечатано в 1895 году в армянском журнале «Мурч» («Молот») и наделало много шума среди националистически настроенной интеллигенции.

Разве молот, наковальня, рабочий труд, потное лицо рабочего могут быть темой для истинной поэзии? — недоумевали они.

Писал я эту вещь не из-за рабочелюбия и не из-за славо-гуманного отношения к угнетенному классу, как это мог бы сделать революционер народовольческого толка тогдашних времен, а писал как рабочий, который сам физически работал в Баку, на одном из крупнейших механических заводов «Вулкан», и сделался поборником той истины, что пролетариат должен стать хозяином своего труда, а не быть рабом капитала.

Такое отношение к судьбе рабочего класса у меня проявлялось и в процессе повседневного труда, и в борьбе за рабочее дело — до окончательной победы пролетариата над буржуазией. Я был партработником и поэтом-большевиком с девяностых годов.

Все этапы этого движения, все моменты этой борьбы я стремился воспеть и выразить в художественных образах.

Каковы же должны быть радость и восторг поэта-большевика, когда сбылось все, о чем мечтал и пел он, когда все, о чем он пел, стало действительностью! В этом отношении я себя считаю самым счастливым поэтом. И когда Вы меня спрашиваете: «Что мне дает, как художнику, обстановка социалистической стройки», то я должен ответить:

— Обстановка социалистической стройки дает мне прежде всего бесконечное счастье, волнующую радость, творческое вдохновение, каких до Октябрьской революции я не мог испытывать.

Обстановка социалистической стройки раскрыла передо мной широкие перспективы того социалистического порядка, который воспевал я до революции в поэме «Равенство». Теперь мной созданы поэма «Ширяковский канал-большевик» и поэма «Волховстрой», символизирующие нашу индустриализацию и великую эпоху строительства. Социалистическая стройка открыла широкие горизонты для творчества, для фантазии. Хочется создавать новые и новые произведения, несмотря на преклонный возраст. Мне сейчас шестьдесят восемь лет, и хотя я страдаю неизлечимой болезнью сердца, все же кипучая жизнь нашей страны не позволяет выпускать пера из рук.

Бесконечную радость я испытываю еще потому, что социалистическая стройка меняет быт и психологию трудящихся нашей Советской Родины, приближает нас к бесклассовому обществу, к социализму, к коммунизму, то есть к осуществлению всего того, о чем я мечтал и за что боролся почти полвека — со школьной скамьи.

На вопрос — как я понимаю и ощущаю в своей творческой деятельности — свободу художественного творчества — отвечу вкратце. По-моему, свободное художественное

творчество возможно только при диктатуре пролетариата, при социалистическом строем, где нет угнетения, нет рабства, нет эксплуатации человека человеком. Социалистическая стройка нашей страны, однако, опередила нашу художественную литературу.

Выполняя директиву ЦК нашей партии от двадцать третьего апреля 1932 года<sup>1</sup>, я стараюсь почерпнуть из современной жизни коллективного общества все правдивое, все имеющее перспективу развития, все соответствующее духовным и умственным интересам трудящихся масс.

Над чем и как я работаю сейчас?

Сейчас пишу поэму, посвященную пятнадцатилетию комсомола Армении<sup>2</sup>.

Работаю запоем...

Պատասխան Առվետական Գրողների Միության կազմկոմիտեի Արտասահմանյան Հանձնաժողովի հարցաթերթիկին

### Բնկեր Բելա Իլեշին

Թանգարին ընկեր.

Նախքան Զեր առաջին հարցին՝ ի՞նչ է տալիս ինձ, որպես արվեստագետի, սոցիալիստական շինարարության իրադարձությունը, պատասխանելը, ես ինձ թույլ կտամ որոշ շեղում, լուսաբանելու համար այն ժամանակաշրջանը, երբ սկսվեց իմ գրական գործունեությունը:

Պրոլետարական պոեզիային ես իմ ուժերը նվիրել եմ 1894 թվականից, այսինքն՝ սկսել եմ գրել քառասուն տարի սրանից առաջ, երբ մեզ մոտ գեռնս աղոտ պատկերացում կար բանվորագրկի պոեզիայի մասին: Իմ «Նամուս ու ղեյրաթ» բանաստեղծությունը տպագրվեց 1895 թ. Հայկական «Մուրճ» ամսագրում և ահագին աղմուկ առաջացրեց ազգայնականորեն տրամադրված մտավորականության մեջ:

Միթե մուրճը, զնդանը, բանվորական աշխատանքը, բանվորի բրտնաթոր գեմքը կարող են գառնալ իսկական պոեզիայի թեմա, երկմտում էին նրանք:

Ես այդ գործը գրել էի ոչ թե հանուն բանվորասիրության և հանուն քաղցրմեղցրմարդասիրական վերաբերմունքի գեղի ճընշ-

ված գասակարգը, ինչպես այդ կարող էր անել այդ ժամանակների նարողովով լրան ուղղության ռևոլյուցիոները, այլ գրել էի որպես մի բանվոր, որն ինքն էլ ֆիզիկական աշխատանք էր կատարել Բարձրում, մեծագույն մեխանիկական գործարաններից մեկում՝ «Վուլկան»-ում և գարձել էր այն ճշմարտության ջատագովներից մեկը, թէ պրոլետարիատը պետք է գառնա իր աշխատանքի տերը և ոչ թէ լինի կապիտալի ստրուկը:

Բանվոր գասակարգի բախտի նկատմամբ այդպիսի վերաբերմունք իմ մեջ դրսելորվում էր և ամենօրյա աշխատանքի պրոցեսում. և բանվորական գործի համար մղվող պայքարում՝ հանուն բուժուազիայի նկատմամբ պրոլետարիատի վերջնական հաղթանակի: Ես պարտիական աշխատող և բոլշևիկ էի սկսած իննհարցուրական թվականներից:

Այդ շարժման բոլոր փուլերը, այդ պայքարի բոլոր մոմենտները ևս ձգտում էի երգել և արտահայտել գեղարվեստական պատկերներով:

Ինչպիսի՞ն պետք է լինի բանաստեղծ-բոլշևիկի ուրախությունն ու հիացմունքը, երբ իրականացվել են այն բոլորը, ինչի մասին երազել ու երգել է նա, երբ բոլորը, ինչի մասին երգել է նա, գարձել է իրականություն: Այս տեսակետից ևս ինձ համարում եմ ամենաերջանիկ բանաստեղծը: Եվ երբ Դուք ինձ հարցնում եք՝ «Ի՞նչ է տալիս ինձ, որպես արվեստագետի, սոցիալիստական շինարարության իրադրությունը», — ապա պետք է պատասխանեմ.

— Սոցիալիստական շինարարության իրադրությունը ամենից առաջ ինձ տալիս է անսահման երջանկություն, սրտահույզ ուրախություն, ստեղծագործական ոգևորություն, որպիսիք ևս չեմ կարող ունենալ մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան:

Սոցիալիստական շինարարության իրադրությունը իմ առաջըաց է արել այն սոցիալիստական հասարակարգի լայն հեռանկարները, որ երգել եմ ևս մինչև ռևոլյուցիան՝ «Հավասարություն» պոեմում: Այժմ ևս ստեղծել եմ «Բայլշևիկ է Շիր-Կանալը» և «Վոլխովստրոյ» պոեմները, որոնք խորհրդանշում են մեր ինդուստրալիզացիան՝ շինարարության մեծ էպոխայում: Սոցիալիստական լիդացիան՝ շինարարության մեծ էպոխայում: Սոցիալիստական լիդացիան՝ գամար, ֆանտազիայի համար: Ուզում եմ ստեղծել նորանոր երկեր, չնայած ծեր հասակիս: Ես այժմ վաթսունութ տարեկան եմ, և չնայած, որ տառապում եմ սրտի անբուժելի հիվանդությամբ,

այնուամենայնիվ, մեր երկրի եռուն կյանքը թույլ չեւ տալիս գրիշը ձեռքից վար դնել:

Ես անսահման ուրախություն եմ զգում նաև այն պատճառով, որ սոցիալիստական շինարարությունը վերափոխում է մեր Սովետական Հայրենիքի աշխատավորների կենցաղն ու հոգեբանությունը, մոտեցնում է մեզ անդասակարգ հասարակությանը, սոցիալիզմին, կոմունիզմին, այսինքն այն բոլորի իրականացմանը, ինչի մասին երազել եմ և ինչի համար պայքարել եմ համարյա կես դար, աշակերտական նստարանից:

Այն հարցին, թե ես իմ ստեղծագործական գործունեության մեջ ինչպե՞ս եմ հասկանում և զգում գեղարվեստական ստեղծագործության ազատությունը, կպատասխանեմ համառոտակի: Իմ կարծիքով ազատ գեղարվեստական ստեղծագործություն հնարավոր է միայն պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ, սոցիալիստական կարգերում, որտեղ չկա ճնշում, չկա ստրկություն, չկա մարդու շահագործումը մարդու կողմից: Սակայն մեր երկրի սոցիալիստական շինարարությունը առաջ է անցել մեր գեղարվեստական գրականությունից:

Իրագործելով մեր պարտիայի ԿԿ-ի 1932 թ. ապրիլի 23-ի գիրեկտիվը, ես ձգուում եմ արդի համայնական հասարակության կյանքից վերցնել այն ամենը, ինչ ճշմարտացի է, այն ամենը, ինչ ունի զարգացման հեռանկար, այն ամենը, ինչ համապատասխանում է աշխատավոր մասսաների հոգեոր ու մտավոր շահերին:

Ինչի՞ վրա և ինչպե՞ս եմ աշխատում ես այժմ:

Այժմ զրում եմ պոեմ, նվիրված Հայաստանի կոմերիտմիության 15-ամյակին:

Աշխատում եմ ինքնամոռաց կերպով:

## ԻՆՉՊԵՍ ԵՍ ԳՐՈՂ ԴԱՐՁԱ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՄ ԵՍ ԳՐՈՒՄ

Սիրելի ընկերներ.

Նախքան ձեր պատվերը կատարելը — ինչպե՞ս եմ գորում ես — կուզենայի մի թուցիկ ակնարկ անել այն մասին, թե՝ ինչպե՞ս գրող դարձա ես, և ապա մոտենալ ինձ տրված բուն հարցին:

Դեռ մանկությունից ու պատանեկությունից ես արդեն սեր ունեի դեպի գիրքը, ինչ-որ հակում գեպի բանաստեղծությունը, գեպի երգը:

Սակայն այն ո՞վ չգիտե, որ բավական չէ միայն գրողի չիդ ունենալը, անհրաժեշտ է ամենից առաջ պատրաստականություն, որ ձեռք է բերվում ինքնազարդացմամբ, ինքնակրթությամբ ու անշուշտ գլխավորապես ընթերցանության միջոցով, կամ զանազան հասարակական ու հեղափոխական աշխատանքներ կատարելու պրոցեսում:

Որո՞նք են եղել այն ստիմուլները, որ ինձ, տասնութ տարեկան պատանուս, մղեցին դեպի ինքնազարդացման, ինքնակրթության ուղիները:

Ամենից առաջ 1884 թվից մինչև 1894 թիվը, ուղիղ տասը տարի, Հիշատակարաններ պահելը, ուր ամեն օր կանոնավոր արձանագրում էի իմ կյանքի գլխավոր դեպքերը, կարդացած գրքերից ստանած տպավորությունները, թատրոնների և համերգների շնորհիվ ստացած ապրումները: Այդ հիշատակարանները մեծ դեր են կատարել իմ ինքնազարդացման գործում, նրանք թվով տասը հատոր են, ամեն մի հատորը հինգ և ավելի հարյուր երեսներից բաղկացած: Հիսուն տարվա կյանք ունեն նրանցից մի քանի հատորներ: Կադարեցրի իմ ամենօրյա գրառումները 1894 թվին միայն, երբ առաջին անդամ ձերբակալվեցի, նետվեցի բանտ, իսկ երկու ամ-

սից հետո ոստիկանության հսկողության տակ աքսորվեցի Գյանցա: Այդ հիշատակարաններով հետաքրքրվողը կգտնի մի քանի տասնյակ ոտանավորներ ամեն մի հատորում, գրված, ճիշտ չ անտաշ, անփորձ գրչով, բայց ինքնուրուցն թեմայով: Այս փորձերը քիչ շնպաստեցին թե՛ իմ լեզու սովորելուն և թե՛ գրող գառնալու ձգտումին:

Մի լավ սովորություն ունեի: Այդ այն ինքնափորձ աշխատանքներն էին, որ կատարում էի ևս ամեն մի լավ գիրք կարդալուց հետո, երբ ամեն մի կարդացած պատմվածքի, վեպի բովանդակությունը վերարտադրում էի սեփական խոսքերով ու լրացումներով՝ ապա արտագրում առանձին կազմած տետրակներում՝ կարդալու այս կամ այն ծանոթ ընտանիքում: Այդպիսի աշխատանքները ես ուժեքերատ էի անվանում:

Սրանք են այն նախագրյալները, որոնք ինձնից, գավառական քաղաքի մի անգրագետ ընտանիքից գուրս եկածից, պատրաստեցին ապագա բանաստեղծին:

Սակայն այս բոլորը չեն:

Բարիում եղածս ժամանակ տեղի Հայոց Մարդասիրական Ընթերության հարուստ գրադարանը բավական ընթերցանության նյութ էր մատակարարում գիրք սիրողին:

Ես կարդում էի Սպենսերին, Ֆան-Ժակ Ռուսոյին, Պրուտկոնին, ապա Չերնիշևունին, Դորրայուրովին, մեր Նալբանդյանին:

Ընթերցանության հետ զուգընթաց, ես գիտում էի կյանքը: Դարի աշխատելով Բարիում, Բալախանիում, Սև քաղաքում՝ Տեր Ակոպովի և Աբիյանցի նավթահանքերում, ապա հինգ տարի Թիֆլիսում, Կարապետով-Բերիժանով ինժեներների մեխանիկական հակա գործարանում, ուր զիխավորապես պատրաստվում էին թիֆլիս տանող երկաթուղու կամուրջները, ես տեսնում էի, թե ինչպես քանվորական մասսաների առօրյա կյանքը այդ տանջարաններում անցնում էր տաժանակիր աշխատանքների մեջ: Տասներկու և ավելի ժամեր անընդհատ աշխատանք, կանգնած կրակի, հնոցների ու ստանոկների առաջ, գրա գեմ՝ շնչին վարձատրություն: Նրանց կերածը՝ հոտած երշիկ, նրանց քնելու տեղը՝ հոտած կաղարմաներ՝ որոնք շատ հեղձուկ էին և օդաղուրկ: մարդ շատ մում էր նրանց գարշահոտությունից: Մարդիկ քնում էին թաղտափուշիների վրա, համարյա իրար հպած, կեղտոտ վերմակների տակ: Բնական է, այս ամենը, ամեն մի զգայուն մարդու մեջ պիտի հարուցաներ արդար զայրույթ, իսկական մարդը պիտի համակվեր նրանց վիշտ

զրկանքներով և անցներ զրկվածների ու հարստահարվածների կողմբ:

Այդ և նման այլ հազարավոր թշվառությունների, դժբախտ գեղքերի ականատես լինելու հետևանքով կերտվեց իմ «Ամբողջի կոչը» և «Ամբոխն իմ աշխարհը»:

Տասներկու տարի, մեխանիկական գործարաններում աշխատելու ժամանակ, ես ականատես եմ եղել այնպիսի դժբախտ գեղքերի, որոնց սոսկալի տեսարանները դեռ մտքից շեն անցնում: Ես տեսել եմ մերենանների տակ կտրտված ձեռքեր ու մատներ, թափանիվի ճաղերի տակ ճխլտված մարմիններ, արնախառ ուղեղով ցաք ու ցրիվ եկած գանգեր, որոնց ստանոկի փոկը փաթաթելով տրանսմիսիաներին է զարկել: Ապա շուգունի ձուլարանում՝ ջեռ շուգունից խաշված մարմիններ, դարբնոցում՝ լոմի տեղ գնված ոռւմբերի պայթումների հետևանքով միանգամից մի քանի բանվորի փուլած դիակներ և այլն:

Այդ և նման տեսարանները պատճառ դարձան, թեև շատ ուշ, չիշողությունների միջոցով, կերտել իմ «Գործարանը» («Ահա գործարան...»), «Նոր առավոտի» Հ-րդ ցիկլի մի քանի ֆրագմենտները, «Ազգայիններին» բանաստեղծությունը և շատ ուրիշ կտորներ, «Աշխատանքի երդեր» և «Գործարաններ» շարքի բանաստեղծությունները:

Թիտի շեշտեմ, որ աշխատանքի գաղափարը ինձ համար եղել է ամենասիրելի բանը աշխարհում: Աչքս բացել եմ և շուրջս, մեր ընտանիքում տեսել հորս, մորս, եղբորս՝ աշխատելիս: Դրա համար էլ սերը գեպի աշխատանքը ինձ համար միշտ եղել է հմայիչ («Նամուս ու ղեցրաթ», «Աշխատանքի երդը» և այլն):

Ես սիրել եմ աշխատանքը ո՛չ միայն նրա համար, որ նա մարդկության գոյության հիմնաքարն է, նրա բախտավորության աղբյուրը, նրա ապրուստի միակ միջոցը, այլև նրա համար, որ այդ աշխատանք ասածդ բանը, իր երջանկացնող իմաստով, ունի իր պոեզիան:

Մերենանների և հախարակների ոիթմը, գուղոկների առավոտյան սիմֆոնիան, շոգեմուրճի թափով որոտումը, ստանոկների հոնդյունը, ապա՝ վարպետ բանվորների կոլեկտիվ ճիգը՝ ստեղծագործել, մի նոր ձև, մի նոր կյանք տալ անշունչ մետաղին, աշխատանքի այդ ստեղծագործական պրոցեսում նրանց կովի և կամքի թափը, կոել-կոփիվելու պայքարը, նրանց անպարտ, հաղթական դարձնելը, այս բոլորն այնքան հմայիչ են, այնքան քաղցր են և

Հուզիլ, որ ուզում ես հավիտենական կյանք ունենաս ու միշտ գրես...

Եվ մի՞թե սոքա չեն այն զրդապատճառները, որ ինձնից պիտի պատրաստեին ապագա պրոլետարական բանաստեղծին...

\* \* \*

Այս թռուցիկ ակնարկից հետո, թե ինչպես ես զրոյ գարձա, — հիմա էլ անցնեմ այն հարցին՝ թե ինչպես եմ զրում ես:

Կատարո՞ւմ եմ ես որևէ նախապատրաստական կամ լարուատորիական աշխատանք, պատրաստո՞ւմ եմ նախօրոք որևէ ծրագիր, նախքան այս կամ այն երկը ստեղծագործելը: Այս հարցին ես պիտի տամ բացասական պատասխան: Նյութը նախօրոք որո՞ւալ կամ ծրագրել, — այդ սովորությունը ինձ համար գոյություն չի ունեցել, զրա համար ես անզամ ժամանակ չեմ ունեցել, իսկ ժամանակ չեմ ունեցել, որովհետեւ մինչև 60 տարեկանի հասնելս ես աշխատել եմ երեք ֆրոնտի վրա՝ գրական, հեղափոխական և պաշտոնավարական:

Փաստը, սակայն, այն է, որ ինչ գրել եմ՝ եղել է հանկարծակի, ինքնարուխ, տեղս հանգիստ նստածս ժամանակ, զրոսանքի թի հանգստի, ճաշի թե ընթերցանության ժամին:

Մեկ էլ տեսնես մեկը կարծես քեզ հրում, քաշում է դեպի զրասեղան ու ստիպում զրելու: Քիչ շի պատահել, որ քնելիս՝ անկողնից վեր եմ ցատկել և հանկարծակի պաշարած մտահղացումները տողերի վերածել: Կատարվել է այդ առանց ընդհատվելու տենդորեն, շտապ, կարծես մտքերն ու զգացմունքները հրահրում, շտապեցնում են իրար, որ շմոռացվի ո՛չ մի մտապատեր, ո՛չ մի խոսք, ո՛չ մի հանգ:

Այդ մտահղացումները գուրս են ցայտել որպես կենդանի ապրումների արտահայտություններ:

Ես միշտ այն կարծիքին եմ եղել, թե՝ ամեն մի բանաստեղծություն, որպեսզի փոթորկի ընթերցողի հուզական աշխարհը, պիտք է իր մեջ կրի տաղանդի կնիք, չերմություն, հակառակ դեպքում նյութը կդառնա անգույն, մեռած, վիժած մանուկի պես: Այն ստեղծագործությունը, որն արդեն բարձր, գեղեցիկ զգացմունք է ներշնչում ընթերցողի սրտին, որը հուզում, փոթորկում է նրա հոգին, վառում, ոգեսրում մարդուն և մղում նրան գեպի հերոսական քա-

չագործություն, — այդպիսի գրական գործը դառնում է մասսաների սեփականությունը:

Այն էլ պիտի ասեմ, սակայն, որ ես չեմ բավականանում հղացումներիս ձևակերպումով՝ միայն: Որքան էլ պատրաստ լինի նյութը, որքան էլ կատարյալ նրա ձեր, արագորեն մարմնացած իմ ժողովացումները, այնուամենայնիվ, տպագրության եմ հանձնում միայն խնամքով՝ մշակելուց, անհարթությունները Հղկելուց հետո:

1905 թ. վերահաս Հեղափոխությունը, իր հունվարի 9-ի կոտորածով, իմ առաջ զրեց նոր պահանջներ՝ բանվորական մասսաների արագ կազմակերպման, գործադուլների կազմակերպման հարց, ազիտացիա՝ Հեղափոխության տեմպն արագացնելու նպատակով և այլն: Այդ շարժման առաջին շրջանի արդյունքն եղավ իմ «Հեղափոխություն» բանաստեղծությունը, «Ես ձեզ ասում եմ», «Մե՛կ էլ, մե՛կ էլ...», «Ամբոխն իմ աշխարհը», «Երկու ախոյան», «Դարբնի երգը», «Բուրժուաներին» և այլ նման շատ երկեր: Շատ էր բնական երկութը. կուտակված նյութերը ազատ արտահայտության իրավունք ստացան, մանավանդ ցարի հոկտեմբերյան խաբուսիկ մանիֆեստից հետո և գրականությունն ու Հեղափոխությունը ինձ մոտ, ինչպես ասել եմ, ընթանում էին սերտ կերպով միացած, ձեռք ձեռքի տված:

## ԻՄ ԶԵՐՄԱԴԻՆ ՈՂՋՈՒՅՆԸ

Այսօր, երբ աշխարհիս բոլոր ծայրերից պատվիրակներ կդաւ երևան՝ տոնելու Խորհրդային Հայաստանի 15-րդ տարեդարձը, եռ. Հանրապետության ժողովրդական բանաստեղծու, գամլած հիվանդության մահճին, զրկված եմ այդ բախտից. սա մի ծանր ցավ. սուր վիշտ է ինձ համար:

Սակայն մի բան, որ միսիթարում է ինձ և ուրախացնում՝ այդ այն է, որ ինձ համարում են ամենաբախտավոր պոետը շատ պոետների մեջ: Ամենաբախտավորը նրա համար, որ այն, ինչ երգեցի 40-ից ավելի տարիների ընթացքում և այն, որի համար բոլշևիկյան կուսակցության զեկավարությամբ անընդհատ պայքարեցի՝ այսօր դարձել է իրականուրյուն:

Եվ իրոք, 1905 թվին, 30 տարի սրանից առաջ, երգեցի՝ «Ես ձեզ ասում եմ կդա այն օրը, երբ իրավազուրկ ամեն մի բանվոր իր աշխատանքի կդառնա տերը ու ազատ, ուրախ կապրի բախտավոր...»:

Այդպես էլ եղավ Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով:

26 տարի սրանից առաջ գրեցի «Նոր առավոտ» պոեմը և ցանկացա, որ կինը գնա գործարան՝ միասին աշխատելու տղամարդի հետ: Ցարական կարգերում այդ գժվար իրագործելի էր այն ժամանակների համար, այսօր իմ բաղձանքը դարձել է իրականություն. մեր զավող-ֆարբիկաների մեջ աշխատողների կեսը կանայք են:

«Իմ Բալշևիկ է Շիր-Կանալը» պոեմում, որ լույս տեսավ 11 տարի սրանից առաջ, ես ցանկություն եմ հայանում, որ Շիրակի հարթավայրերը գրախտ գտնան: Բոլոր ավյալներն ասում են, որ ո՞չ միայն Շիրահարթը, այլև ամբողջ Հայաստանը՝ իր կասկադներով ու ջրանցքներով՝ երկիրը դարձնելու են դրախտ:

Եվ մի՞թե սա չէ այն բախտավորությունը, որ վերագրում են ինձ...

\* \* \*

Նույնքան բախտավոր պիտի համարել մեր այսօրվա բանվորա-գյուղացիական մասսաներին՝ հանձինս նրա բոլշևիկների, բանվորների, կոլտնտեսականների և բոլոր այն աշխատավորների, որոնք ճնշված էին ցարական դաժան կարգերից, կապիտալիստների ու հողատերերի կեղեքումներից և թալանչի դաշնակների կողպատներից:

Նրանց սրտում կուտակվում էր ցաման, բողոքի ու վրեժի թույնը միայն, մինչդեռ այսօր, Հայաստանի խորհրդայնացումից հետո, խտացած այդ թույնը տեղի է տվել կենսատու արևի ստեղծագործող ճառագայթների. մեծ թափով ու էնտուզիազմով նրանք այսօր ջերմացնում են իրենց երկիրը, մեծ խանդավավորվայրեցիք:

Սովորություն է, երբ ուզում են բարեմաղթել մեկին, ասում են՝ «Յանկանում եմ քեզ բախտավորություն»: Խորհրդային Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների հասցեին այսօր այդ բարեմաղթությունը ուշացած ցանկություն պիտի համարել... ճաշված անախրոնիզմ:

Մեր աշխատավորական մասսաները իրենց կոլխոզ-սովխոզներով, իրենց ինդուստրիալ-շինարարական, ստեղծագործական հանձարով արդեն բննած ունեն բախտավորության նամփան ու վստահ քայլում են այդ ուղիով, ինչպես արևը, որ անշեղ կատարում է իր շրջանը:

Մնում է, որ նրան ցանկանանք ավելի՛ թափ ու եռանդ՝ ոչ միայն աշքի լույսի պես, ամուր պահելու իր ձեռքում իր նվաճումների բանալին, իր հաղթանակների դրոշը, այն ավելի խորացնի զարգացնի ու լնդարձակի այն՝ նոր որոնումների, նոր հաղթանակների պսակումով:

## ՄԵՌԱՎ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ

Մեռավ մեր նախահեղափոխական և հետհեղափոխության դարաշրջանի ամենահանճարեղ գեղագետ գրողը, քաղաքացին, արիստունը: Մաքսիմ Գորկին հեղաշրջեց մեր դարու ամբողջ գրականությունը, մեր դարու նոր սերնդի մտքերն ու հույզերը, նրա սպասելիքներն ու ակնկալումները... Նրա գործերը հիմնովին բողոք են ցարական ռեժիմի դեմ, նրա ամեն մի տողի տակ թափնված են ցառումն ու զայրույթը տիրող կարգերի դեմ, կապիտալիստական բռնակալության դեմ: Նա երկար ժամանակ փոթորկել, ծառս-ծառսէ հանել ամենահանգիստ, պասսիվ մարդկանց սրտերն անգամ ու միայն բաղմամիլիոն նախկին Ռուսաստանում, այլև հեղափոխական լավագույն տարիներին՝ կարմիր գծից դուրս ամբողջ աշխարհում:

Մաքսիմ Գորկին եթե ոչինչ էլ գրած չկիներ, բայլական էր նրա «Մրրկահավի երգը», նրա «Ստրաստի Մորդաստի» արձակ պոեմները, ապա նրա «Հատակում» պիեսը, նրա «Մայրը», որ հեղաշրջեց մի ամբողջ սերունդ, ոտքի հանեց մի ամբողջ դար՝ ընդդեմ ցարական բռնակալության ու տիրող դասակարգերի վակիանալիայի: Այսպես է լինում, ահա, հեղափոխական խոսքի և շանթահար գեղարվեստի հմայքը, ուժը:

Եթե սրան միացնենք խոսքի ու մտքի ամենամեծ վարպետի հումանիտար հոգու էն բյուրեղյա ակունքների խորությունն ու հըստակությունը, որի մեջ, երբ մարդ տեսնում է իր պատկերը, հըսճվում է, զտվում, թարմանում է ու ինքն էլ բյուրեղանում հոգով, ապա կարգվի, թե որպիսի՞ հանճարեղ գեղարվեստագետի ու որպիսի՞ հմայուն մարգու կորցրին այսօր ոչ միայն մեր Սոցիալիստական Միությունը, այլև աշխարհիս լավագույն տարրերը:

Ի՞նչ կարելի է ասել թանկագին Ալեքսեյ Մաքսիմովիչի մասին, նրա դեռ շատուած դիակի առաջ... Մարդ 22մում, ընդարմանում

է, կրր տեսնում է, որ կողցրել է հանձարեղ գեղարվեստագետի՝  
էրուդիցիայով անշափ հարուստ, մի էնցիկլոպեդիստ, հանրագի-  
տակ մարդու...

Ի՞նչ կարելի է ասել թանկագին Մաքսիմ Գորկու մասին...  
Նրա խսկական արժեքավորումը, մանրամասն գնահատականը, որ  
համաշխարհային կշիռ ունի, կարելի է տալ միայն սառնասիրտ,  
հանգիստ, սովորական առօրյային:

Այսօր իմ գրիշը և ծանր հիվանդ, հազիվ շնչող սիրտը հրա-  
ժարվում է այդ ծանր պարտականությունը կատարելուց:

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Թույլ տվեք «Պրոլետար»-ի միջոցով խորին շնորհակալություն հայտնել Վրաստանի ժողովում խորհի նախագահ ընկ. Մգալոբլիշվիլիուն, Հայաստանի ժողովում խորհի նախագահ ընկ. Գուլոյանին, Լուսժողկոմ ընկ. Եղիազարյանին, Հայպետհրատին, Հայաստանի Գրական թանգարանին և մեր մեծ Միության եղբայրական հանրապետությունների գրական ու հասարակական այն կազմակերպություններին և մասնավոր անձանց. որոնք շնորհավորեցին ինձ իմ ծննդյան 70-ամյակի տոթիվ:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Բ  
Ե Վ  
Հ Ե Ո Ա Գ Բ Ե Բ  
1 8 8 7 — 1 9 3 7



1. Զական և Սահմուխտ Աշուղ-Բլբուլյաններին  
Թիֆլիսից—Գանձակ

Տպիսիս, 1887 թիվ, գիտութարի 13-ն.

Սիրելի ծնողք իս

Ներեցեք ուշ գրիլուս, ժամանակ չունիմ, դործո շատացել է,  
իմ կյանքն էլ այնպես է, ինչպես կար առաջ, Օրերում գնում է  
մեր մեծ աշակերտը, մնում ենք 3-ը, շուտով կուգա 4-րդ աշա-  
կերտը, և ես այն ժամանակ կդառնամ второй ученик, իսկ մի-  
տարի հետո՝ первыи: Երբ քա նոր աշակերտը, պատիվս էլ կմե-  
ծանա, տեղս էլ, աստիճանս էլ, և ես բոլորի աշքին մեծ կթվամ:  
Դործո միայն ոեցեպտ շինելը կլինի, ծախս, կամ թեթև բաների էլ  
ես ձեռք չիմ տալ, որովհետեւ ես ավագ աշակերտ կդառնամ: Մի  
կերպիվ աշխատում եմ բոլոր ծանրություններին համբերել և բո-  
լոր տանջանքներին հնազանդեցնել իմ կամքքը: Ով ունե երկաթե  
կամք և բարի նամուս, նորա համար սարերի քարերը մի թեթև  
ծղուտ է, և կամք տնենալովը նա ամեն կոշտ կոպիտ ու ամուր բա-  
նզ կարող է մոմի պես ծոել, ուր և կամենա: Ես վճռել եմ այդպիսի  
կամքի տեր դառնալ: Ի՞նչ է լինում գիշերները իմ հալը, երբ գա-  
լիս են քաղցր քնից վերկացնում, ես նախատում եմ ինձ, որ այս-  
պիսի ծանր գործ ընտրեցի իմ ապագայի համար:

Բարասոնց Սողոմտնին բարե հիշեցեք և ասեցեք, որ նամակը  
ստացա՝ թե՛ առաջինը և թե՛ երկրորդը: Թող ներփ ինձ, որ չկարո-  
ղացա պատասխանը շուտով գրել, եթի կդրեմ:

Ե՛ս, բոնս տանում է շատ:

Բարե Զեղ՝ Հակոբ

## 2. Սանդուխտ Աշուղ-Բլբուլյանին Բաքվից—Գանձակ

1887, օգոստոսի 6-ի  
Բաքու

Սիրելի մայր իմ

Արդեն հայտնած եմ, որ գեղատունս փոխեցի և այժմ դտնվելով նոր գեղատան մեջ, ինչպես նկատում եմ, կյանքս շատ ուրախ և շատ ազատ է անցնելու: Վերջապես տեսնում եմ, որ ծառայում եմ մի գեղատան մեջ, որտեղ կյանքը և մարդիք համապատասխան ին իմ սրտին, իմ բնավորության:

... Իսկապես իմ գործս վատ չէ, միայն հարկավոր է, որ գեղատունը լավ լինի, որն ահա ինձ վիճակվեց անսպասելի կերպով ես մտադիր եմ այստեղ մնալ մինչև կուրսս վերջանալը, ու քննությունից հետո միայն ուրիշ գործ սկսել: Միայն եթե զինվորակությունը շընդհատի մտադրությունս: Ինչ էլ լինի՝ նոյնիմբերին կգամ Գանձակ:

Ուրիշ գրելու շատ բան ունիմ, — միայն ժամանակ չունիմ...

Ներիր մայրիկ, ներիր քանի մի կոպիտ նամակներով քեզ վիրավորելուս համար, աղոթիր աստծուն, որ այժմ ես ուրախ և լավ գեղատան մեջ եմ, հուսա, որ այսուհետեւ ուրախալի նամակների կստանաս:

Ինձ շուտ-շուտ գրեցեք: Ինդրում եմ, ուրախ կաց մայր իմ՝ մայր իմ ուրախ կաց, խնդրում եմ:

Քո խոնարհ որդի՝ Հակոբ:

Յ. «ԲԱՄԲԵՐ»-ի ԽՄԲԱԳԻՌՈՒԹՅԱՆԸ

ԹԻՖԼԻՍԻՑ—ՊԵՏԵՐԱԿՈՎԻ

<1904>

«ԲԱՄԲԵՐ»<sup>1</sup>-ի ԲԱՐՁԵԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Անցյալ տարի ես ուղարկեցի խմբագրությանդ իմ թարգմանությամբ լույս տեսած Աղա-Նեգրիի Ա. պրակը, որի ստանալու մասին ոչ մի հիշատակություն չեղավ «Բանբեր»-ում: Այժմ ուղարկում եմ նոր լույս տեսած Բ. պրակը, որ, հուսամ, չեք զլանալ հիշատակել այդ մասին գոնե այս անդամ<sup>2</sup>:

Համակրելով Զեր գործին, ես կցանկացի աշխատակցել «Բամբեր»-ին, և ահա ուղարկում եմ իմ ինքնուրույն ոտանավորներից շետոր<sup>3</sup>, որը եթե հավանություն գտնի խմբագրության կողմից, ուզախությամբ կուղարկեմ և ուրիշները:

#### 4. «ՏԱՐԱՊ»-Ի ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս

14/II, 1907.  
Թիֆլիս

«Տարապ»-ի հարգելի խմբագրին

Այս օրերս «Տարապ-Աղբյուրի» ցրիչը հասցես էր Հարցրել, երկի թերթերը ինձ բերելու համար: Եթե խմբագրությունդ որոշել է ինձ ձրի «Աղբյուր-Տարապ» ուղարկել, որպես հին աշխատակցի<sup>1</sup>, սուրանով Հայտնում եմ ձեզ իմ հասցեն, որ հետեւյալն է. Զյուկովսկայ նլից № 14, դօմ Մ. Ջաբարա, Ա. Ակոպյան (վերք. ետակ).

Տարաբախտաբար ներկայումս ոչնչով չեմ կարող աջակցել «Տարապ»-ին, որովհետեւ ահա 20-րդ օրն է հիվանդ պառկած, նույնիսկ պարագմունքի չեմ գնում: Բժիշկները գտել են, որ հոգնածությունից և արյան պակասությունից ուժասպառ եմ եղած և ինձ հարկավոր է հանգստություն և միայն հանգստություն:

Ուժերս կազդուրվելուն պես կաշխատեմ «Տարապ»-ին մի բան ուղարկել: Որ «Աշխատանքի երգեր»-ից<sup>2</sup> մի օրինակ խմբագրությանդ ուղարկեմ, զուցե բարեխիղճ քննադատ գտնվի՝ առանց անձնական կրքի ու հաշիվների, մի ճշգրիտ կարծիք հայտնելու նրա մասին<sup>3</sup>: Եթե այդպիսին ի նկատի չունեք, այն ժամանակ փորձեցեք ինքներդ քննադատել:

Հարգանքով՝ Հակոբ Հակոբյան

## 5. ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Բաքու

12 մայիսի 1912 թ.  
Թիֆլիս

Սիրելի Ստեփան

«Աստղ»-ի իրավունքը ստացվեց<sup>1:</sup>: Ի՞նչ ես մտածում: Զէ՞ որ ես  
չէ քո անելիքին եմ սպասում: Եթե շես խոստանում առայժմ որո-  
շակի բան անել, գոնե առաջնորդող հոգվածն ուղարկիր, մի համար  
բաց թողնենք, մինչև որ սեպտեմբերին կսկսենք կանոնավոր հրա-  
ռարարակելը: Ի՞նչ կասես<sup>2:</sup>

Պատասխանի՞ր, սպասում եմ:

Հակոբ

## 6. ԲԱԳՐԱՏԻՆ

Թիգլիս

22/II, 1916

Հարզելի ընկեր Բագրատ

Ինձ զարմացրել է Զեր այն հայտարարությունը, որ արել եք Սոլովյանի դասախոսության առթիվ, թէ իբր բանվորությունը բանատեղծությամբ չի հետաքրքրվում:

Ես կարող եմ միայն զարմանալ, թէ ինչպես Դուք, որ առաջադեմ ու գիտակից բանվորության մի անդամն եք համարվում, այս բանվորական-պրոլետարական կուլտուրայի կողմնակից—մի այդպիսի հետամնաց կարծիք կարողացաք հայտնել...

Այդ ինձ հիշեցնում է 10-ը և ավելի տարիներ առաջ պտտվող այն անհիմեթ կարծիքը, թէ՝ բանվորությանը քաղաքական կոփիք չէ հետաքրքրում, նրան հետաքրքրում է օրիւա հարցը, տնտեսական կոփիք՝ ծայրահեղ գեղքում...

Գալիս եմ բողոքով հայտնելու Զեր առարկության դեմ, ընկեր Բագրատ, որ դուք չարաշար սիսալվում եք:

Բանվորությանը ոչ միայն հարկավոր է ճանաշել իր իդեոլոգիներին և թեորետիկներին, բանվորությանը ոչ միայն հարկավոր է ունենալ իր սեփական պատգամավորները Պետական Դումայում, իր սեփական համալսարանը, իր սեփական էնցիլոպեդիան, իր սեփական մորալը, իր դասակարգային կոփիք (ինչպես այդ բոլորն ունի բուրժուազիան, որպես բուրժուազիա), բանվորությունը պիտք է ունենա և իր սեփական գեղարվեստ՝ հանձինս գրականության, նրա պատգամախոս պոեզիայի և դաստիարակող բեկտրիստիկայի:

Ես ավելին կասեմ. բանվորությունը գեղարվեստի մեջ պետք է ունենա իր սեփական նկարիչները, իր քանդակագործները, ինչպես Մենիքն և այլն, իր պլաստիկան և այլն, և այլն, որովհետեւ, իմ խորին համոզմտնքով, բանատեղծությունը և առհասարակ գե-

զարվեսար կրթում, դաստիարակում է մարդու զգացմունքները, բարձրացնում, խրախուսում, ազնվացնում նրա տրամադրությունները: Ես է՛լ ավելին կասեմ. պոեզիան կազմակերպում է կոլեկտիվի տենչերն ու հույզերը, սնունդ մատակարարում, եռանդ ներշրջնում նրա ոգուն. և երր, մանավանդ, մարտիկ-պատգամախոս է պոետը, այդ արդեն մի մեծ ազգակի է մեռած հոգիներին նորից կյանքի բարձրացնելու, կամ վճարվածներին կյանքի կանչելու:

Խորը համոզված լինելով, որ սրանից հետո կրածանեք իմ կարծիքը, որ փրոք պնեզիան կազմակերպում է կոլեկտիվի զգացմունքները, հույզերը, որովհետև, եթե նա 100 ընթերցողի մեջ միատեսակ եռանդի հույզ է առաջացնում, կնշանակի կազմակերպում է կոլեկտիվի ներքին աշխարհը, կրթում, ագիտացիա մղում, դաստիարակում պրոլետարիատի մարտատենչ ոգին և բաժանելով իմ այդ կարծիքը, ոչ թե այսուհետև կասեմ, թե՝ բանվորությունը բանաստեղծությամբ չի հետաքրքրվում, այլև ինքներդ, որպես պրոլետարական կուլտուրայի կողմնակից, կաջակցեք գործին այնպիսի կուլտուրական մի ձևի միջոցով, ինչպես, օրինակ, պոեզիայի զարդացումը և նրա մասին երևան եկտղ ու արծարծող ամեն մի դասախոսություն:

Լավ իմացեք և լավ հիշեցեք, ընկեր Բագրատ, որ բանվորությանն անհրաժեշտ է մտքի և հոգու հարմոնիա: Նա որչափ զարդացնում է, լայնացնում է իր տեսակետները ու ԿՌՎԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ իր իդեոլոգ քեռեւսիկների գրեթեռվ, նույնչափ խորացնում և ազնովացնում է իր կովի միջոցները իր իդեոլոգ բանաստեղծների գրեթեռվ. որովհետև որքան բազմակողմանի և խորն է զարգացած բանվորը (և աղնվորեն դաստիարակված—կավելացնեմ ինձնից), այնքան ավելի ուժգնությամբ և իմաստությամբ պիտի կարողանա առաջտանել իր ԳԱՍՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՎԸ: Այսպես կն մտածում բոլոր ավանդարդում քայլող պրոլետարները. այսպես պիտի մտածեք Դուք և այս մտքով վարեք ժողովրդական համալսարանի դասախությունների գործը, որի մի անդամն էլ Դուք եք: Ապա թե ո՞ւ սությունների գործը, որի մի անդամն էլ Դուք եք: Ապա թե սաեւ թեթևակի, թե բանվորությունը բանաստեղծությամբ չի հետաքրքրվում, ինքներդ էլ կողմնակից մնալ այդ կարծիքին,— այդ տաքրրությունը, ինքներդ էլ կողմնակից մնալ այդ կարծիքին,— այդ կործանիչ միտք է, սխալ դատողություն և, մյուս կողմից, լիումն ու նուսահատություն առաջնորդ այնպիսի լեկտորների մեջ, ինչպես Սոլովյանը, որը, մեր մտքով առաջին անգամն է գրականության ամբիոնի վրա հանդես գալիս և անհամբույր կարծիքի հանդիպում...

Ներեցեք վատ գիւղուս, գրում եմ հիվանդ, անշարժ, անկողնի մեջ. ներեցեք և ընդունեցեք ընկերական ողջույններս:

Զեր Հակոբ Հակոբյան

7. Լ. Ե. ԱՍԱԲԻՔԻ ԵՎ Ա. Ե. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆԻՆ

Թիֆլիսից — Մուկվա

12.IV.1921,  
г. Тифлис

Дорогие незабвенные друзья,  
Леонид Николаевич и Ася Никитична!

Горячий, задушевный привет Вам обоим и поцелуй в ручку милой, славной Шушаник.

С тов. Граник давно уже я прислал Вам ответ на первое письмо, теперь пишу я Вам второе и прошу быть снисходительным, если на этот раз буду краток.

У нас теперь Советская Грузия, и с первого же дня переворота меня назначили комиссаром всех банков. Правда, работа не по душе, но за неимением соответственных работников-коммунистов, я и пошел на этот пост и, надо сказать, — я на посту.

Национализировал 24 тифлисских банка с товарными складами и т. д. Правда, очень многое вывезли до вступления Красной Армии в Тифлис, но все же успел во время «ограбить» всю банковскую буржуазию, и она «ограблена» мною окончательно. Для этого потребовалось 18 и более часов работы, очень часто до глубокой ночи, я, и без того переутомленный раньше, совсем выбился из сил. Не знаю только откуда появилась у меня такая колоссальная, адская энергия?  $1\frac{1}{2}$  месяца я форменно борюсь с буржуазией (как в бою) неустанно, даже так, что нервы дрожат от напряжения сил — а все же не чувствую реакции сил — попал словно в

тучину, в водоворот, а все же жив, а все же цел. Конечно, в процессе такого труда забываешь не только себя, но и ближайших друзей. Впрочем, что значит «забываешь»? Тогда почему при одном воспоминании о Вас, сердце наполняется грустью?

Да, провели мы с Вами дни и месяцы, кот<sup><орые></sup> никогда не забудутся! Так проводят именно только коммунисты, честные, славные дети нового, социалистического мира! И если завтра я помру, то все же пред смертью скажу: — Я счастлив, ибо я в известный период моей жизни видел и жил с истинными детьми нового мира. Если же я буду жив, то непременно опишу в одной из поэм то, что я пережил с Вами и познал.

Похудел я неизвестно, а все же бодро рвусь к работе, несмотря на то, что ближайшие друзья советуют бросить банки и взяться за перо. Думаю еще успею. А пока работать и работать надо!

Извиняюсь, что писал о себе чересчур много, извините, нервы... пружинные.

Теперь пишите о себе. Жду. Жду. Крепко целую дорогого Леонида, горячее рукопожатие и сердечный привет дорогой Асе Никитичне. Живите молодые, счастливые и не забывайте

Акопа

P. S. Привет Вам от Эвелины, Марг<sup><ариты></sup> Семеновны и Карагулян, кот<sup><орая></sup> Вам пошлет письмо. Очень мы благодарны за заботы о Рануш. Страшно соскучился по ней, хочу выписать ее. Боюсь за ее здоровье. Посоветуйте, как быть? Не оставить ли ее в Москве? Здесь пока не важно.

Թանկագին, անմոռանալի բարեկամներ  
Աննիդ Նիկոլաևիչ և Ասյա Նիկիտիշնա

Ջերմ, սրտալի տղջուցն եմ հղում Ձեզ երկուսիդ էլ և համբու-  
ռում եմ սփրելի, ճիանալի Շուշանիկի ձեռքը:

Ընկ. Գրանիկի միջոցով ես արդեն վաղուց եմ ուղարկել Ձեր  
առաջին նամակի պատասխանը, Հիմա ես Ձեզ երկրորդն եմ գրում

և խնդրում եմ ներողամիտ լինեք, եթե այս անգամ կարճաբան լինեմ:

Հիմա մեզ մոտ Սովետական Վրաստան է և Հեղաշրջման առաջին փոկ օրից ինձ նշանակել են բոլոր բանկերի կոմիսար: Ճիշտ է, աշխատանքը սրտովս չէ, բայց համապատասխան կոմունիստաշխատակիցների բացակայության պատճառով ես համաձայնեցի աշխատել այդ պոստով և, պիտի ասել, ես պոստի վրա եմ:

Ազգայնացրի Թիֆլիսի 24 բանկերն փրենց ապրանքային պահանջերով և այլն: Ճիշտ է, մինչ կարմիր Բանակի Թիֆլիս մտնելը շատ բան տարել էին, բայց համենայն դեպս հասցրի ժամանակին «թալանել» ամբողջ բանկային բուրժուազիային և նա իմ կողմից «թալանված է» վերջնականապես: Դրա համար կարիք եղավ 18 և ավելի ժամ աշխատել, շատ հաճախ մինչև խորը դիշեր, և ես, առանց այն էլ շատ հոգնածս, բոլորովին ուժից ընկա: Չեմ հասկանում միայն, իմ մեջ որտեղից հայտնվեց այդպիսի հսկայական դժոխային էներգիա: 1 1/2 ամիս է ես կատարյալ կոիվ եմ մղում բուրժուազիայի դեմ (ինչպես ճակատամարտում) անընդհատ, նոյնիսկ այնպես, որ ներվերս են դղում ուժերի լարվածությունից, և համենայն դեպս ուժերի անկում չեմ զգում, ոնց որ թե ընկել եմ հորձանքի, ջրապտույտի մեջ և այնուամենայնիվ կենդանի եմ, այնուամենայնիվ՝ անվնաս: Իհարկե, այդպիսի աշխատանքի պրոցեսում ոչ միայն քեզ ես մոռանում, այլև ամենամոտ բարեկամներին: Բայց դե ի՞նչ է նշանակում մոռանում ես: Այդ դեպքում ինչո՞ւ չենց միայն Զեղ հիշելով սիրտս լցվում է թախիծով:

Այս, ես Զեղ հետ այնպիսի օրեր և ամիսներ եմ անցկացրել, որոնք երբեք չեն մոռացվի: Այդպես են անցկացնում ժամանակը հենց միայն կոմունիստները, նոր, սոցիալիստական աշխարհի աղնիվ, պանծալի զավակները: Եվ եթե վաղը ես մեռնեմ, համենայն դեպս մահից առաջ կասեմ. ես երջանիկ եմ, քանզի իմ կյանքի մի որոշ էտապում ես տեսել եմ և ապրել նոր աշխարհի իսկական զավակների հետ: Իսկ թթե ես կենդանի մնամ, ապա անպայման պոեմներից մեկում կգրեմ այն ամենը, ինչ ապրեցի և ճանաշեցի Զեղ հետ միասին: Ես անձանաշելիության չափ նիհարել եմ, բայց այնուամենայնիվ աշխուժորեն ձգտում եմ դեպի աշխատանքը, չնայած որ ամենամոտ բարեկամներս խորհուրդ են տալիս բանկերը թողնել և ձեռք զարկել գրչին: Կարծում եմ, թե դեռ կհասցնեմ: Իսկ առայժմ հարկավոր է աշխատել ու աշխատել:

Ներողություն եմ խնդրում, որ իմ մասին շափազանց շատ զբեցի, ներեցեք, նյարդերը... առաձգական են:

Այժմ գրեցեք Ձեր մասին: Սպասում եմ, սպասում եմ: Ամուր համբուրում եմ թանկագին Լեոնիդին, չերմորեն սեղմում եմ ձեռքը և հղում եմ սրտալի ողջույն թանկագին Ասյա Նիկիտիշնային: Ալրեցեք երիտասարդ, երջանիկ և մի մոռանաք՝

Հակոբին

Թ. Տղջույն Ձեզ էվելինայից, Մար<գարիտա> Սեմյոնովնայից և Կարագուլյանից, որը Ձեզ նամակ կտւղարկի: Մենք շատ շնորհակալ ենք Հրանուշին ցուց տված խնամքի համար: Մարսակելիք կարոտել եմ նրան, ուզում եմ կանշել: Մտահոգվում եմ նրա առողջության համար: Խորհուրդ տվեք, ինչպե՞ս վարվեմ, արդյոք շթողնե՞մ նրան Մոսկվայում: Այստեղ գեռևս այնքան էլ լավ չէ:

8. ՄԻԽԱ. ՅԵԱԿՈՅԻՔ

Թիֆլիսից — Մանկական

5.V. 1921

Дорогой друг и товарищ Миха!

Именем нашей долголетней дружбы и товарищеской связи, я и Маргарита просим оказать нам следующую услугу.

Ранушку необходимо спешно с первым отходящим поездом отправить к нам в Тифлис.

Из всех полученных от нее писем ясно видно, что она далее не в состоянии переносить условия московской жизни.

Как и тебе известно, маленькая Рануш очень хрупка (лечилась в прошлом году от малокровия) и все же упорно продолжает она делать все то, что посильно только здоровому, прослому и сильному человеку. Подумай, эта крошка сама себе и стирает, и готовит, и убирает и, конечно, одновременно и работает в Компартии, и служит в ЦИК.

Правда, она любит эту жизнь с ее борьбой, духовно связана с ее красотой, но ведь физически она настолько слаба, что не вынесет тяжести своей борьбы.

С другой стороны, без отдыха она ищет духовной и умственной пищи, всем существом отдалась делу Советской власти, словом горит, кипит вся, работает...

Все это хорошо, ценно, и я только могу радоваться этому от души, гордиться тем, что дети наши, как Рубен, Рануш и Эвелина шли и идут по стопам отца. Все это, повторяю, прекрасно, в особенности, когда она все это переносит без ропота, как всякая истинная коммунистка, с терпением

человека, осознавшего свое достоинство, но ведь, в конечном счете, она, как ребенок слабый и нездоровы, не вынесет все это, и мы будем ответственны перед ее физическим существованием, если вовремя не предупредим опасность.

Живя и работая при нас, она принесла бы больше пользы нашему общему делу, чем сейчас. Вот о чем надо нам думать с тобой, и мы обязаны это понять.

Эвелина, как тебе известно, заболевшая лет десять тому назад брюшным тифом, сейчас лежит больная сыпным тифом! Ох, сколько мучений и страданий перенесла бедненькая, и мы с ней!! Молодчина все же Эвелина, перенесла кризис и сейчас болезнь на исходе.

Я, как комиссар всех банков, с первого же дня революции так увлекся работой, что позабыл и себя, и семью, и свою болезнь, и свое перо. Помню, голодал, но некогда было думать об этом, папиросы — вот моя пища, и откуда появилась у меня такая адская энергия?

Все это было так хорошо, я ожил и засиял, после 2-месячной борьбы с банковскими акулами Эвелина слегла. Мне страшно переутомленному, Амаяк дал отпуск, чтобы заботиться об Эвелине, и вот — она поправляется.

Эвелина на пути к выздоровлению, а тут еще квартирный вопрос. Все это ничего, выдержим — ведь старый курилка, а вот вопрос Рануш сильно беспокоит нас с Маргаритой. На старости лет если с ней случится несчастье, это будет страшным ударом и для меня, и для всей семьи, так как мы все ее так любим.

Ты, Миха, дорогой, знаю очень и очень занят, теперь только я понимаю, что значит быть занятым — я это знал и раньше с 1901 года, когда был здоров, молод и цветущ. Теперь мне стукнул 56-й год жизни, я и мать не вынесем, если со слабой, хрупкой, малокровной Рануш случится что-нибудь. Она горда, упорна, самолюбива и, вместе с тем, скромна, правда, больше развита, чем кто-либо другой в таком возрасте, она хочет дать всю свою энергию Советской власти, — но надо знать и понимать с кого что требовать. Я виновен перед нею тем, что писал все время: надо дать всю молодость и здоровье нашему делу, надо со-

здать и т. д. И она этому моему призыву была послушна. Но в ее письмах слышен тон и голос физически слабого.... Было бы большим преступлением с нашей стороны не помочь ей пока не совсем поздно!

Будь здоров, привет, привет и горячий привет от нас всех!

Акопян

### Թանկագին բարեկամ և ընկեր Միխա

Հանուն մեր երկարամյա բարեկամության և ընկերական կապի, ես և Մարգարիտան խնդրում ենք հետեւյալ ծառայությունը մատուցես մեղ:

Հարկավոր է շտապ, առաջին եկող գնացքով Հրանուշկային մեզ մոտ՝ թիֆլիս տւղարկել:

Նրանից ստացած բոլոր նամակներից պարզ երևում է, որ նա ալևս ի վիճակի չէ տանել մոսկովյան կյանքի պայմանները:

Ինչպես քեզ էլ հայտնի է, փոքրիկ Հրանուշը շատ փիսրուն է (անցյալ տարի բուժվում էր արյան պակասությունից) և համենայն գեպս համառորեն նա շարունակում է անել այն բոլորը, ինչ որ կարող է անել միայն առողջ, հասունացած և ուժեղ մարդք: Մտածիր, այդ պստիկը ինքն իր համար և՛ լվանում է, և՛ ճաշ է պատրաստում, և՛ սունն է հավաքում, և՛, իհարկե, միաժամանակ աշխատում է կոմպարտիայում և ծառայում է Կ. Գ. Կումայ: Ճիշտ է, նա սիրում է այդ կյանքն իր պայքարով, հոգեպես կապված է նրա գեղեցկության հետ, բայց չէ՞ որ նա ֆիզիկապես այնքան թույլ է, որ չի կարող տանել իր պայքարի ծանրությունը:

Մյուս կողմից, նա առանց հանգստանալու հոգեկան և մտավոր կերակուր է որոնում, ամբողջ էությամբ նվիրվել է Սովետական իշխանության գործին, մի խոսքով այրվում է, ամբողջովին եռում, աշխատում...

Այդ բոլորը լավ է, գնահատելի, և ես միայն կարող եմ սըրտանց ուրախանակ, հպարտանալ այն բանով, որ մեր երեխաները, ինչպես Ռուբենը, Հրանուշը և էլելինան գնացին և գնում են հոր հետքերով: Կրկնում եմ, այդ բոլորը հրաշալի է, մասնավորապես, որ նա այդ բոլորը տանում է անտրունչ, որպես յուրաքանչյուր իսկական կոմունիստ, իր արժանապատվությունն փմացող մարդու համբերությամբ, բայց չէ՞ որ վերջին հաշվով նա, որպես թույլ և

անառողջ մրեխա, այդ բոլորին չի դիմանա, և մենք պատասխանառ կլինենք նրա գիտիկական գոյության համար, եթե ժամանակին շկանխենք վտանգը: Եթե ապրեր ու աշխատեր մեզ մտնա մեր ընդհանուր գործին շատ ավելի օգտակար կլիներ, քան այժմ: Ահա թե ինչի մասին պետք է մտածենք մենք քեզ հետ միասին, և մենք պարտավոր ենք այդ բանը հասկանալ:

Էվելինան, որը, ինչպես քեզ հայտնի է, տասը տարի առաջ հիվանդացել էր որովայնային տիֆով, այժմ հիվանդ պառկած է բժավոր տիֆով: Ե՛հ, ինչքան տանջանք ու տառապանք տարավ խեղճը, ու մենք էլ նրա հետ: Համենայն դեպս կեցցե՛ էվելինան, ճգնաժամն արդեն անց է կացրել և այժմ հիվանդությունն անցնելու վրա է:

Ես, որպես բոլոր բանկերի կոմիսար, ուսուլուցիայի առաջին օրից այնպես աշխատանքով կլանվեցի, որ մոռացա և՛ ինձ, ե՛ ընտանիքիս, և՛ հիվանդությունս, և՛ դրիչս: Հիշում եմ՝ սովում էի, բայց ժամանակ չկար այդ մասին մտածելու, ծխախոտը — ահա իմ սնունդը, և որտեղի՞ց է իմ մեջ այդպիսի դժոխային էներգիան:

Այդ բոլորն այնքան լավ էր, ես կենդանացա և փայլեցի, բանկային շնագալերի դեմ մղած շամսվարից հետո էվելինան պառկեց: Ինձ՝ սոսկալի հոգնածիս, Համայակն արձակուրդ ովեց, որպեսպի հոգ տանեմ էվելինայի մասին, և ահա նա ապարինված է:

Էվելինան ապաքինման ճանապարհին է ահա բնակարանացին հարցն է առաջ եկել: Այդ բոլորը ոչինչ, կդիմանանք, չէ՞ որ հին սոկոր ենք, բայց ահա Հրանուշի հարցը շատ է անհանգստացնում ինձ ու Մարգարիտային: Ծերությանս օրում, եթե նրա հետ գժրախտություն պատահի, դա ահուելի հարված կլինի թե՛ ինձ, թե՛ ամրող ընտանիքի համար, քանի որ մենք բոլորս շատ ենք սիրում նրան:

Դու, Միխա, թանկագին, գիտեմ, որ շատ ու շատ ես զբաղված, հիմա եմ միայն հասկանում, թե ի՞նչ է նշանակում զբաղված լինել: Ես այդ առաջ էլ գիտեի, 1901 թվականից, երբ դեռ առողջ էի, երիտասարդ ու փթթող: Հիմա արդեն իմ կյանքի 56-րդ տարին է, ես ու մայրը չեինք կարող դիմանալ, եթե թույլ, գիտուն, արյունապակաս Հրանուշի հետ մի բան պատահի: Նա հպարտ է, համառ, ինքնասեր, և միաժամանակ, համեստ, ճիշտ է, ավելի է զարգացած քան նրա հասակի որևէ մի ուրիշ աղջիկ, նա ուզում է իր

Հմերգիան Սովետական իշխանությանը տալ, բայց հարկավոր է իմանալ ու հասկանալ, թե ումի՞ց ի՞նչ կարելի է պահանջել: Ես մեղավոր եմ նրա առաջ այն բանի համար, որ անընդհատ գրուէի, թե հարկավոր է ամբողջ երիտասարդությունը և առողջությունը տալ մեր գործին, հարկավոր է ստեղծել և այն: Եվ նա իմ այդ կոշին լսող եղավ: Բայց նրա նամակներից ֆիզիկապես թուլ ժարդու տոնն ու ձայնն է լսվում... Մեր կտղմից մեծ հանցագործություն կլիներ շօգնել նրանի դեռ բոլորովին ուշ չէ:

Ո՛ղջ եղիր, ողջո՞ւն, ողջո՞ւն և ջերմ ողջո՞ւն բոլորիցու:

Հակոբյան

## 9. ՄԱՍԻՆ ՕՐԱԿԱՇՎԻԼԻՆ

Թիֆլիս

20.III.1922.

г. Тифлис

Секретарю Закбюро Р.К.П.(б.)  
тов. Орахелашвили

Дорогой товарищ!

Со дня советизации Грузии, к крайнему сожалению, не издано ни одной книжки с художественным содержанием на армянском языке для широких пролетарских масс. А между тем потребность в таких изданиях — как необходимость для духовного здоровья народных масс — громадна.

Ко мне неоднократно обращаются товарищи рабочие из клубов, чтецы — декламаторы из профсоюзов и трудовых школ с просьбой предоставить им в распоряжение мои стихотворения, вышедшие за период революции, но я не в состоянии удовлетворить их, за неимением печатных экземпляров.

Ввиду всего вышеприведенного, прошу оказать мне **содействие** и сделать надлежащее распоряжение об издании моих произведений (последних двух лет) отдельной книжкой, ибо я не располагаю лично средствами для издания таковой.

Пролетарский поэт

Акоп Акопян

Ա. Կ. Բ. Պ. ԱՆԴՐԵՅՈՒՐՈՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
Ընկ. ՕՐԱԿԱՇՎԻԼԻՆ

Թանկագին ընկեր

Վրաստանում սովետական կարգերի հաստատման օրից, ցավոք սրտի, լայն պրոլետարական մասսաների համար հայերեն լեզվով չի հրատարակված գեղարվեստական բովանդակություն ունե-

ցող ոչ մի գրքույկ: Մինչդեռ այդպիսի հրատարակությունների պահանջը, որպես ժողովրդական մասսաների հոգեկան առողջության համար անհրաժեշտություն, հսկայական է:

Հաճախ ինձ դիմում են ակումբներից բանվոր ընկերներ, պրոֆմիություններից և աշխատանքային դպրոցներից արտասանողներ՝ խնդրելով իրենց տրամադրության տակ դնել ուսուցչիացիք էտապով լույս տեսած փմ բանաստեղծությունները, բայց ես ի վիճակի չեմ բավարարել նրանց՝ տպագրված օրինակներ չունենալու պատճառով:

Նկատի առնելով վերը շարադրվածը, խնդրում եմ օգնել ինձ և անել համապատասխան կարգադրություն՝ առանձին գրքով իմ երկերի (վերջին երկու տարվա) հրատարակության մասին, քանի որ ես անձամբ միշոցներ չունեմ այդպիսին ինքս հրատարակելու

Պրոլետարական բանաստեղծ՝

Հակոբ Հակոբյան

## 10. ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

<դարուն, 1924>

Սիրելի Անուշավան

«Խորհրդային Հայաստանում» կարդացի մայիսի 25-ին կատարվելիք 25-ամյա գրական գործունեությանդ մասին<sup>1</sup> և սրտանց որպախացա, որ վերջապես քեզ էլ հիշեցին:

Եատ եմ խնդրում, շտապիր, կենսագրական քանի մի տեղեկություններ ուղարկիր ինձ. Ծնվելուդ օրն ու տարին, որտեղ, ուր սովորելու և այլն, և այլն: Ինձ անհրաժեշտ են այդ նյութերը<sup>2</sup>: Խոսել եմ այստեղ այդ մասին, բոլորեքյանք էլ համակրությամբ են Վերաբերվելու քո 25-ամյա գոծունեությանը և արձագանքելու են:

Խնդրում եմ զգես և այն մասին, քանի պիեսներ ունես գրած, քանի ուր տպագրած՝ «Անարխիստները», «Օսկան Պետրովիչը էսկանքում», «Տգիտության զոհեր» պիեսներից բացի, քանի նոր գործեր ունես և ի՞նչ բովանդակությամբ, որոնց հետ ես ծանոթ չեմ: Ցանկալի է, որ հորելյանդ իր հետևանքով լայն բարոյական ազգեառություն և հիմք թողնի և ոչ թե նեղ շրջանների սեփականություն մնա: Դրա համար անհրաժեշտ է լայն ագիտացիա:

Հասցեն՝ Ս. Մահարաձե № 11, ինձ:

Ընկ <Երական> ողջ <ույններով> Հ. Հակոբյան

## 11. ԱՇԽԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ :

Թիֆլիսից — Երևան

12/VII, 1924  
Թիֆլիս

Սիրելի ընկեր Աշոտ Հովհաննիսյան

Ձեր խորհուրդը՝ թե «Գրեցեք ժողովրդական լեզվով բանասունդություններ» և ընկ. Մակենցյանի հորդորները՝ գրել այսուուժեալ պրոզայով, ինձ ստիլեցին մոռացված արխիվից հանել այս իմ «Պատանյակ կյանքիս պոեմը»<sup>1</sup>, մշակել այն ու որպես փորձուդարկել Ձեզ՝ կամ «Նորք»-ի կամ «Վերելք»-ի համար<sup>2</sup>:

Ճիշտ մի կատարված իրողություն է «Համառոտ պատմության» ֆարուշան, ճիշտ և առանց չափազանցության:

Ով ապրել է Գյանջայում տասնյակ տարիներ առաջ, նա կհասունանա «Դուկասովենց բաղի» հմայքն ու նրա տերերի խրախճանքների գովքը:

Ամենից շատ կհասկանան ինձ ընկեր Ասքանազ Մուսլյանը՝ Բալյանը, Շահսուլարյանը, Վահան Հովհեփյանը և մյուս զյանցեցի ընկերները, որոնք հեքիաթ-այգու տեղն էլ գիտեն, նրա՝ տարին-տասներկու ամիս քեֆի սիրահար տերերին էլ: Ճանաչում են գանձակեցիք Ալեքսան բեգ Դուկասովին\*, որպես հայ՝ մկրտված լազգի, որպես նախկին հերոս իգիթ, և որպես մեկը, որը իր բազի պրդյունքով լոթիանա հյուրասիրում էր համարյա Գանձակի բուլոր պաշտոնիկներին՝ սկսած պրոկորորներից, գուբերնատորից ու փոխ-գուրերնատորից, վերջացրած փր հարուստ ազգական վրացի թափառներով:

\* Այժմ վախճանված:

Ահա այդ հեքիաթ այգին էր, որ իս, բաշմախչի ջականի տղասրմի օր հրավիրվել էի երգելու, որպես Գյանջայում հայոնի մանկական ձայնով երգող և որի հուշերը ստենոգրաֆիկ ճշտությամբ գրի եմ առել դեռ շատ վաղուց: Ես իսկական ստորագրությունն չեմ դնում ոչ թե նրա համար, որ ամաշում եմ, այլ, որ խուսափելով նման մոտիվներից, ծերությանս հասակում արդեն անհարմար է պղպանումով հանդես գալը:

Համենայն դեպս, Կթե պոեմս նյութի կամ մշակումի կողմից անբավարար նկատվի Զեր կողմից, ձեռագիրը, խնդրում եմ, կամ հանձնեք «Վերելք»-ին կամ Թիֆլիս գալուց՝ վերադարձնեք ինձ:

Նա անպատճառ կմտնի լիակատար ժողովածում<sup>3</sup> մեջ, եթե նրեւից կվիճակվի սրան լույս տեսնել և անշուշտ կմտնի «Էս էլ իմ սերը» կամ «Սիրո լարերից» բաժնի մեջ:

«Նորք»-ի քարտուղարը<sup>4</sup>, շնորհակալ եմ, փոստով ուղարկեց իմ մեմուարների շրդ տեսրակը, և մաս պատրաստում եմ Զեր համար («Նորք»-ի) երկրորդ և վերջին աշխատանքը, իհարկե դուրս նետելով անհատական ապրումներս, անձնականիս վերաբերյալը և տվյալը հասարակական-պատմական նշանակություն ունեցող գործիշների (Աղամյան, Գամառ-Քաթիպա, Արծրունի, Բաթֆի, Խրիմյան և այլոց) հետ տմացած ծանոթությանս նկարագրիմ<sup>5</sup>:

Կոմ <տմիստական> ողջույններով՝ Հ. Հակոբյան

## 12. ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Թիֆլիսից — Երևան

1/X, 1924,  
Թիֆլիս

Սիրելի ընկերներ

Այսօր միայն ստացա ձեր որոշման թուղթը: Պատիվ եմ համարում իմ հին և սիրելի ընկերոջ Անուշավան Վարդանյանի հոբելյանական մասնաժողովի անդամը համարվել:

Հենց այսօր ևեթ գրեցի մի հոդված սիրելի Անուշավանի տոռնակատարման առթիվ «Մարտակոչ»-ում տպելու համար<sup>1</sup> և շատ ուրախ կլինեի, նեթե լրացուցիչ տեղեկություններ հաղորդեիք ինձ, կրկին մի հոդված ևս գրելու տոնի օրվան առթիվ<sup>2</sup>:

Անկանկած, տվածս նյութը թերի է, գուցե և հիշողությունիցս վրիպել է շատ բան: Անհրաժեշտ է փանալ, ի՞նչ կա տպված Անուշավանի գործերից, ի՞նչ է տպագրության տալու Հայաստանի Պետհրատը և այլն:

Նույնպես անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ նրա լիակատար կենսագրականը, այլև տեղեկություն այն մասին՝ ի՞նչ մասշտառվ, որտե՞ղ և ի՞նչ ձեռվ է ծրագրված տոնակատարության հանդեսը:

Այս տեղեկությունները անհրաժեշտ են հասցնել ինձ ոչ ուզ, քան նոյեմբերի 1-ը, որ կարողանանք այստեղ ևս ֆրոնտ բացել տոնը հաջող կատարելու համար:

Շատ լավ կլիներ որևէ մի պիես ուղարկել Անուշավանի հեղինակություններից, գուցե հաջողացնեինք տեղական թատրոններից, կամ բանվորական ակումբներից մեկում ներկայացնել այն:

Այդ ընտրությունը թողեք իրեն՝ ընկեր Անուշավանին:

Ցանկանում եմ ձեզ կատարյալ հաջողություն սկսած գործում:

Ձեր Հակոբ Հակոբյան

### 13. ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Եռևան

<1/X, 1924>

Սիրելի ընկեր, վաղեմի բարեկամս

Անուշավան Վարդանյան

Մրտիս անհուն բերկրությամբ, դեռ թերթերից, փմացա գրական գործունեությանդ տոնի մասին:

Արժանի՛ ես, եղբայր, արժանի՛ ես դու այդ տոնին: Դա սովորական մի երեսությ չէ, այլ բացառիկ՝ քեզ պես մի գըողի համար, որը մեր դրամատուրգիայի բնագավառում առաջինն է եղել բանվարական աշխարհի խոցերը երևան հանելու:

Եվ որպիսի՛ մի ժամանակաշրջանում, երբ ամենուրեք ջրջապատված էինք ազգային ջոշերի և ցենզուրայի ռոզատկաներով, հալածանքը՝ անողոք, թշնամանքը՝ կատաղի:

Հեշտ է, իհարկե, այսօր լինել և՛ բանվորական աշխարհի դրամատուրգ, և՛ բանաստեղծ, և՛ վիպասան, իսկ այն սև օրերին, արհամարհանքի օրերին, երբ դժվար, շատ դժվար էր արհամարհանքը կուլ տալ, երբ կատաղությունից խեղդված էինք մենք, և տեղ չունեինք արտահայտվելու:

Մեր միակ միխիթարանքը ապագայում մեր հաղթանակի համոզումն էր:

Այդ համոզումով ապրել են դու երկար տարիներ, միրելի ընկեր, և թող հալալ լինի քեզ պատվի օրդ, մի օր, որ ամեն բախչ տափորի էլ չի վիճակված:

Դու, առհասարակ, շատ համեստ ստեղծագործություններ ունես տված մեր գրականությանը: Ես կցանկամ քեզ մի բան միայն, որ բեղմնավորես գրիշդ, տաս նոր պիններ Հայաստանի քաղաքացիական կովի, նրա շինարարական էպոսի և աշխատանքի հերոսների մասին:

Կհանդիմանեմ քեզ, եթի պատվի օր ստանալուցդ հետո գլուխողնես միամիուկ բարձերի վրա ու հանգստանաս:

Մեղմում եմ ձեռքդ ամուր՝ Հակոբ Հակոբյան:

## 14. ԱՍՔԱՆԱԶ ՄԻԱՎՅԱՆԻՆ

ԹԻՖԼԻՍԻՑ—ԵՐևան

<Դեկտեմբեր, 1925>

Սիրելիդ իմ Ասքանազ, քանկազին զեմլյակ

Ես քեզ, Համաձայն քո ցանկության, ներկայացնում եմ իմ քանաստեղծություններից 3 գրքույկ, որը ամփոփված են իմ գրական գործունեության բոլոր ժամանակաշրջանները:

Այս գրքույկներում շոշափված են պրոլետարական հեղափոխության երեք էտապն էլ՝ մինչև 1905 թվականը, 1905 թվականից հետո և 1907 թվականից մինչ մեր մոտիկ օրերը<sup>1</sup>:

Իմ լեզուն անպաճույն է, պարզ, հասկանալի և դեմոկրատիկ բանվորական մասսաների ըմբռնողության ու նրա հոգեբանության համապատասխան մոմենտների համար:

Ես չեմ ձգտել իմ երգերին տալ այնպիսի «խորաթափանց», գֆլարամարս և բարդ ֆոներ, որ բանվորը կարդալուց, ի վերջո, թեև մնար միայն հիացած, բայց չմարսած, չաղդված:

Ես, եթի կարելի է ասել այսպես, մեր պրոլետարական պոեզիայի այիբ ու բենե եմ տվել մեր մասսաներին, ծանոթացրել նրանց նախնական այս պոեզիայի իմաստի ու նշանակության ֆու: Թող մեր երիտասարդ պրոլետարական բանաստեղծները նրանց տան այս պոեզիայի հերականությունը: Ասում եմ «այբ-բենը» ոչ նրա փոկական փմաստով, այլ փոխաբերական մտքով: Ասել կուզիմ, թե ես տվել եմ հայ բանվորի ինքնաճանաշման, նրա կովի առաջին և անդրանիկ էտապի նկարագիրը և առաջին մարտահրավերը: Հետագայում որչափով փոխվել է մեր բանվորի հոգեբանությունը և գիտակցության շափը, համապատասխան նրա զարգացման, կյանքի և կովի,— ես, որպես նրա փողահարը (որբառ), նրա

մունետիկը, միշտ նրա առաջիցն եմ վաղել և ոգեսրել միշտ, հավատ ներշնչել նոր էտապներում, նոր կոփվների համար:

Եթե գեղարվեստական գրականությունը նույնքան անհրաժեշտ  
է պրոլետարիատի մտավոր առողջության համար, ապա՝ առանց  
կարմբելու պիտի ասեմ, որ իմ ստեղծագործության արդյունքը  
ապարդյուն չի համարվելու...

**<Հ. Հակոբյան>:**

www.oxfordjournals.org

卷之三

卷之三

卷之三

## 15. ՕՅԵԼՅԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Թիֆլիս

20/V, 1926,

Թիֆլիս

80-րդ աշխատանքային դպրոցի 7-րդ խմբի աշակերտուհի  
Օֆելյա Առաքելյանին

Անձանոք ընկեր

Զեր, ինձ հղած նամակով՝, որ ստացա այսօր, Դուք բաց ստրություն եք խնդրում իմ «Հավասարություն» պոեմի հետևյալ տողերի մասին.

Մտել եմ ահա մի նորեկ աշխարհ —  
Մտել մի սքանչ հեքիաթի դռնով.

ու հարցնում եք, ի՞նչ մտքով եմ գործածել նեֆիաք բառը:

Նախքան այս հարցին պատասխանելը՝ պիտի ասեմ, որ, զըժբախտաբար, կան մեր իրականության մեջ մարդիկ, անգամ խավեր, որոնք պոետի ամեն մի խոսքը հասկանում են չոր ու ցամաք, բառի հասարակ, գոեհկացրած իմաստով, մինչդեռ պոեզիայի մեջ այս կամ այն խոսքը, անգամ դարձվածքը, պիտի հասկանալ փոխաբերական մտքով:

Այդպես էր ցարի բռնակալության օրոք: Երբ գրողը ասում էր՝ «Հյուսիսից վիշեց դառնաշշունչ քամին», մենք հասկանում էինք, որ ցարը սկսել է նորից կատաղել: Երբ գրում էին. «Մոտ է գարունը...», մենք հասկանում էինք՝ մոտ է վերածնությունը, հեղափոխությունը և այլն:

Հին կլասիկների պլեադային պատկանելով՝ նեֆիաք բառը ես գործ եմ ածել այս դեպքում ոչ թե գոյականի, այլ ածականի մըտ-

բով, որ պիտի փոխարինի գեղեցկության հրաշակերտ դռան իմաստին, ուսւերեն սказочный, причудливый և тл сказка, чудо խոսքերի իմաստով:

Մտել եմ ահա մի նորեկ աշխարհ,  
Մտել մի սքանչ հեքիաթի դռնուվ

Խոսքերը հասկանալ այնպես, իբր սոցիալիզմը հեքիաթ է ինձ համար, այդ կլիներ շատ գոեցիկ բացատրություն, ու զոռով զգիս փաթաթելու մի փորձ իմ գրական հակառակորդների կողմից, քանի որ պոեմիս ամբողջ բովանդակությունից երևում է պարզորեն, որ ոչ թի նա ինձ համար ուտոպիա է, անիրազործելի հեքիաթ, ալ, ընդհակառակը, իրականություն՝ կոնկրետացված պատկերներով ու շոշափելի, տեսանելի կյանքի անցուղարձով, եռ ու զեռով:

Պարզորեն այնտեղ ամեն մի անաշառ ու առողջ դատողության տեր ընթերցող տեսնում է ապագա հասարակարգի ընթացքում կատարելագործված գործարանների սիրուետները, սոցիալիստական քաղաքների ու նրանց փողոցների ալեծուսի — կատարելագործության հասած կյանքը՝ թե՛ տեխնիկայի, թե՛ գիտության և թե՛ կուլտուրայի բնագավառում:

Միթե՞ քաղաքների արվարձաններում հսկայական գործարանները՝ զարգարված ծաղկանոցներով ու ջրվեժ-ֆանտաններով մեր ամենքիս վերջնական նպատակը չէ. նրանց սարք ու կարգը — բյուրեղյա հատակներով ու սրատուհաններով, առատ լույսերով ու օդանցքներով մեր ամենքիս ձգտումն ու բաղձանքը չէ:

Կամ մի՞թե քաղաքի արվարձաններում մանկատները, որ նկարագրում եմ պոեմիս Վալսում, այսօր, անգամ նէպի շրջանում, չենք իրազործում մենք, կամ շենք ձգտում հասցնել նկարագրածիս կատարելության...

Վերջապես մի՞թե պոեմիս 12-րդ գլուխը, որ վերջացնում եմ այսպես.

Ահա և կյանքը այն կարոտալից,  
Որ թվում էր ինձ հեռու մի երազ,  
Նա, որ եթերի անհյուս թելերից  
Իր ձեռքն իբր մեկնում ու մնում անհաս՝  
(այժմ գարձել է)  
— իրականություն, իրականություն...

Այս է հեքիաթը, ուտոպիան, երբ պոեմիս վերջում պնդում եմ, որ այս ամենը արդեն իրականություն է:

Մի մոռանաք, վերջապես, որ այս պոեմը սկսել էմ պրել 1916 թվին, իմ ակերպիալիստական պատերազմի օրոք, և վերջացրել հունվարի 31-ին, 1917 թվին, այսինքն նախքան Հռկտեմբերյան հեղափոխությունը, անգամ նախքան փետրվարյան հեղափոխությունը։

«Գրական սիլուետներ»-ի քննադատը<sup>2</sup> ոչ միայն ի նկատի չետանում այս հանգամանքը, այլև խարդախում է պոեմիս ավարտման տարեթիվը (իբրև պոեմը գրված է Հռկտեմբերյան հեղափոխությունից հետո), որպեսզի իր՝ զոռույլ վզիս փաթաթած մեղադրամնքները ընթերցողի աշքում փաստի տեղ ընդունվեն և ոչ ստախուսության։

«Սիլուետների» քննադատը «Հայլասարտություն» պոեմիս տարեթիվը չէ միայն աղավաղել, այլև «Ամբոխն իմ աշխարհը» բանաստեղծությանս տարեթիվը (որ գրված է 1905 թվին, անգամ նախքան նույն թվականի Հռկտեմբերյան մանիքեստի հայտարարումը ցարի կողմից) դարձաւ տենդենցիով նպատակով։

Այդիսի փաստերի աղավաղումներ շատ ու շատ կան «Գրական սիլուետներ»-ի հեղինակի գրքում, որին մամուլում պատասխաննելը ես համարեցի մեծ պատիվ անել Ս. Մանուցյանին։

Հնկերական ողջուններով  
Հակոբ Հակոբյան

## 16. ՀԱԿՈԲ ԳԵՆԶՅԱՆԻՆ (ԿԱՐԱ-ԴԱՐՎԻՇԻՆ)

Թիֆլիսից — Երևան

<26 օգոստոսի 1926>

Սիրելի Հակոբ

Նամակով ստացա ավելի վաղ, քան գրքիս<sup>2</sup> լույս տեսնելը: 20  
նաբորս դարձավ 23—մոտ 370 երես և ուշացավ նրա ծնունդը՝ ծանր  
երկունքից հետո:

Դեռ կազմելն անպատճաստ, ես շտապեցի թորժոմ՝ կունա-  
չարսկուն տեսակցելու. գործ տնեի հետը: Գործս հաջողությամբ  
ավարտելուց հետո, այսօր միայն վերադարձա և վաղն էլ զնում  
եմ Կիսլովովսկի: Չափազանց ուշացա: Վախենովսկ եմ գիրքը տողար-  
կեմ, դու արդեն բացակա լինես: Գրիր նամակ Կիսլովովսկ, պարկ,  
ինձ՝ ուղարկեմ:

Ողջույններս քեզ ու տիկնոջ՝

Հ. Հակոբյան

## 17. ՖԼՈՐԱՅԻՆ

ԹԻՖԼԻՍԻՑ—ԻՉԵԱՆ

<Հուլիս—օգոստոս, 1927>

### Սիրուն Ֆլորա

Ամենից առաջ ես չեմ մեղավոր, որ մարտին գրած նամակից պատասխանն ստանում ես հուլիսին: Նամակը ուղարկել ես Երեւան՝ Հայ Գրողների Ընկերությանը, մինչդեռ ես ապրում եմ Թիֆլիսում և գործում եմ Պրոլետ Գրողների Ասոցիացիայում, ավելի շուտ հիշվում, որպես նրա պատվավոր նախագահը:

Հ-րդ. քո այնքան հուսահատ, վշտակի նամակը ինձ զարժացրեց, բայց համակեց վշտով. ինձ դժվար է հասկանալ այդ, ինձ դժվար է հասկանալ նոր բացլող կոկոն ծաղկի վիշտը, հառաշանքը, գանգատները: 15 տարեկան պատանյակը, փհարկե, լինում է գեռ նազուք, տստի նման ճկուն ու քնքուշ, դյուրին՝ ենթակա վտանգի, փոթորիկների, դժվարությունների.

Մի տեղ ուժասպառ բոկոտն մանուկներ  
Քաղցից դալկահար,  
Խուլ անկյուններում կծկվել են սոված,  
Անհայր, առանց մայր,  
Կարծես անողոք փոթորկից հետո  
Կարկտից ջարդված, իրար փաթաթված  
Շառերի ոստեր...

(«Կարմիր ալիքներ») — ինձ հիշեցնում է ձեր գանգատները, Գիտե՞ս, սիրելի աղջիկս, Յլորա, քեզ ոչ տեսել եմ, ոչ ճամաշում եմ, բայց նամակիդ խոկումներից, նամակիդ մրմունցնե-

Ծից երեսում է, որ դու մի լավ բանաստեղծական հոգի ունես՝ առայժմ տկար, մանկական անզոր, թույլ հառաջանքներով, բայց վաղը, անշուշտ, ապրող ուժեղ, հաղթանակող, երջանիկ կյանքով:

Միշտ այդպես է լինում. ծառի ճկուն ոստը փոթորիկներից գալարվում է, ճխլվում, երերվում ու եթե արմատն ամուր է, հետագայում է փարթամանում...

Որպեսզի քեզ բժշկենք, հայրդ առողջանալուց հետո, բարեհաճիր գալ Թիֆլիս: Մենք քեզ այստեղ կտեղավորենք Ռարֆակում: Եթե ճանապարհածախս չես ունենա գալու, գրիր՝ ինքս կուղարկեմ: Կգաս, կիշնես մեր տանը, այնուհետև կտեսնենք: Ես ճանձն կառնեմ քո կրթության մասին հոգալը: Իհարկե, քո գալը տեղի կունենա ո'չ հիմա, այսօր կամ վաղը մենք ընտանիքով գնում ենք Կիսլովուսկ ու կգանք սեպտեմբերի 1-ից մինչև 10-ը: Իսկ մինչ այդ ինձ հետ նամակագրություն կպահպանես այս հասցեով՝ Կիսլովոդսկ, Գրանդ-Օտել, Ակու Ակոպյան.

Իսկ մինչ այդ, խնդրում եմ, պատրաստվիր Ռարֆակի, բնության գրկում բժշկիր վերքերդ, ամրացիր, արիացիր, չէ՞ որ բնությունը, սարը, անտառը, զուլալ աղբյուրը և անտառի թռչնակները ամենալավ բժիշկներն են իրենց երգերով:

<Հ. Հակոբյան>

18. Ա. Գ. ՌԱԶՈՒՄՈՎԱԿԱՅԱՅԻՆ

Թիֆլիսից — Մուկուշ

27.X.1928.  
Тифлис

Дорогая Мария Георгиевна

Был я сегодня у антрепренера Тарумова для переговоров по устройству Ваших концертов. Как я рад был тому, когда он сказал: сегодня или завтра едет в Москву для приглашения сюда артистов. Записал Вашу фамилию, оказывается, у него имеется Ваш адрес и обещал зайти к Вам для переговоров. Ждите его, Мария Георгиевна, на днях Вы его увидите у себя, сговоритесь на 2—3 концерта. Мы ему здесь поможем; между прочим, о Вашем голосе он отозвался очень лестно, и я только считаю дни, когда же увижу Вас у себя, когда услышу Ваш голос. Ведь я тоже когда-то владел приятным голосом, пел соло в концертах Кара-Мурзы — лирическим тенором. Коли не шутите со мной, лирическим приятным, ровным тенором! Богатый нефтепромышленник Красильников хотел было меня отправить в Италию для обработки голоса, но тут, во-первых, помешал возраст, во-вторых, революционная деятельность, и пришлось скитаться по Черногородским заводам. Вот каково было дело, вот какова была быль... Теперь я с трепетом жду Вас и спрашиваю себя: каков тембр голоса у нашей дорогой Марии Георгиевны? Не выбирает ли ее голос? Какая школа? Захватывает ли? И так далее, просто как мечтатель-гимназист, который пока живет иллюзиями.

Не знаю, будете ли читать письма; если я Вам в дальнейшем буду писать по-армянски? Чувствую, что мои письма страдают чем-то... а следовало бы Вам почитать по-армянски, Вы бы и научились говорить чистым литературным языком. Это станет тем более необходимым, когда нам удастся в будущем устраивать Вам концерты в Армении или вступить на сцену армянской оперы в Эривани. Театр новый в Эривани будет готов через год.

Очень интересуюсь: были ли у Анатолия Васильевича? Что он ответил Вам? Как обстоит дело с Большим театром в связи с «пробой»? Все это глубоко интересует меня. Жду с нетерпением результатов.

В прошлом письме забыл приветствовать Вашего мужа, который всегда не забывает меня. Спасибо. Передайте мой горячий привет ему. А что Юрочка? Понял ли что-нибудь этот будущий поэт из моих вещей, когда он «уткнулся» в мою книгу? Пишите побольше, с удовольствием читаю Ваши письма, они напоминают «дни юности моей...»

Жму крепко руку,

Акоп Акопян

### Թաճկագին Մարիա Գեորգիևնա

Զեր Համերգների կազմակերպման բանակցությունների համար ևս եղա անտրեպերները Թառումովի մոտ: Որքան ես սպահացած ասաց, երբ նա ասաց, որ այսօր կամ վաղը մեկնում է Մոսկվա՝ մեզ մոտ արտիստներ հրավիրելու համար: Գրեց Զեր ազգանունը, բանից գուրս է դաշխու նրա մոտ կա Զեր Հասցեն, և խոստացավ անցնել Զեղ մոտ բանակցությունների համար: Սպասեցեք նրան, Մարիա Գեորգիևնա, մոտ օրերս գուք նրան Զեղ մոտ կտեսնեք, պայմանավորվեցեք 2—3 Համերգի համար, մենք այս կտեսնեք, կօգնենք: Ի միջի այլոց Զեր ձայնի մասին նա շատ գուշակ էր արտահայտվեց, և ևս միայն օրերս եմ հաշվում, թե ե՞րբ Զեղ ինձ մոտ կտեսնեմ, ե՞րբ կլսեմ Զեր ձայնը: Զէ՞ որ նա ել մի ժամանակ հաճելի ձայն եմ տևնեցել, լիրիկական տենորով մեներգել եմ Կարա-Մուրզայի համերգիներին: Կատակ շիմանաք, մեներգել հաճելի, հանդարտ տենորով: Հարուստ նավթարդյունիքիական հաճելի, հանդարտ տենորով:

նաբերող Կրասիլնիկովը ցանկանում էր ինձ ուղարկել հտալիա ձայնս մշակելու, բայց այդ գործին խանգարեց նախ տարիքս և ապա ուկուցիոն գործունեությունս, և ստիպվեցի թափառել ու քաղաքի գործարաններում։ Ահա թե ինչպես էր գործը, ահա թե ինչպես էր եղելովթյունը։ Այժմ ես սրտի թրթիռով սպասում եմ Զեղ և ինքս ինձ հարցնում։ տեսնես ի՞նչ տեմբը ունի մեր թան-կագին Մարիա Գեորգիենայի ձայնը։ Զի՞ թրթում արդյոք նրա ձայնը, ի՞նչ դրվածք ունի, գրավո՞ւմ է արդյոք և այլն, ուղղակի տնց որ երազող դիմանազիստ, որն առայժմ ցնորբներով է ապրում։

Չգիտեմ, կկարդա՞ք արդյոք նամակներս, եթե ես սրանից հետո Զեղ հայերեն գրեմ։ Զգում եմ, որ իմ նամակները ինչ-որ բանով տառապում են... ուստի լավ կլիներ, որ Դուք հայերեն նա-մակներս կարդայիք, Դուք էլ կսովորեիք մաքուր գրական լեզվով խոսել։ Այդ անհրաժեշտ է, մանավանդ, եթե մեղ հաջողվի առաջի-կայում Զեր համերգները կազմակերպել Հայաստանում կամ Դուք հանդես դար հայկական օպերայի բեմում՝ երեանում։ Երեանում նոր թատրոնը պատրաստ կլինի մեկ տարուց հետո։

Շատ եմ հետաքրքրվում, արդյոք եղա՞ք Անատոլի Վասիլեիսն մոտ։ Նա Զեղ ի՞նչ պատասխանեց։ Ո՞նց են գործերը Մեծ թատ-րոնի հետ «իորդի» կապակցությամբ։ Այդ բոլորը խորապես հետաքրքրում են ինձ։ Անհամբեր սպասում եմ արդյունքներին։

Նախորդ նամակում մոռացել էի ողջույն հղել Զեր ամուսնուն, որը երբեք չի մոռանում ինձ։ Ծնորհակալություն։ Նրան հավորգեցեք իմ զերմ ողջույնը։ Իսկ Յուրոշկան ինչպե՞ս է։ Որևէ բան հաս-կացա՞վ արդյոք այդ գալիքի բանաստեղծը իմ գրվածքներից, երբ նա «իսրվեց» գրքիս մեջ։ Շատ դրեցեք, հաճույքով եմ կարդում Զեր նամակները, նրանք ինձ հիշեցնում են «Պատանության օրերն իմ»։

Ամուր սեղմում եմ Զեր ձեռքը։

Հ. Հակոբյան

## 19. ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

23/X, <19><sup>30</sup>

Սիրելի Արտաշես

Քո նախորդները քեզնից շնորհքով էին. Հաջորդաբար-պար-  
բերաբար ուղարկում էին ինձ «Նոր-ուղի» ամսագիրը<sup>1</sup>. քո խմբա-  
գրության օրոք դադարեցին ուղարկել. տվվ է կարգադրել արդյոք:  
Ես այս տարիվա «Նոր-ուղի» ստացել եմ միացյալ 1—3 ԱՆ-ները  
միայն, գենը և ոչ մի համար:

Թեև մտադիր եմ շռոտով Երևան գալ Standart բանաստեղծու-  
թյուններիս հրատարակման գործով<sup>2</sup>, որ խոստացել, անգամ  
ավանս է ուղարկել Հայպետհրատը, բայց վախենում եմ ուշանամ,  
շատ շտապ աշխատանքներ ունեմ՝ Վրաստանի Իստավարութի հա-  
մար՝ նրա 10-ամյակի առթիվ. ուրեմն, կարող է պատահի, գալս  
Երևան՝ ուշանա, ուկրանի կարգադրիր, որ ինձ ուղարկեն և 4-րդից  
սկսած ու մինչ օրս լույս տեսած «Նոր-ուղու» համարները:

Իմ մեծ գործի նյութերի դասավորումը ավարտել եմ, սիե-  
ման՝ նույնպես, մի քանի գլուխներ միշից և առաջարանը («Սովե-  
տական Ֆառաւութի») արդեն մշակված, ավարտված են<sup>3</sup>: Հիմա ըզ-  
բաղված եմ նրա սիստեմատիզացիայի ենթարկելու վրա. Ժա-  
մանակ, ժամանակս պակասում է դրա համար: Այս, օրինակ,  
պատրաստվում էի մի քանի ընթացիկ գործերս ավարտելուց հե-  
տո (1. Աղբբեշան, Բաքու գնալու, գիրքս թուրքերին տպագրելու  
հարցով<sup>4</sup>; 2. Զորագես — Ալահվերդին այցելելու՝ գրելու համար  
թերթում, որի համար 200 ո. ավանս ունեմ ստացած: 3. Սղնախ  
զնալ՝ իմ անվան հայկական աշխ<ատանքային> դպրոցին այ-  
ցելության, որին 7 տարի է շեմ այցելած և այն, և այն), սկսել

մեծ պոեմն: Եկավ Լեռնային Դարաբաղի մարզկոմի քարտուղար ընկ. Վարոնցը և ինձ վերցրեց տարավ Ստեփանակերտ՝ մարզկոմի պլենում զեկուցում անելու ազգային հարցի, սպեցիֆիկմի և սրանց հետ կապված Ստեփան Շահումյանի մասին: Այս տարի լրացավ մեր սիրելի Ստեփանի ծննդյան 50-ամյակը, ստեփանակերտցիք ցանկացան Ստեփանի կենսագրականի և նրա պայքարի մասին սպեցիֆիկների դեմ՝ մոտիկ գաղափար ունենալ:

Ստեփանի կենսագրականը ևս սկսեցի 1895 թվականից, երբ նա, ունալական դպրոցի աշակերտը, «Ծխածան» աշակերտական թերթն էր հրատարակում: Սպեցիֆիկների գործունեության մասին սկսեցի 1904—5-ից, վերջացրի մեր «Նոր-խոսք»<sup>6</sup> և նրանց «Նոր-կյանք»<sup>7</sup> միաժամանակ, միատեսակ, doublet ամսագրի պատմությամբ:

Դու գիտես, որ Դարաբաղը նախկին սպեցիֆիկների հայրենիքն է, օչախը, մինչ այսօր էլ կան այնտեղ փոկական սպեցիֆիկների մնացորդներ, անգամ շահելներից, որ փոխանցվել է աեղական պատրիոտիզմի:

Զարմանալի՝ մեծ ուշադրությամբ իմ տենկնդիրները վերջը հայտնեցին ինձ, որ իմ գեկուցի 3/4-ը նրանց համար մի շատ հետաքրքիր և ուսանելի նորություն է: Ես քեզ չեմ նկարագրի այն խանդավառ ընդամենելությունը, որով պատվիցին ինձ Լեռնային դարաբաղիք՝ սկսած նրանց Կուսդպրոցի կոմսոմոլ-կոմունիստ աշակերտությունից, վերջացրած պյուղացիությամբ: Կասեմ միայն, որ ելույթ եմ ունեցել 9 դպրոց ու ֆաբրիկում՝ գրականության, սոցիալիստական արդի շինարարության շուրջը և այցելել եմ 3 գյուղ՝ Առաջին գյուղը իմ հայրենական-պատենական Թալիշ գյուղն էր, որը 50 տարի է (կես դարից անց); ինչ չէի այցելած: Թալիշի գյուղացիք (500 ծուխ), կամենալով հավերժացնել իմ մուտքը՝ Թալիշը վերափոխեցին Հակոբավան անունով: Չդիտեմ ինչո՞ւ Թալիշի գյուղն էլ կնքեցին իմ անունով: 2-րդ գյուղը, որ այցելեցի, այն Մարդակերտ կամ Մարդաշեն գյուղն էր, ուր կա մի գյուղերիտ գյորոց՝ գարձյալ իմ անունով (1928 թվից) ու 3-րդ գյուղը՝ Հարազըշլաղն է, մեր Սահակ Տեր-Գաբրիելյանի գյուղը, ուր կա մի կույսող Հ. Հակոբյանի անունով՝ անցյալ տարուց:

Գրիր, շատ ուրախ կլինեմ:

Կոմ<ոմիստական> քարեներս քեզ:

Հակոբ Հակոբյան

20. ԽՈՐՀՈՒՅՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՔՐԱՄԱՅԻ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ  
ԽՄԲԻՆ

ԹԻՖԼԻՍ

<մայիս, 1930>

Հարգելի ընկերներ

Թույլ տվելք Հայտնել ձեզ իմ ուրախությունը ձեր Թիֆլիս գա-  
ղու առթիվ և ցանկանալ ձեզ կատարյալ հաջողություն մեր բեմի  
վրա1:

Չեր ուսպերտուարը, որ կազմված է գլխավորապես Հեղափո-  
խական պիեսներից և զարդարված սոցիալական առողջ սատիրա-  
տով (ինչպես «Խաթաբալան» և այլն), համոզված եմ, Թիֆլիսի պրո-  
վետրիատին կբերի անսահման ուրախություն և զարկ կտա ժո-  
ղովրդական մասսաների ինքնազբանացությանը:

Ողջո՞ւն Խ<որհրդացին> Հ<այսատանի> Պետդրամատիկ  
դրամատիկ խմբին՝ իր դեկավարներով:

Ճ.

## 21. ԱՐԴՅՈՒՆԵՐԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

Թիֆլիսից—Մոսկվա

<մարտ, 1931>

Москва

Наркомпрос, сектор искусств,

комната 354

«И долго буду тем любезен я народу,  
Что чувства добрые я лирой пробуждал...»<sup>1</sup>

Братья Адельгеймы! Эти слова Пушкина Вы можете смело применить к себе.

Примите мой горячий привет по случаю Вашей 45-летней благотворной артистической деятельности.

Акоп Акопян

Մոսկվա

Լուսադողկոմատ, արվեստի սեկտոր,

354-րդ սենյակ

Եվ ես նրա համար կապրեմ ժողովրդի սրտում,

Որ իմ քնարը արթնացրել է զգացմունքներ բարի...

Աղելղեյմ եղբայրներ. Պուշկինի այս բառերը Դուք համար՝ ձակ կերպով կարող եք վերագրել Ձեզ։ Ընդունեցեք իմ շերմ ու զույնը. Ձեր արտիստական արդյունավետ գործունեության 45-ամյակի առթիվ։

Հակոբ Հակոբյան

## 22. ՊԻՌՆԵՐՆԵՐԻՆ

Թիֆլիս

25/IV, 1931,  
Թիֆլիս

Սիրելի և քանկազին ծաղիկ-  
պիոներ ընկերներ

Ներեցեք ձեր ավագ ընկեռոջը, որ զուգը հիմանդրության պատ-  
ճառութիւն պիտի մերժի ձեր սիրալիր հրավերը՝ մասնակցել ձեր պիո-  
ներական կազմակերպության ութամյակի տոնակատարությանը:

Սրտի հիմանդրությամբ տառապելով, բժիշկները պատվիրել են  
ինձ շնորհվել, շատ շատ շնորհվել, այլ խոսքով՝ պահպա-  
նել կատարյալ հանդստություն, և ես պարտավոր եմ հետեւ նրանց  
խորհուրդին, եթե չեք ուզում, որ տուժի ձեր պոետ-բոլշևիկը:

Ծնորհավորելով իմ սրտին մտտիկ պիոներական ձեր ութամ-  
յակը, ևս ասում եմ. երջանիկ եք դուք, սիրուն ծաղիկներս, որ պի-  
տի մի երկու տասնյակ տարիներից հետո վայելեք սոցիալիստական  
հասարակարդի պտուղները կատարյալ փոքր գեղեցկությամբ: Աշխա-  
տանքը սոցիալիստական այդ օրերի մարդու համար լինելու է հա-  
ջույք և զվարճանք. կյանքը՝ երջանկություն և տրախություն, մարդ-  
կային պարապմունքը՝ ոգևորող սոց-մշցում, նրա ամեն մի պուստ  
զարկը՝ երաժշտություն:

Եթե այդքան գեղեցիկ, այդքան հիմաքանչ և զմայլելի է լինելու  
ապագա մոտիկացող սոցիալիզմը, ապա արժե նրա համար, սի-  
րելի ծաղիկ պիոներներ, ապրել, նրա արագացման համար աշխա-  
տել, նրան շուտափույթ կառուցանելու համար լարել ձեր շահել  
ուժերը, որ շուտով կարողանաք վայելել սոցիալիզմի երջանկաց-  
նող արդասիքներ:

Դրա համար ես ձեզ ասում եմ. կեցցե՛ք դուք և ձեր պիտներական տարեդարձը:

Իբցցե՛ ձեր կոլեկտիվը, որ սոցիալիզմ է կառուցում.

Ազրե՛ք բոլշևիկի պես:

Հակոբ Հակոբյան

Օ. Տ. Ընդունեցեք շնորհակալությունս պատվավոր պիտների ոգտափիվ շնորհելու համար!

Հ. Հ.

23. Մ. Ա. ԽԵԲԵՐԻՆ

Թիֆլիսից — Մուկվա

3.III.1932,  
Тифлис

Дорогой товарищ М. Ингбер

Шлю Вам горячий привет и благодарность за то, что Вы так красиво и удачно перевели мои стихотворения:

- 1) Революция.
- 2) Перед портретом Ленина.
- 3) Бессмертен Ленин.

Согласно Вашей просьбе присылаю для художественного оформления подстрочки следующих стихотворений<sup>1</sup>:

- 1) Ширакский канал-большевик (поэма).
- 2) Меран-чкоран.
- 3) Завод.
- 4) Песнь старого большевика.
- 5) Мой мир.
- 6) Националистам.
- 7) Город.

Советую использовать для перевода на французский язык следующие мои стихотворения, которые по-моему переведены более или менее удачно.

- 1) Песнь труда, 1910 года, перевел В. Кириллов, «Новое утро», стр. 51.
- 2) Любовь к заводу, 1922 года, перевел М. Герасимов, «Новое утро» стр. 73.
- 3) Страж, 1915 года, перевел А. Жаров, «Новое утро», стр. 42.

- 4) Чужой и свой, 1904 года, перевел С. Городецкий, «Новое утро», стр. 143.
- 5) Одалиска и дева, 1920 года, перевел Демьян Бедный, «Новое утро», стр. 146.
- 6) Сейфы, 1915 года, перевел Р. Ивнев, «Новое утро», стр. 113.
- 7) Этап, 1911 года, перевел В. Кириллов, «Новое утро», стр. 91.
- 8) На заре, 1910 года, перевел Р. Ивнев, «Новое утро», стр. 66.
- 9) Концерт, 1910 года, перевел С. Шарти, «Новое утро», стр. 68.
- 10) Песнь кузнеца, 1905 года, перевел В. Кириллов, «Новое утро», стр. 83.
- 11) Казненные, 1908 года, перевел Бор. Пастернак, «Новое утро», стр. 87.
- 12) Идут... Идут..., 1908 года, перевел В. Пяст, «Новое утро», стр. 88.
- 13) Я то люблю, 1909 года, перевел Ар. Бабалян, «Новое утро», стр. 121.
- 14) Алой весной, 1921 года, перевел Мих. Данилов, «Новое утро», стр. 125.
- 15) Волховстрой, 1925 года, перевел В. Кириллов, «Новое утро», стр. 201.

Таким образом в переводе у Вас имеется 3 стихотворения; подлежат к переводу присланные подстрочки через ВОКС<sup>3</sup> 7 стихотворений; подлежат переводу указанные на обороте сего письма — 15, всего 25 стихотворений.

Было бы очень желательно видеть в переводе мои поэмы:

- 1) Новое утро.
- 2) Равенство.
- 3) Ленинградская поэма.

Они—эти поэмы—украшали бы тот сборник, кото́рый Вы намерены выпустить отдельной книжкой. В сборнике «Новое утро» вышеупомянутые поэмы (с Шир-каналом вместе) переведены очень плохо.

В случае Вашего согласия, я немедленно пришлю Вам

подстрочники «Нового утра», «Равенства» и «Ленинградской поэмы».

Мой адрес: Тифлис, ул. Махарадзе 11,  
народному поэту Акопу Акопяну.

С тов. приветом Акоп Акопян

P. S. К великому сожалению прислать Вам единственный экземпляр (авторский) сбор<sup><ника></sup> «Нов<sup><ое></sup> утро» не могу, но я твердо обещаю прислать Вам нов<sup><ый></sup> сборник, кот<sup><орый></sup> через две недели выпустит Заккнига<sup>4</sup>.

A. A.

Թանկագին ընկեր Մ. Ինգրեր

Հղում եմ Ձեզ շերմ ողջույն և շնորհակալություն, այս բանի համար, որ Դուք այդքան գեղեցիկ և հաջող կերպով թարգմանել իմ բանաստեղծությունները.

1) Հեղափոխություն

2) Վ. Ի. Լենինին

3) Լենինը անմահ

Ձեր խնդիրքի համաձայն ուղարկում եմ գեղարվեստական վերամշակման համար իմ հետեւյալ բանաստեղծությունների տպացի թարգմանությունները

1) Բայլշերիկ է Շիր-Կանալը (պոեմ)

2) Մեռան-շկորան

3) Գործարան

4) Երդ հին գվարդիականի

5) Իմ աշխարհը

6) Ազգայիններին

7) Քաղաքը

Խորհուրդ եմ տալիս ֆրանսերեն թարգմանության համար օգտագործել հետեւյալ բանաստեղծությունները, որոնք իմ կարծիքով՝ <ուժակերեն> թարգմանված են քիչ թե շատ հաջող.

1) Աշխատանքի երգը, 1910 թ., թարգմանել է Վ. Կիրիլովը, Новое утро, էջ 51

2) Պրոլետարի երգը, 1922 թ., թարգմանել է Մ. Գերասիմովը, Новое утро, էջ 73

3) Պահակը, 1913 թ., թարգմանել է Ա. Ժարովը, Новое утро, էջ 42

4) Օտարն ու Հարազատը, 1904 թ., թարգմանել է Ս. Գրողեցին, Новое утро, էջ 143

5) Հարճիկն ու աղջիկը, 1920 թ., թարգմանել է Դևյան Բեդնին, Новое утро, էջ 146

6) Սեյֆերը, 1915 թ., թարգմանել է Մ. Իվնելը, Новое утро, էջ 113

7) Էտապ, 1911 թ., թարգմանել է Վ. Կիրիլովը, Новое утро, էջ 91

8) Լուսաբացին, 1910 թ., թարգմանել է Մ. Իվնելը, Новое утро, էջ 66

9) Համերգ, 1910 թ., թարգմանել է Ս. Շարտին, Новое утро, էջ 68

10) Դարբնի երգը, 1905 թ., թարգմանել է Վ. Կիրիլովը, Новое утро, էջ 83

11) Նահատակները, 1909 թ., թարգմանել է Բ. Պաստերնակը, Новое утро, էջ 87

12) Գալիս են գալիս..., 1908 թ., թարգմանել է Վ. Պյաստը, Новое утро, էջ 88

13) Ես այն եմ սիրում, 1909 թ., թարգմանել է Ա. Բաբալյանը, Новое утро, էջ 121

14) Կարմիր գարնան, 1921 թ., թարգմանել է Մ. Դանիլովը, Новое утро, էջ 125

15) Վոլխովստրոյ, 1925 թ., թարգմանել է Վ. Կիրիլովը, Новое утро, էջ 201

Այդպիսով՝ Դուք թարգմանած ունեք 3 բանաստեղծություն, պետք է թարգմանեք ВОКС-ի միջոցով ուղարկված 7 բանաստեղծությունները, պետք է թարգմանվեն վերը նշված 15 բանաստեղծությունները, ընդամենը՝ 25 բանաստեղծություն:

Շատ ցանկալի կլիներ թարգմանված տեսնել փառ պոեմները.

1) Նոր առավտոտ

2) Հավասարություն

3) Լենինգրադյան պոեմ

Դրանք — այդ պոեմները — կզարդարեին այն ժողովածում, որ Դուք մտադիր եք լույս ընծայել առանձին գրքով:

«Новое утро» ժողովածուի մեջ վերոհիշյալ պոեմները (զբանց հետ նաև «Շիր-Կանալը») շատ վատ են թարգմանված:

Այսպես, չմոռանաք, նախքան նյութը տպարանն ուղարկելը,  
հենց այժմուց, Զեր սեփական ձեռքով ծանոքորյունս կցել ձեռա-  
գրին:

Հիմ բոլշևիկան չերմ ողջույններով՝

Հակոբ Հակոբյան

Պ. Տ. Հա՛, մոռացա ասել, որ քնկեր Առշակին գրածս նամակը,  
այս նամակից հետո, կորցնում է իր ուժը:

Հ. Հ.

## 24. ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Բաքու

22/VI, 1932,  
Թիֆլիս

Ազապահի բարտուղար Թարուլ Հուրյանին

Հարգելի ընկեր

Ամբողջությունը պահպանելու համար, անշուշտ, շատ էր ցանկալի, որ «Քաղաքը» պոեմս լրիվ տպվեր ամսագրում<sup>1</sup>, բայց դեռ երբ Ազապահի ձեր կողմէն խնդրում է շրջ մասի իրավունքը միայն, ստիպված եմ զիշել ձեր առարկումներին, պայմանով, որ վերնագրի ճակատին մի աստղ (\* ) դնեք, իսկ զծի տակ՝ հետևյալ իմ ծանոթությունը.

«1930 թվի աշնանը, Ստեփանակերտ այցելածս օրերին, տեղական Կուսադալոցի ուսուցչությունն ու աշակերտությունը իմ պատվին տրված մի նրեկույթում պարտավորեցրին ինձ ավարտին «Քաղաքը» կիսավարտ պոեմս։ Ուրախ եմ անշափ, որ կատարում եմ Կուսադալոցի կողմից տրված սոցիալական պատվերը։

Հակոբ Հակոբյան»:

Այս ծանոթությունը գծի տակ անհրաժեշտ է մացնել 20 տարվա ճեղքը ծածկելու համար, ի նկատի ունենալով, որ առաջին մասը «Քաղաքը»-ի գրված է 1912 թվին։

Այսուհետեւ, ընկեր Հուրյան, շատ կիսնդրեի Զեղ՝ հատկապես ուշադրություն դարձնել Պարաբաղի ժարդանի վրա և կարգադրել սրբագրիչին՝ խնամքով կատարել սրբագրությունը՝ հանդերձ շեշտադրությամբ։ Ի՞նչ լավ կլիներ, եթե առաջին սրբագրությունը կատարեր Բուրի-Ղազարը։

Զեր համաձայնության դեպքում ես անմիջապես Զեղ կուղար-  
կեմ «Ընոր առավոտի», «Համասարության» և «Աենինգրադյան պոե-  
մի» տողացի թարգմանությունները:

Իմ հասցեն՝ Թիֆլիս, Մախարաձեի փողոց 11, ժողովրդա-  
կան պոետ Հակոբ Հակոբյանին:

Ընկ <երական> ողջույններով՝  
Հակոբ Հակոբյան

Բ. Տատ եմ ցավում, որ «Խօս. յտրօ» «ժող <ովածուի>  
միակ (հեղինակացին) օրինակը չեմ կարող ուղարկել Զեղ, բայց  
ես հաստատ խոսք եմ տալիս Զեղ ուղարկել նոր ժողովածուն, որ  
երկու շաբաթից լույս կընծայի Զակկնիգան:

Հ. Հ.

25. ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

Թիֆլիսից — Բաքու

25.IV.1932

Баку, улица Шаумяна 8,  
Юбилейной комиссии Абеляна

Ветерану армянской сцены, народному артисту и старому другу моему — Ованесу Абеляну мой пламенный привет<sup>1</sup>.

Акоп Акопян

Բաքու, Շահումյանի փողոց, 8

Աբելյանի նորելյանական հանձնաժողովին

Հայկական բնուի վետերանին, ժողովրդական արտիստին և  
իմ վաղեմի բարեկամին — Հովհաննես Աբելյանին փոքրավառ  
ողջույնը:

Հակոբ Հակոբյան

## 26. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԵԼՅԱՆԻՆ

ԹԻՖԼԻՍԻց — Բաքու

27/IV, 1932,  
Թիֆլիս

Սիրելի Հովհաննես

Մի համառոտ հեռագրով շնորհավորեցի քո 50-ամյակը, որը, անկասկած, հանձնաժողովը ստացած պիտի լինի: Բայց այդ ինձ չբավարարեց: Ես գլուխի մի լնդարձակ հոդված<sup>1</sup> «Պրոլետար»-ի համար և ուրախ էի նրանով, որ պիտի կարդաս ու ինքդ էլ ուրախանաս: Եվ ի՞նչ... Ի՞նչ այնքան ջերմությամբ գրած հոդված՝ հուշերը «Պրոլետար»-ում այնպես աղավաղված, այնպես հոշոտված տեսակը, որուշեցի «Պրոլետար»-ին այլևս ոչ մի տող չտալ:

Այս առավոտ գնացի խմբագրատուն և ամբողջ մի փոթորիկ առաջացրի: Խմբագիրն սկսեց արդարանալ նրանով, թե իրը ինքը մեղավոր չէ, հոդվածը կրծատել մն գրաշաբները՝ թերթում տեղ չկիրառ պատճառով: Ինչպես տեսնում են անպատասխանատվությունը և թափիթվածությունը այստեղ կատարում են ավերումներ ու մնամ անպատիժ:

Հայտնի լինի թող քեզ, որ այդ թշվառականները դուրս են ձգել հոդվածից այն մասը, որ վերաբերում է «Ժամանակի ամենակըրթված խմբագիրներից մեկի՝ Գրիգոր Արծրունու»՝ «քո տաղանդի մասին հայտնած կարծիքին», «Խելագարի» ու «Ֆրակով գլխարաց վամպիրի» բեմադրության մասին՝ մրգով ու խաղով հանդերձ, որն իր ժամանակին շատ է հուզել մեր երիտասարդությանը — ֆրակով վամպիրի — կապիտալի դոհ խելագարի տանջանքները բնմից տեսնելիս: Դեռ այսքանը մի երգմ... Բայց երբ գալավատյապները աղավաղում են, խառնակում այնքան հետեւղականորեն զարգաց-

բածս տեսությունը իրսենի «Դոկտոր Շտոկման»-ի մասին, որով իրոք, դու մի սերտանդ ես կրթել... ահա այդ է վիրավորականն ու վրդովեցուցիչը: Երևակայիր, ջնշել են ամբողջովին «Դոկտոր Շտոկմանի» վերաբերյալ ամբողջ մի երես ու մի տեղ թողել այսպիսի մի անգրագետ պարբերություն. «Մարմնացնել տաղանդուն երկաթի մարդուն...» և այլն: «Ահա այս է պիեսի նպատակը...»: Մի հարցնող լինի... թե այդ ո՞ր պիեսի մասին է խոսքը: Չէ՞ որ դա վերաբերում է «Դոկտոր Շտոկման»-ին:

Եվ սակայն ոչ միայն Շտոկմանի անունը չկա, այլև նրա մասին <գրած>երեսից և ոչ մի տող: «Պրիզմայի միջով» խոսքերը դարձրել են «պրիզմայի միջոցով». կատարյալ անգրագիտություն: Բաց են թողել մի այնպիսի գեղեցիկ ցիտատ Պушкиնից, որը վստահորեն քեզ եմ վերագրել, որովհետև դու իրավունք ունես քամասին ասելու.

И долго буду тем любезен я народу,  
Что чувства добрые я лирой пробуждал<sup>2</sup>.

Այս ցիտատը կապել եմ «Խորասուզված զանգի» մեջ վարպետութեն կատարածդ վարպետի դերի հետ, «Ճարտարապետ Սոլնեցի» և այլոց հետ:

Մի խոսքով, Հովհաննես ախապեր, ավելին են ամբողջ հոդվածս մեր գալավայտյաները և, իհարկե, ի վճառ մեր երկուսի ջղերի: Դե՛, ի՞նչ պիտի արած... Մնում է, որ շուտով ճամփա ընկնենք Կիսովոդսկ և այնուղի հանգիստ տանք մեր վաստակած, մաշված ուկորներին:

... Դե՛, ցտեսություն. Երկար նամակ ուղեցիր, էս' էլ քեզ երկար նամակ: Քեֆդ քոք տւ ջահել մնացիր:

Մնամ հս էլ մի «ջահել Ակով»

## 27. ՊԵՏՐՈՍԻՆ (ՆԱՄԱԿԻՑ)

ԹԻՖԼԻՍԻՑ—ԲԱՔՈՒ

10/XII, 1932,  
ԹԻՖԼԻՍ

Սիրելի Պետրոս

Թեև զու Մոսկվայից իմ գրած նամակին<sup>1</sup> չպատասխանեցիր, այնուամենայնիվ գրում եմ քեզ մի անդամ ևս, գրում եմ, որպէս ես քեզ պես քառ շեմ...

Սովորել էի քո մտերմական, քնքուշ նամակներին<sup>2</sup>, մանավանդ, երբ միշտ իմ առողջության մասին էիր մտահոգվում, մանավանդ. երբ միշտ խորհուրդ էիր տալիս՝ ինքս ինձ պահեմ-պահպանեմ:

Իհարկե լավ, ընկերական, հտդատար վերաբերմունք էր այդ, բայց ես համաձայն շեղա քո այն խոսքին, թե՝ «Հիմա մենք այն հասակումն ենք, որ պետք է միմիայն մեր առողջության մասին մտածենք, նորա հոդով քաշենք...»: Կարծիմ քո այդ կարծիքին ես պատասխանել էի բացասարար: Առողջության մասին մտածելն իր կարգով, բայց որ միմիայն առողջության մասին մտածել — համաձայն շեմ: Ես գոնե վճռել եմ մենակ գրիչը ձեռքիս, գրական դիրքերում, որ քեզ այս անկեղծ թվա (զու առհասարակ որոշ չափով կասկածու ես մարդկանց անկեղծության վերաբերյալ և անդամ՝ պեսիմիստ). այդպես, որ քեզ անկեղծ թվա իմ որոշումը, ահա փաստեր: Երբ գնացի Մոսկվա ու առաջին անդամ ինձ քննեց Կրիժսի հիվանդանոցի գլխավոր պրոֆեսոր, բժիշկ Ներսիսյանը, նա առանց քաշվելու հայտարարեց, որ ես այժմ իմ հիվանդ սրտով դանվում եմ ինվալիդ մարդու դրության մեջ (յա հաշայս և օօտօյնի ինվալիդ), անդամ ուրուր մի անբուժելի ձեղք գտավ, որը, քո ասած, պիտի խնամել, պահպանել ու վերշացրեց. քանի որ ես գտնվում եմ մի այդպիսի դրության մեջ, անհրաժեշտ

ինձ շատ սակավ հուզվել, շատ սակավ շարժվել, շատ սակավ խոսել և այլն և այլն, մի խռոքով, կիսամեռի գրություն ապրել. իրոք, եթե չափից ու սեժիմից զուրս խոսում, հուզվում, շարժվում եմ, գիշերները տուրքը տալիս եմ, անքուն գիշերներ ապրում, հուզվում, սրտնեղվում:

Ես գեռ չեմ խոսում այն մասին, թե ինչպես այդ նույն պրոֆեսոր Ներսեսովը պատվիրեց ինձ անսպայման դադարել երկար ժամանակով աշխատելուց. բայց ես որոշել եմ, ինչպես զրեցի. գրիշը ձեռքիս մեռնել և աշխատում եմ (թեև զգուց) մի նոր պոեմի, մի արձակ պոեմի, երկու նոր պատմվածքի և մի գեղեցիկ մեծ բանաստեղծության վրա, որը հղացա Կրեմլի հիվանդանոցում:

Հիմա դու լինես փմ պարոնը, համեցեք հաշիվ տուր ինձ. ի՞նչ իրավունքով դու իմ վերջին փակ նամակին չպատասխանեցիր, մի՞թե շղիտես, որ մինչե նման երկար նամակներ զրել-վերջացնելը, հոգիս է դուրս գալիս... Այդպե՞ս ես մտածում իմ առողջության մասին ու անգամ խորհուրդներ տալիս, որ ինձ պահպանեմ. մի՞թե չէիր կարող թեկուզ բացիկով պատասխանել:

<Հ. Հակոբյան>

## 28. ԽՈՐԵՆ ՍԱՐԳԱՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

20/IV, 1933,  
Թիֆլիս

Հարգելի ընկեր Խ. Սարգսյան

Աշա Զեղ մի նոր գիրք ևս թարգմանած իմ երկերից. Ազրեանի Ազրմեշրը վերջերս բույս հանեց իմ ընտիր բանաստեղծությունների ժողովածուն՝ «Jeni sabah»\* վերնագրով, որից մի օրինակ ուղարկում եմ Զեղ՝ Խորհրդային Հայաստանի Հեղափոխական մուղեցի համար: Շատ շի քաշիլ, կստանաք մի նման գիրք ֆրանսերեն լեզվով դարձյալ իմ ստեղծագործություններից, որը հրատարակում է Մոսկվայի ՎՕԿՍը. այս ժողովածուն վաղուց պիտի լույս տեսած վներ, բայց հիվանդությունն խանգարեց, ևս անկարող եղա անմիջական աջակցություն ցույց տալ թարգ<մանիչ> ինքը երին<sup>1</sup>:

Ուղարկում եմ մի նոր օրինակ իմ «Բանաստեղծություններ»-ից՝ լույս տեսած 1912 թվին և խնդրում եմ վերագրածնել այդ գրքի այն օրինակը, որը գտնվում է Երևանի Պետթանգարանի պահարանակներունում (իմ անվան): Պետթանգարանի անկյունում գտնված այդ էկզեմպլարը պատկանում է Թ. Զիլավյանին, պիտք է վերադառնել:

Ուղում էի առանձին փաթեթով ուղարկել Զեղ Վրաստանի Ցիլի-ի և Սամվելյանի կողմից ինձ տրված ժողովրդական պոետի կոչման գեկրեալը<sup>2</sup>, բայց վախեցա կորչի փոստատներում: Հիմա շարունակ կորչում է ամեն մի լավ բան: Ես Զեղ խնդրում եմ՝ հուսատու մարդ գալուց՝ ուղարկեք մոտս, ուղարկեմ Պետթանգարան:

Իմ՝ ամբողջ բնական հասակով յուղանկար պատկերս, որ

\* «Ենի Սարգս» («Նոր առավոտ»):

նկարել է 1927 թվին Հայտնի նկարիչ Ա. Լյուբիմովը («26 կոմունարներ»ի շրջակարգի հեղինակը) նվիրում եմ ԽՀորհրդացին՝ Հայաստանի Պետական թանգարանին, մահից հետո միայն...

Ես Զեղ ուղարկում եմ Բաքվա ռեալական դպրոցի աշակերտության խմբակի նկարը՝ 1888 թվին Հանած, որոնք բոլորին են իրենց հրատարակած «Հույս» ձեռագիր թերթի շուրջը ու ինձ էլ իրենց մեջ առել, որպես մշտական աշխատակցի: Ապա մի ճրես ձեռագիր՝ «Առաջին սերը» վերտառությամբ՝ որպես նմուշ այն պատմվածքի, որը գտնվում է Գարեգին Լևոնյանի մոտ<sup>3</sup>: Անցյալ տարի Լևոնյանը գրել էր ինձ պաշտոնական մի նամակ՝<sup>4</sup> նյութ ուղարկել շուտով հրատարակվելիք «Տարեգրքի» համար<sup>5</sup>: Ճիշտ է, հիվանդ էի, բայց մշտական ենթարկեցի վաղուց արխիվում գտնվող նարբուկան և ուղարկեցի Գար. Լևոնյանին, տրպես «Տարեգրքի» քարտուղարի (գոնե ինձ հղած հրավիրատոմսի վրա այդպես էր գրված՝ խմբագիր՝ Չուբար, քարտուղար՝ Գ. Լևոնյան): Հետո միայն իմացվեց, որ Պետհրատը խլել է «Տարեգրքի» խմբագրման փնիցիատիվան հիշածս ընկերներից և հանձնել այն երկու Եղիշներին<sup>6</sup> ու Ակսել Բակունցին: Գարեգին Լևոնյանը զլացել է հանձնել նոր խմբագրությանը ուղարկածս վերոհիշյալ՝ «Առաջին սերը» պատմվածքի ձեռագիրը «Տարեգրքի» համար:

«Առաջին սերը» բաղկացած է 12 երես ձեռագրից և շատ սրբ՝ տաշարժ պատմվածք է, ուր շոշափվում է ամուսնության պրոբլեմների նախարան Մեծ Հռոմեակերպ և Մեծ Հռոմեակերպից հետո:

Քանիցս գրել եմ Գ. Լևոնյանին՝ վերադարձնի փնձ հիշյալ ձեռագիրը, — հանդիպել եմ դատապարտելի լուսնիան:

Ես Զեղ շատ եմ խնդրում Հայտնեք նրան իմ բողոքը, որ նա օգտվելով թե՛ հիվանդ գրությունիցս, թե՛ իրարից հեռու լինելուց, այդ նյութը պահել է իր մոտ, չի հանձնել «Տարեգրքի» նոր խմբագրության և պահում է իր արխիվում, չնայած, որ նրա գրադարանը ցուցահանդեսում կա իմ «Նոր առավոտ» պոհմի անդրանիկ ձեռագիրը<sup>7</sup> 1909 թվից: Նա ձեռագրերի սիրահար է:

Էնդունեցեք նաև զերմ ողջույններս՝

Հակոբ Հակոբյան

## 29. ԽՈՐԵՆ ՍԱՐԳԱՅԱՆԻՆ

ԹԻՖԼԻՍԻՒՑ—ԵՐևան

30/IV, 1933,  
ԹԻՖԼԻՍ

### Հարգելի ընկեր Խորեն Սարգսյան

Ինչպես տեսնում եմ՝ մեծ սիրով ու բերկրանքով եք ընդունում ամեն մի զիրք, ամեն մի նվեր, որ կարող էր զարգարել Հեղափոխական Զեր թանգարանի ամեն մի անկյուն։ Գնահատելով Զեր գործվալի խնամքն ու վերաբերմունքը՝ դեպ և <որհրդային> Հ<այստանի> Հեղ<ափոխական> թանգարանի ամեն մի իր՝ վերաբերյալ զրական սեկտորին՝ ևս շտապում եմ ուղարկել Զեղ նմուշի համար մի քանի նամակներ, մանավանդ, որ նրանք հասարակական նշանակություն ևս ունեն... Այս նամակներից (10 զանազան անձերից) իմ արխիվում գտնվում են բավականաշատ մեծ թվով (Հարցուրավոր) նամակներ՝ ստացած ուստի զրողներից-պոետներից, կուսակցական լիդերներից և այլն, որոնք պատկանում են և <որհրդային> Հ<այստան>ի Հեղափոխական թանգարանին իմ յուղաներկ մեծադիր պատկերին հետ՝ մահից հետո միայն։

Այսպես, իմ «արխիվ-թանգարանից» ուղարկում եմ Զեղ իմ անվան պահարան-անկյունում պահելու հետևյալ նամակները։

1. Ստեփան Շահումյանի մի բացիկը, գրած ինձ Աստրախանից: 1912 թվի գարնան սկզբին նա ձերբակալվեց, աքսորվեց Վոլգայի ափերը։ Ահա այս բացիկը նրա աքսորման տարվա նամակներից է։ Ստեփանը հետո բնակություն հաստատեց Սարատովում, մինչև 1913 թիվը, այսինքն մինչ Ռոմանովների 300-ամյակի առթիվ նրա ազատազրումը։

2. Ամիրանի, կամ Արսեն Ամիրյանի նամակը, որ 26 գնդակահարված կոմունարներից մեկն է։ Այս նամակը նա գրել է ինձ 1917 հունվարի 3-ին և Բաքվից ուղարկել Ա. Խանոյանի ձեռքով։

Այստեղ խոսում է Հունվարի 1-ի իմ այն առաջնորդողի մասին «Պայքարում»՝ «Ժամանակ Ք» վերնագրով, որի նյութը վերաբերում է Հայ ռարկորներին: Ես կոչ եմ անում Հայ բանվորներին, որ «Правда» կենար<sup><ոնական></sup> օրդանի նման «Պայքարը» և ունենա իր բանվար թղթակիցները: Ժամանակ է...»

3. Իտալական բանաստեղծութի Ադա Նեպիի փոտական լեզվով գրած նամակը, որը շահել բանաստեղծութին հիացած է իմ Հայերին թարգմանությամբ և խնդրում է իրեն ուղարկել մի քանի օրինակ ևս Հայերին թարգմանությունից:

4. Արշակ Զոհրաբյանի ձեռագիր նամակը իր ընտրության վերաբերյալ, — որպես 2-րդ Պետական Դումայի անդամ, ընտրված բուրժուական Սոլոլակից, զիսավորապես 5-ամսյա մեր անընդհատ աշխատանքներից հետո (գաշնակների դեմ): Նա ընտրվեց պատգամավոր Սոլոլակից: Ինքս լինելով կոմիտեի և՛ զիկավարը, և՛ ընտրողական պայքարի կենտրոնի անդամը՝ գրեցի նրան նամակ, որ Պիտեր մեկնելու նախօրյակին բարեհաջի գալ ինձ մոտ՝ թե ճաշելու ընտրողական կոմիտիայի հետ միասին, և թե լուսանկարվենք միասին ու այդ պատմական հազվագյուտ փաստը հավերժացնենք:

5. Ավ. Արամիսանյանի «Մուրճ» ամսագրի 10-ամյակի առթիվ տոպացած մի նամակը, որով աշխատակիցները հրավիրում են մասնակցել ամսագրի Հորելյանին: Այստեղ կարելի է գտնել «Մուրճ» ամսագրի աշխատակիցների ցանկը:

6. Վրթանես Փափազյանի Յ նամակը, որին Բաբիլոց ամենամիս ուղարկում էի ժնկ 30-ական ոսկեթի, որ սովորել համալսարանի դրական-պատմական ֆակուլտետում: Իմ օդնելը (մոտ 360 ո.) մի տարի տևեց միայն, որովհետև ժողովարարությամբ հավաքած կոտեկները հետազոտմ դադարեցին մտցնել նպաստ խոստացած լնկերներս, իսկ ես մենակ 30-ական ո. ուղարկել անկարող էի, ու այնպես էլ մի տարի օդնելոց հետո դադարեցի ժնել փող ուղարկելու:

7. Մանուկ Աբեղյանի նամակը: Ես նրա հետ ծանոթացած առաջին անգամ 1899 թվականի Մանգիստավ, որի մոտ կարգացի իմ առաջին գրքի ձեռապիրը (բանաստեղծությունների առ գիրք. Բրատ. 1899 թ. Թիֆլիս):

8. Հովհաննես Տեր-Մարկոսյանի «Մշակի» խմբագիրներից մեկի նամակը, որը, ի միջի այլոց, խրախուսելով ինձ (1893 թ. 10/XI), զբանմ է, որ «Ես բավական լավ ոչ ունիմ մի թղթակիցի համար»:

փաստեր, փաստեր և միշտ փաստեր առանց երկար ու բարակ դատողությունների»:

9. Ի՞ր զիմնապիտական ընկեր Հակոբ Մանասյանի երկու նամակը, գրած Թիֆլիսից, ուր նա սովորում էր Թիֆլիսի ԱՀքական՝ զիմնապիտայում: Հակոբ Մանասյանը Ներսիսյանի դպրոցավարտներից մեկն էր, մեծ ապագա էր խոստանում: Թոքախտը նրան 1896 թվան կերակ Մոսկվայի համալսարանում բժիշկ ուստանող եղած ժամանակ:

10. Սարգիս Տեր-Զաքարյանի 2 նամակը, որի միջոցով Բարուն թողնելուց և Թիֆլիս տեղափոխվելուց հետո՝ 1893 թվի վերջերին պիտի իշխան Անդրոնիկի միջոցով մտնեի Թիֆլիսի երգեցողության դպրոց զիրիկ ձայնս մշակելու, սակայն հենց Թիֆլիս եկած օրը պաշտոնի մտա ու մոռացվեց ձայնս մշակելու հարցը:

Այս գորոր նամակների վրա կա Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչուրյան կնիքը (բացի Ստեփանի և Արսենի նամակներից, որ ստացել եմ 1909 թ. հետո), որը 1909 թվին ինձ բանտարկեց ու ճեղագրերս քննելուց հետո՝ վերադարձրեց կնիքներով ու ինձ էլ ապատեց բանտից:

Այս 10 նմուշ նամակները խնդրում եմ աշքի լուսի պես պահեք, որովհետև, դժբախտաբար, կան «սիրողներ», որոնք յուրացնել գիտեն պատմական դոկումենտները:

### Չեր Հակոբ Հակոբյան

Պ. S. Ենդրում եմ դրեք, ի՞նչ կցանկանայիք իմձանից ստանալ, որ այս տարվա վերջին Չեր բաժինը վերափոխման հնթարկվելուց՝ կարողանայիք ավելի լրիս օգտագործել իմ տուլարկած նյութերը:

Քնի <երական> ողջույններով՝  
Հակոբ Հակոբյան

## 30. ԽՈՐԵՆ ՍԱՐԳԱՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

12/V, 1933,  
Թիֆլիս

Սիրելի ընկեր Խորեն Սարգսյան

Մեծ բեռն եք դրել հիվանդ ուսերիս վրա... Բայց ինչ արած, պիտի տանեմ, քանի որ դա մի պարտք է, որ պահանջում է ինձանից և <որհղացին> Հայաստանի Պետթանգարանը:

Առաջին անգամ մամուկում հանդես եմ եկել, որպես թղթակից Արծրունու «Մշակում» 1890 թվին, Հակոբ Հակոբյան ստորագրությամբ: Անդրանիկ իմ այդ հոդվածը տպված է «Մշակի» № 85-ում, առաջնորդողից հետո<sup>1</sup>: Նա բավականին ընդարձակ է և նյութը վերաբերում է ամառը հանգստության եկող էքսկուրսանտ ուսանողության՝ Գանձակին մոտ գտնվող Հաջիքենդ ամառանոցի շուրջը հարուստ էտնոգրաֆիական նյութերով հետաքրքրվելու հարցին:

Երրորդ անգամ մամուկում հանդես եմ եկել Արասխանյանի «Մուրճ» ամսագրում, որպես բանաստեղծ և թղթակից: 2-րդ իմ այդ հոդվածը և անդրանիկ բանաստեղծությունը լուս է տեսած 1893 թվի «Մուրճ» ամսագրի № 10-ում: Բանաստեղծության վերնագիրն է՝ «Ուստ բարեկամության», հոդվածի վերնագիրը՝ «Գյուղատնտեսական ինտելիգենցիա», նա վերաբերում է Խրիմյանի այն ճառին, որը արտասանեց <նույն տարվա> հոկտեմբերի 8-ին (Հ. ա.) էջմիածնում, ճեմարանի տարեղարձի առթիվ և որը իմ այնտեղ ներկա եղած ժամանակ ստենոգրաֆիական Հշտությամբ վերաբետքեցի ու հանձնեցի «Մուրճ»-ի խմբագիր Ավետիք Արասխանյանին տպելու (4 երեսից բազկացած):

Երրորդ անգամ հոդվածով հանդես եմ եկել դարձյալ «Մուրճ» ամսագրում, 1894 թվին: Այս տարվա №№ 5, 6, 7—8-ում տպված

է իմ մի տեսությունը «Բանվորների հավաքական ապահովացումն Թուսաստանում դժբախտ դեպքերից» վերնագրով (29 երես): Այս տեսության մեջ ես ցանկություն եմ հայտնում բանվորների ապահովագրությունը մասնավոր ֆիրմաներից անցկացնել պետական հիմնարկների:

Այնուհետև 1895 թվին «Մուրճ» ամսագրի № 9—10-ում լույս է տեսնում իմ հայտնի «Նամուս ու դեյրաթ» բանաստեղծությունը, որից հետո մասնություն մինչ 1900-ական թվականները բացի բանաստեղծություններ տալուց՝ ոչինչ չի երևում արձակ:

1903 թվին հրատարակելով Աղա-Նեղրիի բանաստեղծությունների ա. պրակը՝ իմ թարգմանությամբ, գրել եմ նրա առաջարանը՝ «Աղա Նեղրի-քննադատական-կենսագրական տեսություն» վերնագրով (11 երես):

Ես այսուղ շեմ հիշատակում 1905 թվին Աշոտ Աթանասյանի՝ «Աշխատանք»-ում, 1906 թվին «Կայծ» սոց. դեմ. բան. կուս. թերթում, «Հոսանք» սոց. դեմ. բան. թերթում 1907 թվին տպված բաղմաթիվ բանաստեղծությունների ու հոդվածների մասին՝ պետական շրդ դումայի և այլ հարցերի շուրջը: Ես կհիշատակեմ այսուղ իմ այն ազմուկ ու հետաքրքրություն առաջացնող հոդվածների մասին — Credo ստորագրությամբ, որոնք տպվեցին «Մշակի» 1909 թվի №№ 240, 241-ում: Նրանք կրում են «Քննադատության քննադատություն» վերնագիրը և վերաբերում են տիրահռչակ Յ. Luciferի (Յ. Խշանյանի) մի քննադատական էտյուդին, որի վերնագիրն է՝ «Աշխատանքի և աշխատավորի գաղափարը Աղա Նեղրիի, Հ. Հակոբյանի և Շ. Կուրդինյանի բանաստեղծություններից մեջ»:

1907 թվից հետո ասպարեզում երևան չի գալիս այնուհետեւ սցիունիկուր ատական՝ բոլշևիկյան թերթ և ստիպված հմտի լինում առաջին անդամ դրել Գ. Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսում:

«Գեղարվեստի» №№ 2, 3 և հետագա № ներում են, որ 1908, <1909> 10, <1910> և այլ թվականներին լույս տեսան իմ «Գործարան» («Ահա գործարան...») բանաստեղծությունը և «Նոր առավոտ» պոեմը (1909 թվին), հետագայում՝ «Լուսաբացին», «Պահակը» և այլն:

1911—12 թվականներին լույս տեսավ Բաքվում մարքսիստական «Նոր խոսք» ամսագիրը, որի հիմնադիրն էր Ստ. Շահումյանը:

«Նոր խոսք»-ի № 1-ից մինչև 6-րդը ունեմ Հետելյալ բանաս-  
տեղ՝ <ությունները> տպված.

1) «Մաքառման ժամին», 2) «Էտապը», 3) «Գործարանում»,  
4) «Գյուղը հարավում» և այլն:

Սոց<իալ>—դեմ<ոկրատական> բոլշևիկյան հայ մամուլը  
«Նոր խոսքից» հետո բոլորովին ցամաքեց Թիֆլիսում։ Հիշում եմ՝  
դրանից առաջ, թե հետո, մի շոգված եմ ուղարկել Վլադիմիր  
Իլյիշին «Պисьма из Метеха» վերնագրով, որը տպվեց նրա ար-  
տասահմանյան խմբագրած լրագրում՝ «Պրոլետարի»-ում, թե՝  
«Սոց<իալ>—դեմոկրատում», չեմ հիշում<sup>2</sup>:

1914 թվի փետրվարին իմ խմբագրությամբ և զեկավարու-  
թյամբ բույս տեսան «Նոր գրադարան» անվան տակ «Կարմիր մե-  
խակներ» գեղարվեստական ալմանախների 5 գրքույկը։ Այն օրե-  
րին այդ մի առատացող առավոտ էր՝ երաշտած գրական անդաս-  
տանում։

Ա. Լունաչարսկու «Գեղարվեստը գեղարվեստի», թե <գեղար-  
վեստը> կյանքի համար» տրակտատի<sup>3</sup> առաջաբանը տալուց բացի,  
«Կարմիր մեխակներում» տվել եմ Մ. Գորկու հեքիաթը —  
թարգմանարար — Պարմի գործադրուի և Սիմոնի թունելի մա-  
սին։

«Կարմիր մեխակներ»-ի № 3-ում տպվել է իմ «Գործարա-  
նում» բանաստեղծությունը, № 4-ում՝ «Բաղաքը», № 7-ում՝ «Գար-  
բինը»։

Իմ երիալիստական պատերազմը սկսվելուն պես՝ դադարեց  
«Կարմիր մեխակների» հրատարակությունը և նույն 1915 թվակա-  
նի նոյեմբերից սկսվեց հրատարակվել «Պայքարը»՝ սկզբում շաբա-  
թաթերթ, ապա շաբաթը երեք անգամ, հետագայում՝ ամեն օր։

«Պայքար» սոց<իալ>-դեմ<ոկրատական> թերթի № 1-ում  
տպվեց իմ «Պահակը» բանաստեղծությունը, հետագայում «Ազա-  
տիներին» բանաստեղծությունը և այլն։ Ես հիշատակում եմ այս  
անդ աշխի ընկնող գործերս միայն։

Փետրվարյան հեղափոխության օրերին արդեն շաբաթակ սկսե-  
ցին տպվել բազմաթիվ արդեն լույս տեսած բանաստեղծություն-  
ներու՝ «Հեղափոխություն», «Մեռան, չկորան», «Նահատակները» և  
այլն։ Իսկ 1917 թվի հունվարի № առաջինում՝ «Ժամանակ» է՝  
առաջնորդողս, որի մասին 26 կոմունարներից մեկը՝ Ամիրանը գո-  
վաստական նամակ գրեց։ Այդ նամակի օրիգինալը գտնվում է  
Հայաստանի Պետթանգարանում։

Ես դիտմամբ այսքան մանրամասնություններ առվեցի Զեղ  
Ֆիայն այն պատճառով, որ մեր պարբերական մամուլում նման  
հողվածները բնութագրում են իմ թե՛ ստեղծագործական աստի-  
ճանական զարգացման էտապները և թե՛ այն պատճառով, որ ար-  
ձակ զրված իմ հողվածները (մինչ վետրվարյան հեղափոխությու-  
նը) իրենց նյութով և նորույթ էին և հրատապ ու օրիգինալ:

Հիմա ես կտամ Զեղ լոկ այն պարբերականների ցանկը, ուր աշ-  
խատակցել եմ ես, կամ եղել պատասխանատու խմբագիր, կամ  
խմբագրական կողեգիայի անդամ մինչ մեր օրերը:

Հակոբ Հակոբյան

### 31. ԳԱԼՈԿՏԻՈՆ ՏԱԲԻՋԵԻՆ

Թիֆլիս

23.VI.1933,

Тифлис

Высокоталантливому  
Галактиону Табидзе

Дорогой поэт

Я выражаю глубокое сожаление, что тяжкая болезнь лишает меня возможности принять участие в празднуемом трудящимися Закавказья 25-летия Вашей литературной работы.

Рабочие и крестьяне Закавказья ценят в Вашей поэзии те бодрые революционные мотивы, которые запечатлевают их подвиги в прошлом и зовут к новым победам на путях к неминуемой мировой революции.

Да растет и процветает, дорогой поэт, Ваш талант до этого радостного дня, и пусть победные звуки мирового Октября пишутся лучшими страницами Вашего революционного творчества!

Привет, пламенный привет Вам от народного поэта республик Грузии и Армении

Акопа Акопяна

ՄԵծատաղանդ Գալակտիոն Տարիձեին

Թանկագին պոետ

Իմ խորին ափսոսանքն ևմ արտահայտում այն բանի համար, որ ծանր հիվանդությունը ինձ զրկել է Հնարավորությունից՝ մասնակցելու Անդրկովկասի աշխատավորության կողմից տոնվող Զերդարձան ստեղծագործության 25-ամյակին:

Անգրկովկասի բանվորներն ու դյուլացիները Զեր պողեմիայի մեջ գնահատում են այն ռեոլյուցիոն զվարթ մոտիվները, որոնք արտացոլում են նրանց անցյալի քաջագործությունները և կոչ են անում նոր հաղթանակների՝ անխուսափելի համաշխարհային ռեօլյուցիայի ճանապարհին:

Թող, թանկագին պոետ, աճի և ծաղկի Զեր տաղանդը մինչեւ այդ երջանիկ օրը և թող համաշխարհային Հոկտեմբերի հաղթական հնչյունները գրվեն Զեր ռեոլյուցիոն ստեղծագործության լուսագույն էջերում:

Ողջո՞ւն, բոցավառ ողջո՞ւն Զեր, Վրացական և Հայկական ռեսպուբլիկաների ժողովրդական պոետից՝

Հակոբ Հակոբյանից

## 32. ԱՊՐԵՆ ԱՊԼԱԽԻ

*<Հունիս, 1933>*

Дорогой товарищ Ромен Роллан

Ваш лестный отзыв об удачном переводе моих поэм товарищем М. А. Ингбером меня очень обрадовал<sup>1</sup>.

Отрывки из моих поэм и стихотворений т. Ингбером переведены не с оригинала, т. е. не с армянского текста, а с русского перевода. Само собой разумеется, что вследствие этого оригинал не может быть передан так колоритно и близко к тексту.

Все же я должен засвидетельствовать, что Мирон Акимович Ингбер вышел с честью и выполнил задачу добросовестно.

Досадно только одно, что из-за предисловия перевод лежит в папке товарища Ингбера и ему не дается дальнейший ход.

В русском переводе, очень прилично, — если не сказать роскошно — изданном Госиздатом СССР (в 1928, в Москве—Ленинграде) имеется предисловие нашего общего друга и товарища Анатолия Васильевича Луначарского. К великому моему сожалению, он за последний год все время болеет пороком сердца — как и я — и я нахожу неудобным беспокоить его вторично — написать предисловие на французском.

Для меня было бы очень лестно и приятно иметь от Вас предисловие к французскому моему сборнику, и я надеюсь, что Вы найдете на это время для нас — старых большеви-

ков-писателей, чем премного обяжете меня и Мирона Акимовича Ингбера — соратника Ленина заграницей.

Примите мой горячий большевистский привет.

Народный поэт Грузии и Армении

Акоп Акопян

P. S. При сем прилагаю русский текст предисловия Анатолия Васильевича Луначарского, который облегчит Ваш труд: написать краткое предисловие.

A. A.

### Թանկարին ընկեր Ռոմեն Ռոլան

Զեր շոյող կարծիքը իմ պոեմների հաջող թարգմանության մասին, որ կատարել է ընկեր Մ. Ա. Ինգբերը, ինձ շատ ուրախացրեց:

Ծնկեր Ինգբերը իմ պոեմների հատվածներն ու բանաստեղծություններս թարգմանել է ոչ թե բնագրից, այսինքն հայերեն տեքստից, այլ սուսերեն թարգմանությունից: Ինքնին հասկանալի է, որ այդ պատճառով թարգմանությունը չի կարող տալ բնագրի կոլորիտայնությունը, չի կարող այնքան էլ մոտ լինել բուն տեքստին:

Համենայն գեպս իս պետք է վկայեմ, որ Միքոն Ակիմովիչ Ինգբերը պատվով է դուրս եկել և խնդիրը կատարել է բարեխըզգ-ձորեն:

Ցավալի է միայն, որ առաջաբանի պատճառով թարգմանությունը դեռ մնում է ընկեր Ինգբերի թղթապանակում և նրան համապատասխան ընթացք չի տրվում:

Ուստեղին թարգմանությունը, որ շատ գեղեցիկ, եթե շասենք շքեղ, հրատարակել է ՍՍՌՄ Գյուղատը (1928 թ. Մոսկվայում—Լենինգրադում), ունի մեր ընդհանուր բարեկամ և ընկեր Անատոլի Վասիլիչ Լումաշարսկու առաջարանը:

Ցավոք սրտի, նաև վերջին տարին անընդհատ հիվանդ է սրտի արատով—ինչպես և ես—և ես անհարմար եմ զգում կրկին անհանգըստացնել նրան՝ խնդրելով, որ նա ֆրանսերեն առաջարան գրի: Ես ինձ շատ շոյված կզգայի և հաճելի կլինիք Զեղանից առաջարան ստանալ իմ ֆրանսերեն ժողովածուի համար և իս հուսով եմ, որ Դուք ժամանակ կդանեք մեզ՝ հին բոլշևիկ գրողներիս համար,

որով շատ կալարտավլորեցնեք ինձ և Միբոն Ակիմովիչ Ինգրերին՝  
Հենինի արտասահմանյան տարիների դինակցին:

Ընդունեցեք իմ ջերմ բոլշեիկյան ողջույնը:

Վրաստանի և Հայաստանի ժողովրդական բանաստեղծ՝

Հակոբ Հակոբյան

Պ. Տ. Կից ուղարկում եմ Անատոլի Վասիլեիչ Լունաշարսկու  
առաջարանի ոռւսերեն տեքստը, որը կհեշտացնի մի կարճ առա-  
ջարան գրելու ջեր աշխատանքը:

Հ. Հ.

### 33. ԵղիՇե ԶԱՐԵՆՅԻՆ

Թիֆլիսից—Երևան

<Աշում, 1933>

Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Եղիշե Զարենյին  
Հարգելի պոետ

Անշուշտ, իմ շափածու և արձակ երկերի (2-րդ հատոր) բնա-  
գիրը Ձեզ մոտ է: Դուք, որպես Պետհրատի գեղարվեստական  
բաժնի վարիչ, երկի աշքի եք անցկացնում ամեն մի ձեռագիր, բնա-  
գիր, որպեսզի հակագեղարվեստական որևէ գործ չվրիպի, չանցնի  
ապագրության:

Ես, ինչպես գիտեք, երեկվա սկսնակը չեմ, ոչ էլ այսօրվա  
գրողը, ունեմ իմ սեփական ոճը, իմ ինքնուրույն կոլորիտը, իմ  
հաստատուն, անպահույն, ժողովրդական գեղարվեստական հա-  
սարակ արտահայտությունը, որը, սակայն, շատ ինտելիգենտնե-  
րի դուր չի գալիս, գոեհիկ է թվում:

Բայց ես երկրպագուն ու ստրուկն եմ այդպիսի գրելաձեի և  
զլուխս կտամ, բայց ոչինչ ոշոփի չեմ զիջի՝ երբ ինձ կուղղեն կամ  
կփոփոխեն, երբ կսկսեն աղճատել կամ աղավաղել իմ գործերը:

Դրա համար ես Ձեր առաջ, նախքան զիրքս տպարան ուղար-  
կելը, գնում եմ մի քայլան ու խնդիր, որոնք պարտավո-  
րեցուցիչ պիտի լինեն Ձեզ համար ոչ միայն, որպես Պետհրատի  
զեղ՝ արվեստական՝ բաժնի վարիչի, այլև գրողի, որն իր ամեն  
մի տողի արժեքը գիտե:

Ինչպես Դուք, որ թույլ չեք տա ոչ մի Պետհրատի՝ փոփոխել  
կամ աղճատել Ձեր գործերը, նույնը և ես չեմ կարող թույլ տալ:  
Դրա համար իմ առաջին պայմանը և խնդիրը այն է, որ ոչ մի բառ  
չփոփոխել, ոչ մի տող չկրծատել 2-րդ հատորիս բնագրում:

Իմ Հ-րդ պայմանն ու խնդիրն է Զեղ՝ Հ-րդ հատորս տպագրել մեծ ծավալով և ոչ «Մրգահասի» ձևով, որը չի համապատասխանում իմ ճաշակին։ Անհրաժեշտ է, որ երկերիս Հ-րդ հատորը նման լինի՝ իր ծավալով ու մեծությամբ՝ առաջին հատորին։

Իմ երրորդ պայմանն ու խնդիրն է Զեղ, եթե Հ-րդ հատորս 4000 կամ ավելի օրինակ եք տպագրելու, կեսը անպատճառ վերժե թղթի վրա լինի տպած, կեսը՝ միջակ, նու, ասենք, հենց Զեր կամ «Մրգահասի» թղթի նման, Դուք այդ փնձ խոստացել եք ընկ։ Գառնիկի միջոցով և համոզված եմ խոստման տերն էլ կմնաք։

Իմ չորրորդ պայմանն ու խնդիրը Զեղ այն է, որ սրբագրությունը խնամքով կատարել տաք, գրքին տաք ներքին և արտաքին վայելու ձև, եթե կարելի է ա հատորի նման, շապիկը լինի հասարակ, տուանց զանազան նկարիչների խճողած նկարների ու սիմվոլների, մի խոսքով շապիկը իմ ա հատորի նման հասարակընկ։ Գանցոյի ձեռքով գրած...»

Սպասում եմ պատասխանի՝

Հ<ակոբ> Հ<ակոբյան>

### 34. ԳԱՌԵՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

<Աշուն, 1933>

Սիրելի Գառնիկ

Աւղարկում եմ քեզ Կամարու մի տտանավորը, որ արտագրեցի Գեղարվեստի № 4-ից: Շատ քրքրեցի արխիվս՝ արտագրելու մի քանի ոտանավորներ նույն Կամարուց, որոնք տպված են «Պայքարի» № 5-ում, բայց չգտա: Ման արի, որոնիր «Պայքարի» 1916—17 թվերի № 5-ը և այնտեղ կգտնես Կամարու ստեղծագործություններից: «Կարմիր մեխակներում» և «Բանվորի ալբոմում» ունի շորս կտոր ընտիր ոտանավորներ:

Եթե ձեռքիդ տակ գտնված նյութերից անգամ գոյանա 32 մրեսանոց մի գրքույկ — դա Հակոբ Բեժանյանի (Կամարիի) անունը կիրկի մոռացությունից<sup>1</sup>:

Կուղենայի իմանալ. Խորեն Սարգսյանը հանձնեց քեզ, իսկ դու Զարենցին՝ 2-րդ հատորիս ցանկը:

Ստացա՞ր Զարենցին հանձնելու առաջաբանս և «Թիֆլիս»-ը: Երեկ օդային փոստով Զարենցին գրեցի մի նամակ<sup>2</sup>, ուր գրել եմ նույն խնդիր-պայմանները՝ գրքիս հրատարակության, ինչ քեզ. Հետեւիր, որ իմ այդ նամակին պատասխաննելուց շուտուափի, պատասխանի թող շուտով, որովհետև շուտով պիտի գնամ ծովափի, հանդսոյան տուն:

Կոմ<ունիստական> ողջույններով՝

Հակոբ Հակոբյան

## 35. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

15/XII, 1933,  
Թիֆլիս

### Սիրելի ընկեր Խորեն Սարգսյան

Այն եռանդն ու խնամքը, որ Դուք եք դրսեւրում Հայաստանի Պետթանգարանի հարստացման համար (զրական սեկտորի գծով՝ իշարկե), ոչ ոք չեր անի... Դուք ինձ էլ վարակեցիք Զեր եռանդով և, հանաբով ասեմ, բառացի «կողոպատեցիք» իմ արխիվը՝ այնտեղից դուրս հանելով պահած-փայփայած արխիվիս կեսը։ Հալաւ լինի Զեր թանգարանին, իշարկե պայմանով, որ ուղարկածս թանկարժեք զրականությունը՝ ձեռագրերը, լրագրերն ու գրքերը, ժուռակալներն ու լուսանկարները, նամակներն ու քննադատականները չկորչեն թանգարանում, մի բան, որ հաճախ է պատահում մուլեցներում։ Այս անդամ էլ (բացի յուղաներկ մեծադիր պատկերից) ուղարկում էմ այն բոլորը, ինչ խնդրել էիք վերջին նամակում։ օրինակ՝ 25 տարվա հնություն ունեցող լրագրերի մի կազմած կոմպլեկտ, ուր կտտնեք իմ գրած բոլոր առաջնորդողների, հոդվածների, հուշերի, բանաստեղծությունների, քննադատականների ցանկը, որպես և իմ մասին գրած հոդվածների, քննադատությունների, ուսանավորների ցանկը (բորոք, արխիվումս դեռ պահած ունիմ մոտ 100 բանաստեղծություններ՝ ինձ նվիրած մեր ականավոր զրոգներից սկսած մինչեւ ուստի կոմսոմոլիս՝ <կոմսոմոլ> խստները)։ Ուղարկեցի Զեր առայժմ նմուշի համար մի-մի օրինակ ինձ նվիրած բանաստեղծություններից — ուսւերեն, վրացերեն, ֆրանսերեն, քրդերեն։ Խուսերենի հեղինակը Ս. Գորոդեցկին է։ ուշագրություն դարձրեք այդ ուսւականավոր պոետի՝ ինձ նվիրած բանաստեղծության վրա։ Իմ կարծիքով նա արժանի է, որ պատիք

կախվի առանձին շրջանակի մեջ: Վրացերենը՝ Սանդրո Էռլիկի նվերըն է, քրդերենը՝ հանգուցյալ քրդաբան Ղազարյանի, ֆրանսերենը՝ Լունաշարսկու նախկին կնոջ ամուսնու նվերը և այլն:

Հնկեր Կամսարականի հետ տւղարկում եմ նորից 25 օրինակ մակագրած գրքեր<sup>1</sup>, 10-ը՝ ուսւերեն, 15-ը՝ Հայերեն: Իհարկե, ես առայժմ անկարող եմ ուղարկել Պետթանգարանին այն բոլոր նվերները գրքերի՝ մակագրած այս կամ այն հայտնի գրողի ձեռքով, որոնք ստացած տևիմ են 1900 թվականից: Զէ՞ որ Վրաստանի ժողովրդական պոետն էլ եմ, հարկավ պարտավոր եմ նրանց Պետթանգարանին նվիրել ունեցածիս մի մասը. ու այդպես էլ անում Կմ: Պահում եմ մի քանի արժեքավոր գրքեր Մետեխի համար:

Եմ տւղարկած նոր նամակների սերիան ուսւ ականավոր գրողներից 16 նամակ, Բերեզովսկուց 2 իրար հետ կապ ունեցող նամակներ, Ա. Գրոբեցկու, Գ. Սամնիկովի, Մ. Բորիսովլեբսկու, Ա. Ժարովի, Վ. Կիրիլլովի մի-մի նամակները, Լունաշարսկու մի քանի նամակները, Պաստերնակի և Կազինի նամակները, Դեմյան Բեդնու ֆաքսի միջինն, Ն. Տիխոնովի նամակը և այլն: Սոքա շատ հետաքրքիր գրություններ են...

Ուղարկում եմ նորից 15 օրինակ հայ նորագույն գրողների գրքերից, մի-մի օրինակ, որոնք մակագրած նվերներ են ինձ զանազան ժամանակներից — Ալազան, Ազատ Վշտունի, Ն. Զարյան, Ալ. Մյասնիկյան (Ալ. Մարտունի)<sup>2</sup>, Գրիգոր Ներսիսյան, Արազի, Մադաթ Պետրոսյան, Մաթ. Դարբինյան, Վ. Ատրյան, բանվոր Գևո, Վ. Լանտե, Կարա-Դարմիշ, Մարգար (Զիլավյանի պսեղոնիմը), Ա. Վարդանյան:

Ուսւերեն նամակների կապակցությամբ տւղարկում եմ 12 օրինակ ուսւ հեղինակներից, մի-մի օրինակ՝ դարձյալ մակագրած նվիրատունների ձեռքով:

1. Պավլո Շիշինա<sup>2</sup>. Ուկրաինական պոետ-գրող, վերին աստիճանի կուլտուրական, կրթված, նրբազգաց մի պոետ, որը իր նվերը մակագրել է Հայերեն: Նա վեսելովսկուց և Վ. Բրյուսովից հետո Յ-րդ գրողն է, որ ուսումնասիրել է Հայերեն լեզուն, տիրապետում է խոսում է մեր լեզվով:

2. Г. САНИКОВ. շատ հետաքրքիր մակագրությամբ<sup>3</sup>:

3. «Des nouvelles Sovietiques»-ի խմբագիր մեր ինգրերի կողմից<sup>4</sup>:

\* Հատ հետաքրքիր մակագրությամբ:

4. *Առաջնություն* — «Начальный курс политической экономии»<sup>5</sup>.
5. Ф. Махарадзе — «Диктатура меньшевиков в Грузии».
6. Феоктист Березовский — «Бабы тропы»<sup>6</sup>.
7. В. Ставский — «Разбег»<sup>7</sup>.
8. «Поход» Обрадовича<sup>8</sup>.
9. Е. Е. Лансере (профессор-художник) — «Лето в Ангоре»<sup>9</sup>.
10. «Ангел Армении» Сергея Городецкого<sup>10</sup>.
11. Хачапуридзе — «Гурийское восстание».
11. «Топъ» Борисоглебского Михаила<sup>11</sup>.

Հանում եմ Երկու գիրք այս ցանկից՝ Մախարաձեի և Խաչապիրի նվերները, վրաց թանգարանին նվիրելու համար:

Ուրեմն այս ցանկով ուղարկում եմ 10 գիրք, ընդամենը, հայերենի հետ, 25 օրինակ: Առաջին ցանկով ուղարկած ունիմ, կարծեմ, 25 օրինակ գրքեր հայերեն՝ նվեր Դ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Պերճ Պողոցյանի, Մուրացանի, Շար-Դոսի և այլոց տրեմբն ընդամենը 50 օրինակ մակարած գրքեր՝ ինձ նվիրած, որոնք իմ կողմից նվիրում եմ և <տրհրդացին> Հ<այստանի> Պետական թանգարանին:

Ընդհանուր Զեղ կրերի Լեռեղեի նկարը՝ 1923 թվից, մի մեծաքննիր լուսանկար շրջանակում՝ 1907 թվից և 10 օրինակ մանր նկարներ: Հետաքրքիր են դրանց մեջ Իմատրա ջրվեժի՝ ողջուզնը (2-րդ վարիանտ), անդրանիկ հայ Ասոցիացիայում խմբված գրողների խմբանկարը, 1894 թվականին հանված մի լուսանկարս, երբ որպես նարոգնավոլլան հոսանքի պատկանող ագիտատոր, նույն թվին կազմակերպեցի մի խումբ, պարագեցի այդ խմբի հետ 6 ամիս, վրա 7-րդ ամսում ձերբակալվեցի ու բարձրացի ծննդավայրու՝ Գյանջա:

Թվով 10 օրինակ այդ լուսանկարները կարող են մի լավ սերիա կազմել առաջներում ուղարկած լուսանկարներիս հետ:

Վաստանի Հեղափոխական թանգարանը մերժեց հանձնել Հայաստանի Փետրանդարանին՝ 1907 թվականին անդեպակ գույս տեսած, 32 երեսից բազկացած իմ «Հեղափոխական կրգեր»-ի միակ օրինակը: Գույք կարողանաք օպավել նրա առաջարկից—լուսանկարով հանել 20 այն գրավյունները, որոնք զարգարում են այդ բռուցուրի երեսները: Շատ դեղեցիկ կլիշեներ են «Մեռան՝ չկորան»-ի,

«Մահվան քայլերգ»-ի և այլ Հեղ <ափոխական> երգերի գրավ-  
լուրները:

Վրաստանի Հեղ <ափոխական> թանգարանը նույնպես մեր-  
ժեց տալ Զեղ մի օրինակ օխրանկայում ինձանից 1908 թվին հա-  
նած պատկերու Կարծում եմ կարևոր կլինի այդ օրիդինալից և  
լուսանկարի պատճենը:

Առաջարկում եմ դիմել կենինականի իմ անվան բանֆալի  
վարչության և այդտեղից դուրս հանել մի խոշոր կավե անդրիս  
(ԲԻՕՏ), որ կերտեց 1923 թվին, 30-ամյակիս առթիվ, անդրիագործ  
Անդրեևը:

Այս անգամ ուղարկում եմ ձեզ դարձյալ մի քանի զանազան  
օրինակ տւղերձներ, վկայականներ՝ նվիրված 30-ամյակիս: Օրի-  
նակ՝ Մոսկվայի Պրոլետ <արական> գրողների Ասոցիացիայի ու-  
ղարկած ուղերձը, որով ինձ Ասոցիացիայի պատվավոր նախագահի  
կոչում են շնորհում: Զակրուտայի, «Աղբյուր-Տարազ»-ի խմբագրի  
ուղերձները և այլն: Ես ինձ թողնում եմ բազմաթիվ տւղերձներ վրա-  
ցերեն լեզվով, նվիրված վրաց կուլտհիմնարկների կողմից՝ դարձյալ  
և <որհրդային> Վրաստանի թանգարանին նվիրելու համար:

Ուղարկում եմ «Դարբնոց» ամսագրի Յօրինակը և նրա <խըմ-  
բագրության> ժողովների ու <Ասոցիացիայի Հայկական սեկ-  
ցիայի> պրեզիդիումի արձանագրությունները: Սրանք էլ Հետա-  
քրքրիր գոկումնենտներ են՝ որպես անդրանիկ հայ <պրոլետարա-  
կան> գրողների Ասոցիացիայի առաջին օրգանի դոկումենտներ: Անհրաժեշտ է հիշատակել այն, որ Երևանի միանձան գողովների  
օրգան «Մտրճ»-ը լույս տիտավ «Դարբնոց»-ից շատ ուշ, այսինքն՝  
մինչև «Դարբնոց»-ի և Թիֆլիսի Ասոցիացիայի անդամ ընկ. Աղատ  
Վշտումին Երևան շեկավ (կարծեմ 1922 թվի դեկտեմբերին) — Երե-  
վանի Ասոցիացիան և նրա բերան «Մտրճ»-ը գոյություն չունեցան: Երե-  
վան եկավ Վշտումին և մեր Թիֆլիսի Ասոցիացիայի փորձառու-  
թյամբ զինված հիմնեց այդտեղ՝ Երևանում հայ <պրոլետարա-  
կան> գրողների և <որհրդային> Հայաստանի Ասոցիացիան:

Ստացեք երկու օրինակ «Նոր սերունդ» Հեկտոգրաֆով տրապ-  
ված ժուռնալներ՝ օրգան Ալեքպոլի Կարլ Լիբկնեխտի անվան երիտ-  
ակումբի բյուրոյի, տրի խմբագրիրը, կարծեմ, Մկրտիչ Արմենի էր:  
Այս խմբատիպ օրգանի երես 9-ում կա մի քննադատական՝ ջա-  
հել պատանյակ հեղինակի անկեղծ ու գեղեցիկ արժեքավորում-  
ները իմ մասին:

Ուղարկում եմ մի Ն «Շեփոր»։ Այդ էլ իմ անվան 76-րդ աշխատանքին դպրոցի կոմսոմոլների օրգանն է։

Իմ Երևան գալը հունվարին, այդ ձյուն-ձմեռ ժամանակ, զուցե և չաշողվի, առոնեցեք 40-ամյակը տեղացիներդ առանց ինձ։ Ես դեռ ժամանակ կունենամ մի նամակով Ձեր հանդեսը շնորհավորելու։ Ո՞վ դիտե, գուցե լավ եղանակները վերականգնվեն ու մի երկու օրով գամ... տեսնենք։

Այսպիս, ընդունեցեք ջերմ բարեներս և ցանկությունս Ձեզ, հաշողություն՝ ձեռնարկած գործին։

Զեր՝ Հակոբ Հակոբյան

## 36. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

29/XII, 1933,

Թիֆլիս

Միւելի ընկեր Խորեն Սարգսյան

Այսօրից, Զեղ ուղարկած իմ բոլոր իրերն ու նյութերը պատկանում են ԽՀՀ Հայաստանի Պետթանգարանին, Գետեաբար Դուք կարող եք Զեղ ուղարկած ամեն մի իրի, և թե՛ թերթերի կազմված կոմպլեկտի հետ վարվել, ինչպես կամենաք:

Հարցնում եք՝ Ստ. Շահումյանի ինձ՝ 1911 թվին գրած բացիկից մասին տալ մի քանի տեղեկություններ։ Այդ հարցերին ես մի առանձին շտապ նամակով պատասխանել եմ ս/տ նոյեմբերի 20-ին։ Այդ հարցերին ամբողջովին պատասխանում եմ նորից, որովհետեւ, ըստ երևույթին, կամ բացակա եք եղել Երևանից, երբ նախակ եմ ուղարկել կամ Զեղ շին հասցրել նամակս։

Շահումյանի նամակի կապակցությամբ Զեր հարցին, թե ո՞վ է Աշուազ, — տեղեկացնում եմ, — ուստի Աշուազարյանն է։ Զեր երկրորդ հարցին, թե՝ ո՞ր դիրքն եմ 1912 թվին ուղարկել Շահումյանին՝ պատասխանում եմ։ Ուղարկել եմ 1912 թվականին հրատարակած ժողովածուն։ Բանաստեղծությունների այդ ժողովածուից մի օրինակ կանաչ վերնակազմով (շապիկ) ուղարկած ունեմ Պետթանգարանին.

Ի՞նչ քննադատականի մասին է ակնարկում Շահումյանը այդ բացիկում։ պատասխանում եմ՝ 1911—12 թվականներին Բաքվում լույս էր տեսնում «Նոր-Խոսք» բոլշևիկյան-մարքսիստական գրական-գեղարվեստական ամսագիրը։ այդ ամսագրի № 5—6-ում լույս տեսավ Արտաշես Կարինյանի մի, 13 երեսից բաղկացած, քննադատականը՝ «Քաղաքի երգիշներ» վերնագրով։ Վահան Տերյանի և Հակոբ Հակոբյանի մասին։ Ստեփանը նշում է այդ հոդվածը իր բա-

ցիկում: Վերջին Զեր հարցը Ստեփանի բացիկի մասին՝ տպագրել եմ արդյոք Ստեփանի այդ նամակը որևէ տեղ, պատասխանում եմ. ո՞չ այդ և ո՞չ էլ մյուս մոտս պահած նրա կրկու ուրիշ բացիկները, որպես և նրա ինձ ուղարկած փակ երկու մեծ նամակները<sup>2</sup> (թվով՝ 5) ո՞չ մի աեղ չեն տպագրված, որպես և չեն տպագրված Ադր- ների 4 նամակներից ոչ մինը, որպես և չի տպագրված Ամիրյա- նի ինձ ուղարկած միակ նամակը<sup>3</sup>, որը այժմ դանվում է Զեր թան- գարանում:

Ա օրօրո՞ս\*, Զեր՝ նոյեմբերի 17-ին դրած նամակում հարցնում եք. Ամիրյանը իմ ո՞ր Հողվածն է ակնարկում իր նամակում: Բա- ցեր ուղարկածս թերթերի կազմված կոմպլեկտը և «Պայքար» թեր- թի 1917 թվի Հունվարի մեկի համարում կդտներ մի առաջնորդով՝ առաջին երեսում, «Ժամանակ է» վերնագրով: Ահա այդ առաջնոր- դողի մասին է խոսքը: Ս. Խանոյանը Բարլում լինելով, որպես խմբագրներից մեկը «Պայքար» ամենօրյա թերթի, Հայտնել էր Ամիրյանին, որ առաջնորդողի հեղինակը ես եմ, նա էլ իր նա- մակում ակնարկեց այդ մասին:

«Աճում ենք» ոտանակորը գրված է 1930 թվին Խորհրդային Հայաստանի 10-ամյակի առթիվ: Նա տպված է, առաջին անգամ, «Լուսաբաց» ժողովածովի<sup>4</sup> № 5-ի առաջին երեսում «Մենք աճում ենք» վերնագրով:

Այս ամսի 24-ին լույս տեսավ, «Պոլիտար» № 295-ում, իմ «Թիֆլիս» վերնագրով էպոպեան, 140 երկարաշունչ տողից բար- կացած, ճիշտ է, սխալներ-վրիպակներով, այնուամենայնիվ, ավել- յորդ շեմ համարում մի № ուղարկել Զեր ցուցադրելու համար, որ- պես նոր (1933 թվականի) գործ. ես Զեր խորհուրդ կտայի այս էպոպեան և Զեր ուղարկած «Արշավ» № 1-ում տպված իմ «Քա- ղաք» պոեմը (գրած 1931 թվին), «Լենինգրադյան պոեմի» հետ նույնպես ցուցադրել ցուցահանդեսում, որպես վերջին տարինե- րիս պբռդուկցիա. այդ էական է 65—68 տարեկան հասակ ունե- ցող գորդի համար...

Այս տարվա «Պոլիտար»-ի № 274-ում Խ<որհրդային> Հա- յաստանի 13-ամյակի առթիվ տպվեց իմ «Երևան» բանաստեղծու- թյունը՝ նոր գրած. նա «Աճում ենք» ոտանակորի 2-րդ վարիանտն է, աշը ածեք:

Նկարիչ Թաղեռոյանը օրերս կանցնի մոտս ինձ նկարելու

Զեր՝ Հակոբ Հակոբյան

\* Ֆրանս.—ի դեպ:

## 37. ԽՈՐԵՆ ՍՍ.ԲԳԱՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

16/1, 1934,  
Թիֆլիս

Սիրելի ընկեր Խորեն Սարգսյան

Երբ սուրճանդակը թիֆլիս կդա՝ նրա միջոցով կուղարկեմ մի քանի խմբանկար՝ թվով 4 լուսանկարներ. Կարա-Մուրզայի խմբի մի նկարը 1894 թվից, ուր մասնակցել եմ որպես soloist, Միլա-Յիսակայացի մի նամակը<sup>1</sup>, որին 1911 թվին ուղարկել էի «Նոր առաջնորդ» պոեմից մի օրինակ՝ Մաքսիմ Գորկուն, Կապրի հասցնելու Լունաշարսկու մի բաց նամակը<sup>2</sup> ձեռագրով, հասցեագրված իմ հարեան Հայրապետ Բագդասարովին, որը ապրում էր մեկ սահմանակից սենյակում և որի անունով մի ժամանակ ստանում էի արտասահմանյան համարյա բոլոր գրագրությունները և այլն:

Ի դեպ, Լունաշարսկու «Գեղարվեստը գեղարվեստի», թէ՝ <գեղարվեստը> կյանքի համար» ձեռագիրը ուղարկել եմ իրեն՝ հեղինակին, իսկ հայերեն թարգմանածու ձեռագիրը դեռ շատ վաղուց՝ Զեզու ծթե շեմ սխալվում, կարմիր շապիկով ուղարկած բրոցյուրների մեջ («Կարմիր մեխակներ», «Բանվորի ալբոմ» և այլն) կա և հայերեն լեզվով հրատարակված այդ բրոցյուրի մի օրինակը<sup>3</sup>: Որոնցից՝ ուղարկածս գրքերի ու բրոցյուրների մեջ՝ կտանեք Լունաշարսկու այդ դուրծը իմ առաջարանով: Տպագրված է նա ուսերեն, թէ՝ ոչ, չգիտեմ:

Հետաքրքիր կլինի Պետթանգարանի համար 1902 թվին իմ՝ Աղա-Նեղորիփց թարգմանած և 1903 թվին հրատարակված առաջին պրակի ձեռագիրը, որը նույնակա կուղարկեմ որպես Զ-րդ պրակի ձեռագիրը պահում եմ իմ արխիվում, մոտս:

Զեզ մոտ պետք է ունենաք նաև «Բանվորի ալբոմ»-ից մի պոտե

№ 7-ով: Իսկ «Պրոլետարական պոեզիան և ապագա գեղարվեստը»<sup>4</sup> վերնագրով իմ աշխատանքը այնպես էլ լույս չտեսավ համաշխարհային պատերազմի վրա հասնելու պատճառով: Առհասարակ այդ անհծված պատերազմը շատ բան փշացրեց՝ միանգամից մորիլիցացիայի հնթարկելով՝ գրաշար-հրատարակիչներից ակտիվիստներին:

Ափսո՞ս, արդեն ուշ է, թե չէ «Գրական թերթի» հերթական №-ի համար կուղարկեի լուսաշարսկու մի լողարձակ (փակ) նամակը<sup>5</sup>, ուր հետաքրքիր տեղեկություններ կան թե՛ «Գեղարվեստը կյանքի համար» ձեռագրի և թե՛ արտասահմանյան նորությունների մասին, 1914-ից:

Ծահումյանի փնձ վերաբերյալ հոդվածի մասը կտրում եմ պապկայից և ուղարկում Զեղ՝ կտրած տեղը լրացնելու համար: Նույնը և «Նոր խոսք» ամսագրում (№ 5—6) լույս տեսած Կարինյանի հոդվածը, որը Զեր գրադարաններում հաղիվ գտնեք:

Խնդրում եմ գրեք, ե՞րբ լույս կտեսնի «Գրական թերթի» այն համարը, ուր պիտի տպագրվեն Ծահումյանի, Ամիրյանի, Ազանեգրու, գուցեն և լուսաշարսկու (փակ) նամակները<sup>6</sup>:

Ես ուղարկ էի Զեղ ուղարկել այն ժուռնալները, որոնց շապիկների վրա տպված են իմ լուսանկարները, բայց մեկ էլ մտածեցի, գուցեն այդ բանը ինքներդ անեք այդտեղ. օրինակ՝ շապիկի տուշին բաց երեսում կան իմ պատկերներից.

1). «Գրական դիրքերում» ամսագրի № 5-ում, 1927 թվի, Երեւան:

2) «Պրոլետարական գրողներ» գրքույթի երեսում, Հրատ. 1927-ին, Երևան:

3) «Խորհրդային արվեստ» № 1 (4), 1933 թ., Երևան:

4) «Արշավ», Թիֆլիս, Սախելգամի, ամսագրի № 2 (9—10) 1933 թ.:

5) «Գրուճ» № 10—11, 1934 (նկար՝ Կարաբովի և այլն), Թիֆլիս:

Զեր վերջին հարցին, թե արդյոք իմ բյուստի հեղինակը Գոգոլի արձանը բանդակո՞ղն է Մոսկվայում, հաստատ ու անսխալ պատասխան տալ չեմ կարող: Բյուստը, Ա. Մյասնիկյանի հանձնարարությամբ, պատվիրեց Ս. Խանոյանը, հարցրեք նրանից:

Զերմ ողջույններով՝

Հ. Հակոբյան

## 38. ԽՈՐԵՆ ՍՍ.ՐԳՍՅԱՆԻՆ

ԹԻՖԼԻՍԻՑ—ԵՐԿԱՆ

25/Դ, 1934,

ԹԻՖԼԻՍ

Սիրելի ընկեր Խորեն Սարգսյան

Ճշտվում է իմ հնիքաղբությունը այն մասին, թե կորել է Զեզ  
գրած մի նամակս, ուր Ամիրյանի և այլոց նամակների առթիվ բա-  
ցատրություններ ունեի ուղարկած Զեզ։ Ստիպված եմ նորից  
կրկնել։

Ամիրյանի գովաստական խոսքը վերաբերում է իմ այն նա-  
մակին<sup>1</sup>, որ ես գրել էի նրան իր հաշումը Հոդվածների առթիվ։  
«Պայքար» թիրթի 1916 թվականի № Ն-ում նա ունի բավականաշատ  
շահեկան տողեր, ուր խարազանում է սպեցիֆիկ կոչեցյալ ազ-  
գային սոցիալ-դեմոկրատների վնասակար գործունեությունը, նույ-  
նը և դաշնակների վերաբերյալ, որոնց առթիվ ես իմ գոհունակու-  
թյունը հայտնեցի նրան և ցանկություն հայտնեցի, որ նման ոգով  
և ուղղությամբ հոդվածներ նա շատ տա մեր իդեական հակառա-  
կորդների հասցեին։ Դուք դիտեք, որ ընկեր Ամիրյանը տաղան-  
դավոր, սրատես և սրամիտ քննադատ էր առհասարակ։ Բրո ձեմո  
Տուա\*-ի մասին մնացել է աղոտ հիշողություն։ Ես ակնարկել էի  
գրել և ընթերցողի սեփականություն դարձնել մամուլի միջոցով  
այն դիսկուսիաների մասին, որը նա վարում էր Բարվում էսեռնե-  
րի, դաշնակների, մենշևիկների ու սպեցիֆիկների հետ։ Այսքանը  
Ամիրյանի մասին։

Աղա Նեղրին գովում է իմ երկու պրակ իրանից թարգմանած

\* Լատ. «Ի՞ր տան համար», իրեն պաշտպանելու համար, անձնական գործի  
համարը

50 ոտանավորների աշխատանքը և իմ թարգմանությունները համարում լիրիկական։ միաժամանակ շնորհակալություն հայտնում այն ողեռության համար, որ ես զգացել եմ նրա գործերը թարգմանելու միջոցին։ Այդ ոգևորության մասին մի նամակով արտահայտեցի իրեն ու այդ արտահայտությունը նա համարում է ձռն։

Հնկեր Խանոյանը Թիֆլիսում չէ։ Բացի այդ, հաղիվ թե նա հիշի բյուստի հեղինակի անունը։ Հայտնի է ինձ այն միայն, որ քրուստիս հեղինակը 10 տարի է ինչ ապրում է Մոսկվայում, իսկ Թիֆլիսում 1922 թվից ուներ ատելին և գործարան։

Պատրաստ են ուղարկելու համար և զդիտեմ կհասցնեմ արդյոք ցուցահանդեսին (ամսույս 26—27-ին) հետեւյալ իրերը։

1. Արասխանյանի «Մուրճ»-ի 10-ամյակի առթիվ նրա աշխատակիցների խմբանկարը 38 հոդաց, ուր մտնում են՝ Դ. Աղայան, Ա. Խաչակրյան, Փափազյան, Դ. Գևմիրճյան, տողերիս գրողը, Մ. Պետրոսյան, Լևոն Մանվելյան, Բաշինջաղյան և այլք։

2) Մի խմբանկար հոբելյանական մասնաժողովի անդամների, Բաթումում, 1924 թվին։

3) Մի խմբանկար Հայաստանից եկած պատգամավորների՝ Անդրերկրյան համագումարին մասնակցելու։

4) Մի խմբանկար — պիտոներական իմ անվան օդակի — Ալեքսանդրով, 1924 թվին և մյուսն էլ Կարա-Մուրզայի խմբակի բացիկը։

5) Մի խմբանկար Սեմաշկոյի հետ, նրա առժողովոմ եղած ժամանակ։

1) Նամակներից ուղարկում եմ Ա. Լունաշարսկու մի փակ նամակը Փարիզից։ Եթե որևէ կիտ պարզ չինի համար՝ դրեցեք, կբացատրեմ։

2) Ա. Բողդանովիլի «Կարմիր աստղ» և «Ինժեներ Մենսի» ուսուպիա-ուժմանների հեղինակի մի բացիկը — 1913 թվից։ Բացի կում խոսվում է «Ինժեներ Մենսի» ուժմանի ավարտման մասին։

3) Միասա-Ցիամկայայի մի բացիկը, որին ժնել էի ուղարկել մի քանի օրինակ «Նոր առավոտ» նոր լույս տեսած պոեմիցու մոնդրել, որ մի օրինակ էլ ուղարկի Մաքսիմ Գորկուն։

Ապա կստանաք։

1) «Հեղափոխական բեմ» ժողովածուիս շապիկի նկարը — գործ Լ. Ա.-ի։

2) Երկու ձեռագիր ոտանավորներ, հանած իմ օրագրերից 1887 թվի։ Այս ոտանավորները գեռ լույս շնն տեսած ոչ մի տեղ։

3) Ստացեք Աղա Նեգրու Ա. պրակի ձեռագիրը, Քանի որ Ա.

պրակից ևս անկարող եղա ուղարկել Զեզ գոնե մի օրինակ, ուղարկում եմ ձեռադիրս իմ առաջարանով, ուղղումներով և այլն:

4) Զէի ուղում բաժանվել, բայց քանի որ ուղում եք, ուղարկում կ' Ա. Կարինյանի № 5—6 «Նոր խոսք»-ում գրած քննադատականը իմ և Վ. Տերյանի մասին «Քաղաքի երգիչներ» վերնագրով, որի առթիվ Ս. Շահումյանն ասել էր՝ «լավ հոգված է»:

Ուղարկում եմ նաև պրոֆեսոր ու քննադատ Վ., Կորյանի նամակը, որը նոր ստացա «Սոցարշավ» թերթի հետ, որի այս №-ը նվիրված է Խ<որհրդային> Հայաստանի 13-րդ տարեդարձին:

Ամենից հետաքրքիրը, իմ կարծիքով, այն տետրն է, որ ուղարկում եմ Զեզ: Հիշողությունների ու բանաստեղծությունների մի ձոն է այդ, որ նվիրել են ինձ այս վերջին 10 տարումս մեր պոետները, կոմամոլները, աշակերտությունը, պիտներները: Լավ կղիներ, որ սրան կցվեր և այն հուշերը իմ մասին, որ ունի ուղարկած Պետքանդարանին ալոլիտ-կատորժանին Վասիլի Խաչատրյանը, երբ ևս 1914—1917 թվականներին նրանց ուղարկում էի լեզաւ-անլեզաւ գրականություն՝ Սիրիր:

Maestro Թաղեռոսյանի նկարով հիացած են բոլոր նրանք, որոնք սեսան այդ նկարը:

Բուռն ողջույններով՝

Հակոբ Հակոբյան

## 39. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՒ

ԹԻՖԼԻՍԻՑ—ԵՐԵՎԱՆ

5/II, 1934,  
ԹԻՖԼԻՍ

Սիրելի ընկեր Խորեն Սարգսյան

Այսօր ստացա Ձեր նամակը, որով Հայոնում եք իմ ցուցա-  
հանդեսի բացման մասին:

Այսօր միաժամանակ հետ ստացա Ձ. Բերեզովսկու երկու ձե-  
ռագիր նամակները, անշափ շնորհակալ եմ: Ես դեռ առիթ կունե-  
նամ նրա նամակներից ուղարկել Ձեզ<sup>1</sup>:

Անմիջապես Ձեր երկու նամակից հետո մի նամակ էլ ստանում  
եմ Խորհրդային Միության Օրդ. կոմիտեին կից Սովետական Գրող-  
ների СССР-ի ժողովուրդների գրական սեկտորից, որով նրանք  
խնդրում են ինձ ուղարկել. 1) ինքնակենսագրականս, 2) լուսա-  
նկար, 3) բանոր գրքերիս ցանկը ու նրանցից կատարած թարգմա-  
նությունները, 4) և այլ գոկումնեներ, որոնք բնութագրել կարող  
են իմ ստեղծագործությունները: Այս նյութերը նրանք ուղարկեմ են  
պահել գրական թանգարանում, որպեսզի Մոսկվայի քննադատ-  
ները, գրականագետներն ու բանասիրները կարողանան օգտվել  
նրանցից և իրենց այդ աշխատանքների շնորհիվ կարողանան ծանո-  
թացնել սիստեմատիկարար եղբայրական հանրապետությունների  
գրողների արտադրությանց հետ:

Երբ ստացա ես այդ նամակը՝ մտածեցի, փառագ եմ ես  
ուղարկել Հիմա, մանավանդ երբ իմ լավ բարեկամ և սիրելի Խո-  
րեն Սարգսյանը արդեն կարգին «կողոպտել է» ունեցածս նյութի-  
րի ներեք քառորդը՝ Խորհրդային Հայաստանի Պետքանգարանի  
գորսկան սեկտորը հարստացնելու համար:

Որոշեցի գրել Ձեզ և ասել.

Սիրելի Խորեն, լավ Խորեն, եթե ուղարկած նյութերիս մեջ կրկնուրյուն գտնեք մի լուսանկարի, մի գրքի, մի ձեռագրի, մի նյութի, բարի եղեք այն վերադարձնել ինձ, գուցե նա ավելի լինի պետքական Մոսկվայի ոռու գրողների ու մուզեյի համար, քան Հայ-  
<աստանի> Պետքանգարանի համար...

Հիմա կասեք. Հակոբ Հակոբյանը կամաց-կամաց հետ է վերց-  
նում իր ուղարկածները... Քավ լիցի... Բոլոր ուղարկածներիս  
իրավասու տերը հիմա Զեր Պետրանդարանն է. կուզեք կկատարեք  
խնդիրս, չէ՞ չէ՞: Ես Զեր ուշադրությունն եմ հրավիրում լրագրի  
այն Աների վրա, որոնցից կարող էի Զեր կրկնակի ուղարկած  
վինել կամ այն քննադատականների վրա, որոնց ուսական տեքս-  
տը կարող էր ձեզ իսկի էլ պետք շդալ, մանավանդ, որ այնտեղ  
կան դրանց կրկնօրինակները:

Օրինակի համար՝ Դուք կարող էիք, բոլորովին շվնասելով Զեր  
ունեցած նյութերի ամբողջությունը, ինձ վերադարձնել մեքենայով  
արտատպած Կարինյանի հողվածը, որը լույս է տեսել ուսական  
«Օկտյաբր» ժուռնալի Ա 11-ում, 1928 թվին: Այդ հողվածի նման մի  
հողված Կարինյանը ունի գրած ուսերեն, լենինգրադյան «Կрас-  
հայ գազետա»-ի Աներից մեկում<sup>2</sup>, որը նույնպես ուղարկած եմ Զեզ:   
Մոսկվայի քննադատների ու բանասերների ուսումնասիրության  
համար, ուղարկած՝ մեքենայի վրա տպված քննադատությունը,  
ավելի շատ հետաքրքիր, ավելի օգտակար կլինի, քանց եթե այդ  
նույն նյութը մեռած տառի նման ընկած մնար մի անկյունում ու  
փոշոտվեր: Դուք, որպես թանգարանի սպեց և գնահատող, կհաս-  
կանաք այս նրբությունը և կընդառաջնեք ինձ իմ արդարացի խընդ-  
ռի մեջ:

Այսուհետեւ, թույլ տվեք ներողություն խնդրել իմ անհամբե-  
րության և երեկվա կոպիտ արտահայտած մի ոճիս համար, որին  
փոխարինում եմ ահա թե ինչով. տո՛, եղբա՛յր, սոված մնացինք  
Զեր նամակներից, գրելուց գոնե մի քիչ մանրամասն, մի քիչ եր-  
կար գրեցեք, էլի՞: Այդքա՞ն էլ ժլատություն:

Պատասխանեցե՛ք. սպասող նամակիդ՝

Հակոբ Հակոբյան.

## 40. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ԹԻՖԼԻՍԻՑ—ԵՐԵՎԱՆ

25/II, 1934.

ԹԻՖԼԻՍ

ՍԻՐԵԼԻ ընկեր Խորեն Սարգսյան

Մանոթացա իմ պատվին կազմակերպած ցուցահանդեսի Զեր ուղարկած ֆոտոնկարների հետ։ Պիտի վկայեմ, որ այս գործի կազմակերպման մեջ Դուք ցուցադրել եք մասնագետին հատուկ մեծ շնորհք, ճաշակ և հմտություն։

Մի բաց, սակայն, որ ինձ վիշտ պատճառեց, այդ այն էր, որ Ա. Վ. Կոմաչարսկու պատկերը բացակայում էր այն քննադատների ու բարեկամ-ընկերների մեջ, որ վերաբերում է «Կենսագործություն» բաժնին։

Չտեսա կախված (պատից) նաև Լեբեդիկի նկարը, Ա. Գորոցկու ինձ նվիրած բանաստեղծության ձեռագիրը, կենինսականույն գտնվող կավե բյուստը։

Կիսնդրեի Պետթանգարանի լուսանկարչին, որ Զեր համաձայն ուղյամբ ու կարգադրությամբ, փհարկե, մի-մի օրինակ այս ֆոտոնկարներից հաներ և ուղարկեք Մոսկվայի Խորհրդային գրողների Կազմ-կոմիտեին կից մուզեյ, որը ունի մեր Միության մեջ գտնվող ազգությունների գրական սեկտոր։ Այդ սեկտորի համար նաև ուղարկել եմ Զեր նրանց նամակի հետ։ Կրկնեմ նորից։  
Москва, ул. Воровского 52, Оргкомитет ССП СССР, Сектор литературы народов СССР.

Նախ՝ այդ կլինի մի ուրախալի սյուպարիզ սեկտորի համար՝ 2-րդ՝ թող տեսնեն, թե ինչե՞ր է անում փոքրիկ Հայաստանը Խորհրդային Միության ազգությունների մեջ։

Իշարկե, ուղարկած ֆոտոները գաղափար տալ ցուցահանդե-

Թի մասին՝ չեն կարող, մնում է, որ կարդամ «Գրական թերթի»  
գնահատականը, որին սպասում եմ, և խնդրում, որ այդ Ն-ից  
մի օրինակ սեփական ձեռքով բանդերով շինեք, ուղարկեք ինձ:

Զերմ ընկերական ողջուններ՝

Հակոբ Հակոբյան

Պ. Տ. Ընկեր Խորեն, կարծում եմ Հարկը պահանջում է, որ  
Եղ. թաղևոսյանի նկարի հաջող ֆոտո-նկարից մի օրինակ էլ  
ուղարկեք իրեն՝ հեղինակին:

Հ. Հ.

## 41. ԳԱԼԻՉԱՆԻ ԴՊՐՈՑՍԱԿԱՆՆԵՐԻՆ

ԹԻՖԼԻՍԻց—ԴԻԼԻԶԱՆ

<Գարուն, 1934>

Դիլիջանի 2-րդ աստիճանի դպրոցի 5-րդ խմբի սաներին

Սիրելի քալիկներ

Զեր թռչնանման երգի քաղցրահնչյուն ձայնը հասավ ինձ: Գեղեցիկ բնության գրկում ապրողը միայն կարող է այնքան գեղեցիկ արտահայտվել: Եթե ասեմ՝ շնորհակալ եմ ձեր անաղարտ և մաքուր սրտից բխած զգացմունքների համար, ուղղած ինձ, դա շատ քիչ կլինի: Ես երջանիկ եմ նրանով, որ իմ ցանած սերմերը անպտուզ չանցան: Նրանք կրթում ու սնում են երրորդ սերունդը՝ նախ և ետ հեղափոխության, ու պայքարելու համար պատրաստում նոր կաղրիր:

Ճշտվում է ընկ. Լունաշարսկու և այլ քննադատների այն ասածը իմ մասին, թե ես «քախտավոր պոետներից մեկն» եմ<sup>1</sup>, որովհետեւ կենդանությանս օրերին քաղում եմ աշխատանքներիս քաղցր պտուղը: Այդ քաղցր պտուղը, ահա, սեղանիս վրա գրած ձեր անհուն զգացմունքներով և ոգեսրությամբ գրած չերմ ողջույններն են, այլև այն վկայությունը, թե իմ երգերը հույզ և թափ են լցնում ձեր սրտերը և սովորեցնում ձեղ, թե ինչպես պետք է լծվել կարմիր Հայրենիքի սոցիալիստական հսկա շինարարությանը:

Ցնծությամբ սեղմում եմ բոլորիդ ձեռքը և ցանկանում ձեզ աճել ու բարգավաճել այնշափ, որքան կարող է գոհ լինել մի սուցիալիստական երկիր իր կարմիր զավակներից:

Պատվիրում եք ապրեմ ձեզ համար... Ուրախությա՞մբ.

Կապրեմ ու կաշխատեմ սիրելի բալիկներիս համար, մինչ որ գուցե և այս մայիսին մի երկու օրով հանդիպենք Դիլիջանում:

Հ. Հակոբյան

42. ՄԱՆԴԱՏՈՒՅՑԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՔԻՆ

Թիֆլիսից—Եռոկլա

25. VIII. 1934

Москва

Всесоюзный съезд советских писателей

Мандатная комиссия

Большевистское спасибо за приглашение на съезд. Болезнь мешает меня возможности приехать для участия в работе.

Восхищением слежу за плодотворной работой съезда. Горячий привет участникам съезда.

Народный поэт Грузии и Армении

Акоп Акопян

Մոսկվա

Սովետական գրողների Համամիուրենական համագումար  
Մանդատային հանձնաժողով

Բոլշևիկյան շնորհակալություն Համագումարին հրավիրելու համար: Հիվանդությունը ինձ խանգարում է զատ՝ աշխատանքներին ժամանակցելու համար:

Հիացմունքով հետեւում եմ Համագումարի արդյունավետ աշխատանքին: Զերծ ողջույն Համագումարի մասնակիցներին:

Վրաստանի և Հայաստանի ժողովրդական բանաստեղծ՝

Հակոբ Հակոբյան

## 43. ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆՈՒՆ

Թիֆլիսից—Երևան

<Աշուն, 1934>

### Սիրելի Ազատ

Ահա տւղարկում եմ «Խ<որհրդային> Արվեստ»-ում տպագրեցւ Համար իմ Հուշերից մի բեկոր, զլխալորապես Հանճարեղ արտիստ Աղամյանի մասին<sup>1</sup>:

Շատ գժվար է, մոտ կես դար անցնելուց հետո, հիշել բոլոր այն դետալները ու նյուանները, որ եղել են Հանճարեղ տրագիկի խաղի մեջ, այնուամենայնիվ այն մանրամասնությունները, որ տվել եմ այս Հուշերում, կարող են կլասիկ գերեր խաղացող մեր արտիստներին որոշ ծառայություն մատուցել, իսկ նորեկ սերնդին ծանոթացնել իր մեծանուն արտիստի հետ:

Ես Հույս ունեմ, որ Հուշերիս առաջին գլուխը՝ դեղատան մասին, դուրս չես ձգի, քանի որ նա կապ ունի այն Հանդամանքի հետ, թե ինչպես էի ես ծլկվում թատրոն՝ դեղատան նկուղի պատռհանից:

Զերծ ողջուններ Նաիրի Զարյանին, Նորայր Դարայյանին՝ Քո, Հակոբյանից

## 46. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Թիֆլիսից — Երևան

31/III. <19> 35.  
Թիֆլիս

### Սիրելի ընկեր Խորեն Սարգսյան

Հաստ շնորհակալ եմ իմ նոր, փառահեղ հատորի<sup>1</sup> շնորհաւորանքի համար։ Անշուշտ զոհ եմ Պետքատի շանքերից, մանավանդ Հ. Կոջոյանի գեղեցիկ, գեղարվեստական վառ գույներով ձեփավորումից։ Դա հիշեցնում է իմ «նոր առավոտի» ձուլարանի պատկերը, բացեղեն, չեռուն իր վագրանով։ Միայն մի քիչ կազմն է բարակ և կլեննկան մոխրագույն, որ դիստանս է մտցնում ընդհանուր ներդաշնակության մեջ։

Ընկ. Մկրտչյանի առաջարանը լավ է, սակայն տեղ-տեղ հակասությունները աշքի են զարնվում։ Ինչ կնշանակի՝ «Հակոբյանը Գեղագոխական ոռմանտիզմի ներկայացուցիչ է... Նա ոչ լիրիկ է, ոչ էպիկ...»։ Եթե ոչ լիրիկ եմ, ոչ էպիկ փնշպե՞ս կարող էի հեղափոխական ոռմանտիզմի պոետը լինել... Հետո շատ է ձգձգված, մեծ տարածության վրա հատ-հատ ծաղիկների երփներանգությունը անհետանում է։ Եթե հոգվածը լիներ խտացած, այդ ծաղիկները կփնեն գոճեղ և իրենցից կներկայացնեին մի սիրուն դորդ։

Մոտս հավաքված արժեքավոր դոկումենտներից առայժմ ուղարկում եմ երեքը՝ Պետ. թանգարանի իմ բաժնում պահելու համար<sup>3</sup>, Մեկը այն, որ համամիութենական գրողների համագումարը ինձ հեռագրով հրավիրում է Մոսկվա՝ մասնակցելու համագումարի աշխատանքներին, բայց հիվանդության պատճառով հրաժարվում եմ գնալ Մոսկվա։ Բայց ինձ ընտրում են պրեզիդիումի և վարչության անդամ՝ Համամիութենական գրողների միության։

2-րդ գոկումենտը՝ իմ անունով Երևանում փողոց անվանելու  
որոշումն է Քաղխորհրդի կողմից: Զարաձճիություն եմ արել մի  
էպիգրամ գրելու այդ որոշման տակ, որովհետև մինչ օրս էլ փողո-  
ցը մնացել է առանց նիշի<sup>4</sup>:

3-րդը՝ այս տարի ինձ Անդրկենտգործկոմի անդամ ընտրելու  
ժաման: Իմ մահից հետո ՅԱԿ-ի ինձ ուղարկած նշանը, մանդա-  
տըն ու գրքույզը կդառնան Պետթանդարանի սեփականություն:

Նամակիս, Ցույս ունեմ, կպատասխանեք:

Հերմ բարեներով  
Զեր Հակոբ Հակոբյան

47. ԺԱՍՏԵՆԻՆ  
Թիֆլիսից — Բաքու

<Ապրիլ, 1935>

Баку

Дворец имени 26, Армянский театр

Заслуженная артистка Жасмен — радость краснознаменного театра армянской сцены Баку.

Поздравляю отныне народную артистку Жасмен по случаю 25-летия творческой работы на сценах Сов<етского> Азербайджана.

А. А.

Բաքու

26 կոմիսարների անվան պալատ, Հայկական քառորդ

Վաստակավոր դերասանուհի Ժասմենը Բաքվի կարմրագործ թատրոնի հայկական բեմի ուրախությունն է:

Ծնորհավորում եմ այսօրվանից ժողովրդական դերասանուհի Ժասմենին՝ Սովետական Ազգի համբաւում կատարած ստեղծագործական աշխատանքի 25-ամյակի կապակցությամբ:

Հ. Հ.

## 48. ԽՈՐԵՆ ՍԱՐԳԱՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

3/V. <19><sup>35,</sup>  
Թիֆլիս

Իմ լավ բարեկամ Խորեն Սարգսյան

Որքան էլ զբաղված ըինեք, ևս Զեզ պիտի այս անդամ մի նեղություն տամ ու խոստանամ, որ նման տված նեղությաներս Զեզ՝ այլևս չեն կրկնվի:

Ես նոր, այս քանի օրերս պատմեցի Զեզ իմ ծանր, հիվանդագին գրության մասին, այն կոշմարային գրության մասին, որ ապրում եմ ահա երրորդ տարին: Ասացի, որ ո՛չ հանգիստ ունեմ, ո՛չ քուն, ո՛չ քայլերու, զրոսներու ընդունակություն, որովհետեւ քայլերուց շուտով հոդնում է հիվանդ սիրտս և շունչս կտրվում, ինձ խեղդում, չարչարում՝ գիշերները մանավանդ, վատ եղանակներին առավելապես, և այնպես բղավել տալիս, կարծես իրոք երկաթե մատներով մարդ են խեղդում: Պատմեցի և այն մասին, որ ուտում եմ՝ վա՛յ է, չեմ ուտում՝ դարձյալ վա՛յ է... իսկ իմ ուտելն ի՞նչ է... մրգեղեն, կաթնեղեն, կանաչեղեն, ամիսը մի քանի անդամ ձուկ, հավի միս — մնացածը արգելված է... եվ չնայած այս թեթև անունդին, և չնայած իմ սակավապետության, այնուամենայնիվ, իմ զիափրագման բարձրանում, ճնշում է սկլերոզով հիվանդ սիրտս և մորթվող անասունի նման բղավել տալիս, մանավանդ՝ գիշերները:

Այդպես, ո՛չ հանգիստ, ո՛չ քուն ունեմ, որ տառապանքներից համգուտանամ, ո՛չ ուտել, որ սնունդս չպակասի ու արյունս բոլորովին չսառչի, ո՛չ ուժ ու սիրտ, որ կարողանամ դուրս գալ վտաղոց, զրոսնել: Թատրոն գնալու, ժողովներ ու բջիջներ հաճախելու մասին խոսք լինել չի կարող: Ծանր, թանձր օդից ու ծխից սիրտս

նվազում է, ես ինձ պահպանում եմ մազից կախվածի պես. մի անգույշ քայլ և հայդա, կկտրվի՞մազի թելիկը և Հակոբյանը այլ և չկա...

Ես Զեղ ասել էի, որ այս գրությունը շարունակվում է անփոփոխ աշա երեք տարի է, որի ընթացքում ամեն օր սպասել եմ, թե՝ հա՞-հա՞ կմեռնեմ... Մահու աշքին նայել եմ իմ հանգուպն, զայրացած աշքերով, շնայած այնպիսի համաշխարհային պրոֆեսորի՝ Պլետնկի գուշակմանը, թե ես պիտի մեռած լինեի շտարի սրանից առաջ... Ի նկատի ունենալով այն, որ համաշխարհային գիտնականը չի սխալվի, ես լարեցի վերջին մնացած մտավոր ուժերու. կազմեցի իմ ստեղծագործությունների երկրորդ հատորը, ժողովեցի նյութեր Յ-րդ հատորի համար, որ համաշափի է Պետրատի <լույս ընծայած> առաջին հատորին. գրեցի հուշեր արտիստ Պետրոս Աղամյանի, Գամառ-Քաթիպայի, Ղազարոս Աղայանի, Պերճ Պոռշյանի, Հովհաննես Թումանյանի, Նար-Դոսի, Արծրունու, Արասիսանյանի և այլոց մասին, որոնց հետ շփվել, կովել, հաշտվել և բարեկամ եմ եղել: Իմ այդ օչերկ-հուշերին տվել եմ բոլորովին այլ գույն ու երանդ. նրանք տարբերվում են Շիրվանդսդեմ հուշերից նրանով, որ հիշածս կլասիկներից ամեն մեկին մոտեցել եմ դասակարգային տեսանկյունով: Այդ հուշերը՝ նոր մշակած, բարեփոխած և գեղեցկացրած 15 պատմվածքիս հետ՝ «Ազիտատորի հուշերից» վերնագրով՝ կազմում են իմ արձակ երկերի հատորը:

Այդպես, վախենալով, որ շուտով պիտի մեռնեմ (վախ՝ ոչ թե մահից, այլ նրանից, որ կիսավարտ պիտի մնան գրական երկերիս ու աշխատանքներիս հատորները) ես հիվանդ, կիսամեռ զրովթյան մեջ երեք տարի շարունակ, կազմեցի բանաստեղծություններիս առաջին հատորը՝ Յ-րդ հրատարակությամբ ու լրացրած, որը լույս ընծայեց Պետրատը՝ նկարիչ Հակոբ Կոչոյանի տաղանդավոր վրա ձինի գեղարվեստական ձևավորումով. պատրաստեցի ու մշակեցի Յ-րդ և Յ-րդ հատորները, որ սպասում են հրատարակության և... Հիշտ խոստովանում եմ՝ նոզնեցի. Հոգնեցի ոչ թե ես, հոգնեց ոչ թե ուղեղս, որը գեռ գործում ու կտրում է ալմաստի նման, այլ մաշված սիրտս, որը հեռում է ու տնբում իմ բանաստեղծությունների մեջ նկարագրած բանվորական մի կոլեկտիվի նման, բայց չի հոգնում, չի հոգնում...

Այս մայիսի Յ-ին լրանում է իմ 69 տարին ու այլևս գրելը դժվարանում է ինձ համար, թեև հենց այսօր 6 երեսից բաղկացած

մի նոր վարդանոտ գրեցի մանկության և իմ ստացած «դաստիարակության» մասին՝ մեր ընտանիքում:

Ե՞նչ է ինձ մնում անել սրանից հետո՝ կարդալ, կարդալ և նորից կարդալ ու դրանով սպառել իմ մնացած ամիսները կամ տարիները կյանքի, այլևս ոչինչ չգրել, չհոգնեցնել պարագիշի ենթակա սիրուս:

Ես Զեր Պետթանդարանի համար ինչ կարողացա արի, ինչ ունեի տվեցի, Դուք էլ կատարեցեք իմ խնդիրը, քանի որ այլևս ծերությունից ստիպված անկարող եմ գրական-ստեղծագործական գործեր կատարել՝ ինձնից, իմ կամքից անկախ պատճառներով գոնե ապահովեցրեմ ինձ Հայաստանում լույս տեսնող մամուկի և գրականության ստացումով, որոնք կարող են փնձ համար մխիթարական լինել կյանքիս վերջին օրերին:

Իմ խնդիրն է Զեղ՝ ուղարկել ուսուլա-ով «Խորհրդալին գրականություն», «Խորհրդալին սերտնդ»<sup>2</sup> ամսագրերի առաջին համար ներից սկսած մինչև այսօրվա Ն.-ները, մանավանդ «Խորհրդալին գրականության» շորս նախկին Ն.-ները, «Գրական թերթը»՝ կանոնավոր և՝ «Խ-*որհրդալին*» Հայաստանը»:

Այդ թերթերի վճարը, մի տարով, ստացեք խնդրեմ ընկ. Զո՞ր փուրյանից՝ իմ հոնարարի հաշվին:

Զերմ բարեներով՝

Հ. Հակոբյան

## 49. ԱՐԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս

<նոյեմբեր, 1935>

Ընկեր Աղասի

Ուղարկում եմ «Արևի ու Աշխատանքը» ավելի մշակված, հղկը-ված ու լրացրած: Խնդրում եմ շուապ ավարտած առաջին ձեռագիրը ուղարկեք բիջա Հովհաննեսի միջոցով, իսկ այս ձեռագիրը, որտեղ մակաղբած կլինի՝ «շարել այսինչ (շղատառ, կամ № 10) տառով», զետեղել պողվարում՝ երկու սյունակը մեկի վերածած: Մակագրած այդ ձեռագիրն էլ կիսնդրեի վերադարձնել ինձ, որովհետև պիտի ուղարկեմ Հայաստանի Պետական մուզեյը. ինձնից խնդրել են ուղարկել վերջին զործերից մեկի ձեռագիրը, ես էլ որոշել եմ ուղարկել «Արևի ու Աշխատանքը»:

Հետո, ո՞չ մի փոփոխություն, ո՞չ մի ուղղումն: Պետք է վերջ տալ խմբագրական կարմիր մատիտին իմ վերաբերյալ: Ես երեկվա սկսնակ զրոյներից չեմ, որ ենթարկվեմ ամեն տեսակ ուղղումների. ուսիրիս վրա լրիվ 42 տարվա դրական ստաժ ունիմ... ու իմ ինքնատիպ, ինքնուրույն ոճը, ստիլը: Երդվում եմ, որ սա կլինի իմ վերջին աշխատակցությունը «Պրոլետար»-ին, եթի մի որևէ ուղղումն թույլ տաք այս գործի մեջ՝ առանց իմ համաձայնության:

Ինչ վերաբերում է վառան, սահմանի, նոսք բառերին, ապա ես դրանցից երկու վերջինները վերցրել եմ Հայաստանի Պետքրատարակչության բառարանից, իսկ «վառան» խոսքը, որ նշանակում է ՃՈՄԱ, ինքու եմ Ճորինել, փնչպես առաջին անգամ Հորինել եմ ու գործադրել իմ ստեղծագործության մեջ բափանիլ (մախովիկ), շողեմուր (паровой молот), ջրշափ (водомерное стекло), կարպավար (кочегар), մուրճիար (молотобоец), ինքնաշարժ (автомо-

бил), թրամ (трамвай), ջրբնկեց (водопад), վերհիան (подъемный кран) և վերջապես ըստ թերթի անունը — Պրոլետար, որ՝ որքան էլ քրքրեն՝ հայ գրականության մեջ, այդ խոսքը 1905 թվականից առաջ չեն գտնի, իսկ ես այդ պրոլետար խոսքը իմ կուսակցական ծածկանումն եմ դարձրել դեռ 1904 թվին, իսկ գործ ածել առաջին անգամ 1902 թվականին, Աղա Նեգրիի թարգմանության առաջաբանում:

Հ. Հակոբյան

## 50. ԽՈՐԵՆ ՍԱՐԳԱՅԱՆԻՆ

Թիֆլիսից—Երևան

1936, Հունվարի 3.  
Թիֆլիս

Սիրելի ընկ. Խ. Սարգսյան

Այսօր շնորհակալությամբ ստացա՞ Պետական Գրական թանգարանի ցուցահանդեսի պրոլետ-գրականության բաժնի լուսանկարների 4 օրինակ: Դժբախտաբար այնտեղ ես զգություններից պատճենած և թանգարանին նվիրած իմ պատկերը (գործ՝ Թաղմույանի): Խնդրում եմ երկու խոսքով բացատրեք սրա պատճառը:

Թիֆլիսում Կուլտուրայի տան հիմնադրության կապակցությամբ, ես պետք է Զեղ խնդրեմ, որ նկարիչ եղ. Թաղմույանի այդ նկարը վերադարձնեք Թիֆլիսին, իսկ օրիգինալը, որի նկարիչն է Ս. Լյուբիմովը, և որը առաջմմ գտնվում է իմ տանը, համարեք Երևանի Պետ. թանգարանի դրականության բաժնի սեփականությունը: Իմ այս կտակը, այս յուղանկարի վերաբերյալ, անխախտ է ու այս նամակը Զեղ փրալունք է տալիս իմ ժառանգներից վերցնել ու Երևանի Գրական թանգարանին նվիրել իմ այս մեծագիր նկարը՝ մահից հետո:

Նույն փրալունքով կտանեք «Արարատ» յուղանկարը, որը որպես նվիր ստացել եմ իրեն նկարչից՝ Գ. Բաշինչաղյանից:

Երբորդ նվիրս Երևանի թանգարանին՝ այդ Կորովինի մի յուղանկարն է ինձ նվիրած նկարիշ Բրոդսկու կողմից: Թե՛ «Արարատ» և թե՛ Կորովինի մենավոր գյուղի նկարների հետևում կան մակարություններ նվիրողների կողմից:

Հ-րդ նվիրս մի փղոսկրյա դանակ է, թուղթ կտրելու համար՝ կոթը ոսկի և արծաթի կապերով ամրացրած: Ոսկե կապի վրա

գրած է ԱԿՈՊՅԱ, արծաթի կապի վրա. «Մեռան-Հիորան» և Հակոբ Հակոբյան:

5-րդ նվերս մի պողպատե մուրճ է և մի զնդան, որ նվեր ստացա Յօ-ամյա հորելյանիս՝ նախկին Ալեքսանդրապոլի, այժմյան Լենինականի, դեպոյի բանվորությունից:

6-րդ նվերս մի նիկելով ծածկած ոելլս է, վրան թվագրած՝ «1897 թիվ», որը որպես նվեր ստացա Կարապետով-Բերիժանովի գործարանի բանվորներից, ուր ծառայում էի Հաշվապահի պաշտոնով:

7-րդ նյութական նվերս՝ իմ ոսկե ակնոցը, իր ոսկե բարակ շղթայով, որը 1923 թվին նվեր ստացա Վրաստանի պլրոքմիության նախադաշտությունից:

8-րդ նվերս, մի զնդան, նույնակես նվեր: Այս զնդանը սեղանիս վրա է, ինչպես և սեղանիս վրա է ոելլսը՝ նիկելյան — վրան գրած՝ 1897 թիվը:

9-րդ նվերը՝ ա) Լուսաշարսկու նկարը՝ իրեն մակադրությամբ, բ) Սրուս Ռուսանյանի նկարը՝ իրեն մակադրությամբ, գ) Քանդակադրությանի նիկոլաձեի հետ հանված նկարը, դ) Գյոթեի երիտասարդական հասակի նկարը, ե) Վերջարնի նկարը, զ) Լենինի նկարը շրեղ շրջանակում, է) Հին բոլշևիկների միատեղ հանված նկարը Կիսլովոդսկում, ը) Ընկ. Շահսուլարյանի, ընկ. Խաչատրյանի հետ առանձին-առանձին դեպքերում հանված լուսանկարները, թ) Մենցեի «Բանվոր»-ի խոշոր լուսանկարը լավ շրջանակում, ժ) «Գործադրություն» գարձյալ լավ շրջանակում:

Այս բոլոր նյութական թանկարժեք իրերը պետք է պահպեն մի առանձին սենյակում, հատկացրած իմ արխիվին, ինչ խոսք, որ իմ կուս՝ ակցական՝ տոմսը 1904 թվից, իմ տոմսը Համամիութենական Հին մեծամասնականների միության № 1566, իմ ՅԱԿ-ԱԿԻԿ-ի տոմսը № 238, 1935 թվից, որպես Անդրֆեդերացիայի կառավարության անդամ, նույնակես մնում են թանգարանիդ սեփականություններ:

Առայժմ այն, ինչ հիշեցի: Հետագայում, անշուշտ, երբ կհանդիպենք իրար, այս ցուցակի մեջ կմտցնենք նոր իրեր, ինչպես, օրինակ, ընդհատակլա օրերից մնացած ատրճանակս, ձեռագիրներ, դրեր, զրասեղանս, զրադարանս և այլն: Իմ ցանկությունն է, որ Գրական թանգարան տեղափոխվի ամբողջ սենյակիս աշքի ընկնող արդ ու զարդը, պատկերները, գորգն ու աթոռները ու թանգարանի մի սենյակը, ուր դասավորվելու հն իմ իրերը, այցե-

լուին այնպես պատկերանա, որպես թե նա մտել է իմ աշխատանքի կարինեաը կենդանությանս օրերի սարք ու կարգով:

Այսպես, իմ այս կտակը, օրինական պիտի համարել այն դեպքում, Կոր հիշածս նվերների համար Երևանի Պետական Գրական թանգարանը կհատկացնի առանձին սենյակ, որպես հայ պրոլետ<արական> պոեզիայի հիմնադրի: Հակառակ դեպքում՝ իմ սենյակից ոչինչ գուրս չի հանվի այլես և այս սենյակը կմնա որպես Պետ. թանգարանում իմ արխիվի մի ֆիլիալը մինչև, հարմարություն ստեղծելը Գրական թանգարանում:

Հակոբ Հակոբյան

Օ. Տ. Իմ գրական հարստությունը ամբողջովին նվիրում եմ Խորհրդային Հայաստանի Թանգարանին և իմ ժառանգները իրավունք չունեն պրետենզիա հայտնելու ոչ մի դեպքում:

Հ. Հ.

## 51. ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԲԻՖԼԻԱ

<Մարտ, 1937>

### Սիրելի Մադար

Ծանր հիվանդությանս պատճառով չեմ կարող ներկա լինել Հոքելցանիդ: Թուզը տուր համբուրեմ քեզ և ցանկամ գրական բեղմնավոր գործունեություն ապագայում եմ:

Մադա'թ, դու եղել ես բանվոր, փականագործ, խառաս և այլն. դանաղան բարդ բանալիներով բացել այս կամ այն դուռը ու փականքները, հղել այս կամ այն մերենայի պղնձե մասերը, փայլ, ձեւ ու բովանդակություն ավել նրան:

Ես ցանկանում եմ, որ գրական ասպարեզում ես գտնեմ մի այնպիսի բանալի, որն ընթերցողի առաջ բացեր սոցիալիստական կյանքի կատարելագործված պատկերները և կոմունիստական իրականության նախատիպարը:

Հակոբ Հակոբյան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ  
ԿՈՄԵՆՏԱՐՆԵՐ

ՀԱՍՈՐՈՒՄ ԿԻՐԱԾԱԿԱՌ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՀՀ—Հ. Հակոբյան, «Եղիտատորի հուշերից», 1927:

Աշխ—«Աշխատանք»:

Գ Արշ—«Գրական արշավ»:

Գ Բ—Գրականության և արվեստի թանգարան:

ԳԲՀՀա—Գրականության և արվեստի թանգարան, Հակոբ Հակոբյանի արխիվ:

ԳՄ—«Գրական սերունդ»:

ԳՐԲ—«Դարրհոց»:

ԵՀՀ—Հակոբյան, «Երկեր», 1951:

ԽՂ—«Խորհրդային Ղարաբաղ»:

ԿԾ—«Կարմիր ծիլեր»:

ԿՐ Աստ—«Կարմիր աստղ»:

ԿՕ—«Կարմիր օրեր»:

Հ. Հ.—Հակոբ Հակոբյան:

ՀԱԲ—«Հոսանք»:

ՄԿ—«Մեր կյանք»:

ՄԿՀ—«Մարտակոլ»:

ՄՃ—«Մուրճ»:

ՄՀՀ—«Մշակ»:

ՆԴ—«Նոր գար»:

Ն. ՌԻԴ—«Նոր ուղի»:

ՈՀԿ—«Պահակ»:

ՊՐՈԼ—«Պրոլետար»:

ՊՔԲ—«Պայքար»:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՒՍԱՆԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

### ՆԱՄԱԿ ՀԱԶԻՔԵՆԴԻՑ

(էջ 9)

Հակոբ Հակոբյանի տպագրված առաջին ծավալուն հոդվածն է: Գրված է 1890 թ. հունիսի 21-ին, Գանձակի (այժմ՝ Կիրովաբադ, Ադրբեյջանական ՍՍՌ) Հաշիբենդ գյուղում:

Առաջին անգամ տպագրվել է Մշ. 1890, № 85, Հ. Հ. ստորագրությամբ:

Հետագայում հեղինակը արտադրել է տվել թերթից, վերանայել է արտադրածը և պատրաստել տպագրության՝ կցելով հետեւ ծանոթությունը: «Տպագրում եմ անփոփոխ իմ առաջին թղթակցությունը» (ԳԹՀՀ առ 222):

Տպագրված է այդ տեքստը:

1. Նկատի ունի «Գյուղական տպագրություններ» հոդվածը, ուր խոսվում է Գանձակի մի շարք գյուղերի բնակչության հիմնքի, կենցաղի, սովորությունների մասին (տե՛ս Մշ. 1890, № 75, 76, 77, 78):

ԲԱՆՎԱՐՆԵՐԻ ՀԱՎԱԶԱԿԱՆ ԱԳԱՀԱՎԱՅՐԻ ՈՐԻՌԱՍՏԱՆՈՒՄ  
ԳԺԲԱՆԱՏ ԳԵԳԲԵՐԻՑ

(էջ 12)

1894 թ. Թիֆլիսում հրատարակվող «Մուրճ» ամսագիրը տպագրում է մի հրավեր, ուր կոչ է անում արտահայտվել ապահովագրության մասին Խուսաստանում (տե՛ս ամսագրի 1894 թ. № 4, էջ 575): Արձագանքելով այդ կոչին, Հ. Հ.-ը զբում է «Բանվարների հավաքական ապահովացումը Խուսաստանում գժրախառ դեպքերից», բնդարձակ հոդվածը, որը տպագրվում է Մճ. 1894, № 5, 6, 7: Հետագայում, նպատակ ունենալով առանձին հատուրով լույս ընծայել իր արձակ գրվածքները, Հ. Հ. այդ հոդվածից վերցնում է նրա միայն առաջին մասը, ներածականը, կամ, ինչպես ինքն է ասում՝ «առաջարանը», որը արտագրել է տակին ամսագրից, անձամբ ստուգում, շտկում, կատարելով որոշ մասնակի փոխհանչելուններ, կցում իր «Ճանոթությունը» և պատրաստում տպագրության (ԳԹՀՀ առ 216):

Տպագրվում է այդ տեքստը:

(էջ 16)

Գրված է 1896 թ. Թիֆլիսում:

Հեղինակի խոսապահությամբ հանդիսանում է նախորդ հոգվածի լրացույցը՝ Առաջին անգամ տպագրվել է Մհ. 1896, № 7—8, էջ 952—957 և № 12, էջ 1556—1562, որտեղից և արտատպվում է:

1. Նկատի ունի իր նախորդ հոգվածը:

2. «Страховое обозрение»—Ապահովագրական հարցերին նվիրված ամսագիրը Լույս է տեսել Ս. Պետերբուրգում, 1890 թվականից, Ս. Մ. Բունակովի խմբագրությամբ:

3. «Страховые ведомости»—Նույնական ապահովագրական հարցերին նվիրված երկշաբաթաթերթի Լույս է տեսել Ս. Պետերբուրգում, 1890 թվականից, Վ. Շավրենտեկի խմբագրությամբ:

### ԱԶԳԱՅԻՆ, ԹԵՇ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՊԲՈՑ

(էջ 27)

Գրված է 1906 թ. Հունիսին, Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցի հոգաբարձության ընտրությունների շուրջը տեղի ունեցած վիճարանությունների առթիվ:

Ուշագրավ է, որ նույն ժամանակ, մի այլ պարբերականում, հանդեռ է գալիս նաև Սուրբն Սպանդարյանը և մի այլ առիթով զարդացնում է բոլշևիկյան տեսակետը դպրոցական հարցերում (տե՛ս «Փարոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան» հոգվածը, «Առոր խոսք», 1906, № № 3, 4, 5, 6): Այդ տեսակետն է պաշտպանում նաև Հ. Հ.-ը:

Առաջին անգամ, Credo ստորագրությամբ, տպագրվել է Աշխ. 1906, Հունիսի 14, № 19, որտեղից և արտատպվում է:

1. Ներսիսյան դպրոցը հիմնագրվել է 1821 թ. Թիֆլիսում: Պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1824 թ. գեկտեմբերի 1-ին: Դպրոցի առաջին փաստական տեսուչը եղել է Հարություն Ալամզարյանը (1796—1834), թեև նա կոչվել է «վերակացու»: Դպրոցում սովորել են բազմաթիվ հայ ականավոր գրողներ ու գրական-հասարակական գործիչներ: Դպրոցը գործել է մինչև 1921 թ.:

2. Բաստիլ — Հուշակավոր ամրոց և բանտ Փարիզում, հիմնագրվել է 14-րդ դարում:

3. «Новое время»—Մայքրանգ ուսակցություն օրաթյուրի: Լույս է տեսել 1868—1917 թթ., Ս. Պետերբուրգում: 1876 թվականից ուսած թերթը խմբագրում էր ռեակցիոն միավանական հրապարակախոս Ս. Ս. Սուվորինը:

4. «Московские ведомости» թերթը լույս է տեսել 1756—1917 թթ. Պետերբուրգում: Վ. Ա. Գրինգմուտի խմբագրության ժամանակ (1906—1908 թթ.) թերթը սկսարդութափային ուղղություն ուներ:

5. XIX դարի 90-ական թվականներին ռեակցիոն քուրժուական ժամանությունը հարք հոգվածներ է տպագրել, որոնց մեջ հոգվածագիրները փորձել են հայ ժողովուրդը ներկայացնել որպես «վաճառական ազգ»: 1896 թ. Ա. Ն. Սաղոնովը հանդես է եկել այդ հոգվածների դեմ, հատկապես նկատի ունենալով «Новое время»-ի 1896 թ. № 7302-ում տպագրված հոգվածը: Սաղոնովն իր հոգվածում,

օգտագործելով պաշտոնական վիճակագրական տվյալները, ապացուցում է, որ հաւաքի մեծագույն մասը (85%/<sup>o</sup>) գյուղացիներ և արհեստավորներ են և միայն չնշին մասն են կազմում կայսածատերները, Հոգևորականները, առևտրականները, շինովնիկները և այլն: Հ. Հ. նկատի ունի Ս. Ն. Սաղոնովի հոգվածը, որը վերնադրված է «Несколько цифров об армянах на Кавказе» և տպագրվել է «Русская мысль» ամսագրում (1896, № 9, էջ 58—73 և № 10, էջ 159—173):

#### ՊՐՈԼԵՏԱՐԻ ՀԻՇԱՍՏԱԿԱԲՈՒՆԻՑ

(էջ 33)

Գրված է 1906 թ. նոյեմբերին, Թիֆլիսում:

Առաջին անգամ, Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է Հար, 1906, № 1, որտեղից և արտատպվում է:

Հոգվածում նշված գեղաքերի մասին առատ նյութեր կան ժամանակի «Մշակ» և մյուս թերթերում:

1. Հունական էպոսում՝ «Ելիական»-ում պատմվում է, թե իբրև երկար ժամանակ պաշարելով Տրոյան և Հիառողանալով այն գրավիլ, հույնները դիմում են խորամանկության, նրանք փայտից մի հոկայական ձի են պատրաստում և նրա մոհ տեղափորելով բան քան գաղաքան այս նետածիգներ՝ ձին թողնում են Տրոյաի զարպանների մոտ: Զկրահելով հույնների միտքը, տրոյացիները ձին քաղաք են տեղափոխում: Գիշերով ձիու ներսից գուրք են գալիս հույն զորականները և քաղաքի դարպանները բացում յուրացինների առջև, այս հանգամանքը պատճառ է դառնում տրոյացիների պարտության և քաղաքի կործանման:

#### ԲՅՈՒՐԱԿՐՈՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԻ ԱՐԴԱՐԱՆՈՒՄ Է

(էջ 38)

Գրված է 1907 թ. Հունվարին, Թիֆլիսում, չորրորդ Պետական դումայի ընտրությունների կազմակցությամբ, որոնք տեղի են ունեցել 1906 թ. վերջերին: Սյստեմատիկան և սահմանադրության մասին Հ. Հ.-ը գրել է նաև «Ենչակես Ա. Զոհրաբյանը դարձավ Պետական դումայի անդամը» (ՎՃ, 1920, № 5) և «Երկրորդ Պետական դումայի անդամը» (ՎՃ, 1927 թ.):

Առաջին անգամ, Credo ստորագրությամբ, տպագրվել է Հար, 1907, № 52, որտեղից և արտատպվում է:

#### ՋՈՐՃԵՐԻ ՄԱՆԵՖԵՍՏԱՅԻԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(էջ 40)

Գրված է 1917 թ. մարտին, Թիֆլիսում, վիետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռեզուլյուցիայից հետո, մարտի 12-ին Թիֆլիսում տեղի ունեցած երթի և զորահանդեսի կապակցությամբ:

Առաջին անգամ, Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է ՊԺ, 1917, № 12, որտեղից և արտատպվում է:

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՏՈՆԸ

(էջ 43)

Գրված է 1917 թ. մարտին, Թիֆլիսում, փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռեպուլինացիայի օրերին զոհված մարտիկների հիշատակին նվիրված միտինգի կապակցությամբ:

Առաջին անգամ, Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է Պքր, 1917, № 14, որտեղից և արտատպվում է:

## ԽՆՁՆ ԵՆ ՏՈՆՈՒՄ

(էջ 46)

Գրված է 1918 թ. փետրվարին, Թիֆլիսում:

Առաջին անգամ, Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է Թիֆլիսի «Բանվոր» բոլշևիկներին թերթի 1918 թ. փետրվարի 27-ի համարում, որտեղից և արտատպվում է:

1. Անգրկովկասպան Սեյմը պետական իշխանության այն օրդանն էր, որ կազմվեց 1918 թ. փետրվարին՝ վրաց մենշևիկների, հայ դաշնակցականների և աղջրեցանական մուսավաթականների համաձայնությամբ: Իր ամբողջ էությամբ կոնտրռուլուցին այդ Սեյմը ցրվեց 1918 թ. մայիսի 26-ին:

## ԲՆԿԵՐ ԻԼԻՆՈ ՍԼԵՐԹԱԱԶԵՐ ՀԻՇԱՏԱԿԻՒՆ

(էջ 48)

Գրված է 1918 թ. փետրվարին, Թիֆլիսում, վրացի բոլշևիկ հ. Սլահրթաձեկ (18.-1918) մաշվան առթիվ:

Առաջին անգամ, Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է «Բանվոր», 1918, № 2, որտեղից և արտատպվում է:

## ԽԱՂԱԳՈՒԹՅՈՒՆ ԷՍՏՈՆ ԿԱՌԱՎԱԾԲՈՒԹՅԱՆ ՀԵՏ

(էջ 49)

Գրված է 1920 թ. հունվարի 4-ին, Թիֆլիսում, նույն թվականի հունվարի 3-ին Սպահական Ռուսաստանի և էստոնիացի միջև սաղմական գործողությունները գաղարեցնելու առթիվ:

Առաջին անգամ, Տրիբուն ստորագրությամբ, տպագրվել է Պհկ, 1920, № 3, որտեղից և արտատպվում է:

## Մ Ա Մ Ա Կ

(էջ 50)

Գրված է 1920 թ. հունվարի 5-ին, Թիֆլիսում:

Ուղղված է դաշնակցական «Աղյուսակավոր» օրաթերթի (1917-1920) դեմ, որի իր հակատին դրոշմելով «զյուզացիական և բանվորական օրաթերթ» ֆրազը, քո-

Դարկվելով ինտերնացիոնալիստական լոգունգներով, փաստորեն՝ իր սկզբնավորման-օրից մինչև վերջ, հանդիս էր գալիք որպես յանվորների ու աշխատավորների թշշ-նմամի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի հակառակորդ և բուրժուազիայի շա-հերի կատաղի պաշտպան:

Առաջին անգամ, Տրիբուն ստորագրությամբ, տպագրվել է Պհկ, 1920, Ա 4, որտեղից և արտատպվում է:

### ԱՆՏԵՐԻ ՎԱԼՈ

(էջ 52)

Գրված է 1920 թ. հունվարի 11-ին, թիֆլիսում և ուղղված է Անդրկովկասի կոնտրաելեցիոն բուրժուական մամուլի դեմ, մասնավորապես՝ գաշնակցական «Աշխատավոր»-ի:

Հոգվածի սկզբում ակնարկվում է այն փաստը, որ բոլշևիկյան «Պահակ» թերթի նախորդ համարներում ևս տպագրվել են այդ մամուլի մերկացմանը նվիր-ված Հոգվածներ (օրինակ՝ Ա 3):

Առաջին անգամ, Տրիբուն ստորագրությամբ, տպագրվել է Պհկ, 1920, Ա 8, որտեղից և արտատպվում է:

### ԶԵՐ ՃԻԳԵՐԸ ԽՋՈՒԹ ԵՆ

(էջ 54)

Գրված է 1920 թ. հունվարի 16-ին, թիֆլիսում:

Առաջին անգամ, Տրիբուն ստորագրությամբ, տպագրվել է Պհկ, 1920, Ա 12, որտեղից և արտատպվում է:

1. Խոչա, մուֆրի, ուլեմ, սոֆրի—Մուսուլմանական կրոնա-աշխարհիկ կո-չումներ են:

2. Համբարձումիզմ, պահիստամիզմ, պահութիզմ — Մուսուլմանական կրո-նա-քաղաքական ռեակցիոն ուսմունք, որը քարոզում է բոլոր մուսուլմանների միավորումը խալիֆի իշխանության տակ: Խմբերիալիստական ագրեսորները այդ ուսմունքն օգտագործում են իրեն գենք՝ Սովետական երիտասարդ պետության դեմ,

### ՀԵՐԹԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱԼԻՆ Է

(էջ 55)

Գրված է 1920 թ. հունվարին, թիֆլիսում:

Առաջին անգամ, Հ. ստորագրությամբ, տպագրվել է Պհկ, 1920, Ա 12, որ-տեղից և արտատպվում է:

1. 1920 թ. հունվարի 2-ին Սովետական Ռուսաստանի Արտաքին գործերի ժողովրդական կոմիտար Գ. Զիշերինը ուղիուհեռագրով դիմել է Վրաստանի և Ադրբեյչանի կառավարություններին՝ առաջարկելով զինվորական համաձայնություն կնքել՝ Դենիկինի դեմ միատեղ պայքարելու համար:

ԹԵ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԵՆՉԿԻԼՆԵՐԸ և ՅԵ ԱԳՐԲԵԶԱՆԻ ՄՈւսավաթականները մերժել են Սովետական կառավարության առաջարկը: Պէկի-ի 1920 թ. № 10 և 12-ում տպագրված են Վրաստանի և Ագրբեզանի Արտաքին գործերի մինիստրներ Գեղեցկորու և Խոյսկու պատասխանները Զիշերինին: Հ. Հ.-ը այս հոդվածը գրել է հենց Խոյսկու պատասխանի առիթով:

ԲԹԱՄՏՌՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՝ ՔՄՆԱՆՔ

(էջ 60)

Գրված է 1920 թ. Հունվարի 24-ին, Թիֆլիսում:

Առաջին անգամ, Տրիբուն ստորագրությամբ, տպագրվել է Պէկ, 1920, № 17, որտեղից և արտադրվում է:

ԵԵՅԹԱՆՑ ՄԵՅԻՍՏՈՅԵԼԻ ԶԴԵՇՏՈՒՄ

(էջ 62)

Գրված է 1920 թ. Հունվարի 31-ին, Թիֆլիսում:

Առաջին անգամ, Տրիբուն ստորագրությամբ, տպագրվել է Պէկ, 1920, № 23, որտեղից և արտադրվում է:

1. Խոսրվ ոռուսական առաջին ռեռլուցիայի ժամանակ ցարիզմի ու նրա տեղական ստորապների կազմակերպած ալյանտյուրաների մասին է, երբ ցարական միապետությունը, իր պրովինցիալուրի օգնությամբ, սկսեց Ռուսաստանի ժողովուրդներին զրգուել միջյանց զեմ, կազմակերպելով հրեական չարգեր և հայ աղբբեչանական կոտորածներ: Բարգում այդ նզրայրասպան ընդհարումների կազմակերպիչներից մեկն էր Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն:

ԸՆԿԵՐ ԱՆԻՍԻՄՈՎԻ ՀԵՇԱՄԱՆԻ

(էջ 64)

Գրված է 1920 թ. Պատմություն:

Առաջին անգամ տպագրվել է ԿՕ, 1920, № 5, որտեղից և արտադրվում է:

ԸՆԿԵՐ ԱՂԱՍԻ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՆԱՀԱՏԱԿԻՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

(էջ 65)

Գրված է 1920 թ. մարտին, Թիֆլիսում, բոլշևիկ Աղասի Շահինյանի (1889—1919) մահվան տարելիցի առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Ն. Ռոդի, 1920, № 1, որտեղից և արտադրվում է:

(էջ 67)

Գրված է 1920 թ. մետրվարի վերջերին, Թիֆլիսում, ուղղված է մենշևկեան «Յանձնագրությունների նոթեր» վերնագրով Հոգվածների ժողովածուի գեմ, որը լույս է տեսել 1920 թ. և որ հոգված ունի մենշևկեանների պարտիայի հայտնի լիդերներից մեկը՝ Լյուբով Իսասկովնա Ակսելրոդը (Օբթուքորս, 1863—1946):

Առաջին անգամ տպագրվել է Ն. Ուզ, 1920, № 1, որտեղից և արտատրագում է:

ՈՐԻՆ Է ԲՈԼՇԵՎԿԻՆԵՐԻ ԵՎ ՊԱՆԻՍԼԱՄԻՍՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

(էջ 68)

Գրված է 1920 թ. մարտին, Թիֆլիսում:

Առաջին անգամ տպագրվել է Ն. Ուզի, 1920, № 2, որտեղից և արտատրագում է:

### ՄԻԱԿ ԵԼՔԸ

(էջ 71)

Գրված է 1920 թ. մարտին, Թիֆլիսում:

Առաջին անգամ, իրեն առաջնորդող, անստորագիր, տպագրվել է Ն. Ուզ, 1920, № 3: ԳԹՀՀ առ 918 պահպատ և թիրթի այդ համարը, որից պարզվում է, որ հոգվածը պատկանում է Հ.-Հ.-ի գրչին:

Արտատրագում է Ն. Ուզ-ից:

### ՍՊԵԿՈՒԼՅԱՑԻԱՆ ԱՆԳԻԿՈՎԿԱՆԱՌԻՄ

(էջ 73)

Գրված է 1920 թ. մարտին, Թիֆլիսում, ընդդեմ Վրաստանում մենշևկեանների վարած տնտեսական քաղաքականության:

Առաջին անգամ, Տրիբուն ստորագրությամբ, տպագրվել է Ն. Ուզ 1920, № 3 և № 4, որտեղից և արտատրագում է:

1. Ակնարկում է ոռու մեծ գրող Ա. Պ. Զեխովի (1860—1904) «Պատենապոր ժարդը» հաշակավոր պատմվածքում նկարագրվող քաղաքը:

### ՈՂՋՈՒՅՆ ԱԶԱՏԱԳԻՎԱԾՆԵՐԻՆ

(էջ 79)

Գրված է 1920 թ. գեկտեմբերին, Թիֆլիսում, 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայոց տառանում Սովորական իշխանություն հաստատվելու պատմական ակտի առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1920, № 2, որտեղից և արտագում է:

1. Ֆրանսիական բանաստեղծ Պիեր Ժան Բերանժեի (1780—1857) «Աղքամ» կին» բանաստեղծության տողերն են՝ Միքայել Նալբանդյանի թարգմանությամբ:

2. Նկատի ունի Հայաստանում Սովորական իշխանության հաստատման համար մղված պայքարի հերոսներ Ալավերդյանի, Մուսավելյանի, Ղարիբջանյանի, Սեւանի, Փանջանի, Սարուխանյանի և մյուս սեռուցիոներների շարաննենգ սպանությունները, որ կազմակերպում էր գաշնակցական հակառակույցներին կառավարությունը: Բաղդասարովը գաշնակցական կառավարության զվարարությունը կատարուել եղել:

### «ԱՇԽԱՏԱՎՈՐԸ» ԱՇԽԱՏԱԽՄ է...

(Եջ 81)

Գրված է 1920 թ. դեկտեմբերին, Թիֆլիսում, իրրե մամուլի տեսություն:

Առաջին անգամ, անստորագիր, տպագրվել է Կր Աստ, 1920, № 4: ԳԹՀՀ № 918-ում պահպատմ է թերթի այդ օրինակը, որտեղ հոգվածի տակ Հ. Հ.-ը սոսորագրել է:

Արտատպվում է Կր Աստ-ից:

1. Արևելյան ժողովուրդների աշխատավորական համագումարը հրավիրվել է III հնտերնացիոնալի Գործադիր Կոմիտեի նախաձեռնությամբ, 1920 թ. սեպտեմբերի 1-ին, Բաքվում:

2. Նկատի ունի Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քահանջիրի (Աթաթօւրք, 1880—1938) հեռագրերը՝ ուղղված Սովորական երիտասարդ կառավարությանը, որը հանդս էր գալիս ազգային-զաղության ննշումների գեղմ Արևելքում (տե՛ս, օրինակ, «Կոմունիստ» (Երևան), 1920 թ., № 2):

### ԱՄԵՆ ԻՆՉ ՆՈՐԻՑ

(Եջ 83)

Գրված է 1920 թ. դեկտեմբերին, Թիֆլիսում:

Առաջին անգամ, Տրիբուն ստորագրությամբ, տպագրվել է Կր Աստ, 1920, № 5, որտեղից և արտատպվում է:

1. Խմանական Անտանտի դրդմամբ, 1920 թ. օգոստոս ամսին, գաշնակական «կառավարությունը» պատերազմ սկսեց Թուրքիայի զեմ, որի հետևանքով թուրքական զորքերը նորից մտան Հայաստան և, առանց գաշնակցության կողմից լուրջ դիմադրության հանդիպելու, զրավեցին Սարիղամիշը (սեպտեմբերի 13-ին), Կարսը (Յոկտեմբերի 30-ին), Ալեքսանդրապոլը (Նոյեմբերի 5-ին) և սպառնալիքի տակ գրին երևանը: Ազգերի կրթային, եկրոպական և ամերիկյան ողեմուկրատիզմին» ուղղված գաշնակների բոլոր հուշագրերը անպատճան մնացին, գաշնակական կառավարությունն սկսեց շատու կերպով Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելու ճանապարհներ որոնել:

Սովորական Ադրբեյչանից Հայաստանի տերիտորիան մտած 11-րդ բանակի օգնությամբ Հայաստանի աշխատավորները 1920 թ. նոյեմբերի 29-ին տապալեցին գաշնակական «կառավարությունը» և դուրս քշելով գաշնակներին՝ Հայաստանում հաստատեցին սովորական կարգեր:

2. 1917 թ. դեկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին) ի. Վ. Ստալինի գլխավորությամբ կազմակերպվում է ՌՍԴԲՄ Ազգությունների Գործերի ժողովրդական Կոմիսարիատը, և դրան կից Հայկական Գործերի Կոմիսարիատը, որը աշխատել են մի խումբ հայ կոմունիստներ, դրանց թվում և բանաստեղծ Վ. Տերյանը Հայկական Գործերի Կոմիսարիատը կատարել է նաև մարքսիստական գրականությունը հայերեն թարգմանելու և տարածելու կարենոր աշխատանքը: Օրինակ՝ Վ. Տերյանը թարգմանել է՝ Վ. Ի. Լենինի «Կարլ Մարքսի կենսագրությունը» և «Պետություն և հեղափոխություն» կլասիկ աշխատությունները:

Այստեղ Հ. Հ.-ը նկատի ունի այդ և նման թարգմանությունները:

3. Государственное издательство (Февральская демократическая литература)—Здание Академии наук СССР в 1919 г. майю 21-ին Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմитетի որոշմամբ՝ ՌՍԴԲՄ Առուսական ժողովրդական Կոմիսարիատին կից:

## ՀԱՅԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

(էջ 86)

Գրված է 1921 թ. մարտի 1-ին, Թիֆլիսում, Վրաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ տեղի ունեցած զորահանդեսի տպավորության տակ:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 2: Թերթի իր սեփական օրինակի վրա Հ. Հ.-ը հետագայում որոշ փոփոխություններ է կատարել (Գթ 22ա № 918):

Տպագրվում է այդ տեքստը:

## ԿԱՐՄԻՐ ԴԵԲԵՋԱՆՆԵՐ

(էջ 88)

Գրված է 1921 թ. մարտին, Թիֆլիսում, այն մարտիկների հիշատակին, որոնք 1921 թ. փետրվարի 28-ին, Վրաստանում Սովետական իշխանության հաստատման համար մղված մարտերում ընկել են Կոչորի բարձունքներում և որոնց հանդիսավոր թաղումը կատարվել է նույն թվի մարտի 5-ին, նախկին Ալեքսանդրյան այգում:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 4, որտեղից և արտադրվում է:

## ԽԼԵԿՈ ՄՊԵԼԱԶԵ (ՔՅՈՒՆՈՂԱԿԻ)

(էջ 90)

Գրված է 1912 թ. սեպտեմբերի 11-ին, Թիֆլիսում:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 158, որտեղից և արտադրվում է:

1. Հայ նշանավոր բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանի «Երկու քույլը» բանաստեղծության երկրորդ տողը:

## ԳԱՐԶՅԱԼ ՍՈՎԻ ՄԱՍԻՆ

(էջ 92)

Գրված է 1921 սեպտեմբերին, Թիֆլիսում:

1921 թ. ամռան սաստիկ երաշտի հետևանքով, Սովետական Միության ամենահացառատ շրջաններից մեկում՝ Մերձվոլգյան երկրամասում, գրեթե բիրք վըստացվեց: Քաղաքացիական պատերազմի ժամը տարիներից հետո, դա մեծ աղետ էր, որի հետևանքը եղավ սովոր այդ շրջանում: Սովետական երիտասարդ պիտությունը, առանց գրսի օգնության, վերացրեց սովոր, զարմանք պատճառելով բուրժուական երկրների շատ գործիչների, որոնք, ինչպես Հ. Հ.-ի հիշատակած ֆրանսիական ռեակցիոն գործիչ Ժոզեֆ Նուլանսը (1864—1939), շարախնդում էին սովոր առթիվ: Սովոր մասին ժամանակի պարբերական մամուլում, այդ թվում և Կը Ասու-ում, տպագրվել են մի շարք հոգվածներ, ուստի և Հ. Հ.-ը իր հոգվածը վերնագրել է «Փարձյալ սովոր մասին»:

Առաջին անգամ տպագրվել է Կը Ասու, 1920, № 162, որտեղից և արտադրական է:

1. Պոլետարիատի միջազգային հիմնի «Բնութերնացիոնալ»-ի (խոսք՝ ֆրանսիական պոետ Ռուժե Դիլի) կրկներգի տողերը՝ վերցրած հայերեն առաջին թարգմանությունից, որ կատարել է Հ. Հ.-ը 1905 թվին (տե՛ս Պեղյանաւ, — Ճեղքափոխական երգեր», 1907 թ., նաև՝ սույն հրատարակության I հատորը):

2. Ելյա Մուրոմեց — Ռուսական հաշակավոր էպոսի՝ «Բըլինա»-ների կինոթրոնական հերոսը, որը հանդիսանում է ուսւած ժողովրդի համարական ուժի մարմնացումն ու անպարտի իության սիմվոլը:

## ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒԲԵՂԱՅՈՒՄԸ

(էջ 94)

Գրված է 1921 թ. սեպտեմբերին, Թիֆլիսում, «Կուսակցությունը սոսուգելու» վերաբերներու և մաքրելու մասին» ԲԿ(Բ)ԿԿ-ի 1921 թ. հունիսի 5-ի որոշման առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Կը Ասու, 1921, № 164, որտեղից և արտադրական տպագրում է:

## ԱՆՄԱՀԱՅԱՄ ՔԱԱՆԵՎԱՅԻՑ

(էջ 96)

Գրված է 1921 թ. սեպտեմբերի 20-ին, Թիֆլիսում, Բաքվի 26 կոմիսարներին նահատակման եռամյա տարեղարձի առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Կը Ասու, 1921, № 165, որտեղից և արտադրական տպագրում է:

1. Ամիրան — Անվանի ռեռլուցիոներ Արսեն Ամիրյանի (1878—1918) ծածկանուններից մեկն է եղել:

(էջ 98)

Գրված է 1921 թ. սեպտեմբերի 20-ին, Թիֆլիսում:

Առաջին անգամ, Հակ.—Պրոլետար սովորագրությամբ, տպագրվել է Կր Աստ, 1921, № 166, որտեղից և արտատպվում է:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԶՈՐԱԲԱՆԱԿԻ

(էջ 100)

Գրված է 1921 թ. սեպտեմբերի 21-ին, Թիֆլիսում, 1918 թվին կազմակերպված XI բանակի եռամյա տարեգարձի առթիվ: XI բանակը 1921 թվին վերանվանվել է «Կովկասյան Առանձին Զորաբանակը»:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 166, որտեղից և արտադրվում է:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԶՈՐԱԲԱՆԱԿԻ ՏՈՆԸ

(էջ 102)

Գրված է 1921 թ. սեպտեմբերի 22-ին, Թիֆլիսում, Կովկասյան Առանձին Զորաբանակի կազմակերպման եռամյա տարեգարձին նվիրված զորահանդեսի առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 167, որտեղից և արտադրվում է:

ԽՈՍՔԻՑ ԴԻՊԻ ԳՈՐԾ

(էջ 104)

Գրված է 1921 թ. սեպտեմբերին Թիֆլիսում, Գավառական Հեղկումների (ՀՀ-ի ափոխական Կոմիտեների) մասին նույն թվականին հրատարակված կառավարական հրահանդների առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 168, որտեղից և արտադրվում է:

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 5-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԼ

(էջ 106)

Գրված է 1921 թ. սեպտեմբերի 25-ին Թիֆլիսում, ականավոր ռեռլյուցիոներ Սուրեն Սպանդարյանի (1882—1916) ժահկան տարեգարձի առթիվ: Ս. Սպանդարյանի մասին Հ.-ը ունի նաև այլ հոգվածներ՝ «Մի էջ Սուրենի կյանքից», Պր, 1916, № 38, «Սուրենը բողոքի և կուի մարմնացում», Մկը, 1925, № 222 և այլն:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1921, № 169, որտեղից և արտադրվում է:

1. Նկատի ունի Ս. Սպանդարյանի և լուրջը թիֆլիսի գատառանական պարագաների հատուկ առյանի գունդակ նիստում, որը տեղի է ունեցել 1913 թ. մայիսի 15—17-ը (2—4-ը), և որ Սպանդարյանը 102-րդ հոգվածի 1-ին մասով գատառագույն է, ցմահ աբորի:

#### ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՊԱՆԵՐԸ ԳԵՌ ՊԱՀԱՉՈՒՄ ԷԼ ԵՆ

(էջ 108)

Գրված է 1921 թ. սեպտեմբերի վերջերին թիֆլիսում: Գրության առիթն այն է, որ լեհական շլյախտան, չնայած 1920 թ. հոկտեմբերի 20-ին նիգայում կնքված հաշտության պայմանագրին, որի համաձայն Դալիցիան և Բելոսուսիայի մի մասը մնաց լեհաստանին, ձգում էր խախտել պայմանագիրը, պահանջելով ընդարձակ կել իր տերիտորիան ի հաշիվ Սովետական Ռուսաստանի, հակառակ գեազընդունակով սահնակերծել նոր պատերազմ:

Առաջին անգամ, որպես առաջնորդող, բայց Հ. Հ.-ի ստորագրությամբ, տպագրվել է Կր Աստ, 1921, № 170, որտեղից և արտապահում է:

#### ՍՐԾԱՎԱՎ ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԸ

(էջ 110)

Գրված է 1921 թ. հոկտեմբերին, թիֆլիսում:

Առաջին անգամ, Հակ — Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է Կր Աստ, 1921, № 174, որտեղից և արտապահում է:

#### ԱՇԽԱՐՁԻ ԱՄԵՆԱՄԵՇ ՏՈՆԸ

(էջ 113)

Գրված է 1922 թ. նոյեմբերին, թիֆլիսում, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 5-րդ տարեդարձի առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Կր Աստ, 1922, № 252:

Տպագրված օրինակը հեղինակը հնտագալում արտագրել է տվել, անձամբ սուուղել և պատրաստել տպագրության (ԳԹՀՀ № 217):

Տպագրվում է այդ տեքստը:

#### ՄԵՐ ԱՆՑԱՌ ՈՒՂԻՆ

(էջ 116)

Գրված է 1923 թ. մարտի 14-ին, թիֆլիսում:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1923, № 14:

Տպագրված օրինակը հետագայում հեղինակը արտագրել է տվել, անձամբ վերանայել, սուուղել և պատրաստել տպագրության (ԳԹՀՀ № 130): Այս օրինակը տպագրվել է Ե, 1951, էջ 475—476:

Տպագրվում է հեղինակի պատրաստած տեքստը:

## ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(էջ 119)

Քրված է 1923 թ. ապրիլի 30-ին, Թիֆլիսում:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1923, № 54:

Տպագրված հետագայում հեղինակը արտադրել է տվել, վերանայել, ստուգել և պատրաստել վերատպագրության (ԴԲՀՀա № 95): Այդ օրինակը տպագրուցել է օ, 1951, էջ 471—474:

Տպագրվում է հեղինակի պատրաստած տեքստը:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

(էջ 125)

Քրված է 1923 թ. մայիսի 20-ին Թիֆլիսում, Զաթախի գործարանի բացման առթիվ, որը տեղի է ունեցել նույն օրը, ժամը 1-ին, ելույթ են ունեցել Ս. Օրջոնիշիձեն, Ֆ. Մախարաձեն և շատ ուրիշներ (տե՛ս ՄԿՀ, 1923, № № 70 և 71):

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1923, № 70, որտեղից և արտատպվում է:

## ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱԿ

(էջ 132)

Քրված է 1923 թ. Հունիսին, Թիֆլիսում, 1918 թ. Հունիսի 17-ին Գուշեթիում ապած և վրացական կսեռա-մենշեկիկյան կոնտրուելյուցին կառավարության կողմէց զամանորեն ճնշված գյուղացիական ապատամբության հինգերորդ տարեդարձի առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1923, № 94, որտեղից և արտատպվում է:  
1. Հ. Հ.-ի «Մեռան» չկորան» բանաստեղծության տողերը:

## ԱՊԱԳԱՅԻ ՄԱՂԻԿՆԵՐԸ

(էջ 135)

Քրված է 1923 թ. Հունիսի 21-ին, Թիֆլիսում, լեզնեդար ռեռլուցիոներ Կամոյի (Սիմոն Արշակի Տեր-Պետրոսյան, 1882—1922) մահվան տարեդարձին նվիրված Հուշ-երեկույթի կապակցությամբ: Կամոյի մասին Հ. Հ.-ը ունի նաև այլ հոգածներ՝ «Մեր Կամոն», Կը Ասո, 1922, № 158, «Կովկասյան Բլանկին», Մկը, 1923, № 118 և այլն:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1923, № 124, որտեղից և արտատպագաւում է:

## ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ը ԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(էջ 138)

Քրված է 1924 թ. Հունվարի 9-ին, Թիֆլիսում, Հանրաժանոթ իրադարձություն 19-րդ տարեկանից առթիվ՝ իրեն հանրաժանացելի զրույց մանուկ ու պատանի ընթերացների համար:

Առաջին անգամ տպագրվել է ԿՄ, 1924, № 1, որտեղից և արտատպվում է:

## ԱՆՄԱՀՆԵՐԻՑ ԱՆՄԱՀԸ

(էջ 143)

Գրված է 1924 թ. հունվարի 23-ին, Թիֆլիսում, Վ. Ի. Էնինի մահվան առթիվ: Այդ առթիվ Հ. Հ.-ը գրել է նաև մի քանի ուրիշ հոդվածներ («Թաղում են», Մկը, 1924, № 23, «Դուտովները ողբում են», Մկը, 1924, № 25 և այլն), ինչպես նաև Շենինը անմահ» բանաստեղծությունը, որն իր էությամբ հիշեցնում է սույն հոդվածը:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1924, № 20:

Տպագրվածը հետագայում հեղինակը արտադրել է տպել, վերանայել անձամբ, ստուգել ու պատրաստել տպագրության (ԳԹՀՀ առ 210):

Տպագրվում է այդ տեքստը:

1. 1903 թ. ՌՍԴԲՊ 2-րդ համագումարում կենտրոնական օրդանների ընտրությունների ժամանակ ձայնների մեծամասնությունն ստացած էնինի կողմնակիցները անվանվեցին բոլշևիկներ, իսկ նրանց հակառակորդները՝ մենշևիկներ: Հետագայում լինինյան պարտիայի անվան հետ միաձուլվեց «բոլշևիկյան» բառը: Խոկ 1952 թ. Համերկ(ր)Պ 19-րդ համագումարում ընդունված կանոնադրությամբ Համերկ(ր)Պ վերանվանվեց ՍՄԿՊ (Սովետական Միության Կոմունիստական Պարտիա):

2. Ալֆա և Օմեգա — Հոմեական այրութենի առաջին և վերջին տառերը, փոխարերական իմաստով՝ սկիզբն ու վերջը: Հայերեն՝ Ալ և Փե:

## ՄԵՐ ԼԵԳԱԼ ՄԱՍՈՒԽԸ

(էջ 146)

Գրված է 1924 թ. Թիֆլիսում, մայիսի 5-ի՝ մամուլի օրվա առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1924, № 102:

Տպագրված օրինակը հետագայում հեղինակը արտադրել է տպել, անձամբ ստուգել և պատրաստել տպագրության (ԳԹՀՀ առ 218):

Տպագրվում է այդ տեքստը:

## ՄԵՐ ԽՈՌՎԱՐԿՈՒԽՆ

(էջ 150)

Գրված է 1924 թ. հունիսի 22-ին, Թիֆլիսում, Կամոյի մահվան երկրորդ տարբերակից կապակցությամբ:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1924, № 159, որտեղից և արտադրություն է:

1. Շառկա-հևիդեմկա (անտեսանելի գլխարկ) — ժողովրդական բանահյուրական սության մեջ խիստ տարածված մոտիվ, ըստ որի՝ հերոսը վտանգի պահին ծածկում է այդ գլխարկը և աներևությանում: Հ. Հ.-ը փոխարերական իմաստով ակնարկում է Կամոյի ճարպկաթյունը:

2. Խոսքը ՌՍԴԲՊ Կոմիկայան Միության Կոմիտեի գաղանի տպարանի մասին է, որ հիմնվել է Հայլաբարում (Թիֆլիսի) 1903 թ. նոյեմբերին և, չնայած յարական սստիկանության բոլոր զանքերին, հայտնաբերվել ու ավերվել է միայն 1906 թ. ապրիլի 15-ին: Այժմ վերականգնված է որպես պատմական հուշարձան:

## ՄԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻԲՆԵՐԻՑ ՄԵԽԸ

(էջ 154)

Գրված է 1924 թ. սեպտեմբերին, Թիֆլիսում:  
Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1924, № 227, որտեղից և արտատրա-  
վում է:

## ՊԱՏՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՈԽԱՔ

(էջ 160)

1925 թ. հունվարի 24-ին, Մոսկվայում, Հայ Կուլտուրայի տանը, տեղի է ունենում պատվո օր՝ նվիրված Հ. Հ.-ի գրական գործունեության 30-ամյակին: Ազգույնի խոսքով հանդես են գալիս Ռ.ՍՖ.ՍՌ. Լուսաշարակին, Գրան-սիական երիտասարդ բանաստեղծ Լալկուտան, պրոֆեսոր Քալանթարը, ուս սովորական գրողներ Ա. Ռոգովը, Գ. Սահնիկովը, միջազգային պրոլետարողների անդամնեց Վալայտեսը, Ա. Վշտունին և ուրիշներ:

Պատասխան խոսք է ասում Հ. Հ.-ը: Այդ խոսքը տպագրվում է Մկը, 1925, № 34, ինֆորմացիոն հաղորդումների բաժնում, որտեղից և արտատպվում է:

## ՄԵՐ ԳԵՎՈՐՔԸ

(էջ 161)

Գրված է 1925 թ. մարտին, Թիֆլիսում, անվանի ուսուցչություններ ու պետական դուռը Գևորգ Աթարբեգյանի (1891—1925) ոպերգական մահվան առթիվ, որը տեղի ունեցավ նույն թվականի մարտի 22-ին, ինքնաթիռի աղետի ժամանքում:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1925, № 66, ապա՝ 1951, էջ 458—489: Արտատպվում է Մկը թերթից:

## ԱՐՈՒՍՅԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(էջ 164)

Գրված է 1925 թ. մայիսի 5-ին, Թիֆլիսում, Կամոյի քույր Արուսյակ Պետրոսյան-Ցինցածեի (1896—1925) մահվան առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1925, № 10, որտեղից և արտատրա-  
վում է:

## ԻՐԱՅԻՆ ՄԵԽԸ ԲԱՔՎՈՒՄ

(էջ 166)

Գրված է 1925 թ. մայիսին, Բաքվում:  
Առաջին անգամ, Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է Մկը, 1925,  
№ 101, որտեղից և արտատպվում է:

(էջ 167)

Գրված է 1925 թ. սեպտեմբերին, Թիֆլիսում, ցարական սատրապների կողմանց 1905 թ. օգոստոսի 29-ին (սեպտեմբերի 11-ին) կազմակերպված շարդի և նույն օրը զոհված կոմունիստ-ռեռլուցիոններ Թամարա Միլիք-Շահնազարյանի (1883—1905) մահվան 20-ամյակի առթիվ:

Սուաչին անգամ տպագրվել է Մկը, 1925, № 208, որտեղից<sup>9</sup>և արտատըպագում է:

## ԽՍԿ ՈՐ ՏԳԵԴ ԵՐԵՎՈՒՅԹ

(էջ 171)

Գրված է 1927 թ. հունվարին, Թիֆլիսում:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1927, № 23, որտեղից և արտատըպագում է։ Հրապարակելով Հ. Հ.-ի հոգվածը, թիրթի խմբագրությունը կարևոր է համարել տողատակին տալ հետեւյալ ծանոթաթյունը.

«Խմբագրության կողմից

Տպագրելով ընկ Հակորյանի «Իսկ որ տղեղ երեւյթը...» գրվածքը՝ ժենք և մեր կողմից վկայում ենք ու հաստատում Հ. Հակորյանի պնդումները։

Հ. Հակորյանի 1884 թվականից գրելիս է եղել իր հուշատերում այն բոլոր անցրերն ու գեպքերը, որ տեղի են ո՞նեսցել նրա պատանեկան շրջապատում։ Նրա հուշագրերը, տասը հատոր, մի քանի հազար էշանոց ձեռագիր, դեղնած թանաքող կաղմած գրքեր են, հետարորդիր, ի միջի այլոց, իր ժամանակաշրջանի հասարակական կյանքը ուսումնասիրելու տեսակետից։

Հակորյանը իր այս գրության մեջ բերած փաստերն ու տեղեկությունները քաղել է այդ ավելի քան արծերաբանոր հիշատակարանից, մինչդեռ Զարացյանը իր գրքում գրել է հիշողությունների հիման վրա։ Իսկ հայտնի է, որ մոտ կես զարդանցող փաստերը կարող էին մաշվել, մոռացության բօղով ծածկվել Զարացյանի հիշողության մեջ։

Խմբագրությունս, ծանոթանալով հիշյալ օրագրերի հետ, գտնում է, որ ներկա դեպքում իրավացի է ու անաշտու Հակորյանը։ Գտնում ենք միանդաւ մայն անթույլատքելի Գ. Զարացյանի արած ակնհարկը Հ. Հակորյանի բարեխուժության մասին։

Նշենք, որ Հոգվածը տպագրվելուց հետո, խմբագրությունն ստանում է մի շաբաթ նամակներ, որոնց հեղինակները հավաստում են Հակորյանի փաստարկությունները Այսպես, բժիշկ Մինաս Մուրադյանը հաստատում է, որ Գ. Զարացյանը՝ որպես ծիսական դպրոցի ուսուցիչ՝ Գանձակ է դնացել 1885 թ., ինժեներ էլեկտ Տիգրան Միքայելյանը հայտնում է, որ իրոք Գանձակի դիմնագիտան գործել է 1885 թվականից, և ինը ավարտել է այն 1886 թ., իսկ աշակերտական գաղտնի գործիքները տեղ դի են ունեցել 1885 թվականից և այն (տե՛ս ԳԹՀՀ այլ թիվ 22 և թիվ 845, և թիվ 847):

ԲԱԼՅԱԿ «ԽՈՐՃԹԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆՑ

(էջ 175)

Գրված է 1928 թ. սեպտեմբերին, Ստեփանակերտում:

Առաջին անգամ տպագրվել է ԽԴ թերթի 1928 թ. սեպտեմբեր 29-ի № 37-ում: Նույն համարում տպագրված խմբագրական հոդվածում ասվամ է, որ Հ. Հ.-ը Ստեփանակերտ է ժամանել ն. թ. սեպտեմբերի 23-ին: Երկու հանդիպում է ունեցել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի ուսանողության և աշակերտության հետ: Վերջին ժողովում աշխատավորությունը հարց է առաջ քաշել հնդինակար Հեռանային ղարաբաղի Առաջաձորի գյուղերիտ դպրոցը Հ. Հակոբյանի անունով կոչելու մասին:

ԽԴ. թերթի դեկտեմբերի 22-ի № 49-ում տպագրված է հազորդում՝ որ Հ. Հ. Կենտգործկոմի պրեզիդումը դեկտեմբերի 15-ի նիստում հաստատել է Առաջաձորի գյուղացիական երիտասարդության դպրոցը Հակոբ Հակոբյանի անվան կոչելու որոշումը:

Տպագրվում է ԽԴ թերթից:

ԽՈՐՃԹ ԱԵԽԻՆԱԿԱՆՆԻ ԲԱՆՑԱԿԱՌԻՄ

(էջ 176)

1928 թ. նոյեմբերի 16-ին, Երևանում շրջադալելուց հետո, Հ. Հ.-ը մեկնում է Ենինական, ուր նրան ոչ միայն խանդավառությամբ դիմավորում են կայարանում, այլև քաղաքային լուսրամճի գաճիճում կազմակերպում են հանդիպում Հ. Հակոբյանի անվան բանֆակի ուսանողության հետ: Ողջույնի խոսքերով հանդես են գալիս պրոլետարողների, լուսաշիմի և ուսանողության ներկայացուցիչները: Պատուախան խոսքով հանդես է գալիս բանաստեղծը, այդ մասին հազորդադրությունը է տպագրվում Լենինականի «Բանվոր» թերթի 1928 թ. № 121-ում, Այստեղից է պատասպվում է ներկա ելույթը:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ ԿՈԽԻՏՈՒՐԱԿԱՆ  
ԶԱՐԴԱՑՄԱՆ ԲԱՐՁՐԱ

(էջ 177)

Գրված է 1930 թ. նոյեմբերին, Ակրահնական ՍՍՌ նախկին մայրաքաղաք Կարկովում, ուր մեկնել էր Հ. Հ.-ը, որպես Պրոլետարական Գրողների Միջազգաւոր բյուրոյի երկրորդ կոնֆերանսի ղեկավատ Անդրկովկասից: Կոնֆերանսի նիստերը տեղի են ունեցել 1930 թ. նոյեմբերի 6-15-ը:

Առաջին անգամ, ուկրահներեն, տպագրվել է 1930 թ. Ռեպլիցիոն-պրոլետարական գրողների Միջազգային բյուրոյի միօրյա «Օճունական լիտերատուրա բազեա» թերթում, ապա՝ հայերեն՝ Պ. Արշակունյաց 1930, № 3, որտեղից է արտադրվում է,

(էջ 178)

Գրված է 1930 թ. գեկտեմբերի վերջերին, թիֆլիսում, 1905—1907 թթ. ռուսական առաջին ռեզուլտիայի 25-րդ տարեգարձի նախօրյակին:

Առաջին անգամ տպագրվել է Պրոլ. 1930, № 299, որտեղից և արտատրվող գում է:

1. Խոսքը «Մե՛կ էլ, մե՛կ էլ» բանաստեղծության մասին է:

### ՄԻՒԶՀՈԿՏԵՄՐԵՅՅԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՅ ՄԱՐՈՒՏԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՌՈՒՄ

(էջ 181)

Գրված է 1931 թ. ապրիլի 25-ին, թիֆլիսում, «Էլայժ»-ի հրատարակման 25-րդ տարելիցի կապակցությամբ:

Առաջին անգամ տպագրվել է Պրոլ. 1931, № 108, որտեղից և արտատպվում է: Հստ որում պետք է նշել, որ Յ. 1951, էջ 409—413, տպագրվել է ԳԹՀՀ Ն 208 ձեռագիրը (վերնագրված՝ «Նախաճակտեմբերյան բոլշևիկ հայ մամուլը»), որը մեր համոզմամբ, թերթին ուղարկված հոդվածի առաջին շարադրանքն է: Իբրև շիմնական տեքստ ընդունելով հեղինակի կենդանության օրով տպագրված օրինակը, հարկ ենք համարել համապատասխան տեղերում, ծանոթագրությունների բաժնում, մեջ թերել ձեռագրի որոշ հատվածները, որոնք չկան թերթում լույս տեսածում, և, թերևս, հանված են խմբագրության կողմից:

1. «Էլայժ»-ի առաջին համարը լույս է տեսել 1906 թ. ապրիլի 1-ին:

2. ԳԹՀՀ Ն 208 ձեռագրում Հ. Հ.-ը թվում է նաև հետեւյալ բրոցբարները.

«1) Էնգելսի — «Սոցիալիզմի զարգացումը ուսուցիչից-գիտություն», 2) Ս. Քերելի «Սոցիալիստական հասարակությունը», 3) Պ. Լափարզի «Կոմունիզմը և տնտեսական էվլուվցիան», 4) Ֆ. Լասոսի «Բանվարդների ծրագրիրը» և այլն»:

3. ԳԹՀՀ Ն 208 ձեռագրում կա նաև հետեւյալ հատվածը.

«Կարմիր մեխակներ»-ի ինք դրսույներն ունեցան 30.000 տիրած: Դժբախտ տարար նաև ապրեց 7 ամիս միան և կանգ առավ իմպերիալիստական պատերազմի նախօրյակին, որովհետև զրուցների բջիջը քայլավեց՝ նրանց՝ պատերազմի դաշտ գնալու, ավելի շուտ քրվելու պատճառով:

Զնայած «Կարմիր մեխակներ» կրածառե կյանքին, այնուամենայնիվ, պետի վճռականապես պնդել, որ 1914 թվականի «Կարմիր մեխակները», «Բանվորի այրումով», անդրանիկ հայ պրոլետարական գեղարվաստական օրդանն է հայ գրականության մեջ, այս մասին իր ժամանակին գրելու խոսել են Շահումյան, Կարինյան, Մռավյան և այլք, և զգիտեմ ինչո՞ւ պրոլետարական գեղարվաստական գրականության թուուցիկ ակնարկներ գրելու ժամանակ մեր, այսպես ասած, թըն նադատ-պատմագիրները լուությամբ են անցնում «Կարմիր մեխակների» մոտից, մինչդեռ անդրանիկ հայ պրոլետարական այս գեղարվաստական ժողովածուն ազգային ու գաջնակ գրագետների աշքից զայրուցիթի շատ կայժեր է ցայտեցրել և նրանք դիտմամբ լուություն են պահպանել տեսնելով ժողովածուի ակնհայտ ազգեցությունը հայ բանվորական մասսաների վրա՝ լրման ու կապարյան սեակցիայի այն ծանր օրերին:

## ՀՈԳԱԾԱԾՆԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

ԲԱ.ՔՊԿՑ

(էջ 189)

Գրված է 1889 թ. հոկտեմբերին, Բարվում:

ԳԹՀՀա ինքնագիրը չի պահպանված:

Առաջին անգամ, առանց ստորագործության, տուագրվել է Մշ, 1889, № 125 Հոյեմբերի 2-ին), «ներքին լուրիք բաժնում»:

Այս թղթակցության Հ. Հ.-ին պատկանելը որոշում ենք հեղինակի անտիպ «Հշշատակարան»-ում՝ Քր. Կարա-Մուրզային և նրա երգչախմբին վերաբերող գրառումների հիման վրա: 1889 թ. Հշշատակարան»-ի նոյեմբերի 12-ի օրադրության մեջ Հ. Հ.-ը տիրությամբ է անդրագանում այն լուրին, ըստ որի Ռ. Պատկանանի հրավերով Քր. Կարա-Մուրզան Բարվից տեղափոխվելու է Նոր-Նախիշեան՝ այնտեղ աշխատելու համար: Հենց այդ օրագորությունից էլ տեղեկանում ենք, որ «Մշակ»-ում տապագրված այս լուրը Բարվից հաղորդել է Հ. Հ.-ը:

«...Այս՝—գրում է նա,— այդ անմիտար լուրը ինձ հայտնի է վաղուց և որա մասին ես արդեն իրեն լուր ուղարկել էի «Մշակ»-ի խմբագրին հրաժարակելու, որը և լույս տեսալ № 125-ի մեջ, նոյեմբերի 2-ին»: (ԳԹՀՀա, № 153, էջ 139):

Արտասալվում է Մշ թերթից:

ԱԴԱ ՆԵԳՐԻ

(էջ 190)

Սկսած 1902 թվականից Հ. Հ.-ը ձեռնարկում է իտալական բանաստեղծությ Ադա Նեգրիի (1870—1945) ստանավորների թարգմանությունը: Հայտնի է, որ Ադա Նեգրին սկզբում հանդես էր գալիս բանվորական աշխատանքին նվիրված, առաջազրո, հոգմանիստական գաղափարներով հագեցած ստեղծագործություններով, հետագայում, սակայն, մասնավորապես երեսնական թվականներից սկսած, նա հարմարվում է իտալական ռեակցիոն, «նացիոնալ-սոցիալիզմի» ֆաշիստական հեծիմին: Այդ առաջին շրջանի աշխատավորական երդերն են, որ գրավում են աշխատանքի երիշը, երիտասարդ պետ Հակոբյանին: Հ. Հ.-ի կատարած թարգմանությունները նախ տպագրվում են պարբերական մամուլում («Մորճ» և այլն), ապա՝ 1903 թ. լույս են տեսնում առանձին գրքով (Ադա Նեգրի, «Թանաստեղծություններ», Ա. պրակ» 1903 թ., Թբիլիս): Հենց այդ գրքի համար էլ իրեն առարկան գրված է այս «Քննադատական-կենսագրական տեսությունը», որի մեջ, հեղինակի խոստովանությամբ, օգտագործված են ուս հեղինակների մի շաբթագործները: Տպված է նշած Ա. պրակում, որտեղից և արտասալվում է:

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԼԻ

(էջ 198)

Գրված է 1903 թ. Թիֆլիսում ի պատասխան Հարություն Թումանյանցի հրախոսականի Հ. Հ.-ի՝ Ադա Նեգրուց կատարած թարգմանությունների մասին (տե՛ս նոր, 1903, № 201): Անհրաժեշտ է նշել, որ Հ. Հ.-ի թարգմանությունները

բարձր են գնահատվում հայ առաջավոր դիմոկրատական գրականության ներկայաց ցողիշների և ուսույնուցիոն-բոլշևիկյան մամուլի կողմից Ականավոր գրող Ավերսանդը Շիրվանզադեն թի' հայկական (տե՛ս «Տարագ», 1903, № 32) և թի' ուստական (տե՛ս «Հօնօս օգօզքնու», 1903, № 6552) թերթերում տպագրվում է դրահան գրախոսականներ, իսկ պրոֆեսիոնալ ուսույնուցիոններ Սուրեն Սպանդարյանը՝ նկատի ունենալով Հ. Հ.-ի Ազա Նեղրուց կատարած թարգմանությունները, նրան անվանում է տաղանդավոր թարգմանիչ» (տե՛ս «Լիստոկ-կոպեյկա», 1911, № 21, նաև Ս. Սպանդարյան, «Հոգվածներ», 1949, էջ 20):

Այսանդից հասկանալի է, որ միանգամայն իրավացի է Հ. Հ.-ի բողոքը Հարություն Թումանյանցի գեմ, որը բացասական կարծիք է հայտնում թարգմանությունների մասին:

Առաջին անգամ տպագրվել է նդ, 1903, № 204, որտեղից ե արտատրություն է:

#### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎՃԱԼՅԱՆ ԹԱՏՐՈՒ

(էջ 201)

Գրված է 1908 թ. մարտին, Թիֆլիսում:

Առաջին անգամ տպագրվել է Մշ, 1908, № 41, Հ. ստորագրությամբ։ Արտատպակում է Մշ թերթից։

#### ԱՎՃԱԼՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՏՐՈՒ

(էջ 203)

Գրված է 1912 թ. մարտին, Թիֆլիսում։

Առաջին անգամ տպագրվել է Մշ, 1908, № 57, Հ. ստորագրությամբ։ Արտատպակում է Մշ թերթից։

«ՏԻՄԿՈՎԱԿՈՒ «ՊԱՇՏՊԱՆ» ԴՐԱՄԱՅԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

(էջ 205)

Գրված է 1908 թ. Թիֆլիսում, ուստ դրամատուրգ Նիկոլայ Իվանովիչ Տիմկով (1863—1922) «Պաշտպան» դրամայի հայերեն թեմադրության առթիվ։

Առաջին անգամ, Հ. ստորագրությամբ, տպագրվել է Մշ, 1908, № 84։

ԳթՀՀան № 918 պահպամ է թերթից հարված օրինակը, ուր հեղինակը Հ. ստորագրությունը գարձրել է Հ. Զակորյան։ Արտատպակում է Մշ թերթից։

«ԵԽԼԵՐԻ «ԱՎԱՋԱԿԱՆԵՐ»-Ի ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

(էջ 207)

Գրված է 1909 թ. սեպտեմբերին, Թիֆլիսում, Զուբալովի անվան ժողովրդական ատելի Հայ Գրամատիկական Ընկերության ուժերով գերմանական հայտնի բանաստեղծ և գրամատուրգ Ֆ. Շիլլերի (1759—1805) «Ավազակներ» գրամատիկամարդության առթիվ։

Առաջին անգամ տպագրվել է Մշ, 1909, № 217, որտեղից ե արտատպակում է։

<ՅՈՒՇԿԵՎԻԶԻ «ԹԱԳԱՎՈՐ» ՊԻԵՍԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 209)

Գրված է 1909 թ. Հոկտեմբերին, Թիֆլիսում, Զուբարովի ժողովրդական տանը  
Ալմյան Սոլոմոնովիշ Յուշկեվիչ (1868—1927) «Թագավոր» պիեսի բեմադրության  
առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Մշ. 1909, № 225, որտեղից և արտատպվում է:

<ԳՈՐԿՈՒ «ՀԱՏԱԿՈՒՄ» ՊԻԵՍԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 211)

Գրված է 1909 թ. դեկտեմբերին, Թիֆլիսում, ժողովրդական տան թատրո-  
նում Ա. Մ. Գորկու (1868—1936) «Հատակում» պիեսի բեմադրության առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Մշ. 1909, № 281, որտեղից և արտատպվում է:

Հարկ է նշել, որ ճիշտ չէ Հ. Հ. Կարծիրն այն մասին, թե Գորկին «Հա-  
տակում» պիեսի մեջ «սոցիալական հարցեր» չի շոշափում: Բայց նկատենք նաև,  
որ արդարացի չեր լինի ասել, թե Հ. խորապես չի բմբանել Գորկու այս երկի  
սոցիալական-գաղափարական բովանդակությունը, նրա հոգվածի այդ էա-  
կան թերությունը թերևս բացատրվի՝ կամ լիբերալ-բուրժուական օրգանում  
(«Մշակ») տպագրված լինելու հանգամանքով և կամ գրաքննական պայմանների  
նկատառումով, մանավանդ, որ հոգվածի բնագիրը մեզ չի հասել: Ուստի հայտնի  
մի, հոգվածը անփոփոխ է տպագրված, թե՞ խմբագրական ու գրաքննական ռար-  
ռագրումներով:

<«ԳՈՒՎԵՐՆՈՐ» ՊԻԵՍԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 213)

Գրված է 1910 թ. Հունվարի 18-ին, Թիֆլիսում Ա. Մ. Յուշկեվիչ «Թագավոր»  
պիեսի բեմադրության առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է Մշ. 1910, № 12, որտեղից և արտատպվում է:  
Է. Նկատի ունի 1909 թ. «Մշակ» № 225-ում տպագրված իր գրախոսականը:

<«ԳՈՒՎԵՐՆՈՐ» ՊԻԵՍԻ ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 216)

Գրված է 1910 թ. օգոստոսին, Թիֆլիսում:

Հոգվածը գրված է ուստերեն և առաջին անգամ տպագրվել է «Новая речь»  
1910, № 189, որտեղից և արտատպվում է:

1. Հ. Հ.-ը շփոթում է. Դենիս Խվանովիշ Ֆոնվիդինի (1745—1792) պիեսը  
կոչվում է ոչ թե «Գուվերնյոր», այլ «Գուվերնյորի ընտրությունը» («Ենաց  
ցւերներ»): «Գուվերնյոր» կոմեդիան, որի մասին այս հոգվածում խոսվում է,  
պատկանում է Ժամանակի բավական հայտնի ուսու դրամատորք Վիկտոր Անտոնո-  
վիշ Դյաշենկոյի (մեռել է 1876 թ.) գրքին: Դյաշենկոյի «Գուվերնյորը» ժամանակի

տարածված պիեսներից մեկն էր, այն եղել է նաև Պ. Ադամյանի ռեպերտուրայում:

Հ. Հակոբյանի գրախոսած թեմազրության ժամանին Հայկական ՍՍՌ ժողովը քական դերասան Ա. Սրմենյանը զրում է. «Կովկաս վերադառնալով գնացինք ուղիղ Դարաբիլիսա (Կիրովական) մի ամսով... Խուսական խումբը հրավիրեց ինձ մասնակցելու գոնե մի ներկայացման, և մենք թեմազրեցինք Գիաշենկոյի «Գուլեր-նյոր»-ը:

Պատահաբար ներկայացմանը ներկա է լինում մեր պրոլետարական բանաստեղծության հիմնադիր Հակոբ Հակոբյանը: Ահա թե ինչ է դրում նա Թիֆլիսի «Նովայա բելօ-ի իր թղթակցության մեջ: (Ապա բերում է ամբողջ հոդվածը: *Sb' Ա. Սրմենյան, «60 տարի հայ բնի վրա», 1954, էջ 152—153):*

### <ՆԱՄԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԻ>

(էջ 218)

Գրված է 1912 թ. հունվարի 31-ին, Թիֆլիսում, ի պատասխան Պ. Տիգ-Դասելյանի «իսկ ովքե՞ր են դատավորները» հոդվածի (տե՛ս Մշ. 1912 թ. № 20), որտեղ Հ. Հ. անիբարվացի կերպով մեղադրվում է ոչ միայն գրագողության մեջ, այլև այն բանում, որ նա իբր թե՛ միանգամայն անիբարվացի է Բ. Իշխանյանի գեղ մղած բանակրվում:

Առաջին անգամ, «Թիֆլիս», 31 հունվարի ուսուբիկայի տակ, տպագրվել է Մշ. 1912, № 24, որտեղից և արտատպվում է:

1. Խոսքը Հ. Հ.-ի 1912 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուի մասին է:

2. Նկատի ունի Lucifer-ի (Բախչի Իշխանյան) «Աշխատանքի և աշխատավորի գաղափարը Աղա Նեղորիի, Հ. Հակոբյանի և Շ. Կուրլինյանի բանաստեղծությունների մեջ» (1909) գրքույկում, և զրույկի առթիվ ծավալված բանալիճի ժամանակ մամուլում տպագրված հոդվածներում, իր հասցեին եղած անհիմն մեղադրանքները:

### ՄԻ ԿԱՍՈՂՈՒԹՅՈՒՆ

(էջ 219)

Գրված է 1912 թ. ապրիլին, Թիֆլիսում:

Գրության առիթը հետեւյալն է. 1912 թ. «Թեղարվեստ» հանդեսի № 4-ում (էջ 64) տպագրվում է Ա. Զարգի «Աղջկեկ մը» ոտանավորը: «Հորիզոն»-ում Վ. Ահարոնյանը (գաշնակցական Ավ. Աշարոնյանի որդին) ակ. Մենակ» ստորագրությամբ տպագրում է մի հոդված, ուր զովում է հիշյալ գուեծիկ, իդեալիս արատովոր ոտանավորը: Նույն թերթում (1912 թ. № 77) այդ ոտանավորի քննադատությամբ հանդես է գալիս Ալ. Շիրվանդաղեն՝ «Թողորում ևմ զզվանքով» հոդվածով: Հ. Հ.-ի իր այս «Նկատողությամբ», միանում է Ա. Շիրվանդեի քննադատությամբ:

Առաջին անգամ տպագրվել է Մշ. 1912, № 81, «Թ» ստորագրությամբ:

ԳԹՀՀ ապհակում է թերթից կտրված օրինակը, ուր «Թ» ստորագրության ներքում հեղինակն ըստ ձեռքով գրել է՝ «Հ. Հակոբյան»:

Արտատպվում է Մշ. թերթից:

1. Նկատի ունի գեկագենստական ուղղության պատկանող բանաստեղծուհի Արմենուշի Տիգրանյանի «Օքոր» ուսանավորը (Թղ. 1911 թ. № 4, էջ 99):

2. Այս տողերը թերված են Ավ. Խաչակրանի «Մամ հետ եմ անհույս...» տողվ սկսվող բանաստեղծությունից (Թղ. 1911 թ. № 4, էջ 89), որը համակված է հոսեանությամբ և արտահայտում է ուսակցիայի շրջանում մեծ բանաստեղծի ապրած վատառողջ տրամադրությունները:

3. Նկատի ունի Գ. Գեմիրճյանի «Գեղարվեստ» հանդեսում տպագրված բանաստեղծությունները (Տեսա Գղ. 1911 թ. № 4, էջ 70 և 118):

4. Ֆեմիլա — Բար Հոմերոսի բարոյականության և կարդի աստվածուհին Հետագայում Ֆեմիլան համարվում է արդարադատության աստվածուհի: Հ. Հ.-ը գործ է ածում փոխարերական մտքով, ցանկանալով շեշտել, որ ուսույուցիայի գաղափարը հաղթելու է նաև դրականության մեջ:

### ՍՈՒՆԳՈՒԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ԹԻՑԼԻՍՈՒՄ

(էջ 221)

Գրված է 1912 թ. ապրիլին Թիֆլիսում, Ժողովրդական տանը հայկական սեկցիայի կողմից Գ. Սունդուկյանի (1825—1912) «Պեսո» պիեսի բնմադրության սովորված:

Առաջին անգամ, Դեմոկրատ ստորագրությամբ, տպագրվել է ՄԿ, 1912, № 5:

ԳԹՀՀա № 918 սպառվում է թերթից կտրած օրինակը, ուր Դեմոկրատ ստորագրությունը հեղինակը դարձել է Հ. Հակոբյան:

Սրտատպվում է ՄԿ պարբերականից:

1. «Ծեալ ուեպերտուար» և, Հետադա տեղերում «ուեալ դրամատուրգիա» սահելով՝ Հ. Հ.-ը նկատի ունի ուելիստական ուղղությունը թատերական արվեստի և գեղարվեստական դրականության մեջ:

2. Ալեքսանդր Սերգեևի Գրիգորյանի (1795—1829) հոշակավոր պիեսը, որ Տիրավոր մինչև օրս էլ մնում է աշխարհի շատ թատրոնների խաղացանկերում, առաջին անգամ բնմադրվել է Երևանում 1927 թ.:

### ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐ

(էջ 224)

Գրված է 1912 թ. մայիս—հունիսին, Թիֆլիսում:

Առաջին անգամ տպագրվել է ՄԿ, 1912, № 15, Դեմոկրատ ստորագրությամբ:

ԳԹՀՀա այս հոդվածի ինքնագիրը չի պահպանվել, սակայն պահվում է նույն թերթում տպագրված «Սունդուկյանի հիշատակը Թիֆլիսում» հոդվածը (թերթից կտրված օրինակը), ուր Դեմոկրատ ստորագրությունը հեղինակը դարձել է Հ. Հակոբյան: Սրանից ելնելով, ինչպես նաև նկատի առնելով հոդվածի ոճական առանձնահատկությունները, կարելի է եղարակացնել, որ սույն՝ «Տգիտության զոհեր» հոդվածը ևս պատկանում է Հ. Հ.-ի գրչին:

Սրտատպվում է ՄԿ պարբերականից:

## ԺԱՄԱՆԱԿԻ Է...

(էջ 227)

Գրված է 1916 թ. դեկտեմբերին, Թիֆլիսում, «Պայքար» սոցիալ-դեմոկրատական թերթի երկրորդ տարեշրջանի առթիվ:

Իր շոշափած հարցերի կարևորության շնորհիվ Հ. Հ.-ի այս հոդվածը բարձր գնահատականի է արժանացել Բարվի 26 կոմիսարներից մեկի, բոլշևիկ-ռեզյումի հետ Արևին Ամիրյանի կողմից: Այս հոդվածի առիթով Ամիրյանը հատուկ նախակ է գրել Հ. Հ.-ին, որը հայտնում է իր գոհունակությունը (տե՛ս ԳԲ., 1934 թ. 6):

Առաջին անգամ տպագրվել է Պր, 1917, հ. 1. որտեղից և արտատպատճեմ է:

ՄԵՐ ՀՈՒՅԱԾ ՄԵԶ ՎՐԱ.

(էջ 230)

Գրված է 1917 թ. Հունվարին, Թիֆլիսում:

Առաջին անգամ, Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է Պր, 1917, հ. 5 որտեղից և արտատպատճեմ է:

ԸՆԿԵՐ ՀՈՎԱԿԻՄ ՍՈԼՈՎՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ:

(էջ 233)

Գրված է 1920 թ. մարտին, Թիֆլիսում, նախկին Հնչակյան, հետագայում սոցիալ-դեմոկրատ, ռեզյումիսն-հասարակական գործիչ, զրող ու գրականագիր Հովակիմ Սոլովյանի (1864—1919) մահվան տարելիցից առթիվ:

Առաջին անգամ, Հ. ստորագրությամբ, տպագրվել է Ն ՌԴ, 1920, հ. 3. որտեղից և արտատպատճեմ է:

1. «Փայմար» — Քաղաքական, հասարակական լրագիր Հնչակյան պարտիակի, հրատարակիվ է Թիֆլիսում, 1907 թ., Ֆլորա Վարդանյանի խմբագրությամբ:

2. «Ապագա» — Օրաթերթ Հնչակյան պարտիայի, հրատարակվել է Թիֆլիսում 1907—1908 թթ., Արգեր Տեր-Արգարանի և Արաբեսի խմբագրությամբ:

3. «Քաղաքար» — Քրական, հասարակական, քաղաքական ու տնտեսական օրաթերթ Հնչակյան պարտիայի, հրատարակվել է Թիֆլիսում, 1916—1917 թթ., Ա. Մահտեսի Հակոբյանի (փաստորն Արմ. Հովհաննի) խմբագրությամբ:

4. «Լեռներ» — Շարաթաթերթ, հրատարակվել է Աստրախանում, 1908—1909 թթ., Կարազետ Խաչատրյանի խմբագրությամբ:

5. Հ. Սոլովյանի գիրը լույս է տեսել 1911 թ. Թիֆլիսում:

ՄԵՐ ԴԱՐԱՆՈՅԾ

(էջ 236)

Գրված է 1922 թ. Թիֆլիսում, իրեն առաջնորդող Վրաստանի Պրոլետարական ֆրողների Սոցիալական սեկցիայի օրդան «Դարբնոց» գրական-գեղարվեստական-քննադատական ամսագրի, որը հրատարակվել է Թիֆլիսում՝ 1922—

1923 թթ., ընդամենը երեք օրինակ (№ 1, № 2—5, № 6) Հ. Հ.-ի խմբագրությամբ:

Առաջին անգամ տպագրվել է Դրբ. 1922, № 1, ստորագրված՝ «Խմբագրություն»: Ամսագրի սեփական օրինակում Հ. Հ.-ը չնշել է այդ ստորագրությունը և գարձել «Հակոբյան» (ԳԹՀՀ աղ 918): Բայց այդ, ամսագրի միացյալ № 2—5-ում տպագրված «Մեր քննադատների քննադատությունը» հոդվածից նույնականացնելու համար պահպան է, որ հիշյալ առաջնորդողը գրել է Հ. Հ.-ը:

Արտատպակում է ամսագրից:

### ԺԱՄԱՆԱԿԻ Է...

(էջ 239)

Գրված է 1922 թ., Թիֆլիսում:

Առաջին անգամ, Աշուղ-Բլուզ ստորագրությամբ, տպագրվել է Դրբ., 1922, № 1, որտեղից և արտատպակում է:

Ոչ միայն վերնագրով, այլև բովանդակությամբ, շոշափած հարցերով, այս հոդվածը հիշեցնում է «Պայտքար» թերթի 1917 թ. հունվարի 1-ի համարի առաջնորդողը, որ գրել է Հ. Հ.-ը: (Տի՛ս սույն հատորը):

### ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

(էջ 242)

1922 թ. մայիսի 28-ին, երեկոյան ժամը 7-ին, Թիֆլիսում, Արվեստի Տան գաղթեցնում, տեղի է ունենում Վրաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Հայկական սեփականի հիմնադրմանը նվիրված հանդիսավոր նիստ, որին մասնակցում են Վրաստանի վրացական ու Հայ պրոլետարական գրողներ, քննադատներ, գրականագետներ, ինչպես նաև հյուրեր Ռուսաստանից, Հայաստանից և այլ տեղերից: Նիստին նախագահում է և բացման խոր է ասում Հայ ավագ պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանը: Դրբ., 1922, № 1 տպագրվում է այդ խոսքը՝ «Վրաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Հայկական սեփականի հանդիսավոր բացումը» վերճագրով: Արտատպակում է Դրբ-ից:

### ԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԻԿԱՆԵՐ

(էջ 244)

Գրված է 1922 թ. Թիֆլիսում:

Առաջին անգամ, որպես առաջնորդող, Հ. Հ.-ի ստորագրությամբ, տպագրվել է Դրբ., 1922, № 2—5, որտեղից և արտատպակում է:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

(էջ 247)

Գրված է 1923 թ. Թիֆլիսում, հայ ժողովրդի ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի (1869—1923) մահվան առթիվ, որը տեղի է ունեցել նույն թվականի ապրիլի 23-ին: Հովհածք գրված է հատկապես մանուկ բնիքեցողների համար և մանկական ամսադրի պատվերով,

Առաջին անգամ տպագրվել է ԿՄ, 1923, № 1, էջ 41—44, որտեղից և արտադրվում է:

## ՀՈԲԵԼՅԱՐԻ ԽՈՍՔԸ

(էջ 250)

Հոբելյանական այս խոսքը բանաստեղծն ասել է 1923 թ. դեկտեմբերի 2-ին՝ Թիֆլիսում, իր գրական գործունեության 30-ամյա տարեդարձի առթիվ կազմակերպված հանդիսավոր նիստում:

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1923, № 235, որտեղից և արտադրվում է:

## ԱՆՌԻՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

(էջ 252)

Գրված է 1924 թ. Հոկտեմբերին, Թիֆլիսում, բանվոր-գրամատուրգ Անուշավան Կարգանյանի (1879—1954) աշխատանքային 30-ամյա և գրական գործունեության 25-ամյա տարեդարձի առթիվ, որը նշվել է 1924 թ. նոյեմբերի 9-ին:

Առաջին անգամ տպագրվել է Մկը 1924, № 228:

Տպագրված օրինակը հետագայում հեղինակը վերանայել է, արտադրել տվել և անձամբ ստուգել ու պատրաստել տպագրության (ԳԹՀՀ № 224):

Տպագրվում է այդ տեքստը:

1. «Գործադուլ կամ տգիտության զոհեր» (բանվորական կյանքից, Տ գործունեությամբ, 1 պատկերով) պիեսը գրված է 1906 թ. և առաջին անգամ բիմագըլթվել է 1912 թ. Ճայիսի 26-ին Թիֆլիսում, նախկին Արտիստական թատրոնում, դեռասան (այժմ՝ Հայկ. ԱՍԲ ժողովրդական արտիստ) Արմենակ Արմենյանի դեկավարությամբ:

## «ՀՐՋԻԳՆԵՐԻ» ՄԵՐ ԲԵԼԻ ՎՐԱ

(էջ 255)

Գրված է 1924 թ. նոյեմբերի 16-ին, Թիֆլիսում, Ա. Վ. Հովհաննեսիուն (1875—1933) «Հրձիգները» («Պոճիգատելի») պիեսը հայկական թատրոնում բիմագրելու նախապատրաստության առթիվ:

Պիեսը հայերեն թարգմանել է Հ. Հ.-ը՝ հեղինակից ստանալով թարգմանելու մենաշնորհը: Այս ժամկետը Մկը ժամկետը Մկը, 1924 թ. օգոստոսի 29-ի № 197-ում կարդում ենք:

## «ՀՐՋԻԳՆԵՐԸ» ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Դաստակավոր պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանը Բորժոմից մեղ խնդրում է տպել հետևյալը.

«Հրձիգների» («Պօջիշտելի») թարգմանությունը, որ կատարել եմ մեծ խնամքով և բնիկ լուսաշրսկու, այստեղ եղած ժամանակ, տվյալ ցուցումներով, արդեն ավարտված է:

Պիեսը թարգմանելու և հրատարակելու իրավունքը հեղինակը՝ ընկեր Լուսաշրսկին հատկապես Կավատացել ու բացառապես վերապահել է ինձ: Հայտնում եմ այս մյուս թարգմանիչներին ի գիտություն:

Հակոբ Հակոբյան

27 օգոստ. 1924,

Բորժոմ:

Առաջին անգամ, Պրոլետար ստորագրությամբ, տպագրվել է Մկ. 1924.  
Տ 263, որտեղից և արտատպվում է,

## ԽԴԵՈՂՈԳԻԱԿԱՆ ՑԲՈՒՏ (Թեզեր)

Գրության ժամանակն ստույգ հայտնի չէ: Սակայն, նկատի ունենալով, որ թէ պարզ վերաբերում են պրոլետարական գրողների առաջին խորհրդակցութանը, որը տեղի է ունեցել 1925 թ. հունվարին (6—12-ը) Մոսկվայում, ապա կարելի է եղանակացնել, որ գրված են 1924 թ. վերջին, կամ հենց 1925 թ. հունվարի սկզբունքին:

ԳԹՀՀա Տ 243 պահպատ է թեզերի սկագիր ինքնագիրը միայն, որը և տպագրվում է առաջին անգամ:

## ԲՆՉ ԱՆՌԻՆ ՏԱԿՔ

(Եշ 260)

Գրված է 1925 թ. մարտին, Թիֆլիսում:

Առաջին անգամ տպագրվել է Մկ.՝ 1925, Տ 51, որտեղից և արտատպվում է:  
1. Նշված հոդվածը Հ. Հ.-ի արխիվում չգտնվեց: Հավանաբար հեղինակը ժողովրություն է ունեցել գրել այն, սակայն չի իրագործել իր մտադրությունը:  
2. Թիֆլիս պահպատ է միայն ռհնչ անուն տանք» հոդվածի ինքնագիրը:

## 2. ՌՍՖՍԲ, Լուսավորության ժողկոյն վկայական

Սույնով հաստատում եմ, որ Հայկական ռեսպոբլիկայի ժողովրդական պոետ Բնակը, Հակոբ Հակոբյանին իմ կողմից տրված է իմ «Հրձիգներ» պիեսը թարգմանելու մենաշնորհ լիազորություն:

Մնացած բոլոր թարգմանությունները խնդրում եմ համարել Հեղինակի հետ՝ չհամաձայնեցված:

Հուստողկում՝ Ա. Հունաշարսկիք:  
(Կնիք):

Սույն վկայականի բնագիրը պահպատ է ԳԲՀՀ Հ 883:

### ԽԱՆՔԻ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԵՆԴ

(էջ 262)

Դրված է 1926 թ. Թիֆլիսում, իրրե վերջարան նույն թվականին Հայոցի համարակած արանաստեղծությունները գրրի: Առաջին անգամ տպագրվել է այդ գրքում, էջ 342—349, որտեղից և արտատպվում է:

1. Քսանական թվականների սկզբին Հ. Հակոբյանը միար է Հղացել իր եր՝ կերը հրատարակել առանձին հատորներով, կազմել է հատորների պլանը և նյաւթերն ուղարկել է Հայոցի գրատուն: Սակայն, վերը նշած գրքից բացի, մյուս հատորները լրաց չեն տեսել:

2. Հ. Հակոբյանի «Կարմիր ալիքներ» ուսեմի տողերն են:

3. Այդ անտիպ բանաստեղծությունների ու պնևմների մի մասը տե՛ս ներկայացնելու առաջին և երկրորդ հատորներում:

4. Նամակը տե՛ս «Վիշեկա» (Բաքու), 1925, Հ 1, էջ 79—80:

### ՓԱՓԱԶԱԱՆ-ՕԹԵԼՈ

(էջ 269)

Գրված է 1926 թ. գեկտեմբերին, Թիֆլիսում, Վ. Շերսպիրի (1564—1616) հանրահոչակ «Օթելո» պիեսի բեմագրության առթիվ, որ գլխավոր հերոսի օթելու գերում հանդես է եկել Վահրամ Փափադյանը (այժմ՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ):

Առաջին անգամ տպագրվել է Մկը, 1926, Հ 290, որտեղից և արտատպվում է:

### ՁԵՐՄ ԱՊՀՈՒՅՑՆ «ԽՈՐՃՐԳԱՅԻՆ ԳՐԱՎ» Ա.Մ.ՍՈՒԳՐԻՆ

(էջ 271)

Դրված է 1932 թ. սեպտեմբերին, Թիֆլիսում, Բարգում հրատարակված «Խոյր» հրբերգին գրող գրական-գեղարվեստական մասսայական բննագատական ամսագրի առաջին համարի լույս ընծայման առթիվ (Օրգան՝ Ազրելչանական Պրոլետարկան Գրողների Ասոցիացիոնի Հայկական սեկցիայի):

Առաջին անգամ տպագրվել է նույն ամսագրում, 1932, Հ 1, որտեղից և արտատպվում է:

(էջ 272)

Քրված է 1933 թ. գարնանը, Թիֆլիսում, 1923 թ. իր ակտիվ մասնակցությամբ հիմնադրված պարմիք ծիլերա մանկական պատկերազարդ ամսագրի տասնամյակի առթիվ։ Ամսագրից հրատարակվել է Վրաստանի կուսանությամատի սոցիալական դաստիարակության գլխավոր բաժնի գրական-գեղարվեստական սեկցիայի կողմից, նույն սեկցիայի խմբագրական կողեգիայի խմբագրությամբ։

Առաջին անգամ «Ճողովրդական պոետ Հակոբ Հակոբյանի ողջույնը պարմիք ծիլեր»-ի տասնամյակին» վերնագրով, տպագրվել է 1933, ԿԾ, № 2-3, էջ 22, որտեղից և արտատպվում է։

## ԱՏԽԱՆ ՇԱՀՈՒՄՅՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԳԱՐՉԻՆ

(էջ 273) .

Հոդվածն իր հիմնական բովանդակությամբ տպագրվել է 1925 թ. Մկը № 216, 217, 218, «Ստեփան Շահումյանը որպես գրական քննադատ» վերնագրով։ ԳԲՀՀ Հ 118 պահվող ձեռագրերից մեկում, որն զգալի կերպով աարերշվում է տպագրվածից, հատկապես գրական մշակության տեսակետից, Հ. Հ.-ը հոդվածը վերնագրել է «Ստեփան Շահումյանի մահվան 7-րդ տարեդարձին»։ Սակայն բոլոր նշաններից երեսում է, որ այդ ձեռագրի վրա հեղինակին աշխատել է նաև 1933 թ., Ստ. Շահումյանի մահվան 15-րդ տարեկիցի կապակցությամբ։ Նախ վերնագրի մեջ «7-րդ» գարձրել է «15-րդ», ապա տեքստում հանդիպող թվականներն ամենուր փոխել է այնպես, որ դրանք համապատասխանեն 1933 թվին («Ծանոթագր» մի տեղ փակագծերում գրած, ու 14 տարի սրանից առաջ՝ բառերը գարձրել է «22 տարի սրանից առաջ» և այլն)։ Միայն մի տեղ՝ Պ. Աղայանի հորելլյանին (1902 թ.) Ստ. Շահումյանի արտասանած ճառի մասին խոսելիս, մոռացել է «22 տարի սրանից առաջ» գարձնել «31 տարի սրանից առաջ», որն ուղղել ենք մենք։ Զեռագրի վրա հեղինակի կողմից արված են նաև լեզվական ողջունմեր։

Այսպիսով, ակնհայտ է գառնում, որ նշված ձեռագիրը հեղինակի վերջնահական մշակումն է, որը և տպագրվել է 1951, Ե, էջ 421-430, ուր, սակայն, սխալ-մամբ բողնված է ձեռագրի նախակին վերնագրից՝ «Ստեփան Շահումյանի մահվան 7-րդ տարեդարձին»։

Ս. Շահումյանի մասին Հ. Հ.-ը գրել է նաև այլ հոդվածներ՝ «Շահումյանի հահատակման եռամյա տարեդարձին», Կր. Աստ, 1921, № 165, «Ստեփանը մասների սիրելին», Կր. Աստ, 1922, № 211 և այլն։

Տպագրվում է համաձայն ձեռագրի։

1. Նկատի ունի «Ծանոթագր» մահվան եռամյա տարեդարձ» (Կր. Աստ, 1921, № 165), «Ստեփան Շահումյանը որպես գրական քննադատ» (Մկը, 1925, № № 216, 217, 218) և այլն։

2. Խոսքը Ստ. Շահումյանի և լեզվային կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատության առաջարանի մասին է, ուր հեղինակը գրում է։

«Առանձնապես տգեղ ու այլանդակ ձեռք է ընդունել մարքսիզմի շահագործումը «Մշակում» աշխատող մի խումբ անսկզբունք գրողների կողմից, որոնց

գլուխ է անցած Բախչի Խշխանյան կոչվող մի բախտախնդիրը: Բարոյական ամենատարրական սկզբունքներից զուրկ այդ քրեական տիպը (ընդգծումը կազմողների) հանդես է եկել նորից հայ ընթերցողի առաջ «մարդուստի» անունով: (Ստ. Շահումյան, «Ընտիր երկեր», 1948 թ., էջ 369):

3. Նկատի ունի Ստ. Շահումյանի «Տիեզրական թութակը» (Միբայել Վարանդյան և նրա «Հոսանքները») վերճագրով հոդվածը (տե՛ս Ստ. Շահումյան, «Ընտիր երկեր», 1948 թ., էջ 316—323):

4. 1907 թ. սեպտեմբերի 7-ին գրած «ՌՍԴԲՊ Կենտրոնական Կոմիտեին» («Էլենինից Կենտրոնի անդամներին») նամակում կենինը գրել է.

«Խիստ նախազգուշացնում եմ «Հայկական ս. գ. ֆեդերացիայի» վերարից յար Եթե զուր համաձայնել եք, որ նա մասնակցի կոնֆերենցիային, ապա նախագրական սխալ եք կատարել, որպիսին հարկավոր է ուղղել ինչ էլ որ լինի: Դրանք—մի զույգ մնայան կազմակուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենագատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ Դար—բունդական կրեատուրա է, որից ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը անելու համար: Եթե զուր թույլ տաք այդ մարդկանց ուստական կոնֆերենցիա, այսինքն՝ Ռուսաստանում աշխատող կազմակերպությունների կոնֆերենցիա գալու, զուր սարսափելի կիսայտառակլեր: Կովկասի ընկերները բոլորն էլ զեմ են գրականագետ-կազմակուծիչների այդ շայքային (այդ բանը ես գիտեմ շատերից), և մենք շուտով կցագրենք նրանց «Պրոլետարիй»-ում...» (Վ. Ի. Լենին, երկեր, Հատոր 34, էջ 383):

1916 թ. «Հայ գրականության ժողովածուի մասին» վերնագրով իր հոդվածում Ստ. Շահումյանը, կենելով լենինյան այս գնահատականից, գրում է, որ այդ կազմակերպությունը հիմնել են մի երկու ինտելիգենտ, նույնքան նախկին դաշնակցական կիսաբնտելիդենտների հետ միասին՝ «Հրեական բունդին նմանվելու ցանկությամբ» (Ստ. Շահումյան, «Դրականության մասին» 1948 թ., էջ 109):

5. «Գյուօք» — Բարվի նավթարդյունարերական բանվորների օրգանը, որպիս բոլցիկյան լեգալ շարաթաթերթ, լույս է տեսել 1907 թ. օգոստոսի 12-ից մինչև 1908 թ. հունիսի 1-ը, ընդամենը 34 համար:

35-րդ համարից սկսած «Գյուօք»-ն անցավ մենշենիների ձեռքբարձր:

6. Ստ. Շահումյանի հիշյալ նամակը գտնել չհաջողվեց:

7. Նկատի ունի թ. Խշխանյանի (Lucifer) «Աշխատանքի և աշխատավորի գաղափարը Աղա Նեգրիի, Հ. Հակոբյանի և Շ. Կուրդինյանի բանաստեղծությունների մեջ» գրքույթը (1909 թ.):

8. Այս մասին տե՛ս սույն հրատարակության երկրորդ հատորը:

9. Նկատի ունի Հ. Սոլովյանի «Քննական տեսություններ» (1911 թ.) գրքի մեջ Հայունված կարծիքը:

10. Հիշյալ գրքերը շկան ԳԹՀՀա:

11. Նշված նամակը գտնել չհաջողվեց:

12. Ա. Կարինյանի հոդվածը՝ «Թաղարքի երգիչներ» (Կահան Տերյան — Բանաստեղծություններ, 1912, Հակոբ Հակոբյան — Բանաստեղծություններ, 1912, Տիգիսիս) տպագրվել է «Նոր խոսք»-ում՝ 1912, Խ 5—6, էջ 270—282, Ա. Կ.-յան ստորագրությամբ:

## <МЕЧТА СТАЛА ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬЮ>

(էջ 286)

Գրված է 1934 թ. փետրվարի 12-ին, Թիֆլիսում, ինչպես թվագրված են սկզբությունը և մաքուր արտագրությունը (ԳԲՀՀ Ն 281):

Առաջին անգամ տպագրվել է Հ. Հ.-ի՝ Մոսկվայում հրատարակված 1951 թվականի «Ազգային պատմություն» գրքում, էջ 303—305, որտեղից և արտատպվում է: Վերագրիրը հիշյալ գիրքը կազմողներինն է:

1. Համեմատական պատմությունների մասին» որոշումը տե՛ս «Գրական թերթ», 1932, Ն 7:

2. Նկատի ունի «Խարբեր Աստղիկը» պոեմը, որն առաջին անգամ «Կինոպոեմ» վերնագրով և «Խորհրդային Հայաստանի կոմսոմոլիայի 15-ամյակին» ենթագրեանագրով, տպագրվել է «Գրոհ», 1933, Ն 10—12, էջ 6 (տե՛ս ներկա հրատարակության երկրորդ հատորը):

ԻՆՉՊԵՍ ԵՍ ԳՐՈՂ ԳԱՐԶԱ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՄ ԵՍ ԳՐՈՒՄ

(էջ 291)

Գրված է 1935 թ. Թիֆլիսում, Երևանում հրատարակվող «Գրական սերունդ» հանդեսի խմբագրության պատվերով:

Առաջին անգամ տպագրվել է ԳՄ, 1935, Ա. գիրք, էջ 60—63, որտեղից և արտատպվում է:

ԻՄ ԶԵՐՄԱԳԻՆ ՈՂՋՈՒՅՆԸ

(էջ 296)

Գրված է 1935 թ. նոյեմբերին, Թիֆլիսում, Հայաստանում Սովետական իշխանություն Հաստատվելու 15-րդ տարեդարձի առթիվ:

Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ», 1935, Ն 29, որտեղից և արտատպվում է:

ՄԵՌԱՎԱ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ

(էջ 298)

Գրված է 1936 թ. հունիսին, Թիֆլիսում, Հանճարեղ գրող Ա. Մ. Գորկու (1869—1936) մահվան առթիվ, որը տեղի ունեցավ նույն թվականի հունիսի 18-ին, Մոսկվայում:

Առաջին անգամ տպագրվել է Պրոլ, 1936, հունիսի 20, Ն 240, որտեղից և արտատպվում է:

## ՆԱՄԱԿԻ ԽՄԲԱԳԲՈՒԹՅԱՆ

(էջ 300)

Գրված է 1936 թ. Հուլիսին, ի պատասխան իր ծննդյան 70-ամյակի կապակցությամբ ստացված բազմաթիվ ողջունների: Հոքելյանը մեծ շուրջով նշվել է Երևանում, Քրիլիսիում, Բաբկում, Մասկվայում, ստացվել են բազմաթիվ ողջունի հեռագրեր:

Առաջին անգամ տպագրվել է Պրոլ. 1936, № 140, որտեղից և արտատըմպ-վում է:

## ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԳՐԵՐ

### 1. ՑԱԿԱՆ ԵՎ ՍԱՆԴՈՒԽՏ ԱՇԾՈՒՂ-ԲԼԲՈՒԽԱՆՆԵՐԻՆ

(էջ 303)

Ուղղված է ծնողներին: Բնագիրը պահպում է ԳԹՀՀա № 311: Տպագրվում է համաձայն բնագրի:

### 2. ՍԱՆԴՈՒԽՏ ԱՇԾՈՒՂ-ԲԼԲՈՒԽԱՆԻՆ

(էջ 304)

Բնագիրը պահպում է ԳԹՀՀա № 305: Տպագրվում է համաձայն բնագրի:

1. 1887 թ. Հոկտեմբերի 26-ին Հ. Հ.-ը Բարվից մեկնում է Գանձակի գինակոչ կապակցությամբ: Նոյեմբերի 1-ին տեղի է ունենում զինակոչիկ ների վիճակահանությունը: Հ. Հ.-ը ազատվում է զինվորական ծառայությունից՝ «Ես ծնվեցի նորից, ես ազատվեցի զինվորությունից»,—գրում է նա իր «Հիշատակարան»-ում, նոյեմբերի 3-ին (ԳԹՀՀա, № 159, էջ 27):

### 3. «ԲԱՆԲԵՐ»-Ի ԽՄԲԱԳԲՈՒԹՅԱՆԸ

(էջ 305)

Բնագիրը մեզ չի հասել, ԳԹՀՀա № 297 ա. պահպում է Հ. Հ.-ի ձեռքով դըրված օրինակը, որը չի ստորագրված և չի թվագրված:

Տպագրվում է համաձայն ԳԹՀՀա պահպող օրինակի:

1. «Բանբեր» գրականության և արվեստի» վեցամյա հանդեսը հրատարակվում էր Պետերբուրգում՝ Ն. Աղոնցի (1871—1947) խմբագրությամբ: Լույս է տիրականությանը 2 գիրք, առաջինը՝ 1903 թ. երկրորդը՝ 1904 թ.:

Քանի որ նամակում խոսքը Հ. Հ.-ի թարգմանությամբ հրատարակված Աղոնցիի բանաստեղծությունների Բ. պրակի մասին է («Բանբեր»-ի 1904 թ.), կարելի է չկասկածել, որ նամակը գրված է 1904 թ. մինչև «Բանբեր»-ի երկրորդ համարի լույս տեսնելը:

2. Աղա Նեգրու բանաստեղծությունների Բ. պրակի հրատարակության մասին «Բանբեր»-ի Հ-րդ գորում որևէ նշում չկա:

3. Թե ինչ բանաստեղծություններ է ուզարկել Հ. Հ.-ը նամակի հետ, հայունի չէ:

#### 4. «ՏԱՐԱԴ»-Ի ԽՄԲԱԴՐԻՒՄ

(էջ 306)

Ուղղված է «Տարած» շաբաթաթերթի (1890—1919) խմբագիր Տիգրան Նազարյանին (1862—1926):

Նամակի բնագիրը մեզ չի հասել, Գթշշա Ն 329 պահպում է Հ. Հ.-ի ձեռքով գրված օրինակը:

Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

1. Հ. Հակոբյանը «Տարած»-ին աշխատակցել է 1904 թվականից, Այս պարբերականում տպագրվել են նրա մի շաբթ բանաստեղծությունները և թարգմանությունները. «Կորած ճշմարտությունը», 1904, Ն 12, «Զատկական լնգենդ» (Ֆրուգից), 1904, Ն 13, «Գաբրիանամուտին», 1904, Ն 33, «Երանի նրան», 1905, Ն 31 և այլն:

2. Խոսքը 1906 թ. լույս տեսած «Աշխատանքի երգեր» ժողովածուի մասին է:

3. «Տարած»-ում Հ. Հ.-ի այդ ժողովածուի մասին պահստանական չի տպագրվել:

#### 5. ԱՏԵՓԱՆ ՇԱՀՈՒԽՅԱՆԻՒՄ

(էջ 307)

Բացիկ է: Տպագրության է հանձնել Գ. Հովնանը:

Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ», 1957, Ն 44, որտեղից և արտատպվում է:

1. Ո՞չ 1912 թ. և ո՞չ էլ հետագայում «Աստղ» անունով պարբերական լույս չի տեսել Անդրկովկասում: Այս բացիկից է միայն հայտնի դառնում, որ Ս. Շահնումյանի նախաձեռնությամբ որոշված է եղել հիշյալ անունով լինգալ պարբերական հրատարակել Թիֆլիսում: Դրա համար մինչև իսկ պաշտոնական թույլտվություն ստացված է եղել, և, ըստ երեսութին, Հ. Հ.-ին հանձնարարված է եղել Խմբագրական ու հրատարակչական գործի կազմակերպումը: Կարելի է ենթադրել, որ «Նոր խոսք» պարբերականի (1911 հոկտեմբեր — 1912 հունվար) գագարեցումից հետո, նրան փոխարինելու էր «Աստղ»-ը, որի հրատարակությունը խանճարվում է, թերևս այն բանի հետեւանրով, որ 1912 թ. հունիսի սկզբին («Աստղ»-ի թույլտվությունն ստանալուց և Հակոբյանի բացիկի գրության օրվանից պես) պակաս, քան մեկ ամիս հետո) թարվից Շահումյանը աքսորվում է Աստրախան: Հունիսի 19-ին նա արգեն իր աքսորավայրումն էր:

2. Հայտնի չէ՝ Շահումյանը նամակով պատասխանել է Հակոբյանի բացիկին, թե ոչ: Բայց կարելի է ենթադրել, որ Շահումյանի՝ 1912 թվի սկզբներին (մինչև նրա աքսորվելը) գրված և անտիպ մնացած՝ «Լ. Փափազյանը պատմագետի դերում» հոդվածը տպագրվելու էր «Աստղ»-ում:

## 6. ԲԱԴՐԱՏԵԽՆ

(էջ 308)

Հասցեատիրոց՝ Բագրատի անձնավորությունը պարզել շհաջողվեց: Հայտնի է,  
նամակը ուղարկված է, թե՞ ոչ:

ԳԹՀՀա № 273 պահպամ է Հ. Հ.-ի ձեռքով գրված մի մաքուր օրինակը,  
որը կարող է լինել նաև բնագիրը:

Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

1. Խոսքը բելգիական անվանի քանդակագործ նկարիչ Կոնստանտին Մենյեի  
(1831—1905) մասին է, որի ռեալիստական, դեմոկրատական ուղղության պատ-  
կանող ստեղծագործության մեջ նշանակալից տեղ է գրափում բանվորական-գոր-  
ծարանային կյանքն ու աշխատանքը: Հայտնի են՝ նրա «Ծխախոսի գործարան  
Սելիում», «Հանրահորի մուտքը», «Մատծող բանվորը», «Հանրահորի բանվորու-  
թին», «Մուրճանքարը», «Շառաշող գաղ» քանդակները և «Աշխատանքի հուշար-  
ձան» հոյակապ մանուկնեալ ստեղծագործությունը (արձան՝ 4 սելիքֆներով),  
որի ցուցագրումը արգելել էր բելգիական կառավարությունը և որի բացումը տե-  
ղի ունեցավ Բրյուսելում միայն 1930 թվականին:

Ինչպես երեսում է այս հատորում զետեղված № 68 նամակից, Հ. Հ.-ը ունե-  
ցել է Մենյեի «Բանվոր»-ի և «Գործադուլք»-ի լուսանկարները:

## 7. Լ. Ն. ՍՏԱԲԻՆ ԵՎ Ա. Ա. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆԻՆ

(էջ 310)

ԳԹՀՀա № 331 պահպամ է Հ. Հ.-ի ձեռքով գրված մի մաքուր օրինակ, որը  
կարող է լինել նաև բնագիրը: Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

Ուղղված է Լ. Ն. Ստարին և նրա կին Ա. Ա. Մանուչարյանին: Նամակում  
հիշատակված Շուշանիկը, հավանաբար, Ա. Մանուչարյանի քույր, հին բոլշևիկի  
Շ. Ն. Մանուչարյանն է:

## 8. ՄԻԽԱ. ՑԻԱԿԱՅԱՅԻՆ

(էջ 314)

Ուղղված է ականավոր սեռլուսցիոներ Միխա. Ցիակայային (1865—1950):  
Բնագիրը մեզ չի հասել:

ԳԹՀՀա № 412 պահպամ է Հ. Հ.-ի ձեռքով գրված օրինակը:

Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

## 9. ՄԱ.ՄԻԱ. ՕԲԱԽԵԼԱՇՎԻԼԻ.ՈՒՆ

(էջ 319)

ԳԹՀՀա № 313 պահպամ է Հ. Հ.-ի ձեռքով գրված մի մաքուր օրինակը:  
Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

Նամակն ուղղված է Անդրբեկերացիայի ժողովության նախագահ Մ. Օբախել-  
լաշվիլուն (1883—1937): Հավանաբար այս նամակի անմիջական արդյունքն է այն,  
որ նույն տարվա (1922 թ.) բնթացքում հրատարակվում է Հ. Հ.-ի «Հեղափոխա-  
կան բնմ» ժողովածուն:

## 10. ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

(էջ 321)

Բնագիրը մեզ չի հասել: ԳԹՀՀա Ն 397 պահպում է Հ. Հ.-ի ձեռքով արտապալած մի օրինակը, որը չի թվագրված, սակայն կարելի է համոզված ասել, որ նամակը գրված է 1924 թվականին, մինչև մայիս ամիսը, քանի որ մայիսի 25-ին նշանակված է եղել Անուշավան Վարդանյանի գրական գործունեության 25-ամյա հորելլանի տոնակատարությունը:

Տպագրվում է համաձայն ԳԹՀՀա պահպող օրինակի:

1. Ան, Վարդանյանի հորելլանը հետագակել ու նշվել է նույն տարվա նոյեմբերի 9-ին:

2. Ստանալով իրեն հետաքրքրող կենսագրական տեղեկությունները՝ Հ. Հաւակորյանը օգաագործել է դրանք Վարդանյանի հորելլանի առթիվ գրած իր հոդվածում՝ տպագրված «Մարտակոշ»-ի նույն տարվա Ն 228-ում (տե՛ս սույն հատորը):

## 11. ԱՇԽԱՏ ՀՈՎՃԱՆՆԻՍՅՅԱՆԻՆ

(էջ 322)

Ուղղված է հին բոլշևիկ պատմաբան Աշխատ Հովճաննիսյանին, որն այդ տարիներին (1922—1926) «Նորոք» հանդեսի գլխավոր խմբագիրն էր:

Նամակի բնագիրը մեզ չի հասել: ԳԹՀՀա Ն 318 պահպում է Հ. Հ.-ի ձեռքով արտագրված մի օրինակը, որի համաձայն և տպագրվում է:

1. «Պատմանյակ կյանքիս պոեմը»—այսպես է եղել «Համառոտ պատմություն» պոեմի նախնական վերնագրերից մեկը, որը հետագայում հեղինակը դարձել է ննթավերնակիր (տե՛ս սույն հրատարակության հատ. 2, էջ 287—288):

2. Պոեմը չի տպագրվել ոչ «Նորոք» և ոչ էլ «Վերելք» հանդեսներում: Այն առաջին անգամ տպագրվել է հեղինակի 1926 թ. հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուի մեջ:

3. «Լիակատար ժողովածու» ասելով Հ. Հ.-ը նկատի ունի այն ժամանակ (1924 թ.) իր կողմից հրատարակության պատրաստվող և 1926 թ. հրատարակված «իշխալ ժողովածուն»:

4. «Նորոք» հանդեսի քարտուղարն այն ժամանակ գրամատարգ և թարգմանի Մամիկոն Գևորգյանն էր:

5. «Նորոք»-ի չորրորդ գրքում (1924 թ.) տպագրվել է Հ. Հ.-ի «Մանկություն և պատմակություն»-ը, որը հեղինակը համարել է իր «Մեմուարների» առաջին մասը: Հետագա մասերը՝ հիշողությունները ժամանակի գործիքների և պատմական կարենոր անցրերի մասին, առաջին անգամ ամբողջական ձևով տպագրվել են սույն հրատարակության երրորդ հատորում:

## 12. ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԾՈՂՈՎԻՆ

(էջ 324)

Ուղղված է Անուշավան Վարդանյանի 25-ամյա գրական գործունեության հորելլանը կաղմակերպող հանձնաժողովին:

Բնագիրը մեզ չի հասել: ԳԹՀՀա Ն 397 գ. պահպում է Հ. Հ.-ի ձեռքով արտագրված մի օրինակը: Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

1. Այդ հոգվածը տպագրվել է «Մարտակուլ» թերթի 1924, № 228 (ան'ս ալս հատորը):

2. Որքան մեզ հայտնի է Ան, Վարդանյանի հորելանի առթիվ Հ. Հ.-ը ուրիշ հոգված չի գրել:

### 13. ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

(էջ 325)

Բնագիրը մեզ չի հասել: ԳԹՀՀա № 397ա պահպում է Հ. Հ.-ի ձեռքով արտադրված մի օրինակը: Զի թվադրված, սակայն նախորդ նամակից պարզ է, որ դրված է 1924 թ. հոկտեմբերի 1-ին:

Տպագրվում է համաձայն այլ օրինակի:

### 14. ԱՍՔԱՆԱՋ ՄՈԱՎՅԱՆԻՆ

(էջ 326)

ԳԹՀՀա № 327 գ. պահպում է մի օրինակը, որը չի ստորագրված և չի թվադրված: Սակայն, Հայպետհամակի Հ. Հ.-ին ուղղված մի գրության մեջ խոսվում է այն մասին, որ Հայկ. ՍՍԾ կուսադողիոմ Ա. Մուալյանը (1886—1929) պահտին խնդրում է ուղարկել իր երկիրը՝ հրատարակելու համար (ԳԹՀՀա № 890 ա): Այդ գրությունը թվադրված է 1925 թ., նոյեմբերի 26: Հ. Հ.-ի այս նամակին այդ գրության պատասխանն է: Ուրեմն պետք է գրված լինի 1925 թ. գեկտեմբերին:

Տպագրվում է համաձայն ԳԹՀՀա պահպում օրինակի:

1. Գծվար է ճշգրիտ որոշել նախընթաց քառորդ գարում (1899—1924 թթ.): Հ. Հ.-ի հրատարակած յոթ ժողովածուներից (շաշված «Նոր առավոտ», «Կարմիր ալիքներ» և «Բողշեիկ է Շիր-Կանալը» պոեմների առանձին գրքույիներով հրատարակվածները) այն «երեք գրքույիները», որոնք հեղինակի կողմից ուղարկվել են լուսուժողիոմ Ա. Մուալյանին և որոնք ամփոփում են բանաստեղծի «գրական գործունեության բոլոր ժամանակաշրջանները», որոնցում «շշշափված են պրոլետարական հեղափոխության երեք էտապն էլ»՝ ընդհուպ մինչև նամակի գրության ժամանակի «մոտիկ օրերը»: Կարելի է ասել, որ բացի Հ. Հ.-ի ուղարկած «երեք գրքույիներից», նրա մյուս ժողովածուներն էլ օգտագործվել են հեղինակի այն ստվար ժողովածուն կազմելիս, որը հրատարակվեց 1926 թվականին «Բանաստեղծություններ Ա. հատոր» վերնագրով:

### 15. ՕՖԵԼՅԱ Ա.Ա.ՔԵԼՅԱՆԻՆ

(էջ 328)

Բնագիրը մեզ չի հասել: ԳԹՀՀա № 271 պահպում են Հ. Հ.-ի ձեռքով գրված երկու օրինակներ, որոնք գրեթե նույնն են:

Տպագրվում է համաձայն ԳԹՀՀա պահպում առավել մաքուր և ամբողջական օրինակի:

2. Հիշյալ նամակը ԳԹՀՀա չկա:

2. Նկատի ունի գրական-քննադատ Մերո Մանուցյանին, որն իր «Գրական-սիլուտներ» գրքում (1926 թ., Բաքու) կասկածի է ենթարկել Հ. Հ.-ի «Հավասար-բույրուն» պեսմի (1916—1917) և «Ամրուխ» իմ աշխարհ» բանաստեղծության (1905) գրության տարեթվերի ճշտությունը:

### 16. ՀՍԿՈԲ ԳԵՆՉՅԱՆԻՆ (ԿԱՐԱ-ԴԱՐՎԻՇԻՆ)

(էջ 331)

Բնագիրը պահվում է գթ Կարա-Դարվիշի արխիվում, № 365 թ.: Բացիկ է, չի թվագրված, բայց ունի փոստային կնիք, որի վրա կարդացվում է՝ 26—08—26-ր Տպագրվում է Համաձայն բնագրի:

1. Հակոբ Գենչյանի (Կարա-Դարվիշ) նամակը պահվում է գթՀՀա № 593:
2. Խոսքը Հ. Հ.-ի 1926 թ. «Բանաստեղծություններ» ժողովածուի մասին է:

### 17. ՅԼՈՐԱՅԻՆ

(էջ 332)

Ֆլորայի ազգանունը պարզել չհաջողվեց, բայց որ նա իշխանցի է, երեսում է գթՀՀա պահվող № 831 փաստաթղթից, որը Ֆլորայի նամակն է ուղղված Հ. Հորյանին:

Նամակի բնագիրը մեզ չի հասել, գթՀՀա № 417 պահվում է Հ. Հ.-ի ձեռքով գրված թերթի և ակադիքը, որը չի ստորագրված և չի թվագրված:

ԳթՀՀա № 396 փաստաթղթից կարելի է ենթադրել, որ նամակը գրված է 1927 թ. Հուլիս կամ օգոստոս ամիսներին, քանի որ 1927 թ. օգոստոսի 23-ին գրված այդ փաստաթղթում, Հ. Հ.-ը նշում է Կիլովոդսկի նույն հասցեն, ինչ որ նշված է նամակում:

Տպագրվում է Համաձայն գթՀՀա պահվող օրինակի:

### 18. Մ. Գ. ՌԱԶՈՒՄՈՎԱՅԱՅԻՆ

(էջ 334)

Բնագիրը մեզ չի հասել, գթՀՀա № 408 պահվում է Հ. Հ.-ի ձեռքով գրված ժի օրինակը:

Տպագրվում է Համաձայն այդ օրինակի:

### 19. Ա.ՌՍԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆԻՆ

(էջ 337)

Բնագիրը գտնվում է Հին բոլշևիկ, ակադեմիկոս Կարինյանի մոտ, որը մեզ է Հանձնել Հրատարակելու Համար:

Տպագրվում է Համաձայն բնագրի:

1. «Նոր ուղի» ամսագիրը (1929—1932) Հրատարակվում էր Երևանում նախ Պ. Մակինցյանի, ապա Արտ. Կարինյանի և այնուհետեւ Ե. Չուրարի ու Գր. Սիմոնյանի խմբագրությամբ:

2. Համանաբար նկատի ունի բանաստեղծությունների այն ժողովածուն, որ Հայպետհրատը լույս բնձայեց 1931 թ.:

3. Հիշյալ անավարտ մնացած պուեմի հատվածները առաջին անգամ տպագրվել են ներկա հրատարակության երկրորդ հատորում (տե՛ս էջ 147—182 և 318—321):

4. 1933 թ. Բարփում հրատարակվել է Հ. Հ.-ի բանաստեղծությունների ժողովածուն ««Jeni sabah» («Ենի սարահ», «Նոր առավոտ») վերինագրով: Հալվանաբար ակնարկում է այդ գրքի հրատարակման նախապատրաստությունը:

5. Նկատի ունի վերոհիշյալ պուեմը, որի վրա բանաստեղծն աշխատում էր 1925—26 թվականներից և շարունակեց աշխատել ՀԷտազա տարիներում ևս, բայց ի վիճակի շեղավ ավարտելու, ամբողջացնելու այն (տե՛ս սույն հրատ., 2-րդ հատոր, էջ 318—321, անավարտ պուեմին վերաբերող ծանոթագրությունները):

6. «Նոր խոսք» (1906 թ.), բոլշևիկան լեզար օրաթերթ՝ հրատարակվում էր Թբիլիսիում:

7. «Նոր կյանք» (1906—1907 թթ.) «սպեցիֆիկյան» ուղղության լիդար շաբաթաթերթ՝ հրատարակվում էր Նոր-Նախիչևանում:

## 20. ԽՈՐՃԹԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՐԱՄՄՅԱԻ ԴԵՐԱՍՍԱԿԱՆ ԽՄԲԻՆ

(էջ 339)

ԳԹՀՀ Ա 423 պահպում է Հ. Հ.-ի ձեռքով գրված մի օրինակը, որը մի թվագրված:

Տպագրվում է համաձայն ԳԹՀՀ պահպող օրինակի:

1. Երկանի Պետական Թատրոնը Թիֆլիսում գաստրոլներ է ունեցել 1926, 1930 և 1932 թվականներին: Պատելով այն խաղացանկից, որ Հ. Հ.-ը նշում է իր ողջույն-նամակում՝ խոսք շի կարող լինել 1926 թ. գաստրոների մասին: 1932 թ. Սունդուկյանի անվան Պետթատրոնը արդեն պարգևատրված էր Կարմիր Դրոշի շքանշանով, եթե Հ. Հ.-ի խոսքը այդ տարվա գաստրոլների մասին լիներ, ապա թերևս նա ճիշտապես այդ հանգամանքը: Մնում է ներադրել, որ բանաստեղծը խոսում է 1930 թվականի գաստրոլների մասին, որ տեղի են ունեցել այդ տարվա մայիսին:

Գրանով էլ որոշում ենք նամակի գրության տարեթիվն ու ամիսը:

## 21. ԱԳԵԼԳԵՅՄ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

(էջ 340)

Ուղղված է հայտնի գերասաններ, եղբայրներ Ռոբերտ և Ռաֆայել Լիլիթ Աղեղեյմներին, նրանց թատերական գործունեության 45-ամյակի առթիվ (1885—1931): 1931 թ. մարտի 31-ին, Մոսկվայում տեղի է ունեցել Հորելյանական ներկայացում, որին, ինչպես երեսում է Ռոբերտ Աղեղեյմի նամակից (ԳԹՀՀ Ա 440), Հրամիրված է եղել նաև Հ. Հ.-ը: Հեռագրի պատճենը գրված է հենց այդ Հորելյանական ներկայացման ծրագրի վրա (ԳԹՀՀ Ա 916 թ.):

Տպագրվում է համաձայն ԳԹՀՀ պահպող օրինակի:

1. Բերված են Ս. Պուշկինի «Հուշարձան» բանաստեղծությունից:

## 22. ՊԻՌԱԵՐՆԵՐԻՆ

(էջ 341)

Ուղղված է Թիֆլիսի 26-ի շրջանի VII պիոներական բազայի պիոներներին:

Բնագիրը մեզ չի հասել, ԳԹՀՀ Ն 280 թ. պահպում է Հ. Հ.-ի ձեռքով մաքուր արտադրած օրինակը: Սույն համարի տակ պահպում է հիշյալ բազայի պիոներների՝ Հ. Հ.-ին ուղարկած հրավիրատոմսը, որը թվագրված է 24/4, 1931 թ.:

Տպագրվում է համաձայն ԳԹՀՀ պահպում օրինակի:

## 23. Մ. ԽՆԳԲԵՐԻՆ

(էջ 343)

Նամակի բնագիրը մեզ չի հասել, ԳԹՀՀ Ն 282 ա պահպում է Հ. Հ.-ի ձեռքով գրված մի օրինակը:

Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

Ուղղված է Միրոն Ակիմովիչ Ինգրերին, որը 1932 թվականին ուսուերենից ֆրանսերեն էր թարգմանում Հ. Զակորյանի բանաստեղծությունները՝ առանձին ժողովածուով հրատարակելու համար:

1. Ինգրերի թարգմանությամբ Հ. Հ.-ի բանաստեղծություններից մի քանից սին ծանոթացել է Ռումեն Ռուանը և բարձր գնահատական է տվել: Տե՛ս սույն հատոր Հ. Հ.-ի նամակը Ռ. Ռուանին և նրա ծանոթագրությունը:

2. Հ. Հ.-ի բանաստեղծությունների ուսուերեն «Հօօօօ յոր» ժողովածուն, որը լույս է տեսել 1928 թ., Մոսկվայում, Ա. Վ. Լունաշարսկու առաջարանով:

3. ВОКС — Արտասահմանի հետ կուտուրական կապի Համամիութենական ընկերություն:

4. Տե՛ս նախորդ նամակի 3-րդ ծանոթագրությունը:

## 24. ԹԱԹՈՒԻ ՀՈՒՐՅԱՆԻՆ

(էջ 348)

Նամակի բնագիրը մեզ չի հասել, ԳԹՀՀ Ն 319 ա պահպում է Հ. Հ.-ի ձեռքով գրված մի օրինակը:

Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

Ուղղված է Աղրբեքանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի (ԱՅԱՊՊ — Ազերբայջանական Ասոցիացիա Պրոլետարական Կումիտե) Հայկական սեկցիայի քարտուղար բանաստեղծ Թաթուլ Հովրյանին (1912—1942):

1. «Քաղաքը» պոեմ, Հ. Հ.-ի ծանոթաթյամբ տպագրվել է «Խորհրդային գրող», ամսագրում, 1932, Ն 1 (տե՛ս սույն հրատարակության երկրորդ հատորը, էջ 306—307):

## 25. ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

(էջ 350)

Հեռագրի տեքստը պահպում է ԳԹ, Հ. Արելյանի արխիվում, Ն 68:

Տպագրվում է այդ տեքստը:

1. Ժողովրդական արտիստ Հովհաննես Արելյանի (1869—1936) թատրոնական գործունեության 50-ամյակը տոնվել է 1932 թ. ապրիլի 26—27-ին, Բաքվում:

## 26. ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա.ԲԵԼՅԱՆԻՆ

(էջ 351)

Նամակի բնագիրը մեզ չի հասել: ԳԹՀՀա Ն 263 պահպաժ է Հ. Հ.-ի ձեռքով գրված մի օրինակը:

Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

1. Հ. Հ.-ի այդ հոդվածը «Խողովրդական գերասան Հ. Արելյանի 50-ամյակի» առթիվ՝ վերնագրով, տպագրվել է Պրոլ, 1932, Ն 28 (տե՛ս սույն հրատարակության երրորդ հատորը, էջ 294—296):

2. Ա. Ա. Պուշկինի «Հուշարձան» բանաստեղծության տողերն են:

## 27. ՊԵՏՐՈՍԻՆ

(էջ 353)

Բնագիրը մեզ չի հասել, ԳԹՀՀա Ն 340, պահպաժ է Հ. Հ.-ի ձեռքով գլուխած անստորադիր մի օրինակը:

Տպագրվում է համաձայն այդ օրինակի:

1. Հավանաբար ուղղված է Հ. Հ.-ի հայրենակից Պետրոս Մնացականյանին (Պիեր):

2. Հիշալ նամակը մեզ չի հասել:

3. ԳԹՀՀա պահպաժ է Պ. Մնացականյանի երկու բացիկը (Ն Ն 665, 666) ուղղված Հ. Հ.-ին:

## 28. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 355)

Բնագիրը պահպաժ է ԳԹՀՀա Ն 349:

Տպագրվում է համաձայն բնագրի:

1. Արտասահմանի հետ կուլառուրական կազի Համամիութենական Ընկերության (ВОКС) բաժնի վարիչ բանաստեղծ Մ. Ա. Խնդրերը թարգմանել է Հ. Հ.-ի մի շարք ստեղծագործությունները ֆրանսերեն, առանձին գրքով հրատարակելու համար: Որբան մեզ հայտնի է ֆրանսերեն լեզվով նման ժաղովածու լույս չի տեսել, բայց ԳԹՀՀա Ն 775 Մ. Խնդրերի նամակից երկում է, որ «Հեղափոխություն» բանաստեղծությունը տպագրվել է «Յումանիսե» թերթում: Հնարավոր է, որ նույն թերթում տպագրված լինեն նաև ուրիշ ստանավորներ:

2. Հիշալ փաստաթուղթը հետագայում Հ. Հ.-ը հանձնել է թանգարանին և պահպաժ է ԳԹՀՀա Ն 859:

3. ԳԹ Գ. Լևոնյանի արխիվում հիշալ պատմվածքի ձեռագիրը չկա: (Տե՛ս Հրատարակության 3-րդ հատորը, էջ 453. «Առաջին սերը» պատմվածքի ծառնոթագրությունը):

4. ԳԹՀՀա Ն 567 պահպաժ է Գ. Լևոնյանի մի բացիկը, որտեղ խոսվում է «Ժարեգիրը» ժողովածուի համար Հ. Հ.-ի ուղարկած նյութի մասին:

5. Խոսրը 1932 թ. Հայպետհրատի լույս ընծայած «Հռկանմբեր—նոյեմբեր» տարեգրքի մասին է:

6. Եղիշե Զարենց և Եղիշ Զուբարի:

7. Պոեմի այդ բնագիրը գտնվում է ԳԹ Հայ գրողների ձեռագրերի ֆոն-զում, № 34:

## 29. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 357)

Բնագիրը պահվում է ԳԹՀՀ Ա 351:

Տպագրվում է Համաձայն բնագրի:

Նամակում նշված բոլոր փաստաթղթերը պահվում են ԳԹՀՀ ա:

1. «Ժամանակ է» վերնագրով հոդվածը տե՛ս սույն հատորը:

## 30. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 360)

Բնագիրը պահվում է ԳԹՀՀ Ա 355:

Տպագրվում է Համաձայն բնագրի:

1. Հոդվածը վերնագրված է «Նամակ Հաջիբենդից» (տե՛ս սույն հատորը):

2. Հիշյալ հոդվածը գտնել Հաջողվից:

3. Հ. Հ.-ի խնդրանքով Ա. Վ. Լունաշարսկին «Բանվորական դրադարան» մասնաշարի համար 1914 թ. գրել է «Դեղարվեստը գեղարվեստի», թե՝ գեղարվեստը կյանքի համար» գրքույկը, որն առաջին անգամ նույն թվականին տպադրվել է հայերեն, Հ. Հ.-ի խարդմանությամբ և առաջարանով:

## 31. ԳԱԼԱԿԱՏԻՈՆ ՏԱՐԻՁԵՒՆ

(էջ 364)

Ուղղված է վրաց սովորական ականավոր բանաստեղծ Գալակտիոն Տարի-ձեխն նրա դրական գործունեության 25-ամյա տարեգրքի առթիվ, ԳԹՀՀ Ա 406 պահվում է Հ. Հ.-ի ձեռքով գրված օրինակը:

Տպագրվում է Համաձայն այդ օրինակի:

## 32. ՌՈՄԵՆ ՌՈԼԱՆԻՆ

(էջ 366)

Հայոնի չէ՝ ուղարկված է Հասցեատիրոջը, թե՞ ոչ:

ԳԹՀՀ Ա 341 պահվում է մի օրինակը, որը չի թվագրված:

Տպագրվում է Համաձայն այդ օրինակի:

1. ԳԹՀՀ Ա 846 պահվում է նաև մ. Ռոլանի նամակի պատճենը՝ ուղղված Քարդմանին ինգրերին Հ. Հ.-ի պոեմների ֆրանսերեն թարգմանության մասին

Առողջապահությանը գրում է Հետեւյալը. — «Հակոբյանի պոեմների Զեր թարգմանությունը ինձ հույց հետարրեց։ Դրանք հենց այնպիսի էսպիկական երգեր են, որպիսիք ես սպառում էի՝ թե առաջ կրերի ձեր Սեծ ուղղուցիան։ Հայերն լեզվով դա պետք է մինչ հզոր երաժշտություն։ Դուք թարգմանել եք այն ֆրանսերեն՝ մեծ արվեստով։»

Ռ. Ռոլանի նամակը գրված է 1933 թ. մայիսի 20-ին և ստացված է նույն թվի հունիսի 4-ին։ Այսականց կարելի է հնիթագրել, որ Հ. Հ.-ի նամակը գրված է 1933 թ. ամռանը։

### 33. ԵՊԻՇԵ ԶԱՐԵՆՑԻՆ

(Էջ 369)

ԳԹՀՀամ № 335 պահպատ է Հ. Հ.-ի ձեռքով գրված սեագրությունը, որը չի թվագրված, բայց դատելով Հ. Հ.-ի գրական գործունեության 40-ամյա հորեւլաւանի մասին հիշատակությունից (որոշված է եղել հորեւլանը տոնել 1933 թ. հոկտեմբերին), բայց տոնվել է 1934 թ. գարնանը), կարելի է համոզված ասել, որ նամակը գրված է 1933 թ. աշնանը։ Բացի այդ, Գ. Ղազարյանին և մի քանի այլ անձանց Հ. Հ.-ի 1933 թ. գրած նամակներում խոսվում է նույն հարցերի մասին։ Տպագրվում է համաձայն ԳԹՀՀամ պահպատ օրինակի։

### 34. ԳԱՌԵՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

(Էջ 371)

Նամակի բնագիրը պահպատ է ԳԹՀՀամ նոր նյութերում։

Չի թվագրված, սակայն քանի որ ակնարկվում է Ե. Զարենցին ուղղված նաւմակը, կարելի է հնիթագրել, որ գրված է 1933 թ. աշնանը։

Տպագրվում է համաձայն բնագրի։

1. Հայպետհրատը նախատեսել էր 1934 թ. հրատարակել հին բոլեկիկ, բայց նաստեղծ Հակոբ Բեհանյանի (Կամարի) երկերի մի փոքրիկ ժողովածու։ Գիրքը կազմող Գ. Ղազարյանը մի նամակով Հ. Հ.-ին խնդրել է ուղարկել Կամարու իր մոտ եղած նյութերը։ Հ. Հ.-ի այս նամակում խոսքը հենց այդ նյութերի հավաքման և առարձման մասին է։

2. Տե՛ս սույն հատորի 44-րդ նամակը։

### 35. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(Էջ 372)

Բնագիրը պահպատ է ԳԹՀՀամ № 360։

Տպագրվում է համաձայն բնագրի։

1. ԳԹՀՀամ պահպատ են նամակում հիշատակված բոլոր նյութերը, լրագրերի առանձին համարների ու կտրվածքների հավաքածուն, բանաստեղծին նվիրված գրքերը։ Հեղինակների մակագրություններով, նրա ստացած նամակները, ինչպես նրան ձևանված բազմաթիվ բանաստեղծությունները, որոնք գրված են այլ այլ ժամանակներում, գլխավորապես Հ. Հ.-ի գրական գործունեության 30-ամյացը։

Հորելյանի (1923), նրա ծննդյան 60-ամյակի (1926) և 70-ամյակի (1936) օրերին։ Ստորև բերում ենք սովետական ուսուանվանի բանաստեղծ Անդրեյ Գորոգեցկու ձոնը։

## АКОПУ АКОПЯНУ

По звукам «Демона» и «Мцыри»  
Учились мы любить Кавказ.  
Но в мухах бедственной Наири  
Я прочитал иной рассказ.

О том, как гибли сотни тысяч  
В братоубийственной войне.  
Его на скалах надо высечь!  
Прожег он болью память мне!

И я, из пламени и крови  
Детей схватив к себе на грудь,  
Не знал, какой им путь готовить,  
Где Айастана верный путь.

Но этот путь тропой подполья  
Вперед стремился напролом.  
Как больно мне, что им не шел я!  
Что поздно я узнал о нем!

Земля запуталась в окопах,  
Земля костями проросла.  
Но песня мудрого Акопа  
К пути счастливому звала.

Трудом и радостью гремели  
Ее сигнальные гудки,  
Зовя к одной и той же цели  
За взмахом ленинской руки.

Она рвалась из Айастана,  
Чтоб все воскреснули рабы,  
И утешала Шаумяна  
В час героической борьбы.

Свершилось все, о чем звучала  
Она в старинные годы.  
И в годы нашего начала  
Она все также молода.

Лети же дальние песнь Акопа!  
Туда, где ждет врагов удар,

Где рвется рабская Европа  
К свободе! Быть бы выиграли!

Сергей Городецкий

5/II—28  
Москва

2. Գ. Տիգրանյանի „Избранные стихотворения“ 1927, գիրքը մակագրված է „Акопу Акопяну, любимому поэту и старшему товарищу. Պալլո Տիգրանյան 2/VII, 2/2:“

3. Գրչչան պահպատ են Գ. Սանսիկովի երկու գրքերը. ա) „Лениниата“, 1925, մակագրված „Милому, до чогому Акопу Акопяну, славному и старшему поэту пролетариата. Крепко Г. Санников, 10/Iv“; բ) „Молдое вино“. (стихи), 1927, մակագրված „Дорогому, мастеровому Ако у Акопяну, поэту первых бурь и зари пролегариста, певцу трудовой Армении, от молодого автора на теплую память о встречах, беседах, о Тифлисе и вообще о хороших днях, любови“. Г. Санников. 11/X. I 1927г Москва“.

4. Այս գիրքը մակագրված է „Дорогому тов. Акопу Акопяну от переводчика в знак глубокого уважения. М. Ингбер (Мир) 3)/IX.32“.

5. Բողզանովի գիրքը լույս է տեսել 1923թ. և մակագրված է „Якову Миннаевичу Акопину не память от автора. Москва, 5/II 1925“.

6. Գիրքը լույս է տեսել 1929թ. և մակագրված է „Товарищу Акопу Миннаевичу Акопяну с глубоким уважением и братским приветом. Ф. Бересский, Москва, 15/X, 1929.“.

7. Հ. Հ-ի օրինակը ունի հետեւալ մակագրությունը. „Глубокоуважаемому, дорожому Ако у Миннаевичу Акопяну... В. Ставский 20/VII, 1931г.“.

8. Գիրքը մակագրված է „Большому и славному поэту и чуткому человеку Акопу Акопяну с любовью. С. Обрадович“.

9. Գիրքը հրատարակել է 1925թ. Լենինցրագում: Հ. Հ ին նվիրված օրինակը մակագրված է „Народному поэту Акопу Акопяну Е. Ланнере. 21/XI 1930. Харьков“.

10. Ա. Գրողեցիու գիրքը հրատարակվել է 1918թ. Թիֆլիսում: Հ. Հ-ին նվիրված օրինակը ունի հետեւալ մակագրությունը. „Дорогому товарищу Акопу Акопяну мои первые песни об Армении. С. Городецкий. 2, II, 1925“.

11. Գիրքը մակագրված է „Славному поэту Армении Акопу Акопяну, на память о нашей встрече, с товарищеским приветом. М. Борисоглебский, 1928г.“.

### 36. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 377)

Բնադիրը պահպատ է ԳԹՀՀ մ 361:

Տպագրվում է համաձայն բնադիրի:

1. Առ. Շահումյանի ուղարկած բացիկը պահպատ է ԳԹՀՀ մ 703:

2. ԳթՀՀաւ պահվում են Ստ. Շահումյանի գրած երկու բացիկ (№ Ա702, 763) և մի նամակ (№ 704):

3. Արսեն Ամիրյանի նամակը պահվում է ԳթՀՀաւ № 453:

4. «Լուսարաց»—Գրական-գեղարվեստական ժողովածու (1927—1930), հրատարակվում էր Թիֆլիսում, որպես Վրաստանի գրողների ֆեդերացիայի հայկական սեկցիայի արձանախում լույս է տևել ընդամենը 6 համար:

5. «Արշավ»—Վրաստանի Սովորական գրողների միության Հայկական սեկցիայի օրդան (1932 թ.), հրատարակվում էր Թիֆլիսում՝ Վահան Աստրյանի խրճիքորոթյամբ:

### 37. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(Էջ 379)

Բնագիրը պահվում է ԳթՀՀաւ № 363:

Տպագրվում է համաձայն բնագրի:

1. Միխա Ցիակայայի նամակը (ավելի ճիշտ բացիկ) գրված է 1911 թ. փետրվար 26-ին (14-ին), ժնկից և պահվում է ԳթՀՀաւ № 801. այն առաջին անգամ տպագրվել է Հայկական ՍՍՌ ԳԱԱ «Տեղեկագիր» 1953 թ., № 10, էջ 19:

Մ. Ցիակայան տեղեկացնում է, որ ժնկում ինքն ստացել է Հ. Հ.-ի ուղարկած «Նոր առաջնորդ»-ի օրինակները թե Մաքսիմ Գորկուն և թե այլ ծանոթ անձանց նվիրելու «հեղինակի հանձնարարությամբ»:

«Дорогой Акоп, — говорит и Циакаян, — твое письмо получил, очень понравилось... получил только пять экземпляров «Нор Аравот». Сделал надписи «по поручению автора» и сегодня же отправляю... Максиму Горькому, — передаю здешним двум библиотекам.. и пятый экземпляр, тоже «по поручению автора», дарю моему одному другу, который тебя знает и много раз прислал тебе поклоны..

Жму крепко руку. Миха».

2. Նամակը ԳթՀՀաւ չկա:

3. Հ. Հ.-ի նախաձեռնությամբ, նրա թարգմանությամբ և առաջարանով 1914 թ. հրատարակված այդ գրքովիկի («Գեղարվեստը գեղարվեստի», թե՛ գեղարվեստը կյանքի համար») մի օրինակը պահվում է ԳթՀՀաւ:

4. Նամակում հիշատակված «Պրոլետարական պոեզիան և ապագա գեղարվեստը» աշխատությունը ԳթՀՀաւ չկա:

5. Հիշյալ նամակը պահվում է ԳթՀՀաւ № 571:

6. «Գրական թերթ»-ի Հ. Հ.-ին նվիրված համարը լույս է տևել 1934 թ. փետրվարի 28-ին (№ 6), որ տպագրված են Վ. Ն.-ի (Վ. Նորենցի) «Հակոբ Հակոբյանի գրական-հասարակական 40-ամյա գործունեության ցուցահանդեսը» հոդվածը, Ստ. Շահումյանի երկու բացիկը, Ա. Ամիրյանի, Ա. Լունաշարսկու և Ա. Նեղոստ նամակները՝ ուղղված Հ. Հակոբյանին:

38. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 381)

Բնագիրը պահվում է ԳԹՀՀամ № 364:

Տպագրվում է Համաձայն բնագրի:

Նամակում Հիշատակիված բոլոր նյութերը գտնվում են ԳԹՀՀամ:

1. Հ. Հ.-ի այդ նամակը՝ ուղղված Ա. Ամիրյանին, գտնել չհաջողվեց:

39. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 384)

Բնագիրը պահվում է ԳԹՀՀամ № 366:

Առաջին էջի անկյունում ուժի նշում՝ «Բնագամին Մոսկվայի դրական մուզեյի նամակը, Հ. Հ.»:

Տպագրվում է Համաձայն բնագրի:

1. Յ. Բերեզովսկու ինք նամակները, գրված 1920—1932 թթ., պահվում են ԳԹՀՀամ № 493—501:

2. Ա. Կարինյանի հոդվածը՝ «Երևանագրված է «Народный поэт Закавказья — Акоп Акопян» և տպագրված է «Красная газета» (вечерний выпуск), 1928, № 184:

40. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 385)

Բնագիրը պահվում է ԳԹՀՀամ № 369:

Տպագրվում է Համաձայն բնագրի:

41. ԳԻՒԻԶԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ

(էջ 388)

Գրության թվականն ստուգ հայտնի չէ: ԳԹՀՀամ № 279 պահվում է մի օրինակը, որը չի թվագրված: Գրախառարար չգտնվեց նաև գպացականների ուղարկած կած ուղղուցներ: Սակայն պեսը է ենթագրել, որ վերջին ուղարկված է բանաստեղծի գրական-հասարակական գործունեության 40-ամյակի առթիվ, 1934 թ. գարնանը:

Տպագրվում է Համաձայն ԳԹՀՀամ պահվող օրինակի:

1. «Թախտակոր պոետներից մեկը» արտահայտությունը Հ. Հ. բերում է «Новое утро» (1928 թ.) գրքի Ա. Վ. Լուսաշարսկու գրած առաջարանից:

42. ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

(էջ 389)

Հեռադիրն ուղարկված է Ք. պատասխան Սովորական գրողների Համամիութենական առաջին Համագումարի մանդատային հանձնաժողովի հետեւալ գրության:

«Мандатная комиссия Всесоюзного съезда советских писателей по поручению президиума приглашает Вас принять участие в работах съезда.

Братский привет

Мандатная комиссия»

20/VIII, 1934» (Ф.22.№ 909):

Ф.22.№ 909а պահպամ է Հ. Հ.-ի ձեռքբալ արտադրված օրինակը:  
Տպագրվում է Համաձայն այդ օրինակի:

#### 43. Ա.Զ.Ա.Տ ՎԵՏՏՈՒՆԻՒՆ

(էջ 390)

Նամակն ուղղված է «Խորհրդային արվեստ» երկարաժամկերթի պատասխանատու խմբագիր Ազատ Վշտունով (1894—1958):

Բնագիրը մեզ չի համեմ, Գ. Հ.-ի ձեռքբալ գրոված մի օրինակը, որը չի լվագրված:

Տպագրվում է Համաձայն այդ օրինակի:

1. Հ. Հ.-ի հուշերը տպագրվել են «Խորհրդային արվեստ»-ի 1934 թ. նոյեմբերի Համարում (№ 11), «Մի բնկոր իմ հուշերից» վերնադրով, որից կարելի է Կղրակացնել, ին նաև ակը գրված է 1934 թ. աշնանը:

#### 46. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 391)

Բնագիրը պահպամ է Գ. Հ.-ի 373:

Տպագրված է Համաձայն բնագրի:

1. Խորը 1935 թ. Հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուի մասին է:

2. Հ. Հ.-ն իր այդ ժողովածուի առաջին բաժինը վերնագրել է «Gredo» (Պավանանք), այս բաժնում ամփոփված բանաստեղծությունները («Ամբոխի կոչ», «Էմ աշխարքը», «Ա.Յա նորից ես», «Պահակը», «Ազգայիններին» և «Երդ Հին գվարդիականի») Համարել է իր գրական-գեղարվեստական ու գաղափարական գաղանանքի արտահայտությունը:

3. Նամակում նշված երեք փաստաթղթերն ել պահպամ են Գ. Հ.-ի:

4. Հ. Հ.-ի հիշատակած էպիգրամը (տե՛ս Գ. Հ.-ի 886դ) հետեւալն է.

Երևանում կա մի փողոց — Դուրս է զալիս՝ երևանում

Հակոբյան են գրել անուն, — Փողոց կոչելն ավել հեշտ է,

Աշխատամ են, որ նիշ գտնեն, — Քան տախտակի վրա անուն

Տախտակ չկա Հայաստանում: Գրել, կախելն... մախլսս ըշտե...

#### 47. ԺԱՍՄԵՆԻՆ

(էջ 393)

Հեռագիրն ուղղված է ժողովրդական գերասանութիւն ժամանելին, նրա բեմական գործունեության (1910—1935) 25-ամյակի առթիվը: Հորելլանը նշվել է 1935 թ., ապրիլի 7-ին Բարձրությունը: Հեռագրի տեքստը գրված է Հորելլանական Հանդեսի ծրագրի վրա (Գ. Հ.-ի 916դ):

Տպագրվում է այդ տեքստը:

(Եշ 394)

Բնագիրը պահվում է ԳԹՀՀ Ն 377:

Տպագրվում է Համաձայն բնագրի:

1. Հ. Հ.-ի նշած արձակ նյութերը, որ, ինչպես երևում է այս նամակից, կազմելու էին նրա երկերի երկրորդ և երրորդ հատորները, պահվում են ԳԹՀՀ առաջած նըւֆած նյութերի մեծ մասը հենց այդ ժամանակ Հ. Հ.-ն արտադրել է տվել, վերանայել, էջերը համարակալել, պատրաստել տպագրության: Փաստաթղթերի մեջ՝ սակայն, չկան Պետրոս Աղամյանի, Արքունու և Արքայանու մասին առանձին հուշեր, նրանց, ինչպես նաև այլ գրական-հասարակական գործիչների մասին բարգական հանգամանորեն խոսվում է Հ. Հ.-ի ընդուրածակ ինքնակենսագրականում, որի մի խոչըր մասը նույնպես պատրաստված է եղել տպագրության համար:

Նամակում Հ. Հ.-ը նշում է 15 պատմվածք, որոնք պետք է տպագրվեին «Ազիտատորի հուշերից» ընդհանուր խորագրի տակ: Հայտնի է, որ 1927 թ. հրատարակված «Ազիտատորի հուշերից» ժողովածուի մեջ զետեղված են ընդգամենը 10 պատմվածք: Խոկ թի որոնք պետք է լինեին մնացած 5-ը՝ հաստատ չի կարելի ասել: ԳԹՀՀ պահվում են մի քանի պատմվածքների սևագիր-ինքնագրերը («Գրաշար Սանդրոն», «Բանկի լիրիկը» և այլն), հնարավոր է, որ Հ. Հ.-ը նկատի ունի գրանք: Սակայն ԳԹՀՀ պահվող «Ազիտատորի հուշերից» պատմվածքաշարերի մեքենագիր օրինակներից մեկի կազմի վրա Հ. Հ.-ը գրել է գրքի ցանկը, որի մեջ՝ հայտնի վերնագրերի հետ, հանդիպում են նաև անծանոթ վերնագրեր, որից կարելի է ենթադրել, թի Հ. Հ.-ը ունեցել է նաև այլ մտահղացումներ, որոնք չեն իրագործվել, համենայն գեպս գրանց գրառումները չեն հասել մեզ:

Հ. Հ.-ի իդը՝ տեսնել իր արձակ երկերի հրատարակությունը առանձին հատորով, մնացել է անկատար: Նրա մահից հետո միայն փորձեր են արվել ի մի հավաքելու և հրատարակելու արձակ երկերը (Հայերեն՝ Հ. Մկրտչյանի կազմած և 1951 թ. հրատարակված «Երկեղը» և ոռուերն առ Հերքանու «Էլեքտրոն» ժողովածուն, Մոսկվա, Գուլիստիգդատի հրատարակությամբ, 1951 և 1956 թթ., որ կազմել են Ասկաս արյան ու Ա. Ռոկերյանը): Հ. Հ.-ի զեղարվեստական արձակը նրա բազմաթիվ հոդվածների և նամակների հետ, կազմում են սույն հրատարակության III և IV հատորները:

2. Նամակում Հ. Հ.-ը սխալմամբ «Գրական սերունդ»-ը անվանում է «Խեռու հրագային սերունդ», ինչպես նախորդ նամակներից մի քանիսի մեջ՝ անվանում է «Նոր սերունդ»:

## 49. Ա.Վ.Ս.Ի ՎԱՐԴԱԿԱՆԱԳԻՆ

(Եշ 397)

Ուղղված է «Պրուետար» թերթի խմբագրին:

Բնագիրը մեզ չի հասել, ԳԹՀՀ Ն 398 պահպանվում է մի օրինակը, որը միթքագրված Քանի որ խստքը «Արեն ու աշխատանքը» բանաստեղծության մասին է (գրված՝ 1935 թ. նոյեմբերի 2-ին), կարելի է ենթադրել, որ նամակը գրված է 1935 թ. աշնանը:

Տպագրվում է Համաձայն ԳԹՀՀ պահվող օրինակի:

50. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 399)

Քնագիրը պահվում է ԳԹՀՀա № 332:  
Տպագրվում է համաձայն բնագրի:  
Նամակում հիշատակված նյաւթերը գտնվում են ԳԹՀՀա:

51. ՄԱԴԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

(էջ 402)

ԳԹՀՀա 339 պահվում է մի մեքնագրված օրինակ, որը չի թվագրված,  
բայց նկատի ունենալով, որ Մ. Պետրոսյանի գրական գործունեության 40-ամյա-  
կը նշվել է 1937 թ. մարտի 18-ին, կարելի է հաստատ ասել, որ գրված է նույն  
կամ նախորդ օրը:

Տպագրվում է համաձայն ԳԹՀՀա պահվող օրինակի:

## ԱՆՎԱՆԱՑԱՆԻ

- Արելսոն Ա. 201  
 Արելսոն Հ. 350, 351, 352  
 Արեղյան Մ. 358  
 Արիյանց 291  
 Ադամյան Պ. 269, 270, 323, 390, 395  
 Ադելքեյմ Ռաֆայել 340  
 Ադելքեյմ Ռոբերտ 340  
 Ադելքեյմ Տիգրան 252  
 Ազատյան Հ. 185  
 Աթանասյան Ա. 230, 361  
 Աթարբեկյան Գ. 161, 162, 163  
 Աւագան Վ. 373  
 Աւագվերդյան 207, 208, 210, 214  
 Աւերանդր ԻԻ 120  
 Ավիտանյան Ի. 214, 215, 216  
 Ակոպով 121  
 Ահարոնյան Ալ. 84, 230, 231, 232  
 Ահարոնյան 201, 203, 204  
 Աղայան Դ. 125, 247, 284, 374, 382,  
     395  
 Աղասի 216, 217  
 Ամիրյան Ա. (Ամիրյան) 96, 185, 275,  
     357, 359, 362, 378, 380, 381  
 Անանուն Գավիթ  
     Տե՛ս Տեր-Գանիելյան Գ.  
 Անգրոնիկ 359  
 Անիշկա (Խանոսյան) 169  
 Անիսիմով 64  
 Աշուղ-Բլուլյան Ա. 303, 304  
 Աշուղ-Բլուլյան Յ. 303, 323, 348  
 Առաքելյան Օ. 328  
 Աստղիկ 203  
 Ավագյան 126  
 Աւրյան Վ. 373  
 Արագիր Մ. 185, 373  
 Արակելով 121  
 Արասիանյան Ալ. 358, 360, 382, 395  
 Արարատյան 210  
 Արարայան Պ. 223  
 Արծրունի Գր. 323, 351, 395  
 Արծրունի Վ. 230, 231, 232  
 Արմեն Մկրտիչ 375  
 Արմենյան Ա. 207, 208, 215, 216, 217,  
     224, 226  
 Բարալյան Ա. 344, 345  
 Բարայան 202, 204,  
 Բագրատ 308, 309  
 Բալախովիչ-Բուլակ 108  
 Բալյան Վ. 322  
 Բակոնց Ա. 356  
 Բաղդասարով Հ. 379  
 Բանվորյան Ա. 181  
 Բաշինչաղյան Գ. 382, 399  
 Բեդնի Գեմյան 265, 266, 344, 345, 373  
 Բեժանյան Հ. (Կամարի) 185, 371  
 Բեժանյան Վ. 204  
 Բելինսկի Վ. 283, 284  
 Բերեգովսկի Յ. 373, 374  
 Բերիմճանով 122, 292, 400  
 Բերուան 206  
 Բլանկի Լ. Օգ. 152  
 Բոգդանով Ա. 374, 382  
 Բոշորիշվիլի Մ. 152  
 Բորիսովիկովի Մ. 373, 374  
 Բըյուսով Վ. 373  
 Բրուկի 182  
 Բուտիբին 90, 91  
 Բուրյե 54

- Դասպոն Պ. Ա. 139, 140  
 Դաստե Ա. 243  
 Դենչյան Հ. (Կարա-դարբիշ) 331, 373  
 Դերասիմով Մ. 343, 345  
 Դերով 152  
 Դյութե 400  
 Դնունի Բոգդան 276  
 Դոդու Ն. 380  
 Դոնիկը 216  
 Դորիկ Մ. 84, 209, 211, 212, 226, 243,  
     268, 276, 277, 298, 299, 362, 379,  
     382  
 Դորդեցիկ Մ. 344, 345, 372, 373, 374,  
     386  
 Դրանիկ 310, 311  
 Դրիգորյան Պ. 353  
 Դուլազյան Օ. 214  
 Դուլոյան Ա. 300  
 Դեռ (Բանվոր) 373  
  
 Դաբաղյան Ն. 390  
 Դանիլով Մ. 344, 345  
 Դանչյան (Գարուզյան) 370  
 Դաշտոյան Ռ. 181  
 Դավիթյանյան 208  
 Դարրինյան Մ. 373  
 Դեմիքոյան Գ. 220, 382  
 Դենիկին Ա. 49, 58, 59, 60, 61, 65, 71,  
     74, 81  
 Դորբոլուրով Ն. 292  
 Դուրիճնուկի 99  
 Դումբածե Լ. 169  
 Դուրյան-Արմենյան Ե. 215, 216  
  
 Եղիազարյան Ա. 300  
 Եղիսկոպոսյան Ա. 174  
 Եղոնիկյան Ա. 181, 185  
 Երիցյան Գ. 222  
  
 Զաբել 210, 213  
 Զամուկյան 206  
 Զարյան Ն. 373, 390  
 Զահրաբյան Ա. 184, 358  
 Զահրաբյան Մ. 185  
 Զուրաբով 216, 217  
 Զեմ. Պ. 97
- Ելիավա Շ. 99  
 Ենգելս Ֆ. 144  
 Ենվեր Փաշյան 69  
 Էռուի Մ. 373  
  
 Բաղկասյան Ե. 378, 383, 387  
 Բաթում 151  
 Բան 198  
 Բառումով 334, 335  
 Բարոշկիձե Մ. 126  
 Բոփյան Ե. 182  
 Բուժմանյանց Հար. 198, 199, 200  
 Բուժմանյանց Հովհ. 230, 247, 248, 249,  
     268, 279, 374, 395  
  
 Ճամանին 393  
 Ժարով Ա. 343, 345, 373  
 Ժարդանիան Ե. 110, 111, 112, 132  
  
 Ինիլ Բելա 286, 288  
 Ինգեբը Մ. 343, 345, 366, 367, 368, 373  
 Իշխանյան Բ. 218, 268, 274, 275, 279,  
     361  
 Իսահակյան Ավ. 220, 232  
 Իվնիկ Բ. 344, 345  
  
 Լանսերե Ե. 374  
 Լանտե Վ. 373  
 Լերեկի 374, 386  
 Լինին Վ. Ի. 54, 55, 82, 92, 102, 103,  
     143, 144, 145, 150, 151, 246, 264,  
     267, 284, 362, 400  
 Լիռ (Բարախանյան Ա.) 268  
 Լիրինիստ Կ. 144, 375  
 Լյուբիմով Ա. 356, 399  
 Լյուբումրուրդ Բ. 144  
 Լունաշարսկի Ա. 243, 255, 260, 283,  
     331, 335, 362, 366, 367, 368, 373,  
     379, 380, 382, 386, 388, 400  
 Լիոնյան Գ. 279, 356, 361  
  
 Խաժմակ Գար. 182  
 Խալուկին Ստ. 168  
 Խանոյան Ա. 162, 168, 181, 185, 357,  
     378, 380, 381  
 Խալասլուրիձե 374  
 Խալասլուրյան Վ. 383, 400

- Խաշիկյան 201  
 Խատիսով Ա. 52, 69  
 Խրիմյան Մ. 323, 360  
 Խումարյան Ա. 181, 377  
 Մատուցյան Ա. 219  
 Կազին Վ. 373  
 Կալանտաձե Բ. 125, 126  
 Կամո 135, 136, 137, 144, 150, 151,  
     152, 153, 161, 164, 165, 169  
 Կամսարական Ա. 373, 374  
 Կասյան Ս. 181  
 Կարագոլյան 311, 313  
 Կարալով Ի. 380  
 Կարա-Մուրզա Գ. 189, 334, 335, 379,  
     382  
 Կարապետյան 202  
 Կարապետով 122, 292, 400  
 Կարինյան Ա. 184, 284, 337, 377, 383  
 Կարսամովա 215, 216  
 Կառուցկի Կ. 67, 182  
 Կափս-Դեխտերովա 198  
 Կիկնաձե 126  
 Կիսեի 127  
 Կիրիլլով Վ. 343, 344, 345, 373  
 Կոլչակ Ա. 58, 60, 61  
 Կողյան Հ. 391, 395  
 Կորդանով Գ. 97  
 Կրայի 144  
 Կրասինիկով 334, 335  
 Կուրդիանի 127  
 Կուրդինյան Շ. 279, 361  
  
 Հակոբյան Է. 311, 313, 314, 315, 316,  
     317  
 Հակոբյան Հր. 311, 313, 317, 315, 316,  
     317  
 Հակոբյան Մ. 311, 313, 314, 315, 316,  
     317  
 Հակոբյան Ռ. 314, 316  
 Համբիկ Հ. 203, 206, 208, 210, 214, 223  
 Հարությունյան Ա. 213  
 Հառապտման Գ. 209  
 Հովհաննիսյան Ա. 322  
 Հովսեփյան Ա. 96, 276  
  
 Հովսեփյան Վ. 322  
 Հուրյան Բ. 343  
 Հազարյան Գ. 370, 371  
 Հազարյան Հ. (Լազո) 373  
 Հարացյան Գ. (Արկումիկ) 171, 172,  
     173, 174, 181  
 Հուկասով Ա. 322  
  
 Հանիկյան 204  
  
 Մալիսասյան Ա. 283  
 Մալիկին 97  
 Մախարաձե Յ. 98, 99, 133, 374  
 Մակարյան 204, 206  
 Մակինցյան Պ. 268, 276, 277, 278, 284  
 Մամիկոնյան Ա. 214  
 Մամիկոնյան Ա. 172, 173, 174  
 Մամիկոնյան Տ. 172, 174  
 Մայուսըրյան Օ. 205, 213  
 Մանասյան Հ. 359  
 Մանվելյան Լ. 382  
 Մանուչարյան Ա. 310, 311, 313  
 Մանուցյան Ս. 268, 330  
 Մարտիրոսյան 151  
 Մարքս Կ. 124, 144  
 Մգալորբէվիլի 300  
 Մելիքյան Մ. (Դեղուշկո) 148, 168, 185,  
     276, 284  
 Մելիքյան 210, 214  
 Մելիք-Շահնազարյան Բ. 167, 169, 170  
 Մենակ Վ. (Ահարոնյան) 219  
 Մենյե Կ. 308, 400  
 Մերեժկովսկի Գ. Ս. 114  
 Միլյուկով Պ. Ն. 114  
 Միմինո-Դեմոկրատյան 184  
 Միրացյան Գ. 223, 226  
 Միրզոյան Վ. 210, 214  
 Մկրտչյան Ա. 349  
 Մկրտչյան Հ. 391  
 Մղելաձե Ի. 90, 91  
 Մյամիկյան Ա. 266, 267, 373, 380  
 Մնացականյան Պ. (Պիկը) 184  
 Մոտվյան Ա. 185, 322, 326  
 Մուրադյան Մ. 172, 174  
 Մուրացյան 374

- Յաշիկի 127  
 Յարալով 122  
 Յուղենիչ Ն. Ե. 58  
 Յուշկիչ Մ. 209, 213  
  
 Նազարյան Տ. 233  
 Նազարեթյան Հ. 315, 317  
 Նաբանդյան Մ. 172, 292  
 Նակաշհան 63  
 Նար-Դոս 374, 395  
 Նեգրի Աղա 190, 191, 192, 193, 194,  
     195, 196, 198, 200, 305, 361, 378,  
     379, 380, 381, 382, 398  
 Ներսիսյան Գ. 373  
 Ներսիսյան Յ. 353, 354  
 Նիկոլաձե Ի. 400  
 Նինա (Խանոյան) 169  
 Նուլանս Ժ. 92  
 Նուրի Փաշա 69  
  
 Շաղինյան Դ. 206  
 Շախաթոմի 214  
 Շահինյան Ա. 64, 65  
 Շահումովյան Ա. 322, 400  
 Շահումյան Մտ. 66, 96, 97, 98, 144,  
     181, 182, 184, 185, 273, 274, 275,  
     276, 277, 278, 279, 280, 281, 282,  
     283, 284, 307, 338, 357, 359, 361,  
     377, 378, 380, 383  
 Շարտի Ա. 344, 345  
 Շիլկի Ֆ. 207, 239  
 Շիրինյան 204  
 Շիրվանդաղ Ալ. 203, 219, 222, 230  
 Շիրվանսկի 267  
 Շկովկ Ֆ. 198  
 Շկովո Ա. 100  
 Շուշատիկով Վ. 197, 198, 199  
 Շուշանիկ (Մանուչարյան) 310, 311  
  
 Ուկանյան Ա. 201, 203, 206, 214, 400  
  
 Զարենց Ե. 356, 369, 371  
 Զարբը Ա. 219  
 Զեմով Ա. 74  
 Զերնիշևսկի Ն. 292  
 Զերնով Վ. 54
- Զիլինգարյան 214  
 Զիկալին 127  
 Զիրիկով 209  
 Զինիձե Կ. 110, 112  
 Զմշլյան 210  
 Զուքար Ե. 356  
  
 Պասկալ Բ. 19  
 Պաստերնակ Բ. 344, 345, 373  
 Պատկանյան Ռ. (Գամառ-Քաթիպա) 323,  
     395  
 Պետին 215  
 Պետլյուրա Ա. 108  
 Պետրոսյան Ա. 164, 165  
 Պետրոսյան Մ. 254, 373, 382, 402  
 Պետրոսյան Հ. 169  
 Պիլսուկսկի Յու. 110, 111  
 Պիմոնե 395  
 Պյասով Վ. 344, 345  
 Պոռյան Պ. 374, 395  
 Պրոգոն Պ. Ժ. 292  
 Պուշկին Ալ. 351  
  
 Զամալյան Ա. 182  
 Զափարիձե Ալ. 96, 97, 98, 144  
 Զիլավյան Թ. 355, 373  
  
 Բաղումովյան Մ. 334, 335, 326  
 Բոլան Բ. 366  
 Բուրին 144  
 Բուսսո Ժան-Ժակ 292  
  
 Սագոնով Ա. Ն. 31  
 Սահակյան Թ. 240  
 Սամվել 216, 217  
 Սամնիկով Գ. 373  
 Սավինկով 108  
 Սարգսյան Խ. 355, 357, 360, 371, 372,  
     377, 379, 381, 383, 386, 387, 391,  
     394, 399  
 Սեդրակյան Ա. 34, 35, 36  
 Սեմաշկո Ն. 382  
 Սիմուշ 202, 204  
 Սիերթլաձե Ի. 48  
 Սոլովյան Հար. 308  
 Սոլովյան Հով. 233, 234, 283

- Սոլովյան 208  
Սպանդարյան Ա. 106, 107, 181, 182,  
276  
Սոկնսեր Հ. 292  
Սվերդլով Յա. 144  
Ստալին Ի. Վ. 82, 151, 152  
Ստալինի Վ. 374  
Ստարկ Լ. 310, 311, 313  
Ստեփանյան 201  
Ստոլիպին Պ. 53  
Սունդուկյան Գ. 221, 222  
Սուսան 185  
Սուրբարյան Հ. 283  
Սուրիասյան 34  
Սևումյան Օ. 207, 208, 210, 212
- Վագտոն Մ. 198  
Վանշիր 203, 205  
Վարանդյան Մ. 275  
Վարդանյան Աղ. 397  
Վարդանյան Ահ. 148, 185, 224, 241,  
252, 253, 254, 284, 321, 324, 325,  
373  
Վարդանյան Գ. 181  
Վարդուհի (Նամուրազյան Ա.) 222  
Վարոնց 338  
Վեսելովսկի Յու. 373  
Վերհարն է. 283, 400  
Վերմիկ 168  
Վշտունի Ա. 373, 375, 390  
Վոլոդարսկի Վ. 144  
Վրանդել Պ. 81
- Տաբիձե Գ. 364  
Տեր-Առաքելյան 208  
Տեր-Գարբիելյան Ա. 338  
Տեր-Գրիգորյան 223  
Տեր-Դանիելյան Գ. 218, 276, 284  
Տեր-Դավթյան 222
- Տեր-Ջարարյան Ա. 359  
Տեր-Մարկոսյան Հ. 358  
Տեր-Մարտիրոսյան 215, 216  
Տեր-Միքայելյան Լ. 172, 173, 174,  
Տեր-Միքայելյան Մ. 172, 173, 174  
Տերյան Վ. 276, 277, 284, 377, 383  
Տիգրանյան Ա. 220  
Տիխոնով Ն. 373  
Տիմկանսկի Ն. 205  
Տիշինա Պ. 373  
Տիրացյան Մ. 181  
Տռնտի Լ. 19
- Բաֆֆի 172, 323
- Յալիկով Ա. 81, 82  
Յիսկայա Մ. 133, 314, 315, 316, 317,  
379, 382
- Բւարդիկով 62, 63  
Ուրիցկի Մ. Ա. 144
- Փափազյան Վ. 269, 270  
Փափազյան Վրթ. 358, 382  
Փիլիպոս II 17, 18  
Փիրումյան 214
- Քաթանյան Ռ. 184  
Քալանթար Լ. 276, 277  
Քափանակյան Մա. 256, 260, 261  
Քեմալ Մուստաֆա 82
- Օբրագովիչ Ա. 374  
Օբախելաշվիլի Մ. 99, 319  
Օբյոգոբս Լ. (Ա.օսելընդ) 67
- Ֆիոլետով Վ. 96  
Ֆլորա 332  
Ֆոնվիդին Գ. 215, 216

Բ Ո Վ. Ա. Ն Դ Ա. Կ Ո Ւ Ի Թ Յ Յ Ո Ւ Ի Ե

Հնատիտուարի կողմից

5

Հասպարակալուսական հոդվածներ

Նամակ Հաշիքենդից	9
Բանվորների հավաքական ապահովացումը Ռուսաստանում գժրախտ դեպ- քերից	12
Ապահովագրության գործը	16
Ազգային, թէ՝ ժողովրդական դպրոց	27
Պրոլետարի հիշատակարանից	33
Շյուրովկատ դաշնակցությունը արդարանում է	38
Զորքերի մանիթիստացիան Թիֆլիսում	40
Հեղափոխության զոհերի տոնը	43
Ենչն են տոնում	46
Քնկեր Խլիկ Սիերթաձեի հիշատակին	48
Խաղաղություն կտուն կառավարության հետ	49
Մամուլ	50
Անահղի վախ	52
Չեր ճիգերը իզուր են	54
Ճերթը պրոլետարիատինն է	58
Բթամատություն, թէ՝ քծնանք	60
Շեյբանը Մեֆիստօֆելի զգհստում	62
Քնկ. Անիսիմովի հիշատակին	64
Քնկեր Աղասի Շահինյանի ֆահատակման տարեդարձին	65
Մամուլ	67
Թրն է բոլցկիների և պանխամիստների պայմանագիրը	68
Միակ ելքը	71
Սպեկուլացիան Անդրկովկասում	73
Ողջումն ազատագրվածներին...	79
«Աշխատավորը» աշխատում է...	81
Անդեն ինչ նորից	83
Հաղթական Կարմիր Բանակը	86
Կարմիր գերեզմանները	88
Խլիկ Մղելաձեն (Քյորօղի)	90

Դարձյալ սովի մասին	98
Մեր կուսակցության բյուրեղացումը	94
Անմահացած քսաննելեցը	96
26 կոմոնարմերի հիշատակի քաղաքացիական հոգեհանդիսար	98
Կովկասյան Առանձին Զորաբանակը	100
Կովկասյան Առանձին Զորաբանակի տոնը	102
Խոպից գեպի գործ	104
Սուրեն Սպանդարյանի մահվան 5-րդ տարեդարձը	106
Պայմանավորված պաները գեռ պահանջում էլ են	108
Սրտացավ փարիսեցիները	110
Աշխարհի ամենամեծ տոնը	112
Մեր անցած ուղին	114
Մայիսմեկյան տոնի առթիվ	116
Աշխատանքի հերոսները	118
Հերոսների հնդամյակը	120
Ապագայի ծաղկիները	122
Հոմնվարի 9-ը և նրա նշանակությունը	124
Անմահներից անմահը	126
Մեր լեգալ մամուլը	128
Մեծ խռովարկուն	130
Մեր հերթական խնդիրներից մեկը	132
Պատասխան խոսք	134
Մեր Գեորգը	136
Արուսյակի հիշատակին	138
Մայիսի մեկը Բարելում	140
Օգոստոսի 29-ը	142
Իսկ որ տգեղ երկությ	144
Բաց նամակ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությամբ	146
Ելույթը Լենինականի բանֆակում	148
Սոցշինարարությունը Ուկրաինայի կուտուրական զարգացման բազան՝	150
1905 թիվը	152
Մինչուկաներեցյան բոլշևիկյան հայ մամուլն Անդրկովկասում	154

Հոդվածներ գրականուրյան ու արվեստի մասին

<Բարձրից>	189
Ազա Նեգրի	190
Իմ պատասխանը	198
Ժողովրդական Ավճակյան թատրոն	201
Ավճակյան ժողովրդական թատրոն	203
Տիմկովսկու «Թաշտպան» դրամայի բեմադրության մասին	205
Շիլերի «Ավագակներ»-ի բեմադրության մասին	207
Յուկովի «Թագավոր» պիեսի բեմադրության մասին	209
<Մ. Գորկու «Հատակում» պիեսի բեմադրության մասին>	211
<«Թագավոր» պիեսի բեմադրության մասին>	212

О представлении пьесы «Гувернер»	215
<i>&lt;նամակ խմբագրության&gt;</i>	218
Մի նկատողություն	219
Սունդուկյանի հիշատակը Թիֆլիսում	221
Տղիսության զոհեր	224
Ժամանակ է...	227
Մեր հույսը ձեզ վրա	230
Ընկեր Հովհակիմ Սոլովյանի հիշատակին	233
Մեր գարբնոցը	236
Ժամանակին է...	239
Բացման խոսք	242
Քրական մարտիկներ	244
Հովհաննես Թումանյան	247
Հորելլարի խոսքը	250
Անուշավան Վարդանյան	252
«Հրձիգները» մեր բեմի վրա	255
Իգեորդիքական ֆրանտ	258
Ի՞նչ անոն տանք	260
Խոսքը պատկանում է ինձ	262
Փափազյան-Օթելլո	263
Զերմ ողջուկն «Խորհրդային գրող» ամսագրին	271
<i>&lt;Ողջույն «Կարմիր ծիեռութիւնի տասնամյակին&gt;</i>	272
Ստեփան Շահումյանի մահվան 15-րդ տարեդարձին	273
Մечта стала действительностью	286
Ինչպես ես գրող գարձա և ինչպես եմ ես գրում	291
Իմ չերմագին ողջումը	296
Մեռավ Մաքսիմ Գորկին...	298
Նամակ խմբագրության	300

### Նամակներ և նեռագրեր

1. Յական և Սանդուխտ Աշուղ-Բլուլյաններին	303
2. Սանդուխտ Աշուղ-Բլուլյանին	304
3. «Բամբեր»-ի խմբագրությանը	305
4. «Տարազ»-ի խմբագրին	306
5. Ստեփան Շահումյանին	308
6. Բագրատին	310
7. է. Ն. Ստարկին և Ա. Ն. Մանուչարյանին	314
8. Միխա Ցիսակյալյանին	319
9. Մամիք Օրախիելաշվիլուն	321
10. Անուշավան Վարդանյանին	322
11. Աշուղ Հովհաննիսյանին	324
12. Հորելլանական հանձնաժողովին	325
13. Անուշավան Վարդանյանին	326
14. Ասրանազ Մուալյանին	

15. Օֆելյա Ասարելյանին	325
16. Հակոբ Գհնչյանին (Կարա-Գարդիշին)	331
17. Ֆլորացին	332
18. Մարիա Գեռագիենա Ռազումովսկայացին	334
19. Արտաշես Կարինյանին	337
20. Խորջրդացին Հայաստանի Պետքամայի գերասանական խմբին	339
21. Աղելգեյմ Եղբայրներին	340
22. Թիոներներին	341
23. Մ. Ա. Ինգրերին	343
24. Բաթուլ Հուրյանին	348
25. Հորելյանական Հանձնաժողովին	350
26. Հովհաննես Արելյանին	351
27. Պետրոսին	353
28. Խորեն Սարգսյանին	355
29. Խորեն Սարգսյանին	357
30. Խորեն Սարգսյանին	360
31. Գալակտիոն Տաբիձեին	364
32. Ռումեն Ռուլանին	366
33. Եղիշե Զարենցին	369
34. Գառնիկ Զաղարյանին	371
35. Խորեն Սարգսյանին	372
36. Խորեն Սարգսյանին	377
37. Խորեն Սարգսյանին	379
38. Խորեն Սարգսյանին	381
39. Խորեն Սարգսյանին	384
40. Խորեն Սարգսյանին	386
41. Գիլիչանի Գպրոցականներին	388
42. Մանդատային Հանձնաժողովին	390
43. Ազատ Վշտունին	391
46. Խորեն Սարգսյանին	393
47. Ժասմենին	394
48. Խորեն Սարգսյանին	397
49. Աղասի Վարդանյանին	399
50. Խորեն Սարգսյանին	402
51. Մաղաթ Պետրոսյանին Մահմուրացուրուններ և կոմիսարներ Սնվանացանկ	403



ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ—ԵՐԿԵՐԻ ԺԱՂՈՎԱՇՈՒ

Հատոր շորջորդ

Տեղական խմբագիր՝ Մ. Կափլանյան

Կազմությունը սուսպիր ֆորեզցը և անվանաթերթերը նկարիչ՝ Կ. Տիրատուրյանի  
վերստուգող սրբագրիչ՝ Ս. Զաքարյան

ԽՀԽ 485 Պատվեր 1046 հրատ. 1623 Տիրաժ 5 000

Հանձնված է արտադրության՝ 13/VII 1958 թ.:

Ստորագրված է տպագրության՝ 7/XII 1958 թ.:

Թուղթ՝  $60 \times 92^1/16$ , տպ. 29 մամ. հրատ. 20+1 նկրդ. մամ.։  
Գինը՝ 12 ռ. կազմը՝ 2 ռ.

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակությունների կազմության Պատվագագիր կազմակերպության Գլխավոր գործադիր կազմակերպության Պալիգրաֆիկումը Երևան,  
Տիրյան 91:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0030458

ЦЕНА

97  
0228